Ամբիոնը պարբերաբար կազմակերպում է մասնագիտական խորհրդակցություններ այլ հաստատությունների մասնագիտական կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Երևանի պետական համալսարան, Արցախի Պետական Համալսարան, Հայ-ռուսական սլավոնական համալսարան: Քննարկվում և համադրվում են ծրագրերը, երբեմն հրավիրվում են դասախոսներ արտասհմանից և տեղական ուսումնական հաստատություններից: Մեր դասախոսներն իրենց հերթին իբրև դասավանդող մասնագետներ կամ արտաքին գրախոսներ ներգրավված են այդ հաստատությունների ուսումնամեթոդական աշխատանքներին:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում

Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Ամբիոնի էլեկտրոնային դասընթացների մշտադիտարկում /սեպտեմբերի, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներ/:	*բ. գ. թ. , դոցենտ Արմինե Մուրադյան,*	*Ամբիոնի որակի պատասխանատուն ամեն ամսի 27-29 ընկած ժամանակահատվածում իրականացնում է մշտադիտարկման գործընթացը; Ամբիոնի նիստերում պարբերաբար վերայավում են ՊԴԱ-ի բոլոր դասընթացները, կատարվում են փոփոխություններ, ուղղումներ: Դասընթացներում առկա են բոլոր բաղադրիչները /առարկայական նկարագիր, թեմատիկ պրոհում, հարցաշ, դասախոսության նյութեր և էլեկտրոնային մատյան/: Ամբիոնի դասախոսները պատասխանատվությամբ են կատարում հանձնարարությունները:*
Դասալսում, ապրիլի 19	*բ. գ. դ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյան*	*ԱԲ-2 լսարան, Հայ գրականության պատմություն 19-րդ դար, դասախոս՝ բ. գ. թ. , դոց. Լուսինե Գալստյան*
Դասալսում , հոկեմբերի 11	*բ. գ. դ. , պրոֆեսոր Սուրեն Դանիելյան*	*ԱԲ-3 լսարան, Հայ գրականության պատմություն 20-րդ դար, դասախոս՝ բ. գ. թ. , դոց. Քնարիկ Աբրահամյան*
Դասալսում, նոյեմբերի 2	*բ. գ. թ. , դոցենտ Քնարիկ Աբրահամյան*	*ԱԲ-4 լսարան, Սփյուռքահայ գրականություն, դասախոս՝ բ. գ. դ. , պրոֆ, Սուրեն Դանիելյան*
Քարոզարշավ Շիրակի մարզի մի քանի դպրոցներում, 28-ը ապրիլ, 2022	*բ. գ. թ. , դոցենտ Նաիրա Խաչատրյան*	*Աշակերտներին մեծ հնարավորություն է տրվում ծանոթանալ մեր բուհի մասնագիտական ուղղություններին և օգնություն այս ուստարվա դիմորդների համար:*

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՎԵՀԱՆՈՒՇ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կրթական գործընթացների կառավարման եւ
բարեփոխումների վարչության պետ
Սամվել Ասատրյանին

Հարգելի՛ պարոն Ասատրյան,

Ներկայացնում ենք Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 թվականի տարեկան հաշվետվության համար նախատեսված *ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)-ը* նոր ձեւաչափով.

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր • Ուսանողակենտրոն ուսուցման ապահովում: • Ուսանողների գիտամեթոդական աշխատանքների ուղղորդում եւ իրականացում: • ՊԴԱ անդամների գիտական նստաշրջանի կազմակերպում եւ իրականացում: • Դասաբաշխումների պատշաճ իրականացում: • Գիտաժողովների, կոնֆերանսների, հանդիսությունների կազմակերպում եւ մասնակցություն:	***Թույլ կողմեր*** • Դասախոսական կազմի գերծանրաբեռնվածության արդյունքում, երբեմն տուժում է գիտական աշխատանքը: • Ամբիոնում հոդվածների քանակը բավարար է, սակայն գիտական առանձին հետազոտություններ քիչ են ունենում ամբիոնի դասախոսները:
Հնարավորություններ • Ամբիոնի կազմը համագործակցում է արտասահմանյան համալսարանների հայագիտական հանդեսների հետ:	***Վտանգներ*** • Ամբիոնի անդամների միջեւ ուսումնական գերծանրաբեռնվածության առկայությունը: • Ավարտական աշխատանքներում եւ թեզերում մեթոդական բաղադրիչի պարտադիր պահանջի պատճառով հիմնական մասնագիտական նյութի վերհանման անբավարարություն:

Ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյան

15 դեկտեմբերի, 2022

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ, ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Հաշվետու ժամանակահատվածում Ֆակուլտետում իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1. Ֆակուլտետի 4 մասնագիտությունների կրթական ծրագրերը լրամշակվել են՝ հիմք ընդունելով 2021թ. նոյեմբերի 18-ի ՀՀ կառավարության № 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2025 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 19.1 ենթակետը, համաձայն որի՝ հարկավոր է իրականացնել Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված «Ինֆորմատիկա» և «Մանկավարժություն» որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերը: *2. Մշակվել են նոր՝ «մաթեմատիկա-ֆիզիկա» և «մաթեմատիկա-ինֆորմատիկա» մասնագիտական կրթական ծրագրերը:* Այս կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած շրջանավարտները ձեռք կբերեն հանրակրթական հաստատություններում երկու առարկա դասավանդելու համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ: Սա, իհարկե, կմեղմի փոքրաթիվ աշակերտական կազմ ունեցող դպրոցներում բնագիտամաթեմատիկական առարկաներ դասավանդող ուսուցիչները պահանջարկը: *3. Ապահովվել են դասախոսների մասնագիտական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ պայմանները:* Ստեղծվել են ամբիոններին կից դասախոսների աշխատասենյակներ, որոնք հագեցված են համակարգիչներով և ապահովված համացանցով: Ստեղծված աշխատանքային մթնոլորտը նպաստում է ուսուցման որակի բարելավմանը, պայմաններ է ստեղծում ուսումնագիտական, ուսումնամեթոդական և գիտական հետազոտություններ կատարելու համար, բարձրացնում է կրթական և գիտական անցուդարձի վերաբերյալ դասախոսների տեղեկացվածության աստիճանը՝ նախապայման ստեղծելով միջազգային և հանրապետական գիտական ծրագրերին ու մրցույթներին մասնակցության համար: Արդյունքում, հաշվետու տարում ֆակուլտետի դասախոսների կողմից մշակվել և հրատարակվել են մեկ բուհական դասագիրք, մեկ մենագրություն, 7 ուսումնական ձեռնարկ, թարմացվել ու լրամշակվել են Google Classroom հարթակում տեղադրող դասախոսությունները և այլ ուսումնական նյութերը:

4. Կիսամյակի ընթացքում իրականացվել են դասալսումներ, քննարկվել դրանց արդյունքներն համապատասխան ամբիոնների նիստերում: Չնայած ընդհանուր դրական գնահատականի՝ վերհանվել են վերջարդյունքների, մնացորդային գիտելիքների հետ կապված խնդիրներ: Այս խնդրի լուծման համար նախատեսվում է 2023թ անցկացնել բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների շրջանում մնացորդային գիտելիքների ստուգում առնվազն մեկ առարկայից:

Հաջորդ հիմնախնդիրը՝ սահուն սերնդափոխություն ապահովելն է. ֆակուլտետի դասախոսների միջին տարիքը 60 է, ինչը վկայում է, որ գործընթացը դանդաղ է ընթանում, նվազ է ասպիրանտների և հայցորդների թվաքանակը (մաթեմատիկա մասնագիտությամբ՝ 3 ասպիրանտ, հայցորդ, ֆիզիկա մասնագիտությամբ՝ 0 ասպիրանտ, հայցորդ, ինֆորմատիկա մասնագիտությամբ՝ 3 ասպիրանտ, հայցորդ, տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությամբ՝ 2 ասպիրանտ, հայցորդ):

5. Շարունակվել և զարգացվել են նախորդ տարիներին հաստատված համագործակցությունները հանրապետության և արտերկրների համալսարանների, գիտահետազոտական հիմնարկների (Ֆրանսիայի Լորանի, Իտալիայի Պադովայի, Բելառուսի Մ. Տանկի անվան մանկավարժական համալսարանի, Սոլիկամսկի մանկավարժական համալսարանի, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների և Ֆիզիկական պրոբլեմների ինստիտուտների) հետ (տե՛ս համապատասխան բաժնում):

6. Ապահովվել է ֆակուլտետի շահակիցների ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը ֆակուլտետի կառավարման գործընթացներում, մեթոդական հանձնախմբերի կազմերում՝ բարձրացնելով Ֆակուլտետի գործունեության տեսանելիությունը և թափանցիկությունը:

7. Հաշվետու տարում ուշադրության կենտրոնում է գտնվել նաև շրջանավարտների զբաղվածության խնդիրը. կազմվել է շրջանավարտների տվյալների շտեմարան, որտեղ գրառվել են տվյալները՝ մասնագիտությունը, բնակության վայրը, զբաղվածության աստիճանը: Արդյունքում ավելի քան 25 շրջանավարտ ուղղորդվել են դպրոցներ՝ «մաթեմատիկա», «ֆիզիկա», «ինֆորմատիկա», «տեխնոլոգիա» առարկաներ դասավանդելու համար:

8. Հաշվետու տարում ուսանողների հավաքագրման միջոցառումների շրջանակում 11–րդ և 12-րդ դասարանների աշակերտների համար անցկացվել է առցանց «Aspu.login-2022» մրցույթը «մաթեմատիկա» և «ֆիզիկա» առարկաներից: Սակայն, նախորդ տարվա համեմատությամբ, աշակերտների մասնակցությունը խիստ նվազել է՝ 2021 թ. մասնակցել էին շուրջ 40 աշակերտ, իսկ 2022 թ.՝ ընդամենը 8 աշակերտ: Հավանաբար իր՝ ոչ դրական դերակատարումն են ունեցել ընդունելության քննությունների ցանկում կատարված կտրուկ փոփոխությունները:

Ի լրումն առցանց մրցույթի՝ ՀՊՄՀ դիմորդների համար կազմակերպվել են անվճար առերես պարապմունքներ ԲՈՒՀ-ի ընդունելության ծրագրով մաթեմատիկա, ֆիզիկա և հայոց լեզու առարկաներից: Այստեղ ևս դիմողների քանակը մեծ չէ՝ 8 աշակերտ, բայց հեռակա բաժին դիմողներից 3-ը բարեհաջող հանձնել են ընդունելության քննությունները և ընդունվել են «Մաթեմատիկա» և «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությամբ՝ հեռակա ուսուցման բաժին:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
ՄՖԻ Ֆակուլտետում գործում է չորս մասնագիտական ամբիոն՝ Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայիամբիոն, Տեխնոլոգիական կրթության ամբիոն և Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն: Հաշվի առնելով «ֆիզիկա» և «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությունների բակալավրիական կրթական ծրագրերով սովորող ուսանողների թվաքանակի սակավությունը և ելնելով ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակահարմարությունից՝ ընթացիկ տարում ֆիզիկայի թիվ 401 և թիվ 408, տեխնոլոգիայի 415 ուսումնական լաբորատորիաները վերակահավորվել են լսարանների՝ ապահովելով համապատասխան լաբորատոր աշխատանքների կատարումն նշված ամբիոնների այլ լաբորատորիաներում: Սա թույլ է տվել մեղմել ենթակառուցվածքային խնդիրները, որոնք ի հայտ էին եկել նախորդ տարիներին: Ֆակուլտետի խորհուրդը կազմված է 27 անդամներից (նախկինում՝ 31-ի փոխարեն), որտեղ համաչափորեն ընդգրկված են ֆակուլտետի ամբիոնների դասախոսներ, բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր մասնագիտությունների՝ թվով 6 ուսանողներ: Նշենք, որ նախորդ տարիներում խորհրդի կազմում ներգրավում էին դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ: Սակայն, տարիների փորձը ցույց տվեց, որ նրանց մասնակցությունը խորհրդի աշխատանքներին խիստ պասիվ է, սակայն պլանավորում ենք 2023թվականից խորհրդի կազմում ներգրավել նաև արտաքին շահակիցներին՝ դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ: Խորհրդին կից շարունակում է գործել խորհրդի անդամներից կազմված մեթոդական հանձնախումբը, որը քննարկում ու խորհրդին է ներկայացնում ուսումնական, ուսումնամեթոդական հարցեր՝ կապված ուսումնական և առարկայական ծրագրերի հետ: Մեթոդական խորհրդի առկայությունը նպաստում է ֆակուլտետի խորհրդի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Ինչ վերաբերում է ֆակուլտետի խորհրդին կից նախկինում գործող «որակի հանձնախմբին», ապա այն լուծարվեց, քանի որ ուսուցման որակի ապահովումն իրականացվում է կազմակերպական այլ մեխանիզմով: Ֆակուլտետն ունի որակի ապահովման պատասխանատու: Ընթացիկ տարում ֆակուլտետի ամբիոնները, ուսումնական լաբորատորտաները նոր սարքավորումներով չեն համալրվել. ամբիոնների և ուսումնական լաբորատորիաների տեխնիկական միջոցները, առկա լաբորատոր սարգավորումները թույլ են տալիս պատշաճ մակարդակով կազմակերպել ուսումնական գործընթացը:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Հաշվետու ժամանակաշրջանում՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան վերանայվել և լրամշակվել են «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա» և «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությունների բակալավրիական ու մագիստրոսական կրթական ծրագրերը՝ ապահովելով դրանց համադրելիությունը որակավորումների ազգային շրջանակին: Մասնավորապես, ամբողջությամբ վերանայվել ու վերաձևակերպվել են «կրթական ելքային արդյունքներ» և «գնահատման մեթոդներ» բաժինները՝ հիմք ընդունելով ամբիոնների նիստերում քննարկումների արդյունքները (Ինֆորմատիկայի և նրադասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ թիվ 1, 24.01.2022թ; թիվ 5, 18.05.2022, ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի թիվ 1 նիստ, 30.08.2022; Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի թիվ 7 նիստ, 26.01.2022; Տեխնոլոգիական կրթության ամբիոնի թիվ 6 նիստ, 25.01.22), համապատասխան մասնագիտությունների համար իրականացված բեչմարկինգի արդյունքները, ՀՀ ԿԳՄՍ-ի նախարարի հրամանով հաստատված «Ինֆորմատիկա» և «Մանկավարժություն» որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերը:
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ընթացիկ տարում պահպանվել են նախորդ տարվա գնահատման մեթոդները ու չափանիշները: Առանձին առարկաների ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվել է էլեկտրոնային առաջադրանքների, ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգումների, ինչպես նաև կուրսային աշխատանքների և ռեֆերատների պաշտպանությունների, պրակտիկայի թղթապանակի պաշտպանության միջոցով: Չեն փոխվել նաև ընդհանուր գնահատականը ձևավորող առանձին բաղադրիչների տոկոսային չափերը (բերված է ստորև): Անհարկի արտագրություններից, գրագողության դրսևորումներից, թեմաների կրկնություններից խուսափելու համար ամբիոններում ստեղծվել են համապատասխան թեմաների շտեմարաններ: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները մանրամասն քննարկվում են ամբիոնների նիստերում և հաստատվում ֆակուլտետի խորհրդի (ՖԽ) կողմից: Կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը վերահսկվում է ամբիոնի կողմից և մինչ պաշտպանության ներկայացվելը գրախոսվում: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստվածության աստիճանը՝ դրա հետ կապված խնդիրները քննարկվում են ՖԽ-ի նիստերում (6.04.22 ֆխ նիստի, 4.10.22 ֆխ նիստի, 30.11.22 ՖԽ նիստի առձանագրություն): Նշեմ նաև, որ ֆակուլտետում մշակվել (իսկ 2022 թվականին լրամշակվել) և գործառության մեջ է դրվել

«մագիստրանտի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլան» գրքույկը, որտեղ կիսամյակի կտրվածքով պլանավորվում է մագիստրոսի հետազոտական աշխատանքի ընթացքը: Կատարված աշխատանքների հիման վրա՝ կիսամյակի քննաշրջանի ավարտին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում համապատասխան ամբիոնի կողմից իրականացվում է մագիստրանտների ատեստավորվումը, որի արդյունքները ներկայացվում են ՖԽ-ի հաստատման: «Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի» կողմից նման գործառույթ իրականացվում է նաև բակալավրիատի ուսանողների համար, որի նպատակով մշակվել է «բակալավրիատի ուսանողի աշխատանքային անհատական պլան» գրքույկը:

Գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

2 միջանկյալ ստուգումներով՝ առանց ամփոփիչ քննության ավարտվող դասընթացներ՝

1. Միջանկյալ ստուգում 1՝ 40%
2. Միջանկյալ ստուգում 2՝ 40%
3. Հաճախում՝ 5%
4. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք՝ 15%

Ամփոփիչ ստուգմամբ և 2 միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացներ՝

1. Միջանկյալ ստուգում 1՝ 25%
2. Միջանկյալ ստուգում 2՝ 25%
3. Հաճախում՝ 5%
4. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք՝ 15%
5. Ամփոփիչ ստուգում՝ 30%

Ամփոփիչ ստուգմամբ և 1 միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացներ (առկա բաժին)՝

1. Միջանկյալ ստուգում 1՝ 40%
2. Հաճախում՝ 5%
3. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք՝ 15%
4. Ամփոփիչ ստուգում՝ 40%

Ամփոփիչ ստուգմամբ և 1 միջանկյալ ստուգումներով ավարտվող դասընթացներ (հեռակա բաժին)՝

Միջանկյալ ստուգում 1՝ 25%

2. Հաճախում՝ 5%
3. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք՝ 25%
4. Ամփոփիչ ստուգում՝ 45%

1 միջանկյալ ստումներով՝ առանց ամփոփիչ քննության ավարտվող դասընթացներ (հեռակա բաժին)՝

1. Միջանկյալ ստուգում 2՝ 50%
2. Հաճախում՝ 5%
3. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք՝ 45%

Մանկավարժական պրակտիկա

Հաճախում/մասնակցություն՝ 25%

Գործնական կարողություններ՝ 25% Համագործակցային կարողություններ՝ 10% Թղթապանակի պաշտպանություն՝ 40%
Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Գասպարյան Սաբինան 2022 թ. այցելել է Կիլիի համալսարան մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի հիմնախնդիրների ուսումնասիրման նվիրված ասպիրանտական հետազոտական աշխատանք կատարելու նպատակով: Լ. Ղուլղազարյանը և ամբիոնի ասիստենտ Գ. Ասատրյանը Էռազմուս+ ծրագրի շրջանակներում (դասախոսների շարժունության ծրագիր) այցելել են Կիլիի համալսարան: Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Անահիտ Ենոքյանը դրամաշնորհային ծրագրով 2022թ մեկնել է Ավստրիայի Գլագենֆորտի համալսարան մաթեմատիկայի դասավանդման արժեբանական հիմնախնդիրների ուսումնասիրման հետ կապված հետազոտական աշխատանք կատարելու նպատակով:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	202 (որից՝ 25 շրջանավարտ)
	հեռակա	275 (որից՝ 56 շրջանավարտ)
Մագիստրոսի	առկա	127 (որից՝ 45 շրջանավարտ)
	հեռակա	97 (որից՝ 24 շրջանավարտ)
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Մեկնել են ազգային բանակ	առկա՝ 3 հեռակա՝ 3
2	Ազատվել են իրենց դիմումի համաձայն	առկա բակալավր՝ 4, առկա մագիստր՝ 9 հեռակա բակալավր՝ 6 հեռակա մագիստր՝ 3
3	Հեռացվել են անբավարար առաջադիմության, ուսման վարձավճարի պարտքի պատճառով	առկա բակալավր՝ 9 առկա մագիստր՝ 3 հեռակա բակալավր՝ 14
4	Հեռակայից տեղափոխվել են առկա	բակալավր՝ 4 մագիստրատուրա՝ 2
5	Առկայից տեղափոխվել են հեռակա	բակալավր՝ 3
Ուսանողների ներհոսք		

Հաստատություն/երկիր		թիվ	
1	սփյուռք՝ /Վրաստան/	առկա՝ 3	
2	այլ բուհից	առկա՝ 2 հեռակա՝ 3	
3	շարունակական կրթությամբ	հեռակա՝ 21	
4	Վերականգել են ուսանողական իրավունքները	առկա բակալավր՝ 5 առկա մագիստր ՝ 2 հեռակա բակալավր՝ 9	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	7,56%	53
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	5.99%	42

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Ուսանողների հավաքագրմանը, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Սկսած 2022 թ. հոկտեմբեր ամսից ֆակուլտետի աշխատակիցները աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելություններ են կատարել մի շարք կրթական հաստատություններ՝ Բյուրեղավանի ավագ դպրոց, Նոր Հաճնի, Էջմիածնի թիվ 2, 10 և 5, Մարտունու Տ. Աբրահամյանի անվան, Աբովյանի թիվ 4 ավագ դպրոցներ, Նոր Գեղի թիվ 2, գ. Զոլաքարի թիվ 1 և 2, Ջրառատի միջնակարգ դպրոցներ, Երևանի թիվ 16, 105, 139, 184, 54, 83, 198, 148, 190 և 46 ավագ դպրոցներ, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, Երևանի հումանիտար, թիվ 1 տարածաշրջանային պետական և թեթև արդյունաբերության քոլեջներ, թիվ 4 արհեստագործական ուսումնարան: Կազմակերպվել են Երևանի և մարզերի մի շարք դպրոցների աշակերտների այցելությունները ֆակուլտետ:

Դպրոցների այցելությունների ժամանակ կազմակերպվել հանդիպումներ բնագիտական առարկաների ուսուցիչների, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների հետ, քննարկվել են մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, տեխնոլոգիա առարկաների դասավանդման գործընթացի հետ առնչվող խնդիրներ, կազմակերպվել են բաց դասեր: Սակայն, պետք է արձանագրել, որ իրականացված միջոցառումները արդյունավետ չեն առկա համակարգում սովորել ցանկացող դիմորդներ հավաքագրելու համար: Բանն այն է, որ բնագիտական առարկաները գրավիչ չեն (միգուցե նաև դասավանդման ցածր որակի պատճառով) բարձր դասարանների աշակերտների համար և մի քանի հանդիպման միջոցով հնարավոր չէ ռադիկալ փոխել իրավիճակը: Ասուիանդերձ քոլեջների այցելությունները որոշակի դրական ազդեցություն են ունեցել շարունակական կրթությամբ ուսանողների հավաքագրման վրա:

2. 2022 թ, նախորդ տարիների նմանությամբ, կազմակերպվել են մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից «ASPU.login 2022» առցանց մրցույթներ՝ 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների համար: Սակայն, աշակերտների մասնակցությունը խիստ նվազել է համեմատած նախորդ տարիների հետ: Մրցույթին մասնակցել են 5 աշակերտ:

3. ՀՊՄՀ դիմորդների համար ֆակուլտետում առցանց և առերես ձևաչափերով կազմակերպվել են անվճար պարապմունքներ մաթեմատիկա (Ա. Գրիգորյան), ֆիզիկա (Գ. Դեմիրխանյան) և հայոց լեզու (Կ. Աղաբաբյան) առարկաներից: Ըստ որում, պարապմունքներին կամավորական սկզբունքով ներգրավվել են մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները: Արդյունքում 3

դիմորդ ընդունվել են մաթեմատիկա և տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտություններով հեռակա բաժին: Նշեմ, որ պարապմունքները կվերսկսվեն 2023 թ փետրվարին՝ ընդունելության քննությունների առաջին փուլի ավարտից հետո:

4. 2022 թ. շարունակել են ակտիվ գործել ֆակուլտետի և ամբիոնների ֆեյսբուքյան էջերը, որտեղ տեղադրվել են ընդունելության հետ կապված տեղեկատվություններ և գովազդային տեսանյութեր, հետադարձ կապի միջոցով իրականացվել է շահառուների հետ անմիջական շփում՝ հարց ու պատասխանի միջոցով: Սակայն, մեր գնահատմամբ, ֆեյսբուքյան էջերը, որոնք արդյունավետ գործիք են տեղեկատվություն հաղորդելու և գովազդային նյութեր տարածեհու համար, բավարար չեն ուսանողների հավաքագրման խնդրի լուծման համար:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Համալսարանից ուսանողի հեռացումը և վերականգնումը կատարվել է ստորև թվարկած պատճառներով (2022 թ համալսարանից ազատված և վերականգնված ուսանողների թվաքանակը բերված է IV բաժնի աղյուսակում):

- Հեռացվել է համալսարանից՝ ակադեմիական անբավարար առաջադիմության, ուսման վարձավճարը սահմանված ժամանակահատվածում չվճարելու և անհարգելի (90 և ավելի ժամ) բացակայությունների դեպքում:
- Ազատվել է համալսարանից իր դիմումի համաձայն՝ հետագայում ուսանողական իրավունքները վերականգնելու պայմանով:
- Ուսման ընթացքը ընդհատվել է ազգային բանակ մեկնելու պատճառով և վերականգնվել ազգային բանակից զորացրվելուց հետո՝ իր դիմումի հանաձայն:
- Ուսման ընթացքը ընդհատվել է հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի հիմքով:
- Ուսման ընթացքը վերականգնվել է հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի հիմքով տարկետման ժամկետի ավարտից հետո:

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		-
Մագիստրոս		3
Ընդհանուր		3
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1	Հայ-Իտալական համագործակցային ծրագիր՝ «Yb3+ և Tm3+ իոններով լեգիրված լազերային ակտիվ YAG, LuAG և YSAG կերամիկական և միաբյուրեղ նռնաքարերի կառուցվածքային և սպեկտրալ-կինետիկական հատկությունների համեմատական ուսումնասիրություն»	1
2	Առաջատար հետազոտությունների դրամաշնորհ 21AG-1C053՝ «Գալակտիկաների էվոլյուցիայի վաղ փուլերի բացահայտումն ակտիվ գալակտիկաների բազմալիքային ուսումնասիրության միջոցով»	1

3	Գրաֆենի ստացման եղանակների և ֆիզիկական հատկությունների ուսումնասիրումը:	1
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	Փորձարարական-հետազոտական աշխատանքները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, Հանրահաշվի հիմնական հասկացությունները բնական լեզուներում	Ղարիբյան Մ.Ա. Մաթեմատիկական կրթություն, 10-րդ միջազ, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Էդիթ Պրինտ, 2022 թիվ, 4 էջ
2	Հանրահաշվի հիմնական հասկացությունները բնական լեզուներում	Մանուկյան Ա.Վ. Մաթեմատիկական կրթություն, 10-րդ միջազ, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Էդիթ Պրինտ, 2022 թիվ, 4 էջ
3	Հանրահաշվի կիրառական միջավայրի խնդիրների մոդելավորումը համախմբերի միջոցով	Մկրտչյան Ա.Տ., Լագզյան Ա.Ա. Մաթեմատիկական կրթություն, 10-րդ միջազ, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Էդիթ Պրինտ, 2022 թիվ, 6 էջ
4	Դիտարկումներ հանրահաշվի դասընթացում հավասարումների և անհավասարումների ներմուծման խնդրի շուրջ	Մկրտչյան Ա.Տ., Շահնազարյան Մ.Գ. Մաթեմատիկական կրթություն, 10-րդ միջազ, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Էդիթ Պրինտ, 2022 թիվ, 6 էջ
5	Multi wavelength search for and studies of active galaxies	.M. Mickaelian, R.R. Andreasyan, H.V. Abrahamyan, G.M. Paronyan, G.A. Mikayelyan, A.G. Sukiasyan, V.K. Mkrtchyan. Astronomical and Astrophysical Transactions (AApT r), 2021, Vol. 32, Issue 4, pp. 331–354.

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:

Ֆակուլտետում դասավանդում են բարձր մասնագիտական կարողություններ և փորձառություն ունեցող դասախոսներ. հիմնական հաստիքով 43 (այդ թվում՝ 9 ֆ. մ. գ. դ., 3 մ. գ. դ., տ. գ. 1 դոկտոր) և հրավիրված 12 (այդ թվում՝ ֆ. մ. գ. 3 և մ. գ. 1 դոկտոր, ԳԱԱ –ի 2 ակադեմիկոս՝ ֆիզիկա և մաթեմատիկա մասնագիտությամբ): Դասախոսների թվաքանակի բաշխումը ըստ ամբիոնների բերված է ստորև:

1. Մաթեմատիտկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	**Կանայք**	**դոկտոր**	**Պրոֆեսոր**	**գիտ.թեկն**	**դոցենտ**	**Ասիստենտ**	**Դասախոս**	**Ընդ.**

Հաստիքային	6	6	7	8	7	1	3	18
Համատեղող	0	1	1	2	2	0	0	3
Ժամավճարային	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	6	7	8	10	9	1	3	21
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70-ից բարձր	
61		1	2	3	1	5	10	21

2. Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	**Կանայք**	**դոկտոր**	**Պրոֆեսոր**	**գիտ.թեկն.**	**դոցենտ**	**Ասիստենտ**	**դասախոս**	**Ընդ-նը**
Հաստիքային	2	2	3	5	5	0	1	7
Համատեղող	1	2	2	1	1	0	0	3
Ժամավճարային	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	3	4	5	6	5	0	1	10
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
59		-	2	1	2	3	2	10

3. Տեխնոլոգիական կրթության ամբիոն

Անվանում	**Կանայք**	**դոկտոր**	**պրոֆեսոր**	**գիտ.թեկ.**	**դոցենտ**	**ասիստենտ**	**դասախոս**	**Ընդ-նը**

Հաստիքային	2	1	2	4	5	0	0	6
Համատեղող	0	0	0	0	0	0	0	0
Ժամավճարային	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	2	1	2	4	5	0	0	6
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
64		-	0	1	2	1	2	6

4. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	**Կանայք**	**դոկտոր**	**պրոֆեսոր**	**գիտ.թեկն**	**դոցենտ**	**Ասիստենտ**	**դասախոս**	**Ընդ-ը**
Հաստիքային	2	0	0	10	8	2	2	12
Համատեղող	0	1	1	2	1	1	0	3
Ժամավճարային	0	2	2	1	1	0	0	3
Ընդամենը	2	3	3	13	10	3	2	18
ՊԴԱ-ի միջին տարիք		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
55		-	4	4	5	5	0	18

Ֆակուլտետի դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքի գնահատումն իրականացվել է.

1. Ամբիոնների կողմից իրականացված պլանային դասալսումների միջոցով (համապատասխան արձանագրությունները պահվում են ամբիոններում):
2. Ուսանողների շրջանակներում անցկացված ծպտյալ հարցումների միջոցով, որոնց արդյունքում վեր են հանվել առկա խնդիրները՝ կապված մատուցվող նյութի մատչելիության, ուսումնական նյութերի հասանելիության, գնահատման

թափանցելիության հետ: Արդյունքները քննարկվել են համապատասխան ամբիոնների նիստերում և դեկանատի նիստերում և ստացել են համապատասխան լուծումներ:

3. Դեկանի և նրա տեղակալների կողմից ուսանողների հետ պարբերաբար անցկացվող զրույցների և բովանդակային քննարկումների միջոցով:

Իրականացված միջոցառումների արդյունքները փաստում են, որ հաշվետու տարում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը բավարարից բարձր մակարդակի վրա, իսկ նրանց մասնագիտական որակները լիովին համապատասխանում են ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին: Սակայն պետք է փաստել, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի սերնդափոխությունը դանդաղ տեմպերով է ընթանում. ամբիոնների ասպիրանտների և հայցորդների քանակը փոքր է:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի ամբիոնների աշխատակիցները կազմել և հրատարակել են՝ 2 դասագիրք, 5 ուսումնամեթոդական ձեռնարկներ: Կազմակերպվել և անց է կացվել թվով 10-րդ «Մաթեմատիկական կրթություն» խորագրով միջազգային գիտաժողովը, 6-7.10.2022թ., հրատարակվել է գիտաժողովի նյութերի ժողովածուն (Էդիտ Պրինտ, ISBN978-9939-75-879-4, 2022, 192 էջ): 2022 թ դեկտեմբերի 15-ից 16-ը անցկացված «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի շրջանակներում (բնագիտամաթեմատիկական սեկցիա) անց են կացվել «Ժամանակակից մաթեմատիկան եվ նորարարական մոտեցումները ուսուցման մեթոդիկայում» թեմայի հետ առնչվող խնդիրների քննարկումներ:

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	ԱՊՀ-ի գիտական տեղեկագիր: Բնական գիտություններ	-	2
2			

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	J. of Solid State Chemistry, USA	Scopus	1
2	Advanced Problem in Mechanics II, Switzerland	Scopus	3

3	Journal of Materials Science and Engineering, USA	Scopus	1
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Armenian Journal of Physics	ԲՈԿ-ի ցանկ	1
2	Известия НАН РА. Физика	Scopus	2
3	ՀԱՊՀ, Լրաբեր, գիտական հոդվածների ժողովածու	ԲՈԿ-ի ցանկ	1
4	Scientific News. ASPU	-	1
5	Մաթեմատիկան դպրոցում	-	2
6	Հայաստանի ԳԱԱ Տեղեկագիր	ԲՈԿ-ի ցանկ	1
7	Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Գիտական հանդես	ԲՈԿ-ի ցանկ	1
8	ՀՊՄՀ տեղեկագիր	ԲՈԿ-ի ցանկ	2
9	Հայ-ռուսական Համալսարանի Գիտական տեղեկագիր	ԲՈԿ-ի ցանկ	1
10	ՀԱՊՀ Բանբեր. Էլեկտրատեխնիկա, Էներգետիկա	ԲՈԿ-ի ցանկ	1
11	Հայաստանի ԳԱԱ զեկույցներ	ԲՈԿ-ի ցանկ	1

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Ֆակուլտետում գործող գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիան» հաշվետու տարում շարունակել է իրականացնել գիտական ծրագրեր՝ համագործակցելով Ֆրանսիայի Լորանի, Իտալիայի Պադովայի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետ: Հրատարակվել են համատեղ գիտական հոդվածներ բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում: Անց է կացվել «Laser-2022» միջազգային գիտաժողովը (Աշտարակ, 2022), որտեղ զեկույցով հանդես են եկել նաև ֆիզիկա մասնագիտության մագիստրանտները:
Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը շարունակաբար համագործակցում է Մեծ Բրիտանիայի Կիլիի համալսարանի, ՌԴ-ն Ստեկլովի անվան Մաթեմատիկայի ինստիտուտի, Մ. Տանկի անվան Բելոռուսի պետական մանկավարժական համալսարանի հետ: Անհատական զուգահեռ գիտական կապեր են հաստատված ՌԴ-ն Պենզայի և Սոլիկամսկի պետական մանկավարժական համալսարանների, Ուկրանիայի Սումիի պետական և Չերկաս ազգային համալսարանների Հետ: Կազմակերպվել են համատեղ միջազգային գիտաժողովներ՝ նվիրված մաթեմատիկական կրթության արդի հարցերին («Մաթեմատիկական կրթություն» 10-րդ միջազգային գիտաժողով, Երևան, 2022թ; «Ժամանակակից մաթեմատիկա եվ նորարարական մոտեցումներն ուսուցման մեթոդիկայում» միջազգային գիտաժողով, Երևան, 2022թ), հրատարակվել են համատեղ գիտական հոդվածներ: Ամբիոնի աշխատակիցներ Հ. Միքայելյանը, Ա. Ենոքյանը և Ա. Մկրտչյանը մասնակցել են Բելառուսում կազմակերպված համատեղ միջազգային գիտաժողովներին, իսկ Լ.Գ. Ղուլղազարյանը, Գ.Ռ. Ղուլղազարյանը և Լ.Գ.

Արաբաջյանը՝ Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում անցկացված միջազգային գիտաժողովներին:
Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը գիտահետազոտական կապեր է հաստատել Բաթումիի Շ. Ռուստավելու անվան Պետական և Վրացական տեխնիկական համալսարանների, ինչպես նաև Գերմանիայի արհեստական բանականության հետազոտական կենտրոնի հետ:
Տեխնոլոգիական կրթության ամբիոնի համատեղ գիտահետազոտական աշխատանքներն Կիևի Ի. Սիկորսկու անվան պոլիտեխնիկական ինստիտուտի և Գերկարծր նյութերի ինստիտուտի հետ հայտնի պատճառներով ընդհատվել են:
Հարկ է նշել, որ արտերկրների գործընկերների հետ շարունակական համագործակցությունը նպաստում է ոչ միայն ֆակուլտետի ներուժի դինամիկ զարգացմանը՝ հնարավոր է դարձնելով համատեղ գիտահետազոտական աշխատանքների պլանավորումն ու իրականացումը, այլ նաև ուղիներ է հարթում համալսարանի գիտական և գիտամեթոդական գործունեության գործընթացներում նրանց ներգրավման համար: Այսպես, Ֆլորենցիայի օպտիկակայի ազգային ինստիտուտի և կիրառական ֆիզիկայի ինստիտուտի չորս հետազոտողներ ներգրավվել են «ՀՊՄՀ գիտական տեղեկագիր» ամսագրի խմբագրական կազմում:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Ինչպես Ֆակուլտետում, այնպես էլ համագործակցության շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին մասնակցություն ունեն մագիստրատուրայի ուսանողները: Այսպես, ֆիզիկա մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհիներ Մ. Մարգարյանը, Վ. Մկրտչյանը, Ֆ. Ոսկանյանը, Ս. Գալստյանը ընդգրկված են տարբեր դրամաշնորհային ծրագրերում (Հայ-Իտալական համագործակցության (scs.am/files/cank-GK-IAX-2019.pdf), Բյուրականի աստղադիտարանում կատարվող թեմատիկ ֆինանսավորման (www.bao.am/activities/projects/21AG-1C053/) ծրագրերում, ԵՖԻ գիտական խմբի կազմում): Նրանք մասնակցել են միջազգային «Laser-2022» գիտաժողովին (ipr.sci.am/lp/archive/LP_2022_abstracts.pdf), Դուբնայում անցկացված աշխատանքաժողովին (indico.jinr.ru/event/3084/):
Մաթեմատիկա մասնագիտության ուսանողները մասնակցել են «Մաթեմատիկական կրթություն» միջազգային գիտաժողովին (aspu.am/hy/content/qnnarkvecin_matematikakan_krtutyan_himnakhndirnery/#sthash.RAUMzpFd.ak5vG4P7.dpbs), «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի մասնաճյուղի աշխատանքին:
Ուսանողներից ոմանք արդեն ունեն համահեղինակությամբ տպագրված գիտական հոդվածներ, ինչպես գիտաժողովների նյութերի ժողովածուներում, այնպես էլ գիտական ամսագրեում: Այս առումով նվազ ակտիվ են Ինֆորմատիկա և Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության մագիստրանտները:

Մագիստրանտների թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների, ընտրովի առարկաների ընտրությունը մեծամասամբ շաղկապվել է ամբիոնում իրականացվող գիտական, գիտամեթոդական հետազոտական աշխատանքների հետ, ինչն ապահովում է ընտրված թեմաների արդիականությունը, մեծացնում ուսանողների հետաքրքրությունը և նվազեցնում գրագողության ռիսկերը:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
2022 թ. ֆակուլտետի կազմում գործել են 10 ուսումնական լաբորատորիա (այդ թվում՝ ռոբոտոտեխնիկայի լաբորատորիա), 8 համակարգչային լսարան, աստղագիտության ուսումնական կաբինետ և աստղադիտարան, համակարգչային լսարան-պորտալ և 2 արհեստանոց: Ֆակուլտետի տրամադրության տակ գտնվում են 13 լսարաններ, որոնցից չորսում տեղադրված են համակարգիչներ պրոյեկտորներ կամ համացանցին միացված լայնէկրան հեռուստացույցներ: Վերջիններս տեղադրված են նաև 7 լաբորատորիաներում և լսարան-պորտալում: Լսարան-պորտալում հավաքված է և ուսանողների օգտագործմանն է հանձնած մեծաթիվ մասնագիտական գրականություն: Բացի այդ, ֆակուլտետում գործում է ազատ օգտագործման էլեկտրոնային գրադարան, որը պարունակում է ավելի քան 10000 անուն մասնագիտական գրականություն: Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար ուսումնական լաբորատորիաների հագեցվածությունը լափորատոր սարքերով և համակարգչային տեխնիկայով՝ կրթական ծրագրերն իրականացնելու համար բավարար է: Սակայն, հաշվի առնելով տեխնիկական միջոցների զարգացման տեմպերը, անհրաժեշտ է համակարգիչների բազան պարբերաբար լրացնել, ուսումնական արհեստանոցների լաբորատոր սարքավորումները և տեխնիկական միջոցների արդիականացնել:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետում հաշվետվողականության գործընթացների թափանցիկության ու հասարակությանը հասանալիության ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները. 1. Ֆակուլտետի խորհրդի նիստերում՝ խորհրդի տարեկան աշխատանքային պլանի համաձայն լսվել են ամբիոնների հաշվետվությունները կատարած աշխատանքի վերաբերյալ, յուրաքանչյուր մասնագիտության պրակտիկաների պատասխանատուների և ուսուցման որակի ամբիոնների ու ֆակուլտետի պատասխանուտենի հաշվետվությունները, ներկայացվել են ուսանողների շարժը և կրթական գործընթացների հետ կապված այլ հարցեր:

2. Classroom-ում գործում է ֆակուլտետի տեղեկատվության հարթակը, որտեղ տեղադրվել են ուսումնական և կազմակերպական հարցերի հետ առնչվող հայտարարություններ (https://classroom.google.com/c/NDU1MDAwODE2MFpa):
3. Facebook-ում շարունակում են գործել «Ի՞նչ մասնագիտություն ընտրել» (https://www.facebook.com/groups/980571215322299), «Հեռավար ֆիզիկամաթեմատիկական անվճար դպրոց» (www.facebook.com/profile.php?id=100057433060478), «մաթեմատիկական կրթություն» (https://www.facebook.com/groups/485220014979605) և «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» (https://www.facebook.com/profile.php?id=100014223007248) ֆեյսբուկյան խմբերը, ֆակուլտետի ֆեյսբուկյան էջը (https://www.facebook.com/aspufizmath), որոնց անդամակցում են մեծաթիվ (շուրջ 18000) շահառուներ, այդ թվում՝ ուսուցիչներ, դասախոսներ, աշակերտներ:
4. ՀՊՄՀ-ի լրատվական կենտրոնի կողմից նկարահանվել և տեղադրվել են Youtube-ում «Հաջողության բանաձեվ» տեսահոլովակներ՝ նվիրված ֆակուլտետի մասնագիտությունների խնդիրների լուսաբանմանը:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
2022 թ. միջազգայնացման գործընթացների շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները ըստ ամբիոնների. Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը շարունակել է արդյունավետ համագործակցությունը Ֆրանսիայի Լորենի, Իտալիայի Պադովայի, Ամերիկայի Միացյալ նահանգների Բոզեմանի և Սան Անտոնիոյի համալսարանների, Ֆլորենցիայի Օպտիկայի Ազգային Ինստիտուտի և Կիրառական Ֆիզիկայի Ինստիտուտի հետ: Համագործակցության արդյունքում մշակվել և իրականացվել են համատեղ գիտական ծրագրեր, հրատարակվել համատեղ գիտական հոդվածներ: Աշխատանքներին մասնակից են եղել նաև ֆիզիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները. Ս. Գասպարյանն կրկնակի այցելություն է կատարել Դուբնայի միջուկային ֆիզիկայի ինստիտուտ միջազգային գիտաժողովին և աշխատաժողովին մասնակցելու նպատակով: Մ. Մարգարյանը ընդգրկված է գիտական խմբի կազմում, որը հայտ է ներկայացրել Հայ-Իտալական գիտատեխնիկական համագործակցության շրջանակներում հայտարարված դրամաշնորհային ծրագրի մրցույթին մասնակցելու համար: Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը գիտական հետազոտությունների ոլորտում համագործակցում է Կիլլի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Ստեկլովի անվան Մաթեմատիկական ինստիտուտի (Ռուսաստան), Սոլիկամսկի պետական մանկավարժական ինստիտուտի (Ռուսաստան), Մ. Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան (Բելոռուսիա) հետ: Ամբիոնի ասպիրանտ Սաբինա Գասպարյանը 2022 թ. այցելել է Կիլլիի համալսարան մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի հիմնախնդիրների ուսումնասիրման նվիրված ասպիրանտական հետազոտական աշխատանք կատարելու

նպատակով: Լ. Ղուլղազարյանը և ամբիոնի ասիստենտ Գ. Ասատրյանը Էռազմուս+ ծրագրի շրջանակներում (դասախոսների փոխանակման ծրագիր) այցելել են Կիլիի համալսարան: Այցելության ընթացքում կայացել են մասնագիտական քննարկումներ՝ կապված մաթեմատիկական առարկաների՝ մաթանալիզի, հանրահաշվի, երկրաչափության դասավանդման արդի մեթոդիկաների, մաթեմատիկա մասնագիտության ուսումնական և առարկայական ծրագրելի հետ: Արդյունքում վերանայվել են մաթեմատիկա մասնագիտության ուսումնական ծրագիրը, որը՝ ընթացիկ տարում ֆակուլտետի մեթոդական հանձնախմբի քննարկումից հետո կներկայացվի ֆակուլտետի խորհրդին:

2022 թ ամբիոնի դասախոս Ա. Ենոքյանը դրամաշնորհային ծրագրով մեկնել է Ավստրիա Կլագենֆուրտի համալսարանի «Մաթեմատիկիայի դիդակտիկայի ինստիտուտ» հետազոտություններ կատարելու նպատակով:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը համագործակցում Կիևի «Ի. Սիկորսկու անվան պոլիտեխնիկական ինստիտուտի» և «Վ. Բակուլի անվան գերկարծր նյութերի ինստիտուտի» հետ: Ամբիոնիչ վարիչ Ա. Սահրադյանը հանդիսանում է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտի «Приборостроение» և «Ukrainian Journal of Mechanical Engineering and Materials Science» ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործընթացին նպաստող իրականացված աշխատանքներն են.

Ֆակուլտետի բազամյա սերտ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի (ՖՀԻ), Բյուրականի աստղադիտարանի և Ալեխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտի հետ: Ֆիզիկայի և նրա դասավանդման ամբիոնի աշխատակիցները և ֆիզիկա մասնագիտությամբ մագիստրանտ Մ. Մարգարյանը մասնակցել են ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում (ՖՀԻ) անցկացված «Լազեր – 2022» միջազգային գիտաժողովին (ipr.sci.am/lp/archive/LP_2022_abstracts.pdf): Ակտիվ գիտահետազոտական աշխատանքներ են վարում մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհիները՝ Վ. Մկրտչյանը ընդգրկված է Բյուրականի աստղադիտարանի գիտական խմբի կազմում (www.bao.am/activities/projects/21AG-1C053/), Մ. Մարգարյանը ընդգրկված է ՖՀԻ-ի գիտական խմբի կազմում, որը Ֆլորենցիայի օպտիկայի ազգային ինստիտուտի հետ համատեղ զբաղվում է լազերային կերամիկական նյութերի սպեկտրադիտական հատկությունների ուսումնասիրմամբ (scs.am/files/cank-SC-CNR-2023.pdf), Ստելլա Գասպարյանն ակտիվ գիտական գործունեություն է ծավալել՝ ընդգրկվելով Ալեխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտի նանոտեխնոլոգիաների լաբորատորիայի կազմի մեջ, որի ուղղորդմամբ մասնակցել և զեկույցով հանդես է եկել Դուբնայի միջուկային ֆիզիկայի ինստիտուտում կազմակերպած միջազգային գիտաժողովում (indico.jinr.ru/event/3084/):

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը սերտորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի (ՖԿՃԻ) «Նյութագիտության» լաբորատորիայի հետ, ՀԱՃՀ-ի «Մետալուրգիայի և նյութագիտության» գիտական լաբորատորիայի, Տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ հետ, ինչը նպաստում է արտաքին կապերի հաստատմանը և զարգացմանը:

Ինֆորմատիկայի և նրա դասավանդման ամբիոնը սերտորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ, որի շրջանակներում արդեն 5 տարի ամբիոնը Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական կոմպյուտերային ցանցի լիիրավ անդամ է, ամբիոնում գործում է անվճար Eduroam անլար միջազգային համացանցային կապը, որին միացված է աշխարհի շուրջ 100 երկրի խոշորագույն գիտահետազոտական և կրթական հաստատություններ: Հայ-Հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի համագործակցության շրջանակներում ամբիոնի դոցենտ Կ. Պետրոսյանը մասնագիտական դասընթացներ է վարել (https://www.armindia.am/arm/home/):
Ամբիոնը համագործակցում է նաև Microsoft ընկերության Հայաստանյան ներկայացչության հետ, որի շրջանակներում ամբիոնի դասախոս Վ. Խառատյանը վարել է մասնագիտական դասընթացներ:
Այսպիսով, հաշվետու տարում հանրապետական կրթական և գիտական հաստատությունների, ինչպես նաև ՀՀ-ու գործող արտասահմանյան գիտական մասնաճյուղերի հետ իրականացված համատեղ աշխատանքները հնարավորություն կնձեռեն ընդրայնել ֆակուլտետի արտաքին կապերը:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:
Ֆակուլտետում գործող ուսուցման որակի մշտադիտարկման հանձնախումբ, որի մեջ ներգրաված են ուսուցման որակի ամբիոնների և ֆակուլտետի պատասխանատուները, իրականացրել է հետևյալ միջոցառումները. • ըստ հաստատված ժամանակացույցի հրավիրվել են նիստեր, որտեղ քննարկվել են ուսուցման որակի հետ առնչվող հարցեր՝ առցանց դասավանդման մեթոդների կիրառման աստիճանը, դասավանդման ընթացքում ծրագրային միջոցների օգտագործման ինտենսիվությունը, ուսանողների և դասախոսների ներգրավվածության աստիճանը Google classroom հարթակում և այլն: • Ֆակուլտետում շրջանառության մեջ է դրված մագիստրոսների աշխատանքային պլանը, որտեղ կիսամյակի կտրվածքով պլանավորվում են յուրաքանչյուր մագիստրանտի հետազոտական և ուսումնական աշխատանքի փուլերը, նշվում են կատարման ու հաշվետվության ժամկետները: • Յուրաքանչյուր մագիստրանտ կիսամյակի ավարտին ատեստավորվում է համապատասխան ամբիոնի նիստում, ինչը վավերացվում է ֆակուլտետի խորհրդի հաստատմամբ: Ատեստավորում չանցած մագիստրանտը ներկայացվում է հեռացման: Սա նպաստում է դրական վերջնարդյունքների ստացմանը և, փաստորեն, արգելակում հանպատրաստի թեզերի պաշտպանությունը, փոքրացնում է գրագողության ռիսկերը: • Ֆակուլտետում մշակվել և կիրառվում է մագիստրոսական թեզերի և ամփոփիչ ավարտական աշխատանքների գրախոսման ձևաչափ, ինչը ապահովում է գրախոսությունների պատշաճ մակարդակը:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:
Ուսուցման որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված են. • Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը, որը համապատասխան հարցադրումներ է անում ֆակուլտետի խորհրդի և դեկանիտի նիստերում, • Խորհրդի անդամներից երկու ուսանող ներգրավված է մեթոդական հանձնախմբի կազմում, • Ֆակուլտետի դեկանը և որակի պատասխանատուն պարբերաբար հանդիպում են կուրսերի ներկայացուցիչների (այդ թվում՝ ավագների) հետ, որտեղ ի թիվս ընթացիկ հարցերի քննարկվում են ուսուցման որակի հետ կապված խնդիրներ, • ուսման որակի հետ կապված խնդիրները (որոնք ի հայտ են եկել դասալսումների քննարկումների կամ ուսանողների հարցադրումների առդյունքում) քննարկվել են ամբիոնների նիստերում և ֆակուլտետի խորհրդում: • ուսման որակի հարցերը քննարկվել են դպրոցների տնօրենների և ուսուցչակազմի հետ ուսանողների հավաքագրման շրջանակներում կազմակերպված հանդիպումներում, ինչպես նաև մանկավարժական պրակտիկան կազմակերպող դտրոցների ուսուցիչների հետ:

Ֆակուլտետի ինքնագնահատում (SWOT) վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

·Գիտամանկավարժական դասախոսական ներուժի առկայությունը, **· Դասավանդման գործընթացում արդի տեխնիկական միջոցների կիրառումը,** **· Անհրաժեշտ ուսումնական սարգավորումներով հագեցված ուսումնական լաբորատորիաների առկայությունը,** **· Գիտական լաբորատորիայի առկայությունը,** **· Ակտիվ համագործակծությունը այլ (այդ թվում արտասահմանյան) գիտական և կրթական հաստատությունների հետ,** **· Գիտական հոդվածների հրատարակում բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում**	Բակալավրիատի մասնագիտական ծրագրերի ցածր գրավչություն, Հետազոտական աշխատանքներում ընդգրկված ուսանողների նվազ թվաքանակը, Մասնագիտական իրազեկման աշխատանքների ցածր արդյունավետություն, Փորձարարական եղանակներով ուսուցման որակի ստուգման բացակայություն Բակալավրիատի ուսանողների՝ հատկապես ֆիզիկա և տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությունների թվաքանակի սակավություն, Մագիստրատուրայի դիմորդների հոսքի նվազում Դասախոսական կազմի սերնդափոխության ցածր տեմպերը:
Հնարավորություններ	Վտանգներ
· Դրամաշնորհների մրցույտներին ավելի ակտիվ մասնակցություն **· Դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերին ավելի ինտենսիվ մասնակցություն,** **· Դպրոցների հետ համագործակցության բովանդակության խորացում**	· Բնագիտամաթեմատիկական առարկաների հանդեպ հասարակական պահանջարկի նվազում, · Դասախոսական աշխատանքի հանդեպ երիտասարդ մասնագետների մոտիվացիայի նվազումը

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը կազմում է 12652 ժամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 162 ժամով, և կատարվել է ամբողջությամբ:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը պարբերաբար քննարկվել են ամբիոնի նիստերում, իրականացվել են աշխատանքային քննարկումներ դասախոսների և ուսանողների շրջաններում, ինչպես նաև կազմակերպվել են գիտաժողովներ, որտեղ զեկուցել են նաև Մաթեմատիկա մասնագիտության ուսանողները:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնը կիրառում է ուսանողների գնահատման այն համակարգը, որը ընդունել և հաստատել է համալսարանի գիտական խորհուրդը, իսկ գնահատման բաղադրիչները ընտրելիս առաջնորդվել է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորի տրամադրած շրջաբերականներով և ֆակուլտետային խորհրդի ընդունած որոշումները: Ամբիոնի կողմից մշակվել են գնահատման բաղադրիչները և չափանիշները ռեֆերատների, PP ներկայացումների, գրավոր աշխատանքների, ընթացիկ աշխատանքների, հանրագումարային ամփոփիչ ստուգումների համար. ՌԵՖԵՐԱՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ Ռեֆերատի կատարումը ենթադրում է ուսանողի կողմից ներքոհիշյալ 3 բաղադրիչների կատարում՝ 100%=20%+40%+40%. ԲԱՂԱԴՐԻՉ 1. Ռեֆերատի ձևավորման համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և (20%) պահանջներին: ԲԱՂԱԴՐԻՉ 2. Ռեֆերատի բովանդակության համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և (40%) պահանջներին: ԲԱՂԱԴՐԻՉ 3. Ուսանողի կողմից ռեֆերատի բովանդակությանը տիրապետման և ներկայացման մակարդակը: (40%)

Վերոնշյալ բաղադրիչների ամբողջական և արդյունավետ կատարման համար ուսանողը գնահատվում է առավելագույնը 100 միավոր հետևյալ չափանիշներով:

ՌԵՖԵՐԱՏԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ԲԱՂԱԴՐԻՉ	ՉԱՓԱՆԻՇԵՐ			
1-ԻՆ	16-20 միավոր	11-15 միավոր	6-10 միավոր	0-5 միավոր
Ռեֆերատի ձևավորման համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշների և պահանջներին: Առավելագույնը՝ 20 միավոր	Ռեֆերատն ամբողջությամբ ճիշտ է ձևավորված. ընդհանուր կառուցվածքը, տիտղոսաթերթը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը, համապատասխանում են դասախոսի կողմից ներկայացված պահանջներին: Բանաձևերը, աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, գծագրերը ձևավորված են հստակ և պատկերավոր: Ճիշտ են կատարված հղումները, պահանջվող ձևաչափով են ներկայացված գրական աղբյուրները:	Ռեֆերատը գրեթե ամբողջությամբ ճիշտ է ձևավորված. կառուցվածքը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը ոչ ամբողջությամբ են համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, կան որոշ անհամապատասխանություններ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումների մեջ: Գրական աղբյուրները և հղումները ներկայացված են որոշ սխալներով:	Ռեֆերատը ձևավորված է բազմաթիվ սխալներով. կառուցվածքը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը հիմնականում չեն համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, կան բավականին շատ անհամապատասխանու-թյուններ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումների մեջ: Գրական աղբյուրները և հղումները ներկայացված են սխալներով:	Ռեֆերատը ամբողջությամբ սխալ է ձևավորված. կառուցվածքը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը չեն համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, անհրաժեշտ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումները անհստակ են և անկանոն: Գրական աղբյուրները և հղումները բացակայում են կամ ներկայացված են էական սխալներով:

2-ՐԴ	30-40 միավոր	15-29 միավոր	6-14 միավոր	0-5 միավոր
անվան թիվ 139 ավագ դպրոց ի մանկա վարժն երի և աշակե րտների հետ:	ազարյ ան, Ա. Խա չանյա ն, Ա. Գրի գորյա ն, Ս. Հա կոբյա ն	ավագ դպրոցի բնագիտա մաթեմատ իկական հոսքում"	
Եղիշե Չարեն ցի անվան թիվ 67 հիմնակ ան դպրոց: Մանկա վարժն երի հետ Աշակե րտների հետ "Սեմին արների և ինտելե կտուալ խաղեր ի կազմա կերպու մը աշակե րտների համար " թեմայո վ	Ա. Ենոքյ ան, Ս. Հա կոբյա ն, Ս. Հա րությու նյան, Հ. Միք այելյա ն	Ապագա մանկավա րժին ներկայաց վող պահանջն երը. քննարկում և կարիքներ ի վերհանում "	ապրիլ, 2022 https://www.facebook.com/plugins/post.php?href=https%3A%2F%2Fwww.facebook.com%2Fmatinffiz.ux%2Fposts%2Fpfbid0F3oDDF2W7Z7LCC3kNW4si4c5AxUs7a6z1yFg6dHaQt23jSLGUejJvjdJeu2xtzUWI&

միջոցառում:			
Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց:	Ա. Ենոքյան, Ա. Մկրտչյան	"Սեմինարների և ինտելեկտուալ խաղերի կազմակերպումը աշակերտների համար	մայիս, 2022
Դաստիարակչական			

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
հանդիպում-դասախոսություն https://aspu.am/hy/content/gegheciky_matematikayum/#sthash.zQEbZ16b.dpbs	Միքայելյան Հ. Ս.	«Կարոտի ճամփաներով	04. 07. 2022

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնի որակի ապահովման աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար ամբիոնում գործում է որակի ապահովման հանձնախումբ, որի աշխատանքները ղեկավարում է որակի պատասխանատուն՝ Ա. Մկրտչյանը: Որակի ապահովման աշխատանքները կատարվում են Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի կազմած գրությունների և մշակած ուղեցույցերի, ամբիոնի ՈԱ տարեկան պլանի հիման վրա: Ուսումնական տարում վերանայվել և լրամշակվել են ԲԿԾ-ի և ՄԿԾ-ի “Մաթեմատիկա” մասնագիտության մասնագրերը, մշակվել են նոր՝ “Մաթեմատիկա-ֆիզիկա”, “Մաթեմատիկա-ինֆորմատիկա” մասնագիտությունների համար ԲԿԾ-ներ:

Վերափոխվել և մշակվել են գնահատման բաղադրիչների չափանիշները:

Լրամշակվել են ամբիոնի բոլոր դասընթացների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները:

Դասավանդման գործընթացի որակի ապահովման տեսակետից իրականացվել են դասալսումներ, որոնց արդյունքների վերաբերյալ արված դիտարկումները և որակի բարձրացմանն ուղղված առաջարկները քննարկվել են ամբիոնում և արձանագրվել դասալսումների մատյանում:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են ՀՊՄՀ-անգլերենի, ՀՊՄՀ-որակի բարձրացման և առարկայական նկարագրերի մշակման, ՈԱԱԿ–ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին:

Ամբիոնը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործընթացը, կազմակերպել է միջազգային «Մաթեմատիկական կրթություն 10» ամենամյա գիտաժողովը և ՀՊՄՀ–ի 100–ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի՝ «Ժամանակակից մաթեմատիկա և նորարարական մոտեցումները ուսուցման մեթոդիկայում» բաժանմունքի աշխատանքները:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում և արտասահմանում կազմակերպված մի շարք գիտաժողովների, աշխատաժողովների և քննարկումների:

Ամբիոնի աշխատակիցների որոշ աշխատանքներ անմիջականորեն կապված են ուսումնական գործընթացի, նրա բարելավման խնդիրների հետ, ավելին, որոշ աշխատանքներ անմիջականորեն օգտագործվում են ուսուցման գործընթացում՝ որպես ուսումնական դասընթացներ: Վերոնշյալ տարում ամբիոնի աշխատակիցների կողմից տպագրել է գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ, որոնք ներկայացված են հաշվետվության համապատասխան բաժնում: Ինչպես նաև ուսանողների հետ համատեղ տպագրվել են 5 գիտահետազոտական աշխատանքներ:

Ամբիոնն իր գործունեության ամբողջ ընթացքում ապահովել է շրջանավարտների հետ հետադարձ կապը, ովքեր իրենց ավանդն ունեն «Մաթեմատիկա» մասնագիտության գործունեության ոլորտում: Մեր դասախոսները և շրջանավարտները նաև իրենց ակտիվ գործունեությունն են ծավալում «Մաթեմատիկական կրթություն» ֆեյսբուքյան էջում:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն իր շրջանավարտներին ապահովել է աշխատանքով դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներքին և արտաքին շահակիցները մասնակցել են ամբիոնի կողմից կազմակերպված կոնֆերանսներին և սեմինարներին: Ամբիոնի որակի պատասխանատու՝ Արաքսյա Մկրտչյանը 2022 թվականի մայիս-հուլիս ամիսներին մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից անցկացված վերապատրաստմանը:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն

Դասալսումներ	Ամբիոնի վարիչ, որակի պատասխանատու	Դասալսումների մատյան
Ամբիոնի նիստեր	Ամբիոնի վարիչ	Արձանագրություններ
Որակի ապահովման հանձնախմբի աշխատանքային քննարկումներ	Որակի ապահովման պատասխանատու	Որակի ապահովման հանձնախմբի հաշվետվություններ

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական մակարդակը	Ուսանողների թվի նվազում
Համագործակցությունը դպրոցների հետ, համատեղ սեմինարներ, քննարկումներ	Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջին տարիքի բարձր լինելը
Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գիտական, ուսումնական և հետազոտական հրատարակումները	Ամբիոնի ՊԴԱ–ի շարժունակության և ուսանողության փոխանակման ծրագրերի ոչ բավարար մակարդակ
Մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացում ամբիոնի ներգրավվածություն	
Համագործակցությունը արտասահմանյան բուհերի հետ	
Նոր մասնագիտական ծրագրերի բացում, որոնք հնարավորություն են տալիս ստանալ կրկնակի մասնագիտություն	
Հնարավորություններ	Վտանգներ
Միջազգային կապերի ընդլայնում	Համապատասխան երիտասարդ մասնագիտական կադրերի համալրման բարդություն

ՊԴԱ–ի և ուսանողների միջազգային ծրագրերի ներգրավվածության ապահովում	ՊԴԱ–ի մեթոդական ուղղությամբ արտաքին վերապատրաստման իրականացման հնարավորության անբավարար մակարդակ

Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը 2022-2023 ուսումնական տարում կազմել է 9997 ժամ, որը նախորդ ուսումնական տարվա ժամաքանակի հանդեպ նվազել է շուրջ 2000 ժամով: Արդյունքում ամբիոնի հաստիքների քանակը նվազել է 3-ով: ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների քանակի տվյալ և նախորդ տարվա թվերի համադրության արդյունքում պարզ է դարձել, որ դիմորդների և արդյունքում ժամաքանակների նվազումը պայմանավորվել է ամբողջ հանրապետությունում դիմորդների թվի և քննական առարկաներից դրական շեմը հաղթահարած շրջանավարտների թվի նվազմամբ:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ուսումնառության վերջնարդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները, դրանց պարբերաբար արդիականացման հիմնախնդիրները քննարկվել են ինչպես ամբիոնի, այնպես էլ բուհի համապատասխան ստորաբաժանումներում, որոնց արդյունքում իրականացվել են բարելավումներ, ընթացիկ փոփոխություններ: Մասնավորաբար վերանայվել և փոփոխվել են ամբիոնի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը և դրանց համապատասխան փոփոխվել են դասավանդվող բոլոր առարկաների կրթական ծրագրերը: Փոփոխությունները պայմանավորված են 2023թ.-ից հանրակրթության մեջ ներդրվող «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» ուսումնական առարկայի բովանդակությամբ, չափորոշչային պահանջներով և վերջնարդյունքներով, ինչպես նաև բուհի ռազմավարությամբ սահմանված մրցունակ և կոմպետենտ մասնագետի պատրաստման անհրաժեշտությամբ: Հարկ է նշել, որ ամբիոնի վարիչ Ա.Թադևոսյանը ներգրավված է եղել ԿԳՄՍՆ, «ԵՄ-ն նորարարության համար» ծրագիր «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություններ» առարկայի նոր ծրագրի և չափորոշչային խմբի դասավանդման և ուսումնառության նյութերի մշակման խմբում որպես փորձագետ և ՄԿԾ-երի լրամշակման ժամանակ հաշվի են առնվել նաև խմբի կողմից Տավուշի մարզում նշյալ առարկայի ներդրման փորձարկումների արդյունքները:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ամբիոնը կիրառում է ուսանողների գնահատման համակարգը, որն ընդունել և հաստատել է համալսարանի գիտական խորհուրդը, իսկ գնահատման բաղադրիչներն ընտրելիս առաջնորդվել է ուսումնական գործընթացների հարցերով տրամադրած շրջաբերականներով և ֆակուլտետային խորհրդի ընդունած որոշումներով:

Ամբիոնի կողմից հետևականորեն իրականացվում են թեզերի և ավարտական աշխատանքների հետազոտության արդյունքների հանրայնացման, իրազեկման և ներդրման գործընթացներ, մշակվում են հետազոտական ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի տեսակարար կշռի ավելացման մեխանիզմներ, մասնավորաբար հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ: Գրագողության դեմ պայքարի համատեքստում ամբիոնի կողմից շուրջ 4 անգամ կազմակերպվում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման նիստեր, ինչպես նաև մագիստրոսական թեզի շրջանակներում ամբիոնի մագիստրոսի և ղեկավարի կողմից մշակվել և ներդրման փուլում է գտնվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրային պլագիատը ստուգող համակարգ, որը նախնական փորձարկում է անցել ամբիոնի կողմից ղեկավարվող հետազոտական աշխատանքների շրջանակում, իսկ կուրսային, ավարտական և մագիստրոսական թեզերն ստուգվում են համացանցային միջավայրում գործող Plagiarism Checker by Grammarly առցանց համակարգով. https://www.grammarly.com/plagiarism-checker

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	**Քննարկման հարցերը**	**Ընդունված որոշումները**
Արձ. 1, 24.01.2022թ.	Նոր ՄԿԾ-ների լրամշակման գործընթացի մասին: /Զեկուցողներ՝ Մ. Փոթիկյան, Ա. Նադարյան, Ա. Նավասարդյան, Վ. Խառատյան /	***Որոշեցին*** - լրամշակել առարկայական ծրագրերը՝ խստագույնս համապատասխանեցնելով դրանց վերջնարդյունքները մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքներին:
Արձ. 1, 25. 02.2022թ.	Առկա մագիստրատուրայում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» կրթական ծրագրի ներդրման քննարկում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	***Որոշեցին 1.*** - հաշվի առնելով այն հանգամանքը, որ համանուն ուսումնական առարկան դպրոցներում ներդրվելու է 2023 թվականից և դեռ չկա դրա բակալավրական կրթական ծրագիրը, աշխատանքները կենտրոնացնել բակալավրի կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ: ***Որոշեցին 2.*** - հաշվի առնելով դպրոցում ինֆորմատիկա և մաթեմատիկա ուսումնական առարկաների փոխկապակցվածությունը և տվյալ առարկաների՝ միևնույն մասնագետների կողմից դասավանդման հանգամանքը, ինչպես նաև դպրոցում վերոնշյալ երկու առարկաների ուսուցիչների պահանջարկը և դասավանդման ժամաքանակների համամասնությունը որոշվեց նախաձեռնել

		նոր ՄԿԾ-ի ներդրման և հավատարմագրման գործընթաց, որը կընձեռի կրկնակի դիպլոմավորման հնարավորություն (մաթեմատիկա և ինֆորմատիկա):
Արձ. 1, 04. 03.2022թ	Ռուբեն Թոփչյանի՝ Համակարգչային մտածելակերպ: «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի փորձնական դասագրքի քննարկում:	***Որոշեցին*** - Ռուբեն Թոփչյանի՝ Համակարգչային մտածելակերպ: «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի փորձնական դասագրքին տալ դրական եզրակացություն, ինչպես նաև ներառել դրա բովանդակային միջուկը և մեթոդական լուծումները քննարկման առարկա դարձնել Ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա դասընթացի շրջանակներում:
Արձ. 1, 06. 04. 2021թ.	2021-2022 ուստարում վերականգնված ուսանողների թեմաների, ինչպես նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի փոփոխությունների քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան /	***Որոշեցին*** - Փոփոխելով արդիականությունը կորցրած թեմաները հաստատել 2021-2022 ուստարում վերականգնված ուսանողների թեմաների, ինչպես նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը:
Արձ. 1, 18. 05. 2022թ.	1. Ստուգման ձևերի քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/ 2.2022-2023 ուստարվա ծանրաբեռնվածության հետ կապված հարցերի քննարկում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	***ՈՐՈՇԵՑԻՆ 1.*** - ելնելով առարկայի բնույթից և առանձնահատկություններից հաստատել դասավանդող մասնագետների կողմից առաջարկված և քննարկված ստուգման ձևերը: ***ՈՐՈՇԵՑԻՆ 2.*** - Հաշվի առնելով ուրվագծվող վիճակը մշակել մեխանիզմներ հնարավորինս մեծ թվով դիմորդներ ներգրավվելու համար: Մասնավորաբար շարունակել ֆակուլտետի և ամբիոնի կողմից իրականացվող անվճար առարկայական պարապմունքներն դիմորդների հետ, մասնագիտական իրազեկման այցերն ու AspuLogin մրցույթը:
Արձ. 1, 15. 06. 2022թ.	1. 2022-2023 ուստարվա ամբիոնի ծավալների հետ կապված հարցերի քննարկում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	***ՈՐՈՇԵՑԻՆ 1.*** - Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների ղեկավարմանը հատկացված ժամաքանակը բավարար չէ ուսանողների հետ որակյալ հետազոտական աշխատանք կատարելու

	2. Պետական ավարտական քննությունների հանձնաժողով նախագահի հաշվետվություն: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան /	համար, առաջարկել ֆակուլտետի գիտական խորհրդում քննարկել և միջնորդությամբ հանդես գալ համալսարանի գիտական խորհրդում՝ ավարտական աշխատանքների ղեկավարմանը հատկացված ժամաքանակները ավելացնելու հարցով: ***<u>ՈՐՈՇԵՑԻՆ 2.</u>*** - հաջորդ տարվա ավարտական աշխատանքների թեմաները ձևակերպելիս, հնարավորության դեպքում հաշվի առնել գործատուների և գործընկեր դպրոցների պահանջները և մշակել դրա իրականացման մեխանիզմներ: - առաջարկությամբ հանդես գալ ֆակուլտետի գիտական խորհրդում՝ ավարտական աշխատանքների ատեստացիաները ևս դարձնել գնահատվող և համապատասխան կշռով այդ գնահատականը ներառել ավարտական աշխատանքի պաշտպանության ամփոփիչ գնահատականում:
Արձ. 1 31. 08. 2022թ.	1.2022-2023 ուստարվա առարկայական նկարագրերի, տրոհումների և հարցաշարերի քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	***<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>*** - Ի գիտություն ընդունելով ամբիոնի մեթոդական հանձնախմբի լրամշակման արդյունքների զեկույցները՝ հաստատել 2022-2023 ուստարվա առարկայական նկարագրերը, տրոհումները և հարցաշարերը՝ մինչև ուսումնական տարվա սկիզբը ապահովելով դրանց լիարժեք տեղակայումն Google Classroom հարթակում:
Արձ. 1. ***20. 09. 2022թ***	1. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա համակարգերի մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/ 2. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա համակարգերի ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:	***<u>ՈՐՈՇԵՑԻՆ 1.</u>*** - Մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների ձևակերպման ընթացքում հաշվի առնել կրթական նոր չափորոշչային պահանջները, ինչպես նաև ՀՊՄՀ-ում իրականացվող պարտադիր ատեստավորման ենթական ուսուցիչների վերապատրաստման ընթացքում դասավանդող ուսուցիչների շրջանում բացահայտված և վերհանված

	/Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/ 3. 2022-2023 ուստարվա առկա բակալավր 3-րդ կուրս 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	մասնագիտական և մեթոդական կարիքներն ու խնդիրները: ***ՈՐՈՇԵՑԻՆ 2.*** - Կուրսային աշխատանքների թեմաների ձևակերպման ժամանակ առաջնորդվել հետևյալ սկզբունքով. կուրսային աշխատանքի թեման ընտրել այնպիսին, որ հնարավոր լինի ապահովել հետազոտության շարունակականությունը և հետագայում այն զարգացնելով վերափոխել ավարտական աշխատանքի:
Արձ. 1, 14. 10. 2022թ.	1. Նոր մասնագիտության կրթական ծրագրի և ուսումնական պլանի քննարկում և հաստատում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/ 2. Առկա և հեռակա ուսուցման համակարգերի պրկտիկայի հարցերի քննարկում: /Զեկուցող՝ Գ. Էլոյան/	***ՈՐՈՇԵՑԻՆ 1.*** - Նոր մասնագիտության լիցենզավորման հանձնախմբի համապատասխան փաստաթղթերի ներկայացման և քննարկման արդյունքում հաստատել նոր մասնագիտության կրթական ծրագիրը և ուսումնական պլանը, ինչպես նաև իրազեկման այցերի ժամանակ տեղեկատվություն տրամադրել ավարտական դասարանների աշակերտներին այդ նոր մասնագիտության և դրա ընձեռած հնարավորության մասին: ***ՈՐՈՇԵՑԻՆ 2.*** - Պրակտիկայի ղեկավար Գ.Էլոյանը առաջարկեց, որ առկա բակալավրիատի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի և 4-րդ կուրսի 1-ին կիսամյակների մանկավարժական պրակտիկայի ընթացքում ևս ներառված լինեն մանկավարժ և հոգեբան: Որոշվեց դիմել ֆակուլտետի գիտական խորհուրդ և պրակտիկայի վարչություն՝ նշված հարցը քննարկելու համար:
Արձ. 1, 23. 11. 2022թ.	1. Հեռակա ուսուցման բակալավրիատի ընդունելության արդյունքների և բեռնվածքների վերաբաշխման հարցերի քննարկում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/ 2. Առարկայական ծրագրերի վերանայման և վերահաստատման հարցերի քննարկում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	***ՈՐՈՇԵՑԻՆ 1.*** - Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինֆորմատիկա մասնագիտության դիմորդների շուրջ 80%-ը ներառված են եղել ամբիոնի դոցենտներ Ա.Թադևոսյանի, Ջ.Սրապիոնյանի և Գ.Էլոյանի կողմից կազմակերպվող պարապմունքներում, և նրանց 90%-ը հաղթահարել է դրական շեմն ու մրցույթով ընդունվել մեր համալսարան՝ խրախուսել այդ պարապմունքների շարունակականությունը, ինչպես նաև այդ

	3. Նոր մասնագիտության լիցենզավորման հարցերի քննարկում: /Զեկուցող՝ Ա. Թադևոսյան/	գործընթաց ներառել ամբիոնի այլ մասնագետների ևս: ***<u>ՈՐՈՇԵՑԻՆ 2.</u>*** **-** Ամբիոնի որակի պատասխանատուի և որակի հանձնախմբի ներկայացման արդյունքում որոշվեց վերահաստատել լրամշակված առարկայական ծրագրեր: ***<u>ՈՐՈՇԵՑԻՆ 3</u>*** **-** Նոր մասնագիտության լիցենզավորման հանձնախմբի համապատասխան փաստաթղթերի ներկայացման և քննարկման արդյունքում սկսել նոր մասնագիտության կրթական ծրագրի պահանջներին և վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրերի ձևավորման աշխատանքները, ինչպես նաև իրազեկման այցերի ժամանակ տեղեկատվություն տրամադրել ավարտական դասարանների աշակերտներին այդ նոր մասնագիտության և դրա ընձեռած հնարավորության մասին:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	2	**-**	-	**10**	8	2	**2**	**12**
Համատեղող	-	**1**	1	**2**	1	1	**-**	**3**
Ժամավճարային	-	**2**	2	**1**	1	-	**-**	**3**
Ընդամենը	2	**3**	3	**13**	10	3	**2**	**18**

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը անընդհատ մշտադիտարկվում է, կատարված աշխատանքները ներկայացվում և քննարկվում են ամբիոնի նիստերում:
Ամբիոնն ունի դասավանդվող բոլոր առարկաների առարկայական նկարագրերը, ուսումնական և մեթոդական նյութերը, որոնք համապատասխանում են մասնագիտական ելքային վերջնարդյունքներին:
Ամբիոնն ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով համալրված լսարաններ, իսկ ուսուցման գործընթացն իրականացվում է ինտերակտիվ մեթոդներով:
Ամբիոնի վարիչ Ա.Թադևոսյանը 2021 թվականից ղեկավարում է ՀՀ ԳԿՄՍ նախարարության կողմից հաստատված ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացը ՀՊՄՀ-ում, իսկ ամբիոնի դասախոսները ներառված են այդ ծրագրում որպես վերապատրաստողներ.
https://escs.am/files/files/2021-06-07/bde2b85256424b0d3111c95ca72ae452.pdf?fbclid=IwAR1Bla7B3qH-hEL9NVXtEPX9n1mxyPdRyNqVuU6byrzahyF-85S3VhHSdMo

https://aspu.am/hy/content/havastagrer_verapatrastvatsnerin/#sthash.T8VbyBrD.dpbs,

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է նաև «Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման» կրթական ծրագրում.
https://escs.am/am/news/13401

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
					2

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
									3

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի աշխատակիցներն ու հայցորդներն ակտիվորեն ներգրավված են նաև գիտահետազոտական տարբեր նախագծերում և համագործակցություններում. Ամբիոնը 2018թ. -ից ակտիվ գիտահետազոտական համագործակցություն է վարում Մեծ Բրիտանիայի Քիլի համալսարանի համապատասխան ֆակուլտետի հետ: Ամբիոնի վարիչ, դոցենտ Ա. Թադևոսյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում հանրակրթական դպրոցներում ներդրվող «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի ինչպես չափորոշիչների և ուսումնական նյութերի մշակման, այնպես էլ լաբորատորիաների կահավորման և տեխնիկական զինման աշխատանքներում: Մասնավորաբար Ա.Թադևոսյանը ընդգրկված է ԿԳՄՍՆ, «ԵՄ-

ն նորարարության համար» ծրագրում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի նոր ծրագրի և չափորոշչային խմբի դասավանդման և ուսումնառության նյութերի մշակման խմբում որպես փորձագետ և Ինժեներական (Ինֆորմատիկա) լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերման ծրագրում որպես խորհրդատու: Ամբիոնի դոցենտ Ս. Ասատրյանը ներգրավված է Էրազմուս + բարձրագույն կրթությունում երրորդ աստիճանի՝ դոկտորական կրթության արդիականացում /609850-EPP-1-2019-1-AM-EPPKA2-CBHE-SP/ 2020-2023 միջազգային ծրագրում: Ամբիոնի դոցենտ Ն. Գրիգորյանի ղեկավարությամբ, ամբիոնի հայցորդ Ե.Հարությունյանի կատարմամբ այսօր ամբիոնում իրականացվում է գիտական հետազոտություն Բազմաչափանիշային մոտեցմամբ էլեկտրոնային կրթական ռեսուրսների որակի գնահատման մեթոդիկա թեմայով: Պրոֆեսոր Ս. Սողոյանի ղեկավարությամբ, ամբիոնի հայցորդ Հ. Գալստյանի կատարմամբ այսօր ամբիոնում իրականացվում է գիտական հետազոտություն Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը միջին դպրոցում թեմայով: Մանկավարժական գիտությունների դոկտոր Ա. Ծատուրյանի ղեկավարությամբ ամբիոնում իրականացվում է գիտական հետազոտություն ասպիրանտ Գոհար Նահապետյանի կողմից՝ Թվային գրագիտության և համակարգչային գիտության դասընթացի արդյունավետության բարձրացումը առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառմամբ թեմայով:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնը ուշադրության կենտրոնում է պահում գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործընթացը, կազմակերպում է սեմինարներ, որտեղ ընդգրկվում են նաև ուսանողներ (հրապարակումները ներկայացվում են ստորև): Ամբիոնի աշխատակիցները պարբերաբար հանդես են գալիս արտասահմանյան և հայաստանյան գիտաժողովներում:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնի աշխատակիցների աշխատանքները հիմնականում կապված են ուսումնական գործընթացի, նրա բարելավման խնդիրների հետ և դրանց մեծ մասը օգտագործվում են ուսուցման գործընթացում: Ամբիոնի դասախոսներն ու ուսանողները սերտորեն համագործակցում են ՀՀ հանրակրթական դպրոցների հետ, վերհանում մասնագիտական և մեթոդական խնդիրներն ու կարիքները և այդ համագործակցության արդյունքում ամբիոնի դասախոսների կողմից կատարվել է շուրջ 5 դպրոցների նախագծային պատվեր, իսկ Ինֆորմատիկա մասնագիտության բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների կողմից մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների շրջանակներում՝ շուրջ 13 նախագիծ:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
Ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա				Ա.Թադևոսյան, Ն.Գրիգորյան, Ս.Ասարտյան,
	Կիրառական			

Վեբ ծրագրավորում	Վեբ կայքերի և համակարգերի մշակում			Ա.Նավասարդյան, Ս.Ասատրյան, Վ.Խառատյան
Համակարգչային ցանցեր	Համակարգչային ցանցերի մոդելավորում			Ա.Թադևոսյան, Վ.Խառատյան
Մուլտիմեդիա տեխնոլոգիաներ	Մուլտիմեդիա կրթական ռեսուրսների մշակում			Ն.Գրիգորյան, Ս.Միրզոյան
Գործընթացների ավտոմատացում	Ավտոմատացված համակարգերի նախագծում և իրականացում			Ա.Թադևոսյան, Ս.Ասատրյան

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Ջ.Լ.Սրապիոնյան, Ա.Ա.Թադևոսյան	Մաթեմատիկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանի Գլուխ 2. Բաժին 1 Արտահայտությունների ձևափոխություններ և արժեքների հաշվում. լուծումներ և պատասխաններ Ուսումնական ձեռնարկ, Եր.: ՖԻԼԻՆ, 2022-92	92
Ջ.Լ.Սրապիոնյան, Ա.Ա.Թադևոսյան, Ա.Հ.Ավագյան	Որոշ տիպի ոչ գծային հավասարումների մոտավոր արմատների որոնման անդրադարձ բանաձևերի ստացումը և դրանց կիրառությունը Wolfram Mathematica փաթեթում ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր», N 1(42), Երևան 2022թ.,	12
V. G. Sahakyan, A. Vardanyan	About the Possibility of Executing Tasks with a Waiting Time Restriction in a Multiprocessor System, 13th International Conference on Computer Science and Information Technologies, American Institute of Physics, USA, 2022	4
Ս.Ս.Մայիլյան, Մ.Վ.Սարգսյան, Ջ.Լ.Սրապիոնյան	Բարիցենտրիկ մեթոդ: Զանգվածների երկրաչափություն Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան «Գիտական տեղեկագիր», Երևան 2022	7
Գ. S. Կիրակոսյան, A.J.Momjian	Development of IoT stethoscope with supports the telemedicine process Journal RS Global, World Science, Լեհաստան, 2022	
Գ. S. Կիրակոսյան, A.J.Momjian.	Development of specialized system which increases the accuracy of the aritmethic calculations Bulletin of High Technology, Ստեփանակերտ, 2022	11
Գ. S. Կիրակոսյան, Ա.Կ.Մայիլյան	Նեյրոնային ցանցով այրվածքների դասակարգման համակարգի բարելավումը տվյալների բազայի ընդարձակման արդյունքում ՀԱՊՀ Գիտական հոդվածների ժողովածու Լրաբեր, Երևան 2022	7
A.A. Hovhannisyan1, G. K. Grigoryan1,	Synthesis of Monodisperse Latexes to Create Immunodiagnostic Drugs	4

M. Khaddazh2, N. H. Grigoryan1 and A. G.Nadaryan1	Journal of Materials Science and Engineering, ԱՄՆ, 2022	
Ն.Գ.Գրիգորյան, Ա.Գ.Նադարյան, Գ.Կ. Գրիգորյան, Մ.Կ.Մեծոյան, Ա.Ա.Հովհաննիսյան	Պոլիմերային նանոդիսպերս մասնիկների առաջացման տոպոլոգիան մոնոմեր–ջուր հետերոգեն համակարգում Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդիական խնդիրներ և ձեռքբերումներ, ք. Երևան 2022	10
Մ. Զ. Հակոբյան	Схема управления нагрузкой с переменным током ՀԱՊՀ Բանբեր. Էլեկտրատեխնիկա, Էներգետիկա Գիտական հոդվածների ժողովածու, ք. Երևան 2022	9
Մ. Զ. Հակոբյան Ա. Գ .Նադարյան	Ռոբոտ-մանիպուլյատորի կինեմատիկ և դինամիկ կառավարման մեթոդները ԱՊՀ-ի գիտական տեղեկագիր: Բնական գիտություններ, Ստեփանակերտ, 2022	14
Գ. Ա. Էլոյան, Լ. Ն. Պետրոսյան, Մ. Տ. Մանվելյան	Կիրառական բնույթի խնդիրները ավագ դպրոցի մաթեմատիկայի դասընթացում ԱՊՀ-ի գիտական տեղեկագիր: Բնական գիտություններ, Ստեփանակերտ, 2022	10
Ն.Գ.Գրիգորյան, Ե.Խ.Հարությունյան, Զ.Լ.Գրիգորյան	On the method for assessing the quality of e-learning resources Kh. Abovian Armenian State Pedagogical University Main Issues of Pedagogy and Psychology, Yerevan 2022	10
Լ. Ն. Պետրոսյան, Գ. Վ. Դալլաքյան	Քառակուսային ֆունկցիաները որպես էքստրեմալ խնդիրների լուծման գործիք Մաթեմատիկական կրթություն, 10-րդ միջազգային գիտաժողով, Երևան 2022	3

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Բազմաչափանիշային մոտեցմամբ էլեկտրոնային կրթական ռեսուրսների որակի գնահատման մեթոդիկա	ՀՊՄՀ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը միջին դպրոցում	ՀՊՄՀ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
Թվային գրագիտության և համակարգչային գիտության դասընթացի արդյունավետության բարձրացումը առաջանցիկ ուսուցման մոդելների կիրառմամբ	ՀՊՄՀ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Ա.Թադևոսյան, ամբիոնի վարիչ	ՀՊՄՀ	հունվար-մարտ	level A2/B1 սերտիֆիկատ

Ս.Ասատրյան, ամբիոնի դոցենտ	ՀՊՄՀ	նոյեմբեր-հունվար	level A2/B1 սերտիֆիկատ

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Խորհուրդ	ՄՖԻ ՈՒԽ	Նախագահ	Բալյան Հովհաննես

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Soghoyan Spartak	Galstyan Hamlet	Opportunities for inclusive education during the pandemic	ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION Scientific Methodological Journal 2022, p. 81-87
Grigoryan Nana	Harutyunyan Eranuhi	On the method for assessing the quality of e-learning resources	Main issues of pedagogy and psychology, Scientific Periodical, vol. 21 № 2022

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային	Ծրագրավորման միջազգային թիմային ICPC մրցույթ	3	Կիսաեզրափակիչ. Կարեն Հովնիկյան, Արտյոմ Պողոսյան, Սոնա Եսայան
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ամբիոնը սերտորեն համագործակցում է ինչպես ՀՊՄՀ-ի տարբեր ստորաբաժանումների, այնպես էլ ՀՀ տարբեր բուհերի և գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների հետ:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Ամբիոնը սերտորեն համագործակցում է ՀՊՄՀ բոլոր ստորաբաժանումների և ֆակուլտետների հետ, մասնավորապես՝ ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու Արթուր Թադևոսյանը, հաշվետու տարում անցկացրել է Ինֆորմացիոն տեխնոլոգիաները կրթության ոլորտում» խորագրով թվով 4 ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:
Ամբիոնը սերտորեն համագործակցում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Քոմփյութերային համակարգերի և ցանցերի» ամբիոնի հետ, որի շրջանակներում ամբիոնի աշխատակիցներ՝ մանկ գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Թադևոսյանը և մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Ասատրյանը հրավիրվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի առանձին մասնագիտական դասընթացների շրջանակներում դասախոսություններ կարդալու: Արդյունքում, նշյալ ամբիոնի տարբեր տարիների շրջանավարտներ իրենց մագիստրոսական կրթությունը ստացել են ՀՊՄՀ Ինֆորմատիկա մասնագիտությամբ:
Ամբիոնը սերտորեն համագործակցում է նաև ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ, որի շրջանակներում արդեն 5 տարի է, ինչ ամբիոնը Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական կոմպյուտերային ցանցի լիիրավ անդամ է և ամբիոնում գործում է անվճար Eduroam անլար միջազգային համացանցային կապը, որին միացված է աշխարհի ավելի քան 101 երկրի խոշորագույն գիտահետազոտական, կրթական հաստատությունները:
Ամբիոնը համագործակցում է նաև Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի հետ, որի շրջանակներում ամբիոնի աշխատակից, տեխ. գիտ. թեկնածու Կ. Պետրոսյանը հրավիրվել է Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոն՝ առանձին մասնագիտական դասընթացներ վարելու համար:
Ամբիոնը համագործակցում է նաև Microsoft ընկերության Հայաստանյան ներկայացչության հետ, որի շրջանակներում ամբիոնի աշխատակից, ֆիզմաթ. գիտ. թեկնածու Վ.Խառատյանը հրավիրվել է՝ առանձին մասնագիտական դասընթացներ վարելու համար:
Հաշվետու տարում ամբիոնի ուսանողները ամբիոնի դասախոս Կ.Պետրոսյանի ղեկավարությամբ մասնակցել են Ծրագրավորման միջազգային թիմային ICPC մրցույթին (https://icpc.global), որը աննախադեպ էր մանկավարժական բուհի համար, քանի որ այդ մրցույթին մասնակցում են 111 երկրի հիմնականում տեխնոլոգիական բուհերը: Կարծում ենք, որ մասնակցությունն այդ մրցույթին պետք է կրի է շարունակական բնույթ, քանի որ դա ճանաչում է բերում մեր բուհին SS ոլորտում և մասնագիտական փորձ է տալիս մասնակից ուսանողներին:

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Էրազմուս + բարձրագույն կրթությունում երրորդ աստիճանի՝ դոկտորական կրթության արդիականացում /609850-EPP-1-2019-1-AM-EPPKA2-CBHE-SP/	Ֆրանսիա, Լեհաստան, Պորտուգալիա	2020-2023	Ս.Ասատրյան

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:

Ամբիոնը պարբերաբար այցեր է կազմակերպում ՀՀ դպրոցներում՝ իրականացնելով մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ: Մասնավորապես, հաշվետու ժամկետում ամբիոնի աշխատակիցներն այցելել են ավեի քան 15 դպրոցներ, իրականացրել մասնագիտական կողմնորոշում ավագ դպրոցականների հետ:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
Օլիմպիադա	Գ. Դեմիրխանյան, Ա. Թադևոսյան	ASPU.login օլիմպիադա	Ամեն տարի
Վարպետաց դաս	Ա. Թադևոսյան, Ջ. Սրապիոնյան	https://www.facebook.com/aspufizmath/photos/pcb.505050707879287/505048847879473	21.03.2022

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Հաղորդում	Վ.Խառատյան	Հաջողության բանաձև-Ինֆորմատիկա https://www.youtube.com/watch?v=KiW0R3RI4VE	2022
Հաղորդում	Ջ.Սրապիոնյան	Հաջողության բանաձև-Ինֆորմատիկա https://www.youtube.com/watch?v=tGtfXj-RqR0&t=298s	2022
Հաղորդում	Ա.Նադարյան	Հաջողության բանաձև-Ինֆորմատիկա https://www.youtube.com/watch?v=Jm0Mh8CrXuA	2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա. Թադևոսյան, Ջ. Սրապիոնյան	Մասնագիտական իրազեկում Երևանի Միսաք Մեծարենցի անվան թիվ 146 հիմնական դպրոց	26.01.2022

Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա. Թադևոսյան, Ջ. Սրապիոնյան	Մասնագիտական իրազեկում Մասիսի թիվ 3 հիմնական դպրոց	23.02.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա. Թադևոսյան	Մասնագիտական իրազեկում Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ	10.02.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա. Թադևոսյան, Ջ. Սրապիոնյան	Մասնագիտական իրազեկում և վարպետաց դաս Երևանի Միսաք Մեծարենցի անվան թիվ 146 հիմնական դպրոց	21.03.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա.Նադարյան, Վ.Խառատյան	Մասնագիտական իրազեկում Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան N5 ավագ դպրոց	04.04.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա.Նադարյան, Վ.Խառատյան	Մասնագիտական իրազեկում Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոց	04.04.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա. Թադևոսյան, Ջ. Սրապիոնյան	Մասնագիտական իրազեկում Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոց	19.04.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա. Թադևոսյան, Ջ. Սրապիոնյան	Մասնագիտական իրազեկում Արմավիրի մարզի գ. Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց	19.04.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա.Նադարյան	Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց	23.12.2022
Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն	Ա.Նադարյան	Գեղարքունիքի մարզի գ. Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոց	23.12.2022

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնում գործում է որակի ապահովման ներքին համակարգ, որն համակարգում է ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Թադևոսյանը:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Գործընթաց 1. Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում 2020-2021 ուստարվանից ամբիոնում ներդրվել է դասընթացների վերջնարդյունքներից ուսանողների գոհունակության բավարարվածության ստուգման գործընթաց, որի շրջանակներում մշակվել է դասընթացի գնահատման հարցաշար և այն արդեն իրականացվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում: Հարցումներն իրականացված են, արդյունքները վերլուծված և ամբիոնի նիստերում զեկուցված: Արդյունքում ուսանողների կողմից ներկայացված դիտարկումները և առաջարկությունները քննարկվում են ամբիոնի նիստերում, իսկ վեր հանված խնդիրներին տրվում են կոնկրետ լուծումներ: Դրանք վերաբերվում են ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպմանը, այնպես էլ առանձին դասընթացներին, մեթոդիկաներին և այլն: **Գործընթաց 2.** Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում գործում է գործատուների հետ աշխատանքի նոր ռազմավարություն, որը հնարավորություն կտա առավել մոտիկից ծանոթանալ աշխատաշուկայի պահանջներին և հնարավորինս արագ արձագանքել դրանց: Ամբիոնում մշակվում է շրջանավարտների բանկ, որը կտեղադրվի համալսարանի կայքում և ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում: Գործատուները կկարողանան ծանոթանալ ամբիոնի շրջանավարտների բազային, կիմանան նրանց մասին որոշակի տեղեկատվություն և հարկ եղած դեպքում, կհրավիրվեն աշխատանքի: Սա կհեշտացնի բուհ-գործատու կապը: **Գործընթաց 3.** Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի որակի ապահովման բաժնի կողմից առաջարկվել է ամբիոնում կազմակերպել դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացման և օտար լեզվի դասընթացներ: Դասախոսների մասնագիտական իրազեկվածության աստիճանի բարձրացումը ուղիղ կապված է վերջիններիս կողմից դասավանդման որակից: Բացի այդ առարկայական ծրագրերում SS ոլորտի արդի գրականության ներառումը պարտադիր է, իչը ինստիտուցիոնալ պահանջ է ոչ միայն SS ոլորտի առարկաներում: Այս առումով հույժ կարևոր էր դասախոսների մասնագիտական որակավորման դասընթացների մասնակցությունը: Արդյունքում ամբիոնի երկու դոցենտներ՝ Ա.Թադևոսյանը և Ս.Ասատրյանը ստացել են level A2/B1 սերտիֆիկատներ: **Գործընթաց 4.** Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում իրականացվում են փոխադարձ դասալսումներ, որոնք արձանագրվում և քննարկվում թե դասը վարող մասնագետի հետ, թե ընդհանրական՝ ամբիոնի նիստերում: Արդյունքում տեղի է ունենում մասնագիտական փորձի փոխանակում, որը դրական ազդեցություն է ունենում ամբիոնի դասախոսների մասնագիտական որակների բարելավման վրա:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն

Դասընթացների վերջնարդյունքներից ուսանողների գոհունակության բավարարվածության ստուգման գործընթաց	Ա.Թադևոսյան	Ուսանողների կողմից ներկայացված դիտարկումները և առաջարկությունները քննարկվում են ամբիոնի նիստերում, իսկ վեր հանված խնդիրներին տրվում են կոնկրետ լուծումներ: Դրանք վերաբերվում են ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպմանը, այնպես էլ առանձին դասընթացներին, մեթոդիկաներին և այլն: Մասնավորաբար, ուսանողները կարևորում են ամեն դասընցում դասավանդման մեթոդիկայի շեշտադրումը միջին և ավագ դպրոցի կամ միջին մասնագիտական կրթական հաստատությունների համար: Այդ առումով նախատեսվել է հատկապես մագիստրատուրայում ունենալ առարկայի դասավանդման համար կոնկրետ մեթոդական առաջադրանքներ:
Փոխադարձ դասալսումներ	Ա.Թադևոսյան	Մասնագետի կողմից իրականացված դասալսման արդյունքները արձանագրվում և քննարկվում թե դասը վարող մասնագետի հետ, թե ընդհանրական՝ ամբիոնի նիստերում:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**

. նոր կրթական ծրագրերի մշակում և անընդհատ թարմացում, . ուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովման կատարելագործում՝ բազմաթիվ կրթական էլեկտրոնային պաշարների մշակում, . ամբիոնի ուսանողների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրում կրթական գործընթաց, . շրջանավարտների մասնագիտական կոմպետենտությունների ձևավորում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան. «հետադարձ կապի» ապահովում, . ապագա ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացում ամբիոնի ներգրավվածություն, . ամբիոնի աշխատակիցների կողմից որակավորման բարձրացման ծրագրերի մասնակցություն, . ամբիոնի ուսանողների մասնակցություն տեղական և միջազգային մրցույթների, . ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով ամբիոնի աշխատակիցների և ասպիրանտների գիտամեթոդական պատրաստման համակարգի նորացում	. ամբիոնի դասախոսների ոչ բավարար ակադեմիական շարժունություն, . ամբիոնի դասախոսների վերապատրաստման մեխանիզմների ոչ բավարար մշակվածություն, . անբավարար է ամբիոնի աշխատակիցների մասնակցությունը տարատեսակ գիտական կենտրոնների հետ համատեղ գիտական նախագծերի իրագործման մեջ, . երիտասարդ դասախոսներին սատարելու համակարգի թույլ զարգացվածություն:
Հնարավորություններ	**Վտանգներ**

. ակադեմիական շարժունության ծրագրերի մշակում՝ համագործակցելով արտասահմանյան բուհերի համապատասխան ամբիոնների հետ, . ամբիոնի կողմից իրագործվող տարբեր կրթական ծրագրերի շարունակականությունն ապահովող համակարգի մշակում, . ամբիոնի դասախոսների վերապատրաստման համակարգի մշակում և իրագործում, . արտաքին կապերի զարգացում՝ դասախոսների, ասպիրանտների և ուսանողների փոխանակման միջոցով, . հայրենական և արտասահմանյան գործընկերների հետ համատեղ ուսումնական դասընթացների, ծրագրերի կրթական տեխնոլոգիաների մշակում, . մագիստրոսական նոր կրթական այնպիսի ծրագրերի բացում, որոնք հնարավորություն կտան ստանալու կրկնակի դիպլոմ, . մանկավարժական պրակտիկայի մեթոդական բաղադրիչի բարելավում, պրակտիկաների նոր բովանդակության և անցկացման ձևերի մշակում, . միջամբիոնային համագործակցության հենքի վրա միջառարկայական հետազոտությունների զարգացում:	. ՀՀ դպրոցներում ուսուցիչների ներկայիս աշխատավարձի ցածր մակարդակ, ինչը կարող է բերել մանկավարժական կրթություն ստանալու և մանկավարժ դառնալու մոտիվացիայի նվազման: . ամբիոնի աշխատակիցների աշխատանքի որակի գնահատման ոչ թափանցիկություն և ոչ արդյունավետություն, . ամբիոնի աշխատակիցների կողմից գիտահետազոտական աշխատանքներ կատարելու դրդապատճառների ցածր մակարդակ:

Տեխնոլոգիական կրթության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու ուսումնական տարում Տեխնոլոգիական կրթության ամբիոնն (այսուհետ՝ ամբիոն) իրականացրել է իր տարեկան աշխատանքային պլանով նախատեսված ուսումնական աշխատանքներ՝ առաջնորդվելով ՀՊՄՀ-ի և ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագրով, որոնք բխել են ՀՊՄՀ-ի կանոնադրությունից:

2022-2023 ուսումնական տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը ներառել է.

- «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման աշխատանքների կազմակերպում և իրականացում՝ ըստ հաստատված դասատախտակի,
- ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի կողմից դասավանդվող դասընթացների էլեկտրոնային թղթապանակների ստեղծում և համապատասխան էլեկտրոնային նյութերով (առարկայական նկարագիր, թեմատիկ տրոհում, ուսումնառության նյութեր, հարցաշարեր և այլն) համալրում Classroom էլեկտրոնային կրթական հարթակում,
- միասնական էլեկտրոնային համակարգով ուսումնառողների ուսման առաջադիմության տվյալների մուտքագրում՝ ստուգարքային և քննական տեղեկագրերի լրացում,
- ուսումնա-դաստիարակչական բնույթի աշխատանքների իրականացում,
- ամբիոնի չորս ուսումնական լաբորատորիաներով և երկու արհեստանոցներով մասնագիտական դասընթացների լաբորատոր աշխատանքների կատարման ապահովում,
- կրթական ծրագրերով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կազմակերպում և անցկացում:

2022-2023 ուսումնական տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 4367 ժամ՝ 5.0 հաստիք, իսկ 2021-2022 ուսումնական տարում՝ 4188 ժամ՝ առանց հաստիքաչափի փոփոխության:



Ամբիոնի հաստիքակազմը բերված է ստորև.

- տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր – 1.0 հաստիք,
- ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար - 0.75հաստիք,

● տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ- 2.25 հաստիք,

●դոցենտ – 1.0 հաստիք:

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

«Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերով ուսումնառողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար ամբիոնը որդեգրել է մի քաղաքականություն, որով ապահովում է ուսուցման ուսանողակենտրոնությունը և դասավանդման գործընթացների ճիշտ կազմակերպման համար ընտրել է ժամանակակից և համապատասխան դասավանդման և ուսումնառության ակտիվացնող կրթական մեթոդներ, ինչպիսիք են ինտերակտիվ դասախոսությունները, քննարկումները, զրույցները և այլն, որոնց ընտրությունը պայմանավորված է մասնագիտական դասընթացի տեսակով, ակնկալվող վերջնարդյունքներով, դասավանդվող թեմայով և նպատակով:

Ամբիոնի կողմից դասավանդվող առարկայացանկը ներառում է 17 դասընթաց մագիստրատուրայում (առկա ուսուցման համակարգում) և 25 դասընթաց բակալավրիատում (առկա և հեռակա համակարգերից յուրաքանչյուրում):

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Հաշվետու ուսումնական տարում ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատումն իրականացվել է 100 միավորանոց սանդղակով՝ գնահատման գործընթացի համար կիրառվելով բազմաբաղադրիչ համակարգը, որի համար հիմք են հանդիսացել ուսումնական պլանները և հաստատված բաղադրիչները.

1. *Առկա բակալավր 1-ից 4-րդ կուրսեր և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսեր*

1) Առարկաներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ /քննությամբ/

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	15%
Միջանկյալ ստուգում 1	25%
Միջանկյալ ստուգում 2	25%

Ամփոփիչ ստուգում	30%

2) Առարկաներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ՝ առանց ամփոփիչ ստուգման /քննության/

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	15%
Միջանկյալ ստուգում 1	40%
Միջանկյալ ստուգում 2	40%

3) Առարկաներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ /քննությամբ/

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	15%
Միջանկյալ ստուգում 1	40%
Ամփոփիչ ստուգում	40%

4) Առարկաներ, որոնք ավարտվում են ստուգարքային ամփոփմամբ՝ առանց միջանկյալների

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	45%
Ստուգարքային աշխատանք	50%

3. *Հեռակա բակալավր 1-ից 5-րդ կուրսեր և մագիստրատուրա 1-ից 3-րդ կուրսեր*
1) Առարկաներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ /քննությամբ/

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	25%
Միջանկյալ ստուգում 1	25%
Ամփոփիչ ստուգում	45%

2) Առարկաներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման /քննության/

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	45%
Միջանկյալ ստուգում 1	50%

3) Առարկաներ, որոնք ավարտվում են ստուգարքային ամփոփմամբ՝ առանց միջանկյալների

Հաճախում/մասնակցություն	5%
Ընթացիկի ստուգում	45%
Ստուգարքային աշխատանք	50%

5. *Մանկավարժական պրակտիկա*

Հաճախում/մասնակցություն	25%
Գործնական կարողություններ	25%

Համագործակցային կարողություններ 10%

Թղթապանակի պաշտպանություն 40%

6. *Մյուս բոլոր մասնավոր դեպքերում*
(Կուրսային աշխատանք, ուսումնական պրակտիկա, ավարտական աշխատանք, հետազոտական պրակտիկա, հետազոտական աշխատանք կիսամյակում, մասնագիտական պրակտիկա, մագիստրոսական աշխատանքի պատրաստում, մագիստրոսական աշխատանքի պաշտպանություն)

Հաշվետվություն 100%

Ուսանողների գնահատումն իրականացվել է օբյեկտիվորեն, գնահատականի հետ կապված որևէ խնդրահարույց հարց չի առաջացել և չի քննարկվել:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Հաշվետու տարում ամբիոնն ունեցել է թվով 14 նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացների կազմակերպման, իրականացման և բարելավման գործողությունների իրականացման հարցեր:

Ամբիոնի նիստերն իրականացվել են ըստ տարեկան աշխատանքային պլանի, որում նշված են ամբիոնի նիստերի ժամանակացույցը և օրակարգերը:

Հիմնական շեշտադումը դրված է ուսումնական գործընթացների կազմակերպման և ընթացքի, ուսումնական, մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքի, ինչպես նաև որակի բարձրացման վրա:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ.6-25.01.2022 թ.	1. 2021-22 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում: 2. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:	1. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթները

	3. Հեռակա 4-րդ, 5-րդ և առկա 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկների մասին:	վերահաստատել 25.01.2022թ-ով: 2. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար: 3. Պրակտիկայի պաշտպանությունը համարել բավարար, իսկ պաշտպանությանը չներկայացած ուսանողներն իրենց պրակտիկայի պաշտպանությանը կներկայանան լուծարք ի ժամանակ:
Արձ.7-15.02.2022 թ.	1. Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: 2. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: 3. "Կիրառական մեխանիկա" առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը: 4. 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը: 5. Ընթացիկ հարցեր: ա/2022թ-ի ընդունելության հարցը բ/ Պրակտիկայի հարցը:	1. Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար: 2. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները համարել բավարար: 3. Կիրառական մեխանիկա" առարկայի կուրսային նախագծերի թեմաները հաստատել և առաջադրանքները բաշխել: 4. Դասալսումների գրաֆիկը հաստատել և ընդունել ի գիտություն:

Արձ.8-15.03.2022 թ.	1.ՈՒսումնական գործընթացքների ընթացքը: 2.2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն: 3.1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման մասին: 4.Մագիստոս 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպման մասին: 5.Առկա 3-րդ կուրսի և մագիստրոս 1-ին կուրսի միջանկյալ քննությունների նախապատրաստում:	1.ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար: 2. 2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը նշանակել ապրիլի 20-ին: 3. 1-ին կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը համարել բավարար: 4. Մագիստոս 1-ին և առկա 3-րդ կուրսի պրակտիկաների կազմակերպումը համարել բավարար: 5. Առկա 3-րդ կուրսի և մագիստրոս 1-ին կուրսի միջանկյալ քննություններ մասին տեղեկությունը ընդունել ի գիտություն:

Արձ.9-15.04.2022թ.	1.ՈՒսումնական գործընթացների ընթացքը: 2.Հեռակա 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների վիճակը: 3.Ընթացիկ հարցեր: ա/-2022թ-ի ընդունելության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին: բ/Տեխնոլոգիական կրթության ամբիոնի դոցենտ, տեխ. գիտ. թեկ. Բորիս Խոդերյանին պրոֆեսորի պաշտոնակատարի պաշտոնում ներկայացնելու հարցը:	1. ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար: 2. Հեռակա 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների վիճակը համարել բավարար: 3. ա/ Տեղեկությունը ընդունել ի գիտություն և շարունակել զբաղվել մասնագիտական կողմնորոշմամբ: բ/ Դիմել ֆակուլտետի խորհրդին դոցենտ Բ.Խոդերյանին ներկայացնել պրոֆեսորի պաշտոնակատարի հաստիքում հրամանագրվելու:
Արձ.10-20.04.2022թ.	Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի նախապաշտպանության մասին:	2021-2022 ուսումնական տարվա մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության:
Արձ.11-17.05.2022թ.	Հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության մասին:	2021-2022 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության: Հանձնարարել ղեկավարներին մինչև պաշտպանությունը հսկել թերությունների վերացումը:

Արձ.12-18.05.2022թ.	1.Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը: 2. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման տոմսերի հաստատում: 3. Հեռակա բաժնի 5-րդ կուրսի 17.05-ին կայացած ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում: 4. Հեռակա բաժնի պետական ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման մասին: 5. Հեռակա բաժնի 1-4-րդ կուսերի լուծարքների ընթացքի մասին:	1. ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար: 2.2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգման տոմսերը հաստատել 18.06.2022թ-ով: 3.Երաշխավորել 5-րդ կուրսի բոլոր ուսանողներին՝ մասնակցելու ամփոփիչ ավարտական քննություններին: 4.Հեռակա բաժնի պետական ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման հարցն ընդունել ի գիտություն: 5.Հեռակա բաժնի 1-4-րդ կուսերի լուծարքների ժամկետն ընդունել ի գիտություն:
Արձ.13-24.05.2022 2.	Ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների տեսական և գիտափորձարարական մեթոդների զարգացման հետազոտումը տեխնոլոգիական կրթության ոլորտում» թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:	1. Հաստատել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի «Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման տեսական և գիտափորձարարական մեթոդների հետազոտում ը տեխնոլոգիական կրթության ոլորտում» վերնագրով ատենախոսության թեման, տեխ. գիտ.

		դոկտոր, պրոֆեսոր Արտակ Իսրայելի Սահրադյանի գիտական ղեկավարությամբ: 2. Դիմել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդին Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Գոհար Գրիգորյանի թեմայի հաստատման հարցը քննարկելու և ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին ներկայացնելու համար:
Արձ.14-21.06.2022թ	1.Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը: 2.Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքների ամփոփում: 3.Հեռակա ուսուցման բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:	1.ՈՒսումնական գործընթացների ընթացքը համարել բավարար: 2.Պետական ավարտական որակավորման քննությունների արդյունքները համարել բավարար: 3. Հեռակա բաժնի միջանկյալ ստուգումների քննատոմսերը հաստատել 21.06.2022թ-ով:
Ուսանողների հավաքագրմանը, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված իրականացվել են մի շարք միջոցառումներ ֆակուլտետի ներսում, որին իր մասնակցությունն է ունեցել ամբիոնը, մանավորապես կազմակերպվել են այցելություններ հանրապետության տարբեր դպրոցներ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել են ամենամսյա առցանց մրցույթներ (սկսած 2021թ նոյեմբերից) մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից, որին մասնակցել են թվով 30 աշակերտներ: ՀՊՄՀ դիմորդների համար ֆակուլտետում առցանց և առերես ձևաչափերով կազմակերպվել են անվճար պարապմունքներ և ֆիզիկա առարկայից պարապմունքները անցկացրել է Գ. Դեմիրխանյանը: **Վերլուծություն** Ուժեղ կողմեր՝ • Բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվող ամենամսյա առցանց մրցույթը: • Բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվող անվճար պարապմունքները: • Դիմորդների հավաքագրման և աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղված այցելությունները դպրոցներ: • Աշակերտների շրջայցերի կազմակերպում ամբիոնի ուսումնամեթոդական և գիտական լաբորատորիաներում: • Լաբորատոր փորձերի ցուցադրում և իրականացում: • Ամբիոնի դասախոսների կողմից տարբեր դպրոցներ այցելություն և տեղում լաբորատոր փորձերի ցուցադրում: Թույլ կողմեր՝ • Դպրոցներ այցելությունների մոնիտորինգը ցույց է տալիս, որ տվյալ դասաարաններում տևական ժամանակ մեծանում է հետաքրքրությունը ֆիզիկա առարկայի նկատմամբ • Դպրոցների իրազեկման աշխատանքների ոչ բավարար մակարդակ, որի արդյունքում նաև բակալավրիատում ուսանողների սակավություն: • Հանրության շրջանում թյուր պատկերացում, որ մանկավարժական համալսարանը թողարկում է միայն մանկավարժներ:

- Անմիջական աջակցություն ուսանողներին աշխատանքի ընդունվելու հարցում:

Բարելավմանը ուղղված միջոցառումներ՝

- Մշտական կապի ապահովում այն ուսուցիչների հետ ովքեր եղել են ՀՊՄՀ ֆիզիկա բաժնի շրջանավարտներ:
- Սոցիալական ցանցերի միջոցով իրազեկման աշխատանքների ընդլայնում:
- Մեթոդական սեմինարների կազմակերպում հանրակրթական դպրոցներում:
- Հանրակրթական դպրոցներում դասերի անցկացում:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Մեթոդական	Բաբաջանյան Ն.	1.Լաբորատոր փորձերի իրականացում, 2.Մեթոդական նյութերի տրամադրում:	Ուսումնական տարի
	Դանիելյան Ա.	1.Լաբորատոր փորձերի իրականացում, 2.Մեթոդական նյութերի տրամադրում:	Ուսումնական տարի

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Աշխատանքը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Բաբաջանյան Ն.Է	Մանկավարժական պրակտիկա	Մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում /հոկտեմբեր/
Աշխատանքը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Դանիելյան Ա.Վ	Մանկավարժական պրակտիկա	Մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում /նոյեմբեր-դեկտեմբեր/

Աշխատանքը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Բաբաջանյան Ն. Է.	Լաբորատոր փորձերի իրականացում	Արմավիրի մարզ, Մերձավանի միջնակարգ դպրոց /նոյեմբեր-դեկտեմբեր/
Աշխատանքը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Բաբաջանյան Ն. Է. Դանիելյան Ա. Վ. Եգանյան Ա. Վ.	Ուսումնամեթոդական լաբորատորիաներում շրջայցի իրականացում	Ուսումնական տարվա ընթացքում

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնում որակի ապահովման նպատակով իրականցված հետևյալ գործընթացները **Բարելավման պլան** • Մասնագիտության կրթական ծրագրերի պլանավորում, վերանայում, շտկում և/կամ վերամշակում • Ուսանողների հավաքագրման գործընթացի պլանավորում • Տեղեկատվական տեխնոլոգիաների պլանավորում • Ուսումնական և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովման պլանավորում • Բարելավում ոլորտում կատարվում են ծրագրերի վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում: **Ռազմավարական ծրագիր** Բարելավման պլանում նշված միջոցառումները իրականացնելու նպատակով մշակվել է գործողությունների իրականացման ժամանակացույց, ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին տրվել են անհրաժեշտ հանձնարարականներ, կատարվել են մշտադիտարկումներ: **Ինքնավերլուծություն**

Ինքնավերլուծությունը շարունակաբար կատարվել է «Բարելավման պլանում» բերված քայլերի իրականացում-ստուգում-բարելավում սկզբունքով:

Դասալսումներ

Ամբիոնում իրականացվել են շարունակական դասալսումներ՝ ամբիոնի վարիչի կողմից նախապես մշակված ժամանակացույցով:

SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր

Բարձր մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմ

Անհրաժեշտ տեղեկատվական տեխնիկայով ապահովված ուսումնա-մեթոդական լաբորատորիաների առկայություն

Թույլ կողմ

Ուսանողների քանակի նվազում

Ժամանակակից նյութատեխնիկական սարքավորումների սակավություն

Բենչմարքինգ

- Ռուսաստանի Դաշնության ստորև բերված ԲՈՒՀ-երի <<Ֆիզիկա >> մասնագիտության առարկայականզմի զուգադրական վերլուծություն՝

ՌԴ- Кемеровский государственный университет-КемГУ- физика и информатика.

ՌԴ- Московский педогогический государсвенный университет –МПГУ- Фундаментальная физика

- <<Ֆիզիկա >> մասնագիտության առարկայականզմի վերլուծություն ըստ ՄԿԾ դպրոցական ծրագրի առարկայի և չափանիշների պահանջների:

Կրթական ծրագրեր

Իրականացվել է պետական կրթական չափորոշիչներին կրթական ծրագրերի համապատասխանեցման նպատակով ծրագրերի վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում:

Ամբիոնում որակի պատասխանատուի կողմից կատարված գործառույթները

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների կողմից կատարված աշխատանքների մշտադիտարկում:
- Մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերանայում:
- Ամբիոնում իրականացված ուսումնական գործընթացների արդյունավետության մշտադիտարկում (մասնավորապես՝ համաճարակով պայմանավորված հեռավար ուսուցման ընթացքում վիրտուալ լաբորատորիաների ներգրավածության ապահովում):

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
ՀՊՄՀ էլեկտրոնային Google classroom հարթակում կատարված աշխատանքների մշտադիտարկում՝ թեմատիկ տրոհումների, առարկայական նկարագրերի, հարցաշարերի առկայություն, ուսումնական նյութերի առկայություն: 2.Առցանց հարթակի աշխատանքային գործիքների լիարժեք օգտագործում: 3.Հնարավոր ինտերակտիվ մեթոդների կիրառում	Ամբիոնի վարիչ Ամբիոնի որակի պատասխանատու Ամբիոնի մասնագետ	Դասընթացների մշտադիտարկում

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Գիտական ներուժ,	1. Բակալավրիատում ուսանողների սակավություն,
2. Լայն համագործակցությունը թե՛ հայաստանյան, թե՛ արտասահմանյան գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների հետ,	2. Դպրոցների իրազեկման աշխատանքների ոչ բավարար մակարդակ:
3. Գիտական լաբորատորիայի առկայություն(Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա),	
4. Երիտասարդ և բանիմաց պրոֆեսորադասախոսական կազմ,	
5. Գիտական հրապարակումների մեծաքանակություն և դրանց բարձր չափանիշների առկայություն:	

Հնարավորություններ	Վտանգներ
1.Համագործակցության շրջանակների լայնացում գրանտային համակարգերում ընդգրկվելու նպատակով,	1.Մագիստրատուրայում ուսանողների հոսքի նվազում,
2. Ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայտնի գիտական կենտրոնների պրոֆեսորադասախոսական կազմի ընդգրկման հնարավորություն ամբիոնի սեմինարներին և դասախոսություններին,	2.Տարբեր Բուհական համակարգերում մանկավարժների պատրաստման հնարավորության տրամադրումը նախարարության կողմից:
3.Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցության հնարավորություն տեղական և արտասահմանյան միջազգային կոնֆերանսներին:	

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:

Ֆակուլտետի առաքելությունն է ժամանակի պահանջներին համապատասխան կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ոլորտում մրցունակ մասնագիտական կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող, ազգային արժեքներ կրող մասնագետ-մանկավարժների պատրաստումն է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով: Կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների շրջանակներում 2022թ. շարունակել է իրականացնել բարեփոխումների համալիր աշխատանքներ: Ֆակուլտետը իրականացրել է կրթական, գիտական և միջազգային համագործակցության ուղղությամբ աշխատանքներ, մասնավորապես՝ դասավանդման ժամանակակից ինտերակտիվ մեթոդների կիրառում, Google Classroom-ի պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմի կրթական բոլոր չափանիշների համապատասխանեցում ներկայացվող պահանջներին, վերոնշյալ աշխատանքների մշտական կատարելագործում ֆակուլտետի նիստերի և սեմինար-քննարկումների ընթացքում:

Հիմք ընդունելով բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկում նոր «011401.32.6 Կենսաբանություն-քիմիա» և 011401.33.6 «Աշխարհագրություն-բնագիտություն» մասնագիտությունների ներմուծումը՝ ֆակուլտետը ստեղծել է համապատասխաշն մասնագիտական կրթական ծրագրեր և ուսումնական պլաններ: Վերանայվել և բարելավվել են նաև բակալավրիատի և մագիստրատուրայի «Աշխարհագրություն» և «Լադշաֆտային պլանավորում» մասնագիտական կրթական ծրագրերը, կարդացվող դասախոսությունների որակը, առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Մանրամասն քննարկման են դրվել ժամանակակից պահանջներից և միջազգային համագործակցության ծրագրերից բխող նոր ընտրովի դասընթացներ:

Ֆակուլտետում կազմակերպվել է ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված «Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում» խորագրով ուսանողական գիտական նստաշրջան, «Ուսումնական համալիր դաշտային պրակտիկա և դպրոցական էկոզբոսաշրջություն» ուսումնամեթոդական ձեռնարկի շնորհանդես, հանրապետական գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցություն են ունեցել ինչպես դասախոսներ, այնպես էլ ուսանողներ: Ֆակուլտետի դասախոսները հաշվետու տարում մասնակցել են ներբուհական և հանրապետական տարբեր գիտական նստաշրջանների, հանդես են եկել զեկուցումներով և ելույթներով՝ աշխատանքներին մասնակից դարձնելով նաև ուսանողներին:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:

Հաշվետու տարում ֆակուլտետի կառավարման համակարգի և կազմակերպական կառուցվածքի արդյունավետության բարձրացման գործողությունները բխել են ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններից և իրականացվել համաձայն նախանշված շրջափուլերի: Ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման հիմքում դրված են ամբիոնների գիտակրթական գործունեության ճիշտ պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ֆակուլտետի կառավարման համակարգն ունի կրթական և գիտաուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Կառավարման խորհրդի կազմում ներգրավված են դասախոսներ, ուսանողներ և գործատու հաստատությունների, այդ թվում՝ գործընկեր դպրոցների ներկայացուցիչներ, ովքեր հանդիսանում են ֆակուլտետի կառավարման խորհրդի անդամներ: Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է կառավարման պլանավորում, որն իրատեսական է և կարող է ապահովել ֆակուլտետի խնդիրների արդյունավետ լուծում:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Իրականացվել են համալիր կազմակերպչական և ուսումնամեթոդական աշխատանքներ ՄԿԾ-ների պահանջների բավարարման և վերանայման նպատակով, որի համար ստեղծվել է հանձնաժողով, իրականացվել ներքին վերլուծություններ, կատարվել են նաև ուսումնական պլանների և կարդացվող դասախոսությունների որակը մշտապես բարելավելու աշխատանքներ, ինչպես նաև ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիրկում՝ ապահովելով ամբիոնների ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների համապատասխանությունը հանրակրթական դպրոցների առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին: Մասնսավորապես, քննարկվել և վերանայվել են ,,Կենսաբանություն,, ,,Քիմիա,, և ,,Աշխարհագրություն,, մասնագիտական ՄԿԾ-ների նպատակները, խնդիրները և ակնկալվող վերջնարդյունքները: Նույն ուղղությամբ շարունակվում են աշխատանքները ,,Լանդշաֆտային պլանավորում,, և ,,Շրջակա միջավայրի գիտություններ,, մասնագիտական կրթական ծրագրերում: Կատարվել են նաև ուսումնական պլաններն ու կարդացվող դասախոսությունների որակը բարելավվելու աշխատաքներ, մանրամասն քննարկման և փորձաքննության են դրվել որակի ժամանակակից պահանջներից բխող նոր ներդրվող առարկաները, ինչպես նաև իրականացվել են ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիտարկում՝ ապահովելով ուսումնական պլանների և հանրակրթական դպրոցների առարկայական համապատասխանելիություն: Ֆակուլտետի կողմից իրականացվել են ներքին վերլուծություններ և կազմակերպչական աշխատանքներ մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման, ՈԱԾ-ի պահանջներին ուսումնառության ակնկալվող վերջնադյունքների համապատասխանեցման ուղղությամբ:
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ֆակուլտետում ուսանողների գնահատման համար կիրառվել է 100 միավորանոց համակարգը, հաշվի են առնվել ԲՈՒՀ-ի կողմից առաջարկվող, գնահատման բաղադրիչների կառուցվածքը, կապելով այն ուսումնառության արդյունքների հետ,

առաջնային համարելով ակադեմիական ազնվության ապահովումը, կիրառվել են թեստային, ռեֆերատային և գիտելիքների ստուգման այլ ձևեր: Օրինակ՝ ԿՔԱ ֆակուլտետի դեկանի,, պրակտիկայի ղեկավարի և մեթոդիստ Ա. Մինասյանի հետ համատեղ մշակվել, փորձարկվել և ներդրվել է պրակտիկայի թղթապանակների պաշտպանության գնահատման 100 միավորանոց բաղադրիչային սանդղակ, որի կիրառումը բարձրացրել է գնահատման գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:

ՅՊՄՀ,Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Պատկերային Ներկայացման կառուցվածք Ուսանողի անուն ազգանուն												
1.„Իմ կրթության փիլիսոփայությունը„ հիմնական գաղափարի ներկայացում **Ընդ.՝ 10մվ**												
2.Պրակտիկայի վայրի՝ դպրոցի կամ ուսումնական հաստատության ներկայացում: **Ընդ.՝ 5մվ**												
3.Առավել հաջողված դասի ներկայացում, նշել՝ դասարանը, թեման, դասի նպատակը, դասի տիպն ու տեսակը, հիմնական հասկացությունները և դրանց ձևավորման մեթոդները ու միջոցները, փորձերն ու ինքնաշեն դիտագնահատական պարագաները, գիտելիքի ստուգման ձևերը 20 մվ												
Դասի ինքնավերլուծություն 10 մվ **Ընդ.՝ 30**												
4.Ուսումնադաստիարակչական միջոցառման ներկայացում ու Ընդ.՝ 10մվ												
վերլուծություն 10 մվ **Ընդ.՝ 20**												
5. Անձնական գործունեության swot վերլուծություն: **Ընդ.՝ 10մվ**												
6. Պրակտիկայի swot վերլուծություն: **Ընդ.՝ 10մվ**												
7.Պրակտիկայի ամփոփիչ ակնարկ **Ընդ.՝ 15մվ**												
Ընդ.՝ 100 մվ												
Գրելաոճ. Ուսանողի նյութի խոսքին ուսուցչուհու է 5-7 րոպե	Ղեկավարի նախագահ / անդամ ..... ստորագրություն								..... ազգանուն ա.հ.			

Ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում ուսանողների գնահատման 100 միավորանոց համակարգը հանդիսանում է ակադեմիական գիտելիքի ազնվությունն ապահովող կարևորագույն մեխանիզմ:

Քանի որ ֆակուլտետում դեռևս չեն կիրառվում գրագողության դեմ համակարգչային ծրագրեր, ամբիոններում մշակվել են յուրահատուկ մոտեցումներ գրագողությունը բացառելու կամ թեմաները կրկնվելու դեմ: Այսպես, մինչ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ վերոնշյալ աշխատանքների ղեկավարներին հանձնարարվում է մշակել այնպիսի թեմաներ, որոնք չեն կրկնվում նախորդ տարիներին, միաժամանակ պետք է ունենան փորձարարական-հետազոտական մաս, որոնք պետք է անպայմանորեն կատարվեն ուսանողների կողմից տվյալ տարվա ընթացքում, և պետք է ուենան դրա իրականացման մասին ապացույցներ (դաշտային օրագրեր, լուսանկարներ, հավաքած նյութ և այլն):

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Հաշվետու տարում ֆակուլտետը շարունակել է ակտիվ համագործակցել Ավստրիայի ԲՈԿՈՒ-ի համալսարանի հետ Erasmus+ ծրագրի շրջանակներում: ԱԴՄ ամբիոնի մեկ ասպիրանտ (Հայարփի Հակոբյան) մեկ կիսամյակ հետազոտական աշխատանք է իրականացնում նշված համալսարանում: Փորձը ցույց է տալիս, որ այս համալսարանում ուսումնառությունն ու հետազոտական աշխատանքի իրականացումը

տալիս է զգալի դրական արդյունք և միջազգային փորձին ծանոթանալու, և նոր կապեր ստեղծելու, և համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու ու համատեղ հոդվածներ հրատարակելու իմաստով:

2022 թ. առաջին անգամ նշված ծրագրին մասնակցել է նաև կենսաբանություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյանը, ով 1 կիսամյակ ուսումնառել է Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանում: Այստեղ ուսումնառած մոդուլները նրան անհրաժեշտ են իր հետազոտական աշխատանքն ավելի բարձր մակարդակով կատարելու համար: Հաշվի առնելով դրական փորձը՝ ֆակուլտետը նախատեսում է նշված միջազգային ծրագրի շրջանակներում ընդգրկել նաև ,,Շրջակա միջավայրի գիտություններ,, բաժնի ուսանողներին:

ԿՔԴՄ ամբիոնում ավարտական աշխատանք կատարող Սաթենիկ Մացակյանը և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Արմինե Խլոյանն իրենց աշխատանքների համակարգումն ու խորհրդատվությունը ստանում են Շվեյցարիայի Յուրաստիկա թանգարանի գիտական աշխատակից, phD Դավիթ Վասիլյանից:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	96
	հեռակա	96
Մագիստրոսի	առկա	49
	հեռակա	7
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	-	
2	-	
3	-	
4	-	
5	-	
Ուսանողների ներհոսք		
Հաստատություն/երկիր		թիվ

1	Արցախի պետական համալսարան, ԼՂՀ	1	
2	Վարդենիսի «Բադեյան պետական քոլեջ», ՀՀ	1	
3	Երևանի հենակետային բժշկական քոլեջ, ՀՀ	2	
4	Արմավիրի պետական բժշկական քոլեջ, ՀՀ	2	
5	Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ, ՀՀ	1	
6	ՀՀ Առողջ.նախար.բազային բժշկական ուսումնարան, ՀՀ	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	7.2	18
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	6.0	15
3	Իր դիմումի համաձայն ազատված ուսանողների տոկոսը/ թիվը	2.0	5
4	Ուսանողական իրավունքները շարունակող ուսանողների տոկոսը/ թիվը	2.8	7
5	Տարկետված ուսանողների /ազգային բանակ, երեխայի խնամք տոկոսը/ թիվը	0.8	2
6	Ֆակուլտետի ներսում տեղափոխված ուսանողների /հեռակայից առկա, առկայից հեռակա/ տոկոսը/ թիվը	3.6	9

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով ֆակուլտետ է այցելել Երևան քաղաքի և մարզերի հանրակրթական դպրոցների տարբեր դասարանների շուրջ 350 աշակերտ (Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Երևանի Մակսեդան հանրակրթական դպրոց, Երևանի Լ. Միրիջանյանի անվան թ. 155 հիմնական դպրոց, Երևանի Հ. Օշականի անվան թ. 172 հիմնական դպրոց, Երևանի Գալինա Ստարավոյտովայի անվան թ. 177 հիմնական դպրոց , Երևանի Մ. Քաջունու անվան թ. 54 ավագ դպրոց, Երևանի Խ. Աբովյանի անվան թ. 2 հիմնական դպրոց, Հրազդանի Հ. Օրբելու անվան թ. 13 ավագ դպրոց, Երևանի Գ. Չաուշի անվան 188 հիմնական դպրոց, Նշավանի հիմնական դպրոց, Երևանի Վ. Տերյանի անվան թ. 60 հիմնական դպրոց, Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թ. 135 հիմնական դպրոց, Ս. Վարդանյանի անվան հիմնական դպրոց, Վանաձորի թ. 11 ավագ դպրոց, Երևանի Անդրեյ Սախարովի անվան թ. 69 հիմնական դպրոց): Աշակերտները ծանոթացել են ամբիոնի լաբորատորիաներին, կաբինետներին, նրանց համար կազմակերպվել են բաց դասեր, ցուցադրական փորձեր, գործնական աշխատանքներ կենսաբանությունից, քիմիայից և աշխարհագրությունից:

ԿՔԴՄ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Պիպոյանը եղել է 2022թ-ին. Հայաստանում կայացած կենսաբանության համաշխարհային օլիմպիադայի գիտական ղեկավարներից մեկը և մշակել կենդանաբանության գործնական ու տեսական հարցերը: Մասնակցել է համաշխարհային օլիմպիադայի կազմակերպական աշխատանքներին, իրականացրել օլիմպիադայի մասակիցների աշխատանքների գնահատման

աշխատանքներ:Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ են իրականացվում նաև սոցիալական կայքերում: Օրինակ՝ ,,Աշխարհագրության ուսուցիչների և ուսանողների մեթոդմիավորում,, ՖԲ սոցիալական հարթակում, որն ունի շուրջ 3200 հետևորդ: Իրականացվել է “Աշխարհագրության հեղինակային դասագիրք,, նախագծի ներկայացում, քննարկում, մրցույթ և մրցանակաբաշխություն, ակնկալվող արդյունքների վերլուծություն: ԱԴՄ ամբիոնի դասախոս Վ.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ,,Ավելի մոտ դպրոցին,, նախագծի շրջանակներում նոր ձևաչափով համագործակցություն է իրականացվել հանրապետության կրթօջախների ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների հետ: Այս աշխատանքները կրում են շարունակական բնույթ:
Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները: ակադեմիական պարտք ուսման վարձի պարտք իր դիմումի համաձայն (նախորդ տարիների հեռացված ուսանողներ) շարունակական կրթություն տեղափոխություն այլ բուհից

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		19
Մագիստրոս		14
Ընդհանուր		33
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1	ERASMUS PLUS	2
2	-	
3	-	
4	-	
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ

1	Ռուբեն Օրբելու ջրահնագիտական ներդրումները պատմաաշխարհագրական գիտության զարգացման գործում	1
2	ՀՀ ՋՐԷԿ-ների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա	1
3	Образовательное значение книги «Ландшафты и физико-географические регионы армянского нагорья» для курса «Историческая география Армении и соседних стран» наука в жизни человека	1
4	«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» բուհական դասընթացի կրթական նշանակությունը	1
5	,,Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի աշխարհագրական-հայրենագիտական վերլուծության կրթադաստիարակչական դերը,,	1

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ֆակուլտետն ունի բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որի գիտամանկավարժական որակների կատարելագործումը կրում է շարունակական բնույթ և մշտապես գտնվում է ֆակուլտետի ուշադրության կենտրոնում: Ֆակուլտետի մասնագիտական որակների կատարելագործման ակնկալիքով հրավիրվում են և մասնագիտական դասընթացներ են վարում հանրապետության այլ բուհերի, ԳԱԱ բարձրորակ մասնագետներ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը շարունակում է ակտիվ մասնակցել մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական ծրագրերի նկարագրերի, ուսումնամեթոդական փաթեթների բարելավման աշխատանքներին: Նիստերի և սեմինարների ժամանակ պարբերաբար ներկայացվում են ամբիոնների դասախոսների առաջավոր փորձը՝ կապված կրթական նոր տեխնոլոգիաների, դասավանդման նոր ինտերակտիվ մեթոդների, էլեկտրոնային ուսուցման դասընթացների կազմման և կիրառման հետ: Ֆակուլտետում պարբերաբար անցկացվող գիտամանկավարժական մշտադիտարկումների արդյունքները փաստում են, որ ակտիվ աշխատանքներ են տարվում միջամբիոնային և միջգիտակարգային կապերի ամրապնդման ուղղությամբ: ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակները լիովին համապատասխանում են մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների արդյունավետ իրականացման գործընթացին: Ֆակուլտետի ամբիոնները ակտիվորեն համագործակցում են միմյանց և բուհի այլ ամբիոնների հետ: Օրինակ՝ հաշվետու տարում կազմակեպվել է միջամբիոնային միջոցառում՝ Աշխարհագրության և Կենսաբանության ամբիոնների համատեղ մշակված նախագծով և քաղաքապետարանի աջակցությամբ Երևանյան լիճ, -ի տարածքում “100 դասախոս և 100 ուսանող բուհի 100-ամյակին ընդառաջ” խորագրով:

Միջֆակուլտետային /միջամբիոնային միջոցառում ,,Աշխարհագրություն,,-,,Կերպարվեստ,, մասնագիտությունների ուսանողների հանդիպում, ցուցահանդեսի դիտում աշխարհագրության տեսանկյունից:

Հաշվետու տարում ֆակուլտետը շարունակական աշխատանք է տարել մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին դասախոսների մասնագիտական որակների համապատասխանելիության և նրանց աշխատանքի գնահատման ուղղությամբ: Դասախոսական աշխատանքների ժամանակի պահանջներին համահունչ արդյունավետությունը գնահատելու համար համապատասխան գրաֆիկով անցկացվել են փոխադարձ դասալսումներ, դասախոսների և ուսանողների միջև հանդիպումներ, գիտական նորույթների վերաբերյալ քննարկումներ:

Ֆակուլտետի դասախոսները հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար անցել են վերապատրաստումներ ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային առաջատար հաստատություններում և ստացել համապատասխան հավաստագրեր (Մ. Մաթոսյան-Ավստրիայի Բոկուի համալսարան, 2022 թ. հունիս, Մ. Մուրադյան - Հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոն, 2022թ. նոյեմեր-դեկտեմբեր, Ա. Մինասյան - ՈԱԱԿ ՄԿԾ բարելավման մեխանիզմներ, 2022թ. նոյեմբեր):

Պրոֆեսորներ Ս.Պիպոյանը և Տ. Թանգամյանը ընդգրկված են հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի «Կենսաբանություն» առարկայի դասագրքի մշակման աշխատանքներում: Ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա.Կիրակոսյանն ընդգրկված է հանրակրթական դպրոցի 7-րդ և 10-րդ դասարանների «Կենսաբանություն» առարկայի դասագրքերի, ինչպես նաև բուհական «Էվոլյուցիայի տեսություն» դասագրքի մշակման աշխատանքներում:

Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանը եղել է 2022թ-ին Հայաստանում կայացած կենսաբանության համաշխարհային օլիմպիադայի գիտական ղեկավարներից մեկը և մշակել է այդ օլիմպիադայի կենդանաբանության գործնական ու տեսական հարցերը: Մասնակցել է համաշխարհային օլիմպիադայի կազմակերպական աշխատանքներին, իրականացրել է օլիպիադայի մասակիցների աշխատանքների գնահատման ու բողոքարկման աշխատանքներ:

Ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ռ. Սիմոնյանն ընդգրկվել է կենսաբանության ՀՀ հանրապետական ու մարզային օլիմպիադաների կազմակերպման աշխատանքային խմբում, որտեղ կատարում է գիտամեթոդական աշխատանքներ:

Ֆակուլտետի ՊԴԱ ներկայացուցիչները ընդգրկված են հանրապետությունում գործող 051 ,, Կենսաֆիզիկա,, , 005 ,, Երկրաբնապահպանություն,, մասնագիտական խորհուրդների կազմում:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Հաշվետու տարում հետազոտական ոլորտում ամբիոնների հետաքրքրությունների շրջանակները արդիական են, համահունչ են և համապատասխանում են միջազգային գիտական այն ծրագրերի

պահանջներին, որոնց մասնակցում են ֆակուլտետի ամբիոնները: Հիմնական հետազոտությունների և հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է գիտական և մանկավարժական ոլորտները: Գիտահետազոտական հետաքրքրություններն ընդգրկում է Լեռնային երկրների կայուն զարգացման և կայուն կառավարման, կայուն տուրիզմի զարգացման, տարածքների նպատակային օգտագործման և լանդշաֆտային պլանավորման, ՀՀ կենսաբազմազանության, ագրոկենսաբազմազանության պահպանման բնագավառները: Վերջիններս հանդիսանում են լեռնային երկրների ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, տարածքային կայուն պլանավորման՝ որպես երկրի ռազմավարական գերակա ուղղություններով պայմանավորված բնագավառներ:

Ամբիոնի դասախոսների կողմից հաշվետու տարում իրականացրել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց ուղղությունները և ստացված արդյունքները գիտական հոդվածների տեսքով ներկայացված են աղյուսակներում:

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Вестник ТвГУ, РФ	РИНЦ	2
2	Proceedings of the IV International Scientific Conference		1
3	II international scientific and practical conference "Actual problems of wildlife protection in Belarus and neighboring regions"		1
4	Международная научно-техническая конференция «Инновационные технологии производства стекла, керамики и вяжущих материалов»		1
5	Научная школа-конференция с международным участием для молодых ученых «Функциональные стекла и стеклообразные материалы: Синтез. Структура. Свойства»		2
6	XI Международная конференция по фотонике и информационной оптике		1
7	Научный журнал, Издается 3 раза в год, № 1, Апрель 2022, АВТОНОМНАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ ДОПОЛНИТЕЛЬНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ, «НОВОСИБИРСКАЯ АКАДЕМИЯ ПЕДАГОГИКИ, ПРАКТИЧЕСКОЙ ПСИХОЛОГИИ И СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ»		1

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Applied Sciences	Scopus	1

2	European Science Review	Crossref, Google scholar	1
3	Scientific goals and purposes in XXI century		1
4	Ceramics International		1
5	Journal of Non-Crystalline Solids		1
6	Journal of Natural Sciences		1
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Հայաստանի կենսաբանական հանդես		3
2	ՀՊՄՀ գիտական տեղեկագիր		1
3	Proceedings of the Yerevan State University		1
4	ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության Կոմիտե Համահայկական Գիտաժողով 2022 Համառոտագրերի գրքույկ		1
5	«ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ		1
6	«Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես		1
7	ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ գիտական հանդես		1
8	ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ Պրակ Ա, № 1, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1
9	«ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ» միջազգային գիտաժողով՝ նվիրված Հյուսիսային համալսարանի հիմնադրման 25-ամյակին		1
10	,,Աղետների ռիսկերի կառավարման արդիական հարցեր,,միջազգային գիտաժողովի նյութեր N 1(20)		1

11	,,Սյունիք. մշակույթը և բնությունը,, հանրապետական գիտաժողով, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ Գիտաժողովի ամփոփագրեր 26-28 ապրիլի, 2022 թ. ՀԱԻ հրատարակչություն Երևան 2022 _____ Institute of Archeology and Ethnography of NAS RA Syunik. Culture and Nature Conference Abstracts April 26-28, 2022 IAE Publishing House Yerevan 2022 http://iae.am/hy/database/1159		

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Հաշվետու տարում ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված աշխատանքների մասին են վկայում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությունը միջազգային գիտաժողովներին և գիտական հոդվածների հրապարակումները արտասահմանյան պարբերականներում:

Միջազգային գիտական ծրագրերի շրջանակներում շարունակվել է ակտիվ համագործակցությունը Ավստրիայի Բոկու համալսարանի հետ:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն:

Ֆակուլտետի աշխատակիցների հետազոտական գործունեությունն և ուսումնական գործընթացը գտնվում են սերտ փոխկապակցվածության մեջ: Մասնավորապես, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հետազոտությունների արդյունքները ուղղակիորեն արտացոլվել են վերանայված ուսումնական ծրագրերում, հաշվի են առնվել ուսումնական պլանների առարկայական ցանկի մշակման և բարելավման աշխատանքներում, կարդացվող դասախոսություններում: Այդ մասին է վկայում նաև ուսանողների ներգրավվածությունը ֆակուլտետի գիտական աշխատանքներում, ղեկավար դասախոսների հետ համահեղինակությամբ հրատարակվող գիտական հոդվածները, գիտաժողովներում ներկայացվող զեկուցումները: Միջազգային ծրագրերը անմիջականորեն, մեկ տարվա կտրվածքով, հետազոտական աշխատանքների ներքին բովանդակությամբ լիարժեքորեն զուգակցված են ուսումնական գործընթացներին /հետազոտության թեմատիկային համապատասխան/:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Ֆակուլտետը ունի իր առաքելությանը համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր և ռեսուրսներ: Ֆակուլտետում առկա են ուսուցման տեխնիկական միջոցներով համալրված լսարաններ, գործում են աշխարհագրության մեկ, կենսաբանության չորս, քիմիայի երեք լաբորատորիաներ և ուսումնական կաբինետներ, որոնք կահավորված են անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով: Բուհի և տարբեր ծրագրերի միջոցներով նյութատեխնիկական բազայի համալրումը կրում է շարունակական բնույթ:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետը մշտապես հետևել և մասնակիցն է եղել ոչ միայն բուհում, այլ նաև հանրապետությունում տեղի ունեցող գիտակրթական, հասարակական, մշակութային ոլորտներում ընթացող զարգացումներին: Ֆակուլտետը սերտ կապերի մեջ է ՀՀ տարբեր մարզերում աշխատող շրջանավարտների հետ էապես նպաստելով նրանց ակտիվ մասնակցությանը կրթության որակի և բարելավման գործում: Ֆակուլտետը սերտ կապեր է ձևավորել նաև հանրապետության մարզերի և մայրաքաղաքի մի շարք միջնակարգ ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների հետ:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
ԿՔԱ ֆակուլտետում շարունակվում են իրականացվել երկու միջազգային ծրագրեր, որոնք նպաստում են ուսումնական պլաններում, միջազգային ճանաչում ունեցող, առարկայական ծրագրերի ներդրմանը, ինչպես նաև ուսանողների շարժունակության ակտիվացմանը /ուսանողների, ասպիրանտների և դասախոսների/ տարբեր ժամանակահատվածներով վերապատրաստման և որակի բարձրացման նպատակով: Միջազգային ծրագրերը անմիջականորեն մեկ տարվա կտրվածքով հետազոտական աշխատանքների ներքին բովանդակությամբ լիարժեքորեն զուգակցված են ուսումնական գործընթացներին /հետազոտության թեմատիկային համապատասխան/:

Ֆակուլտետի միջազգայնացման աշխատանքները հիմնականում նպատակաուղղված են լեռնային երկրների կայուն զարգացման և ռեսուրսների կառավարման, կենսաբանության և կենսաբազմազանության համատեղ ուսումնասիրություններին:

Միջազգային գիտական ծրագրերի շրջանակներում շարունակվել է ակտիվ համագործակցությունը (Ավստրիայի Վիեննայի համալսարան, Շվեյցարիայի Բեռնի համալսարան, Թբիլիսի պետական համալսարան) եռակողմ երկրների միջև:

Ֆակուլտետը ակտիվ համագործակցում է Ավստրիայի ԲՈԿՈՒ-ի համալսարանի հետ Erasmus+ ծրագրի շրջանակներում, Պաղեստինի Բիրզեիթ և Եթովպիայի Հարամայայի համալսարանների հետ, Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի Պետական Համալսարանի հետ:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մասնակցություն՝ Էրազմուս+ Ավստրիայի Վիեննայի համալսարան «Տարածաշրջանային միջդիսցիպլինար հետազոտություններ Կովկասում՝ կայուն զարգացման նպատակով» APPEAR ՀՊՄՀ, Ավստրիայի Վիեննայի պետական համալսարան:

Ֆակուլտետը նեգրավված է բուհի միջազգայնացման գործընթացում և նպատակահարմար է համարում ուսանողների, ասպիրանտների ու դասախոսների մասնակցությունը տարբեր միջազգային ծրագրերին (Էրազմուս+) փորձի փոխանակման, վերապատրաստումների, ուսումնական դասընթացների ձևաչափով: Թվարկված գործառույթները նպաստում են միջազգային կապերի ամրապնդմանը, նոր գործընկերային կապերի ստեղծմանը, նոր տեսլականի ձևավորմանը:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

ԿՔԱ ֆակուլտետը մշտապես բարեխղճորեն, կազմակերպված և պատշաճ ձևով իրականացրել է ուսուցման որակի բարձրացմանն ուղղված գործառույթներ: Ֆակուլտետի կողմից իրականացվում են ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիտարկում՝ ապահովելով ֆակուլտետի ուսումնական պլանների և հանրակրթական դպրոցների առարկայական ծրագրերի և չափորոշիչների համապատասխանություն:

Ֆակուլտետն ունի որակի ապահովման մշակված համակարգ: Յուրաքանչյուր տարվա սկզբին և ավարտին տարվում է ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիտարկում: Իրականացվում է մասնագիտությունների ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, առանձնացնելով հատկապես այն մոտեցումները, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը: Ներկայումս աշխատանքներ են տարվում առարկայական ծրագրերն ու թեմատիկ տրոհումները ներկայացնել առաջադրանքահեն ուսուցման սկզբունքով:

Իրականացվում է մասնագիտությունների ՄԿԾ-ների կրթական վերջարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, առանձնացնելով հատկապես այն մոտեցումները, որոնք կնպաստեն ուսանողակենտրոն ուսուցմանը: Մշտապես մասնագիտական

քննարկման առարկա են դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու մոտեցումները, դրանց պարբերաբար արդիականացման խնդիրները: Ֆակուլտետում երկու նոր՝ Կենսաբանություն-քիմիա և Աշխարհագրություն-բնագիտություն մասնագիտությունների ներդրման հետ կապված մշակվել են համապատասխան ՄԿԾ-ներ և ուսումնական պլաններ:
Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:
Ֆակուլտետում որակի ապահովման գործընթացում ներգրավված ներքին շահակիցների ակտիվության աստիճանը, համեմատած արտաքին շահակիցների, առայժմ ավելի բարձր է: Որակի ապահովմանը մասնակցում են ոչ միայն պրոֆեսորադասախոսական անձնակազմն ու ուսանողները, այլև հանրակրթական դպրոցի ներկայացուցիչները: Ֆակուլտետը աշխատանք է տանում արտաքին շահակիցների ներգրավվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ Դիմորդների և ուսանողների պակաս
Պրոֆեսորաասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր որակ **Համագործակցություն արտասահմանյան բուհերի հետ** **Մշտական կապ դպրոցի հետ** **Միջազգային ծրագրերի շրջանակներում ուսանողների և ասպիրանտների փոխանակում** **Գիտական և մեթոդական աշխատանքների տպագրում**	Դասախոսական անձնակազմի օտար լեզուների իմացության անբավարար մակարդակ Ուսանողների կողմից օտարալեզու գրականության ոչ բավարար օգտագործում, լեզուների իմացության անբավարար մակարդակ Ուսումնական/դաշտային պրակտիկայի բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
Արտասահմանյան բուհերի հետ համագործակցության ընդլայնում **Օտար լեզվի դասընթացների կազմակերպում** **Մասնակցություն վերապատրաստումներին**	Համաճարագներ և անհաղթահարելի ուժ Նվազ վարձատրության պատճառով ուսուցչի մասնագիտության ցածր գրավչություն Հանրակրթական դպրոցներում բնագիտական առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրության պակաս

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոն

1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում ամբիոնի բոլոր աշխատանքները կատարվել են ամբիոնի կողմից հաստատված աշխատանքային պլանին համապատասխան: 2021-2022 ուսումնական տարում ամբիոնի ուսումնական ծավալը կազմել է 10445 ժամ: Այդ ժամերը բաշխվել են ամբիոնում աշխատող 15 դասախոսի միջև:Ամբիոնի ուսումնական ծավալը 2022-2023 ուսումնական տարում կազմել է 10397: Այդ ժամերը բաշխվել են ամբիոնում աշխատող 14 դասախոսի միջև : Ամբիոնի թվով 14 դասախոսի կողմից ՀՊՄՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից սահմանված պահանջներին համապատասխան վերանայվել, վերաշարադրվել և գործող ուսումնական պլաններին են համապատասխանեցվել կամ այդ գործընթացում են գտնվել ամբիոնի դասախոսների կողմից սպասարկվող 70 առարկայի (բակալավրական կրթական ծրագրով՝ Բուսաբանություն, Կենդանաբանություն, Հյուսվածաբանություն՝ սաղմնաբանության հիմունքներով, Բջջաբանություն, Բույսերի ֆիզիոլոգիա, Կենսաբանության ուսուցման և տեսության մեթոդիկա, Միկրոկենսաբանություն, Էվոլյուցիոն տեսություն, Կենսատեխնոլոգիա, Կենսաբանական խնդիրների լուծման մեթոդիկա, Գենետիկա, Կենսաբանական քիմիա, Մոլեկուլային կենսաբանություն, Կենսաբանական համակարգերի կազմավորման մակարդակները, Կենսաշխարհագրություն, Ընդհանուր և անօրգանական քիմիա, Անալիտիկ քիմիա, Ֆիզիկական քիմիա, Օրգանական քիմիա, Քիմիայի ուսուցման և տեսության մեթոդիկա, Քիմիայի խնդիրների լուծման մեթոդիկա, Անօրգանական սինթեզ, Օրգանական սինթեզ, Աշխատանքի պաշտպանություն և անվտանգության հիմունքներ, Բյուրեղագիտություն, Կոլոիդային քիմիա, Քիմիայի պատմություն, Բարձրամոլեկուլային միացությունների քիմիա, Բնական և սինթետիկ կենսաբանական միացությունների քիմիա, Քիմիական տեխնոլոգիայի հիմունքներ, Կոմպլեքսային միացությունների քիմիա, Անալտիկ ֆիզիկաքիմիական մեթոդներ, Շրջակա միջավայրի քիմիա, ևս հինգ ընտրովի առարկաներ, մագիստրոսական կրթական ծրագրով՝ Կենսաբանության մեթոդանության և տեսության հիմունքներ, Կենսաբանության ժամանակակից հիմնախնդիրները, Կենսաբանության դերը աշակերտների և ուսուցիչների աշխարհայացքի ձևավորման գործում, Հայաստանի կենսառեսուրսների բնութագիրը և տնտեսական նշանակությունը, Ուսուցման այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառումը կենսաբանության դասընթացում, Մոլեկուլային կենսաբանության ժամանակակից խնդիրները, Միջառարկայական կապերը կենսաբանության դասընթացում, Կենսաբանության արդիական հիմնախնդիրները, Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը քիմիայի դասընթացում, Անօրգանական քիմիայի տեսական հիմունքներ, Հաշվարկային խնդիրների լուծման մեթոդիկա, Ուսումնասիրության ֆիզիկաքիմիական մեթոդները քիմիայում, Կենսաօրգանական քիմիայի հիմունքներ, Միջառարկայական կապերի դերը քիմիայի դասընթացում, Բնական և սինթետիկ միացությունների քիմիա, Քիմիական կինետիկա և կատալիզ, Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը քիմիայի դասավանդման գործընթացում, Քիմիայի արդիական հիմնախնդիրները, ևս տասնչորս ընտրովի առարկաներ) թեմատիկ տրոհումները և առարկայական նկարագրերը, ընթացիկ ստուգման

հարցաշարերը, որոնք հաստատվել են ամբիոնի 29.08.2022թ. թ. 14 նիստով և տեղադրվել են Classroom էլեկտրոնային հարթակում: Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների աշխատանքները կրում են շարունակական բնույթ՝ ներառելով գիտական նոր հայտնագործությունների և կրթական նոր տեխնոլոգիաների նվաճումները:

Քննարկվել և ամբիոնի նիստերում հաստատվել են թվով 21 մագիստրոսական ատենախոսությունների, 35 ավարտական և 70 կուրսային աշխատանքների թեմաները, կազմվել և հաստատվել են բոլոր առարկաների ընթացիկ և ամփոփիչ ստուգումների քննական տոմսերը:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկում նոր «011401.32.6 Կենսաբանություն-քիմիա» մասնագիտության ներմուծումը, հիմք ընդունելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) ռազմավարությամբ սահմանված առաքելության դրույթները, ինչպես նաև հաշվի առնելով վերջին տարիներին Հայաստանի դպրոցներում ուսուցիչների թվի աստիճանական նվազումը, ուսուցիչների միջին տարիքի բարձրացումը և բնագիտական առարկաներով թերբեռնվածությունը, ամբիոնը ձեռնամուխ է եղել ՀՊՄՀ-ում բակալավրի կրթական ծրագրով «011401.32.6 Կենսաբանություն-քիմիա» մասնագիտության ներդրման գործընթացի իրականացմանը: Ամբիոնի կողմից իրականացվել է աշխատաշուկայի վերլուծություն, բանավոր հարցումներ համալսարանի շրջանավարտ հանդիսացող ՀՊՄՀ շրջանավարտ հանդիսացող կենսաբանության ու քիմիայի շուրջ 50 ուսուցիչների շրջանում: Արդյունքում սահմանվել են ներդրվելիք նոր մասնագիտության նպատակներն ու կրթական վերջնարդյունքները, մշակվել է նոր ուսումնական պլանը, նշվել են կրթական ծրագրի առանձնահատկությունները, դասավանդման և ուսուցանման նորարարական մոտեցումները, հիմնավորվել են շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները, բերվել են տվյալներ կրթական ծրագրի հաջող իրականացման համար անհրաժեշտ դասախոսական անձնակազմի, նյութատեխնիկական ապահովվածության և կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տարածքների առկայության մասին:

2022 թ-ի ընթացքում ամբիոնի բոլոր դասախոսները պարբերաբար իրականացրել են փոխադարձ դասալսումներ ամբիոնի նիստերում հաստատված ժամանակացույցի համապատասխան: Ընդհանուր առմամբ իրականացվել է 23 դասալսում՝ 27 նախատեսվածից: Ընդ որում ամբիոնի վարիչի դասալսումները եղել են ազատ ժամանակացույցով և ներգրավված չեն եղել նախատեսված դասալսումների ժամանակացույցում: Վերոնշյալ իրականացված դասալսումներից 8-ը կատարվել է ամբիոնի վարիչի կողմից, իսկ մնացած դասախոսները կատարել են 15 դասալսում: 12 չկատարված դասալսումների մի մասը պայմանավորված է եղել դասալսող դասախոսների ակադեմիական բեռնվածությամբ (դասախոսություն, գործնական աշխատանք), իսկ մյուս մասը դասախոսների կողմից դասալսումների մատյանում համապատասխան գրառումներ չկատարելու պատճառով:

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ամբիոնում իրականացվում են «Կենսաբանություն» և «Քիմիա» մասնագիտությունների գծով բակալավրարան և մագիստրոսական կրթական ծրագրեր: Նշված կրթական ծրագրերի բազմաքանակությունը և բազմաբովանդակությունը ենթադրում է դասավանդման և ուսումնառության տարբեր մոտեցումների և մեթոդների կիրառում դասախոսների կողմից: Ինչպես ցույց են տալիս իրականացված դասալսումների արդյունքները, ամբիոնի դասախոսների մեծ մասը դասավանդման շրջանակներում կիրառում են ուսանողակենտրոն մոտեցումներ և դասավանդման մեթոդներ, որոնց ընթացքում սահմանվում են դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք կարելի է չափել, կարևորվում է, թե ինչ են գիտենալու և կարողանալու անել ուսանողները դասընթացի ուսումնասիրման

արդյունքում, սահմանվում է, թե ինչ են անելու ուսանողները ակնկալվող վերջնարդյունքները ձեռք բերելու համար և թե ինչպես կարելի է դրանք հիմնավորված գնահատել: Ամբիոնի դասախոսների կողմից կարևորվել է ոչ թե այն հարցը, թե ինչ պետք է ուսուցանվի դասընթացը հաջողությամբ ավարտելու համար, այլ հիմնական շեշտը դրվել է ուսանողների կողմից դասընթացի ավարտին ցուցաբերած կարողությունների վրա, այսինքն թե ինչ կրթական վերջնարդյունքներ են նրանք ձեռք բերում: Ելնելով վերոգրյալից և ուսուցանվող առարկաների առանձնահատկություններից՝ ամբիոնի դասախոսների կողմից ընտրվել են դասավանդման տարբեր մեթոդներ, որոնցից են ինտերակտիվ զրույցը և դասախոսությունը, պրոբլեմային ուսուցումը, բանավեճային քննարկումները, նախագծային տեխնոլոգիաները, ինքնուրույն աշխատանքների հանձնարարումը և այլն: Թե որքանով են դասավանդման ընտրված մեթոդները լիարժեք նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը, կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրությունների անցկացման: Մասնավորապես պետք է ստուգել դասավանդվող առարկաների կրթական վերջնարդյունքների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությունը: Գնահատման այս գործընթացը դեռևս ընթացքի մեջ է և առաջիկայում կքննարկվի ու կգնահատվի ամբիոնի նիստերից մեկում:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ուսումնառության արդյունքներին համապատասխան ամբիոնում կիրառվում է ՀՊՄՀ-ում ուսանողների համար սահմանված գնահատման 100 միավորանոց համակարգը՝ իր գնահատման բաղադրիչներով: Այն հանդիսանում է ակադեմիական գիտելիքի ազնվությունը ապահովող մեխանիզմ, որն ապահովվում է հետևյալ սկզբունքները ՝

- ներառում է ուսումնառության և գնահատման շարունակական բարելավման մեխանիզմներ,
- հուսալի, անաչառ և արժանահավատ չափում է ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը,
- ուղղորդում և խրախուսում է ուսանողի ուսումնառությունը:

Այդ սկզբունքներին համապատասխան, ամբիոնի դասախոսները ուսանողներին նախապես ներկայացնում են գնահատման չափորոշիչները, որպեսզի ուսանողն իմանա, թե ինչպես է կատարվելու գնահատումը, և թե ինքը գնահատման որ շեմին է համապատասխանում: Դասախոսները գիտակցում են, որ ուսանողի համար գնահատումն այն մեկնակետն է, որը փաստորեն ուղղորդում է ուսանողի ուսումնառությունը:

Ամբիոնում էական ուշադրություն է դարձվում ակադեմիական, գիտելիքի ազնվության ապահովմանը հատկապես ավարտական աշխատանքների և մագիստրոսական աշխատանքների իրականացման ընթացքում: Քանի որ ամբիոնում չեն կիրառվում գրագողության դեմ համակարգչային ծրագրեր, ամբիոնում մշակվել են յուրահատուկ մոտեցումներ գրագողությունը բացառելու կամ թեմաները կրկնվելու դեմ: Այսպես, մինչ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ վերոնշյալ աշխատանքների ղեկավարներին հանձնարարվում է մշակել այնպիսի թեմաներ, որոնք չեն կրկնվում նախորդ տարիներին, միաժամանակ պետք է ունենան փորձարարական-հետազոտական մաս, որոնք պետք է անպայմանորեն կատարվեն ուսանողների կողմից տվյալ տարվա ընթացքում, և պետք է ունենան դրա իրականացման մասին ապացույցներ (դաշտային օրագրեր, լուսանկարներ, հավաքած նյութ և այլն): Բացի այդ, ուսումնական տարվա ընթացքում հրավիրվող ամբիոնի նիստերին պարբերաբար քննարկվում է ավարտական և մագիստրոսական աշխատանքների իրականացման մասին ղեկավարների հաղորդումները, վեր են հանվում ու քննարկվում այն խնդիրները, որոնք առաջացել են աշխատանքների կատարման ընթացքում: Նման քննարկումները թույլ են տալիս ժամանակին իրականացնել հակազդեցության գործողություններ մի կողմից դասախոսներին օգնելու լուծել առաջացած խնդիրները, մյուս կողմից

նպաստում են ուսանողներին ավելի նպատակային գործողություններ կատարելուն առաջացած խնդիրները շտկելու համար:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Հաշվետու տարում ամբիոնի 15 նիստերում իրականացված աշխատանքների գնահատման ու բարելավման ուղղությամբ քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտամեթոդական գործունեությունը

  Դասախոսներն ամբիոնի նիստերին պարբերաբար ներկայացրել են իրենց կողմից իրականացվող գիտամեթոդական աշխատանքների կատարման վիճակը, հրատարակված աշխատանքների քանակը և դրանց հակիրճ բովանդակությունը: Պարբերաբար կարևորվել է այդ աշխատանքներում ամբիոնի կցված ուսանողների ներգրավման անհրաժեշտությունը:

- Փոխադարձ դասալսումների արդյունքները

  Քննարկվել են փոխադարձ դասալսումների արդյունքները: Ներկայացվել են այն դիտարկումները, որոնք կատարվել են դասալսումների ընթացքում: Հանձնարարվել է առանձին դասախոսներին շտկել նկատված թերությունները:

- Ամփոփիչ ատեստավորման և նախնական քննությունների իրականացման մասին

  Ամբիոնի դասախոսներին ներկայացվել է ուսանողների մինչ ամփոփիչ ատեստավորման գործընթացը նախնական քննություններ կազմակերպելու մասին ԿՔԱ ֆակուլտետի խորհրդի որոշումը: Համաձայն դրա ավարտական կուրսերի ուսանողները մինչ ամփոփիչ ատեստավորումը պետք է ամբիոնի կողմից ստեղծված հանձնաժողովներին հանձնեն քննություն՝ տարբեր մասնագիտական առարկաների բովանդակությունից բխող երեք հարցի բանավոր պատասխանելով: Որոշվել է ստեղծել «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաների հանձնաժողովներ՝ կազմված ամբիոնի դասախոսներից:

- Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորումը

  Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորվել են ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանը, հայցորդներ Նարինե Ստեփանյանը, Անուշ Խաչիկյանը, Ելենա Ամիրյանը, Արմենուհի Փիլթակյանը:

- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն
  Նախապաշտպանության ներկայացված աշխատանքների ներկայացման ու քննարկման արդյունքներով որոշվել է առկա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 27 ուսանողի, հեռակա բակալավրիատի թվով 25 ուսանողի ավարտական աշխատանք և առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 8 ուսանողի մագիստրոսական թեզ թույլատրել հրապարակային պաշտպանության:

- Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների արդյունքների քննարկումը

  Քննարկվել են մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին հաշվետվությունները ամբիոնի աշխատակիցների կողմից, որոնք հանդես են եկել որպես մեթոդիստներ: Նշվել են այն հիմնական խնդիրները, որոնք առաջացել են պրակտիկաների կազմակերպման ու իրականացման ընթացքում:

Առաջարկվել են միջոցառումներ դրանք չեզոքացնելու ուղղությամբ: Հանձնարարվել է իրականացվող բոլոր աշխատանքների մասին տեղյակ պահել ամբիոնի վարիչին՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

- Ամփոփիչ ատեստավորման արդյունքները

  Քննարկվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետ կապված խնդիրները: Հանձնարարվել է այդ աշխատանքների ղեկավարներին հետագայում ավելի ուշադիր լինել ղեկավարման գործընթացի, աշխատանքների կատարման որակի ու ժամկետների նկատմամբ, իսկ ուսանողների կողմից թույլ տված թերությունները հաշվի առնել հետագայում:

- Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարած աշխատանքների ամփոփում

  Քննարկվել են Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքները: Ամբիոնի վարիչը ներկայացրել է դրանց մշտադիտարկման արդյունքները: Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորին սեղմ ժամկետներում շտկել առկա խնդիրները:

- ՀՊՄՀ-ում բակալավրի կրթական ծրագրով կենսաբանություն-քիմիա մասնագիտության ուսումնական պլանի և հարակից փաստաթղթերի նախագծերի մշակումը

  Հաշվի առնելով «Կենսաբանություն-քիմիա» նոր մասնագիտության ներդրման հնարավորությունը ՀՊՄՀ-ում, առաջարկվել է ստեղծել այդ մասնագիտության ՄԿԾ-ների մշակման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են ամբիոնի աշխատակիցների մեծ մասը: Արդյունքում ստեղծվել է համապատասխան փաստաթղթերի փաթեթ, որը ներկայացվել է ՀՊՄՀ ղեկավարությանը՝ ՀՀ ԿԳՄՍ ուղարկելու և մասնագիտությունը լիցենզավորելու համար:

Ստորև ներկայացված են 2022թ. ամբիոնի յուրաքանչյուր նիստում քննարկված հարցերը, որոշումները և դրանց իրականացման կամ վերահսկման մեխանիզմները:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ. N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները և դրանց իրականացման կամ վերահսկման մեխանիզմները
Արձ. N5	Բակալավրիական կրթական ծրագրի «Կենսաբանություն» և «Քիմիա»	Հանձնարարվել է յուրաքանչյուր դասախոսի վերանայել իր կողմից դասավանդվող

31.01.2022թ.	մասնագիտությունների ուսումնական պլանների մասնագիտական առարկաների բովանդակության համապատասխանեցումը հանրակրթական դպրոցում դասավանդվող առարկայական չափորոշիչներին:	առարկաների բովանդակության համապատասխանությունը դպրոցական չափորոշիչների բովանդակությանը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխություններ իր կողմից դասավանդվող առարկաների ուսումնական նյութերում, այդ մասին տեղեկացնելով ամբիոնի վարիչին:
Արձ.N5 31.01.2022թ.	2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի մասին:	Որոշվել է վերանայել 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, ուսումնական նյութերը և հարցաշարերը սահմանված պահանջներին համապատասխան և տեղադրել Google Classroom հարթակում:
Արձ.N5 31.01.2022թ.	Google Classroom հարթակում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և առկա ուսուցման համակարգում 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:	Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մշակված ԱՈՒՄՓ-ները, առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները տեղադրել Google Classroom-ում, ինչը վերահսկելիէ դարձնում կատարված աշխատանքները: 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունն ընդունվել է գիտություն:
Արձ.N5 31.01.2022թ.	Ամբիոնի հայցորդ Ելենա Ամիրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի քննարկում:	Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել «Արարատի և Արմավիրի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկների բեղունությունը և դրա վրա ազդող գործոնները» թեման որպես Ելենա Վարոսի Ամիրյանի ատենախոսության վերնագիր, իսկ գիտական ղեկավար՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների

		դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խաչատուրի Պիպոյանը: Մշակվել է ժամանակացույց վերոնշյալ թեմայով աշխատանքների կատարման համար: Թեման քննարկման և հաստատման է ներկայացվելու ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կետրոնի գիտական խորհրդում:
Արձ.N6 23.02.2022թ.	2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին:	Հաստատվել է 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցը, որի կատարման վերահսկողությունը հանձնարարվել է ամբիոնի վարիչին:
Արձ.N6 23.02.2022թ.	ՀՊՄՀ 100 ամյակի շրջանակում ս.թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում «Բնագիտական ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով նախատեսված գիտական նստաշրջանի մասին:	Ամբիոնի դասախոսներին հանձնարարվել է աշխատանք տանել ուսանողների հետ՝ գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես գալու համար: Արդյունքում ամբիոնի 3 դասախոս ներկայացրել է 5 ուսանողի՝ գիտական նստաշրջանին զեկուցումներ ներկայացնելու համար:
Արձ.N7 14,15.03.2022թ. .	Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողների հաշվետվությունը իրենց կողմից կատարվող ավարտական աշխատանքների մասին:	Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 7 ուսանողի ավարտական աշխատանքները չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին և ունեն բավականին թերացումներ: Հանձնարարվել է աշխատանքների ղեկավարներին հետևողականորեն օժանդակել թերությունները վերացնելու ուղղությամբ և արդյունքների մասին զեկուցել ամբիոնի վարիչին:
Արձ.N8. 29.03.2022թ.	Ամփոփիչ ատեստավորման և նախնական քննությունների իրականացման մասին:	Ամբիոնի դասախոսներին ներկայացվել է ուսանողների մինչ ամփոփիչ ատեստավորման գործընթացը նախնական քննություններ կազմակերպելու մասին ԿՔԱ ֆակուլտետի խորհրդի որոշումը: Համաձայն դրա ավարտական կուրսերի ուսանողները մինչ ամփոփիչ ատեստավորումը պետք է ամբիոնի կողմից ստեղծված հանձնաժողովներին հանձնեն քննություն՝ տարբեր մասնագիտական առարկաների

		բովանդակությունից բխող երեք հարցի բանավոր պատասխանելով: Որոշվել է ստեղծել «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաների հանձնաժողովներ՝ կազմված ամբիոնի դասախոսներից:
Արձ.N8. 29.03.2022թ.	2021-2022թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում:	Կուրսային աշխատանքների թեմաները ներկայացվել են դրանց ղեկավարների կողմից, որոնք քննարկվել են ամբիոնի նիստում և հաստատվել մասնակի փոփոխություններից հետո:
Արձ.N9. 19,22.04.2022թ. .	Առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:	Որոշվել է առկա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի թվով 24 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության: Թվով 3 ուսանողի անբավարար կերպով աշխատանքը ներկայացնելու պատճառով թույլատրվել է մասնակցել ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլին: Վերոնշյալ աշխատանքների վերահսկողությունն իր վրա է վերցրել ամբիոնի վարիչը:
Արձ.N10. 20.04.2022թ.	Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:	Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 5 ուսանողի մագիստրոսական թեզ թույլատրվել է հրապարակային պաշտպանության: Թվով 3 ուսանող չեն հաղթահարել ներկայացված պահանջները և նրանց թույլատրվել է մասնակցել մագիստրոսական թեզերի նախապաշտպանության երկրորդ փուլին:
Արձ.N11 10,11.05.2022թ. .	Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:	Հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի թվով 19 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրվել է հրապարակային պաշտպանության:

Արձ.N12 12.05.2022թ.	Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:	Հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի թվով 6 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության:
Արձ.N13 12.05.2022թ.	Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի արդյունքների մասին:	Քննարկվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետ կապված խնդիրները: Հանձնարարվել է այդ աշխատանքների ղեկավարներին ավելի ուշադիր լինել կատարման որակին ու ժամկետներին, իսկ ուսանողների կողմից թույլ տված թերությունները շտկել հնարավոր սեղմ ժամկետներում: Հանձնարարվել է իրականացվող բոլոր աշխատանքների մասին տեղյակ պահել ամբիոնի վարիչին՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:
Արձ.N14 29.08.2022թ.	Դասախոսների բեռնվածությունը նոր ուսումնական տարում:	Ամբիոնի դասախոսներին տեղյակ է պահվել նոր ուսումնական տարում հնարավոր ակադեմիական թերբեռնվածության ու կրճատումների մասին՝ կապված ընդունելության ցածր ցուցանիշների հետ: Առաջարկվել են մեխանիզմներ ստեղծված իրավիճակում դասախոսներին հնարավորինս բավարար ժամերով ապահովելու համար:
Արձ.N14 29.08.2022թ.	Դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակումը և տեղադրումը էլեկտրոնային հարթակում:	Քննարկվել են ամբիոնի դասախոսների կողմից մշակված ուսումնական նյութերի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին: Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մշակված ուսումնական նյութերը տեղադրել Google Classroom-ում, ինչը վերահսկելի է դարձնում կատարված աշխատանքները:

Արձ.N1 28.09.2022թ.	Google Classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն (ուսումնական նյութեր, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ, հարցաշարեր):	Հանձնարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մշակված ուսումնական նյութերը, առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և հարցաշարերը տեղադրել Google Classroom-ում, ինչը դրանք հասանելի է դարձնում ուսանողների համար և վերահսկելի բուհի համապատասխան ստորաբաժանումների կողմից:
Արձ.N1 28.09.2022թ.	Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:	Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաները առաջարկվել են դրանց ղեկավարների կողմից, որոնք քննարկվել են ամբիոնի նիստում: Հատուկ ուշադրություն է դարձվել առաջարկված թեմաների արդիականության և կրկնելիությունը բացառելու վրա՝ ակադեմիական ազնվությունը ապահովելու նպատակով:
Արձ.N1 28.09.2022թ.	2022-2023թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին:	Քննարկվել են 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների արդյունքները: Ներկայացվել են այն դիտարկումները, որոնք կատարվել են դասալսումների ընթացքում, առաջարկություններ են կատարվել նկատված թերությունները վերացնելու, իսկ դրական երևույթները մյուս դասախոսների մոտ տարածելու առումով: Հաստատվել է 2022-2023թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցը, որի կատարման վերահսկողությունը հանձնարարվել է ամբիոնի վարիչին:
Արձ.N1 28.09.2022թ.	2022-2023թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում:	Կուրսային աշխատանքների թեմաները ներկայացվել են դրանց ղեկավարների կողմից, որոնք քննարկվել են ամբիոնի նիստում: Ուշադրություն է դարձվել դրանց արդիականությանը և ուսուցանվող առարկաների հետ փոխկապակցվածությանը: Կուրսային աշխատանքների թեմաները հաստատվել են մասնակի փոփոխություններից հետո: Առաջարկվեց, որ կուրսային

		աշխատանքները ոչ միայն հանձնվեն նրանց ղեկավարներին՝ գնահատման համար, այլև ուսանողները պետք է շնորհադեսային ձևաչափով պաշտպանեն կուրսային աշխատանքները:
Արձ.N1 28.09.2022թ.	«Կենսաբանություն-քիմիա»մասնագիտության նոր կրթական ծրագրի սահմանված կարգով լիցենզավորման գործընթացի կազմակերպման համար միջոցառումներ:	Հաշվի առնելով «Կենսաբանություն-քիմիա» նոր մասնագիտության ներդրման հնարավորությունը ՀՊՄՀ-ում, առաջարկվեց ստեղծել այդ մասնագիտության ՄԿԾ-ների մշակման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին ամբիոնի աշխատակիցների մեծ մասը: Արդյունքում ստեղծվել է համապատասխան փաստաթղթերի փաթեթ, որը ներկայացվել է ՀՊՄՀ ղեկավարությանը՝ ՀՀ ԿԳՄՍ ուղարկելու և մասնագիտությունը լիցենզավորելու համար:
Արձ.N2 31.10.2022թ.	Դասախոսների հաղորդումը ուսանողների պարտքերի մարման մասին:	Քննարկվել են դասախոսների հաղորդումները ուսանողների կողմից անբավարար գնահատականներ ստանալու պատճառների մասին: Առաջարկվել են միջոցառումներ ուսանողների հետ անհատական աշխատանքների իրականացման հնարավորությունների վերաբերյալ ակադեմիական պարտքերի մարման նպատակով:
Արձ.N2 31.09.2022թ.	Մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ մեթոդիստների զեկուցում:	Քննարկվել են մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին հաշվետվությունները ամբիոնի աշխատակիցների կողմից, որոնք հանդես են եկել որպես մեթոդիստներ: Նշվել են այն հիմնական խնդիրները, որոնք առաջացել են պրակտիկաների կազմակերպման ու իրականացման ընթացքում: Առաջարկվել են միջոցառումներ դրանք չեզոքացնելու ուղղությամբ:
Արձ.N3 15.11.2022թ.	Ամբիոնի հայցորդ Խաչիկյան Անուշի «Նախագծերի մեթոդը որպես սովորողների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիա՝ քիմիայի դպրոցական դասընթացում»	Ա. Խաչիկյանի կողմից ներկայացված աշխատանքը կարծիքներ ստանալու նպատակով նախապես տրամադրվել էր ամբիոնի մեթոդիստ մ.գ.դ., պրոֆեսոր Տ. Թանգամյանին և մանկավարժության ամբիոնի դասախոս մ.գ.թ. Լ. Նազարյանին: Աշխատանքի ներկայացումից հետո

	թեկնածուական ատենախոսության քննարկում:	դասախոսների կողմից հնչեցվեցին նրանց կարծիքները, տրվեցին հարցեր ամբիոնի դասախոսների կողմից, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ: Ի հայտ եկած թերությունները շտկելու նպատակով Ա. Խաչիկյանին առաջարկվել է կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ ու լրացումներ:
Արձ.N3 15.11.2022թ.	Ամբիոնում առկա նյութատեխնիկական բազայի մասին:	Ամբիոնում առկա նյութատեխնիկական սարքավորումները, որոնք այլևս չեն օգտագործվում դուրս գրել ամբիոնի նյութատեխնիկական գույքացուցակից: Գույքագրման աշխատանքների կատարելը հանձնարարվել է ամբիոնի նյութական պատասխանատու Դ. Անիկյանին:
Արձ.N4 30.11.2022թ.	Ամբիոնի հայցորդների և ասպիրանտի ատեստավորում:	Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանին, հայցորդներ Նարինե Ստեփանյանին, Անուշ Խաչիկյանին, Ելենա Ամիրյանին, Արմենուհի Փիլթակյանին:
Արձ.N5 30.12.2022թ.	Հեռակա ուսուցման նախապատրաստական աշխատանքների մասին:	Լսվել և քննարկվել են ամբիոնի դասախոսների հաղորդումները 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի առկայության մասին: Քննարկվեց դրանց համապատասխանեցումը ներկայացվող պահանջներին: Հանձնարարվեց վերանայել վերոնշյալ փաստաթղթերն առաջիկա ամսվա ընթացքում:
Արձ.N5 30.12.2022թ.	Google Classroom էլեկտրոնային հարթակում 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների ամփոփում:	Քննարկվել են Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքները: Ամբիոնի վարիչը ներկայացրել է դրանց մշտադիտարկման արդյունքները: Հանձնարարվել է

		պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորին սեղմ ժամկետներում շտկել առկա խնդիրները:
Արձ.N5 30.12.2022թ.	1-ին կիսամյակում մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների ամփոփում:	Քննարկվել են 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսմյակում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ու իրականացման արդյունքների և առկա հիմնախնդիրների մասին: Առաջարկվել են միջոցառումներ դրանք չեզոքացնելու ուղղությամբ:
Արձ.N5 30.12.2022թ.	Դասալսումների արդյունքների քննարկում:	Քննարկվել են 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների արդյունքները: Ներկայացվել են այն դիտարկումները, որոնք կատարվել են դասալսումների ընթացքում: Հանձնարարվել է առանձին դասախոսների շտկել նկատված թերությունները:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ. թեկնածու	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	4	5	5	6	4	1		21
Համատեղող	2	1	1	2				6
Ժամավճարային		1*						1
Ընդա-մենը	6	7	7	8	4	1		

*- ակադեմիկոս

2.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվում է ուսումնամեթոդական հոդվածների, թեզիսների, ձեռնարկների մշակում ու հրատարակում (ցանկը բերված է ստորև ներկայացված գիտական հրապարակումների աղյուսակում):

ՀՊՄՀ-ում բակալավրի կրթական ծրագրում «Կենսաբանություն-քիմիա» մասնագիտության ներդրման համար կազմվել է նոր ուսումնական պլան և դրան համապատասխան կրթական ծրագրի մասնագիր: Դա իրականացնելու համար ամբիոնի կողմից իրականացվել է աշխատաշուկայի վերլուծություն, բանավոր հարցումներ ՀՊՄՀ շրջանավարտ հանդիսացող կենսաբանության ու քիմիայի շուրջ 50 ուսուցիչների շրջանում: Արդյունքում սահմանվել են նոր ներդրվելիք մասնագիտության նպատակներն ու կրթական վերջնարդյունքները, մշակվել է նոր ուսումնական պլանը, նշվել են կրթական ծրագրի առանձնահատկությունները, դասավանդման և ուսուցման նորարարական մոտեցումները, հիմնավորվել են շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները, բերվել են տվյալներ կրթական ծրագրի հաջող իրականացման համար դասախոսական անձնակազմի, նյութատեխնիկական ապահովվածության և կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տարածքների առկայության մասին:

«Քո գիտությունը՝ դպրոցին» ծրագրի շրջանակներում ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանը 2022թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է մեթոդական և մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ Երևանի թ. 155 հիմնական, թ. 20 հիմնական, թ. 55 հիմնական, թ. 148 ավագ, թ. 118 ավագ, թ.170 ավագ, «Փոքրիկ իշխան» կրթահամալիրի, «Այբ» դպրոցի, «Հերացի» ավագ դպրոցի, «Քվանտ» վարժարանի թվով 501 աշակերտի և կենսաբանության 20 ուսուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում աշակերտներին տեղեկություններ են տրամադրվել Հայաստանում գիտության զարգացման հիմնական միտումների մասին, ներկայացվել է Ս. Պիպոյանի կողմից կատարված աշխատանքները գիտության ոլորտում, բաց դասի ձևաչափով անցկացվել են ցուցադրական լաբորատոր աշխատանքներ կենդանաբանությունից: Կենսաբանության ուսուցիչներին տրվել են մեթոդական ցուցումներ ու խորհրդատվություն գործնական և լաբորատոր աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանի կողմից 2022թ օգոստոս ամսին ՀՊՄՀ-ում իրականացվել է կենսաբանության 7 ուսուցիչների վերապատրաստման դասընթաց, և «Գործք» ՍՊԸ-ում՝ միջին ու նախնական մասնագիտական տնօրենների 9 թեկնածուի վերապատրաստման դասընթաց: Ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Տ. Թանգամյանը և պրոֆեսորի պաշտոնակատար, ք.գ.թ. Ա. Բաբախանյանը 30 կրեդիտի տրամադրող կրթական ծրագրով մանկավարժի հավաստագրման դասընթացներ են իրականացրել թվով 6 ունկնդիրի համար և ղեկավարել են նրանց ավարտական աշխատանքները:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով ամբիոն են այցելել հանրապետության թվով 15 հանրակրթական դպրոցների տարբեր դասարանների ավելի քան 180 աշակերտ (Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Երևանի Մակսեդան հանրակրթական դպրոց, Երևանի Լ. Միրիջանյանի անվան թ. 155 հիմնական դպրոց, Երևանի Հ. Օշականի անվան թ. 172 հիմնական դպրոց, Երևանի Գալինա Ստարավոյտովայի անվան թ. 177 հիմնական դպրոց , Երևանի Մ. Քաջունու անվան թ. 54 ավագ դպրոց, Երևանի Խ. Աբովյանի անվան թ. 2 հիմնական դպրոց, Հրազդանի Հ. Օրբելու անվան թ. 13 ավագ դպրոց, Երևանի Գ. Չաուշի անվան 188 հիմնական դպրոց, Նշավանի հիմնական դպրոց, Երևանի Վ. Տերյանի անվան թ. 60 հիմնական դպրոց, Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թ. 135 հիմնական դպրոց, Ս. Վարդանյանի անվան հիմնական դպրոց, Վանաձորի թ. 11 ավագ դպրոց, Երևանի Անդրեյ Սախարովի անվան թ. 69 հիմնական դպրոց): Աշակերտները ծանոթացել են ամբիոնի լաբորատորիաներին, կաբինետներին, նրանց համար կազմակերպվել են կարճ դասախոսություններ, ցուցադրական փորձեր, գործնական աշխատանքներ բուսաբանությունից, կենդանաբանությունից, բույսերի ֆիզիոլոգիայից, միկրոկենսաբանությունից, քիմիայից, կենդանիների անատոմիայից և ֆիզիոլոգիայից: Աշակերտներին

ներկայացվել է ուսուցչի աշխատանքի կարևորությունը և գրավչությունը, եթե նրանք հետագայում ընտրեն այն որպես մասնագիտական գործունեության ոլորտ:

Ամբիոնի առանձին դասախոսների կողմից քննարկվել և կարծիքներ են տրամադրվել ՀՊՄՀ այլ ամբիոններից, բուհերից, գիտահետազոտական կազմակերպություններից ստացված ձեռնարկների, բուհական դասագրքերի, գիտական հոդվածների, սեղմագրերի և թեզերի մասին:

Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր կ.գ.դ. Ս.Պիպոյանը և պրոֆեսոր մ.գ.դ. Տ.Թանգամյանն ընդգրկված են հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի «Կենսաբանություն» առարկայի դասագրքի մշակման աշխատանքներում: Ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա.Կիրակոսյանն ընդգրկված է հանրակրթական դպրոցի 7-րդ և 10-րդ դասարանների «Կենսաբանություն» առարկայի դասագրքերի, ինչպես նաև բուհական «Էվոլյուցիայի տեսություն» դասագրքի մշակման աշխատանքներում:

Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանը եղել է 2022թ-ին. Հայաստանում կայացած կենսաբանության համաշխարհային օլիմպիադայի գիտական ղեկավարներից մեկը և մշակել է այդ օլիմպիադայի կենդանաբանության գործնական ու տեսական հարցերը: Մասնակցել է համաշխարհային օլիմպիադայի կազմակերպական աշխատանքներին, իրականացրել է օլիպիադայի մասակիցների աշխատանքների գնահատման ու բողոքարկման աշխատանքներ:

Ս.Պիպոյանը մասնակցում և համակարգում է նաև կենսաբանության ՀՀ հանրապետական ու մարզային օլիմպիադաների կենդանաբանության բաժինը, մշակելով նաև խնդիրներ ու հարցեր օլիմպիականների համար:

Ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ռ. Սիմոնյանն ընդգրկվել է կենսաբանության ՀՀ հանրապետական ու մարզային օլիմպիադաների կազմակերպման աշխատանքային խմբում, որտեղ կատարում է գիտամեթոդական աշխատանքներ:

Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանը «Գիտության փառատոն» համադպրոցական գիտաժողովի կազմակերպիչ և գիտական խորհրդի անդամ է: Գիտաժողովը տեղի է ունեցել« Այբ» դպրոցում 2022 թ. դեկտեմբերին:

Հանրակրթության ոլորտում կենսաբանություն և քիմիա առարկաների ուսուցանման խնդիրները վերհանելու և դրանց արդյունքները ամբիոնում ուսուցանվող առարկաների դասավանդման ընթացքում ներդնելու համար այստեղ պարբերաբար հրավիրվել են հանրակրթական դպրոցների առաջատար ուսուցիչներ, որոնց կարծիքների, առաջարկությունների ու դիտարկումների հիման վրա ձևավորվել են հետևյալ մոտեցումները հանրակրթական դպրոցում առկա հիմնախնդիրների վերաբերյալ՝

1. Խզված է օրգանական բովանդակային կապը հանրապետության հիմնական և ավագ դպրոցի միջև: Դրանց տարանջատումը չի տվել այն ցանկալի արդյունքները, որոնք նախատեսվում էին մինչ այդ բարեփոխումն իրականացնելը նախագծելիս: Սկսած ավագ դպրոցների դասարանների ձևավորման բարոյահոգեբանական վիճակից մինչև գործող կրթական չափորոշիչների հիման վրա մշակված կրթական ծրագրի մատուցումն ավագ դասարանցուն զրկել է կրթության ու գիտելիք ձեռք բերելու նկատմամբ հետաքրքրությունից, իսկ ողջ ավագ դպրոցի իստիտուտին՝ իր բովանդակային հիմնական արժեքից՝ սահմանված որակավորումների ազգային շրջանակի դրույթներով: Ավագ դպրոցի աշակերտն ունի մեկ գերնպատակ՝ բուհ ընդունվելու համար հնարավորինս վարժ սերտել սահմանափակ առարկանների շտեմարանների նյութը, ուշադրություն չդարձնելով մյուս պարտադիր առարկաներին՝ հաճախ չհաճախելով դրանց դասերին: Կամ էլ ոչինչ չանել, մի կերպ «յոլա» տանել երեք տարին՝ միջնակարգ կրթության ատեստատ ստանալու նպատակով: Իսկ թե ինչով ու ինչպես է ապրում ավագ դպրոցի աշակերտն այդ տարիներին, կարծես որևէ մեկին չի հուզում: Կարևորը, որ դպրոցում է սովորում:

2. Մասնագիտական կրթության ոլորտում բացակայում է կամ խիստ թերի է պետական պատվերի կամ անվճար ուսուցման համակարգի համապատասխանությունը աշխատաշուկայի զարգացումներին: Կարելի է բերել խիստ մասնավոր օրինակ: Ինչպե՞ս է ձևավորվում ասենք մանկավարժական բնագիտական մասնագիտությունների պետական պատվերով տեղերի քանակի որոշումը և հատկացումը ՀՊՄՀ-ին: Ո՞վ և ինչպե՞ս է որոշել, որ հանրակրթության ոլորտում «Կենսաբանություն» մասնագիտության համար այս տարի պետք է հատկացվի ընդամենը 3 անվճար տեղ: Նման որոշման համար առնվազն պետք է իրականացվի իրավիճակի համապարփակ ուսումնասիրություն, թե առնվազն առաջիկա 4 տարիներին հանրապետության քանի դպրոցում քանի կենսաբանության ուսուցչի կարիք կլինի: Նման ուսումնասիրության վերլուծության հիման վրա միայն պետք է որոշվի, թե քանի պետական պատվերով տեղ որ մասնագիտություններից պետք է հատկացվի: Եվ դա պետք է կատարվի պետական կառավարման համակարգի ամենաբարձր մակարդակով թեկուզ միայն այն գիտակցմամբ, որ կրթության համակարգի վրա է խարսխվում պետության ողջ անվտանգային համակարգը: Նույնը վերաբերում է նաև մնացած բոլոր բուհերին ու դրանցում ուսուցանվող մասնագիտություններին: Ընդ որում պետությունը պետք է լիարժեք ֆինանսավորի իր համար գերակա մասնագիտությունների ուսուցանումը, եթե անգամ այդ մասնագիտությունից ընդամենը 1-2 մասնագետ է անհրաժեշտ հանրապետության համար:
3. Անհարկի կենտրոնացված է բուհական ընդունելության քննությունների համակարգը: Արդեն տասնյակ տարիներ է գործում այդ համակարգը, սակայն բուհեր ընդունվող դիմորդների զգալի մասի մոտ մասնագիտական որակական հատկանիշները ոչ թե բարելավվում են, այլ հակառակը՝ գնալով իջնում: Այս առումով ոչ թե ընդունելության գործընթացին պետք է այսքան կարևորություն տրվի, այլ բուն ուսուցման ընթացքին ու վերջնարդյունքների նկատմամբ խիստ վերահսկողությանը: Բուհը, նրա մանկավարժական համակազմը չպետք է կախված լինի ուսանողների թվի պակասից, եթե հանկարծ ուսուցման ընթացքում ուսանողների մի մասը չառաջադիմելու և ակադեմիական պարտքերի պատճառով դուրս կմնա կրթական համակարգից: Բուհի ֆինանսավորումը չպետք է լինի միայն ուսանողների թվով հաշվարկված կամ դրանից կախված, այլ պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտություններից առկա կուրսերի քանակով, անգամ եթե այդ կուրսում սովորում է մեկ ուսանող:
4. Նկատվում է կրթության որակի իջեցման միտում կրթության ողջ համակարգում՝ սկսած հանրակրթությունից մինչև հետբուհական կրթություն: Պատճառները թերևս շատ են ու բազմաշերտ, սակայն մի բան հստակ է՝ մատուցվող կրթական ծառայությունների բովանդակությունը և մատուցման ձևը մի կողմից չի համապատասխանում սովորողների պահանջմունքներին, մյուս կողմից՝ արագորեն փոփոխվող աշխատաշուկայի պայմաններին: Կրթության համակարգն այսօր ավելի շուտ պոտենցիալ գործազուրկ է պատրաստում, քան աշխատաշուկայում մրցունակ մասնագետ: Դա միայն կրթական համակարգի անկատարությամբ չի պայմանավորված, այլև աշխատաշուկայում մասնագետների նկատմամբ պահանջների անընդհատ ու անկանոն փոփոխություններով, ավելի շուտ դրանց իրական բացակայությամբ:
5. Էական բարեփոխումների կարիք ունի կադրային ապահովումը կրթական բոլոր համակարգերում: Հստակեցման ու կատարելագործման կարիք ունեն կրթական համակարգ որպես ուսուցիչներ և դասախոսներ մուտք գործողներին ներկայացվող պահանջները, բարելավվեն նրանց ատեստավորման, վերապատրաստման ու որակավորման բարձրացման գործընթացները, դրանց արդյունքները հաշվի առնվեն դասավանդողների մասնագիտական աճի ու աշխատավարձի սահմանման ընթացքում: Առավել պետք է կատարելագործվեն ուսումնական հաստատությունների ղեկավար պաշտոններին ներկայացվող ներկայիս պահանջները, շեշտադրում դնելով նրանց նախընթաց մանկավարժական գործունեության իրականացման ու այդ ընթացքում ցուցաբերած առաջխաղացումների վրա: Կրթական համակարգ մուտք գործողները և աշակերտների ու

ուսանողների հետ կրթական գործընթացում ներգրավված աշխատողները պետք է առնվազն մանկավարժական կրթություն կամ մասնագիտական մանկավարժական վերապատրաստումներ անցած անձինք լինեն: Չպետք է անգամ շատ հայտնի գիտնականը մանկավարժ ձևակերպվի առանց մանկավարժական վերապատրաստման դասընթացների մասնակցելու ու համապատասխան վկայական ունենալու:

Ուսուցիչների հետ քննարկման արդյունքում ձևավորվել է նաև առաջարկությունների փաթեթ, որն առավելապես վերաբերում է ավագ դպրոցի խնդիրների լուծման ուղիները գտնելուն: Նման առաջարկություններն արդեն ուղղված են ոչ թե ՀՊՄՀ ղեկավարությանը, այլ կրթության ոլորտում լիազոր մարմնին:

1. Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր վերապատրաստում անցած ուսուցիչ և նրա ստացած վկայականը որոշակի նյութական խրախուսանքի արժանանա, ինչը շատերին կմղի ինքնակրթվել:
2. Եթե ուսուցչին վճարում են միայն իր դասավանդած ժամերի համար, ապա պարտադիր չէ շաբաթական նրա 33-35 ժամ դպրոցում մնալը: Հատկապես, երբ հաճախ դպրոցը չի տրամադրում ուսուցչի տարրական աշխատանքային պայմաններ: Միաժամանակ ուսուցչական գործունեությունն առանց այն էլ այնքան բարդ ու պատասխանատու գործ է, որ աշխատանքը չի վերջանում ո՛չ դպրոցից դուրս, ո՛չ էլ հանգստյան օրերին:
3. Ուսուցիչների դրույքաչափը վերանայել ու դարձնել 16-ից 18 ժամ: Քանի որ 5 և ավելի ժամ դասավանդող ուսուցչի մոտ վերջին ժամերն անարդյունավետ են անցնում: Աշակերտների ծանրաբեռնվածությունն էլ օրը հինգ ժամից չպետք է անցնի՝ նույն հիմնավորմամբ:
4. Ուսումնական տարվա տևողությունը վերանայել և 34 շաբաթվա փոխարեն դարձնել 30-31 շաբաթ,իսկ մնացած շաբաթները տրվեն էքսկուրսիաներին, գործնական աշխատանքներին՝ ինստիտուտներում կամ գործարաններում՝ ըստ աշակերտի նախընտրության:
5. Հետազոտական աշխատանքների և արշավների համար լրացուցիչ ֆինանսավորում հատկացվի դպրոցներին, և էքսկուրսիաները ուսուցչի համար համարվի գործուղում ու վարձատրվեն:
6. Ավագ դպրոցում ճիշտ կլինի, որ աշակերտներն ընթացիկ գնահատականներ չստանան, այլ պարբերաբար /ասենք օնլայն կամ կենտրոնացված՝ արտաքին գնահատման սկզբունքով/ քննություն հանձնեն: Եթե թերացել են՝ լրացնեն, եթե հաջող հանձնեն՝ անցնեն հաջորդ մակարդակ: Քննական տոմսերի հարցաշարերը պետք է հայտնեն նախօրոք և այն համապատասխանի տվյալ դասանյութի թեմաներին: Կարող են տրվել նաև աստղանիշով հարցեր, որոնց փորձեն պատասխանել առավել ընդունակ աշակերտները և լավագույն արդյունքների դեպքում խրախուսվեն: Նման մոտեցումը կբարձրացնի թե՛ աշակերտների պատասխանատվությունը, թե՛ ուսուցչի: Աշակերտը կհասկանա, որ ոչ թե գնահատականի համար է սովորում, այլ գիտելիքի: Իսկ ուսուցիչների կողմից կվերանա սուբյեկտիվ գնահատման վտանգը և նրանք կկենտրոնանան որակ ապահովելու վրա:
7. Պետք է նաև նախնական և միջին մասնագիտական կրթություն տվող հաստատությունների վկայականներին տալ այնպիսի արժեք, որ հետագա ուսումն այլ երկրներում շարունակող աշակերտները խնդրի առաջ չկանգնեն և նրանք ստիպված չլինեն դպրոցի վկայականի համար ավագ դպրոց հաճախել:
8. Ավագ դպրոցի աշակերտները ոչ միայն իրենց հոսքերն ընտրեն, այլև այն առարկաները, որոնք պետք է ուսումնասիրեն տվյալ կիսամյակում և այդ առարկաների թիվը չգերազանցի 10-ը:
9. Տարբեր հոսքերում սովորող աշակերտները տարբեր դասագրքերով են սովորում, բայց քննությունները հանձնում են բնագիտական կամ ընդհանուր հոսքի ծրագրին համապատասխան:
10. Առարկայական ծրագրեր կազմելիս պետք է հաշվի առնել միջառարկայական կապերը: Օրինակ՝ հայոց լեզվի և ցանկացած այլ օտար լեզվի թեմաները տվյալ դասարանում համահունչ պետք է կազմվեն: Ասենք, հայոց լեզվից դեռ չեն անցել ձևաբանություն, բայց օտար լեզվից այդ թեման են անցնում, որը լրիվ անհասկանալի է մնում աշակերտի համար ու լրացուցիչ խնդիրներ առաջացնում

ուսուցչի մոտ: Նույն խնդիրը կա նաև բնագիտական առարկաների առումով: Օրինակ՝ ֆիզիկայում անցնում են մի թեմա, որը դեռ չեն անցել մաթեմատիկայից:

11. ԲՈւՀ-երը ավագ դպրոցների հետ պետք է համագործակցեն ու պահանջ-հայտեր ներկայացնեն, թե ինչ մինիմալ գիտելիքներ են ակնկալում դիմորդից տվյալ մասնագիտության առումով:
12. Ուսուցիչը պետք է դասարան մտնի պետականորեն հաստատված և մասնագիտական խմբերի կողմից երաշխավորված պատրաստի թղթապանակով, որոնց նա կարող է ստեղծագործաբար մոտենալ: Ընդունելության քննությունների և դպրոցական ծրագրերի միջև եղած ահռելի անջրպետը պետք է վերացվի:
13. Ստեղծել օնլայն հարթակ, որտեղ ուսուցիչները կիսվեն իրենց հաջողված դասերով, աշխատանքներով, ավելի հասանելի դարձնել փորձի փոխանակումը:
14. Ուսուցչին աջակցում են ոչ միայն դասարանին դասագրքերով ապահովելով, այլև մեթոդական ուղեցույցների ամբողջական փաթեթով, որտեղ զետեղված է ոչ միայն ծրագիրը, չափորոշիչները, այլև ամեն դասի օրվա պլանը՝ կիրառվելիք մեթոդներով:
15. Որպեսզի ուսուցչի մասնագիտությունը հարգված դառնա, պետք է մանկավարժական կրթություն ստանալը լինի պետպատվերի շրջանակներում, շատ բարդ լինի ընդունվելն ու սովորելը, համապատասխանի այն բոլոր պահանջներին, որոնք պետությունն ակընկալում է ուսուցչի որակների առումով: ԲՈւՀ-ում սովորողները պարտավորվեն նաև մարզերում աշխատել: Իսկ որպեսզի խելացի երիտասարդները ձգտեն այս ոլորտում աշխատել, պետք է պատշաճ աշխատավարձ ստանան:
16. Ուսուցիչների վերապատրաստումները պետք է նպատակային լինեն: Ողջունելի է, որ ստեղծվել են անկախ վերապատրաստող կենտրոններ, բայց նաև շատ կարևոր է, որ այդ կենտրոնները պատշաճ վերապատրաստեն վերապատրաստվող ուսուցիչներին, որ նրանք էլ ճիշտ մատուցեն պետական քաղաքականության տեսլականը: Պետք է պետությունը հստակ խնդիր դնի կրթական ոլորտի առջև, թե ինչ է ակընկալում 10-15 տարի անց, որ նման ծառայություններ մատուցող կազմակերպությունները իրագործեն այն՝ հաշվի առնելով ապագայի մարտահրավերները:
17. Ուսուցիչների իրավունքները պետք է պաշտպանված լինեն իրական և գործող արհմիության միջոցով: Վերանայել ուսուցիչների պարտավորությունների փաթեթը և համարժեք դարձնել նրա իրավունքներին:
18. Ուսուցիչների 12 տարվա մանկավարժական ստաժը նորից պետք է հաշվի առնվի ու 55 տարեկանում նրանց տրվի մասնակի կենսաթոշակ, ինչը մինչ այս նախատեսված է եղել համապատասխան օրենքով, և որը սկսած 2003 թվականից հետո աշխատող ուսուցիչների վրա այլևս չի տարածվում:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
-	-	Թանգամյան. Տ.Վ. Գիտահանրամատչելի ուսուցողական հանրագիտարան	Սամվելյան Ն. Ի., Սադոյան Ռ.Ռ., Մինասյան Ա.Ա.	-	-

		2022թ., Էդիթ Պրինտ, 398 էջ	Ուսումնական համալիր դաշտային պրակտիկա և դպրոցական էկեզբոսաշրջություն 2022թ., 246 էջ		

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
6	-	-	-	2	-	-	-	1	1

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
-	-	-	-

3.ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի դասախոսների կողմից հաշվետու տարում իրականացրել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց ուղղությունները և ստացված արդյունքները գիտական հոդվածների տեսքով ներկայացված են ստորև :
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի դասախոսների կողմից հաշվետու տարում իրականացրել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց ուղղությունները և ստացված արդյունքները գիտական հոդվածների տեսքով ներկայացված են աղյուսակներում: Ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանը եղել է 2022 թ. Հայաստանում կայացած կենսաբանության համաշխարհային օլիպիադայի գիտական ղեկավարներից մեկը և մշակել է այդ օլիմպիադայի կենդանաբանության գործնական ու տեսական հարցերը: Ս. Պիպոյանի «Գիտության փառատոն» համադպրոցական գիտաժողովի կազմակերպիչ և գիտական խորհրդի անդամ է: Գիտաժողովը տեղի է ունեցել «Այբ» դպրոցում 2022 թ. դեկտեմբերին, որի ժյուրիի կազմում հանդես է եկել Ս.Պիպոյանը:

Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական և ուսումնական, մանկավարժական գործընթացի փոխկապակցման գործընթացներ: Դրանք կազմում են ամբիոնի աշխատանքների հիմնական մասը, երբ դասախոսներն իրենց հետազոտությունների արդյունքները ներառում են առանձին առարկաների թեմատիկ պլանավորման և բովանդակության մեջ, հատկապես ամբիոնի կողմից մշակված ուսուցանվող ընտրովի առարկաների առումով: Մասնավորապես, նման առարկաների շարքում են գտնվում Հայաստանի ջրամբարների ֆաունան, Կենսաբանության ուսուցման և տեսության մեթոդիկան, Կենսատեխնոլոգիան, Կենսաբանական խնդիրների լուծման մեթոդիկան, Գենետիկան, Բյուրեղագիտությունը, Բարձրամոլեկուլային միացությունների քիմիան, Կենսաբանության ժամանակակից հիմնախնդիրները, Ուսուցման այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառումը կենսաբանության դասընթացում, Միջառարկայական կապերը կենսաբանության դասընթացում, Կենսաբանության արդիական հիմնախնդիրները: Ամբիոնի պրոֆեսոր կ.գ.դ. Ռ. Սադոյանը ղեկավարում է «Կենսաբանական ակտիվ միացությունների և կենսաանվտանգության» գիտական լաբորատորիան, որտեղ իրականացվում են հետազոտական աշխատանքներ թեկնածուական ատենախոսությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների շրջանակներում: Ամբիոնի վարիչ Ս.Պիպոյանը ղեկավարում է հայցորդ Ելենա Ամիրյանի թեկնածուական ատենախոսությունը «Արարատի և Արմավիրի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկների բեղունությունը և դրա վրա ազդող գործոնները» թեմայով և հայցորդ Ա. Բադալյանի թեկնածուական ատենախոսությունը «Դպրոցամերձ կանաչ տնկարկները որպես աշակերտների բուսաբանական գիտելիքների ձևավորման և էկոլոգիական դաստիարակության աղբյուր» թեմայով: Ամբիոնի պրոֆեսոր կ.գ.դ. Ռ. Սադոյանը ղեկավարում է հայցորդ Ա. Փիլթակյանի թեկնածուական ատենախոսությունը «Հայաստանի վայրի և մշակովի ցորենի տեսակների վերարտադրողական համակարգի էվոլյուցիան» թեմայով և Արևհատ Ավետիսյանի թեկնածուական ատենախոսությունը «Բնական կենսախթանիչների ազդեցությունը բակլայազգիների օնտոգենեզի վրա՝ Հայաստանի տարբեր էկոլոգիական պայմաններում»:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
Ձկնաբանություն	Փորձագիտական աշխատանք	Zoological Research Museum Alexander Koenig, Leibniz Institute for Animal Biodiversity, Adenaueralle	390 եվրո	Ս.Պիպոյան

		e 160, 53113 Bonn, Germany, public foundation		
Կենսաբազմազանություն	Փորձագիտական աշխատանք	UNECE	4300 ԱՄՆ դոլար	Ս.Պիպոյան
Բույսերի աճի և զարգացման օրինաչափությունները				Տ.Թանգամյան Ռ.Սիմոնյան
Դասագրքերի և գիտամեթոդական ձեռնարկների ստեղծում				Տ.Թանգամյան Ա. Կիրակոսյան Ս. Պիպոյան
Խիտոզանի նոր տիպի ածանցյալների սինթեզ				Մ.Երիցյան
Մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակի գնահատման բազմաբաղադրիչ ցուցիչների մշակման մեթոդաբանությունների զարգացում				Մ. Դալլաքյան
Մարդու, կենդանիների, բույսերի մանրէաբանական կազմի պրոբիոտիկների,հակաբիոտիկակայունության տարածվածության ուսումնասիրություն և գնահատում				Ն.Հարությունյան
Քիմիական կինետիկա, հեղուկաֆազ ազատ-ռադիկալային ռեակցիաներ, հակաօքսիդիչների ազդեցության քիմիական մեխանիզմները, բարդ քիմիական ռեակցիաների թվային մոդելավորում և վերլուծություն				Լ. Թավադյան
Յորենի հիբրիդների կենսագործունեությունը կարգավորող համակարգերի բազմակողմանի ուսումնասիրություն կապված հիբրիդային				Ռ. Սադոյան

ճնշվածության երևույթը պայմանավորող գեների կոմպլեմենտար փոխազդեցության հետ: Հիբրիդային ճնշվածության գեների տեսակային, աշխարհագրական և կենսաձևային տեղակայման առանձնահատկությունները Հարավային Կովկասի ցորեններում: Յորենի ֆիլոգենեզի հարցեր: Մշակաբույսերի նոր սորտերի բուծում և փորձարկում տարբեր ագրոէկոլոգիական գոտիներում				
Հոգեգենետիկա, կենսաբանության էլեկտրոնային դասընթացի մշակում				Ա. Կիրակոսյան
Չորրորդային ամոնիումային աղերի սինթեզ, հակամանրէային, հակասնկային ակտիվության ուսումնասիրումը, հիդրիդային տեղաշարժ, ներմոլեկուլային վերախմբավորումներ				Վ. Հովսեփյան
Մանրէասպան հատկություններով օժտված նոր ՄԱՆ-երի ստացումը և դրանց կոլոիդքիմիական հատկությունների ուսումնասիրում				Ա. Բաբախանյան

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
-	-	-	-

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Պիպոյան Ս. Խ. , Առաքելյան Ա. Ս.	Սպանդարյանի ջրամբարի ժամանակակից ձկնաշխարհը (Սյունիքի մարզ, Հայաստան), Հայաստանի կենսաբանական հանդես, N 1, 2022	6-10
Հովսեփյան Վ. Ս., Բաբախանյան Վ. Ս.	Հիդրիդային տեղաշարժի մեխանիզմը տեղակալված պրոպին-2-իլ խումբ պարունակող	58-65

	դիալկիլամոնիումային աղերի ստիվենսի 3,2-վերախմբավորման արգասիքներում: ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, h 42(1)	
N. Harutyunyan, A. Kushugulova, N.Hovhannisyan, A.Pepoyan	One Health Probiotics as Biocontrol Agents: One Health Tomato Probiotics. Plants 2022, 11 (10), ISSN 2223-7747 DOI:10.3390/plants11101334	1334
Обосян Н. Г., Балян К. В., Мовсисян Л. А., Овсепян В. С., Саргсян А. Б.	Новый путь синтеза ацетиленидов ртути. Scientific goals and purposes in XXI century.Seatle, USA.117, 2022.	306-312
S.K.Evstropiev,D.A.Yurchenko,V.L.Stolyarova, N.B.Knyazyan, G.G.Manukyan, A.V.Shashkin	Some features of the surface modification of MgO–Al2O3–TiO2–SiO2 glass and glass ceramics by Ag diffusionCeramics International, Volume 48, Issue 17, 1 September 2022	24517-24522
Yepremyan H., Asatryan V., Dallakyan M.	Structural changes of river ecosystems' biological quality elements under conditions of mineral water flux.Journal of Natural Sciences. 38(1)2022	20-25
Barseghyan N., Vardanyan T., Asatryan V., Epremyan H., Hovakimyan A., Dallakyan M.	Species structure and spatial distribution of fish in the Marmarik River. Biological journal of Armenia. 74(3),2022	44-51
Yeritsyan M.L., Arustamyan A.M., Sirekanyan I.N., Mkoyan L.G., Stepanyan L.O.	New types of flame retardants based on derivatives of phosphates Proceedings of the Yerevan State University, Chemistry and Biology, 2022, 56 (2).	131-135
М. Ерицян, А.М. Арустамян, В. М. Мависакалян, А. Р. Погосян	Модифицирование хитозана прививочной сополимеризацией, Вестник ТвГУ 2022 № 2	174-182
М. Ерицян, А.М. Арустамян, В. М., Л. О. Степанян, С. В. Царукян	Ненасыщенные производные продуктов реакций карбамида, тиокарбамида с глиоксалем, Вестник ТвГУ . Серия "Химия", 2022 № 4 (50)	163-172
Asatryan V.L., Hambaryan L.R., Boshyan T.V., Bulysheva N.I., Dallakyan M.R.	The analysis of the ecological status of the Hrazdan River estimated in the low water period by bioindication methods. Proceedings of the IV International Scientific Conference (Rostov-on-Don),2022	375-381

Dallakyan M.R., Lipinskaya T., Boshyan T.V., Asatryan V.L.	Fauna and distribution of leeches in the Hrazdan River system (Armenia).II international scientific and practical conference "Actual problems of wildlife protection in Belarus and neighboring regions" (October 11 - 14, 2022, Minsk, Belarus),2022	540-545
Князян Н.Б., Григорян Т.В., Еганян Дж.Р., Тороян В.П., Манукян Г.Г., Баграмян В.В	Синтез стекол на основе систем GeO2-Bi2O3-MeO/MeF2 (Me-Ba, Sr). Международная научно-техническая конференция «Инновационные технологии производства стекла, керамики и вяжущих материалов», 26-27 мая, Ташкент, 2022.	64-65
Манукян Г.Г., Григорян Т.В., Баграмян В.В., Тороян В.П., Еганян Дж.Р., Князян Н.Б.	Оптические стекла на основе оксифторидных германатных систем. Научная школа-конференция с международным участием для молодых учёных «Функциональные стекла и стеклообразные материалы: Синтез. Структура. Свойства» GlasSPSchool: 3 –7 октября, 2022, Санкт-Петербург.ISBN:978-5-00105-749-9,	15-16
Юрченко Д.А., Евстропьев С.К., Шашкин А.В., Дукельский К.В., Князан Н.Б., Манукян Г.Г., Столярова В.Л.	Спектральные свойства Eu-содержащей стеклокерамики BaO-Al2O3-SiO2-MgF2.XI Международная конференция по фотонике и информационной оптике. Сборник научных трудов. М.: НИЯУ МИФИ, 2022,ISBN 978-5-7262-2842-6, eLIBRARY ID: 48610157	92-93
Князян Н.Б., Еганян Дж.Р., Галоян К.К., Кумкумаджян Е.В.,	Наноструктурирование стеклокристалла в зависимости от расположения состава стекла на диаграмме состояния системы.Научная школа-конференция с международным участием для молодых ученых «Функциональные стекла и стеклообразные материалы: Синтез. Структура. Свойства» GlasSPSchool:3 – 7октября, 2022, Санкт- Петербург, ISBN:978-5-00105-749-9	15-16
Մանվելյան Ա. , Բալայան Մ. , Հարությունյան Ն. , Միրզաբեկյան Ս. , Փեփոյան Ա	Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ. ջերմային սթրեսի և ձկան լակտոբացիլների և աղիքային ցուպիկների առանձնահատկությունների մասին:Համահայկական գիտաժողով 2022, Հայաստան, Վանաձոր, 2022, 26 Սեպտեմբեր-01 Հոկտեմբեր, Համառոտագրերի գրքույկ:	45

Mkhitaryan R.P. A.U.Isakhanyan A.A.Harutyunyan N.Z. Hakobyan A.S.Grigoryan	Synthesis of acylation products of annalated 2-amino thiophenes and complexes of 4-chloro-N-(cyano-5,5-dimetyl-4,7-dihydro-5H-thieno [2,3-C]pyran-2-yl butanamide with Cu(II), Zn(II), Ba (II) and Co(II).Russian Journal of General Chemistry,2022,Vol.92,No.11.2022	2516–2520
Ерицян М.Л., Арустамян А.М., Царукян С.В	Реология водного раствора низкомолекулярного поливинилового спирта.- Российская Федерация, Вестник Тверского государственного университета. Серия "Химия". 2022. № 2 (48).	101-117
Hovhannisyan, V.; Vaseashta, A.; Avanesyan, L.; Sadoyan, R.; Gasparyan, A.; Shogheryan, S.; Harutyunova, L.; Mirumyan, L.; Gevorgyan, G.	Ecological Characterization and Bio-Mitigation Potential of Heavy Metal Contamination in Metallurgically Affected Soil.*Appl. Sci.* **2022**, *12*(13), **https://doi.org/10.3390/app12136312**	2-12
H.Martirosyan, R.Sadoyan. S.Shogheryan, A.Avetisyan	«The effect of "Complex-Co" preparation on the tillering and efficiency indicators of a few spiked cereals (Barley, Emmer, Wheatgrass) The first message». European Science Review Scientifi c journal № 9–10 2022 (September – October) ISSN 2310-5577	3-7
N.H. Harutyunyan, A.M. Manvelyan, M. H. Balayan, A.Z. Pepoyan	Bacterial Communities of Bartonella-Positive Fleas in Gut Microbiota of Armenian Populations. AgriScience and Technology 2022, 4/80, p. 388-393. ISSN 2579-2822 DOI:10.52276/25792822-2022.4-388	388-393
Кумкумаджян Е.В., Григорян Т.В., Тороян В.П., Князян Н.Б.	Особенности стеклования и свойства стеклокристаллических материалов в системе MgO/MgF 2 -B 2 O 3 -SiO 2. Химический журнал Армении, №3-4.	248-257
Valentina L. Stolyarova, Andrey L. Shilov , Sergey I. Lopatin, Viktor A.	High-temperature mass spectrometric study and modeling of ceramics based on the Al2O3- SiO2-ZrO2 system.Rapid Commun. Mass Spectrom https://doi.org/10.1002/rcm.9 433 Volume37, Issue3	34-37

Vorozhtcov, Dmitrii A. Yurchenko, Nikolay B. Knyazyan,Goharik G.Manukyan		
Арсентьев С.Д., Тавадян Л.А., Брюков М.Г., Паланкоева А.С., Беляев А.А., Арутюнов В.С.//	Кинетическое моделирование окисления пропана при температурах 700-1100 К. *Химическая Физика*, 41 (11): 2022.	3-14
Григорян Р.Р., Арсентьев С.Д., Тавадян Л.А.	Использование катализаторов на основе оксидов меди, никеля и хрома для беспламенного сжигания ацетона. *Химический Журнал Армении*.1. 25(3): 2022. DOI: 10.54503/0515-9628-2022.75.3-241	241-247
Манучарова Л.А., Бахчаджян Р.А., Вердян Н.А., Тавадян Л.А	Одностадийное получение дикофола. *Доклады НАН РА*.122(4):2022.	300-306
Манучарова Л.А., Вердян Н.А., Тавадян Л.А	Фотокаталитическое окисление хлорсодержащих фенил алканов в присутствии допированного нанотитан оксидного катализатора. *Всесоюзная школа-конференция «Фотокатализ – от фундаментальных исследований до практического применения»*. Новосибирск, Россия, 6-7 октября, 2022	7

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
«Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում»	ՀՊՄՀ, 26.04.22թ.
«Մեր դերը բնության պահպանության գործում»	ՀՊՄՀ, 02.11.22թ.
«Ինչպե՞ս գրել կուրսային և ավարտական աշխատանք»	ՀՊՄՀ, 07.12.22թ.
«Կյանքի ծագումը»	ՀՊՄՀ, 12.12.22թ.

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
-	-	-	-

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
-	-	-	-

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
-	-	-	-

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Պիպոյան Ս. Խ.	Սարգսյան Լ.	Կարենիս գյուղի (Կոտայքի մարզ, Հայաստանի Հանրապետություն) շրջակայքի ցերեկային թեփուկաթևավորների (Rhopalocera) ֆաունան	Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում, 2022թ., ապրիլի 26
Պիպոյան Ս. Խ.	Մացակյան Ս.	Ընտանի խոզի գանգատուփի ոսկրաբանական պրեպարատ ստանալու տեխնոլոգիան	Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում, 2022թ., ապրիլի 26
Կիրակոսյան Ա.Գ.	Գրիգորյան Ա.	Մանկական քաղցկեղի առաջացմանը նպաստող գործոնների գնահատումը	Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում, 2022թ., ապրիլի 26
Կիրակոսյան Ա.Գ.	Սարգսյան Մ.	Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դպրոցական կենսաբանության դասընթացում	Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում, 2022թ., ապրիլի 26
Պիպոյան Ս. Խ.	Սրապիոնյան Լ.Հ.	Արագլիջուր գետի ժամանակակից ձկնաշխարհը (Սյունիքի մարզ, Հայաստան)	Գտնվում է տպագրության մեջ:

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
ՀՊՄՀ-ԿՔԱ ֆակուլտետ/ԿՔԴՄ ամբիոն	<<Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում>>	1. Սարգսյան Լիլիթ «Կարենիս գյուղի (Կոտայքի մարզ, Հայաստանի Հանրապետություն) շրջակայքի ցերեկային թեփուկաթևավորների (Rhopalocera) ֆաունան» 2. Մացակյան Սաթիկ «Ընտանի խոզի գանգատուփի ոսկրաբանական պրեպարատ ստանալու տեխնոլոգիան» 3. Գրիգորյան Աստղիկ «Մանկական քաղցկեղի առաջացմանը նպաստող գործոնների գնահատումը» 4. Սարգսյան Մարիամ «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դպրոցական կենսաբանության դասընթացում»
<u>Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության, Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոններ</u>	<<Աղետներ, համաճարակներ, հանրային առողջություն և կրթություն>>	1.Կիրակոսյան Զարուհի «Շրջակա միջավայրը որպես մարդու կայուն կենսագործունեության պայման» 2.Բեգլարյան Մերի «Նոր կորոնավարակով պայմանավորված թոքաբորբի ռենտգեն ախտորոշման առանձնահատկությունները» 3.Սահակյան Աշխեն «Կովիդ համավարակ և պարտադրված հեռավար ուսուցում»

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային	-	-	-
Հանրապետական	-	-	-
Տարածաշրջանային	-	-	-

4.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ամբիոնը փորձում է արտաքին կապեր հաստատել Հայաստանի և տարբեր երկրների բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ: Դրանք հիմնականում առանձին դասախոսների մասնագիտական փոխհարաբերություններ են իրենց տեղացի և արտասահմանյան գործընկերների հետ, որի ընթացքում իրականացվում են գիտական հետաքրքրություն ներկայացնող նախագծեր: 2022 թ. առաջին անգամ ամբիոնում մագիստրոսական թեզ կատարող Կենսաբանություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի, ՀՊՄՀ լավագույն ուսանողուհի ընտրված Քնարիկ Համբարձումյանը Էրազմուս+ ծրագրի շրջանակում 1 կիսամյակ ուսումնառություն է անցկացրել Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանում: Այստեղ ուսումնառած մոդուլները նրան անհրաժեշտ են իր հետազոտական աշխատանքն ավելի բարձր մակարդակով կատարելու համար: Նման գործընթացներ ամբիոնը պատրաստվում է կատարել նաև հաջորդ տարիներին: Այստեղ հիմնական խնդիրը ուսանողների կողմից օտար լեզվի տիրապետման ցածր մակարդակն է, ինչը թույլ չի տալիս ավելի լայնամասշտաբ համագործակցության եզրեր գտնել արտաքին աշխարհի կազմակերպությունների հետ: Մյուս կողմից ամբիոնում ավարտական աշխատանք կատարող Սաթենիկ Մացակյանը և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Արմինե Խլոյանն իրենց աշխատանքների համակարգումն ու խորհրդատվությունը ստանում են Շվեյցարիայի Յուրաստիկա թանգարանի գիտական աշխատակից, phD Դավիթ Վասիլյանից: Միաժամանակ, ամբիոնի դասախոսները պարբերաբար փորձում են մասնակցել արտաքին գործընկերների կողմից կազմակերպվող առցանց միջոցառումներին՝ կոնֆերանսներին, սեմինարներին, որոնց մասնակցությունը դեռևս ցածր մակարդակի վրա է:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ամբիոնը համագործակցում է տեղական գիտահետազոտական հաստատությունների (ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ, «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ ԳԱԱ Մ.Գ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ, Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ), Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ագրարային համալսարանի, Շիրակի Մ.Նալբանդյանի անվան համալսարանի հետ: 2022թ.-ին պայմանագրեր են կնքվել Երևանի կենդանաբանական այգու, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետ: Բանակցություններ են վարվում նաև Հայաստանի ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի ու նրա կազմի մեջ մտնող տարբեր ստորաբաժանումների հետ պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու ուղղությամբ: Ամբիոնի շատ շրջանավարտներ արդեն աշխատանքի են անցել ինչպես կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում, այնպես էլ բուսաբանության ինստիտուտում: Միայն 2022 թվականի այդ կազմակերպություններում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել ամբիոնի նախկին երեք շրջանավարտ:

Վերոնշյալ կազմակերպություններում ամբիոնի ուսանողների զգալի մասն անցկացնում են իրենց փորձարարական աշխատանքները, որոնց հիման վրա պատրաստվում են ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը, գրվում են կուրսային աշխատանքներ և կատարվում են գործնական հանձնարարություններ:

Սերտ համագործակցություն է ծավալվել Շվեյցարիայի "JURASSICA Museum" կազմակերպության հետ, որի աշխատակից կ.գ.թ. Դ. Վասիլյանի հետ իրականացվում են համատեղ գիտական ուսումնասիրություններ:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
The University of Natural Resources and Life Sciences. Vienna	+	-	+	-	-

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
-	-	-	-	-
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				
-	-	-	-	-

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
-	-	-	-

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
-	-	-	-

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնը իրականացնում է այցեր մի շարք քաղաքային և մարզային դպրոցներ (Երևանի թ. 155 հիմնական, թ. 20 հիմնական, թ. 55 հիմնական, թ. 148 ավագ, թ. 118 ավագ, թ.170 ավագ, «Փոքրիկ իշխան» կրթահամալիր, «Այբ» դպրոցի, «Հերացի» ավագ դպրոց, «Քվանտ» վարժարան): Հյուրընկալում քաղաքային և մարզային դպրոցների աշակերտներին: Մասնագիտական կողմնորոշման նպատակով 2022թ.-ին ամբիոն են այցելել հանրապետության թվով 15 հանրակրթական դպրոցների տարբեր դասարանների ավելի քան 180 աշակերտ (Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Երևանի Մակսեդան հանրակրթական դպրոց, Երևանի Լ. Միրիջանյանի անվան թ. 155 հիմնական դպրոց, Երևանի Հ. Օշականի անվան թ. 172 հիմնական դպրոց, Երևանի Գալինա Ստարավոյտովայի անվան թ. 177 հիմնական դպրոց , Երևանի Մ. Քաջունու անվան թ. 54 ավագ դպրոց, Երևանի Խ. Աբովյանի անվան թ. 2 հիմնական դպրոց, Հրազդանի Հ. Օրբելու անվան թ. 13 ավագ դպրոց, Երևանի Գ. Չաուշի անվան 188 հիմնական դպրոց, Նշավանի հիմնական դպրոց, Երևանի Վ. Տերյանի անվան թ. 60 հիմնական դպրոց, Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թ. 135 հիմնական դպրոց, Ս. Վարդանյանի անվան հիմնական դպրոց, Վանաձորի թ. 11 ավագ դպրոց, Երևանի Անդրեյ Սախարովի անվան թ. 69 հիմնական դպրոց): Բոլոր աշակերտների համար կազմակերպվել են կարճ դասախոսություններ, գործնական ու լաբորատոր աշխատանքներ, ցուցադրվել են քիմիական փորձեր: Աշակերտներին ուղեկցող ուսուցիչներին տրվել են մեթոդական ցուցումներ դասերն ավելի արդյունավետ կազմակերպելու ու անցկացնելու համար: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել նաև այլ դպրոցներից ամբիոն այցելություններ կազմակերպելու համար: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Ս. Պիպոյան	<<Քո գիտությունը՝ դպրոցին>>	2022 թ. սեպտեմբերից դեկտեմբեր
	Ս. Պիպոյան	Հանրապետական դպրոցական, մարզային և հանրապետական օլիմպիադաներ	2022 թ. հոկտեմբերից դեկտեմբեր
Մեթոդական	Ս. Պիպոյան	<<Քո գիտությունը՝դպրոցին>>	2022 թ. սեպտեմբերից դեկտեմբեր
	Ս. Պիպոյան	Հանրակրթական դպրոցների աշակերտների այց ամբիոն	2022թ. ողջ ընթացքում
Դաստիարակչական	-	-	-

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Հանրության իրազեկվածության բարձրացում բնապահպանական և կրթական հարցերի շուրջ	Ս.Պիպոյան	Հարցազրույցներ և հաղորդումներ հեռուստատեսությամբ և ռադիոյով / 5 ռադիոհաղորդում, 6 հեռուստատեսությամբ	2022թ. ողջ ընթացքում:
Բնապահպանական	Ս.Պիպոյան, Ռ. Սադոյան	Երևանյան լճի ափամերձ որոշակի տարածքներից աղբահանման աշխատանքներ	23.09.2022թ.
Բնապահպանական	Ս. Պիպոյան, ամբիոնի ուսանողներ	Համապետական ծառատունկ Արագած լեռան փեշերին	05.11.22թ.
Բնապահպանական	Ս.Պիպոյան, Հ. Միկոյան	Մաքրապատում Բնակրթական հասարակական կազմակերպության հիմնադրում	23.11.2022թ.

6.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնում որակի ապահովման համար իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես՝ 1. 29.08.22թ.-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել և հաստատվել են առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների՝ ուսումնական պլանով հաստատված ժամաքանակներին համապատասխանեցման, ինչպես նաև բովանդակային վերանայման հարցերը՝ մասնագետ ուսուցչի պատրաստման շեշտադրումով: 2. Վերանայվել են «Կենսաբանություն» և «Քիմիա» մասնագիտությունների որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը (6-րդ կրթական մակարդակ՝ բակալավր, 7-րդ կրթական մակարդակ՝

մագիստրոս): Նշված փաստաթղթերի բովանդակությունը վերաիմաստավորվել է և կատարելագործվել՝ համահունչ ՈՒՇ-ի չափանիշներին: Մասնավորապես, ավելի մեծ ուշադրություն է դարձվել մասնագիտական կրթական ծրագրերի մանկավարժական բաղադրիչին, հաշվի առնելով ուսանողների մասնագիտացումը որպես կենսաբանության ուսուցիչ-մանկավարժների: Ավելի մեծ տեղ է հատկացվել տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներին (ՏՀՏ), հաշվի առնելով բարձրագույն կրթության բնագավառում վերջին տարիներին՝ օբյեկտիվորեն պայմանավորված, դրանց դերի աճը:

3. Նոր՝ «Կենսաբանություն–քիմիա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի ստեղծման շրջանակներում իրականացվել են ոլորտային աշխատանքներ, կատարվել է բենչմարքինգ նման մասնագիտություն ունեցող առանձին բուհերի համեմատ:
4. Ամբիոնում որակի ապահովման ներքին աշխատանքներից են փոխադարձ դասալսումները, որոնք իրականացվել են համաձայն նախօրոք կազմված ժամանակացույցի: Ընդհանուր առմամբ հաշվետու տարում իրականացվել է թվով 48 դասալսում, որոնց արդյունքներն ամփոփվել են դասալսողների համապատասխան հաշվետվություններում:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներքին շահակիցներից ստացվող հետադարձ կապն ապահովվում է անհատական հարցազրույցների, խմբային քննարկումների միջոցով՝ դասախոսների, ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների, ուսանողների հետ:

Մեխանիզմ.

- Դասախոսների շրջանում անցկացվող հարցում:
- Դասախոսի ինքնագնահատում:
- Ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների շրջանում անցկացվող հարցում:
- Ամբիոնի նիստեր:
- Ուսանողների շրջանում անցկացվող հարցում:
- Ուսանողի կողմից առարկայի դասավանդման գնահատում:

Արտաքին շահակիցներից (շրջանավարտ, գործատուներ, ոլորտի պետական և մասնագիտական կառույցներ) ստացվող հետադարձ կապը ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնը ստանում է հետագայում այլ հաստատություններում ուսումը շարունակող կամ աշխատող շրջանավարտներից: Մասնավորապես, ամբիոնը 2022 թ. ընթացքում հետադարձ կապ է պաշտպանել 50 շրջանավարտի հետ, որոնք ներկայում աշխատում են որպես հանրակրթության ուսուցիչներ, հանրակրթական դպրոցների 21 տնօրենի և 18 տնօրենի տեղակալի, կրթության ոլորտում 5 փորձագետի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության 3 աշխատակցի հետ:

Գործիքներ.

- Սոցցանցերով, էլեկտրոնային նամակներով:
- Անհատական տեղեկատվության փոխանակում առերես հանդիպման ընթացքում
- Ավարտական փաստաթղթերի պատճեններ:
- Աշխատանքի վայրի վերաբերյալ տեղեկատվություն:

Մեխանիզմ.

- Շրջանավարտների վերաբերյալ գնահատական գործատուների կողմից:
- Հարցումներ շրջանավարտների շրջանում:
- Հարցումներ ուսուցիչների շրջանում:
- Ուսման ավարտին հարցում մասնագիտական այլ կառույցներում ավարտական կուրսերի ուսանողների շրջանում:

րոց-համալսարան, դպրոց-ամբիոն կապը հնարավորություն է ընձեռնում արագ արձագանքել իրականացվող ւփոխություններին և իրականացնել համապատասխան գործընթացներ/շտկումներ ՄԿԾ-ների և ւարկայական նկարագրերի բովանդակության, նպատակների և վերջնարդյունքների մեջ: Ուսանողների ւնկավարժական պրակտիկայի ամբողջ ընթացքում ուսանողների հաճախումը վերահսկվել է Խ. Աբովյանի ւվան թիվ 2, Վ. Մայակովսկու անվան թիվ 7, Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20, Ե. Չարենցի անվան թիվ դպրոց - բազաների պրակտիկայի պատասխանատուների կողմից, դպրոցի առարկայական ւսնագետները ևս ներգրավված են եղել ուսանողների պրակտիկայի գնահատման գործընթացում, չը նպաստել է որակյալ պրակտիկայի անցկացմանը: Յուրաքանչյուր ուսանողին դպրոցի կողմից տրված ութագիրը մեծապես նպաստում է ուսուցման գործընթացի կազմակերպման և որակի բարելավման րծընթացին:

Ամբիոնում ուսուցման գործընթացը, ըստ դասախոսների կողմից կատարված դասալսումների և էլեկտրոնային հարթակում որակի պատասխանատուների իրականացրած մշտադիտարկման արդյունքների, գործնականում ընթանում է առարկայական նկարագրերում ամրագրված վերջնարդյունքների ապահովմամբ և թեմատիկ պլանավորման հիման վրա:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Մասնագիտական բարձր որակավորում ունեցող դասախոսների առկայությունը	Մասնագիտացված լաբորատորիաներում նյութատեխնիկական հագեցվածության պակասը
Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների պարբերաբար կազմակերպումը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Դաշտային պրակտիկաների անցկացման բացակայություն
Հետադարձ կապի իրականացումը բուհի շրջանավարտների և դրա հիման ՄԿԾ-ների	Դասախոսների միջին մեծ տարիքը

բովանդակության կատարելագործումն աշխատաշուկայի կարիքներին համահունչ	
Համագործակցությունը տարբեր դպրոցների, գիտական կազմակերպությունների հետ	Դիմորդների և ուսանողների պակասը
Դրամաշնորհային տարբեր ծրագրերի մեջ դասախոսների ընդգրկվածությունը	Սպասարկող անձնակազմի փոքրաթվությունը (մասնագիտական առարկաների մեծ քանակի դեպքում)
	Առանձին դասախոսների դասաժամերով գերբեռնվածությունը և գիտական աշխատանքով լիարժեք զբաղվելու ժամանակի ու նյութատեխնիկական միջոցների անբավարարությունը
	Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների անբավարարություն
Հնարավորություններ	**Վտանգներ**
Գիտության տարբեր ճյուղերին դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման տարեց-տարի ավելացումը	Աշխատաշուկայում ուսուցիչներ աշխատելու ոչ գրավիչ լինելը և ուսուցիչների ցածր աշխատավարձը Հանրակրթական դպրոցներում շրջանավարտների տարեցտարի նվազող քանակը
Կրթության զարգացման ռազմավարական փաստաթղթի առկայությունը Համագործակցության պայմանագրերի և հուշագրերի առկայությունը տարբեր գիտական և այլ կազմակերպությունների հետ:	Կրթության ոլորտի ոչ բավարար ֆինանսավորումը Հանրակրթական դպրոցներում բնագիտական առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրվածության պակասը:

	Աշխատաշուկայում ուսուցիչներ աշխատելու ոչ գրավիչ լինելը և ուսուցիչների ցածր աշխատավարձը Հանրակրթական դպրոցներում շրջանավարտների տարեցտարի նվազող քանակը

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
2021-2022 ուս. տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալային ժամաքանակը /վիճակ 1/ կազմել է՝ 8029ժամ /վիճակ 1/, իսկ 2022-2023 ուս. տարում՝ 7057: Ժամաքանակի նվազում տեղի է ունեցել հիմնականում տարեցտարի ուսանողների թվի նվազման և այս ուսումնական տարի առկա բակալավրիատում դիմորդներ չունենալու պատճառով: Ամբիոնի թվով 9 դասախոսների կողմից վերանայվել են բակալավրիատի և մագիստրատուրայի «Աշխարհագրություն» և «Լադշաֆտային պլանավորում » մասնագիտական կրթական ծրագրերը, ստեղծվել է 011401.33.6 «Աշխարհագրություն-բնագիտություն» նոր մասնագիտական կրթական ծրագիր և ուսումնական պլան: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները իրականացրել են դասալսումների ժամանակացույցով նախատեսված փոխադարձ դասալսումներ
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Հաշվետու տարում ամբիոնը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն՝ հիմնականում կենտրոնանալով ուսանողակենտրոն ուսուցման մոտեցման վրա: Դասավանդման գործընթացը իրականացվել է ինտերակտիվ քննարկումների, բանավեճերի, նախագծերի մեթոդներով Google Classroom հարթակի և դրա գործիքակազմի ամբողջական

կիռարմամբ: Վերլուծելով ընտրված մեթոդներն ու մոտեցումները կարող ենք փաստել, որ դրանք ամբողջությամբ նպաստել են ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքներին: ՊԴԱ-ի կողմից կարևորվում է դասընթացի ավարտին վերջնարդյունքների ձեռքբերումը, որի համար ամբիոնում մշտապես մասնագիտական քննարկման առարկա են դառնում դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու մոտեցումներն ու դրանց պարբերական արդիականացման խնդիրները:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ամբիոնում ուսանողների գնահատման համար կիրառվել է 100 միավորանոց համակարգը, հաշվի են առնվել ԲՈՒՀ-ի կողմից առաջարկվող, գնահատման բաղադրիչների կառուցվածքը, կապելով այն ուսումնառության արդյունքների հետ, առաջնային համարելով ակադեմիական ազնվության ապահովումը, կիրառվել են թեստային, ռեֆերատային և գիտելիքների ստուգման այլ ձևեր: Օրինակ՝ ԿՔԱ ֆակուլտետի դեկանի և պրակտիկայի ղեկավարի հետ համատեղ մշակվել, փորձարկվել և ներդրվել է պրակտիկայի թղթապանակների պաշտպանության գնահատման 100 միավորանոց բաղադրիչային սանդղակ, որի կիրառումը բարձրացրել է գնահատման գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:

ՅՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Պատկերային ներկայացման կառուցվածք Ուսանողի անուն ազգանուն												
1.„Իմ կրթության փիլիսոփայությունը„ հիմնական գաղափարի ներկայացում **Ընդ.՝ 10մվ**												
2.Պրակտիկայի վայրի՝ դպրոցի կամ ուսումնական հաստատության ներկայացում: **Ընդ.՝ 5մվ**												
3.Առավել հաջողված դասի ներկայացում, նշել՝ դասարանը, թեման, դասի նպատակը, դասի տիպն ու տեսակը, հիմնական հասկացությունները և դրանց ձևավորման մեթոդներն ու միջոցները, փորձերն ու ինքնաշեն դիդակտիկական պարագաները, գիտելիքի ստուգման ձևերը 20 մվ												
Դասի ինքնավերլուծություն 10 մվ **Ընդ.՝ 30**												
4.Ուսումնադաստիարակչական միջոցառման ներկայացում ու Ընդ.՝ 10մվ												
վերլուծություն 10 մվ **Ընդ.՝ 20**												
5. Մեփական գործունեության swot վերլուծություն: **Ընդ.՝ 10մվ**												
6. Պրակտիկայի swot վերլուծություն: **Ընդ.՝ 10մվ**												
7.Պրակտիկայի ամփոփիչ ակնարկ **Ընդ.՝ 15մվ**												
Ընդ. ՝ 100 մվ												
Ծանոթում. Ուսանողի ելույթի հոսքին հատկացում է 5-7 րոպե	Հանձնաժողովի նախագահ / անդամ ..... ստորագրություն ..... ազգանուն ա.հ.											

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

2022 թ. ընթացքում ամբիոնի նիստերում (16) քննարկվել են ուսումնական աշխատանքների բարելավմանն ուղղված հարցեր՝ առարկայական նկարագրերի, ուսումնամեթոդական փաթեթների վերանայման, ուսումնական և մանկավարժական պրակտիկաների նախապատրաստման և անցկացման մեխանիզմները: Օրինակ՝ հաշվի առնելով առկա բակալավրիատի «Աշխարհագրություն-բնագիտություն» նոր մասնագիտության ներդրման փաստը, մասնագիտության մանկավարժական շարունակական կրթությանը ներկայացվող ՈՒԱԾ-ի և միջազգային պահանջները, ամբիոնը կազմել է ուսումնական պլան այդ մասնագիտության համար: Վերանայվել է նաև Լանդշաֆտային պլանավորում մագիստրոսական ուղղության ուսումնական պլանը: Այս հարցերը քննարկվել են հոկտեմբերի 25-ին թիվ 6 նիստում:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	6	1	1	7	7	1	-	8
Համատեղող				2	2			2
Ժամավճարային								
Ընդամենը	6	1	1	9	9	1	-	10

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը իրականացվել է ըստ նախապես կազմված և հաստատված աշխատանքային պլանի: Քննարկվել և հաստատվել են թվով 12 մագիստրոսական ատենախոսությունների, 19 ավարտական և 40 կուրսային աշխատանքների թեմաները, կազմվել և հաստատվել են բոլոր առարկաների ընթացիկ և ամփոփիչ ստուգումների քննական հարցաշարերն ու թեստերը: Իրականացվել են համալիր կազմակերպչական և ուսումնամեթոդական աշխատանքներ ՄԿԾ-ների պահանջների բավարարման և վերանայման նպատակով, որի համար ստեղծվել է հանձնաժողով, իրականացվել ներքին վերլուծություններ, կատարվել են նաև ուսումնական պլանների և կարդացվող դասախոսությունների որակը մշտապես բարելավելու աշխատանքներ, ինչպես նաև ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիրկում՝ ապահովելով ամբիոնի ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների համապատասխանությունը հանրակրթական դպրոցների առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին: Մանսավորապես, քննարկվել և վերանայվել են ,,Աշխարհագրություն,, մասնագիտական ՄԿԾ-ի

նպատակները, խնդիրները և ակնկալվող վերջնարդյունքները: Նույն ուղղությամբ շարունակվում են աշխատանքները ,,Լանդշաֆտային պլանավորում,, մասնագիտական կրթական ծրագրում:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
-	-	-	-	-	4

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
-	-	1	-	-	-	1	1	1	6

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
Cross Continental University Partnership on Inclusive Regional Development in Conflict-Peace Context /նախապատրաստական/	2021-2022թ. դեկտեմբերից-մայիս	3200 €	երկու

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Հաշվետու տարում ամբիոնը իրականացրել է հետազոտական աշխատանքներ հիմնականում դասավանդվող առարկաների շրջանակներում: Ամբիոնի նիստերում քննարկվել են աշխարհագրական և մեթոդական ուղղվածությամբ ուսումնական ձեռնարկներ, բուհական դասագրքեր, հոդվածներ:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված ամբիոնը 2022թ.-ի հոկտեմբերի 10-ին կազամկերպել է «Կոնստրուկտիվ աշխարհագրություն և սոցիալ–տնտեսաաշխարհագրական հետազոտություններին ներկայացվող ժամանակակից պատվերները և ստացված արդյունքների օգտագործման պրագմատիկ նշանակությունը» խորագրով կոնֆերանս, որին մասնակցում էին նաև մագիստրոսներ, հայցորդներ, ուսանողներ, տարբեր բուհերի և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Даян С.Ц., Антонян Ш.А. ,ГЕОГРАФИЧЕСКОЕ РАСПРОСТРАНЕНИЕ И ПРОБЛЕМЫ ГЕНЕТИЧЕСКИ МОДИФИЦИРОВАННЫХ ОРГАНИЗМОВ: Անտոնյան Շ.Ա. ,«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ » ամբիոնի հայցորդ: ԴԱՅԱՆ Ս. Ց. , ԱՌԱՔԵԼՅԱՆ Մ. Ա., «ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՌԱՔԵԼՅԱՆ Մ. Ա., Աշխարհագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Վ:Հովհաննիսյան ,,ԼԼանդշաֆտագիտական գիտելիքների դերը բուհական աշխարհագրության ուսուցմանհամատեքստում,, թեմայով Հանրապետական գիտագործնական կոնֆերանսում զեկույց
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Հաշվետու տարում ամբիոնի հետազոտական գործունեության արդյունքները մշակվել և իրենց տեղն են գտել ուսումնական գործընթացում մասնավորապես ուսումնական պլաններում և դասավանդվող դասընթացներում: Վերապատրաստումների և դրանց հիման վրա կատարված հետևությունների արդյունքում մշակվեցին ուսուցման կազմակերպման նոր՝ առաջադրանքահեն մոտեցումներ, որոնց հիման վրա էլ նորովի մշակվեց և ներդրվեց ,,Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա,, առարկայի քննական հարցաշարը: 2022թ.-ի մայիս ամսին դաշտային հետազոտական աշխատանք ,,Երևանի աղի լճեր,, տեղանքում միջանկյալ գրավոր աշխատանքի համար էմպիրիկ նյութի հավաքման նպատակով:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
Լեռնային երկրների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում:	Հիմնարար	-	-	Գ. Կարապետյան
ՀՀ լանդշաֆտների համալիրային ուսումնասիրություն	Կիրառական	-	-	Ն. Սամվելյան
Բնական և մարդածին ռիսկերի հետազոտումը ՀՀ-ում:	Հիմնարար	-	-	Գ. Կարապետյան
Աշխարհագրական հետազոտությունների երկրատեղեկատվական վերլուծություն:	Հիմնարար	-	-	Ա. Աջամօղլյան
Աշխարհագրության դասավանդման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների մշակում:	Կիրառական	-	-	Ա. Մինասյան Ս. Դայան Ա. Աջամօղլյան
Բնօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրները ՀՀ-ում:	Հիմնարար	-	-	Մ. Մուրադյան
Կայուն տուրիզմի զարգացումը լեռնային երկրներում	Հիմնարար	-	-	Մ. Մաթոսյան
Գիտարշավների եվ դպրոցական զբոսաշրջության զարգացումը ՀՀ ում	**Կիրառական**	-	-	Վ .Հովհաննիսյան

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
-	-	-	-

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Արմեն Աջամօղլյան	Անձնակենտրոն, հեռավար և համակարգչային ուսուցման տեխնոլոգիաներն աշխարհագրության դասավանդման գործընթացում:	403-413
Արմեն Աջամօղլյան, Եղիազարյան Կարինե	ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	70-79
Արմեն Աջամօղլյան, Հասմիկ Հարությունյան	ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ	53-60
Արմեն Աջամօղլյան, Եղիազարյան Կարինե	«Երկրատեղեկատվական համակարգեր» բուհական դասընթացի հիմունքների դասավանդման մեթոդիկա	140-145
Վարդուհի Հովհաննիսյան	,,Սյունիք. մշակույթը եվ բնությունը,, հանրապետական գիտաժողով, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ Գիտաժողովի ամփոփագրեր 26-28 ապրիլի, 2022 թ. ՀԱԻ հրատարակչություն Երևան 2022 Institute of Archeology and Ethnography of NAS RA Syunik. Culture and Nature Conference Abstracts April 26-28, 2022 IAE Publishing House Yerevan 2022 ՀՏԴ 908(082) ԳՄԴ 26.891g43	49-55
Վարդուհի Հովհաննիսյան	զեկուցում՝ ,,Լանդշաֆտագիտական գիտելիքների դերը բուհական աշխարհագրության ուսուցման	

	համատեքստում,,ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100 – ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ, Սովորեցնում ենք սովորեցնել ու արդեն 100 տարի	
Ն. Սամվելյան Սադոյան Ռ. Մինասյան Ա.	Ուսումնական համալիր դաշտային պրակտիկա և դպրոցական էկոզբոսաշրջություն	249
Հարությունյան Մ. Դայան Ս.	ՌՈՒԲԵՆ ՕՐԲԵԼՈՒ ՋՐԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	98-104
Սարիբեկյան Ո., Դայան Ս.	ՀՀ ՋՐԷԿ-ՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ	86-92
Даян С., Аракелян М.	ОБРАЗОВАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ КНИГИ «ЛАНДШАФТЫ И ФИЗИКО- ГЕОГРАФИЧЕСКИЕ РЕГИОНЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ» ДЛЯ КУРСА «ИСТОРИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ АРМЕНИИ И СОСЕДНИХ СТРАН» НАУКА В ЖИЗНИ ЧЕЛОВЕКА,	36-47
Ս. ԴԱՅԱՆ, Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	108-113
Сима Даян, Тамара Хачатрян	ПРОБЛЕМЫ ГРАДОСТРОИТЕЛЬНОГО РАЗВИТИЯ РАЗДАНСКОГО УЩЕЛЬЯ,	180-186
Сима Даян, Виктория Князян	ПРИЧИНЫ И БОРЬБА С СОКРАЩЕНИЕМ ЗЕЛЕНЫХ ТЕРРИТОРИЙ ГОРОДА ЕРЕВАНА,	176-180
Даян С.Ц., Антонян Ш.А.	ГЕОГРАФИЧЕСКОЕ РАСПРОСТРАНЕНИЕ И ПРОБЛЕМЫ ГЕНЕТИЧЕСКИ МОДИФИЦИРОВАННЫХ ОРГАНИЗМОВ,	13-18
Ս.Զ. Կրոյան, Ս.Կ. Բաղդասարյան Ժ Շ Մեսրոպյան	Մարդածին և ոչ մարդածին երևույթների ազդեցությունը Մերձարաքսյան ենթագոտում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցման և ոռոգելի մարգագետնային գորշ հողերի որակական հատկանիշների վրա	149-159

Samvel Z. Kroyan, Arsen T. Grigoryan, Paruir S. Efendyan	**Analysis of anthropogenic changes in the structural composition of black soils of Lori plain**	167-172
Ս.Ա. Հունանյան Ս.Զ. Կրոյան Տ.Ա. Ջհանգիրյան Ա.Լ. Մկրտչյան	ՀՀ տեխնածին աղտոտված հողերը և դրանց անվանակարգումը WRB միջազգային դասակարգման համակարգում	150-157
С.З. Кроян Н.И. Самвелян С.Дж. Тамоян	Изменение физико-химического состава горных каштановых почв (Kastanozems) Песпублики Армения под влиянием антропогенного фактора	263-270

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
«ԶԼՄ-ների ինֆորմացիայի դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ» խորագրով /հեղ. Ռ. Վարդանյան/ թեկնածուական ատենախոսության քննարկում:	14.09.2022թ. Աշխարհագրության և ԱԴՄամբիոն
Ա. Մինասյանի և Մ. Հարությունյանի կողմից հեղինակած՝ «Ռազմական աշխարհագրության հիմունքների ներդրումը դպրոցական աշխարհագրության դասընթացում» խորագրով ուսումնաօժանդակ ձեռնարկի քննարկում:	19.12.2022թ. Աշխարհագրության և ԱԴՄամբիոն
ՈւԹՀՎ վերլուծության էությունն ու ուսանողներին այն հասանալի դարձնելու մեխանիզմները/ Ա. Մինասյանի նախաձեռնությամբ	02. 2022թ ԿՔԱ ֆակուլտետի մեթոդխորհուրդ
ՄԿԾ: ,,Աշխարհագրություն-բնագիտություն,, նոր մասնագիտության ՄԿԾ ստեղծման գործընթացի քննարկում:	09.2022-10.2022թ Աշխարհագրության և ԱԴՄամբիոն
,,Դասախոսը ուսանողի աչքերով,, նախագծի քննարկում, վերլուծություն՝ բակալավրիատ, մագիստրատուրա	10.2022-12.2022թ

	Աշխարհագրության և ԱԴՄ ամբիոն
Ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառումը աշխարհագրության եվ երկրաբանության ուսուցման գործընթացում՝ Arloopa համակարգի գործիքակազմով:	01.2022 թ հունվար, ԿՔԱ ֆակուլտետ, Աշխարհագրության և ԱԴՄ ամբիոն

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
-	-	-	-

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ				
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք	
Ամբիոնի բոլոր դասախոսները	ՀՊՄՀ	օգոստոս 2022թ	դրական	
Մ. Մաթոսյան	Ավստրիա ԲՈԿՈՒՆ-ի համալսարան	հունիս 2022թ.	դրական	
Մարինե Ռաֆիկի Մաթոսյան	Հնդկական, ՏՀՏ գերազանցության կենտրոն 16 ժամ	7.11.2022-10.12.2022	հավաստագիր	
Մարիետա Մուրադյան	Հնդկական, ՏՀՏ գերազանցության կենտրոն 16 ժամ	7.11.2022-10.12.2022	հավաստագիր	
Անահիտ Մինասյան	ՀՊՄՀ- ՈԱԱԿ ՄԿԾ բարելավման մեխանիզմներ	05.2022-06.2022	ՄԿԾ-ի չափանիշների ու ԹՀՎ	

			վերլուծությունն եր	
Անահիտ Մինասյան	ՈԱԱԿ փորձագիտական խմբի պատրաստում ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման գործընթացում ներգրավելու նպատակով	07.10.2022-09.102022	Հաշվետվու-թյուն	
Անահիտ Մինասյան	ՈԱԱԿ ՄԿԾ բարելավման մեխանիզմներ	16. 11.2022-18.11.2022	հավաստագիր	
Անահիտ Մինասյան	Նախագծային ուսուցում ,,Ռուզաննա Ստեփանյանի կրթական արհեստանոց,, հասարակական կազմակերպություն	08.2022	հավաստագիր	

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
-	-	-	-

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Ա. Մինասյան	Մ. Հարությունյան	Ռազմական աշխարհագրության հիմունքների ներդրումը դպրոցական աշխարհագրության	Ներկայացված է տպագրության

		դասընթաց: ուսումնաօճանդակ ձեռնարկ	
Ա. Մինասյան	Ա. Մամյան	Մաթեմատիկական խնդիրների կիրառումը աշխարհագրության դասընթացում	Ներկայացված է տպագրության
Ս. Դայան	Մ. Հարությունյան	ՌՈՒԲԵՆ ՕՐԲԵԼՈՒ ՋՐԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Գ Ի Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Պրակ Ա, № 1, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ս. Դայան	Ո. Սարիբեկյան	ՀՀ ՋՐԷԿ-ՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ	ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Գ Ի Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Պրակ Ա, № 1, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
С. Даян	М. Аракелян	ОБРАЗОВАТЕЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ КНИГИ «ЛАНДШАФТЫ И ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ РЕГИОНЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ» ДЛЯ КУРСА «ИСТОРИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ АРМЕНИИ И СОСЕДНИХ СТРАН» НАУКА В ЖИЗНИ ЧЕЛОВЕКА	Научный журнал, Издается 3 раза в год, № 1, Апрель 2022, АВТОНОМНАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ ДОПОЛНИТЕЛЬНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ, «НОВОСИБИРСКАЯ АКАДЕМИЯ ПЕДАГОГИКИ, ПРАКТИЧЕСКОЙ ПСИХОЛОГИИ И СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ»

Ս. ԴԱՅԱՆ	Թ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	«ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ» միջազգային գիտաժողով՝ նվիրված Հյուսիսային համալսարանի հիմնադրման 25-ամյակին
Сима Даян,	Тамара Хачатрян	ПРОБЛЕМЫ ГРАДОСТРОИТЕЛЬНОГО РАЗВИТИЯ РАЗДАНСКОГО УЩЕЛЬЯ,	II INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE LANDSCAPE DIMENSIONS OF SUSTAINABLE DEVELOPMENT SCIENCE – CARTO/GIS – PLANNING – GOVERNANCE,
Даян С.Ц.	Антонян Ш..А.	ГЕОГРАФИЧЕСКОЕ РАСПРОСТРАНЕНИЕ И ПРОБЛЕМЫ ГЕНЕТИЧЕСКИ МОДИФИЦИРОВАННЫХ ОРГАНИЗМОВ	Национальная ассоциация ученых (НАУ)
. Сима Даян	Виктория Князян	ПРИЧИНЫ И БОРЬБА С СОКРАЩЕНИЕМ ЗЕЛЕНЫХ ТЕРРИТОРИЙ ГОРОДА ЕРЕВАНА	, II INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE LANDSCAPE DIMENSIONS OF SUSTAINABLE DEVELOPMENT SCIENCE – CARTO/GIS – PLANNING – GOVERNANCE,

Վ.Հովհաննիսյան	Ա .Ղազարյան	ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱՆ	<<Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում>> ՀՊՄՀ 100ամյակին նվիրված գիտական նստաշրջան 2022թ:ապրիլի 26
Վ. Հովհաննիսյան	ԿՔԱ ֆակ աշխարհագրության բաժնի 3 րդ կուրսի ուսանողներ	,,Երկրաբանության երանգները,, հետազոտական գիտարշավ	2022թ նոյեմբեր՝ ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի հետ համատեղ 'Գիտության միջազգային օրվան ընդառաջ

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
-<Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում>> ՀՊՄՀ 100ամյակին նվիրված գիտական նստաշրջան 2022թ.ապրիլի 26	-<Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում>> ՀՊՄՀ 100ամյակին նվիրված գիտական նստաշրջան 2022թ.ապրիլի 26	ԼՊ մագիստրատուրայի 1 կուրսի՝ Ա .Ղազարյան

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային	-	-	-

Հանրապետական	-	-	-
Տարածաշրջանային	-	-	-

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Հաշվետու տարում ամբիոնը համագործակցել է Երևանի պետական համալսարանի, Շիրակի Մ.Նալբանդյանի անվ. պետական համալսարանի, ,,Դասավանդիր Հայաստան,, կազմակերպության հետ, 2022թ.-ի ապրիլի 9-ին այցելել Արմավիրի մարզ: Ամբիոնը ակտիվ համագործակցում է Ավստրիայի ԲՈԿՈՒ-ի համալսարանի հետ Erasmus+ ծրագրի շրջանակներում: Հաշվետու տարում ամբիոնի մեկ ասպիրանտ (Հայարփի Հակոբյան) մեկ կիսամյակ հետազոտական աշխատանք է իրականացնում նշված համալսարանում: Փորձը ցույց է տալիս, որ այս համալսարանում ուսումնառությունն ու հետազոտական աշխատանքի իրականացումը տալիս է զգալի դրական արդյունք և միջազգային փորձին ծանոթանալու, և նոր կապեր ստեղծելու, և համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու ու համատեղ հոդվածներ հրատարակելու իմաստով:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Պաղեստինի Բիրզեիթ և Եթովպիայի Հարամայայի համալսարանների հետ: Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի Պետական Համալսարանի հետ: ՀՀ ԳԱԱ Հնագիտության ինստիտուտի,ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության կոմիտեի, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի IGS Armenian NAS ի հետ:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Ավստրիայի ԲՈԿՈՒ	+	+	+	+	

Վրաստանի Թբիլիսիի պետական համալսարան	+	+	+	+	
Պաղեստինի Բիրզեիթ համալսարան		+	+	+	
Եթովպիայի Հարամայայի համալսարան		+	+	+	

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
Մ. Մաթոսյան	դասախոս	Ավստրիա ԲՈԿՈՒԻ համալսարան	հունիսի 7-15	դրական
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				
-	-	-	-	-

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Cross Continental University Partnership on Inclusive Regional Development in Conflict-Peace Context /նախապատրաստական/	Ավստրիայի, Եթովպիա, Պաղեստին	2022թ. նոյեմբերից-մայիս	Մ. Մաթոսյան Ա. Խոեցյան

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Erasmus +	Ավստրիա	2022թ.	Մ. Մաթոսյան

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնի դասախոսները մշտապես մասնակցել են մանկավարժական համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածման գործընթացին, բազմաթիվ հանդիպումներ են ունեցել հանրապետության բազմաթիվ հանրակրթական դպրոցների և աշակերտների հետ իրականացրել խորհրդատվական ծառայություններ տարբեր միջոցներով օժանդակել հանրակրթական հաստատություններին: Պարբերաբար կազմակերպվել են բաց դռների օրեր: ,,Աշխարհագրության ուսուցիչների և ուսանողների մեթոդմիավորում,, ՖԲ սոցիալական հարթակում, որն ունի շուրջ 3200 հետևորդ, իրականացվել է “Աշխարհագրության հեղինակային դասագիրք,, նախագծի ներկայացում, քննարկում, մրցույթ և մրցանակաբաշխություն, ակնկալվող արդյունքների վերլուծություն: Հանրակրթական դպրոցների հետ կապերի ձևավորման, համագործակցության շրջանակներում իրականացվեց, ամբիոնի, դուրս գրված քարտեզների նվիրում՝ Մանկավարժական համալասարանի հիմնական դպրոցին: Հաշվետու ժամանակահատվածում Վ.Հովհաննիսյանի ,,,Ավելի մոտ դպրոցին,, նախագծի շրջանակներում ամբիոնի ՊԴԱ կազմը համագործակցել է Երևանի և ՀՀ մարզերի կրթօջախների հետ, մշակելով քարոզարշավի նոր ձևաչափ, որում ներգրավվել են մասնակից դպրոցների մանկավարժները, ծնողները և աշակերտները, որին էապես նպաստել են բուհի աջակցությամբ կազմակերպված դպրոցական զբոսաշրջային տուրերը, բաց դասերը և լուսաբանել դրանք հանրության շրջանում. /Երևանի Խ:Աբովյանի անվան հ 2 հիմնական դպրոց, Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան 147 հիմնական դպրոց, Ավ.Իսահակյանի անվ 16 ավագ դպրոց, Մոնթե Մելքոնյանի անվան 11 հիմնական դպրոց, Լեոնիդ Ազգալդյանի անվան դպրոց, Գլոբալ Բրիջ կրթահամալիր, Երևանի Ն.Գոգոլի անվան 35 հիմնական դպրոց/ և այլն:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը

Ուսումնական Ուսումնական	Ն. Սամվելյան Ս.Դայան	տարբեր դպրոցների աշակերտների այց Աշխարհագրության գիտակրթական լաբորատորիա Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջի ուսանողների այցը ՀՊՄՀ , ապրիլ	մարտ, ապրիլ Ապրիլ
Ուսումնական		Կազմակերպվել է նախագիծ Կարեն Դեմիրճյան թանգարանի հետ,նվիրված Կարեն Դեմիրճյանի ծննդյան 90 և ՀՊՄՀ 100-ամյակներին: Ջեկուզումով / «Որոտան-Արփա-Սևան ջրատարի տնտեսական նշանակությունը»/ հանդես է եկել աշխարհագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Անի Ասատրյանը:	Ապրիլ
Ուսումնական		Այցեր են կազմակերպվել նաև արտադրական ձեռնարկություններ/ Սոլարա և սոլարանով արևային վահանակներ արտադրող/	
Ուսումնական	Հովհաննիսյան Վ.	Աշխարհագրության և բնագիտության դաս ԱԳԿ լաբորատորիայում, այցելություն ՀՊՄՀ թանգարան ՀՀ ավագ և հիմնական դպրոցների աշակերտների հետ	2022 թ փետրվար-նոյեմբեր
Ուսումնական	Հովհաննիսյան Վ.	Աշխարհագրության բաց դաս Երևանի Ավ. Իսահակյանի անվան ավագ դպրոցի բնագիտության կրթական լաբորատորիայում	2022 թ. ապրիլ
Ուսումնական	Հովհաննիսյան Վ:	Բնապահպանական դաս Գլոբա; Բրիջ կրթահամալիրի 6 րդ դասարանի աշակերտների հետ՝ ՀՀ բնության թանգարանում ,,Ավելի մոտ դպրոցին,, նախագիծ	2023 հունվար
	Հովհաննիսյան Վ:	Իրազեկման դաս՝ ՀՀ ԱԻՆ սեյսմիկ ծառայության Գառնու երկրաֆիզիկական սեյսմիկ դիտարանում-,Ավելի մոտ դպրոցին,, նախագիծ	2023թ հունվար

Քարոզարշավներ	Հովհաննիսյան Վ.	Երևանի և Կոտայքի մարզի հիմնական և ավագ 7 դպրոցներում	2022թ մարտից - նոյեմբեր
	Հովհաննիսյան Վ.	Համակցված դաս՝գործնական աշխատանք,ընդհանուր երկրագիտության կապը քիմիայի հետ՝ԿՔԱֆակուլտետի քիմիայի լաբորատորիայում: Ակնկալվող արդյունքների վերլուծություն:	
	Հովհաննիսյան Վ.	Դասեր բնության գրկում՝ Կոտայքի,Արագածոտնի և Արարատի մարզերում, էլեկտրոնային գործիքների և համապատասխան քարտեզների օգնությամբ, ,Ավելի մոտ դպրոցին,, նախագիծ, մեթոդական ցուցումներ-	2022 թ մարտ-նոյեմբեր
	Հովհաննիսյան Վ	Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոցի աշակերտների հետ Գործնական դաս բնության գրկում՝ Քարերի սիմֆոնիայում	2023 հունվար 25
Բնապահպանական-կրթադաստիարակչական	Մինասյան Ա. Հովհաննիսյան Վ. Խաչատրյան Ս. ուսանողներ, աշակերտներ	Երևանյան լիճ: Տարածքի մաքրում, գործնական աշխատանք տեղանքում:	սեպտեմբեր 2022թ.
Քարոզարշավ	Մինասյան Ա. Սամվելյան Ն.	Վաղարշապատի թիվ 2 դպրոց	մայիս 2022թ.
Համագործակցություն ,,Դասավանդիր Հայաստան,, կազմակերպության հետ:	Մինասյան Ա.	Արմավիրի մարզ	Ապրիլ 2022
	Վ. Հովհաննիսյան	Երևան-Կոտայքի մարզ /ՀՀ ԱԻՆ ծառայության Գառնու սեյսմիկ դիտարան, Գառնի քարերի սիմֆոնիա բնության հուշարձան/-դաս բնության	2022 ապրիլ

		գրկում- Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոցի աշակերտների և ԿՔԱ ֆակ ուսանողների հետ ,Ավելի մոտ դպրոցին,, նախագիծմատեղ	
Դաստիարակչական	Վ.Հովհաննիսյան	Ռազմահայրենասիրական միջոցառում Երևանի Խ.Աբովյանի անվան 2 հիմնական դպրոցում	2022թ ապրիլ
Դաստիարակչական	Վ Հովհաննիսյան	Հայրենագիտական, Բնապահպանական տուրեր ՀՀ մարզերում Երկրաշարժի զոհերի Հիշատակի օր՝ Շիրակի մարզ, Գյումրի -,,Ավելի մոտ դպրոցին,, նախագիծ	2022 2022 դեկտեմբերի 7
	Ս.Դայան Ս.Դայան	«Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն » դասընթացի սահմաններում այց «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարան: Կազմակերպվել է ՀՊՄՀ 100-ամյակի կապակցությամբ այց Խ.Աբովյան տուն-թանգարան, աշխարհագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողների հետ:	Հոկտեմբեր Հոկտեմբեր

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Իրազեկման և մասնագիտության հանրայնացման աշխատանքներ սոց.հարթակում՝ ,,Աշխարհագրության ուսուցիչների և	Մինասյան Ա.	Աշխարհագրական տեղեկատվության տրամադրում, մանկավարժական գործունեության և մեթոդական մշակումների	2015-2022թթ.

ուսանողների մեթոդմիավորում,, խմբի էջում:		քննարկում, հանրության հետ մշտական կապի ապահովում	
Հեռուստատեսային ելույթ	Ա. Աջամօղլյան	Հաջողության բանաձև	2022թ. հուլիս
Հեռուստատեսային ելույթ	Ս. Դայան	Հաջողության բանաձև	2022թ. հոկտեմբեր

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնն ունի որակի ապահովման (պատասխանատու Ա.Մինասյան) մշակված համակարգ: Յուրաքանչյուր տարվա սկզբին և ավարտին ամբիոնի կողմից իրականացվում են ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիտարկում՝ ապահովելով ամբիոնի ուսումնական պլանների և հանրակրթական դպրոցների առարկայական համապատասխանելիություն: Իրականացվում է մասնագիտությունների ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, առանձնացնելով հատկապես այն մոտեցումները, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը: Ներկա փուլում աշխատանքներ են տարվում առարկայական ծրագրերն ու թեմատիկ տրոհումները զարգացնել առաջադրանքահեն ուսուցման սկզբունքով: Իրականացվել է ուսանողի գիտելիքների ինքնավերահսկման համակարգի մշակված մոդելի ներկայացում, թեստային աշխատանքների ինքնաստուգման և ինքնագնահատման համակարգի ներկայացում և միջանկյալ գրավոր աշխատանքի նոր ձևաչափի քննարկում: Ներկայացվել և քննարկվել է ,Աշխարհագրական նկար,, միջոցառման գաղափարը, ,,Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա ,, առարկայից նոր հարցաշարի ներդրման հարցը:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ամբիոնը ակտիվ համագործակցում է բուհի այլ ամբիոնների հետ: Օրինակ՝ հաշվետու տարում կազմակեպվել է միջամբիոնային միջոցառում՝ Աշխարհագրության և Կենսաբանության ամբիոնների համատեղ մշակված նախագծով և քաղաքապետարանի աջակցությամբ Երևանյան լիճ, -ի տարածքում “100 դասախոս և 100 ուսանող բուհի 100-ամյակին ընդառաջ” խորագրով: Միջֆակուլտետային/միջամբիոնային միջոցառում ,,Աշխարհագրություն,,-,,Կերպարվեստ,, մասնագիտությունների ուսանողների հանդիպում, ցուցահանդեսի դիտում աշխարհագրության տեսանկյունից:

Ամբիոնը մշտապես կապի մեջ է նաև շրջանավարտ ուսուցիչների հետ, ինչի արդյունքում վեր են հանվում տարբեր կրթական խնդիրներ և քննարկվում դրանց լուծման ուղիները:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
ՀՊՄՀ «Կերպարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի փորձնական գնահատում	Աշխարհագրության և ԱԴՄ ամբիոնի ներկայացուցիչ, փորձագետ՝ Անահիտ Մինասյան	Առաջարկվել են ՄԿԾ կատարելագործման ուղղություններ, վերանայվել են աշխարհագրության բաժնի ՄԿԾ-ները:
Ուսուցիչների վերապատրաստման ծրագրի 08.2022	Անահիտ Մինասյան	որակավորման հավաստագիր
Մանկավարժահոգեբանական եվ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման ծրագրի 10.2022թ-01.2023թ	Անահիտ Մինասյան	որակավորման հավաստագիր
Դասալսումներ	Ներսես Սամվելյան	քննարկումներ և ցուցումներ
Մշտադիտարկումներ Google Classroom համակարգում	Անահիտ Մինասյան Գայանե Բարսեղյան	ցուցումներ
“Դասախոսը ուսանողի աչքերով,, նախագծի քննարկում, վերլուծություն՝ բակալավրիատ, մագիստրատուրա:	Անահիտ Մինասյան	հաշվետվություն, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերանայում
,,Աշխարհագրություն-բնագիտություն,, նոր մասնագիտության ՄԿԾ ստեղծման գործընթաց ըստ մասնագիտական հանձնախմբերի:	Ֆիզաշխարհագրական հանձնախումբ՝ ղեկ. Մինասյան Ա. Սամվլյան Ն.	Մասնագիտական կրթական ծրագիր

	Կրոյան Ս. Հովհաննիսյան Վ. Աջամօղլյան Ա. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության հանձախումբ՝ ղեկ. Մինասյան Ա. Մաթոսյան Մ. Մուրադյան Մ. Դայան Ս.	

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1.Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական անհրաժեշտ որակի առկայություն,	1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության օտար լեզվի իմացության սահմանափակությունը:
2.Ամբիոնի միջազգային կապեր/ուսանողների և դասախոսների փոխանակում	2.Ուսանողների օտար լեզվով լրացուցիչ գրականության սակավ ընթերցանությունը:
3. Ամբիոն-դպրոց սերտ կապ	3.Դաշտային հետազոտությունների հնարավորության բացակայություն
	. 4.Ուսումնական-դաշտային պրակտիկայի բացակայություն, ինչը նվազեցնում է մասնագիտության գրավչությունը:
5. Հոդվածների տպագրությունը՝ միջազգային գիտական ժողովածուներում	5.կրթության որակի վերաբերյալ ուսանողների արձագանքները չեն վերլուծվում, քննարկումները կրում են մասնավոր բնույթ, որոնցից հետո
6.Գիտական հետազոտությունների ու մեթոդադական մշակումների արդյունքները ներմուծում կրթական գործընթաց	համապատասխան փոփոխություններ չեն իրականացվում:
Հնարավորություններ	**Վտանգներ**
1.Միջազգային համագործակցության ընդլայնում	1.Հանրակրթական դպրոցում գործածվող համակարգչային ծրագրերի

	անհասանելիություն/էլեկտրոնային մատյաններ և այլ ռեսուրսներ/:
	2.Լսարանների թերի կահավորվածությունը տեխնիկական միջոցներով:
3.Միջֆակուլտետային և միջամբիոնային համագործակցություն	3.Դասախոսների վերապետրաստումների ցածր հաճախականություն
5. Գործատուների ներգրավում ավարտական քննությունների գործընթացին:	

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Հաշվետու տարում պատմության և հասարակագիտության ֆակուլտետի գործունեությունն իրականացվել է ֆակուլտետի 2022-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանին համապատասխան: Կրթության, հումանիտար և հայագիտական գիտությունների ոլորտներում ՀՀ ազգային և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող, սոցիալական պատասխանատվությամբ, ազգային, ժողովրդավարական, հումանիստական արժեքներով առաջնորդվող և դրանք տարածող մասնագետ-մանկավարժների պատրաստումը բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով՝ ստեղծելով ուսանողակենտրոն միջավայր, նախագծերի և իրական դեպքերի շուրջ մշակված դասընթացների իրականացմամբ՝ ապահովվել են ճկուն կրթական ծրագրեր: Ֆակուլտետի ուսանողները, առնչվելով ազգային և միջազգային փորձին և իրականացնելով հետազոտություններ կրթության, հասարակագիտության, պատմության ոլորտներում, կարող են դառնալ համապատասխան ոլորտների մասնագետներ:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
Ֆակուլտետի մեջ ներառված են երեք մասնագիտական ամբիոններ՝ Հայոց պատմության, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի, Հասարակագիտության: Ընթացիկ տարում ֆակուլտետում չեն կատարվել կառուցվածքային փոփոխություններ: Հաշվետու տարում ֆակուլտետի կառավարումն իրականացվել է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և ֆակուլտետի կանոնադրության համաձայն: Հաշվետու տարում ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին համաձայն տեղի է ունեցել 9 նիստ, որի ընթացքում քննարկվել են օրակարգային և ընթացիկ հարցեր, կայացվել են համապատասխան որոշումներ /Տե՛ս ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ/: Ֆակուլտետի խորհուրդը ընթացիկ տարում կազմված է եղել 29 անդամներից, որտեղ բացի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ընդգրկված են եղել 8

ուսանողներ, որոնք կազմում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 27,5 տոկոսը: Խորհրդի կազմում ընդգրկված են նաև ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները: Սրանով ֆակուլտետի ուսանողությանը հնարավորություն է ընձեռվել մասնակցելու ֆակուլտետի կառավարման և որոշումների կայացման աշխատանքներին:

Ֆակուլտետի խորհրդի կազմում ընդգրկված են նաև գործատուների ներկայացուցիչներ՝ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Գ. Արշակյանը և Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան դպրոցի տնօրեն Անուշ Նավասարդյանը:

Ֆակուլտետի ամբիոնների ներկայացուցիչների համամասնական ներկայացվածությունը ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին հնարավորություն է տվել դասախոսական կազմին մասնակցել ֆակուլտետի որոշումների կայացման գործընթացին:

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է նաև ընդլայնված կազմով խորհրդի նիստ, որին մասնակցելու հրավեր են ստացել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների մեծ մասը:

Պարբերաբար կազմակերպվել են նաև դեկանատի նիստեր, որտեղ քննարկվել են ընթացիկ հարցեր և կայացվել որոշումներ:

Հաշվետու տարում ֆակուլտետում աշխատանքների պլանավորումն իրականացվել է ուսումնական պլանների, ֆակուլտետի խորհրդի աշխատանքային ծրագրի և ֆակուլտետի ռազմավարության հիման վրա նախատեսված առաջնահերթություններով:

Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների կողմից կատարվել են ընթացիկ տարվա գործունեության, ուսումնական գործընթացի մշտադիտարկում:

Ամբիոնների վարիչների կողմից նախատեսված ծանրաբեռնվածության համապատասխան իրականացվել են դասալսումներ: Արձանագրվել են առկա խնդիրը, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, տրվել են առանձին հանձնարարականներ:

Ամբիոնների կողմից իրականացվել է նաև մշտադիտարկում Google classroom հարթակում:

Ֆակուլտետի խորհրդում պարբերաբար անդրադարձ է կատարվել ամբիոնների գործավարության դրվածքին և ֆակուլտետում իրականացվող փաստաթղթաշրջանառությանը:

Ֆակուլտետում որակի բարձրացման, ինչպես նաև հնարավոր խնդիրները վեր հանելու, ուսանողների գոհունակության աստիճանի դասավանդվող դասընթացներից որոշելու նպատակով անցկացվել են "Դասախոսն ուսանողի աչքերով" հարցումներ /Հարցման արդյունքները տե՛ս ֆակուլտետի որակի պատասխանատուի համապատասխան վերլուծություններում/:

Առաջիկա ուսումնական տարում նախատեսվում է գործատուների շրջանում իրականացնել հարցումներ:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման աշխատանքներ: Դեկանատի ներկայացուցիչների և ամբիոնի վարիչների մասնակցությամբ ստեղծված հանձնաժողովը բարելավել է "Պատմություն" և "Հասարակագիտություն" մասնագիտությունների բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ները: Դրանք ամբողջությամբ համապատասխանեցվել և համահունչ են դարձվել մասնագիտական ակնկալվող որակների և Որակավորումների ազգային շրջանակին: Բարելավել և փոփոխվել են նաև ֆակուլտետում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերը, տրոհումները և ուսումնամեթոդական փաթեթները: Ֆակուլտետի ամբիոններում քննարկվել և վերլուծվել են ուսումնառության մեթոդները: Ամբիոններին առաջարկվել է քննարկել ու հարկ եղած դեպքում վերանայել մասնագիտական առարկաների ծրագրերը՝ համապատասխանեցնելով կրթական ծրագրերի վերջնարդյունքներին: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում ուսումնական պլանների կատարելագործման ուղղությամբ:
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ֆակուլտետում գործում է ուսանողների գնահատման 100 միավորանոց համակարգը: Ֆակուլտետում և մասնագիտական ամբիոններում վերլուծվել է սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները: Յուրաքանչյուր առարկայի գնահատման կզբունքները արտացոլված են առարկայական նկարագրերում, որը նպաստում է ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և ակադեմիական ազնվության ապահովմանը: Ուսանողության շրջանում գրագողության հնարավոր դեպքերի կանխարգելման և ակադեմիական ազնվությունը ապահովելու նպատակով բակալավրիատի և մագիստրատուրայի

ավարտական կուրսերի ուսանողներից պահանջվում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների էլեկտրոնային տարբերակները: Ստեղծված բազայի միջոցով հնարավորություն է ստեղծվում հնրարավորինս կանխել նույնաբովանդակ թեմաների շրջանառությունները ուսանողների շրջանում: Ֆակուլտետի խորհրդի որոշմամաբ արգելվում է նույն թեմայով ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների հանձնարարումը առնվազն երեք տարվա ընթացքում:
Վերլուծելով նախորդ տարիների արդյունքները գտնում ենք, որ ակադեմիական ազնվության ապահովման և գրագողության հնարավոր դեպքերի կանխարգելման նպատակով կարիք կա համակարգային մոտեցումների մշակման և "անտիպլագիատ" ծրագրերի ներդրման, որը հնարավորություն կտա ավտոմատ կերպով կանխել գրագողության դեպքերը: Որոշակի խնդիրներ է առաջացնում նաև գրավոր միջանկյալների անցկացումը, որոնց ընթացքում արձանագրվել են արտագրության և ուսանողների կողմից տարբեր տեխնիկական միջոցների օգտագործման դեպքեր:

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Ֆակուլտետը հստակ աշխատանքներ է իրականացնում ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Հաշվետու տարում ֆակուլտետը ընդլայնել է միջազգային համագործակցության շրջանակը: Արդյունավետորեն շարունակել է համագործակցությունը Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի, Մեծ Բրիտանիայի Կիլի, Իսպանիայի Կորունայի, Բեյրութի Հայկազյան համալսարանների հետ: Նոր կապեր են հաստատվել Ռուսաստանի Ուրալի դաշնային համալսարանի, Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի, Հյուսիս-օսեթական պետական համալսարանի, Սլովենիայի Մարիբորի համալսարանի հետ:
Հաշվետու տարում տեղի են ունեցել մի շարք այցեր նշված համալսարանների ներկայացուցիչների կողմից, կազմակերպվել են համատեղ միջոցառումներ: Ֆակուլտետի մի շարք դասախոսներ և ուսանողներ տարբեր գիտական, կրթական, ուսանողական ծրագրերի շրջանակներում այցելել են նշված համալսարաններ:

Ֆակուլտետի 5 ուսանող Էրազմուս պլյուս կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ ուսանել է Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում: Նույն համալսարանում ակադեմիական շարժունության շրջանակներում երկու շաբաթ դասավանդել են Հայոց պատմության ամբիոնի 3 դասախոսներ՝ Է. Հովհաննիսյան, Ս. Պողոսյան, Խ. Ստեփանյան:

Հաշվետու տարում աշխատանքներ են իրականացվել ֆակուլտետի միջազգային կապերի ընդլայնման ուղղությամբ:

Ֆակուլտետի գործընկեր համալսարանների հետ՝ Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարան, ՌԴ Ուրալի դաշնային համալսարան, նախատեսվել են մի շարք նոր ծարգրերի, գիտաժողովների և փոխայցերի կազմակերպում: Ուրալի դաշնային համալսարանի հետ 2023թ.

հունվար ամսին նախատեսվում է իրականացնել համատեղ միջազգային գիտագործնական սեմինար «Глобальная история: языки культур и проблемы переводимости».

2023թ. նախատեսվում է նաև ընդլայնել համագործակցությունը մի շարք եվրոպական համալսարանների հետ Էրազմուս պլյուս ծրագրի շրջանակներում: Այդ շրջանակում արդեն իսկ համագործակցության լավագույն ավանդույթներ ունեցող Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ պատրաստվել է նոր հայտ Էրազմուս պլյուս ծրագրին դիմելու և ուսանողներ ու դասախոսների փոխանակման համար նոր կրթաթոշակներ ձեռք բերելու համար: Նոր հայտ է պատրաստվել նաև նոր գործընկեր համալսարանների հետ, մասնավորապես Իսպանիայի Լա Կորունայի համալսարանի, Սլովենիայի Մարիբորի համալսարանի, Հունաստանի ազգային համալսարանի, Լեհաստանի Սեդլցի համալսարանի հետ: Ծրագրերի հաջող արդյունքի դեպքում հաջորդ ուսումնական տարում ֆակուլտետու նկատելիորեն կընդլային միջազգային համագործակցությունը և փոխանակման ծրագրերը:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	135
	հեռակա	127
Մագիստրոսի	առկա	43
	հեռակա	22
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան	1
2	Հյուսիսային համալսարան	1

3		
4		
5		

Ուսանողների ներհոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Երևանի պետական համալսարան	1
2	ՌԴ Կ. Ուշինսկու անվան Յարոսլավլի մանկավարժական համալսարան	1
3	Արցախի պետական համալսարան	1
4	ՀՀ Ոստիկանության ակադեմիա	2
5		

Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը		25
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը		26

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

2022 թվականի ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարվել են ուսանողների հավաքագրման և ֆակուլտետի մասնագիտությունների և կրթական ծրագրերի վերաբերյալ իրազեկման ուղղությամբ հետևյալ աշխատանքները.

1. Կազմակերպվել են նաև իրազեկման այցեր երևանյան և մարզային թվով 8 դպրոցներ:
2. Բաց դռների օրվա շրջանակներում ֆակուլտետ են այցելել Երևանի և մարզերի 12 դպրոցների աշակերտներ, ովքեր ծանոթացել են մեր համալսարանում ուսման հնարավորություններին, հնարավորություն են ունեցել մասնակցելու դասապրոցեսին, վերջիններիս համար կազմակերպվել են գիտահանրամատչելի դասախոսություններ: Աշակերտները այցելել են նաև համալսարանի թանգարան և գրադարան:
3. Ակտիվացվել են աշխատանքները համալսարանի հենակետային վարժարանի պատմության հոսքի աշակերտների հետ, վերջիններիս համար պարբերաբար կազմակերպվել են դասախոսություններ, այց թանգարաններ: Հենակետային վարժարանում իր գործունեությունն է շարունակել նաև Պատանի պատմաբանների ակումբը: Ակումբի գործունեությունը նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցում և կարևոր գործիք է ֆակուլտետի մասնագիտացումների նկատմամբ հետաքրքրության մեծացման ուղղությամբ:

2023 թ. համալրման աշխատանքներն ավելի արդյունավետ և թիրախային դարձնելու նպատակով կատարվել է ֆակուլտետի երկու մասնագիտություններում՝ Պատմություն և Հասարակագիտություն, 1-ին և 2-րդ կուրսերում սովորող ուսանողական կազմի բնակության վայրերի վերաբերյալ վերլուծություն հետագայում այցերը ավելի նպատակային դարձնելու նպատակով:

Հետազոտության արդյունքները.

N	Մարզ	Վարչական շրջան/համայնք	Տոկոս %
Պատմություն I 20 ուսանող			
1	Արագածոտնի մարզ	Ծաղկահովիտի շրջան, գ. Գեղադիր	11,11
2		Աշտարակի շրջան, գ. Լեռնար	
3	Կոտայքի մարզ	Ք. Չարենցավան	33,33
4		Ք. Եղվարդ	
5		Ք. Աբովյան	
6		Նոր Հաճըն համայնք, գ. Նոր Գեղի	
7		Նաիրի համայնք, գ. Քասախ	
8		Չարենցավան համայնք, գ. Ալափարս	
9	Վայոց ձորի մարզ	Ք. Եղեգնաձոր	11,11
10		Ք. Ջերմուկ	
11	Գեղարքունիքի մարզ	Սևանի շրջան, գ. Ծաղկունք	11,11
12		Մարտունու շրջան, գ. Վերին Գետաշեն	

13	Արարատի մարզ	գ. Փոքր Վեդի	11,11
14		Մասիսի շրջան, գ. Նոր Խարբերդ	
15	Շիրակի մարզ	Անիի շրջան, գ. Գուսանագյուղ	11,11
16		Արթիկի շրջան, գ. Լեռնակերս	
17	Ք. Երևան	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, ՀԱԹ	5,56
18	Արցախ	մարտակերտի շրջան, գ. Կոճողոտ	5,56
	Հասարակագիտություն I 16 ուսանող		
1	Կոտայքի մարզ	Ք. Հրազդան	33,33
2		Ք. Հրազդան	
3	Ք. Երևան	-	33,33
4		-	
5	Գեղարքունիքի մարզ	Ք. Մարտունի	16,67
6	Սյունիքի մարզ	Ք. Մեղրի	16,67
	Պատմություն II 37 ուսանող		
1		Թալինի շրջան, գ.Արագածավան	

2	Արագածոտնի մարզ	Արագածոտնի մարզ,ք.Աշտարակ	10,81	
3		Արագածոտնի մարզ, ք. Թալին		
4		Արագածոտնի մարզ, գ. Հնաբերդ		
5	Լոռու մարզ	ք.Ալավերդի	10,81	
6		Ալավերդի համայնք		
7		ք. Վանաձոր		
8		ք. Ստեփանավան		
9	Կոտայքի մարզ	ք. Աբովյան	18,92	
10		ք. Աբովյան		
11		գ. Կապուտան		
12		ք. Հրազդան		
13		գ. Բուժական		
14		Ծաղկաձոր համայնք, գ. Մեղրաձոր		
15		ք. Աբովյան		
16		գ. Նոր կյանք		

17	Արարատի մարզ	գ. Վերին Արտաշատ	16,22
18		գ. Գեղանիստ	
19		գ. Սուրենավան	
20		գ.Արարատ	
21		գ. Նորամարգ	
22	Արմավիրի մարզ	գ. Դողս	13,51
23		գ. Քարակերտ	
24		գ.Արաքս	
25		գ. Արշալույս	
26		գ.Արաքս	
27	Շիրակի մարզ	գ. Աշոցք	2,70
28	ք. Երևան	Աջափնյակ	10,81
29		Նոր-Նորք 1 զանգված	
30		Շենգավիթ	
31		-	
32	Սյունիքի մարզ	ք. Սիսիան	5,41
33		Սյունիք համայնք	

34	Գեղարքունիքի մարզ	գ. Գեղամավան	10,81
35		գ. Գեղահովիտ/Լեռնակերտ	
36		Ծովագյուղ համայնք	
37		գ. Դդմաշեն	
Հասարակագիտություն II 5 ուսանող			
1	Ք. Երևան	-	60
2		-	
3		-	
4	Կոտայքի մարզ	Ք. Աբովյան	20
5	Մոսկվա	Օրեխովո-Զուեվո շրջան, գ. Մալայա Դուբնա	20

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Ֆակուլտետից ուսանողները հեռացվել կամ ազատվել են հետևյալ պատճառներով.

1. Ուսման վարձը չվճարելու
2. Անբավարար առաջադիմության
3. Սեփական դիմումի համաձայն
4. Որոշ ուսանողներ էլ ֆակուլտետից ազատվել են բանակ զորակոչվելու պատճառով

Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		12
Մագիստրոս		7
Ընդհանուր		19
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1	**«Հայաստան. դարերի խորքից դեպի ապագա»** հանրապետական ուսանողական գիտաժողով	16
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	Մուխսյան Ռ. , The Reasons and Process of the Armenian Genocide of 1915-1916, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, 2022, թիվ 1, էջ 71-84:	1
2	Mukhsyan R., The Karabakh conflict 1988-1991: Origins and Processes, Myths and identities, Budapest, 2022	1
3	Mukhsyan R., The process of declaring the Nagorno-Karabakh Republic, Сборник материалов VI Международном Молодежном Конвента УрФУ(г. Екатеринбург)	1

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ֆակուլտետի երեք ամբիոններում աշխատում են 35 մասնագետներ, որից համատեղության կարգով՝ 7 դասախոս: Ֆակուլտետի վարչական աշխատանքները համակարգվում են դեկանատի կողմից: Ֆակուլտետն ընդհանուր առմամբ ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու ուղղությամբ: Ֆակուլտետը հիմնականում համալրված է անհարժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով, ովքեր ապահովում են կրթական ծրագրերով

նախատեսված նպատակների իրականացմանն ու կրթական վերջնաարդյունքների ձևավորմանը: Ֆակուլտետի երեք ամբիոնների դասախոսների մի մասը դասավանդում են նաև համալսարանի այլ ֆակուլտետներում:

Ֆակուլտետում աշխատող 35 դասախոսների մասնագիտական դասիչերը

Է.00.01-13 դասախոս

Է.00.03-1 դասախոս

Է.00.04- 1 դասախոս

Է.00.02-6 դասախոս

ԺԳ.00.02-1 դասախոս

ԺԳ.00.01- 1 դասախոս

ԺԲ. 00.04- 1 դասախոս

ԺԲ.00.01- 3 դասախոս

Թ. 00.02- 1 դասախոս

Ի.Գ 00.02- 2 դասախոս

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների բարձրացման նպատակով.

2022 թվականի ապրիլի 12-ից մայիսի 5-ը կազմակերպվել է մանկավարժահոգեբանական վերապարտարստում: Շուրջ 17 դասախոսներ ստացել են համապատասխան վկայականներ:

2022 թ. հոկտեմբերի 24-28-ը Ռուսաստանի Հյուսիս-կովկասյան դաշնային համալսարանի մասնագետների կողմից անցկացվել է «Современные подходы к преподаванию правоведения» խորագիրը կրող վերապատրաստման ծրագիրը ֆակուլտետի մի շարք դասախոսների համար:

Պրոֆեսորադասախոսական կազմը ըստ ամբիոնների.

Հայոց պատմության ամբիոն

Աշխատում է 14 դասախոս, որից 2-ը համատեղող

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս -1

պրոֆեսոր – 6

դոկտոր-4

գիտությունների թեկնածու-7

դոցենտ – 6

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Աշխատում է 10 դասախոս, որից 4-ը համատեղող

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս- 1

պրոֆեսոր- 3

դոկտոր-3

գիտությունների թեկնածու-7

դոցենտ-6

Հասարակագիտության ամբիոն

Աշխատում է 11 դասախոս, որից 3-ը համատեղող

Պրոֆեսոր – 2

դոկտոր-2

գիտությունների թեկնածու – 6

դոցենտ – 5

դասախոս – 4

Պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունը ըստ մասնագիտությունների.

Հայոց պատմության ամբիոն

Ֆակուլտետում դասավանդում է 12 դասախոս, այլ ֆակուլտետներում՝ 6 դասախոս:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Ֆակուլտետում դասավանդում է 10 դասախոս, այլ ֆակուլտետներում՝ 2 դասախոս:

Հասարակագիտության ամբիոն

Ֆակուլտետում դասավանդում է 10 դասախոս, այլ ֆակուլտետներում՝ 7 դասախոս:

Ֆակուլտետի երեք ամբիոններում աշխատում է դասավանդման մեթոդիկայի ուղղությամբ պաշտպանած ընդամենը մեկ դասախոս: Սա դիտարկում ենք որպես խնդիր և տարվում են աշխատանքներ վիճակի բարելավման ուղղությամբ: 2023 թ. նախատեսվում է ամբիոններում դասավանդման մեթոդիկայի գծով հաստատել ատենախոսության երկու թեմաներ՝ մեկը հասարակագիտության դասավանդման, մյուսը պատմության դասավանդման գծով:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը: Հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում բավական արդյունավետ աշխատանքներ են իրականացվել: Ֆակուլտետում ձևավորված երեք թեմատիկ գիտական խմբեր նախորդ տարիներին հաղթել էին Գիտության պետական կոմիտեի ներկայացված մրցույթներում և դեռևս իրականացնում են գիտահետազոտական արդյունավետ աշխատանքներ: Հաշվետու տարում ֆակուլտետի ռազմավարության մեջ առաջնահերթություններից է դարձել միջազգային բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում տպագրվելը: Խնդիր է դրվել օտարալեզու հանրությանը ծանոթացնել Հայաստանին առնչվող հիմնախնդիրներին, ինչպես նաև բարձր վարկանիշավորում ունեցող ամսագրերում տպագրության շնորհիվ նպաստել բուհի միջազգայնացման գործընթացներին: Բարձր վարկանիշավորում ունեցող ամսագրերում տպագրությունը բավական արդիական, սակայն բարդ խնդիր է: Անհրաժեշտ է հաղթահարել լեզվական և ֆինանսական մի շարք խնդիրներ: Սակայն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը բավական ակտիվորեն սկսել է հոդվածներ ուղարկել այդ ամսագրերին: Այս տարի դեռևս տպագրվել է 7 հոդված, սակայն հաջորդ տարի այդ թիվը կարծում ենք կավելանա: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ընդգրկվել է ORCID համակարգում, որը օգնում է ավելի ճանաչելի դառնալ միջազգային գիտական շրջանակների համար: Ֆակուլտետը հայաստանյան չորս համալսարանների և Սլովակիայի Մարիբորի համալսարանի հետ մասնակցում է PROMOEU ծրագրին: Ֆակուլտետը ակտիվ գործունեություն է ծավալել միջազգային և հանրապետական գիտաժողովներ ու սեմինար-քննարկումներ կազմակերպելու ուղղությամբ: **2022 թ. մայիսի 10-ին** ֆակուլտետի ՈՒԳԸ և Շենգավիթի պատմահնագիտական արգելոց թանգարանը կազմակերպել են ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված **«Հայաստան. դարերի խորքից դեպի ապագա»** հանրապետական ուսանողական գիտաժողովը: https://aspu.am/hy/content/hanrapetakan_usanoghakan_gitazhoghov_hpmh-um/#sthash.6FSTYerw.dpbs

Ուրալի (Եկատերինբուրգի) դաշնային համալսարանի հետ **մայիսի 16-17-ին** Եկատերինբուրգում կազմակերպվել է հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված համատեղ **գիտական սեմինար**:

2022 թ. հունիսի 29-30-ին՝ «Հայության տեղաշարժերը և հասարակական-քաղաքական փոխակերպումները 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին» միջազգային գիտաժողով է կազմակերպվել Բեյրութի Հայկազյան համալսարանի հետ: https://aspu.am/hy/content/onenq_gitakan_kapitaly_qaghaqakani_veratselu_khndir/#sthash.6h2kTsNS.I1ulr72I.dpbs

2022 թ. սեպտեմբերի 8-9-ը՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սիսից մինչև Անթիլիաս» հանրապետական գիտաժողով: https://aspu.am/website/images/website/new_folder/new_folder/%D4%B3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB%20%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80.pdf

2022 թ. սեպտեմբերի 14-15 Հայաստանի, Լիբանանի, Հունաստանի մի շարք բուհերի հետ կազմակերպվել է **«Զմյուռնիան՝ Հայոց և Հունաց ցեղասպանությունների ուղեծիրում. բնաջնջում, հրկիզում և տարագրություն»** միջազգային գիտաժողովը: http://www.genocide-museum.am/arm/02.03.22.Conf.php

2022 թ. հոկտեմբերի 13-14-ը՝ Իսպանիայի Կորունայի համալսարանի հետ կազմակերպվել է **«Եվրոպան և արևելյան հարևանները»** միջազգային գիտաժողովը: https://aspu.am/hy/content/evropan_ev_harevan_erkrnerymijazgayin_gitazhoghov_mankavarzhakanum_/#sthash.GxO4i9Qj.GREV58jK.dpbs

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	АНО «Институт культурного наследия».		1

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Հայկազեան հայագիտական հանդէս Բեյրութ		2
2	Quaestio Rossica		1
3	Polish Journal Of Science Poland		1
4	Myth and Identities Budapest		3
5	Oriental Studies, Kalmyk Scientific Centre of Russian Academy of Science 2022, четвертый квартал		1

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Fundamental Armenology (Հիմնարար Հայագիտություն,		4
2	Փիլիսոփայությունը արդի աշխարհում		2
3	Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու		2
4	Բանբեր Հայաստանի արխիվների		2
5.	Պատմաբանասիրական հանդես		1
6.	Bulletin of the Institute of Oriental Studies		1
7.	The Caucasus on the Crossroads of International Trade and Cultural Exchanges, Proceedings of the international scientific conference		2
8.	Հայաստան-Իրան. Պատմական անցյալը և ներկան», Միջազգային գիտաժողովի նյութեր. Հոդվածների ժողովածու		1
9.	Հայաստանը և տարածաշրջանը. Դասեր, արժևորումներ, հեռանկարներ», (1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու)		1

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Գիտության պետական կոմիտեի կողմից հատկացված թեմատիկ ծրագրի շրջանակում ֆակուլտետի թեմատիկ խմբերից մեկը /ղեկավար՝ պրոֆեսոր Ա. Հարությունյան/ համատեղ գիտահետազոտական աշխատանք է իրականացնում Բուդապեշտի Պիտեր Պազմանի համալսարանի ներկայացուցիչների հետ:

2022 թ. մայիսի 16-17-ին Ուրալի (Եկատերինբուրգի) դաշնային համալսարանի հետ ֆակուլտետը Եկատերինբուրգում կազմակերպել է հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված համատեղ **գիտական սեմինար**:

Գիտական համատեղ հետազոտություններ իրականացնելու նախագծեր են քննարկվում Կորունայի (Իսպանիա), Ուրալի, Վլադիկավկազի, Ստավրոպոլի (Ռուսաստան), Պիտեր Պազմանի (Հունգարիա), Մորիբորի (Սլովենիա), Հայկազյան (Լիբանան), Սեդյցի (Լեհաստան) համալսարանների հետ:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Ֆակուլտետի դասախոսները տարիներ շարունակ ուսանողներին ներգրավել են գիտահետազոտական աշխատանքներում, որի արդյունքում տպագրվել են համատեղ կամ առանձին հոդվածներ:

2022 թ. մայիսի 10-ին ֆակուլտետի ՈՒԳԸ կողմից Շենգավիթի պատմահնագիտական արգելոց թանգարանի հետ կազմակերպվել է ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված **«Հայաստան. դարերի խորքից դեպի ապագա»** հանրապետական ուսանողական գիտաժողով, որին մասնակցել են տարբեր բուհերի ու գիտական հաստատությունների 16 ներկայացուցիչներ:
https://aspu.am/hy/content/hanrapetakan_usanoghakan_gitazhoghov_hpmh-um/#sthash.gEQqX7zd.dpbs

Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ, երկրորդ կուրսի մագիստրանտ Ռ. Մուխսյանը հրատարակել է երեք գիտական հոդվածներ, որոնցից երկուսը՝ արտասահմանում, մասնակցել է Ուրալի համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովին:

Դասախոսական անձնակազմի մեծ մասը սեփական գիտական հետազոտությունների արդյունքները կիրառում է ուսումնամեթոդական գործընթացներում:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

2022 թվականին կարիքների վերհանման արդյունքում ֆակուլտետում ապահովվել է ուսումնական գործընթացի տեխնիկական ապահովումը:

Ներկայում ֆակուլտետում գոյություն ունեն տեխնիկապես վերազինված 12 լսարաններ, որոնք հագեցված են ինտերակտիվ ուսուցում ապահովելու համար անհարժեշտ տեխնիկայով /հեռուստացույցներ, պրոյեկտորներ, համապատասխան համակարգիչներ/ և լիովին համապատասխանում են ֆակուլտետի առկա կարիքների բավարարմանը:

Ընթացիկ տարում բարելավվել է ինտերնետային կապի որակը՝ այն հասանելի դառնալով բոլոր լսարաններում:

Խնդիրների վերհանման արդյունքում հաշվետու տարվա ընթացքում համալսարանի համակարգչային մասնագետների կողմից տեխնիկական և ծրագրային հետազոտման են ենթարկվել ֆակուլտետում առկա ողջ համակարգչային տեխնիկան, որն օգտագործվում է դասապրոցեսի ժամանակ:

Ֆակուլտետում գործում է համալսարանի գրադարանի մասնագիտացված ընթերցասրահներից մեկը, որը հագեցած է համակարգիչներով և մասնագիտական գրականությամբ:
Ներկա դրությամբ ֆակուլտետի տեխնիկական հագեցվածությունը հիմնականում բավարարում է ֆակուլտետի շահակիցների (պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական ապարատ և ուսանողներ) կարիքները:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետի գործունեության հիմնական ընթացքը լուսաբանվել է համալսարանի կայքէջի համապատասխան բաժիններում և “Մանկավարժական համալսարան” թերթի էջերում: Ֆակուլտետի ուսանողները և շահագրգիռ շրջանակները առցանց, բանավոր և տարբեր հայտարարությունների միջոցով պարբերաբար տեղեկացվել են ուսումնական գործընթացի, ֆակուլտետի գործունեության մասին: Այդ նպատակով լայնորեն օգտագործվել են նաև սոցիալական ցանցերը: Հաշվետու տարվա ընթացքում “Հաջողության բանաձև” հաղորդման շրջանակներում պատրաստվել է մի քանի հաղորդումներ ֆակուլտետի մի քանի մասնագետների մասնակցությամբ: Ֆակուլտետի գործունեությունը ներկայացվել են նաև հեռուստատեսային և ռադիո տարբեր այլ հաղոդումներում: Ֆակուլտետի գործունեությունը և շփումը շահագրգիռ շրջանակների հետ ապահովվել է նաև ֆակուլտետի և ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջերի միջոցով:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
Հաշվետու տարում ֆակուլտետը ընդլայնել է միջազգային համագործակցության շրջանակը: Արդյունավետորեն շարունակել է համագործակցությունը Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի, Մեծ Բրիտանիայի Կիլի, Իսպանիայի Կորունայի, Բեյրութի Հայկազյան համալսարանների հետ: Նոր կապեր են հաստատվել Ռուսաստանի Ուրալի դաշնային համալսարանի, Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի, Հյուսիս-օսեթական պետական համալսարանի, Սլովենիայի Մարիբորի համալսարանի հետ: Հաշվետու տարում տեղի են ունեցել մի շարք այցեր նշված համալսարանների ներկայացուցիչների կողմից, կազմակերպվել են համատեղ միջոցառումներ: Ֆակուլտետի մի շարք դասախոսներ և ուսանողներ տարբեր գիտական, կրթական, ուսանողական ծրագրերի շրջանակներում այցելել են նշված համալսարաններ: Ֆակուլտետի մի շարք դասախոսներ մասնակցել են միջազգային գիտաժողովների: Ֆակուլտետը համատեղ տեղական և միջազգային գործընկեր կրթագիտական հաստատությունների հետ համատեղ կազմակերպել է 3 միջազգային գիտաժողովներ, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացած են սույն հաշվետվության համապատասխան բաժնում: Ֆակուլտետի դասախոսները արտասահմանյան այցերի ընթացքում պարբերաբար հանդես են եկել հանրային դասախոսություններով հայոց պատմության տարբեր հարցերին նվիրված, որոնցում կարևոր տեղ է հատկացվել Արցախի հիմնախնդրի ներկայացումը: Ֆակուլտետում աշխատանքներ են տարվել անգլերեն լեզվով դասավանդվող առարկաների ցանկի ավելացման և կատարելագործման ուղղությամբ: Անգլերենով մասնագիտական առարկաներ դասավանդելու կարողություններ ունեցող դասախոսներն են՝ ըստ ամբիոնների.

Հայոց պատմության ամբիոն

	Դասախոսներ	Դասընթացներ
1	**Աշոտ Փիլիպոսյան** *(պ.գ.դ., պրոֆեսոր)*	*Հնագիտություն*

2	**Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոցենտ)	*1. Հայկական հոգևոր-կրոնական կազմակերպությունները* *2. Հայկական Սփյուռք: կազմավորումը, կառուցվածքն ու արդի հիմնախնդիրները*
3	**Սամվել Պողոսյան** (պ.գ.դ., պրոֆ.)	*1. Հայոց Ցեղասպանություն: Պատճառները, ընթացքը և հետևանքները* *2.Հայկական հարց և միջազգային դիվանագիտություն*
4	**Խաչատուր Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆեսոր)	*1. Կովկասի և Հայաստանի խորհրդայնացումը* *2. Հայկական ազգային ազատագրական շարժումը 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին*
5	***Սուսաննա Խաչատրյան*** *(պ.գ.թ., դոցենտ)*	*Հայկական մշակույթ և արվեստ*

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Դասախոս	Գիտ. աստիճան	Թեմա
1. Ռուբեն Սաֆրաստյան	պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս	1. Թուրքիայի պետության կազմավորման մեխանիզմները 2. Ցեղասպանությունները և արդի միջազգային կազմակերպությունները
2. Արամ Քոսյան	պ.գ.դ., պրոֆ.	1. Հայկական քաղաքակրթությունը 2. Հին աշխարհի և միջին դարերի պատմության հիմնախնդիրներ 3. Շրջակա միջավայրը և քաղաքակրթական գործընթացները
3. Երվանդ Գրեկյան	պ.գ.դ., դոցենտ	Հայկական լեռնաշխարհի պատմությունը և մշակույթը Հին Մերձավոր արևելքի համատեքստում
4. Միքայել Բադալյան	պ.գ.թ.	1. Հայաստանի հնագիտություն 2. Պաշտամունքը և հավատը նախաքրիստոնեական Հայաստանում 3. Հին Մերձավոր Արևելքի հնագիտությունը

Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

	Անուն, ազգանուն		***Դասընթաց***
	Մանուկյան Սահակ	***Ի.գ.թ., դոցենտ***	***1. Վարչական իրավունք*** ***2. Հանրային ծառայությունների իրավական կարգավորումը***
	Փխրիկյան Ալինա	***Ի.գ.թ., դոցենտ***	***1. Պետության և իրավունքի տեսություն*** ***2. Սահմանադրական իրավունք***

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետի միջազգայնացման և համագործակցության ընդլայնման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Ֆակուլտետի 5 ուսանող Էրազմուս պլյուս կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ ուսանել է Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում:
2. Հայոց պատմության ամբիոնի 3 դասախոսներ՝ Է. Հովհաննիսյան, Ս. Պողոսյան, Խ. Ստեփանյան, Էրազմուս պլյուս կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում երկու շաբաթ դասավանդել են Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում:
3. Բեյրութի Հայկազյան համալսարանի հետ 2022 թ. հունիսի 29-30-ը կազմակերպվել է «Հայության տեղաշարժերը եվ հասարակական-քաղաքական փոխակերպումները 20-րդ դարում եվ 21-րդ դարի սկզբին» խորագրով միջազգային գիտաժողով:

4. Ֆակուլտետը Իսպանիայի Լա Կորունայի համալսարանի հետ համատեղ սույն թվականի հոկտեմբերի 13-14-ը կազմակերպում է միջազգային գիտաժողով հետևյալ խորագրով «Եվրոպան և Արևելյան երկրները»: Գիտաժողովը նվիրվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին: Գիտաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել 6 պետության 12 գիտակրթական հաստատությունների 26 մասնակիցներ՝ Հայաստանից (9), Արցախից (2), Իսպանիայից (7), Հունգարիայից (5), Ռուսաստանից (2) և Պերուից (1): Գիտաժողովի արդյունքները տպագրվելու են:

5. 2022 թ. սեպտեմբերին համատեղ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ՝ կազմակերպվել է միջազգային գիտաժողով նվիրված Զմյուռնիայի կոտորածների 100-ամյակին:
6. Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը հոկտեմբերի 20-21-ը մասնակցել է Ուրալի դաշնային համալսարանի կազմակերպած «Диаспоры и беженцы в мировой политике и экономике: история исовременность» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին:
7. современность»Մայիսի 30-31 մասնակցել է “Փախստականներ, որբեր, վերածնունդ” խորագիրը կրող միջազգային գիտաժողովին Հունգարիայի Ապոր Վիլմոշի համալսարանում:
8. Ֆակուլտետի դասախոսներ Է. Հովհաննիսյանը և Հ. Գրիգորյանը Սլովենիայի PROMOEU ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 23-29-ը այցելել են Սլովենիայի Մարիբորի համալսարան: Այցի ընթացքում քննարկվել է այդ համալսարանի պատմության ֆակուլտետի հետ հետագա համագործակցության հնարավորությունները: Ծրագիրը գտնվում է շարունակական փուլում, 2023 թ. նախատեսված են ծրագրի շրջանակներում մի շարք միջոցառումներ իրականացնել Մանկավարժական համալսարանում:
9. Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը մասնակցել է միջազգային գիտագործնական գիտաժողովի «Էթնոքաղաքական հակամարտությունները Կովկասում և Մերձավոր Արևելքում և դրանց կարգավորման մեխանիզմները. Պատմություն և արդիականություն» խորագրով, Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարան, ՌԴ, Հարավային Դաշնային համալսարան, ՌԴ, ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտ, ՌԴ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Ռուսաստանյան պատմագիտական ընկերակցություն, (21-22 հոկտեմբերի, 2022 թ., ք. Ստավրոպոլ, ՌԴ):
10. Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը և Հայոց պատմության ամբիոնի դոցենտ սուսաննա Խաչատրյանը մասնակցել են միջազգային գիտագործնական կոնֆերանսի հետևյալ խորագրով, «Ճակատամարտ Կովկասի համար», Ռուսաստանյան պատմագիտական ընկերակցություն, «Հայրենիքի պատմություն» հիմնադրամ, Կոստա Լևանի Խետագուրովի անվան Հյուսիս-Օսեթական պետական համալսարան, «Գիտելիք» ռուսաստանյան ընկերակցություն, ՌԳԱ Վ. Ի. Աբաևի անվան հումանիտար և սոցիալական հետազոտությունների Հյուսիս-Օսեթական ինստիտուտ, ՀՕՀ-Ալանիայի պատմության և հնագիտության ինստիտուտ, (14-15 հոկտեմբերի, 2022 թ., ք. Վլադիկավկազ):

11. Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը մասնակցել է II Ուրալյան պատմա-արխիվային ֆորումին, Ռուսաստանի Դաշնության գիտության և բարձրագույն կրթության նախարարություն, Ռուսաստանի առաջին նախագահ Բ. Ն. Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարան, Սվերդլովսկի մարզի արխիվային վաչություն, (6–9 հոկտեմբերի, 2022 թ., ք. Եկատերինբուրգ, ՌԴ):
12. Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Հայկ Գրիգորյանը 2002թ. սեպտեմբեր 30-5 հոկտեմբեր Եկատերինբուրգում որպես հրավիրված դասախոս մասնակցել է «IV Международная историческая школа» երիտասարդ պատմաբանների միջազգային դպրոցին:
13. Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը մասնակցել է «Կովկասի համար մղված ճակատամարտը ԽՍՀՄ ժողովուրդների պատմական ճակատագրում» խորագրով միջազգային գիտաժողովին, Հյուսիսկովկասյան դաշնային համալսարան (ՌԴ, ք. Ստավրոպոլ, 18-22 մայիսի 2022 թ.):
14. Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան դոցենտ Էդգար Հովհաննիսյանը, դեկանի տեղակալ, դոցենտ Հայկ Գրիգորյանը և Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը մասնակցել են «Ռուսաստանը և Հայաստանը պատմական հիշողության հարահոսում» խորագրով միջազգային գիտական սեմինարին (16 մայիսի 2022 թ., ք. Եկատերինբուրգ, ՌԴ):
15. Սույն թվականի մայիս ամսին Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սարգսյանը «Վերջին 300 տարիների ամենաազդեցիկ հայը. Զապել Եսայան» հոդվածով մասնակցել է Լիբանանի «Տարբերակ 21» հանդեսի «Վերջին 300 տարիների ամենաազդեցիկ հայը» փորձագրական մրցույթին , զբաղեցրել է 1-ին պատվավոր տեղը և արժանացել դրամական պարգևի:
16. Հունիսի 15-ին «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը» ՀՊՄՀ 100-րդ տարեդարձի կապակցությամբ իրենց կողմից հրատարակած ավելի քան 50 անուն արժեքավոր գրքեր նվիրել է պատմության և հասարակագիտության ֆակուլտետին:
17. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետում կազմակերպվել են հանրային դասախոսություններ արտասահմանյան հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:
18. Պատմության բաժնի երրորդ կուրսի ուսանող Ֆելիքս Բախչինյանը 2002թ. սեպտեմբեր 30-5 հոկտեմբեր Եկատերինբուրգում մասնակցել է «IV Международная историческая школа» երիտասարդ պատմաբանների միջազգային դպրոցին:
19. Ֆակուլտետի երեք ուսանողներ՝ Գրիգոր Սմբատյանը, Նելլի Չոբանյանը և Արամ Խաչատրյանը Ստավրոպոլում հոկտեմբեր 23-29 մասնակցել են «Тренды развития национальных экономических систем в эпоху глобальных трансформаций» խորագիրը կրող երիտասարդական ֆորումին:
20. Պատմության բաժնի երրորդ կուրսի ուսանող Մանե Գյոկչյանը Հուլիսի 18-22-ը Նիդերլանդների Թագավորության Հաագա քաղաքում «Respect International West-East

Bridges» հիմնադրամի կողմից կազմակերված «Youth Involvement in Democratic Institutions» Էրազմուս + ծրագրին:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:
Ֆակուլտետի որակի ապահովումն իրականացվել է դեկանատի և ամբիոնների կողմից: Հաշվետու տարվա ընթացքում նախապես հաստատված գրաֆիկի համաձայն կազմակերպվել են դասալսումներ, որի ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ դասավանդման որակի, մեթոդիկայի, առարկայական նկարագրերի և դասավանդվող նյութի համապատասխանելիության վերաբերյալ: Հաշվետու տարում թարմացվել են ֆակուլտետում դասավանդվող առարկայական նկարագրերն ու տրոհումները՝ դրանք համապատասխանեցնելով ՄԿԾ-ներին և Բլյումի տաքսոնոմիայի սկզբունքներին: Դասալսումների արդյունքների հիման վրա կազմակերպվել են քննարկումներ, որին մասնակցել են նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, տրվել են հանձնարարականներ որակի հետագա բարելավման ուղղությամբ: Ֆակուլտետի ներքին որակի ապահովման ուղղությամբ ֆակուլտետը մշտապես համագործակցել է համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ: Որակի ապահովման ուղղությամբ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության և ամբիոնների կողմից հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է մշտադիտարկում: Արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք աշխատանքային կարգով շտկվել են: Ֆակուլտետում որակի ապահովման հարցում կարևոր դերակատարում ունի googleclassroom հարթակը: Ֆակուլտետի որակի հետ կապված խնդիրները պարբերաբար քննարկվել է ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում: Որակի ապահովման և այդ ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման հարցում կարևոր նշանակություն ունի ընթացիկ տարվանից ֆակուլտետի և ամբիոնների որակի պատասխանատուների աշխատանքային ծանրաբեռնվածության մեջ համապատասխանաբար 60 և 30 ժամ հատկացնելը: Սակայն կարծում ենք աշխատանքների արդյունավետության բարձրացման տեսանկյունից նշված ժամաքանակը բավարար չէ և այն կարելի է առնվազը կրկնակի ավելացնել:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Ֆակուլտետի որակի ապահովման աշխատանքներում ընդգրկված են եղել համալսարանի և ֆակուտետի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները:

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**) Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Որակավորված մասնագետներ	• Ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունների ցածր լինելը
• Միջազգային կապեր	• Գրավոր աշխատանքների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների որակի բարձրացման և արտագրությունների կանխման համար անտիպլագիատ ծրագրերի բացակայությունը • Դասավանդման մեթոդիկայի ուղղությամբ մասնագետների ոչ բավարար թվով առկայությունը ֆակուլտետում •
Հնարավորություններ	**Վտանգներ**

• Շրջանավարտների հիմնական մասի մասնագիտական աշխատանքի անցնելու հնարավորություն	• Ուսանողների թվի նվազում • Ֆակուլտետ դիմող ուսանողների մի մաս դիմում է երկրորդ հայտով և ցածր գնահատականներով, որը որոշ ազդեցությունն է ունենում ուսանողների որակի վրա

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում Հասարակագիտության ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը գնահատվում են բավարար: Աշխատանքային պլանով նախատեսված անելիքներն ու առաջադրված ծրագրերն իրականացվել են ողջ ծավալով: Ամբիոնի նիստերի ժամանակ նշված հարցերը քննարկվել են, ամբիոնի դասախոսների կո ղմից ներկայացված հաշվետվությունները փվել են հիմք պնդելու, որ կատարված աշխատանքները պետք է գնահատել արդյունավետ:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը չի փոխվել և իրականացվել է նախորդ տարիներին ընդունված մեթոդների և քաղաքականության շրջանակներում: *Այս մեթոդների և քաղաքականության վերաբերյալ չի անցկացվել մշտադիտարկում՝ փորձարկելու համար դրանց արդյունավետությունը:* *Սա այն կարևոր մեկնակետն է, որտեղ ամբիոնը ունի կատարելու աշխատանքներ հաջորդ ուսուարիների համար և արդեն ունի նախանշած պլաններ դրանց իրականացման համար:*
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները հիմնված են ՀՊՄՀ սահմանած չափորոշիչների, առարկայական նկարագրերում գնահատման սկզբունքների վրա:

Ակնհայտ է, որ գնահատման սահմանված սկզբունքների անաչառ կիրառումը՝ հիմնված հավասարության և օբյեկտիվության վրա, անխուսափելիորեն հանգեցնում է ակադեմիական ազնվության, ինչը ամբիոնի առաջնահերթություններից է: *Այս մոտեցումը որպես սկզբունք, անշուշտ, ճիշտ է: Սակայն հարկ է ընդգծել, որ ամբիոնը չի անցկացրել մշտադիտարկում ուսանողների շրջանակներում, պարզելու համար, թե արդյո՞ք միջանկյալների և քննությունների կազմակերպման ընտրված ձևաչափերը արդյունավետ են, թե՝ ոչ:* *Ակնհայտ է, որ այս բացթողումն օբյեկտիվորեն չի նպաստել միջանկյալների և քննությունների կազմակերպման ընտրված ձևաչափերի արդյունավետությունը ստուգելուն: Եվ այս հարցը ամբիոնը համարելու է առաջնահերթ հաջորդ ուստարվա համար և իրականացնելու է քայլեր այդ ուղղությամբ:*
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Հասարակագիտության ամբիոնում կազմակերպվել է 12 նիստ: 1. Հասարակագիտության ամբիոնի հաշվետվության հաստատում 2. Հեռակա և առկա ԱՈՒՄՓ փաթեթների հաստատում - 2 նիստ 3. Հարցաշարերի և հարցատոմսերի հաստատում - 2 նիստ 4. Մանկավարժական պրակտիկայի մեկնարկի և ընթացքի մասին - 2 նիստ 5. Մանկավարժահետազոտական պրակտիկայի ավարտի և կատարված աշխատանքների մասին - 2 նիստ 6. Առկա և հեռակա ավարտական աշխատանքների նախապաշտպանություն - 2 նիստ 7. Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն - 2 նիստ 8. Կուրսային աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատում - 1 նիստ 9. Առկա և հեռակա ուսանողների կուրսային աշխատանքների պաշտպանություն - 3 նիստ 10. Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում - 1 նիստ 11. Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի թեզերի թեմաների և ղեկավարների հաստատում - 2 նիստ 12. Հասարակագիտության ամբիոնի 2022-2023 ուստարվա ծանրաբեռնվածության և դասացուցակների հաստատում - 1 նիստ 13. Հասարակագիտության ամբիոնի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում - 1 նիստ 14. Ընտրովի դասընթացների հաստատում - 1 նիստ 15. Classroom - ի առարկայական էջերի մշտադիտարկման արդյուքների քննարկում - 1 նիստ: *Նիստերում քննարկված հարցերի և ընդունված որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ուստարվա ընթացքում ամբիոնը հիմնականում կենտրոնացած է եղել դասապրոցեսի կազմակերպման հարցերի վրա: Այս շրջանակներից ակնհայտորեն դուրս են մնացել առարկաների դասավանդման, ընթացիկ միջանկյալների և քննությունների անցկացման եղանակների արդյունավետության հարցերը:*

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	4	2	2	6	5	-	4	11

Համա տեղող	1	1	1	2	1			3
Ժամա վճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդա-մենը	5	3	3	8	6		4	14

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Հասարակագիտության ամբիոնում ուսումնամեթոդական գործունեությունը իրականացվում է համապատասխան ամբիոնի որդեգրած փիլիսոփայության՝ այն է՝ ուսանողը և կրթության որակը առաջնային են, սկզբունքների վրա: Վերանայվել են դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, աշխատանքներ են տարվել կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման շարունակականության ապահովման ուղղությամբ: *Ամբիոնում կատարված ուսումնամեթոդական գործունեությունը հետևյալն է՝* 1. Ամբիոնը ունի 24 ԱՈՒՄՓ փաթեթ, որոնցից 2022-2023 ուստարվա 1-առաջին կիսամյակում փոխվել են՝ 1. 1 բակալավրիատ - 10 առարկայի ԱՈՒՄՓ փաթեթ - փոխվել է 9 1. 2 մագիստրատուրա - 14 առարկայի ԱՈՒՄՓ փաթեթ - փոխվել է 11 Այս թվերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ամբիոնը հիմնականում կարողացել է արդիականացնել ԱՈՒՄՓ փաթեթները, սակայն այս հարցում դեռևս կան աշխատանքներ. բոլոր փաթեթները պետք է համապատասխանեցնել պահանջվող չափանիշներին: 2. Ամբիոնի մեթոդական սեմինարներ 2. 1 Մեկ սեմինար - Հ. Սուքիասյան 16. 11. 14:30 Ակնհայտ է, որ ուստարվա ընթացքում կազմակերպված մեկ սեմինարը բավարար չէ այն մեթոդական դիտելու համար: Հաջորդ ուստարվա համար ամբիոնը նախատեսում է ավելացնել նման զեկուցումների քանակը:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
-	-	-	-	-	-	-	-	-	1
-	-	-	-	-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-	-	-	-	-

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
-			
-			
-			
-			

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Գիտական գործունեությունը և հետազոտական աշխատանքը ամբիոնում առաջնային պահանջներից է: Ամբիոնի դասախոսները կատարել են բավարար հետազոտական աշխատանքներ, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում՝ հոդվածների տեսքով, ինչպես նաև մենագրություններում: Ամբիոնը կարևորում է հետազոտական աշխատանքը նաև ուսանողների շրջանում: Ուսանողների կողմից կատարված հետազոտական աշխատանքները՝ կուրսային, դիպլոմային, մագիստրոսական թեզեր, ևս ամբիոնի հետազոտական առաջնահերթություններից են: 1. Ամբիոնի հետազոտական հիմնական ուղղություններն են՝ 1. 1 Ժամանակակից հասարակական գիտությունները և դրանց դերը կրթական համակարգում 1. 2 Երկրառազմավարության (գեոպոլիտիկա) հիմնախնդիրներ 1. 3 Քաղաքական և քաղաքացիական մշակույթի հիմնախնդիրները հայ հասարակությունում 1. 4 Սահմանադրական իրավունքի հիմնախնդիրները 2. Ամբիոնի կողմից կազմակերպվող լսումներ 2. 1 Ամբիոնը յուրաքանչյուր ամիս կազմակերպում է <<Հասարակագիտություն>> խորագրով լսումներ. այս ուստարվա առաձին կիսամյակում կազմակերպել է երեք լսումներ՝ 1. /19. 10. 14:30/, 2. /23. 11. 14:30/, 3. /20. 12. 14:30/
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
ՊԴԱ գիտահետազոտական աշխատանքներ

1. Բարխուդարյան Սերգեյ - 1 հոդված
2. Կարեյան Արմեն - 0
3. Կոծինյան Աիդա - 0
4. Հովհաննիսյան Վոլոդյա - 0
5. Մանուկյան Սահակ - 0
6. Շիրինյան Լևոն - 2 մենագրություն, մեկ SCOPUS հոդված
7. Շուքուրյան Արմեն - 1 մենագրություն, մեկ հոդված
8. Սարգսյան Փիրուզա - 0
9. Սարվազյան Լիլիթ - 3 հոդված
10. Փխրիկյան Ալինա - 0
11. Սուքիասյան Հայկ - մեկ SCOPUS հոդված

Կոնֆերանսներ

1. Սարվազյան Լիլիթ - 2 կոնֆերանս՝ 1 հանրապետական, 1 միջազգային

Լսումներ
<<Հասարակագիտություն>>/ամենամսյա/ - Հասարակագիտության ամբիոն
Ձեկուցողներ - ամբիոնի ՊԴԱ - մասնակիցներ՝ ֆակուլտետի ուսանողներ

Ամբիոնի դասախոսները պարբերաբար ներկայացրել են հաշվետվություն՝ կապված իրենց կատարած գիտական և հետազոտական աշխատանքների հետ: Ամբիոնը խրախուսել է ուսանողների մասնակցությունը ամբիոնի դասախոսների և ֆակուլտետի կազմակերպած կոնֆերանսներին, սեմինարներին: Աշխատանքի նման փիլիսոփայությունը ամբիոնին տվել է բավարար հիմք եզրակացնելու, որ աշխատանքի այս մեթոդաբանությունը նպաստում է ուսանողների մոտ հետբուհական կրթություն ստանալու ձգտմանը:
Ամբիոնի դասախոսների գիտահետազոտական գործունեությունը գնահատվում է բավարար՝ վերապահումով: Ակնհայտ է, որ որոշ աշխատակիցների մոտ բացակայում են տարվա ընթացքում կատարած հետազոտական աշխատանքները: Սա նշանակում է, որ ամբիոնը պետք է կարևորի հետազոտական աշխատանքների ուղղությամբ ՊԴԱ աշխատանքների ակտիվացումը:

Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:

Ակնհայտ է, որ հետազոտական աշխատանքը ուղիղ կապված է կրթության որակի հետ: Ամբիոնը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում դասախոսների գիտական գործունեությունը և պահանջում է գիտական կյանքին անընդհատական ներգրավվածություն: Պետք է նշել, որ մինչ այս պահը դասախոսների գիտական գործունեությունը գնահատվում է բավարար: Ամբիոնի կողմից իրականացված մշտադիտարկումը ուսանողների շրջանակներում՝ կապված հետբուհական կրթություն ստանալու ձգտման հետ, ապացույցն են այն բանի, որ գիտական և ուսումնական գործընթացները սերտորեն կապված են և տալիս են առարկայական արդունքներ:
Մեր կարծիքով՝ սա հետազոտական աշխատանքի և ուսումնական գործընթացի փոխկապվածության լավագույն օրինակ է:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
-	Հիմնարար	-	-	-
-		-	-	-
-		-	-	-
-	Կիրառական	-	-	-
-		-	-	-
-		-	-	-

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Լևոն Շիրինյան	*Ժողովրդավարության կոնսոցիատիվ ռազմավարության կիրարկումը Հարավային Կովկասում*	*Լիմուշ 2022*	*44*
Լևոն Շիրինյան	*Գանձանակ Հայ քաղաքագիտական մտքի և Հայաստանի քաղաքական պատմության. Պրակ. 3*	*Լիմուշ 2022*	*116*

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Hayk Sukiasyan, Emil Ordukhanyan, Levon Shirinyan	*Consociationalism in Theory and Practice: Methodological Issues of Implementation*	*81-92*
Lilit Sarvazyan	*Levon Shant's arguments on independence as national-spiritual and civilization factor*	*108-120*
Սարվազյան Լիլիթ	*Երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը հայ իրավունքի աղբյուրներում*	*48-57*
Բարխուդարյան Սերգեյ	*Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի օրենսդրական ու կազմակերպական հիմքերը և դրանց բարեփոխման հիմնահարցերը*	*129-136*
Lilit Sarvazyan	*Advisory principle in management system of Armenian church*	*տպագրվելու է դեկտեմբերի 2-րդ կեսին*
Lilit Sarvazyan	*Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը և Հայ եկեղեցու նվիրապետական աթոռների հարաբերության խնդիրը*	*տպագրվելու է դեկտեմբերի 2-րդ կեսին*

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
1. *Հասարակագիտության դասավանդման արդի հիմնախնդիրները*	16. 11. 2022թ. 14:30

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈՐ-ի անցկացման հաստատություն	ՈՐ ժամկետները	Արդյունք
Կոծինյան Արդա	*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ*	*12.04.22-05.05.22*	*ՊԴԱ մանկավարժահոգեբանական վերապատրաստում*
Սարվազյան Լիլիթ	*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ*	*12.04.22-05.05.22*	*ՊԴԱ մանկավարժահոգեբանական վերապատրաստում*
Բարխուդարյան Սերգեյ	*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ*	*12.04.22-05.05.22*	*ՊԴԱ մանկավարժահոգեբանական վերապատրաստում*
Կոծինյան Արդա	*Северо-Кавказский федеральный университет*	*24.10.22-28.10.22*	*Курсы повышения квалификации «Современные подходы к преподаванию правоведения»*
Բարխուդարյան Սերգեյ	*Северо-Кавказский федеральный университет*	*24.10.22-28.10.22*	*Курсы повышения квалификации «Современные подходы к преподаванию правоведения»*

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ

Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
-	-	-
-	-	-
-	-	-
-	-	-

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային	-	-	-
Հանրապետական	-	-	-
Տարածաշրջանային	-	-	-

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի, Մեծ Բրիտանիայի Կիլլի համալսարանի հետ իրականացված ուսանողների, դասախոսների գիտամանկավարժական փորձի փոխանակման արդյունքում երկուստեք բարձրացել է դասավանդվող առարկաների, դրանց ուսումնագիտական ուղղվածության, մատչելիության և հրապարակայնության աստիճանը:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Հասարակագիտության ամբիոնը սերտ համագործակցություն ունի ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հետ:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ	
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը

	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
1. Մեծ Բրիտանիայի Կիլլի համալսարան	Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի <<Հասարակագիտություն>> մասնագիտությամբ ուսանողները Մեկ կիսամյակ ուսանում են և ստանում են համապատասխան կրեդիտներ	-	-	-	-
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
-	-	-	-	-
-	-	-	-	-
-	-	-	-	-
-	-	-	-	-
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				
-	-	-	-	-
-	-	-	-	-
-	-	-	-	-
-	-	-	-	-

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-
-	-	-	-

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնի կապը հանրակրթական դպրոցների հետ ապահովվում է առաջին հերթին ԲՈՒՀ-ի ավանդական կապերի և կրթական ուղղվածության միջոցով՝ այն է ուսումնական պրակտիկայի կազմակերպումը դպրոցներում, ինչն ապահովում է անմիջական կապ հանրակրթական հաստատությունների հետ: Ամբիոնի դասախոսները, որոնք ներգրավված են հանրային տարբեր վերլուծական աշխատանքներում, հնարավորության դեպքում ներկայացրել են նաև համալսարանի և ամբիոնի կատարած առանձին աշխատանքներ, ինչպես նաև տարբեր լրատվության միջոցներով, օրինակ՝ Հանրային Ռադիոյի եթերով, ներկայացվել է <<Հասարակագիտություն>> առարկան, ինչպես նաև հասարակագիտության ամբիոնի գործունեությունը: Սրանք այս պահին ամբիոնի կողմից իրականացված հանրային աշխատանքներն են՝ ուղղված համալսարանի և ամբիոնի գործունեության հանրային լուսաբանմանը:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	*Ա. Վ. Կոծինյան*	*Ճանաչողական այց ՀՊՄՀ*	*2022 Հոկտեմբերի 26*
	Լ. Ղ. Շիրինյան	*Բաց դասախոսություն*	*2022 Նոյեմբերի 30*
Մեթոդական			
Դաստիարակչական	*Ա. Վ. Կոծինյան*	*<<Հավերժի ճամփորդ>>*	*2022 Նոյեմբերի 16*

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Լրատվական միջոցներով հարցազրույցներ	*Հ. Հ. Սուքիասյան*	*<<Հասարակագիտություն>>: Հղումը՝ https://www.youtube.com/watch?v=_1UMWWggFqM&t=167s*	*2022 նոյեմբերի 22*

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնը հաշվետու տարում ունեցել է որակի ապահովման մշակված համակարգ և պատասխանատու: Որակի ապահովման համակարգի թափանցիկությունն ապահովվել է հասարակագիտական առարկաների դասավանդման որակի ապահովման հանձնախմբի կողմից պատմության և հասարակագիտության ֆակուլտետի խորհրդին ներկայացվող հաշվետվությունների միջոցով:

Կազմակերպվել են նաև խորհրդակցություններ ու քննարկումներ: Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնում կազմակերպվել են նիստեր, քննարկվել ուսումնական, կրթական և գիտական գործունեությանն առնչվող բազմաթիվ հարցեր, որոնք արձանագրվել են: Հաշվետու տարում ամբիոնի վարիչը, հետո նաև ամբիոնի վարիչի պաշտոնակատարը դասախոսների հետ պարբերաբար իրականացրել են դասախոսների դասալսումների և դրանց արդյունքների քննարկման մշտադիտարկում: Առանձնացվել են այն հիմնական ուղղություններն ու գործընթացները, որոնք առավել արդյունավետ են դասընթացն արդի պայմաններին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու համար:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ապահովման գործընթացների կառավարման տեսանկյունից՝ Հասարակագիտության ամբիոնի՝
1. առարկայական նկարագրերը և էլեկտրոնային ԱՈՒՄՓ-ները քննարկվել են պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով
2. Ամբիոնի որակի պատասխանատուն մասնակցել է ներամբիոնային և համահամալսարանական օղակներում որակի ապահովման խնդիրների քննարկմանը
3. Ամբիոնը մշտադիտարկել է դասընթացների դասավանդման ուսումնառությունը և արդյունավետությունը, որոնց վերաբերյալ տրվել են համապատասխան գնահատականներ և հանձնարարականներ:
Իհարկե, նորից,այստեղ պետք է նշել, որ ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը չի փոխվել և իրականացվել է նախորդ տարիներին ընդունված մեթոդների և քաղաքականության շրջանակներում: Սա այն կարևոր խնդիրն է, որը ամբիոնը դիտարկում է որպես առաջնային լուծման հարց հաջորդ ուստարիների համար:
4. Վերահսկվել է մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքը որակի ապահովման տեսանկյունից:
5. Հաշվետու տարում ամբիոնի կողմից կատարվել են համեմատություններ դպրոցական ծրագրերի հետ: Հասարակագիտության մասնագիտացման կրթական ծրագիրը գրեթե ամբողջովին համապատասխանում է հանրակրթության Հասարակագիտություն առարկայական ծրագրերին: Հասարակագիտության մասնագիտական կրթական ծրագրում ներառված և ամբիոնի կողմից դասավանդվող դասընթացները լիովին համապատասխանում են հանրակրթության Հասարակագիտություն առարկայական ծրագրերին:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	*Ամբիոնի վարիչ /պաշտ./*	*Ինտերակտիվ դասախոսություն,* *համեմատական վերլուծության մեթոդի արդյունավետ կիրառում,*

		ուսանողների անկաշկանդ ներգրավվածություն դասապրոցեսին
*ՀՊՄՀ էլեկտրոնային **Google Classroom** հարթակում կատարված աշխատանքների մշտադիտարկում*	*Ամբիոնի վարիչ /պաշտ./* *Ամբիոնի մասնագետ*	*Դասախոսական աշխատանքի արդյունավետության բարձրացում*

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
· ՊԴԱ բարձր պատրաստվածության աստիճան:	*· ԱՈՒՄՓ-ների արդիականացման գործընթացի որոշ բացթողումներ*
	· Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մուրեցումներն ու քաղաքականությունը չի փոխվել և իրականացվել է նախորդ տարիներին ընդունված մեթոդների և քաղաքականության շրջանակներում

	· *Ամբիոնի գիտահետազոտական գործընթացներին ուսանողների ներգրավվածության ոչ բավարար մակարդակ*
Հնարավորություններ	**Վտանգներ**
· *Ամբիոնի դասախոսները ներգրավված են հանրային տարբեր վերլուծական աշխատանքներում, ինչը հնարավորություն է տալիս պարբերաբար հանրայնացնել ամբիոնի աշխատանքները, ինչպես նաև համալսարանը:*	· *Դիմորդների նվազ քանակություն*

Հայոց պատմության ամբիոնի հաշվետվություն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ամբիոնի՝ հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, ինչպես նաև կատարված ուսումնական ընդհանուր աշխատանքի ծավալը գնահատվում են բավարար, քանի որ դրանք իրականացվել են աշխատանքային պլանով նախատեսված անելիքներին ու առաջադրված ծրագրերին համապատասխան, ողջ ծավալով, անհրաժեշտ հետևողականությամբ և արդյունավետ մեթոդներով:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է աշխատանքային կանոնակարգված գործընթաց: Հաշվետու տարում ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություններ չեն իրականացվել: Ֆակուլտետի խորհուրդը կազմված է 26 անդամներից՝ պդա, արտաքին շահակիցներ, ուսանողներ: Կառավարման գործընթացը պլանավորվել և իրականացվել է ֆակուլտետի աշխատանքային պլանի հիման վրա: Հաշվետու ընթացքում կայացել է 15 աշխատանքային նիստ, քննարկվել են օրակարգային և ընթացիկ հարցեր, կայացվել են որոշումներ, որոնց իրազեկումը շահառուներին կատարվել է ֆակուլտետի վարչակազմի՝ դեկանատ, ամբիոնի վարիչներ, նաև ուսանողական խորհրդի կողմից:
Ֆակուլտետի վարչարարական գործընթացը համակարգվում է դեկանատի կողմից, որն ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ արդյունավետ աշխատանքի համար:

Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների կողմից կատարվել են հաշվետու տարվա գործունեության, ուսումնական գործընթացի մշտադիտարկումներ: Google classroom հարթակում ամբիոնների կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքում վերհանվել էին թերի կատարված աշխատանքներ, որոնք ներկայացվել են համապատասխան օղակներին և շտկվել են:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Հաշվետու տարում իրականացրել ենք ՄԿԾ-ների քննարկումներ՝ կրթական գործընթացների բարելավման և որակի վարչության կողմից իրականացված աշխատանքային սեմինարների հիման վրա: ՄԿԾ-ների բարելավման և վերանայման նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր: Խմբի անդամներն են՝ ֆակուլտետի որակի պատասխանատուները, արտաքին և ներքին շահակիցները: Քննարկումների հիման վրա կատարվել են վերջնարդյունքների վերաձևակերպումներ և թերությունների շտկումներ: ՄԿԾ-ների վերանայման հարցերը պարբերաբար քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում՝ նպաստելով կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: ՄԿԾ-ները համահունչ են և համադրելի մասնագիտական որակավորմանն ու ՈԱՇ-ին:
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Հաշվետու տարում վերանայվել և թարմացվել են գնահատման մեթոդներն ու չափանիշները, դրանք հասանելի են ուսանողներին: Գնահատումը կատարվում է ուսանողների ներկայությամբ՝ գնահատման չափանիշներին համապատասխան: Նշեմ նաև, որ յուրաքանչյուր առարկայական նկարագրում առկա են ռուբրիկներ, որտեղ հստակ նշված են յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման չափորոշիչները: Գրագողության դեմ պայքարի նպատակով և՛ ավարտական աշխատանքները, և՛ մագիստրոսական թեզերը վերահսկվում են ամբիոնի նիստերի ընթացքում ուսանողների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևով: Գրագողության բացառմանը նպաստում է նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը (քիչ ուսումնասիրված կամ չուսումնասիրված թեմաներ՝ որպես ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:
Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետի միջազգայնացմանը նպաստող քայլերից է եղել ուսանողների և դասախոսների համագործակցությունը Յյուրիխի Արվեստների համալսարանի հետ և Արտաս հիմնադրամի կողմից կազմակերպված աշխատանքային գործընթացը, որին մասնակցել են ֆակուլտետի դասախոսները:

Ներկա պահին ուսանողների կողմից հայտեր են ներկայացված միջազգային գիտաժողովների մասնակցության համար:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	Կերպարվեստ 135 Արտ.տես.պատմ. և կառավարում 20 Մշակութաբանություն 30 Երաժշտական կրթություն 78 Հագուստի մոդելավորում 92 Դեկորատիվ կիրառական արվեստ 64
	հեռակա	Կերպարվեստ 57 Արտ.տես.պատմ. և կառավարում 8 Մշակութաբանություն 16 Երաժշտական կրթություն 92
Մագիստրոսի	առկա	Կերպարվեստ 21 Արտ.տես.պատմ. և կառավարում 11 Մշակութաբանություն 5 Երաժշտական կրթություն 17 Դեկորատիվ կիրառական արվեստ 8
	հեռակա	
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Վրաստան/առկա բակալավր/	1
Ուսանողների ներհոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Վրաստան/առկա բակալավր/	1

2	ՌԴ/հեռակա/	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	7.8	51
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	1.9	13

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

1. Հաշվետու տարում հավաքագրման գործընթացն իրականացվել է պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների՝ հանրապետության հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ այցելելով՝ պլանավորած գրաֆիկին համապատասխան : Այցեր են կատարվել 11 ուսումնական կենտրոն:

2. Նույն շրջանակներում ֆակուլտետ են այցելել հանրակրթական դպրոցների և մասնագիտական ուսումնական հաստատությունների սաներ (2 դպրոց, 2 միջ. մասն. հաստատություններ):

3. Ֆակուլտետի մասնագիտությունների գովազդմանը մասնակցել են ուսանողները:

4. մասնագիտական կողմնորոշման շրջանակն ընդլայնվել է ֆակուլտետում կազմակերպվող ցուցադրությունների, այլ միջոցառումների միջոցով (տե՛ս ամբիոնների հաշվետվություններ):

5. Սոցցանցերի միջոցով տարածվել է ֆակուլտետի և ամբիոնների գովազդը:

Գործընթացը կարող է առավել արդյունավետ լինել, եթե յուրաքանչյուր մասնագիտության համար նկարահանված լիներ նոր կարճ տեսահոլովակ (3-5 րոպե տևողությամբ):

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

հեռացումների պատճառներ.

1. Տարկետման ժամկետի լրանալը և դիմում չներկայացնելը
2. ուսման վարձի պարտք ունենալը
3. անբավարար առաջադիմություն
4. ազգային բանակ զորակոչվելը
5. ուսանողի դիմումի համաձայն
6. շենքային անբավարար պայմաններ

վերականգնումների պատճառներ.

1. վերադարձ զինծառայությունից
2. ուսումը շարունակելու նպատակով

Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		-
Մագիստրոս		-
Ընդհանուր		-
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	“Մշակութային անցուդարձ” (պրակ 5)	13

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ֆակուլտետի երեք ամբիոններում դասավանդում են բարձր մասնագիտական կարողություններ և փորձառություն ունեցող 75 դասախոս՝ դոկտոր պրոֆեսոր- 5, պրոֆեսոր -5, գ.թ.պրոֆ.-3, գ.թ.դոցենտ-14, դոցենտ-10, գ.թ.-4, գ.թ.ասիստենտ-2, ասիստենտ-11, դասախոս-21: Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագիր սպասարկող դասախոսներն իրենց որակներով համապատասխանում են տվյալ կրթական ծրագրերի նպատակներին. արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոն՝ դոկտոր պրոֆեսոր- 2, գ.թ.դոցենտ-5, գ.թ.-3, գ.թ.ասիստենտ-1, ասիստենտ-1 կերպարվեստի ամբիոն՝ դոկտոր պրոֆեսոր- 2, պրոֆեսոր -3, գ.թ.պրոֆ.-2, գ.թ.դոցենտ-4, դոցենտ-3, գ..թ.ասիստենտ-1, ասիստենտ-4, դասախոս-12 երաժշտության մանկավարժության ամբիոն՝ դոկտոր պրոֆեսոր- 1, պրոֆեսոր -2, գ.թ.պրոֆ.-1, գ.թ.դոցենտ-5, դոցենտ-7, գ.թ.-1, ասիստենտ-6, դասախոս-9:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները մասնագիտական խորհուրդների անդամներ են, ատենախոսական թեզերի ղեկավարներ, գրախոսներ:

Հաշվետու տարում ֆակուլտետի դասախոսները հանդես են եկել որպես բազմաթիվ հոդվածների, ձեռնարկների և գրքերի հեղինակներ,

ղեկավարել են մագիստրոսական հետազոտություններ, կազմակերպել են գիտաժողով և հրատարակել պրակ

ղեկավարել են պրակտիկաներ, նաև միջազգային համագործակցության շրջանակներում՝ Ցյուրիխի արվեստների համալսան,

մասնակցել են հանրապետական և միջազգային կոնֆերանսների, նկարչական սիմպոզիումների, դասընթացների, վերապատրաստումների, նաև հանդես են եկել որպես փորձագետներ (2 փուլ), (բոլոր հիմքերը տրված են համապատասխան ամբիոնների հաշվետվություններում):

Մասնակցել են ՀՀ ԿԳՄՍՆ դրամաշնորհային ծրագրի (Կերպարվեստի նախագծեր):

Իրականացրել են միջֆակուլտետային ուսանողական միջոցառումներ:

Համատեղ միջոցառումներ են կազմակերպել դպրոցների հետ:

Ֆակուլտետի դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքների գնահատման նպատակով իրականացվել են պլանային դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում և վերհանված խնդիրներին տրվել են գործընթացը բարելավող լուծումներ (ամբիոնների նիստերի արձանագրություններ), ուսանողների շրջանում առցանց հարցաթերթիկների միջոցով կատարվել է հարցում «Դասախոսն ուսանողի աչքերով», որի արդյունքները վերլուծվել են որակի պատասխանատուների կողմից:

Որպես ստեղծագործական ֆակուլտետ հաշվետու տարում իրականացվել են բազմաթիվ ցուցադրություններ և համերգներ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Հաշվետու տարում ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը շարունակել է գիտահետազոտական աշխատանքները համապատասխան մասնագիտական ոլորտներում՝ հրատարակվել է հոդված՝ 6 ձեռնարկ՝ 11 գիրք՝ 5

տպագրության է հանձնված 6 հոդված

ղեկավարել են մագիստրոսական հետազոտություններ, կազմակերպել են գիտաժողով և հրատարակել պրակ՝ 13 հոդված

մասնակցել են գիտաժողովների՝

հանրապետական՝ 2

միջազգային՝ 2

համեմատական անցկացնելով նախորդ տարիների գիտական գործունեության արդյունքների միջև դիտարկվել է հրատարակված հոդվածների նվազեցում, սակայն ավելացել է տպագրված ձեռնարկների և գրքերի քանակը

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	МЦНС <<Наука и Просвещение>>	РИНЦ	1
2	Актуальные научные исследования в современном мире, научно исследовательский журнал	РИНЦ	1

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
	-		

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Հայագիտական հանդես	ԲՈԿ	2
2	Դպրատուն	ԲՈԿ	1

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում: (տեքստը այստեղ)

Հաշվետու տարում համագործակցային կապեր հաստատելու գործընթացը, համագործակցության նախագծեր ենք մշակում Սարանսկի մանկավարժական համալսարանի և Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի համապատասխան ֆակուլտետների և ինստիտուտների հետ համատեղ:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն

արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ): (տեքստը այստեղ) Հետազոտական գործունեությունը փոխկապակցված է ուսումնական գործընթացի հետ: Այն առաջին հերթին իր կարևոր դրսևորումն ունի մասնագիտական պրակտիկաների ընթացքում՝ թե ուսումնական, թե մանկավարժական: Ամբողջ գործընթացը դասախոսի գիտական որակների կիրառման շնորհիվ ուսանողի մեջ հետազոտական ձիրքի ձևավորման և դրա դրսևորման կարևոր ընթացքի արդյունքն է: Հետազոտական գործունեությունը առավել արտահայտիչ է ավարտական աշխատանքներում և մագիստրոսական ատենախոսություններում (արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնների բաժինների, կերպարվեստի ամբիոնի կերպարվեստ բաժնի և երաժշտության մանկավարժության ամբիոնի բաժնի համար): Վերը նշվածից ելնելով հարկ ենք համարում դիտարկել ուսանողների գիտական հետազոտությունների արդյունքում ստեղծված հոդվածները: Բոլոր հիմքերը դիտարկված ամբիոնների հաշվետվությունների համապատասխան հատվածներում:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Կերպարվեստի ամբիոնին է պատկանում 25 արվեստանոց, 5 արվեստանոց-արհեստանոց և 3 ուսումնանական կաբինետ, 1 պահոց: Երաժշտության մանկավարժության ամբիոնին կից գործում են 1 նոտաների գրադարան, 30 ուսումնական-երաժշտական կաբինետ: Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնին կից գործում է 1 ուսումնական կաբինետ, որը հանդիսանում է ևս մեկ ցուցասրահ-լսարան: Ֆակուլտետում առկա է ևս 2 ցուցասրահ-լսարան, ինչպես նաև լսարանների ստվար մասը հագեցած է տեխնիկական միջոցներով, որոնք գտնվում են համալսարանի 3-րդ և 4-րդ մասնաշենքերում: Ներքին շահակիցների շրջանում հանդիպումների արդյունքում ի հայտ են եկել խնդիրներ, որոնք կապված են տեխնիկնական միջոցների հին լինելու, անբավարար շենքային պայմանների հետ, ինչը որոշակի չափով հանդիսանում է ուսանողների հեռացումների պատճառ:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Լինելով ակտիվ ստեղծագործական ֆակուլտետ՝ հաշվետու տարում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, բաց դասախոսություններ-սեմինարներ, համերգներ, որոնց

մասնակցել են ոչ միայն բուհի շահակիցները, այլ նաև արվեստասեր հասարակությունը, միջոցառումները արտացոլում են ֆակուլտետի առաքելությունը:

Ֆակուլտետի գործունեությունը լուսաբանվում է ֆակուլտետի, ամբիոնների էլեկտրոնային էջերով, համալսարանի պաշտոնական կայքի միջոցով, հեռուստատեսային հաղորդումների միջոցով: Բոլոր նյութերը հասանելի են հասարակությանը: https://www.facebook.com/aspu.art.edu/

Իրականացված միջոցառումները.

1. Տարեսկզբին վերանորոգվել է ֆակուլտետի ցուցասրահ-ճեմասրահը, որի շնորհիվ ակտիվացել է ցուցադրությունների կազմակերպման գործընթացը: Այստեղ ներկայացվել է բուհի 100-ամյա հոբելյանին նվիրված 15 նկարիչ-դասախոսների կողմից կատարված միասնական «Արարատ» կտավը:
2. Ֆակուլտետի 2 արվեստանոց է անվանակոչվել հիմնադիր դասախոսներ Ղուկաս Չուբարյանի և Սուրեն Սաֆարյանի պատվին:

https://aspu.am/hy/content/arvestanocner_ghukas_chubaryani_ev_suren_safaryanin_anunnerov/#sthash.DjDI8zD6.dpbs

3. Համալսարան-դպրոց համագործակցության շրջանակներում Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 դպրոցում կազմակերպվել է «365 օր դպրոցում՝ աշակերտի և ուսուցչի» հետ կարգախոսով միջոցառումը:

https://aspu.am/hy/content/tsanotacan_gegharvestakan_krtutyan_fakultetin_/#sthash.ZtWINUtC.dpbs

4. Բուհ-ի 100-ամյա հոբելյանին նվիրված ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպվել է ցուցահանդես: https://aspu.am/hy/content/_cucahandes_nvirvats_hpmh-i_himnadrman_100-amyakin/#sthash.jBGP52zf.dpbs
5. Բուհ-ի 100-ամյա հոբելյանին նվիրված համերգ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում: https://aspu.am/hy/content/hobelyanakan_hamerg_aram_khachatryani_tun-tangaranum/#sthash.2IbH3FXU.kZMJwg7u.dpbs
6. Ֆակուլտետում կազմակերպվել են բազմաթիվ ցուցադրություններ, որոնց մասնակիցներն են ֆակուլտետի նախկին շրջանավարտները և իրենց սաները, ինչը նպաստում է ֆակուլտետի գործունեության ակտիվացմանը և համապատասխանում առաքելությանը:
7. Հոբելյանական տարուն նվիրված կազմակերպվել է "Մշակութային անցուդարձ" խորագրով մագիստրոսական գիտաժողով և հրատարակվել է համանուն մագիստրոսական հոդվածների ժողովածու (պրակ 5):
8. "Հաջողության բանաձև" հաղորդաշարը հյուրընկալել է ֆակուլտետի դասախոսների և ստեղծել իրենց գործունեությունը լուսաբանող 6 հաղորդում:
9. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցել են 2 հանրապետական և 2 միջազգային գիտաժողովների: Հանդես են եկել ֆակուլտետի շրջանակներից դուրս կազմակերպված ցուցահանդեսների:
10. Ֆակուլտետի դասախոսները մասնակցել են միջազգային նկարչական սիմպոզիումների: (տես՝ կերպարվեստի ամբիոնի համապատասխան հղումը)
11. Շարունակական բնույթ է կրում համագործակցությունը Յյուրիխի Արվեստների համալսարանի և «Արտաս» հիմնադրամի հետ: Յյուրիխում են անցկացրել իրենց պրակտիկան ֆակուլտետի կերպարվեստ մասնագիտության 9 ուսանող և երկու դասախոս: Համագործակցությունը շարունակվել է Երևանում:

https://aspu.am/hy/content/mankavarzhakan_praktika_cyurikhi_arvestneri_hamalsaranum/#sthash.WBcO9HAk.dpbs

https://aspu.am/hy/content/hpmh-i_ev_artas_himnadrami_mijev_hamagortsakcutyuny_sharunakvum_e/#sthash.ZuWiMUoQ.dpbs

12. Ֆակուլտետի դասախոսները մասնակցել են ՀՀ ԿԳՄՄՆ կողմից կազմակերպված «Կերպարվեստի նախագծեր» դրամաշնորհային ծրագրին, դառնալով ծրագրի շահակից՝ աշխատախմբի կողմից հավաքվել և նկարազարդվել է շուրջ 30 ծանոթ և անծանոթ հեքիաթ: Գործընթացի արդյունքները ներկայացվել են 3 ցուցադրությունների միջոցով՝ ֆակուլտետում, ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում և Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 դպրոցում:

https://aspu.am/hy/content/hpmh-n_haghtel_e_kerparvesti_nakhagtser_tsragrum/#sthash.JI0ecZL8.dpbs

13. Ֆակուլտետում կազմակերպվել են շուրջ 15 ցուցահանդես ֆակուլտետի շրջանավարտների աշխատանքների, ուսանողական և աշակերտական ցուցահանդեսներ, նաև ուսանողների կողմից կազմակերպված ցուցահանդեսներ:
14. Կազմակերպվել են միջֆակուլտետային ուսանողական հանդիպումներ:
15. Ֆակուլտետի երաժիշտ դասախոսների կողմից համալսարանում կազմակերպվել են 2 համերգ-շնորհանդեսներ:

https://aspu.am/hy/content/anna_harutyunyanhogu_khostovanutyun/#sthash.6Z3fzcwc.dpbs
https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/#sthash.YWs1qV3L.dpbs

16. Կազմակերպվել են բաց դասեր ֆակուլտետի ուսանողների և մասնագիտական կողմնորոշման շրջանակներում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
Ֆակուլտետը հաշվետու տարում համագործակցել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հետ: Համագործակցության հուշագիր է կնքել Հայաստանի նկարիչների միության հետ (https://aspu.am/hy/content/hpmh-n_ev_hayastani_nkarichneri_miutyuny_khamagortsakcen/#sthash.F8eGhuwY.dpbs): Պրակտիկայի շրջանակներում ֆակուլտետը համագործակցել է Երևանի բազմաթիվ թանգարանների, դպրոցների և մասնագիտական կենտրոնների հետ: Համագործակցությունը արդյունավետ է ընթացել: Ֆակուլտետը նախատեսում է ընդլայնել համագործակցային կապերը: Տարվում են աշխատանքներ համագործակցային շրջանակներն ընդլայնելու ուղղությամբ:
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Նախորդ ժամանակահատվածի ձեռքբերումներով շարունակվում է արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քայլերի իրագործումը՝ համագործակցությունը Յյուրիխի Արվեստների համալսարանի հետ:

Վերականգնվում են համագործակցային կապեր Մոսկվայի մանկավարժական համալսարանի արվեստի ինստիտուտի հետ:
Համագործակցային կապեր են հաստատվել Սարանսկի Ե.Եվսևյևի անվան մանկավարժական համալսարանի մանկավարժության և գեղարվեստական կրթության ֆակուլտետի հետ: Նախագծվում են իրագործելի ծրագրերը:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

2021-2022թթ. իրականացվել է Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դասախոսների վերապատրաստումներ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դասախոսները՝ Արմինե Բաղդասարյանը, Աննա Հարությունյանը, Նաիրա Մադոյանը, Լիանա Այվազյանը, Հայկուհի Մուկոյանը և Հռիփսիմե Մարոնյանը մասնակցել են օտար լեզվի վերապատրաստման դասընթացների և ստացել են Վկայագիր, որը հաստատում է նրանց անգլերեն լեզվի A2, B1 մակարդակը: Գեղարվեստական կրթության ֆակուլտետի փոխդեկան Լիանա Այվազյանը և որակի պատասխանատու Հայկուհի Մուկոյանը մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄԿԾ-ների Swot վերլուծություն իրականացնելու մեթոդներ» վերապատրաստման դասընթացներին և իրականացրել են կերպարվեստ մասնագիտության բակալավրիատի ՄԿԾ-ի Swot վերլուծությունը: Swot վերլուծության ստեղծման գործընթացին մասնակցել են նաև պատմության և իրավագիտության, կուլտուրայի ֆակուլտետների պատասխանատուներ Սուսաննա Խաչատրյանը և Զարուհի Տոնոյանը: Իրականացվել է յոթ չափանիշների Swot վերլուծություն: Դիտարկվել է կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՊՄՀ ռազմավարական խնդիրներին և առաքելությանը, արդիականությունը և համապատասխանությունը, բովանդակությունը և իրագործումը, ուսանողների ներգրավվածությունն այդ գործընթացներին:

ՈԱԱԿ-ի տնօրեն պ. Ռուբեն Թոփչյանը, մասնագիտական փորձագետներ Վարդուհի Գյուլազյանը և Մերի Բարսեղյանը համատեղ ՀՊՄՀ-ի ներքին փորձագետներ՝ ասիստենտ Մելանյա Բարսեղյանի, դոցենտ Անահիտ Մինասյանի և դոցենտ Սոնա Մակիչյանի հետ իրականացրել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Կերպարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատում համապատասխան հետևյալ ժամանակացույցի: Նախքան այցը փոխդեկան Լիանա Այվազյանը և որակի պատասխանատու Հայկուհի Մոկոյանը կազմակերպել են սեմինարներ ՄԿԾ-ները բարելավող աշխատանքային խմբի, ՊԴ կազմի և ուսանողների հետ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԽՈՐԵՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

	11.10. 2022 թ.	Սկիզբ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի հետ	10:00	10:40	40 րոպե
2	Հանդիպում «Կերպարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	10:50	11:40	50 րոպե
3	Հանդիպում «Կերպարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ /8-10 ուսանող/	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում	13:00	13:40	40 րոպե
5	Հանդիպում «Կերպարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ /8-10 դասախոս/	13:50	14:50	60 րոպե
6	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի ներկայացուցիչների հետ և SWOT վերլուծություն իրականացրած խմբի հետ	15:00	16:00	50 րոպե
7	Քննարկում	16:10	16:30	20 րոպե
8	Ամփոփում հաստատության ղեկավար կազմի և վերապատրաստման մասնակիցների հետ	16:40	17:20	40 րոպե

Կերպարվեստ մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման գործընթացի ավարտին իրականացվել է քննարկումներ, ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թոփչյանը ներկայացրել է դիտարկումներ և խորհրդատվություններ՝ ՄԿԾ-ում շեշտադրել մասնագիտական մանկավարժության բաղադրիչը, հետազոտական բաղադրիչի ներառում ավարտական աշխատանքներում, մասնագիտության անվանման փոփոխության դիտարկում՝ գրավչության բարձրացման նպատակով: Ցանկալի է ուժեղացնել

մարքեթինգային հետազոտությունները շրջանավարտների պահանջվածության վերաբերյալ, առավել շեշտադրել կերպարվեստի ուսուցչի առաքելությունը դպրոցում և մասնագիտության գրավչության բարձրացնմանն ուղղված գործողությունները: Շեշտը դնել ոչ միայն դասարանի օժտված սովորողների նկարչական կարողությունների զարգացմանն, այլ բոլոր սովորողների գեղագիտական դաստիարակությանը կերպարվեստի միջոցով: Առանձնակի ուշադրություն դարձնել բուհի հեղինակության բարձրացմանն ուղղված հատուկ միջոցառումներին: Ցանկալի է հստակեցնել այն գաղափարախոսությունը, որով շրջանավարտը պետք է մուտք գործի դպրոց և հաղորդակցվի հասարակության ստվար զանգվածի հետ:

Ցանկալի է ավելացնել նաև ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառումը կերպարվեստի դասավանդման գործընթացում: Գտնում ենք, որ միջֆակուլտետային համագործակցությունները կնպաստեն կերպարվեստի ուսանողի մեթոդամանկավարժական կարողությունների զարգացմանը, իսկ մյուս ֆակուլտետների ուսանողներին կծանոթացնեն վիզուալ հաղորդակցման եղանակներին:

Դիտարկել մասնագիտության անվանափոխությունը՝ գրավչության բարձրացման համար: (Օրինակ Վիզուալ արվեստ):

ՄԿԾ վերանայումները սկսել շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունից, որը հնարավորություն կտա հասկանալու ծրագրի ուժեղ կողմերը և խնդիրները: Հանձնարարությունների ոճի փոփոխություն՝ միջդիսցիպլինար մոտեցման ապահովման համար: Հստակեցնել, առավել չափելի դարձնել և ապահովել ՄԿԾ ակնկալվող վերջնարդյունքներ-դասավանդման և ուսումնառության մեթոդներ-գնահատման մեթոդներ շղթայի տրամաբանական կապը: Պլանավորել շահակիցների հետ հանդիպումներ, որոնց կազմում ընդգրկված կլինեն նաև այլ ֆակուլտետների ՄԿԾ-ում խնդիրները վերհանելու, ինչպես նաև անհատական լուծումները միասնականության մեջ դիտարկելու համար:

Դիտարկել ֆակուլտետի ներսում հաղորդակցության մեծացումը ՄԿԾ որակի ապահովման և խնդիրների քննարկման առումով:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետը ստացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Կերպարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման զեկույցը:

Գեղարվեստայական կրթության ֆակուլտետը և կերպարվեստի ամբիոնը սկսել են շտկել որոշակի թերություններ՝ հաշվի առնելով դիտարկումները և խորհրդատվությունները՝ :
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Անահիտ Մինասյանը, գեղարվեստայական կրթության ֆակուլտետի փոխդեկան Լիանա Այվազյանը և որակի պատասխանատու Հայկուհի Մոկոյանը կազմակերպել են միջֆակուլտետային միջոցառում՝ ներկայացնելով աշխարհագրության բաժնի ուսանողներին դեկորատիվ-կիրառական բաժնի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը: Այդ բաժնի ուսանողները ներկայացրել են իրենց աշխատանքները՝ վերլուծելով դրանք: Կերպարվեստի ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանն անցկացրեց սեմինար՝ դեկորատիվ-կիրառական արվեստի հիմունքները թեմայով:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի և կերպարվեստի ամբիոնի նիստերի ժամանակ կերպարվեստի ամբիոնի դոցենտ Հայկուհի Մուկոյանը և դասախոս Նաիրա Մխիթարյանը ներկայացրել են Շվեցարիայի Ցյուրիխ քաղաքի Արվեստների համալսարանում ուսանողների հետ անցկացրած մանկավարժական պրակտիկայի հաշվետվությունը, կազմակերպել են կերպարվեստի ամբիոնի ՊԴ կազմի համար սեմինար՝ ներկայացնելով Շվեցարիայի Ցյուրիխ

քաղաքի Արվեստների համալսարանի կերպարվեստ բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը:

Ներքին շահակիցների համար գործում է հարցումների համակարգ: Հարցումներն իրականացվում են առցանց հարցաթերթերի օգնությամբ՝ «Դասախոսն ուսանողի աչքերով», որոնցով պարզում ենք ուսանողների բավարարվածությունը: Հարցումն իրականացվել է ընդհանուր սկզբունքով, որակի բաժնի կողմից հեռահար տարբերակով, որոնց արդյունքներին ծանոթացել են որակի բաժնի ղեկավարը և աշխատակիցները, ֆակուլտետի որակի պատասխանատուն, ով իրակացրել է հարցումների արդյունքների վերլուծություն: Վերլուծությունը բաղկացած է եղել տվյալ բաժնում ընդգրկված հարցերի պատասխանների քանակական և որակական վերլուծություններից ու ուսանողի կողմից արված առաջարկություններից և դրանց վերլուծություններից: Հիմնականում բակալավրիատի բոլոր դասախոսների մասին ուսանողների կարծիքը եղել է բավարար, լավ և գերազանց: Մագիստրատուրայի բաժնի դասախոսների մասին ուսանողների կարծիքը եղել է հիմնականում լավ և գերազանց: Միայն կերպարվեստ բաժնի դասախոսերից մեկի մասին եղել է բացասական կարծիք:

Գեղարվեստային կրթության ֆակուլտետի պատասխանատու Հ. Մուկոյանը ներկայացրել է հարցումների արդյունքները, վերլուծությունը և ուսանողների առաջարկները գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդին, ամբիոնի վարիչներին և որակի պատասխանատուներին: Իրականացվել են քննարկումներ ամբիոնի վարիչների և որակի պատասխանատուների հետ: Ամբիոնի վարիչները իրականացնելու են որոշ դասախոսների մոտ դասալսումներ և հանդիպումներ որոշ խմբերի հետ, փորձելու են շտկման ուղիներ գտնել: «Դասախոսն ուսանողի աչքերով» բակալավրիատի կուրսերի ուսանողների հարցումների մանրամասն վերլուծությունը ներկայացված է որակի ապահովման և կառավարման բաժին, իսկ մագիստրատուրայի կուրսերի ուսանողների հարցումների մանրամասն վերլուծությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝

https://docs.google.com/document/d/1cYoSBDgo4yZPmfxfieqHHlZc8vmtkxMegGxJmF08VAA/edit
Ուսանողները հարցումների վերջում կատարել են շենքի վերանորգման և գույքի ու տեխնիկայի նորացման առաջարկներ: Նաև առաջարկել են, որպեսզի դասախոսները դասապրոցեսում կիրառեն նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ: Ուսանողները առաջարկել են կերպարվեստի ամբիոնին ավելացնել մասնագիտական ընտրովի առարկաներ, ինչպես նաև՝ ընտրովի առարկաներ ժամանակակից տեխնիկայի կիրառմամբ:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի աշխատանքի որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված են ներքին և արտաքին շահակիցները, հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցներ, քոլեջներ, ուսումնարաններ, սակայն այդ բնագավառը կարիք ունի առավել ընդլայնման և համագործակցության արդյունավետության բարձրացման, ինչն ավելի լայն հնարավորություններ կընձեռի ապագայում ուսանողներին աշխատանքով ապահովելու գործում:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի ձևավորման հարցում մասնակից են ամբիոնների որակի ապահովման պատասխանատուները, դասախոսները, արտաքին շահակիցները՝ ՀՀ գիտության ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, ՀՀ գիտության ակադեմիայի արվեստի ինստիտուտի գիտ. քարտուղար, արվեստագիտության թեկնածու Մերի Կիրակոսյանը, Գևորգ Չաուշի անվան №188 դպրոցի և

ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի ուսուցիչ Ռուզաննա Փիլիպոսյանը, և ներքին շահակիցներից՝ երաժշտական կրթություն բաժնի II կուրսի ոսանողուհի Լիանա Հարությունյանը, կերպարվեստի բաժնի III կուրսի ոսանողուհի Լաուրա Մկրտչյանը և մշակույթաբանության բաժնի III կուրսի ոսանողուհի Սուսաննա Գևորգյանը:

Բոլոր շահակիցները մասնակցում են գեղարվեստական կրթության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նիստերին: 2021-2022 թվականների IX-րդ նիստին քննարկվել է ՄԿԾ-երի բովանդակությունը: Եվ արտաքին և ներքին շահակիցները նշել են, որ անհրաժեշտ է վերանայել ծրագրի նպատակի ձևակերպումը և կրթական ելքային արդյունքները, քանի որ լիարժեք ձևակերպված չէր նպատակը, մասնագիտական գիտելիքը, իմացությունն ու գործնական մասնագիտական կարողությունները: Վերանայել ենք բոլոր ՄԿԾ-երի բովանդակությունը, նպատակը և կրթական ելքային արդյունքները: Այդ գործընթացին մասնակցել են նաև արտաքին և ներքին շահակիցները: 2022-2023 թվականների գեղարվեստական կրթության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի II-րդ նիստին քննարկվել է ՄԿԾ-երի վերամշակված բովանդակությունը և լսել են հանձնաժողովի անդամների կարծիքները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը տարիներ շարունակ երաժշտական կրթության բաժնի մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ է, գրախոսում է ատենախոսություններ և մագիստրոսական թեզեր: Գևորգ Չաուշի անվան №188 դպրոցի և ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի ուսուցիչներ Ռուզաննա Փիլիպոսյանը, Նաիրի Բալաբեկյանը կազմակերպել են ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի աշակերտների աշխատանքների ցուցահանդես գեղարվեստական կրթության ֆակուլտետի ցուցասրահում: Այդ ցուցահանդեսների միջոցով կապ է հաստատվում ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի աշակերտների և գեղարվեստական կրթության ֆակուլտետի բաժինների ուսանողների միջև, ինչը նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը:

Հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը սահմանում է ՈԱ հիմնական գործառույթները՝ ՈԱ չափորոշիչների, գործընթացների և ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորությունների և առաջարկների տրամադրում:

Ինչպես նշվեց վերևում, գեղարվեստական կրթության ֆակուլտետում, ամբիոններում ՈԱ գործընթացներն արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով ՀՊՄՀ բոլոր 10 ֆակուլտետներում 2013 թ.- ին ստեղծվել են ֆակուլտետների Որակի ապահովման մշտական հանձնաժողովներ, որոնց հաշվետու են ամբիոնի ՈԱ հանձնախումբը, և որի հիմնական գործառույթներն են.

-ՈԱ հարցերի վերաբերյալ ֆակուլտետի խորհրդին երաշխավորությունների ներկայացում,

- ուսումնական ծրագրերի և դասընթացների համապատասխանեցում մասնագիտական 164 կրթական չափորոշիչների պահանջներին,

- ուսանողական հարցումների արդյունքների վերլուծում, քննարկում, և բարելավող միջոցառումների առաջարկում և այլն:

Ֆակուլտետը ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում՝
· Մանկավարժական և ուսումնաճանաչողական պրակտիկաների պաշտպանություններ:

· Պրակտիկաների շրջանակներում ԿԾ նպատակներից, առաքելությունից, խնդիրներից բխող համատեղ սեմինարներ, ցուցահանդեսների կազմակերպում և այլն:
· Ֆակուլտետի խորհրդի նիստեր:
· Ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նիստեր:
· Ավարտական որակավորման հանձնաժողովներ:
Հուշագրերի, համաձայնագրերի կնքում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
դասախոսների մասնագիտական պատրաստվածություն, գիտական ներուժ	երիտասարդ դասախոսների պակաս
ներգրավվածություն մասնագիտական որակավորման խորհուրդներում	շենքային անբավարար պայմաններ (4-րդ մասն.)
ցուցասրահ-լսարանների առկայություն (ցուցադրությունների քանակի աճ)	
միջֆակուլտետային միջոցառումների ակտիվացում	
դպրոցների հետ համագործակցության ընդլայնում	
Հնարավորություններ	**Վտանգներ**
համալրել նյութական բազան (գտնել հովանավորներ)	ուսանողների թվի պակաս, որը բխում է թվարկված թույլ կողմերից
ակտիվ միջազգայնացում	պատերազմ

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ամբիոնի աշխատանքային պլան Սեպտեմբեր

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. 2022-2023 ուս.տարվա աշխատանքային պլանները ամբիոնի դասախոսները ներկայացնեն հաստատման
3. Տրոհումները, Առարկայական նկարագրերը, ՄԿԾ-ների գրագետ կիրառումը մանրամասն ստուգել՝ համաձայն նորացված պահանջների
4. Կազմել ուսումնական պրակտիկայի աշխատանքային պլանը և տեղադրել այն էլեկտրոնային հարթակում
5. Ակտիվ մասնակցել Պատերազմում զոհված ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների հիշատակին նվիրված ցայտաղբյուրի բացման հանդիսավոր արարողությանը /մասնակցություն ցուցահանդեսին/:
6. Ակտիվ մասնակցել էլեկտրոնային հարթակում իրականացվող աշխատանքներին

7.Ամբիոնի դասախոս Լիլիթ Իսկոյանը Ուսուցիչների պարտադիր վերապատրաստման ծրագրի շրջանակներում որպես վերապատրաստող մասնագետ 2.09-22.10. 2022 հրավիրվել է վարելու «Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի դասընթացները:

Կազմվելու է դասալսումների ժամանակացույց: Անցկացված բաց դասերի տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուքյան էջում:

Հոկտեմբեր

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Ամբիոնի դասախոս Զարուհի Մալոյանը ՀՊՄՀ միջազգային բաժնի կողմից որպես փորձագետ՝ 9/10-15/10.2022 գործուղվելու է Աղավնաձորի հանգստյան տուն՝ մասնակցելու և կարծիք հայտնելու «Հայաստանի մարզային հանրակրթական դպրոցների արվեստի ուսուցիչների վերապատպաստում» ծրագրին
3. Հանձնարարել առաջին և երկրորդ կուրսի մագիստրոսներին, ավարտական կուրսերի ուսանողներին և ֆակուլտետի այլ ամբիոններում սովորող մագիստրոսներին /ըստ ցանկության/ ընտրել թեմաներ ամբիոնի կողմից պարբերաբար հրատարակվող ուսանողական հոդվածների ժողովածուում տպագրելու համար
4. Ամփոփել բակալավրիատի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի արդյունքները
5. Ուսանողական խորհրդի ուժերով 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպել էքսկուրսիա Մեծամորի, Շենգավիթի հնեաբանական թանգարաններ: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուքյան էջում
6. Ամբիոնի դասախոսների ուժերով 2022-2023 ուստարում կազմակերպել ուսանողների այցելություններ Երևանի թանգարաններ, նկարիչները միությունում, այլ մշակութային օջախներում կազմակերպվել ցուցահանդեսներ, արձագանքել համաքաղաքային, հանրապետական և միջազգային մշակութային իրադարձություններին: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում
7. Մագիստրոսական թեզերի և 4-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների /բակալավր -առկա, հեռակա/ թեմաները հաստատել և յուրաքանչյուրին նշանակել ղեկավար
8. Համապատասխան ժամանակացույցի՝ սկսել բաց դասերի գործընթացը: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում
9. Մագիստրոսների 2-րդ կուրսի գիտամանկավարժական պրակտիկայի նախապատրաստում

10. Չորրորդ կուրսի ուսանողները, դասախոս և կուրսղեկ Ս.Գրգորյանի ղեկավարությամբ պատրաստում են «Երևանի անցյալը, ներկան ու ապագան» խորագրով կրթական ծրագիր – դասախոսություններ, տեսանյութի դիտում, այցելություն Էրեբունի և Երևանի պատմության թանգարան, ցուցահանդես դպրոցում և ֆակուլտետի ցուցասրահում : Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում

Նոյեմբեր

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. 2022-2023 ուս.. տարիներում տպագրված և տպագրմանը ներկայացված գիտական հոդվածների տվյալները փոխանցել ամբիոնի մասնագետին
3. Ակտիվ մասնակցել ՀՊՄՀ-ի հոբելյանական միջոցառումներին
4. «Բաց դռների օր» միջոցառման շրջանակներում ընդունել Թերլեմեզյանի անվան մասնագիտական քոլեջի, Լեոյի անվան Ավագ դպրոցի սաներին և կրթական ծրագրի միջոցով գովազդել մասնագիտությունը: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում: Ամբիոնի ֆեյսբուկյան էջում տեղադրել նոր գովազդներ:
5. Խիստ հետևել մագիստրոսական թեզերի և դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքին

Դեկտեմբեր

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Նախապատրաստվել 1-ին կիսամյակի ստուգարք-քննությունների անցկացմանը
3. Մագիստրոսական թեզերի և դիպլոմային աշխատանքների հեղինակները ներկայացնեն հաշվետվություն՝ կատարված աշխատանքի վերաբերյալ
4. Երկրորդ կուրսի ուսանողուհի /մագիստրոս/ Վ.Գրիգորյանի և դասախոս Մ.Մկրտչյանի կողմից նախատեսված է՝ համաձայն մենեջմենթի օրենքների, կազմակերպել Շահումյանում գործող նկարչական դպրոցի սաների աշխատանքներից բաղկացած ցուցահանդես /Մանրանկարների կրկնորինակումներ/: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում:
5. Ամբիոնը նախատեսում է «Նարեկացի» մշակութային միությունում կազմակերպել «Ծանոթ և անծանոթ Բարդուղը» խորագրով ցուցահանդես, նվիրված հայ էքսպրեսիոնիզմի վառ ներկայացուցիչ՝ Բարդուղ Վարդանյանի ծննդյան 125 ամյակին: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուքյան էջում:

Հունվար

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Նախապատրաստվել 1 - ին կիսամյակի ստուգարք-քննությունների անցկացմանը

Փետրվար

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Մագիստրոսների 1-ին կուրսի գիտամանկավարժական պրակտիկայի նախապատրաստում
3. Հետևել մագիստրոսական թեզերի, դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքին
4. Ներկայացնել երկրորդ կիսամյակի առարկայական նկարագրերը, տրոհումները և հաստատել
5. Ծանոթանալ ստուգարք-քննությունների պարտքերի մարման գրաֆիկին

6. Հետևել մագիստրոսների հոդվածների վերջնական ձևակերպմանը, խմբագրական և սրբագրական աշխատանքների ընթացքին
7. Փետրվար ամսից սկսած յուրաքանչյուր ամիս դասախոսներից 2-3-ը պատրաստելու են զեկուցում՝ Արվեստի շուրջ խորագրով, 5 րոպե տևողությամբ: Տեսանյութերը տեղադրվելու են ամբիոնի ֆեյսբուքյան հարթակում:
8. Նախատեսվում է թվայնացնել դասախոսների կողմից հրատարակված հոդվածները, մենագրությունները, աշխատությունները:

Կազմվելու է դասալսումների ժամանակացույցը: Անցկացված բաց դասերի տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում:

Մարտ

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Մագիստրոսական թեզերի, դիպլոմային աշխատանքների հաշվետվություն
3. Նախապատրաստվել ուսանողական կոնֆերանսին /զեկուցումներ, ելույթներ, տեսահոլովակների դիտում/
4. Կատարել մագիստրոսական հոդվածներից բաղկացած ժողովածուն տպագրելու անհրաժեշտ աշխատանքները

Ապրիլ

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Կազմակերպել ուսանողական կոնֆերանսը: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուքյան էջում
3. Նախապատրաստվել դիպլոմային աշխատանքների նախնական պաշտպանությանը /առկա, հեռակա/
4. Նախապատրաստվել մագիստրոսական գիտական թեզերի նախնական պաշտպանությանը
5. Ամբիոնի դասախոսների ուժերով կազմակերպել ուսանողների այցելություններ Երևանի թանգարաններ, Նկարիչները միությունում, այլ մշակութային օջախներում կազմակերպվող ցուցահանդեսներ, արձագանքել համաքաղաքային, հանրապետական և միջազգային մշակութային իրադարձություններին: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում

Մայիս

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն /առկա/: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուկյան էջում
3. Մագիստրոսական գիտական թեզերի պաշտպանություն: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուքյան էջում
4. Նախապատրաստվել ավարտական կուրսերի ստուգարք-քննություններին

Հունիս

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Հեռակա բաժնի դիպլոմային աշխատանքների պաշտպանություն: Տեսանյութը տեղադրվելու է ամբիոնի ֆեյսբուքյան էջում

3. 2021-2022 ուստարում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն

Հուլիս

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/

2.Կազմել և հաստատել ընդունելության քննությունների հանձնաժողովի կազմը և համաձայն ընդունված ձևաչափի կազմակերպել քննություններ՝ բանավոր-Արվեստի պատմություն, գրավոր-Արվեստի տեսություն

3.Կազմել հաջորդ՝ 2023-2024 ուս. տարվա ծանրաբեռնվածությունը և ներկայացնել

հաստատման

Օգոստոս

1. Ամբիոնի նիստ. անդրադառնալ ուսումնական, կազմակերպչական հարցերին, քննարկել ծառացած խնդիրները /քաղվածք/
2. Ամբիոնի դասախոսներին ներկայացնել 2023-2024 ուս. տարվա հաստված ծանրաբեռնվածութունը
3. Առաջին կիսամյակում դասավանդվող յուրաքանչյուր դիսթիպլինի համար կազմել Առարկայական նկարագիր, Տրոհում և համապատասխանեցնել էլեկտրոնային հարթակի նորացված ձևաչափերի
4. Կազմակերպել մագիստրոսների ընդունելությունը
5. Ծանոթանալ նոր դասացուցակին, լուծարքների գրաֆիկին
6. Նախապատրաստվել բակալավրիատի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի անցկացմանը
7. Ծանոթանալ ամբիոնում դասալսումների գրաֆիկի ժամանակացույցին և նախապատրաստվել
8. Կազմել 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հաստատված առարկայական ծրագրերով կազմվել են քննական հարցաշարեր, կատարվել է առարկայական նկարագրերի վերանայում և առարկաների թվային տարբերակի տեղադրումը համալսարանի կայքում և Classroom համակարգում, հաստատված գրաֆիկի համաձայն ամբիոնի վարիչի կողմից ուսումնական տարում կազմակերպվել են դասալսումներ:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ուսանողների գնահատման կարգը տեղի է ունենում ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգով , որն ապահովում է ակադեմիական ազնվությունը: Գնահատման թափանցիկությունն ապահովելու նպատակով վերը նշված գործառույթներից շատերը տեղի են ունենում ամբիոնի աշխատակիցներից կազմված հանձնաժողովի ներկայությամբ / քննությունների անցկացում, պրակտիկայի, կուրսային աշխատանքների պաշտպանություն և այլն/:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատման հարցը: 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և քննական հարցաշարերի հաստատման հարցը: Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Արփինե Սարգսի Թորիկյանի ատենախոսության խորագրի հաստատման հարցը: Մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոց այցերի կազմակերպման հարցը: Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների նախապաշտպանության հարցը: Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների բակալավրիատ 4-րդ կուրսի ուսանողների նախապաշտպանության հարցը: Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների հեռակա բակալավրիատ 5-րդ կուրսի ուսանողների նախապաշտպանության հարցը: Classroom էլեկտրոնային հարթակի երկրորդ կիսամյակի մշտադիտարկման հարցը: Դասախոսների 2022-2023 ուստարվա ծանրաբեռնվածության հարցը: Ամբիոնում դասավանդվող առարկաների 2022-2023 ուս. տարվա ԱՈՒՓ.ների, առարկայական տրոհումների, միջանկյալ, ամփոփիչ ստուգման հարցաշարերի հաստատման հարցը: Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների առկա բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների հարցը: Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտության առկա և հեռակա ուսուցման կուրսերի կուրսղեկերի նշանակման հարցը: ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպչական հարցերի քննարկման հարցը: Ամբիոնի կողմից հրատարակվող հոդվածների ժողովածուի քննարկման հարցը: Classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարման հարցը: Ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումների քննարկման հարցը: Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող բաց դասերի քննարկման հարցը: Ամբիոնի կողմից վերահսկվող, դասախոսների կողմից կազմակերպվող այցերի ու ծրագրերի իրականացման հարցը թանգարաններում և մշակութային վայրերում:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
N 7 24.01.2022	2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատման հարցը:	Առարկայական նկարագրերի ու թեմատիկ տրոհումների հաստատում:
N 7 24.01.2022	2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և քննական հարցաշարերի հաստատման հարցը:	Միջանկյալ գրավոր աշխատանքների ու քննական հարցաշարերի հաստատում:
N 7 24.01.2022	Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Արփինե Սարգսի Թորիկյանի ատենախոսության խորագրի հաստատման հարցը:	Ատենախոսության «Սարգիս Խաչատուրյանի արվեստը- վերաբերյալ՝ խորագրի հաստատում:
N 8 04.02.2022	Մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոց այցերի կազմակերպման հարցը:	Ծրագրի շրջանակներում միջոցառումների պլանավորում դպրոցների, աշակերտների և ուսուցիչների հետ հանդիպումներ:
N 9 04.02.2022	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների նախապաշտպանության հարցը:	Ընդդիմախոսների հաստատում և ուսանողներին պաշտպանության թույլատվություն:
N 10 21.03.2022	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների բակալավրիատ 4-րդ կուրսի ուսանողների նախապաշտպանության հարցը:	Ընդդիմախոսների հաստատում և ուսանողներին պաշտպանության թույլատվություն:
N 11 16. 05. 2022	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների հեռակա բակալավրիատ 5-րդ կուրսի	Ընդդիմախոսների հաստատում և ուսանողներին պաշտպանության թույլատվություն:

	ուսանողների նախապաշտպանության հարցը:	
N 12 16. 05. 2022	Classroom էլեկտրոնային հարթակի երկրորդ կիսամյակի մշտադիտարկում	2021-2022 ուստարվա էլեկտրոնային հարթակի վիճակի բավարար համարում:
N 1 29. 08. 2022	Դասախոսների 2022-2023 ուստարվա ծանրաբեռնվածության հարցը:	
N 1 29. 08. 2022	Ամբիոնում դասավանդվող առարկաների 2022-2023 ուս. տարվա ԱՈՒՓ.ների, առարկայական տրոհումների, միջանկյալ, ամփոփիչ ստուգման հարցաշարերի հաստատման հարցը:	Առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերի հաստատում:
N 2 06. 09. 2022	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների առկա բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների հարցը:	Արվեստի տեսություն, պատմության և կառավարում, մշակութաբանություն մասնագիտության առկա բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքի բավարար համարում: 3-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան տեղի ունեցավ սեպտեմբերի 13-դեկտեմբերի 20-ը /շաբաթական 1 անգամ/ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ: Պրակտիկայի շրջանակներում. 1-ին շաբաթ • Ծանոթացում թանգարանային ցուցադրությանը-Կինո և գրականություն • Անհատական աշխատանք 2-րդ շաբաթ • · Ծանոթացում թանգարանային ցուցադրությանը-Թատրոն և սփյուռք • Անհատական աշխատանքի կատարում

		3-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանային ցուցադրությանը-Մարկոս Գրիգորյան • Անհատական աշխատանքի կատարում 4-րդ շաբաթ • · Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . մարկետինգի բաժին • Անհատական աշխատանքի կատարում 5-րդ շաբաթ • · Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . Մ.Հարոյան • Անհատական աշխատանքի կատարում 6-րդ շաբաթ • · Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . հանրային կապերի բաժին • Անհատական աշխատանքի կատարում 7-րդ շաբաթ • · Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . կրթական ծրագրերի ներկայացում • Անհատական աշխատանքի կատարում 8-րդ շաբաթ • Մասնակցություն "Տաշիր արտ" ցուցադրության աշխատանքներին • Անհատական աշխատանքի կատարում 9-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . գրադարան • Անհատական աշխատանքի կատարում 10-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . թատրոնի բաժին • Անհատական աշխատանքի կատարում 11-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . կինոի բաժին

		• Անհատական աշխատանքի կատարում 12-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . երաժշտության բաժին • Անհատական աշխատանքի կատարում 13-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին . ձեռագրատուն • Անհատական աշխատանքի կատարում 14-րդ շաբաթ • Անհատական աշխատանքի կատարում 15-րդ շաբաթ • Անհատական աշխատանքի կատարում Թղթապանակի գնահատում 4-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, սեպտեմբերի 12-հոկտեմբերի 21-ը: Ղեկավարներ՝ Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում - Ս. Մելիքյան, Մշակութաբանություն - Ս. Հովհաննիսյան: Պրակտիկայի շրջանակներում. 1-ին շաբաթ • Պրակտիկայի կոնֆերանս • Հանդիպում գիտական գծով փոխտնօրեն՝ Կ.Մաթևոսյանի հետ /Մատենադարանի հիմնադրումը և գործառույթները/ 2-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանային ցուցադրությանը • Անհատական աշխատանքի կատարում 3-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի գիտական բաժինների աշխատանքին /հանրային կապեր/ • Անհատական աշխատանքի կատարում

		4-րդ շաբաթ • Ծանոթացում թանգարանի ռեստավրացիոն բաժնի աշխատանքին • Անհատական աշխատանքի կատարում 5-րդ շաբաթ • Մասնակցություն ժամանակավոր ցուցադրությանը • Անհատական աշխատանքի կատարում 6-րդ շաբաթ • Գործնական աշխատանք- կրթական ծրագրերի ներկայացում • Անհատական աշխատանքի կատարում Թղթապանակի գնահատում
N 2 06. 09. 2022	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտության առկա և հեռակա ուսուցման կուրսերի կուրսղեկերի նշանակման հարցը:	Կուրսղեկերի ցանկի հաստատում:
N 3 10. 10. 2022	ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպչական հարցերի քննարկման հարցը:	Ծրագրերի կազմում, ժամանակացույցի հստակեցում:
N 4 07.11.2022	Ամբիոնի կողմից հրատարակվող հոդվածների ժողովածուի քննարկման հարցը:	Ուսանող-դասախոս բաշխում, հոդվածների թեմաների հստակեցում:

N 4 07.11.2022	Classrroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարման հարցը:	Աշխատանքներ տանել առկա թերացումների շտկման ուղղությամբ:
N 4 07.11.2022	Ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումների քննարկման հարցը:	Դասալսումների արդյունքում ակնհայտ է, որ դասապրոցեսը համապատասխանում է ակնկալվող պահանջներին:
N 4 07.11.2022	Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող բաց դասերի քննարկման հարցը:	Բաց դասերի շարունակական լինելու որոշում:
N 4 07.11.2022	Ամբիոնի կողմից վերահսկվող, դասախոսների կողմից կազմակերպվող այցերի ու ծրագրերի իրականացման հարցը թանգարաններում և մշակութային վայրերում:	Միջոցառումների իրականացում, որոնք կնպաստեն մասնագիտության տարածմանը:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	7	2	2	7	4	2	1	25
Համատեղող	1			2	1			3
Ժամավճարային								
Ընդամենը								

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:

2022 թվականին Արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի աշխատակիցների կողմից հրապարակվել են գրքեր, հոդվածներ, մասնակցություն են ունեցել գիտաժողովների, ինչպես նաև ամբիոնն է կազմակերպել սեմինար/ քննարկումներ, նաև հրատարակել ուսանողական հոդվածների ժողովածու: 2022թ-ում ամբիոնն իրականացրել է ուսումնական պրոցեսի յուրաքանչյուր օղակի կազմակերպումն ու անցկացումը. այն է՝ ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի կատարում, կիսամյակային միջանկյալ գրավոր աշխատանքների, ստուգարքների և քննությունների անցկացում, ուսումնական, մասնագիտական պրակտիկաների կազմակերպում, ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանություն, մագիստրոսական թեզերի պաշտպանություն, ԱՈՒՓ-ների վերանայում և վերահաստատում:

2022-2023 ուս. տարվա Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում ու Մշակութաբանություն բաժինների մագիստրոսական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում:

Ստորև ներկայացնում ենք մագիստրոսական թեզերի հաստատված թեմաները.

Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում

2022-2023 ուս. տարվա

մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաներ

1. Ասատրյան Զարուհի Հարությունի , Մոդեռնիզմի արձագանքները հայ կերպարվեստում /20-րդ դար/ /ղեկավար՝ Ա. Առաքելյան Ա. Առաքելյան, /արվ. գ.թ./
2. Խաչատրյան Մարգարիտա Աղասիի, Տիրամոր կերպարը խորհրդահայ արվեստում, /ղեկավար՝ Վ. Գամաղելյան, ասիստենտ/
3. Երիցյան Աննա Արթուրի, Խորհրդահայ կերպարվեստի ստեղծագործությունների վաճառքի առանձնահատկությունները համաշխարհային կայքերում , /ղեկավար՝ Ա. Բաղդասարյան, արվ. գ.թ., դոցենտ/

Մշակութաբանություն

2022-2023 ուս. տարվա

մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաներ

1. Հովսեփյան Գոհար Գևորգի, Սիսիանի պատմամշակութային հուշարձանները, /ղեկավար՝ Ս. Աղաջանյան, բան. գ.դ., պրոֆեսոր/

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
							3		10

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Դասախոսները ուսանողների հետ միասին մասնակցել են Մատենադարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Քանաքեռում գտնվող Խ. Աբովյանի տուն-թանգարանում անցկացվող սեմինար-գիտաժողով-դասախոսությունների, ծրագրեր են իրականացվել Հայաստանի ազգային պատկերասրահի, Ե.Չարենցի գրականության և արվեստի թանգարանի, Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Երևանի դպրոցների հետ: Դասախոս-ուսանող համագործակցության շրջանակներում կազմվել են կրթական ծրագրեր և իրականացվել:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Հրատարակվել է ''Մշակութային անցուդարձ'' Պրակ V մագիստրոսական հոդվածների ժողովածուն, որի շրջանակներում տեղի է ունեցել միջոցառում/կոնֆերանս: Ամբիոնի կողմից իրականացվել է 10 սեմինար, ինչպես նաև Մատենադարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Խ. Աբովյանի տուն-թանգարանի, Ե. Չարենցի գրականության և արվեստի թանգարանի, Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Երևանի դպրոցների հետ տեղի են ունեցել համատեղ միջոցառումներ, կրթական ծրագրերի կազմում և իրագործումներ: Կազմակերպվել են դասախոսություններ, միջոցառումներ:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնի մագիստրոսներին հանձնարարվել էր գրել հոդվածներ՝ ''Երևանի մշակութային առօրյան'' թեմայով: Լավագույն հոդվածները հրատարակվեցին ամբիոնի կողմից հրատարակված նույնանուն ժողովածուում: Մեկ այլ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ դասախոսություն-սեմինար-քննարկում, որի շրջանակներում ուսանողները ներկայացան իրենց հետազոտություններով: Ինչպես նաև տեղի ունեցավ ծրագիր, որի շրջանակներում Երևանյան դպրոցների աշակերտները

ծանոթացան Գեղարվեստական կրթության ֆակուլտետին, Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնին մասնավորապես: Ծրագրի շրջանակներում իրականացվեց բաց դաս, որի ժամանակ դասախոսությամբ հանդես եկան ամբիոնի աշխատակազմը: Միջոցառմանը մասնակից եղան նաև ամբիոնի ուսանողները:

Ամբիոնի դոցենտ Լիլիթ Իսկոյանը Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպեց «Մեկ քայլ դեպի արվեստ» մրցույթը, որը վարեցին նույն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները:

Ամբիոնի դասախոս Զարուհի Մալոյանը ՀՊՄՀ միջազգային բաժնի կողմից որպես փորձագետ՝ 9/10-15/10.2022 գործուղվեց Աղավնաձորի հանգստյան տուն՝ մասնակցելու և կարծիք հայտնելու «Հայաստանի մարզային հանրակրթական դպրոցների արվեստի ուսուցիչների վերապատպաստում» ծրագրին:

Նարեկացի արվեստի միությունում դեկտեմբերի 14-ին ամբիոնը կազմակերպեց Բարդուխ Վարդանյանի ցուցահանդեսը՝ նվիրված նկարչի 125 ամյակին:

Ուսանողական խորհրդի ուժերով 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվեց էքսկուրսիա Մեծամորի, Շենգավիթի հնեաբանական թանգարաններ: /Տեսանյութը տեղադրվել է ամբիոնի ֆեյսբուկյան էջում/

Դասախոս ուսանող համագործակցության շրջանակներում, ամբիոնի դասախոս Մանե Մկրտչյանը Մշակութաբանություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Գրիգորյան Վարդուհու, Կերպարվեստի ամբիոնի ուսանող Տաթևիկ Հարությունյանի հետ Մշակութային միջոցառումների կազմակերպում առարկայի շրջանակներում ֆակուլտետի ճեմասրահում կազմակերպեց "Անցյալն ապագայի աչքերով" մանկական ցուցահանդեսը: /Տեսանյութը տեղադրվել է ամբիոնի ֆեյսբուկյան էջում/:

Ամբիոնի մասնագետ Ռուզան Անանյանը և ամբիոնի հայցորդ Արփինե Թորիկյանը դեկտեմբերին մասնակցեցին Ձմեռային դոկտորական դպրոց ծրագրին:

Ամբիոնի դասախոս Լիլիթ Իսկոյանը Ուսուցիչների պարտադիր վերապատրաստման ծրագրի շրջանակներում որպես վերապատրաստող մասնագետ 2.09-22.10. 2022 հրավիրվեց վարելու «Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» առարկայի դասընթացները:

Պարբերաբար բաց դաս-դասախոսությամբ հանդես են եկել ամբիոնի դասախոսները, որոնց մասնակցել են ինչպես բուհի ուսանողները, այնպես էլ դպրոցի աշակերտները: Բաց դաս-դասախոսություն՝ «Բյուզանդական մշակույթը Ստամբուլում» խորագրով:Ստորև ներկայացնում ենք մի քանիսը. /Տեսանյութը տեղադրվել է ամբիոնի ֆեյսբուկյան էջում/

«Բյուզանդական մշակույթը Ստամբուլում», դասախոս՝ Սերգեյ Աղաջանյան (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

«Երուսաղեմի հայկական մշակութային հուշարձանները», դասախոս՝ Արամ Համբարյան (արվեստագիտության թեկնածու, դոցենտ)

«Էքսպրեսիոնիզմը եվ մոդեռնիզմը սովետահայ կերպարվեստում՝ Քնարիկ Վարդանյան, Գոհար Ֆերմանյան, Լավինիա Բաժբեուկ-Մելիքյան, Պետրոս Կոնտուրաջյան», դասախոս՝ Աշոտ Առաքելյան (արվեստագիտության թեկնածու)

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
	Կիրառական			
դրամաշնորհային (Կերպարվեստի նախագծեր)	նախագծի հեղինակ և համակարգող	ՀՀԿԳՄՍՆ		Ա.Բաղդասարյան

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
-			

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Մանե Մկրտչյան	<<Լուսաբաց>> գրական-գեղարվեստական ժողովածուի նկարչական բաժինը Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 15-րդ նստաշրջան	10 էջ
Լիլիթ Իսկոյան	Գյումրի քաղաքի պատմամշակութային կառույցները	13 էջ
Բաղդասարյան Արմինե	Մերի Երզնկյան. Արվեստաբան -մանկավարժ	9 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ

Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Մշակութային անցուդարձ	ՀՊՄՀ

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
-			

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
-			

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
-			

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Աշոտ Առաքելյան	Ամատունի Էլեն	Պետական Տրետյակովյան պատկերասրահի հայկական գանձերը	Մշակութային անցուդարձ, V պրակ
Վարդիթեր Գամաղելյան	Բադալյան Ռուզաննա	Հավքակերպ աղամանները հայկական մշակույթում	Մշակութային անցուդարձ, V պրակ
Սամվել Հովհաննիսյան	Գասպարյան Լիլի	Ազգային մշակույթի մերօրյա խնդիրների շուրջ /2015-2021 թթ. /	Մշակութային անցուդարձ, V պրակ
Զարուհի Մալոյան	Գրիգորյան Հասմիկ	Խմբապարից մենապար /էթնիկ պարի հոգեբանության վերափոխում/	Մշակութային անցուդարձ, V պրակ

Սաթենիկ Մելիքյան	Գրիգորյան Վարդուհի	Գեղարվեստական կրթության ֆակուլտետի շուրջ 60-ամյա գործունեությունը մանկավարժական համալսարանի 100-ամյա պատմության մեջ	Մշակութային անցուդարձ, V պրակ
Սերգեյ Աղաջանյան	Գրիգորյանց Սիմա	Հեղինակային տիկնիկի ուղին. կուռք արձանիկից մինչև ժամանակակից դեկորատիվ արվեստի ինքնատիպ ստեղագործություն	Մշակութային անցուդարձ, V պրակ
Կարեն Մաթևոսյան	Իսկոյան Լաուրա	«N 1 արտ դիլերը» աշխարհում	Մշակութային անցուդարձ, V պրակ
Նարե Նադարյան	Խոջումյան Անուշ	Կոմիտաս Վարդապետի գծանկարները	Մշակութային անցուդարձ, V պրակ
Նարե Նադարյան	Ղազայան Շողիկ	Շնչառությունից բազմաձայնություն	Մշակութային անցուդարձ, V պրակ
Սյուզաննա Գրիգորյան	Մակարյան Մարիետա	«Մաչանենց» թատրոն	Մշակութային անցուդարձ, V պրակ
Մանե Մկրտչյան	Մանուկյան Հասմիկ	Վիլյամ Սարոյանի պատմվածքների հայերեն թարգմանությունները	Մշակութային անցուդարձ, V պրակ
Լիլիթ Իսկոյան	Նալբանդյան Լենա	Մշակութային նորությունների լուսաբանումը վիրտուալ հարթակներում	Մշակութային անցուդարձ, V պրակ
Արմինե Բաղդասարյան	Վիրաբյան Արտեմ	Միջնադարյան ոուշարձանների ավերումը Շխմուրատի /Շախմուրատ/ վանք	Մշակութային անցուդարձ, V պրակ

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)

Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի աշխատակազմը 2022 թվականին կազմակերպեց և իրականացրեց հադիպումներ ավագ դպրոցի աշակերտների հետ: Ծրագրի ընթացքում ներկայացվեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետը, Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դերն ու գործունեությունը: Աշակերտների հետ կապն առավել ամրապնդելու նպատակով տեղի ունեցան հանդիպում-դասախոսությունների շարք Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Ամբիոնի բոլոր դասախոսների կողմից իրականացվեցին բաց դասերի շարք, որոնց ներկա էին և բուհի ուսանողությունը, դպրոցների աշակերտները: Ստորև ներկայացնում ենք Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներ կատարած այցերիցանկը: 1. Երևանի թիվ 94 ա/դ, 06.12.22 /Ա. Համբարյան, Զ. Մալոյան/ 2. Երևանի թիվ 2 ա/դ, 07.12.2022 /Զ. Մալոյան, Վ. Գամաղելյան/ 3. Երևանի թիվ 105 ա/դ, 08.12.2022 /Լ. Իսկոյան, Ս. Գրիգորյան/ 4. Երևանի թիվ 109 ա/դ, 14.12.2022, /Լ. Իսկոյան, Ս. Գրիգորյան/ 5. Երևանի թիվ 97 ա/դ, 15.12.2022, /Վ. Գամաղելյան, Ա. Առաքելյան/ 6. Երևանի թիվ 10 արհեստագործական պետական ուսումնարան, 16.12.2022, /Ա. Առաքելյան, Ա. Համբարյան/ 7. Գեղարքունիքի մարզ, 9.12.2022, /Ա. Համբարյան/ Այցելությունների արդյուքնում դպրոցների աշակերտների պատկերացում կազմեցին և հետաքրքրություն ցուցաբերեցին ամբիոնի մասնագիտությունների վերաբերյալ: /Հանդիպումների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված են ամբիոնի ֆեյսբուքյան էջում/: «Բաց դռների օր» միջոցառման շրջանակներում Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունները գովազդելու նպատակով Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնը ընդունեց Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի, Լեոյի անվան Ավագ դպրոցի սաներին: Հյուրընկալվողները շրջայց կատարեցի ֆակուլտետի ցուցասրահ-լսարաններում, ներկա գտնվեցին դասախոսություններին, որից հետո իրականացվեց զրույց-քննարկում: /Տեսանյութը տեղադրվել է ամբիոնի ֆեյսբուկյան էջում/:

Մեր ուսանողներ Աշխեն Գրիգորյանը, Լենա Մանուչարյանը և Լիլիթ Մանուչարյանը, Կոտայքի մարզի Ակունք համայնքի միջնակարգ դպրոցում վարել են բաց դաս՝ «Դասական երաժշտական նվագարաններ» խորագրով: Նպատակը՝ ամբիոնի մասնագիտությունների հանրայնացումն է:

Ամբիոնի տարեվերջյան ցուցադրությունը կրեց «Էրեբունուց Երևան» խորագիրը: Այն իրականացվել է Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի արվեստի տեսություն, պատմություն և կառավարում բաժնի 4-րդ կուրսի ուսանողների և Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմնական դպրոցի սերտ համագործակցության արդյունքում: Ուսանողների և խմբի պրակտիկայի ղեկավար Սյուզաննա Գրիգորյանի կողմից մշակվել է կրթական ծրագիր, որի նպատակն է աշակերտներին ներկայացնել Երևան քաղաքի անցյալ ու ներկան, ինչպես նաև զարգացնել աշակերտների ստեղծագործական միտքը: Ծրագիրն իրականացվել է երեք փուլով՝ առաջինում աշակերտները ծանոթացան Երևանի հիմնադրման պատմությանը, այնուհետև կազմակերպվեց այցելություն Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, որտեղ երեխաներին ներկայացվեցին պատմանշակութային արժեք ներկայացնող ցուցանմուշներ: Ծրագրի հաջորդ փուլում դասարանային պայմաններում աշակերտներին ցուցադրվեցին առավել հայտնի Երևանյան հուշարձանները, իսկ վերջում հանձնարարվեց ստեղծագործական աշխատանք՝ «Ապագա Երևանը» իրենց պատկերացմամբ: Այդպիսով, ուսանողները փորձեցին կապել Երևանի անցյալը, ներկան և ապագան: Համատեղ աշխատանքի արդյունքները արդեն իսկ ներկայացվել են Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմնական դպրոցում՝ թվով 41 աշխատանք և դրանցից ընտրել են 25-ը ֆակուլտետի ցուցասրահում ներկայացնելու համար: Նախաձեռնությունը ողջունելի է, քանի որ մտահաղացումն ու իրականացումը երիտասարդ մասնագետներինն է: /Տեսանյութը տեղադրվել է ամբիոնի ֆեյսբուկյան էջում/:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Սաթենիկ Մելիքյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, փետրվար
	Արա Հակոբյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, փետրվար
Մեթոդական	Լիլիթ Իսկոյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, ապրիլ
	Սյուզաննա Գրիգորյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, ապրիլ
	Արամ Համբարյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, ապրիլ
Դաստիարակչական	Աշոտ Առաքելյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, ապրիլ

	Վարդիթեր Գամաղելյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, ապրիլ
	Արմինե Բաղդասարյան	Մասնագիտության կողմնորոշում	2022, ապրիլ

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
	Սյուզաննա Գրիգորյան Լիլիթ Իսկոյան	Կրթական ծրագրերի կազմում և իրագործում	2022, նոյեմբեր

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի որակի պատասխանատուն ամբիոնի դոցենտ Լիլիթ Իսկոյանն է: Նա մասնակցել է որակի հետ առնչություն իրականացվող բոլոր սեմինար-քննարկում-ժողովներին, ծրագրեր իրականացրել ամբիոնում և ուսանողների շրջանում: Որակի վարչությունը ուսանողների շրջանում կազմակերպել էր դասախոսների գնահատում, օնլայն անանուն հարցում: Ամբիոնի վարիչ Ս. Մելիքյանը ծանոթացավ ստացված արդյունքներին, որտեղ առկա էին որոշ դժգոհություններ:Ս. Մելիքյանըիրականացրեց հանդիպումներ ուսանողների հետ, քննարկեց հարցը պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որից հետո տեղի ունեցան մի շարք դասալսումներ՝ իրավիճակը բարելավելու ուղղությամբ: Նախատեսվում են համահամալսարանական առարկաների դասալսումներ ևս:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
(տեքստը այստեղ)

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Պարբերաբար հանդիպումներ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ՊԴԱ-ի	Լիլիթ Իսկոյան	Էլեկտրոնային հարթակի առաջխաղացում

հետ Classroom-ի հետևողականությունն ու որակն ապահովելու նպատակով:	Սյուզաննա Գրիգորյան Ռուզան Անանյան	
Պարբերաբար հանդիպումներ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ՊԴԱ-ի հետ Classroom-ի հետևողականությունն ու որակն ապահովելու նպատակով:	Լիլիթ Իսկոյան Սյուզաննա Գրիգորյան Ռուզան Անանյան	Էլեկտրոնային հարթակի առաջխաղացում

Կերպարվեստի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
2022 թ-ին Կերպարվեստի ամբիոնը իրականացրել է ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի վերանայում, մանկավարժական, ուսումնական և մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպում, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն, մագիստրոսական թեզերի պաշտպանություն, հայցորդների ատեստավորում, կիսամյակային սփուգարքների և քննությունների անցկացում: Ամբիոնն ուշադրություն է դարձնում գիտական աշխատանքների և մեթոդական թեմաների ճիշտ ընտրությանը, որոնք բարձրացնում են կերպարվեստի ուսուցման ժամանակակից խնդիրները: *Իրականացվել են վարպետաց դասեր, բացօթյա նկարչության պարապմունքներ և պլեներներ:*
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները, մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման

ուսումնասիրումները քննարկումները,դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքները, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը:

.Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը, նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը

.Ժամանակակից մանկավարժական, գեղարվեստական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Նախքան միջանկյալ ստուգումը ուսանողներին տրվել են հարցաշարեր կամ համապատասխան առաջադրանքներ, որոնք տեղադրվում են classroom կայքում, որը հնարավորություն է տալիս ուսանողներին նախապես ծանոթանալ հարցաշարերին, առաջադրանքներին և գնահատման համակարգին, նպաստելով գնահատման թափանցիկությանը: Աշխատանքները ներկայացվում են ցուցադրության տեսքով: Գնահատմանը մասնակցում եմ ՝ ամբիոնի վարիչը, դասախոսը և առարկային տիրապետող այլ դասախոս:

. Գործնական պարապմունքների արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով ամբիոնը կազմակերպում է բաց դասեր, պլեներային պարապմունքներ

. Ռեֆերատ, կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման համար ամբիոնում առկա են համապատասխան գնահատման բաղադրիչները, որոնք նույնպես նախապես տրվում են ուսանողներին:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցեր

- *2021-2022ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում :*
- *Լավագույն կրթական փորձի փոխանցման մեխանիզմների ստեղծում՝ ապահովելով համալսարանի առաջատար դերը ՀՀ կրթական համակարգում:*
- *Առարկայական նկարագրերի և թեմատիկ պրոհմանների նոր ձևաչափին համապատասխան ստեղծումը:*
- *Կրթական ոլորտում ակադեմիական շարժունակության և միջազգային համագործակցության հնարավորությունների ստեղծում:*

- *Պրակտիկաների կազմակերպման, քննարկման հարց:*
- *Համագործակցային միջավայրի ստեղծում ինչպես լսարանում, այնպես էլ լսարանից դուրս:*
- *ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպումը:*
- *Ավարտական աշխատանքների նախապատրաստում:*
- *Բաց դասերի կազմակերպումը:*
- *Մանկավարժական և ուսումնական պրակտիկայի ընթացքի վերահսկում:*
- *Դասախոսական և ուսանողական ցուցահանդեսների կազմակերպումը:*
- *Համագործաքցություն դպրոցների հոտ:*
- *Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն ԴԿՄ և Կերպարվեստ բաժնում:*
- *Հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի ատենախոսական աշխատանքի ղեկավարներ փոփոխման և հաստատման հարցը*
- *Ամբիոնի դեցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ժաննա Լևուշի Խաչատրյանի «Նախադպրոցական անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով մեթոդական ուղեցույցը հրատարակման ներկայացնելու հարցը:*
- *Կերպարվեստի ամբիոնի դասախոս Ժաննա Լևուշի Խաչատրյանի պրոֆեսորի գիտական կոչման հարցը:*
- *Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ և Դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսերի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների թեմաների հաշվետվություն:*
- *Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ, Դեկորատիվ կիրառական արվեստ, Հագուստի մոդելավորում մասնագիտությունների բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ղեկավարների նշանակման հարցը:*

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները

Արձ.6, 2022.03.14	Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն ԴԿԱ և Կերպարվեստ:	2021-2022 ուս.տարվա մագիստրոսական ատենախոսության ընթացքը համարել բավարար և պատրաստվել վերջնական պաշտպանությանը:
Արձ.7, 2022.04.15	1.Ավարտական աշխատանքների նախապատրաստում:	1. 2021-2022 ուս.տարվա ավարտական աշխատանքների ընթացք համարել բավարար և պատրաստվել վերջնական պաշտպանությանը:
Արձ.8, 2022.05.6	Ամբիոնի դեցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ժաննա Լևուշի Խաչատրյանի «Նախադպրոցական անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով մեթոդական ուղեցույցը հրատարակման ներկայացնելու հարցը:	Հաշվի առնելով պաշտոնական գրախոսների Լ. Ներսիսյանի, Մ. Ավագյանի դրական կարծիքը և ամբիոնի քննարկման արդյունքը երաշխավորել Ժաննա Լևուշի Խաչատրյանի «Նախադպրոցական անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով աշխատությունը երաշխավորել հրատարակման: 2. Ներկայացնել այն ֆակուլտետի խորհուրդ, վավերացման համար:
Արձ.9, 2022.06.20	1.Հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի ատենախոսական աշխատանքի ղեկավարներ փոփոխման և հաստատման հարցը 2. Հայցորդ Շուշան Քոչարյանի ատենախոսական աշխատանքի ղեկավարներ փոփոխման և հաստատման հարցը	1. Հաստատել հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի ատենախոսության ղեկավար մանկավարժական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին : 2. Հաստատել հայցորդ Շուշան Քոչարյանի ատենախոսության ղեկավար մանկավարժական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին :
Արձ.10, 2022.06.28	1.Կերպարվեստի ամբիոնի դասախոս Ժաննա Լևուշի Խաչատրյանի պրոֆեսորի գիտական կոչման հարցը:	Բաց քվեարկություն կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնապահ՝ 0 Ժաննա Լևուշի Խաչատրյանի պրոֆեսորի գիտական կոչման հարցը ներկայացնել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

Արձ.11, 2022.07.28	1.2022-2023 ուս.տարվա առաջին կիսամյակի առարկայական նկարագրերի և առարկաների թեմատիկ տրոհումների քննարկում:	1. Արձակուրդների ժամանակ պարբերաբար հանդիպել և քննարկել այն ամենը ինչը հնարավոր է դիտվի բացթողում:
Արձ.1, 2022.08.25	**1.** 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի կազմակերպչական աշխատանքների ընթաց 2. 2021-2022 ուս.տարվա 1-ին կիսամյակի ուսումնական ծանրաբեռնվածություն: 3. Ընթացիկ հարցեր:	1. 2022-2023 ուս.տարվա կազմակերպչական աշխատանքների ընթացքը համարել բավարար: 2. 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ուսումնական ծանրաբեռնվածությունը և դրույքաչափերը համարել բավարար
Արձ.2, 2022.09.16	**1.** 2022-2023 ուս.տարվա առաջին կիսամյակի առարկայական նկարագրերի և առարկաների թեմատիկ տրոհումների քննարկում: 2. 2022-2023 ուստարվա 1-ին կուրսի մագիստրոսական ատենախոսությունների խորագրերի քննարկում	1.2022-2023 ուստարվա 1-ին կուրսի մագիստրոսական ատենախոսությունների խորագրերի քննարկում: **2.** Հաստատել ներկայացված խորագրեը և ներկայացնել ուսանողներին:
րձ.3, 2022.10.15	**1.** 2022-2023 ուստարվա 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկում : 2.Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ և Դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտությունների մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարների հաստատման հարցը: 3.Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ, Դեկորատիվ կիրառական արվեստ, Հագուստի մոդելավորում մասնագիտությունների բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ղեկավարների նշանակման հարցը:	1.Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ և Դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտությունների մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարների հաստատման հարցը: 1. Հաստատել առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ և Դկա մասնագիտությունների մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարներին: 3.Ելույթ ունեցողները ներկայացրեցին առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ, Դեկորատիվ կիրառական արվեստ, Հագուստի մոդելավորում մասնագիտությունների բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ղեկավարներին:

Արձ.4, 2022.11.25	**1.**Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ և Դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսերի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների թեմաների հաշվետվություն: **2.** Առկա ուսուցման 2022-2023 ուստարվա Կերպարվեստ, Դեկորատիվ կիրառական արվեստ, Հագուստի մոդելավորում մասնագիտությունների բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների թեմաների, ղեկավարների և էսքիզների հաստատման հարցը:	1. 2022-2023 ուստարվա մագիստրոսական ատենախոսությունների թեմաների ընթացքը համարել դրական: 2. 2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների թեմաների ընթացքը համարել դրական :

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	9	2	7	7	7	4	12	31
Համատեղող							1	
Ժամավճարային								-
Ընդամենը	9	2	7	7	7	4	12	31

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
• Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են մի շարք հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ: • Դասախոսները մասնակցել են գիտաժողովների: • Հաշվետու տարում ամբիոնն իրականացրել է ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի վերանայում, վերամշակում, կիսամյակային միջանկյալ աշխատանքների,

ստուգարքների, քննությունների անցկացում, ինչպես նաև իրականացվել են ուսումնական, ուսումնամեթոդական, մանկավարժական, պլեներային (ֆակուլտետի խորհրդով հաստատված), մասնագիտական, մանկավարժահետազոտական պրակտիկաներ:

- Կատարվել են ավարտական, կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն:
- Հաստատվել են 2022-2023 ուս տարվա մագիստրոսական թեմաները, ինչպես նաև նշանակվել են ղեկավարներ:
- Ամբիոնի դասախոսները արժանացել են բազմաթիվ պատվոգրերի, շնորհակալագրերի, մրցանակների:
- Ամբիոնի դասախոսները մասնակցություն են ցուցաբերել համալսարանի 100-ամյակին նվիրված մի շարք ցուցահանդեսների:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
					3 (ԿԶՆԱԿ հիմնադրամ)

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
	6	3				1	2		2

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Դասախոս - ուսանող համագործացության շրջանակներում կազմվել են մի շարք մշակութայնին, կրթական ծրագրեր, որոնք իրականացվել են ինչպես մանկավարժական այդպես էլ ստեղծագործական պրակտիկաների շրջանակում: Կազմակերպվել են վարպետած դասեր, որի շնորհիվ ուսումնական գործընթացը դառնում է ավելի թափանցիկ և ուսանողակենտրոն:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
12.05.2022թ Աննա Դավթյանի ղեկավարությամբ տեղի ունեցավ ցուցադրություն՝ հագուստի մոդելավորում բաժնի 2-րդ կուրսի ուսանողների «Կիրառական զարդարվեստ» և «Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա» դասընթացների շրջանակներում: 07.06.2022 թ. *Սոնա Սագրադովանի* ղեկավարությամբ տեղի ունեցավ *հագուստի մոդելավորում բաժնի 3-րդ կուրսի և դեկորատիվ-կիրառական արվեստ 2-րդ կուրսի ուսանողների «Գործվածքի դիզայն» դասընթացի շրջանակներում կատարված աշխատանքների ցուցադրություն:*
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնի մ. գ.թ դոցենտ Եղիազարյան Գ. և դասախոս Դավթյան Ա. 05.10.2022- 21.12.2022թ մասնակցել են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն կողմից կազմակերպած «Մշակութային շարժական արժեքների մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության հիմունքների» դասընթացին: Ասիստենտ Այվազյան Լ. 2022թ-ին մասնակցել է «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ դասավանդման մեթոդականություն» 12 շաբաթ դասընթացին ՅՈՒՆԵՍԿՕԻ -ի կողմից երաշխավորված Curriculun GlobALE չափորիշիչի վրա:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
—				
—				
	Կիրառական			
դրամաշնորհային (Կերպարվեստի նախագծեր)	հեքիաթների նկարազարդում	ՀՀԿԳՄՄՆ		Մ.Մելքոնյան Է.Մուրադյան

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Եղիազարյան Անուշ	iScience, Актуальные научные исследования в современном мире, научноисследовательский журнал	25-30
Եղիազարյան Անուշ	Հոդվածի- Հայբուսակ համ. Հասարակական գիտություններ	143-147
Մարոնյան Հռիփսիմե	Հայագիտական հանդես	216-223
Սևադա Սարգսյան	Կերպարվեստ 2, ուսումնական նյութեր (2-րդ կիսամյակ): ԿՋՆԱԿ հիմնադրամ: «Աստղիկ գրատուն» հրատ.- Երևան	30 էջ
Սևադա Սարգսյան	Կերպարվեստ 5, ուսումնական նյութեր (2-րդ կիսամյակ): ԿՋՆԱԿ հիմնադրամ: «Աստղիկ գրատուն» հրատ.- Երևան	18 էջ
Սևադա Սարգսյան	Կերպարվեստ 7, ուսումնական նյութեր (2-րդ կիսամյակ): ԿՋՆԱԿ հիմնադրամ: «Աստղիկ գրատուն» հրատ.- Երևան	28 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Շվեցարական ծրագրին մասնակցած դասախոսների կողմից Դասախոսներ ՝ Մուկոյան Հ. (մ.գ.թ, դոցենտ), Մխիթարյան Ն.	Գեղարվեստական կրթության ֆակուլտետ, օր ՝ 10.04.2022թ
Պլեներ - սեմինար	Աղավնաձոր օր ՝04.12.2022թ

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Կարեն Աղամյան	Սանկտ Պետերբուրգ	12.07.2022	Դիպլոմ
Մարոնյան Հ.	ՀՊՄՀ	02.02.2022-23.02.2022	Հավաստագիր
Եղիազարյան Գ.	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	05.10.2022-21.12.2022	Հավաստագիր
Այվազյան Լ.	ՀՊՄՀ	02.02.2022-23.02.2022	Հավաստագիր
Մուկոյան Հ.	ՀՊՄՀ	02.02.2022-23.02.2022	Հավաստագիր
Կարեն Աղամյան	Մոսկվա	16.08.2022-21.08.2022	Դիպլոմ
Դավթյան Ա.	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	05.10.2022-21.12.2022	Հավաստագիր
Այվազյան Լ.	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ	07.07.2022–13.11.2022	Հավաստագիր
Կարեն Աղամյան	Եվրասիական արվեստի միություն	02.01.2022-09.01.2022	Դիպլոմ

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ

Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական	Կերպարվեստ	1	Լավագույն ուսանող- երրորդ տող ¦Մելիքսետյան Գ.
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Երիտասարդ արվեստագետների փոխանակում ծրագրի իրականացումը տեղի ունեցավ Յուրիխի ամենամեծ գեղարվեստի (ZHdK, գերմ.՝ Zürcher Hochschule der Künste), համալսարանի և հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համատեղ աշխատանքով: Տոնի Արեալ համալսարանը ձևավորվել է Յուրիխի արվեստի և դիզայնի դպրոցի (HGKZ), երաժշտական, դրամատիկական ու պարի դպրոցի (HMT) միավորման արդյունքում: Այն համարվում է կիրառական գիտությունների համալսարանի չորս փոխկապակցված համալսարաններից մեկը: Հագեցած ծրագրի շրջանակներում ունեցել են զբոսանք Յուրիխով, շրջայց Տոնի Արեալ համալսարանում: Շրջայց Վիադուկտ՝ խորվաթական ինժեներական ընկերություն, որը մասնագիտացած է կամուրջների, թունելների և ճանապարհային ճարտարագիտության ոլորտներում, Ֆրեյթագ որտեղ ներկայացվում էր դադաիստների գաղափարները՝ դժգոհությունները ընդեմ բռնության: Այցելություն Լեցբուրգի Stapferhaus թանգարան «Gender» ցուցահանդես, շրջայց Լյուցեռնում, Բյուլախի համալսարանում, Յուրիխի հին ու նոր քաղաքում: Ծրագրի շրջանակներում Շվեցարական կողմը ծանոթացրեց համալսարանի ղեկավարների՝ Փիթեր Թրունգերի և Անդրեաս Վոգելի հետ: Արդրեաս Կոլին կազմակերպեց ուղղորդող շրջայցեր Տոնի Արեալի արվեստի, գրադարանի, նյութերի ցուցադրա-ճանաչողական տարածքներում: Ներկայացրեցին կրթական համակարգը: Դպրոցներն ունեն ուսումնական ծրագրի ձևանմուշ, ուսուցիչը կարող է փոփոխման ենթարկել միայն ուսումնական հաստատության խորհրդի թույլատրությամբ: Կրթական ծրագրերում հիմնական ուշադրությունը և ուղղվածությունը սևեռված էր սովորողի ստեղծագործական մտածողության կատարման զարգացման վրա: Շվեցարիայի տարբեր կանտոններում դպրոցները նախատեսված են սահմանված որոշակի տարիքի երեաների

համար: Բյուլախի դպրոցում սովորում են 13 տարեկանից մինչև 19 տարեկան, իսկ Բադենի դպրոցում՝ 15-ից 19 տարեկան աշակերտներ: Նրանց դպրոցը համարվում է գիմնազիա, որտեղ սովորում են երեք փուլով, ստանաում են «Մատուրա» վկայական և ունեն հնարավորություն ընդունվել ցանկացած համալսարան առանց քննության, բացառությամբ բժշկական և արվեստի բնագավառները: Յուրաքանչյուր փուլ փոխադրվելու համար հանձնում են քննություն, բարձր գնահատականներ հավաքելու դեպքում հաջորդ փուլ անցնում են առանց քննության:

Ունեցել են հանդիպում հիմնադրամի ղեկավարի, ֆինանսավորող կողմի և ծրագրի գործող մասնակիցների՝ Դագմար, Ուրսուլա, Սանդրա Սուտեր, Պրիսկա և թարգմանիչների հետ: Կազմակերպվել է ծանոթացում, քննարկում, ծրագրի ներկայացում: Համալսարանի դասախոսները տարբեր ինտերակտիվ մեթոդներով անցկացրել են դասապատրաստումներ շվեցարացի և հայ ուսանողների հետ, նրանց կողմից ընտրված թեմաներով, դպրոցում դասավանդելու համար:

Բադենի ավագ դպրոցում անցկացվել է գործնական վարպետության դասեր, դասալսումներ 4 տարբեր խմբերի մոտ: Հայ և շվեցարացի ուսանողները համատեղ քննարկումների և վերլուծությունների արդյունքում պատրաստել են դաս չորս հոգանոց խմբերով: Վարել են երկօրյա ակտիվ դասընթաց Բյուլախի ավագ դպրոցի նախապես ընտրված 4 դասարաններում: Ունեցել են աշխատանք երկու խմբերով ZHdk-ում Kulturagent-ի հետ: Լսել են Կունստեհաու Յյուրիխ՝ դասախոսություն «Զրույց ուսուցիչների համար»: Ներեկայացրել են Կլուպ Կոլեչով ֆիլմի դիտում: Հայկական կողմը գրականության ինստիտուտում ներկայացրել է հայոց տառերի մշակույթը և կարևորությունը ծրագրի ղեկավար, «artasfoundation» շվեցարական արվեստի հիմնադրամի կոնֆլիկտային տարածաշրջաններում Հայաստանի ներկայացուցիչ՝ Շողակաթ Մլկե Գալստյանը, հայ ուսանողների և հայաստանի դասախոսների ակտիվ մասնակցությամբ: Թանգարաններում անցկացվել են ուսուցողական, վերլուծական ներկայացումներ ցուցասրահներում ներկայացվող աշխատանքների և թեմաների շուրջ: Կազմակերպվել են հետադարձ քննարկումներ յուրաքանչյուր այցելության և դասի ներկայացման, անցկացման հետ կապված: Ուսանողների և մեզ համար հետաքրքիր փորձ էր նոր և հագեցած տեխնոլոգիաներով և բավարար հնարավորություններով ուսումնական միջավայրում նոր մոտեցումների ուսումնասիրությունը և մեր գիտելիքի, փորձի կիրառումը:

Մեկ դասախոսության շրջանակներում ներկայացրել եմ գործվածքի դիզայն առարկան, նրա կարևորությունների մասին և կարճ գործնական մեկ առաջադրանքի միջոցով անցկացրել խմբային աշխատանք, որի արդյունքները տեղափոխել եմ Հայաստան մեր համալսարանի ուսանողների հետ գործնական փորձ դասը շարունակելու և ավարտին հասցնելու համար: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ընթրիքներ հայ և շվեցարացի ներկայացուցիչների կողմից, որոնց ընթացքում քննարկվել և ներկայացվել են սոցիալական և ազգային մտածելակերպը, վերլուծությունները, ներկայացումները, մատուցումները: Ծրագիրը կարևոր և բովանդակալից է: Շվեցարիայի ուսումնական հաստատությունները հագեցած են և ապահովված ազատ հարմարավետ, հաճելի, արդյունավետ ուսուցման և ստեղծագործական աշխատանքներ կատարելու համար: Այն հետաքրքրությունն ու նոր մեթոդները որոնք տեսանք և ուսումնասիրեցինք Շվեցարիայում, հնարավորություն տվեց համեմատելու, արժևորելու, նորամուծություններ անելու, վերանայելու, հիմնավորելու կրթությունը, կրթական և ազգային արժեհամակարգը:

Դասավանդման նմանատիպ ձև կանցկացնեմ նոր ուստարվա ընթացքում: Կներկայացնեմ այս ուսումնառության ընթացքում ուսումնասիրած և վերլուծած մեթոդները բաց դասի միջոցով՝ համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար: Հիմնավորելու և ներկայացնելու այդ մեթոդների արդյունավետությունը և հետաքրքիր ստեղծագործ մոտեցումները:

Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Ճանաչողական և մասնագիտական կողմնորոշման շրջանակներում համալսարան են այցելել

1. Երևանի Զարդակիրառական ուսումնարանի սաներ
2. Հայ-Չինական բարեկամության դպրոցի աշակերտներ
3. Հովի. Թումանյանի թանգարան, «Զարդ» մշակութային ՀԿ
4. Փ. Թերլեմեզյանի անվան պետական քոլեջի ուսանողներ
5. Պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար այցեր է ունենում ՀՀ հանրակրթակա դպրոցներ և ուսումնարաներ ներկայացնում համալսարանը և ֆակուլտետը
6. Ֆակուլտետի ցուցասրահում կազմակերպվել են մի շարք ցուցահանդեսներ, որոնց հիմնական կազմակերպիչները եղել են ֆակուլտետի շրջանավարտները, ովքեր աշխատում են մասնագիտական և հանրակրթական հաստատություններուն
7. «Էմ Արթ» ստուդիայի սաներ
8. *Nonna ArtStudio-ի* սաներ

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
	Շվեյցարիա				

Համագործակցային միջազգային ծրագրեր

Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Եվրասիական արվեստի միություն	Մոսկվա	02.01.2022-09.01.2022	Կարեն Աղամյան
Սլա-Պրիամ	Ղազախստան	15.03.2022-29.03.2022	Արթուր Մարտիրոսյան
Միջազգային ֆորում	Լիտվա	03.09.2022-17.09.2022	Արթուր Մարտիրոսյան
Նկարիչների սիմպոզում	Վրաստան	22.06.2022-25.06.2022	Արթուր Մարտիրոսյան
Նկարիչների ցուցահանդես	Սանկտ Պետերբուրգ	12.07.2022	Կարեն Աղամյան

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Այվազյան Լ.	ՀՊՄՀ	22.02.22-22.03.23	Հավաստագիր
Մուկոյան Հ.	ՀՊՄՀ	22.02.22-22.03.23	Հավաստագիր
Մարոնյան Հ.	ՀՊՄՀ	22.02.22-22.03.23	Հավաստագիր

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:

❖*28.04.2022թ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ցուցասրահում կայացավ բուհի շրջանավարտ Նկարիչ Սևադա Գրիգորյանի անհատական ցուցահանդեսը:*

❖*24.05.202թ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ցուցասրահում կայացավ բուհի շրջանավարտ, «Էմ Արթ» ստուդիայի գեղարվեստական ղեկավար Մանվել Մկրտչյանի սաների աշխատանքների ցուցահանդեսը:*

❖ *01.06.2022թ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ցուցասրահում կայացավ «Գիտրակ մանուկ» մանկական կենտրոնի սաների նկարչական աշխատանքների ցուցադրություն կազմակերպիչ ՝ ֆակուլտետի շրջանավարտ Անահիտ Ադամյան:*

❖ *Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ցուցասրահում 12.10.2022թ.-ին բացվեց մեր շրջանավարտ-ուսուցիչ Nonna ArtStudio-ի ղեկավար՝ Նոննա Դավթյանի և իր սաների աշխատանքների ցուցահանդեսը: 7-ից -18 տարեկան ստուդիայի աշակերտների աշխատանքները :*

❖ *Երևանի N 194 հիմնական դպրոցում 23.10.2022թ-ին կայացավ կերպարվեստ բաժնի պրակտիկան, որի շրջանակում ուսանողները 5 և 6-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ կազմակերպեցին ցուցահանդես .*

❖ *12.11.2022թ կայացավ Երևանի թիվ 39 հիմնական դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների լավագույն աշակերտների աշխատանքների ցուցադրություն.. Ցուցադրությունը կայացավ ուսուցիչ, մեր շրջանավարտ Արևիկ Հարությունյանի շնորհիվ.*

❖ *08.12.2022թ-ին տեղի է ունեցել դեկորատիվ-կիրառական արվեստ բաժնի ուսանողնական աշխատանքների ցուցահանդես,*

❖ *Կապի ստեղծման նպատակով 10.12.2022թ ֆակուլտետը հյուրընկալել էր Հայ-Չինական բարեկամության դպրոցի սաներին.*

Դիտեցին ֆակուլտետի ցուցասրահ-լսարանները, մասնակցեցին վարպետաց դասերին;

❖ *Կապի ամրապնդման նպատակով 13.12.2022թ ֆակուլտետը հյուրընկալել էր Երևանի Զարդակիրառական ուսումնարանի ուսանողներին: Այցի ընթացքում ուսանողները շրջեցին ցուցասրահ - լսարաններում, արվեստանոցներում:*

❖ *Պրակտիկայի շրջանակում իրականացվել է ցուցահանդեսներ, որոնցից մեկը տեղի է ունեցել 21.12.2022թ Հովհ. Թումանյանի թանգարանի, «Զարդ» մշակութային ՀԿ-ի ղեկավար Եվգենիա Օհանյանի և դեկորատիվ-կիրական արվեստ և հագուստի մոդելավորում բաժինների ուսանողների պրակտիկայի ընթացքում կատարված ասեղնագործ աշխատանքները և կարևոր օրինակ հանդիսացող՝ դասավանդող վարպետների՝ Մարալ Շէօհլէյանի, Միդա Սանթուրյանի, Ծովակ Գանթարյանի, Իսկուհի Սարգսյանի նրբագեղ ստեղծագործությունները:*

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ

Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
–			
—			
Մեթոդական			
—			
–			
Դաստիարակչական			
Ցուցահանդես	Մարտիրոսյան Ա.	Գարուն	23.10.2022
Ցուցահանդես	Մուրադյան Է.	Հաշվետու ցուցահանդես	12.2022
Ցուցահանդես	Խաչատրյան Կ.	Ամփոփիչ ցուցադրություն	12.2022

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ցուցահանդես	ամբիոն	Սուրեն Ամիրյան. «Արվեստագետ, ով հավատարիմ է բնությանը»	13.04.2022
Ցուցահանդես	ամբիոն	Սևադա Գրիգորյանի անհատական ցուցահանդեսը Մանկավարժականում	28.04.2022
Ցուցահանդես	ամբիոն	Արվեստը՝ երեխաների աչքերով. ցուցահանդես Մանկավարժականում	24.05.2022
Ցուցահանդես	ամբիոն	Արմեն Հարությունյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդես	05.04.2022

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Որակի ապահովման արդյունավետության բարձրացման համար կատարվել են մշտադիտարկումներ կերպարվեստի ամբիոնի որակի պատասխանատուի և առաջատար մասնագետի կողմից: Կազմակերպվել են հանդիպումներ, սեմինար-քննարկումներ՝ վերհանելով առկա խնդիրները, որոնց հնարավոր լուծումները դիտարկվել և քննարկվել են ամբիոնի կողմից: Իրականացվել են հարցումներ ուսանողների շրջանում, որի արդյունքում ըստ ուսանողների կողմից տրված ընդհանրական գնահատականի բացահայտվել են ուսումնական գործընթացում ի հայտ եկած խնդիրները: Վերոնշյալ խնդիրների շտկումների համար կատարվել են համապատասխան աշխատանքներ պատասխանատու դասախոսների հետ, մասնավորապես, քննարկումներ, դասապրոցեսի մեթոդաբանական մոտեցումների լրամշակումներ, փոփոխություններ: Ամբիոնի աշխատանքների որակական զարգացման և ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով նման մոտեցումները հիմնավորված են, քանի որ խնդիրները դիտարկվում են բազմակողմանի, ինչպես դասախոսի, այնպես էլ ուսանողների կողմից: Առարկայական ծրագրերի համապարփակությունը, միմյանց փոխլրացնող առարկայական նկարագրերն ու ծրագրային դրույթները թույլ են տալիս համոզիչ կերպով հաստատել, որ նշված ուսումնական բազան ուսումնասիրած շրջանավարտը մանկավարժական հետագա գործընթացում կդրսևորի մասնագիտական բացառիկ որակական հատկություններ, ինչն էլ իր հերթին կբերի “Կերպարվեստ” առարկայի դերի վերաժևորմանը: Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում մասնակցել են հանրակրթական դպրոցի ‘‘Կերպարվեստ’’ առարկայի ուսուցչի կամավոր ատեստավորման թեստերի պատրաստմանը և դրա անցկացմանը. Սևադա Սարգսյան Դավիթ Հովհաննիսյան Հայկուհի Մուկոյան Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է համալսարանում և ֆակուլտետում կազմակերպվող քննարկումներին և դրանց հիման վրա 2022թ.-ին համալսարանի ռազմավարական ծրագրի ընդունումից հետո վերանայվել են ամբիոնում կատարված աշխատանքները՝ խստացվել է վերահսկողությունը Classroom էլեկտրոնային հարթակում, որը մշտապես քննարկվում է ամբիոնի նիստերում: Ուսանողների և դասախոսների ինքնավերլուծությունների հիման վրա որակի հանձնաժողովը և ամբիոնը կազմակերպել են քննարկումներ և՛ մասնագիտական և՛ ոչ մասնագիտական առարկաների գործունեության արդյունավետության վերաբերյալ: Դրա արդյունքում ակտիվանում է համագործակցությունը համալսարանի տարբեր ամբիոնների միջև, ինչի շնորհիվ բարձրանում է ընդհանուր կրթության արդյունավետությունը: Բանավոր և գրավոր հարցումների և դասալսումների արդյունքում ամբիոնը տեղեկանում է ուսանողների և դասախոսների ծավալած գործունեության արդյունավետության մասին, սակայն ավելի կարևոր է, երբ

կրթության որակը ստուգվում է մանկավարժական պրակտիկայի ընթացքում, երբ դպրոցներում դասալսումներ են իրականանում, ինչի հիման վրա դասախոսները վերանայում են իրենց ծրագրերը, ավելի ճիշտ են գնահատում ուսանողների մասնագիտական որակները և հնարավորությունները , որը բարձրացնում է մասնագիտական կրթության որակը:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հի մնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ամբիոնի գործունեության որակի ապահովման գործընթացում դիտարկվում են հնարավոր բոլոր մեթոդական-նորարարական առաջարկությունները, որոնք քննարկվում և լրամշակված կարգով ներդրվում են համապատասխան գործընթացներում: Մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար ենթարկվում են լրամշակումների, որի հիմքում ընկած են լավագույն առաջատար փորձը, ինչպես նաև դիտարկվում են բոլոր շահակիցների կողմից առաջ քաշված խնդիրները:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Մասնակցություն Սեմինար-քննարկումների:	Սարգսյան Սևադա	Էլեկտրոնային հարթակի առաջխաղացում, Թեմատիկ տրոհումների ր առարկայական նկարագրերի վերանայում:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հիմնականում փորձառու դասախոսական անձնակազմն է և ուսանողների հետ աշխատելու եռանդը: Գիտելիքներով կիսվելու ցանկությունը:	4-րդ մասնաշենքի անմխիթար պայմանները, նյութական բազային պակաս:
Հնարավորություններ	Վտանգներ

Հնարավորությունները սահմանափակվում են լսարանային ոչ լիարժեք կահավորանքի պատճառով:	Ուսանողների թվի պակաս, որը բխում է թվակված թույլ կողմերի թվակելուց:

Երաժշտության մանկավարժության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
2022թ.-ի օգոստոսի 29-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է հաշվետու տարում ամբիոնի ծավալը, որը կազմել է 26481 ժամ, իսկ նախորդ՝ 2021-2022 ուս. տարում եղել է 27951 ժամ: Հստակ երևում է 1470 ժամաքանակի նվազում, որը պայմանավորված է ինչպես դիմորդների թվի նվազման, այնպես էլ տարբեր կուրսերում ուսանողների՝ ուսուցման պրոցեսը դադարեցնելու հետ: ***Դիմորդների թվի նվազումն ըստ մեզ պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պայմաններով:*** • ***Ուսուցչի մասնագիտության գրավիչ չլինելու հետ,*** • ***Շենքային ոչ բավարար պայմաններով,*** • ***Նյութական ապահովվածության անբավարարվածությամբ (հնամաշ գործիքներ, հնամաշ գույք, սառը օդային պայմաններ և այլն):*** ***Ամբիոնը գտնում է, որ դիմորդների պրոֆեսիոնալ կողմնորոշման ուղղությանը նպաստելու համար հարկավոր է էլ ավելի ակտիվացնել այցելությունները դեպի համապատասխան ուսումնական հաստատություններ, ինչպես նաև դիմել բուհ-ի ղեկավարությանը՝ մասնաշենքի պայմանների բարելավման և նյութատեխնիկական հագեցվածության ուղղությամբ աշխատանքներ տանելու խնդրանքով:***
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ամբիոնում ստեղծված առարկայական նկարագրերում, թեմատիկ տրոհումներում մշտապես փորձ է արվում հեռավար միջոցներով ծանոթանալ այլ երկրների և այլ բուհերի ուսումնական գործընթացներին և ծագրերին և դրանք ներդնելով ուսումնական գործընթացում՝ բարձրացնել ուսուցման արդյունավտությունը և մոտիվացնել ուսանողներին, որպեսզի նրանք ևս ծանոթանան այլ բուհերում տեղի ունեցող գործընթացներին:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաներից մշակվել է գնահատման համակարգ, որի հիմքում դրված են այնպիսի մեթոդներ և չափանիշներ, որոնք հնարավորինս օբյեկտիվ են արտացոլում սովորողների գիտելիքները, կարողությունները, հմտությունները: **27.10.2022թ.-ի թիվ 2** ***ամբիոնի նիստում քննարկվել է այս հարցը և որոշվել է 2022-2023 ուսումնական տարում գնահատման համակարգի գործող տարբերակը թողնել նույնը, սակայն առաջիկայում, 2023-2024 ուսումնական տարվա համար նորից կվերանայվի հատկապես ընթացիկ սրուգումների և միջանկյալ սրուգումների գրավոր կամ բանավոր ձևով անցկացնելու հարցը:***
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Ամբիոնի նիստերում կատարվել են ուսումնական գործընթացի հիմնական հարցերի և խնդիրների քննարկումներ, վերլուծություններ, խորհրդատվություններ՝ ուղղված ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
19.04.22թ. N9	1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն: 2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:	1. Նիստի ընթացքում ներկայացվեց 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողներին և նրանց մագիստրոսական ատենախոսությունների թեմաների վերնագրերը: Ուսանողները ներկայացրին իրենց թեմաները, պատասխանեցին հարցերին: Արդյունքում որոշվեց 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունները դրական կարծիքով ներկայացնել պաշտպանության: 2. էլեկտրոնային հարթակում հիմնական աշխատանքները կատարվել են Classroom հարթակում տեղադրվող առարկայական

		նկարագրերում և թեմատիկ տրոհումներում որոշ կետերի վերանայման և փոփոխման ուղղությամբ: 1. Բոլոր առարկաներից վերանայվել են գրականության ցանկերը, 2. ներկայացվող ստեղծագործությունների ցանկերը, 3. անհատական առարկաներից կարևոր ուշադրություն է դարձվել ուսանողի անհատական ունակություններին և դրա զարգացմանը նպաստող համապատասխան ծրագրին, 4. յուրաքանչյուր ամսվա վերջում նաև ստուգվել են classroom հարթակում կատարվող աշխատաքները՝ համապատասխան ուսումնական նյութերի տեղադրումը, առարկայական նկարագրերի տեղադրումը,, էլեկտրոնային մատյանների կանոնավոր լրացումը: • Արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերում և որակի հանձնաժողովներում, ոչ այնքան պատասխանատու դասախոսներին նախազգուշացվել է իրենց թերությունների և բացթողումների մասին, որոնք ,արտացոլվել են ամբիոնի ամսական հաշվետվությունների մեջ::
23.06.22թ. N11	1. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:	1. Նիստում քննարկվեց 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պլանավորված դասալսումների գրաֆիկը: Արդյունքում որոշվեց դասալսումներ իրականացնել ներքոնշյալ դասախոսների մոտ. 2. Մադոյան Նաիրա - ''Սոլֆեջիո և երաժշտության տեսություն'' 1-ին կուրս: 3. Հակոբյան Արմինե - ''Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն'' 1-ին կուրս 4. Ալավերդյան Տիգրան - ''Նվագարան'' 3-րդ կուրս 5. Ադամյան Աննա - ''Նվագարան'' 4-րդ կուրս 6. Թադևոսյան Շաքե - ''Նվագարան'' 1-ին կուրս 7. Ավետիսյան Մարիաննա- ''Ձայնադրում'' 4-րդ կուրս 8. Օջախյան Արմինե - ''Ձայնադրում'' 2-րդ կուրս 9. Սայադյան Զարուհի - ''Ձայնադրում'' 2-րդ կուրս

		10. Կարապետյան Մերի-''Ձայնադրում'' 4-րդ կուրս 11. Պետրոսյան Սուսաննա- ''Խմբավարություն և խմբերգային դասարան'' 2-րդ կուրս 12. Մաթևոսյան Շուշանիկ- ''Խմբավարություն և խմբերգային դասարան'' 1-ին կուրս 13. Խաչիկյան Քրիստինե - 'Խմբավարություն և խմբերգային դասարան'' 3-րդ կուրս:
29.08.22թ. N1	1. 2022-2023 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:	1. 2021-2022 ուս. տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 27951 ժամ: Այլ ամբիոններին փոխանցված ժամաքանակ – 1434 ժամ Ժամավճար – 376 ժամ: Թափուր է մնացել 3065 ժամ: Արդյունքում գոյացած 23076 ժամը բաշխվել է ամբիոնի դասախոսների միջև:
19.12.22թ. N5	1.Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Հարությունյանի ատեստավորման հարցը: 2.Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Սերգեյ Խաչատրյանի ատեստավորման հարցը: 3. ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված կայանալիք միջոցառմանը՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի մասնակցության հարցը:	1. Նիստի ընթացքում նշվեց, որ Գայանե Հարությունյանը հաշվետու ժամանակահատվածում տպագրել է երկու հոդված, հանձնել է որակավորման բոլոր քննությունները և նրա թեկնածուական ատենախոսությունը՝ <<Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց>>, լիովին պատրաստ է պաշտպանության: Որոշվեց ատեստավորել հայցորդ Գայանե Հարությունյանին և նրա ատեստավորման հարցը դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ: 2.Իսկ հայցորդ Սերգեյ Խաչատրյանը մինչ օրս չի ներկայացել ամբիոն և չի հանդիպել գիտական ղեկավարի հետ: Որոշվեց չատեստավորել հայցորդ Սերգեյ Խաչատրյանին և նրա ատեստավորման հարցը բացասական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ: 3. Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նիստի ընթացքում նշեց, որ 100-ամյակին նվիրված միջոցառումը կկայանա Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում, որին

		կմասնակցեն երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները և ուսանողները:

Պրոֆեսորադասախոսական կազմը											
	Դոկտոր	Դոկտոր, պրոֆեսոր	Պրոֆեսոր	Պրոֆեսոր, գիտ. թեկ.	Գիտ.թեկն.	Դոցենտ, գիտ. թեկ.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Դասախոս, գիտ. թեկ.	Ընդ-ը
Հաստիքային	–	1	1	1	–	5	6	6	9	1	30
Համատեղող	–	–	1	–	–	–	–	–	–	–	1
Ժամավճարային	–	–	–	–	–	–	1	–	–	–	1
Ընդամենը	–	1	2	1	–	5	7	6	9	1	32

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ամբիոնի դասավանդվող առարկաների վերաբերյալ ստեղծվել է և շարունակվում է ստեղծվել ուսումնամեթոդական գրականություն (Ա.Հարությունյան, Գ.Մելիքսեթյան, Մ.Բաղդասարյան, Ա.Ադամյան, Յու.Յուզբաշյան, Ն. Բադալյան, Ա.Կոստանյան և այլոք):

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
–	3	2	–	–	8

–	–	–	–	–	–

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
4	–	–	–	–	–	–	–	–	5
–	–	–	–	–	–	–	–	–	–

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
–	–	–	–

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի հիմնական հետազոտական ուղղություններն են մեթոդական, ուսումնական և արվեստագիտական ուղղությունները: Մեթոդական ուղղություններն են երաժշտատեսական և երաժշտապատմական առարկաների ուսումնասիրումը, իսկ կատարողական ուղղություններն են նվագարանը, վոկալը և խմբավարությունը:
Ամբիոնի ՊԴԱ և ուսանողների գիտահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
• ***Ամբիոնի դասախոսները և ուսանողները հաշվետու տարում կատարել են գիտահետազոտական աշխատանքներ:*** 1. ***Ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դոկտոր Յուրի Յուզբաշյանը և ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը հաշվետու տարում մասնակցել են Ամբիոնի հայցորդ Նաիրա Յուրիի Վահանյանի ԺԳ.00.02 մասնագիտությամբ Մանկավարժական գիտությունների թեկնածուի հայցման համար՝ «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորումը ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսության նախնական պաշտպանությանը, որպես եռյակ խորհրդի անդամներ:*** • ***Ամբիոնի դասախոսները և ուսանողները համատեղ մասնակցել են Երևանի պետական կոնսերվատորիայի ամենամյա գիտաժողովներին՝ մասնակցությամբ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների.***

1. *Անի Վագրիկի Մանուչարյան-զեկույցի անվանում՝ ''Հանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մեթոդ'', մասնակցել է 20.05.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյան:*
2. *Շուշաննա Մարգպետի Գրիգորյան- զեկույցի անվանում՝ ''Երգեցողությունը՝ երեխաների ռիթմական զգացողության զարգացման միջոց'', մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյան:*
3. *Լալա Մանուկի Սիմոնյան- զեկույցի անվանում՝ ''Սոֆիա Ազնաուրյանի՝ երեխաների համար ''Չիկարելիի արկածները'' օպերայի երաժշտադաստիրակչական նշանակությունը'', մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան:*

- *Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում արժանացել են մրցանակների և սրացել սերտիֆիկատներ.*
    1. *Կոստանյան Արուսյակ Համազասպի - II Международный конкурс научных, учебно-методических и творческо-педагогических проектов <<Музыкальное образование-XXI>>. Номинация- <<Аранжировки, транскрипции, переложения>>. Сборник- <<Фортепианные переложения песен армянских композиторов>> (с методическими пояснениями)- Лауреат I степени. https://aspu.am/hy/content/hpmh_dasakhos_arusyak_kostanyany_arajin_kargi_mr canakir/?fbclid=IwAR155vzeP0QGrAxh5CkHwORGmuc1-RpxzljlNCzX-OMLQhTRR5QHFH7YFxw#sthash.0ieXjPLN.z5PJX9Ok.dpbs*
    2. *Հարությունյան Աննա Պետրոսի- Լիտվայի Vytautas Magnus համալսարանում հանդես է եկել դասախոսություններով 24.04.22թ.-ից 30.04-22-թ.ը և սրացել մասնագիտական որակավորման բարձրացման սերտիֆիկատ:*
    3. *Կարապետյան Մերի Համլետի- 2022թ.-ի հոկտեմբերի 27-28-ին Ռուսաստանում մասնակցել է ''Սրտումդ՝ Ռուսաստան'' միջազգային գիտաժողովին, հանդես է եկել <<Использование элементов армянской фольклорной музыки в джазовом и эстрадном жанре>> զեկույցով և սրացել է ՌԴ մշակույթի նախարարության ''Պրոֆեսիոնալ որակավորման բարձրացման'' հավաստագիր: https://aspu.am/hy/content/masnakcecin_srtumd_rusastan_mijazgayin_gitazhoghovin/?fbclid=IwAR1UbDD7L3LoWMe0F8faGNdEkqT1Od5bBzbwqzSlRUjT1VnrKph36u0sOws#sthash.OXmMm0m0.1NCyP4rz.dpbs*

- *Ուսանողները մասակցել են մրցույթների և օլիմպիադաների՝ ունենալով մեծ հաջողություններ.*

1. *Հովհաննիսյան Ռիպա- ներկայացրել է Հայաստանը 2022 թ.-ի հոկտեմբերի 27-28-ին Ռուսաստանում կայացած ''Սրտումդ Ռուսաստան'' միջազգային գիտաժողովի շրջանակներում և նույն ժամանակահատվածում կայացած համերգային ծրագրի գալա համերգի շրջանակներում Ռուսաստանի Ֆիլհարմոնիայի բեմում կատարել է հայկական հարսանեկան երգ-պար ''Թամզարա''-ն:*

   https://aspu.am/hy/content/masnakcecin_srtumd_rusastan_mijazgayin_gitazhoghovin/?fbclid=IwAR1UbDD7L3LoWMe0F8faGNdEkqT1Od5bBzbwqzSlRUjT1VnrKph36u0sOws#sthash.OXmMm0m0.1NCyP4rz.dpbs

2. *Մկրտչյան Սյուզաննա- 2022թ.-ի նոյեմբերի 22-ին Անահիտ Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոցում մասնակցել է ''Մոցարտ'' միջազգային մրցույթ-փառատոնին, ''Դաշնամուր'' անվանակարգում սրանալով 1-ին կարգի մրցանակ:*

3. Թալասյան Շուշանիկ- մասնակցել է ''Ազգային երգիչ'' հանրապետական մրցույթին, անցել է նախնական լսումների փուլը, Թափրոնի 1-ին և 2-րդ փուլերը և կիսաեզրափակչի workshop փուլը:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում ծավալել են հետազոտական գործունեություն՝ կազմակերպելով համերգ-սեմինարներ, որոնցում հստակ երևում է կապը ուսումնական գործընթացի հետ: Սրանց հիմքում ընկած է դասախոս-ուսանող ակտիվ փոխհամագործակցությունը, որն էլ հիմք է հանդիսանում հետագա ուսումնական գործընթացի բարելավման համար. 1. ***Հարությունյան Աննա- ''Հոգու խոստովանություն'' համերգ-սեմինար, որը կայացել է 2022թ.-ի ապրիլի 15-ին, ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում՝ դասախոս-ուսանող համագործակցության միջոցով: https://www.youtube.com/watch?v=ZBb3mijp7H8*** 2. ***Ադամյան Աննա- Դասարանական համերգ-քննարկում (կատարողական խնդիրներ և բեմական հուզմունքի հաղթահարում), մասնակցել են տարբեր կուրսերում սովորող ուսանողներ: Տեղի է ունեցել 2022թ.-ի մայիսի 31-ին ՀՊՄՀ-ի 4-րդ մասնաշենքի դահլիճում:*** 3. ***Կոստանյան Արուսյակ - «Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» երաժշտական աշխատության համերգ-սեմինար, որը կայացել է դասախոս-ուսանող ակտիվ փոխհամագործակցության միջոցով: Տեղի է ունեցել 2022 թ.-ի հոկտեմբերի 20-ին ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում: https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/?fbclid=IwAR3tq5BuR-WQrD-rpB8RU3MHOn-HV5__6655e3aQzpk7L6Q0HC9_JoHz0ds#*** 4. ***Ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ համերգ-սեմինար՝ նվիրված բուհ-ի 100-ամյակին: Տեղի է ունեցել 2022թ.-ի ապրիլի 19-ին Արամ Խաչատրյանի փուն-թանգարանի դահլիճում: https://www.youtube.com/watch?v=kQgjKmeDPWc*** 5. ***Անահիտ Գասպարյանի դասարանական համերգ-սեմինարը, որը տեղի է ունեցել 2022թ.-ի դեկտեմբերի 19-ին ՀՊՄՀ-ի 4-րդ մասնաշենքի դահլիճում:***

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
–	Հիմնարար	–	–	–
–	–	–	–	–
–	–	–	–	–
–	Կիրառական	–	–	–
–	–	–	–	–

–	–	–	–	–

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Ադամյան Աննա, Բաբայան Արմինե	«Լուիզա Զեյթաղյան. խմբավարը և մանկավարժը»:	ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2022	76 էջ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Բաղդասարյան Մարգարիտա	**«Творческая палитра композитора Юрия Геворкяна»** Երևան,''Երաժշտական Հայաստան'' հրատ.,	92-97 էջեր
Բաղդասարյան Մարգարիտա	**«Композитор Юрий Геворкян» (к юбилею композитора)** Երևան,''Հայ կոմպոզիտոր'' հրատ.,	45-49 էջեր,
Հարությունյան Աննա	**«Ալեքսանդր Սպենդիարյան երաժշտական դպրոցի պատմության էջերից»** ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ, ''Կանթեղ'' հրատ.	Տպագրության մեջ է
Հարությունյան Աննա	**''Ստեփան Լուսիկյան. դիմանկարի ուրվագծեր''** ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ, ''Կանթեղ'' հրատ.	15 էջ

Դադոյան Ելենա	**«Сценическое волнение и способы его преодоления»** СОВРЕМЕННАЯ НАУКА, ОБЩЕСТВО И ОБРАЗОВАНИЕ: АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ, ДОСТИЖЕНИЯ И ИННОВАЦИИ: сборник статей Международной научно-практической конференции. В 2 ч. Ч. 2. – Пенза: МЦНС «Наука и Просвещение». – 2022. – с. 104-108. МК-1452	5 ст.
Դադոյան Ելենա	**«ФОЛЬКЛОР В АРМЯНСКОЙ КУЛЬТУРЕ НОВЕЙШЕГО ВРЕМЕНИ»** XI Международная научно-практическая конференция «Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия», Институт филологии и межкультурной коммуникации Казанского федерального университета.	5 ст.
Կոստանյան Արուսյակ	**«ЛЮДВИГ ВАН БЕТХОВЕН, СОНАТА ОР.2 №3 C-DUR: МЕТОДИЧЕСКИЙ АНАЛИЗ, ТРАКТОВКА И МЕТОДИЧЕСКИЕ СОВЕТЫ ДЛЯ ИСПОЛНЕНИЯ»** (методический музыкальный анализ для студентов музыкальных вузов и ссузов) Международный научный журнал «Научные вести»	10 ст. Տպագրության մեջ է
Ավետիսյան Ֆլորա	**РОЛЬ РЕПЕРТУАРА В РАЗВИТИИ МУЗЫКАНТА** XI Международная научно-практическая конференция “Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия” – Казань, 21 октября 2022 года.	Տպագրության մեջ է
Եդիգարյան Վյաչեսլավ	**''Своеобразие становления и черты хачатуряновского пианизма''** XI Международная научно-практическая конференция “Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия” – Казань, 21 октября 2022 года.	12 ст.
Կարապետյան Մերի	***<<Использование элементов армянской фольклорной музыки в джазовом и эстрадном жанре>>***	13 էջ

	https://aspu.am/hy/content/masnakcecin_srtumd_rusastan_mijazgayin_gitazhoghovin/?fbclid=IwAR1UbDD7L3LoWMe0F8faGNdEkqT1Od5bBzbwqzSlRUjT1VnrKph36u0sOws#sthash.OXmMm0m0.1NCyP4rz.dpbs	

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Աննա Հարությունյան-''Հոգու խոստովանություն'' համերգ-սեմինար	15.04.22թ., ՀՊՄՀ Կուլտուրայի մասնաշենքի դահլիճ ***https://www.youtube.com/watch?v=ZBb3mijp7H8***
Աննա Ադամյան-Դասարանական համերգ-սեմինար	31.05.22թ., ՀՊՄՀ 4-րդ մասնաշենքի դահլիճ
Արուսյակ Կոստանյան-*«Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» երաժշտական աշխատության համերգ-սեմինար*	20.10.22թ., ՀՊՄՀ Կուլտուրայի մասնաշենքի դահլիճ ***https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/?fbclid=IwAR3tq5BuR-WQrD-rpB8RU3MHOn-HV5__6655e3aQzpk7L6Q0HC9_JoHz0ds#***
Անահիտ Գասպարյան-Դասարանական համերգ - սեմինար	19.12.22թ., ՀՊՄՀ 4-րդ մասնաշենքի դահլիճ

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ

Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական-մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
Վահանյան Նաիրա Յուրիի	ԺԳ.00.02-Դասավանդման և ուսուցման մեթոդիկա ''երաժշտություն''	24.11.2022թ.	ՀՀ ԲՈԿ-ի ''Մանկավարժություն'' 020 մասնագիտական խորհրդի նիստ:
–	–	–	–
–	–	–	–
–	–	–	–

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Աննա Հարությունյան	Vytautas Magnus University	24.04.22-30.04-22	Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ
Մերի Կարապետյան	Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարություն	27.10.22-28.10.22	Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ
Աննա Հարությունյան	ՀՊՄՀ	18.11.21-07.01.22	Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ
Նաիրա Մադոյան	ՀՊՄՀ	18.11.21-07.01.22	Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
Բուհական	Գիտաժողով՝ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ/ ԵՊԿ	**Ուսանող**՝ Գրիգորյան Շուշաննա Մարզպետի, **զեկույցի անվանումը**՝ <<Երգեցողությունը՝ երեխաների ռիթմական զգացողության զարգացման միջոց>>, **Ղեկավար**՝ ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյան

Բուհական	Գիտաժողով՝ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ/ ԵՊԿ	**Ուսանող՝** Սիմոնյան Լալա Մանուկի **Զեկույցի անվանումը՝** <<Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար ''Չիկարելիի արկածները'' օպերայի երաժշտադաստիաչակչական նշանակությունը>>, **ղեկավար՝** ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան
Բուհական	Գիտաժողով՝ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ/ ԵՊԿ	**Ուսանող՝** Մանուչարյան Անի Վագրիկի **Զեկույցի անվանումը՝** <<Հանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մեթոդ>>, **ղեկավար՝** ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյան

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
''Մոցարտ'' **միջազգային** մրցույթ-փառատոն	Դաշնամուր	1	1-ին տեղ Սյուզաննա Մկրտչյան Վարդանի
''Սրտումդ՝ Ռուսաստան'' **միջազգային** գիտաժողով	Վոկալ	1	Գալա-համերգի մասնակից Ռիտա Հովհաննիսյան Հովիկի
''Ազգային երգիչ'' **հանրապետական** մրցույթ	Վոկալ	1	կիսաեզրափակիչ փուլի անդամ Շուշանիկ Թալասյան Կարենի
–	–	–	–
Տարածաշրջանային	–	–	–
–	–	–	–

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:

Համագործակցական աշխատանքները գտնվում են որոնումների փուլում:

Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

- **ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ**- Ամբիոնը պարբերաբար հանդես է գալիս որպես առաջատար կազմակերպություն, տրամադրելով կարծիք՝ թեկնածուական ատենախոսությունների համար:
    1. 2022թ.-ի նոյեմբերի 22-ին ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը մասնակցել է ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքներին. Անի Սարգսի Հակոբյանի՝ "Շահնամեն Իրանի երաժշտական մշակույթում" թեմայով ատենախոսության նախնական քննարկմանը (հրաման՝ N29/29.2/29595-2022):
    2. Ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը կարծիք (ընդիմախոսություն) է տրամադրել ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ Գոռ Աշոտի Սալնազարյանի՝ ''Բեգլար Ամիրջանի կատարողական արվեստը'' թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ.00.02-''Երաժշտական արվեստ'' մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, որը կայացել է 08.12.2022թ.-ին:
    3. 2022թ.-ի նոյեմբերի 11-ին ևս, Աննա Հարությունյանը մասնակցել է ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքներին. Ասղար Ջանաբի Վահաբի՝ <<Հայ ավանդական օրորներ>> թեմայով ատենախոսության նախնական քննարկմանը (հրաման՝N29/29.2/27620-2022):
- **Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա**- Ամբիոնի դասախոսները ուսանողների հետ համատեղ մասնակցում են ԵՊԿ-ում կայացած ամենամյա գիտաժողովներին, մասնակցությամբ Հայաստանի արվեստի բուհ-երի և քոլեջների.
    1. *Անի Վագրիկի Մանուչարյան-զեկույցի անվանում՝ ''Հանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մեթոդ'', մասնակցել է 20.05.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյան:*
    2. *Շուշաննա Մարզպետի Գրիգորյան- զեկույցի անվանում՝ ''Երգեցողությունը՝ երեխաների ռիթմական զգացողության զարգացման միջոց'', մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյան:*
    3. *Լալա Մանուկի Սիմոնյան- զեկույցի անվանում՝ ''Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար ''Չիկարելիի արկածները'' օպերայի երաժշտադաստիարակչական նշանակությունը'', մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան:*
- **Արամ Խաչատրյանի տուն-թանգարան** - Ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կայացել է համերգ-սեմինար՝ նվիրված բուհ-ի 100-ամյակին: Տեղի է ունեցել 2022թ.-ի ապրիլի 19-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում: https://www.youtube.com/watch?v=kQgjKmeDPWc
- **Կոմիտասի թանգարան**-ինստիտուն Հաշվետու տարում ամբիոնի ասիստենտ Մարիա Արամի Սիմոնյանը առկա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրսի հետ կազմակերպել է այցելություն Կոմիտասի թանգարան-ինստիտուն, որտեղ ուսանողները մանրամասն ծանոթացան Կոմիտասի գործունեության բոլոր ճյուղերին: Նրանք կատարեցին Կոմիտասի մի քանի երկձայն

ստեղծագործություններ, դիտեցին սրահներում տեղադրված լուսանկարները,սարքի լսեցին Կոմիտասի ձայնը: Ուսանողները բավականին տպավորված էին, քանի որ սա նրանց առաջին այցելությունն էր, սակայն հարկ է նշել, որ մեկ այցելությունը բավարար չէ Կոմիտասի գործունեությանը ծանոթանալու համար: Աշխատանքը պետք է շարունակել նաև պարապմունքների ընթացքում:

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
• **Ամբիոնը մշտապես աշխատանք է ծավալում հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, որոնց ընթացքում ձևավորվում է դասախոս-ուսանող-աշակերտ սերտ փոխկապակցվածությունը, ինչն էլ նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղության որոշմանը:** • **Նաև հաշվետու տարում ամբիոնի ՊԴԱ այցելել է Երևանի և մարզերի հանրակրթական դպրոցներ, ծանոթացրել բուհ-ին, մանրամասն ներկայացրել բաժինների առանձնահատկությունները, բացատրել ընդունման կարգը և բաժանել բուկլետներ դպրոցների աշակերտներին:** • **Ամբիոնի մարքեթինգային գործունեությանը կարելի է ականատես լինել նաև Facebook սոցիալական ցանցում, որտեղ երաժշտության մանկավարժության ամբիոնի էջը իր ակտիվ գործունեությունն է ծավալում: Այստեղ պարբերաբար տեղադրվում են ամբիոնի կազմակերպած միջոցառումները, ծրագրերը և այլն:** https://www.facebook.com/profile.php?id=100023658346144

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Սիմոնյան Մարիա Արամի	‘‘Աշուն’’	18.11.22թ Երևանի թիվ 122 հիմնական դպրոց: Մասնակցել են 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտները, կատարելով 2 երգ նվիրված աշնանը:

Ուսումնական	Ավետիսյան Մարիաննա Ռոլանդի	''Կոմիտասյան երեկո''	18.03.22թ., Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց, մասնակցել են 4-րդ դասարանի աշակերտները՝ ուսանողների հետ միասին:
Ուսումնական	Կոստանյան Արուսյակ Համազասպի	միջոցառում՝ նվիրված Շառլ Ազնավուրին	13.12.22թ.-ին՝ Երևանի թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են հեռակա բակալավրիատի4-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները:
Ուսումնական	Կոստանյան Արուսյակ Համազասպի	Ամանորյա միջոցառում	09.12.22թ.-ին՝ Երևանի թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են հեռակա բակալավրիատի4-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 2-րդ դասարանի աշակերտները:
Ուսումնական	Խաչատրյան Արաքսյա Արտավազդի	միջոցառում՝ նվիրված մեծն Կոմիտասին:	26.09.12թ., Երևանի Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմնական դպրոց, մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները:
Ուսումնական	Խաչատրյան Արաքսյա Արտավազդի	Ֆլեշ մոբ	17.12.22թ.-ին առկա բակալավրիատի ուսանողները թիվ 168 հիմնական դպրոցի տարբեր դասարաններում անցկացրել են ֆլեշ մոբ, պատահական դասարաններում ներկայացնելով Կոմիտաս վարդապետի ստեղծագործությունները երկձայն և եռաձայն:
Ուսումնական	Մարգարյան Նաիրա Արթուրի	միջոցառում՝ նվիրված կանանց տոնին	02.03.2022թ., Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում՝ ուսանողների մասնակցությամբ:
Ուսումնական	Մարգարյան Նաիրա Արթուրի	Ֆլեշ մոբ	13.04.2022թ., Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում ուսանողները կազմակերպել են ֆլեշ մոբ՝ կատարելով Կոմիտաս վարդապետի ստեղծագործությունները:

Ուսումնական	Մարգարյան Նաիրա Արթուրի	Երաժշտական դասամիջոցներ	18.05.2022թ., Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում ուսանողները աշակերտների հետ համատեղ կազմակերպել են երաժշտական դասամիջոցներ, երգելով հայրենասիրական երգեր:
Ուսումնական	Պետրոսյան Սուսաննա Էդվարդի	Դաս-միջոցառում՝ ‘‘Կոմիտաս’’	19.10.2022թ., Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց: Մասնակցել են դպրոցի 3-րդ դասարանի աշակերտները և առկա բակալավրիատի4-րդ կուրսի ուսանողները:
Ուսումնական	Պետրոսյան Սուսաննա Էդվարդի	‘‘Հովհաննես Թումանյանի հեքիաթների աշխարհում’’	24.02.2022թ., Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց: Մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները:
Ուսումնական	Դադոյան Ելենա Թելմանի	միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության տոնին՝ «Գարունն ու մայրիկս»:	06.04.22թ., ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են առկա բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 5-րդ դասարանի աշակերտները:
Ուսումնական	Դադոյան Ելենա Թելմանի	միջոցառում՝ նվիրված ՀՊՄՀ-ի 100-ամյակին:	31.10.22թ.-ին՝ համալսարանի նախասրահում: Մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները թիվ 57 հիմնական դպրոցի աշակերտների հետ միասին:
Ուսումնական	Դադոյան Ելենա Թելմանի	միջոցառում՝ նվիրված Նոր տարվան:	13.12.22թ., ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 1-ին դասարանի աշակերտները:
Մեթոդական	–	–	–
–	–	–	–
	–	–	–
Դաստիարակչական	–	–	–
–	–	–	–

–	–	–	–

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Մարքեթինգային գործունեություն	Օջախյան Արմինե Օնիկի	Ծանոթացում ամբիոնին	06.12.22թ., ժամը՝ 10:00 ք. Երևանի թիվ 94 ա/դ Տնօրեն՝ Զինա Խաչատրյան Ստեփանի
Մարքեթինգային գործունեություն	Կոստանյան Արուսյակ Համազասպի	Ծանոթացում ամբիոնին	07.12.22թ., ժամը՝ 11:30 ք. Երևանի թիվ 2 ա/դ Տնօրեն՝ պկ տկն. Առաքելյան
Մարքեթինգային գործունեություն	Դադոյան Ելենա Թելմանի	Ծանոթացում ամբիոնին	08.12.22թ., ժամը՝ 10:00 ք. Երևանի թիվ 105 ա/դ Տնօրեն՝ Արմինե Սողոյան Ֆրունզիկի
Մարքեթինգային գործունեություն	Ադամյան Աննա Ժորիկի	Ծանոթացում ամբիոնին	14.12.22թ., ժամը՝ 12:00 ք. Երևանի թիվ 109 ա/դ Տնօրեն՝ Սամվել Թադևոսյան Պամիլոնի
Մարքեթինգային գործունեություն	Թադևոսյան Շաքե Սուրենի	Ծանոթացում ամբիոնին	15.12.22թ., ժամը՝ 11:00 ք. Երևանի թիվ 97 ա/դ Տնօրեն՝ Արմինե Արշակյան Մարտինի
Մարքեթինգային գործունեություն	Հարությունյան Աննա Պետրոսի	Ծանոթացում ամբիոնին	16.12.22թ., ժամը՝ 15:00 Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց
Մարքեթինգային գործունեություն	Կարապետյան Մերի Համլետի	Ծանոթացում ամբիոնին	19.12.22թ., ժամը՝ 14:30 Բարսեղ Կանաչյանի անվան N 17 երաժշտական դպրոց

Մարքեթինգային գործունեություն	Ավետիսյան Մարիաննա Ռոլանդի	Ծանոթացում ամբիոնին	20.12.22թ., ժամը՝ 16:00 Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց
Մարքեթինգային գործունեություն	Մարգարյան Նաիրա Արթուրի	Ծանոթացում ամբիոնին	14.12.22թ., ժամը՝ 09:00 Արարատի մարզի դպրոցներ
Մարքեթինգային գործունեություն	Ալավերդյան Տիգրան Գարիկի	Ծանոթացում ամբիոնին	13.12.22թ., ժամը՝ 09:00 Կոտայքի մարզի դպրոցներ

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
• Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում մասնակցել են հանրակրթական դպրոցի ''Երաժշտություն'' առարկայի ուսուցչի կամավոր ատեստավորման թեստերի պատրաստմանը և դրա անցկացմանը. Էլբակյան Սարգիս Էդուարդի Հարությունյան Աննա Պետրոսի Մելիքսեթյան Գոհար Բեժանի Յուզբաշյան Յուրի Վաղարշակի Բաղդասարյան Մարգարիտա Էդուարդի Ադամյան Աննա Ժորիկի • Համալսարանում օգոստոս ամսին կազմակերպվել է հանրակրթական դպրոցի ''Երաժշտութուն'' առարկայի ուսուցիչների պարտադիր որակավորման դասընթաց, որը վարել է ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանը: • Հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել են երաժշտության ուսուցման և դասավանդման դասընթացներ (30 կրեդիտ), որը վարել է Գոհար Մելիքսեթյանը: Ամբիոնի դասախոսների մասնակցությունը պարտադիր և կամավոր ատեստավորումների գործընթացներին, դասախոսներից պահանջում է մեծ պատասխանատվություն իրենց աշխատանքի նկատմամբ և նպաստում մասնագիտական որակի բարձրացմանը:

- Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է համալսարանում և ֆակուլտետում կազմակերպվող քննարկումներին և դրանց հիման վրա 2022թ.-ին համալսարանի ռազմավարական ծրագրի ընդունումից հետո վերանայվել են ամբիոնում կատարված աշխատանքները:
    1. խստացվել է վերահսկողությունը Classroom էլեկտրոնային հարթակում,

       (այս հարցը մշտապես քննարկվում է ամբիոնի նիստերում)

    2. կատարվել են քննարկումներ, որոնք ամեն ամսվա վերջում գրանցվել են ամբիոնի ամսեկան հաշվետվությունների մեջ և ուղարկվել կրթության էլեկտրոնային կառավարման համակարգի աշխատակիցներին: Այս քննարկումները ստիպել են ոչ այնքան պատասխանատու դասախոսներին էլ ավելի բծախնդրորեն մոտենալ իրենց աշխատանքին և պարտականություններին:
- Ուսանողների և դասախոսների ինքնավերլուծությունների հիման վրա որակի հանձնաժողովը և ամբիոնը կազմակերպել են քննարկումներ և՛ մասնագիտական և՛ ոչ մասնագիտական առարկաների գործունեության արդյունավետության վերաբերյալ: Դրա արդյունքում ակտիվանում է համագործակցությունը համալսարանի տարբեր ամբիոնների միջև, ինչի շնորհիվ բարձրանում է ընդհանուր կրթության արդյունավետությունը:
- Բանավոր և գրավոր հարցումների և դասալսումների արդյունքում ամբիոնը տեղեկանում է ուսանողների և դասախոսների ծավալած գործունեության արդյունավետության մասին, սակայն ավելի կարևոր է, երբ կրթության որակը ստուգվում է մանկավարժական պրակտիկայի ընթացքում, երբ դպրոցներում դասալսումներ են իրականանում, ինչի հիման վրա դասախոսները վերանայում են իրենց ծրագրերը, ավելի ճիշտ են գնահատում ուսանողների մասնագիտական որակները և հնարավորությունները , որը բարձրացնում է մասնագիտական կրթության որակը:
- Ողջ հոբելյանական տարում ամբիոնի դասախոսները և ուսանողները մասնակցել են տարբեր միջոցառումների և նման շփումները նպաստել են ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

- **ՀՀ ԳԱԱ Ինստիտուտի հետ համատեղ աշխատանքների արդյունքում տնօրեն՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը պարբերաբար հրավիրվում է ամբիոնի մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությանը, որպես հանձնաժողովի նախագահ կամ անդամ:**
- **Աննա Ասատրյանի միջնորդությամբ ամբիոնի դասախոսները և ուսանողները հնարավորություն են ստացել օգտվել ԳԱԱ ինստիտուտի գրադարանից, իրենց մասնագիտական որակը և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:**
- **ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցի ''Երաժշտություն'' առարկայի ուսուցչուհի Ազնիվ Բարեղամյանը, որը հանդիսանում է ամբիոնի նախկին ուսանողուհին, ակտիվ համագործակցություն է ծավալում մանկավարժական պրակտիկայի ընթացքում և դպրոցի միջոցառումները անցկացվում են համալսարանի դահլիճներում՝ ուսանողների, դասախոսների, աշակերտների և նրանց ծնողների ներկայությամբ:**

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում

Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
''Հոգու խոստովանություն''	Աննա Հարությունյան	Միջոցառումը նպաստել է ուսանողների ծանոթացմանը միջոցառման մեջ ընդգրկված ստեղծագործություններին, որոնք կարող են ընդգրկվել նաև ուսումնական ծրագրերում:
«Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» երաժշտական աշխատության համերգ-շնորհանդես	Արուսյակ Կոստանյան	Միջոցառումը նպաստել է ուսանողների ծանոթացմանը միջոցառման մեջ ընդգրկված ստեղծագործություններին, որոնք կարող են ընդգրկվել նաև ուսումնական ծրագրերում:
''100 և ավելի'' դասարանական համերգ	Անահիտ Գասպարյան	Միջոցառումը նպաստել է ուսանողների կատարողական մակարդակի բարձրացմանը:
Դասարանական համերգ-քննարկում	Աննա Ադամյան	Համերգի ընթացքում դասախոսը կատարել է քննարկում՝ ուղղված կատարողական խնդիրների և բեմական հուզմունքի հաղթահարմանը: Այն նպաստել է ուսանողների մեթոդական գիտելիքների ձեռքբերմանը և փորձի բարելավմանը:
	Վերը նշված միջոցառումները նպաստում են . • դասախոսների պատասխանատվության բարձրացմանը և իրենց աշխատանքի արդյունավետությանը: • ուսանողների կատարողական մակարդակի բարձրացմանը իրենց մասնագիտական բնագավառներում:	

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հարցմանն ընդգրկելով ամբիոնի բոլոր՝ անհատական և խմբական առարկաների դասախոսներին, նպատակ ունեինք առավել ամբողջական պատկերացում ունենալ դասախոսների աշխատանքի վերաբերյալ; -անհատական և խմբական առարկաների դասախոսների գնահատումը էապես չի տարբերվում, ինչը գոհացուցիչ է: -դասախոսների աշխատանքը մեծմասամբ գնահատվել է ամենաբարձր 4 միավորով: Դա ուսանողների վերաբերմունքի արտացոլումն է դասախոսների մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների նկատմամբ: Այդ արդյունքներն ամրապնդվում են դասալսումներով; -էլեկտրոնային հարթակում առաջադրանքները հանձնարարվում են և ստուգվում նշված ժամկետներում; -դասախոսների գիտական, գիտա-մեթոդական և գիտահետազոտական աշխատանքները նպաստում են կրթական գործընթացի հանրայնացմանը և նրանց աշխատանքային գործունեության թափանցիկությանը:	ՀՀ սահմաններից դուրս դասախոսների գիտական, գիտա-մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների ճանաչմանը խանգարում է օտար լեզուների (հատկապես անգլերենի) ոչ բավարար իմացությունը: Բացառություն է ռուսերենը, հետևաբար ՌԴ-ում հրատարակումներն ու գիտաժողովների մասնակցությունը: Մասնաշենքի վատ պայմանները:
Հնարավորություններ	Վտանգներ
Ուսանողների գնահատումները և դասալսումների արդյունքները վկայում են դասախոսական կազմի մասնագիտական տեսական և գործնական պոտենցիալի մասին, ինչը հնարավորություն կտա նրանց իրականացնել ուսումնական, գիտական, գիտա-մեթոդական, գիտահետազոտական	Արվեստի, մասնավորապես երաժշտության բնագավառում, ՀՊՄՀ-ի մասնագետների գործունեության հանրայնացման հնարավորությունների սահմանափակությունը չի բխում ազգային մշակույթի և ազգային արդիական կրթական համակարգի ճանաչման գործընթացին

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
բազմապիսի գործունեություն ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև նրա սահմաններից դուրս;	

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2022 թվականի գործունեությունն ուղղված է եղել <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի հիմնական առաքելությանն, ինչ է՝ մանկավարժության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտներում ՀՀ և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներով, սոցիալական պատասխանատվությամբ և ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով կիրառական հմտություններով և կարողություններով զինված գիտելիքի ստեղծմանն ու հանրային ոլորտում մասնագիտական արժեքների տարածմանը: 2022 թվականին աշխատանքներն իրականացվել են համաձայն 2022-2025 զարգացման ռազմավարական ծրագրի 2022 թվականի գործողությունների պլանի: Ռազմավարական ուղղությունների հիմնական նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները: Մասնավորապես՝ • Ուսումնական տարվա սկզբին քննարկվել և արդիականացվել են կրթական ծրագրերի բաղադրիչ հանդիսացող դասընթացների առարկայական փաթեթները՝ հաշվի առնելով

ՊԴԱ ներկայացրած կոնկրետ դասընթացի առանձնահատկությունները և հիմնավորումները:

- Հստակեցվել են դասընթացների շրջանակներում ուսանողների գնահատման գործիքակազմը և չափանիշները
- Ապահովվել է ուսանողների կողմից դասընթացների ընտրության լայն հնարավորություններ, մասնավորապես՝ մագիստրոսական կրթական ծրագրերի ընտրովի դասընթացներում
- Հնարավորինս ապահովվել է ուսանողների ակտիվ մասնակցությունն իրենց անհատական ուսումնառության գործընթացի պլանավորմանը, կազմակերպվել են խմբային և անհատական խորհրդատվություններ
- Իրականացվել են համալսարանի և ֆակուլտետի առաքելությունից բխող գիտական ուղղությունները՝ մանկավարժություն, հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք
- Քննարկվել են մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների որակի բարձրացման հարցերը:
- Ապահովվել է ՊԴԱ-ին տեղեկատվության փոխանցման գործընթացը՝ ի նպաստ ֆակուլտետի ՊԴԱ-ի հոդվածների հրատարակմանը միջազգային *Scopus* և *Web of Science* շտեմարաններում:
- Իրականացվել են միջազգային գիտական կառույցների հետ համագործակցության ընդլայնման աշխատանքներ /տես՝ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ/:
- ֆակուլտետը նպաստել է գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը՝ արդյունավետ և ժամանակակից ձևաչափով՝ ապահովելով երիտասարդ մասնագետների թեկնածուական ատենախոսությունների պատրաստման գործընթացը:
- Ֆակուլտետի ՊԴԱ-ը մասնակցել է վերապատրաստման գործընթացներին, համալսարանի վերապատրաստման և որակավորումների բարձրացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերին, արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացներին /Տես՝ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ, ինչպես նաև ամբիոնների տարեկան հաշվետվություններ/:
- Խրախուսվել է ՊԴԱ հրատարակման ակտիվությունը հեղինակավոր, հատկապես միջազգային վարկանիշային ամսագրերում՝ նաև հետազոտական արդյունքների ապրանքայնացման նպատակով /փորձագիտություններ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և այլն:
- ֆակուլտետում իրականացվել է կառուցվածքային փոփոխություն: Ֆակուլտետի կազմում համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշման /02.06.2022 թվականի թիվ 17 որոշում/ ստեղծվել է Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոն, որի նպատակն է էլ ավելի ուժեղացնել հոգեբանական կադրերի նպատակային պատրաստման գործընթացը ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում և ասպիրանտուրայում:

- Համալսարանի և ֆակուլտետի կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների հրապարակայնությունը, հասանելիությունը և մատչելիությունը բոլոր շահառուների համար ապահովելու նպատակով ֆակուլտետի խորհրդում ներգրավվել են ներքին և արտաքին շահառուներ, ոլորտի առաջատար մասնագետներ:
- Նոր մարտահրավերների պայմաններում կիրառվել են դիմորդների մասնագիտական կողմնորոշման իրականացման նոր մեխանիզմներ, ձևեր, հնարներ, նաև առցանց ձևաչափով՝ · առցանց հանդիպումներ դպրոցների հետ, անհատական խորհրդատվություններ, ֆակուլտետի մասնագիտությունների լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով, սեմինարներ-քննարկումներ դպրոցներում «365 օր դպրոցում՝ աշակերտի և ուսուցչի հետ» ծրագրի շրջանակներում:
- Իրականացվել են ֆակուլտետի ուսումնառողների շարժի վերլուծություններ
- Ֆակուլտետի ուսանողները ընդգրկվել են ամբիոնների գերակա գիտահետազոտական աշխատանքների մեջ, մասնակցել են գիտաժողովների, վերապատրաստումների, դասախոսների հետ համատեղ հրատարակել են հոդվածներ, իրականացրել մասնագիտական հետազոտական աշխատանքներ այլ կառույցների հետ:
- Կնքվել են հուշագրեր և պայմանագրեր գործատուների հետ՝ ուսանողների մասնագիտական պրակտիկան կազմակերպելու և հետագա կարիերան ապահովելու նպատակով
- Ֆակուլտետը աջակցել է դասախոսական կազմին դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության աշխատանքներում
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին իրականացվում է ֆակուլտետի նյութատեխնիկական ռեսուրսների բավարարվածության և արդյունավետության աստիճանի վերլուծություն՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների, որի արդյունքները ներկայացվում են համալսարանի ղեկավարությանը: Արդյունքում՝ հնարավորինս տրանադրվում է անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները:
- Ֆակուլտետը Համագործակցել է համալսարանի լրատվության բաժնի հետ՝ ֆակուլտետի վերաբերյալ օպերատիվ լրատվության և գովազդային նյութերի տրամադրման և հրապարակման հարցում
- Իրականացվել են ֆակուլտետի գործունեության, մասնագիտությունների մասին տեղեկատվություն տարածում ԶԼՄ-ների, սոցիալական ցանցերի միջոցով / Հաջողության բանաձև, Facebook/:
- Կրթական ծրագրերը համակարգող ամբիոններից հավաքագրվել են ՄԿԾ-ների, ՊԴԱ գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ տվյալներ, ինքնավերլուծություններ և այլ փաստաթղթեր կատարման ընթացքի շարունակական գնահատման համար
- Ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումները, ՊԴ կազմը ակտիվորել օգտագործել են դասա
- վանդման էլեկտրոնային հարթակների հնարավորությունները
- Պարբերաբար իրականացվել են դասալսումներ առկա և առցանց տիրույթներում
- Թարմացվել և բազմազանեցվել են կրթական ծրագրերի դասընթացների էլեկտրոնային փաթեթները

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
տարվա սկզբին մշակվել, քննարկվել և հաստատվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանները, որոնցում ընդգրկված հարցերը բխում են 2022-2025 թվականների ռազմավարական ծրագրի նախագծի 2022 թվականի գործողությունների պլանի քայլերից: Պարբերաբար քննարկվել են ներքին և արտաքին շահառուների առնչվող հարցերը,վեր են հանվել կրթության գործընթացի կազմակերպման և որակի ապահովման խնդիրները /հիմք ֆակուլտետի խորհրդի արձանագրությունները/:Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի խորհրդի 2022-23 ուս. տարվա աշխատանքային պլանում քննարկման են դրվել կիսամյակային քննարշրջանի արդյունքները, բակալավրի կրթական ծրագրի մանկավարժական, ուսումնական և մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտական պրակտիկաների կազմակերպման արդյունքները, մագիստրոսական թեզերի ,ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկումը հաստատումը,Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ և համապատասխան այլ իրավական ակտերով, ինչպես նաև <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի և Ֆակուլտետի կառավարման մարմինների իրավասության շրջանակներում ընդունված իրավական ակտերով: Ֆակուլտետի խորհուրդը դեկանի նախագահությամբ գործող Ֆակուլտետի կառավարման մարմին է, որի որոշումները պարտադիր են Ֆակուլտետի սովորողների և աշխատողների համար:Ֆակուլտետի խորհրդի կազմը ձևավորվել է պրոֆեսորադասախոսական կազմից ,ուսանողության կողմից առաջադրված ներկայացուցիչներ (առնվազն 25 %)., ներքին և արտաքին շահառուներից և գործատուներից:Խորհրդում քննարկվում և լուծվում են ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցեր, գիտական խորհրդում հաստատելու համար ռեկտորին է ներկայացնում Ֆակուլտետի ուսումնական պլանները, սահմանված կարգի համաձայն՝ իրականացվում են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունները, քննարկվում են ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները, Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և կրթական աշխատանքների պլանավորման և որակավորման բարձրացման հարցերը,ուսանողների մանկավարժական և ուսումնական , ինչպես նաև մասնագիտական պրակտիկաների արդյունքները: Հաստատվում է Ֆակուլտետի զարգացման ծրագրերը,ասպիրանտների անհատական պլանները, ասպիրանտների ու հայցորդների տարեկան որակավորման արդյունքները: Մշակվում և իրականացվում են միջոցառումներ Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և որակավորման, ուսանողների կրթության որակը բարձրացնելու և Ֆակուլտետում կրթության որակի ապահովման հարցերը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները կառավարման գրեթե բոլոր մակարդակներում անմիջականորեն մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին, նրանց մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, իսկ նրանց ընտրությունն այդ մարմիններում իրականացվում է համաձայն

գործող ընթացակարգի՝ ներքևից վերև: Ֆակուլտետի խորհրդի կազմը բաղկացած է 29 ներկայացուցչից:

Կրթության հոգեբանության ֆակուլտետի դեկանն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Համբարձումի Պետրոսյանը, դեկանի ուսումնական աշխատանքների գծով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիդա Ռազմիկի Արամյանը, գիտական և միջազգային համագործակցության հարցերով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոնա Արտակի Մակիչյանը: Ֆակուլտետի կազմում գործում են 4 հիմնական ամբիոններ: Հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն է հ.գ.թ., դոցենտ Լևոն Կարոյի Սարգսյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2021թ օգոստոսի 23-ի թիվ 1950-Ա հրամանի համաձայն/ Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն է հ.գ.թ., դոցենտ Մարիաննա Սամվելի Ավետիսյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2021թ դեկտեմբերի 20-ի թիվ 4007-Ա հրամանի համաձայն/ , Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի պարտականությունները կատարելում է հ.գ.թ., դոցենտ Գայանե Անդրանիկի Խաչիկյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2022թ հունիսի 30-ի թիվ 1852-Ա հրամանի համաձայն/: 2022թ. հունիսի 2-ի Հոգաբարձուների խորհրդի թիվ 17 որոշման համաձայն ֆակուլտետում ստեղծվել է Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնը, իսկ հունիսի 30-ի թիվ 1853-Ա հրամանի համաձայն ամբիոնի վարիչի պարտականությունների կատարումը վերապահվել է դեկան Ռուզաննա Համբարձումի Պետրոսյանին է մինչև սահմանված կարգով մրցույթի անցկացումը: Ֆակուլտետը սպասարկում է նաև համահամալսարանական Մանկավարժության ամբիոնը՝ Սոցիալական մանկավարժություն մասնագիտությունը և բակալավրում և մագիստրատուրայում, ինչպես նաև մի շարք այլ համահամալսարանական ամբիոններ:

Հաշվետու

ժամանակահատվածում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները մասնակցել են իրենց առնչվող որոշումների կայացմանը հիմք՝ ամբիոնի նիստերի որոշումները և ֆակուլտետի խորհրդի կազմում կատարած գործունեությունը / դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել տարբեր օղակներում անմիջականորեն մասնակցել թե՛ ֆակուլտետի, թե՛ ամբիոնների գործընթացներին և թե՛ համալսարանի վերաբերյալ որոշումների կատարումներին: ՊԻԳԲ շրջափուլի հիմնական սկզբունքներին համապատասխան ուսումնական հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացների կազմակերպման հարցեր,քննարկվել են նաև ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորման արդյունքները, ինչպես նաև Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից դեկան Ռ.Պետրոսյանը, իսկ ուսանողներից՝ սոցիալական մանակավարժություն մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս՝ Սվետլանա Սարգսյանը և Հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուցանողուհի Լաննա Պողոսյանը ներգրավված են համալսարանի գիտական խորհրդի կազմում: Ֆակուլտետի ուսումնական գործընթացն կառավարվում և իրականացվում է համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից ընդունված և հաստատված ուսումնական պլանների, ծրագրերի, հաստատված գրաֆիկների, դասացուցակների հիման վրա:

Համակարգվել է նաև համավարակի պայմաններում ֆակուլտետի աշխատակազմի ՊՇՌ թեսթավորման, պատվաստման և գրանցամատյաններում տվյալների մուտքագրման գործընթացը/2022թվականի սկիզբ/:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Ֆակուլտետը հաշվետու ժամանահատվածում իրականացրել է ինչպես ուսումնական, ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերման գործընթացի արդյունավետությունն ապահովող, այնպես էլ ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ աշխատանքներ: Մասնավորապես, համալսարանի ղեկավարության և Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության նախաձեռնությամբ կազմակերպված՝ Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման, առարկայական նկարագրերի և փաթեթների վերանայման նպատակով վերապատրաստմանը մասնակցել է ֆակուլտետի ՊԴԱ ամբողջ անձնակազմը: Վերջինս հնարավորություն տվեց նպատակամետ իրականացնել առարկայական փաթեթների վերանայման գործընթացը՝ հստակեցնելով ուսումնառության և ուսանողների գնահատման մեթոդները և չափանիշները: ՄԿԾ-ների գնահատման, ինքնավերլուծության և SWOT վերլուծության գործընթացների բարելավմանն ուղղված Համալսարանի և ՈԱԱԿ-ի համագործակցության շրջանակներում կազմակերպված՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցեցին ֆակուլտետի փոխդեկաններ Լ.Ռ.Արամյանը, Ս.Ա.Մակիչյանը և Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի դասախոս, որակի ապահովման պատասխանատու Նաիրա Հարությունյանը: Փորձնական գնահատումն իրականացվել է մի շարք ուղղություններով: Կազմակերպվել են քննարկումներ՝ վերապատրաստման արդյունքում իրականացված SWOT վերլուծությունների մասնակիցների հետ, ապա կրթական ծրագրի փորձնական գնահատում իրականացնելու նպատակով՝ վերապատրաստվողների խմբից կատարվել է ներքին փորձագետների ընտրություն /Ս.Ա.Մակիչյան/: Միջոցառման շրջանակներում SWOT վերլուծության և կրթական ծրագրի դիտարկման միջոցով իրականացվել է նաև «Կերպարվեստ» մասնագիտության նախնական գնահատում, ներքին փորձագետների այց բուհ՝ ՈԱԱԿ համակարգմամբ: Առանձին հոկտեմբերի առաջին շաբաթում կազմակերպվել են ֆակուլտետի ամբիոնների նիստեր որտեղ քննարկվել են 1-ին կուրսերի մագիստրոսների և 4-րդ կուրսերի ավարտական թեզերի խորագրերը: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ բոլոր մասնագիտություններով՝ Հոգեբանություն, Սոցիալական մանկավարժություն, Սոցիոլոգիա, Սոցիալական աշխատանք առաջին կուրս ընդունված ուսանողների ընդունելությունը կազմակերպվել է սույն թվականի սեպտեմբերի 1-ին առաջին հերթափոխով: Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների պատասխանատուները ձևավորել են առկա/ բակալավրիատ, մագիստրատուրա/ և հեռակա մանկավարժական, մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են ըստ

գործող ուսումնական պլանի և 2022-20023 ուս տարվա ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

Բակալավրիատի 3-րդ կուրսերի շարունակական ուսումնական և մանկավարժական 6 շաբաթյա պրակտիկաները կազմակերպվել են սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 22-ը, շաբաթական մեկ օր: Հոգեբանություն մասնագիտության ուսանողները պրակտիկա են անցնում հինգշաբթի օրը, իսկ սոցիոլոգիա, սոցիալական աշխատանք և սոցիալական մանկավարժություն մասնագիտությունների ուսանողները երկուշաբթի օրը: 3-րդ կուրսերի պրակտիկաները կազմակերպվել են՝ Ջ. Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական և 104 հիմն դպրոցներում, ԱՅ ԷՄ Առ Միջազգային մարքեթինգի հետազոտության կենտրոնում, ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ում, «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ –ում:

Սույն թվականի նոյեբերի 3-ից կազմակերպվել է առկա բակալավրիատի 4-րդ կուրսերի 6 շաբաթյա մանկավարժական և ուսումնական պրակտիկաները: Աշխատանքները ընթանում են Երևանի «Վարդանանաց ասպետներ» 106, 104, Խրիմյան Հայրիկի անվան 10, Ա. Բլոկի անվան 122 հիմնական դպրոցներում, ինչպես նաև «Փսիլայֆ», «Ապագա» հոգեբանական կենտրոններում, Երեխաների աջակցման կենտրոն ՀՈԱԿ-ում, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում, «ՍՕՍ Մանկական գյուղեր» Հայաստան ՀԲՀ-ում, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ում:

Հոկտեբերի 20-ից մինչը նոյեբերի 10-ին կազմակերպվել են մագիստրատուրայի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակի մասնագիտական պրակտիկաները: Պրակտիկաները անց են կացվել հոգեբանական բլոկի մասնագիտությունները՝ «Դիակոնիանա» բարեգործական հիմնադրամ, «Ապագա», MGM Partners իրավաբանական և հոգեբանական կենտրոններում, ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունում, ՀՀ կախվածությունների բուժման ազգային կենտրոնում, «Ավրորա Քիդս» խնամքի և «Դիա Լոգ» զարգացման կենտոններում, ինչպես նաև երկու ուսանողների համար կազմակերպվել է անհատական պրակտիկաներ Երևանի համար 3 ՏՄԱԿ-ում և «Lemon tree» ընկերությունում, սոցիալական բլոկի մասնագիտությունները՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում, մեկ ուսանող անցնում է անհատական պրակտիկա Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում:

Հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկաները կազմակերպվել են ս/թ նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 15-ը: Պրակտիկաները անց են կացվում Երևանի համար 104, Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան համար 168, թիվ 100, Սմբատ Բյուրատի անվան համար 125, հիմնական 164 հիմն.դպրոց», Ստ.Շահումյանի անվ. թիվ 1 հիմնական դպրոցներում, ՀՀ Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում: 4 ուսանողների համար կազմակերպվել են անհատական պրակտիկաներ «Գիտուն», «Ապագա», «Բանալի», «Երազի տուն» զարգացման և հոգեբանական կենտրոններում: Պրակտիկայի շրջանակներում իրականացվել են ներքոհիշյակլ նախապատրաստական աշխատանքները

- Դպրոցների հետ նախնական պայմանավորվածության ձեռքբերում:

- Հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ:
- Աշխատանքների պլանավորման և իրականացման ցուցումներ դպրոցների մասնագետներին:
- Պրակտիկայի մեկնարկային կոնֆերանսի անցկացում:
- Առցանց ուսուցման պայմանների ստեղծում / անհրաժեշտության դեպքում/:
- Մեթոդիստներին, հոգեբաններին և մանկավարժներին տրվել են խմբերի աշխատանքային պլանների կազմման ցուցումներ՝ ըստ ուսումնաճանաչողական պրակտիկայի նկարագրի:
- ուսումնական պրակտիկայի շրջանակներում իրականացվել է Հայաստանում ընտանիքների կարիքի գնահատում և աջակցության տրամադրում:
- կազմակերպված ուսումնական պրակտիկաների շրջանակներում յուրաքանչյուր ուսանող առաջին անգամ մասնակցել է սոցիալական դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին, /հարցազրույցի պլանի կազմում, տունայց, կարիքի գնահատում, սոցիալական պատմության և միջամտության պլանի կազմում, վերլուծություն, եզրակացություններ և առաջարկներ/:

Պրակտիկայի շրջանակներում ուսանողների համար կազմակերպվել են հանդիպումներ սոցիալական աշխատանքի պրակտիկ դաշտի վերոհիշյալ կառույցների հմուտ մասնագետների հետ:

Ծավալվել են նաև հետազոտական աշխատանքներ են համագործակից կառույցներում և կենտրոններում: Երկրում տիրող արտակարգ դրությամբ պայմանավորված հետազոտություններն իրականացվել են նաև առցանց տարբերակով՝ կիրառելով google հարթակի հնարավորությունները:

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանակահատվածում 2022-23 ուստարվա մեկնարկին ամբիոններումև ֆակուլտետի խորհրդում քննարկվել են առարկայական նկարագրերում գնահատման մեթոդների և չափանիշների կիրառման արդյունավետությունը: 2022 թվականի հունիսի 30 և հուլիսի 1-ին ամբիոնների ՊԴԱ կազմը մասնակցել է համալսարանում կազմակերպված վերապատրաստման դասընթացին: Վերջինս միտված էր գնահատման մեթոդների և չափանիշների հստակեցման, կիրառման մեթոդաբանությանը և առարկայական նկարագրերում դրանց ներկայացմանը: Համապատասխանաբար ամբիոններում բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը քննարկվել, վերանայվել և հաստատվել են՝ հատկապես գնահատման մեթոդների և չափանիշների հստակեցման տեսանկյունից:

Դասընթացների թեմատիկ տրոհումներում քննարկվել, հստակեցվել և հաստատվել են վերջնարդյունքների ձևավորմանը միտված հանձնարարականները, որոնք խթանում են նաև ուսանողների ինքնուրույն մտածողությունը՝ նվազագույնին հասցնելով գրագողության հնարավոր դեպքերը:

Ամբիոններում և ֆակուլտետի խորհրդում քննարկվել, վերանայվել և հաստատվել են կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի խորագրերը:

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Ուկրաինայի Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում և առաջարկությամբ 2022 թվականի հունվարի 24-ին հանդիպում է իրականացվել Կիպրոսի, Լիտվայի գործընկերների հետ՝ Erasmus+ի շրջանակներում ,,Ձեռնարկատիրական հմտություններ սոցիալական աշխատողների համար" խորագրով համատեղ ծրագրի մշակման և ներկայացման նպատակով: Համալսարանի միջազգային համագործակցության բաժնի հետ համագործացության արդյունքում մշակվել են հետագա քայլերը, ծրագիրը: Ֆակուլտետից ծրագրում նախապես ընդգրկվել են ֆակուլտետի դեկան, հ.գ.թ., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, հ.գ.թ., դոցենտ Ս.Ա.Մակիչյանը, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ, փ.գ.թ. Ա.Ռ.Ջիջյանը և ամբիոնի դասախոս Գայանե Ասատրյանը:

2022 թվականի մայիսի 3-6-ը Erasmus+ ծրագրի շրջանակներում աշխատանքային այցով Մանկավարժական համալսարանում էր Մեծ Բրիտանիայի Քիլլի համալսարանի դասախոս, նեյրոլեզվաբան Ստանիսլավ Գլազևսկին: Վերջինս բուհ կատարած այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ նաև Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների հետ: Քիլլի համալսարանի դասախոսը ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացրեց նաև հոգեբանության ոլորտում արված նոր հետազոտությունների արդյունքները, բուհում, դպրոցներում աշխատանքային մեթոդների կիրառումը: Ծավալվեցին մասնագիտական քննարկումներ:

2022 թվականի ապրիլ ամսին սկիզբ դրվեց նաև Նիդերլանդների Մաստրիխտի համալսարանի հետ համագործակցությանը, որի շրջանակներում առաջարկվեց համագործակցել առցանց դասընթացի շրջանակներում: Վերջինս հնարավորություն կտար Մաստրիխտի և ՀՊՄՀ-ի հոգեբանության ֆակուլտետի ուսանողներին միասին մասնակցել դասընթացին: Գիտության միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալի ուղղորդմամբ և մասնակցությամբ ծրագրում ի սկզբանե ընդգրկվել են Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, հ.գ.թ., դոցենտ Մարիաննա Ավետիսյանը, Հոգեբանության ամբիոնի դասախոս Գերասիմ Հարությունյանը: Վերջինս չի մասնակցել ծրագրի բուն ընթացքին համալսարանից դուրս գալու պատճառով: Ծրագրի բուն փուլը /դասընթաց ուսանողների հետ, խմբային աշխատանքներ/ մեկնարկել է սեպտեմբերի 5-ին և ավարտվել հոկտեմբերի 9-ին: Ծրագրում ընդգրկվել են բակալավրի և մագիստրոսի կրթության հոգեբանություն մասնագիտության թվով 17 ուսանողներ, որոնք բաժանվել են 4 խմբի: Կատարված աշխատանքները ուսանողները կներկայացնեն դեկտեմբերի 9-ին: Հանդիպմանը ներկա կլինեն նաև Մաստրիխտի համալսարանի ներկայացուցիչները:

2022 թվականի մայիսի 20-ին ֆակուլտետում հանդիպում է տեղի ունեցել Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի ներկայացուցիչների՝ Փորձարարական հոգեբանության ինստիտուտի փոխնախագահ Եվգենի Խոզեի, Օտարերկրյա դիմորդների հարցերով զբաղվող բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանի և Աննա Զիկեևայի հետ: Հանդիպմանը ներկա էին գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ս.Ա.Մակիչյանը, ուսումնական հարցերով դեկանի տեղակալ Լ.Արամյանը, ամբիոնների վարիչներ Լ.Սարգսյանը, Մ.Ավետիսյանը, ՊԴԱ կազմը և ուսանողներ: ՄՊՀՄՀ-ի

ներկայացուցիչները ներկայացրել են իրենց մասնագիտական կրթական ծրագրերը, համագործակցության հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց երկուստեք ծանոթանալ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլանների հետ՝ դրանք համադրելու և համատեղ կրթական ծրագիր մշակելու նպատակով: 2-րդ հանդիպումը ՄՊՀՄՀ-ի ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ 2022 թվականի հունիսի 29-ին, որին ներկա էին միջազգային կապերի բաժնի վարիչ Ն.Վ.Սամոտեսովան, Օտարերկրյա դիմորդների հարցերով զբաղվող բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանը, Կրթության հոգեբանության ֆակուլտետի ներկայացուցիչ Ի.Վ.Եմելյանովան, ,,Պրոֆեսոր Լ.Ֆ.Օբուխովայի անվան տարիքային հոգեբանության ամբիոնի վարիչ Ի.Վ.Շապովալենկոն, ,,Խաղը և մանկությունը" մագիստրոսի կրթական ծրագրի ղեկավար, ,Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Ի.Ա.Ռյաբկովան: ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ներկայացուցիչներից հանդիպմանը ներկա էին դեկան Ռուզաննա Պետրոսյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ս.Ա.Մակիչյանը, ուսումնական հարցերով դեկանի տեղակալ Լ.Արամյանը, ամբիոնների վարիչներ Լ.Սարգսյանը, Մ.Ավետիսյանը: Երկուստեք քննարկվեցին մագիստրոսական կրթության ,,Հոգեբանություն" մասնագիտական կրթական ծրագրի համադրելիության խնդիրները և երկու դիպլոմով նոր կրթական ծրագրի մշակման հնարավոր տարբերակները:

Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիանա Ավետիսյանն ավարտել է <<Պոզիտիվ հոգեթերապիայի ակադեմիայի (Վիսբադեն, Գերմանիա)>> կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին (200 ժամ տևողությամբ):

Ամբիոնի դոցենտ Գոռ Եսայանը Կալուգայի պետական համալսարանում 2022թ. մայիսի 26-ին հանձնել է որակավորման քննություն և ստացել է դատական հոգեբան փորձագետի որակավորման դիպլոմ:

Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.դ. Վլադիմիր Կարապետյանը 2022 թվականի դեկտեմբերի 5-ին առցանց տարբերակով բաց դասախոսությամբ հանդես կգա տվյալ հաստատության ներկայացուցիչների և ուսանողների համար ,,Իմացական աններդաշնակություն՝ պատճառահետևանքային կապեր" թեմայով:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոս Անի Դավթյանը մասնակցել է Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանում տեղի ունեցած «Անկախ պետությունների համագործակցություն-լավագույն ուսանող 2022» միջազգային նախագծին: ՀՊՄՀ մագիստրոսը ներկայացրել է «Ավագ դպրոցականի անձի տիպի ազդեցությունը մասնագիտական կողմնորոշման վրա» թեմայով գիտական հոդվածը. գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Խաչատրյան: Անի Դավթյանի աշխատությունը հանձնաժողովը հավանության է արժանացրել և բարձր գնահատել: Վերջինս արժանացել է առաջին կարգի դիպլոմի և շքանշանի, իսկ գիտական ղեկավար Արմինե Խաչատրյանը՝ պատվոգրի: Համագործակցության համար հանձնաժողովը հոգեբանական գիտությունների դոկտոր, ՀՊՄՀ պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանին պարգևատրել է շնորհակալագրով:

Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնը ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյակի շրջանակներում այս տարի առաջին անգամ կազմակերպել էր «Հոգեբանական

հետազոտություններ» խորագրով ուսանողական մրցույթ: Մրցույթի նպատակն էր հոգեբանության հետազոտությունների ոլորտում մեծացնել ուսանողների հետաքրքրությունների ոլորտը, ակտիվացանել գիտական կյանքը: «Հոգեբանական հետազոտություններ» խորագրով ուսանողական մրցույթին մասնակցում էին ՀՊՄՀ-ի, Արցախի պետական համալսարանի՝ բակալավրիատի և մագիստրատուրայի 12 ուսանող: Հետազոտությունները արտակարգ իրավիճակների պայմաններում անձի հուզական վիճակների ուսումնասիրության, հարմարման խնդիրների, մասնագիտական գործունեության առանձնահատկությունների, հոգեսոմատիկ խնդիրների և դրանց դրսևորումների, հակասոցիալական վարքի պատճառականության, սոցիալ-հոգեբանական մեխանիզմների մասին էին:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	533
	հեռակա	359
Մագիստրոսի	առկա	92
	հեռակա	-
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	-	-
Ուսանողների ներհոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	5
2	Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ	5
3	ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի պետական քոլեջ	2
4	Սիսիանի պետական քոլեջ	1
5	Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ	1
6	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գյուղատնտեսական քոլեջ	1
7	ՀՊՏՀ ֆինանսա-տնտեսագիտական քոլեջ	2
8	Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ ՊՈԱԿ	1
9	ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի հայ-ամերիկյան <<Էրեբունի>> պետական բժշկական քոլեջ	1
10	Երևանի պետական հումանիտար քոլեջ	2
11	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ	1
12	Սևանի բազմագործառութային պետական քոլեջ ՊՈԱԿ	3
13	Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ	1
14	ՀՀ ԿԳ ՄՍՆ Արարատի պետական բժշկական քոլեջ	1
15	Վարդենիսի <<Բադեյան>> պետական քոլեջ	1

Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	5,18	51
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	1,72	17

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը: (տեքստը այստեղ)

Ուսանողների թիվը 2022-2023 ուս. տարում



2021-2022թ և 2022-2023 ուս տարիների ուսանողների թվի համեմատությունը



Ուսանողների հեռացումներ վերկանգնումներ 2022-2023 /քանակ, թիվ/



Ուսանողների հեռացումներ վերականգնումներ համեմատություն 2021-2022 և 2022-2023 ուս.տարիների կտրվածքով



Ուսանողների մասնագիտության ընտրության հետագծի ուսումնասիրման նպատակով 2022թ մայիս ամսին իրականացվել են հարցումներ: Արդյունքները ներկայացնում ենք ըստ հարցադրումների՝

1. Բակալավրի կրթական ծրագրի ավարտից հետո շարունակելու եք արդյոք կրթությունը /մագիստրատուրա/



2. Նշեք, թե որ բուհում եք շարունակելու մագիստրոսական կրթությունը



3. Բուհ ընդունվելու դրդապատճառները



Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները: Ուսանողների հեռացման պատճառ են հանդիսացել ուսման վարձի և ակադեմիական պարտքերը: Ակադեմիական պարտքերի դեպքում հեռացվել են այն ուսանողները, ովքեր ունեցել են 12 կրեդիտից ավելի պարտքեր,իսկ ուսման վարձի պատճառով հեռացվել են այն ուսանողները, ովքեր չեն կատարել իրենց վարձի պարտքի մարումը նշված վերջնաժամկետներում: Վերականգնվող ուսանողները եղել են տարկետումից: Վերականգնվել են նաև ազատված և հեռացված ուսանողներ, ովքեր դիմում են ներկայացրել ռեկտորի անունով:

Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		9
Մագիստրոս		1
Ընդհանուր		10
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1	ՄԱԿ-Ի Հայկական Ասոցիացիայի «Հզորացնելով երիտասարդների հմտությունները մարդու իրավունքների պաշտպանության և Հայաստանի զարգացման համար» ծրագիր	1

2	ՀՊՄՀ ,,Շախմատ'' գիտահետազոտական ինստիտուտ, ,,Շախմատային դասի նկարներ'' հանրապետական հետազոտության արդյունքների վերլուծության կամավորական աշխատանքներ՝ 60 ժամ տևողությամբ, 2022 թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 3-ը:	15
3		
4		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	Հոգեսոմատիկ տարբեր հիվանդություններով անձանց ագրեսիվության եվ տագնապայնության առանձնահատկությունները (սրտանոթային հիվանդության եվ շաքարային դիաբետի օրինակով) /հանձնված է տպագրության/	1
2	Ֆրուստրացիա ֆրուստրացիայի մակարդակը Արցախի և Հայաստանի երիտասարդների շրջանում /հանձնված է տպագրության/	1
3	Դեռահասի վիկտիմայնության հակվածությունը որպես բուլլինգի զոհ դառնալու նախադրյալ /հանձնված է տպագրության/	1
4	Պատանիների արժեքային համակարգի և պահանջմունքերի առանձնահատկությունները /հանձնված է տպագրության/	1
5	Ծնողական դաստիարակության բարձիթողիությամբ, հակասոցիալական վարքով ընտանիքների դեռահասների պահանջմունքային ոլորտի առանձնահատկությունները /հանձնված է տպագրության/	1
6	Հուզական այրման և աշխատանքային մոտիվացիայի առանձնահատկությունները հոգեբանների և սոցիալական աշխատողերի մոտ /հանձնված է տպագրության/	1
7	-Մարմնական վնասվածքներով և անդամահատումներով զինվորների ադապտացիայի առանձնահատկությունները /հանձնված է տպագրության/	1
8	Մանկավարժական միջավայրում սոցիալական անտարբերության ընդհանուր գործոնները /հանձնված է տպագրության/	1
9	Ավագ դպրոցականի անձի տիպի ազդեցությունը մասնագիտական կողմնորոշման վրա /հանձնված է տպագրության/	1
10	Դեռահասների տագնապայնության և հուզական անկայունության հաղթահարման ուղիները ռազմական դրության պայմաններում /հանձնված է տպագրության/	1
11	Երիտասարդների իմաստակենսական կողմնորոշումների առանձնահատկություններն ու դրանց սեռային տարբերությունները/	1

	Արցախի Պետական Համալսարանի Գիտական տեղեկագիր (Հասարակական գիտություններ), ՊՐԱԿ 1, Ստեփանակերտ 2022	
12	Առաջին և երկրորդ կուրսի ուսանողների ուսումնական գործունեության շարժառիթները/ «ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2022	1
13	ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՁԵՎԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ /հանձնված է տպագրության/	1
14	Տագնապայնությունը անզավակ ընտանիքներում/ ВЕСТНИК МЕДИЦИНСКОГО ИНСТИТУТА ИМ. МЕГРАБЯНА //Научно-методический журнал, No 10 /Глав. ред. Казарян С.А.; сост.:Акопян А.С. Երևան 2022	1

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
ՊԴԱ կազմի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը ամրագրված են ՀՊՄՀ-ի կանոնադրությունում, ներքին կարգապահական կանոններում և պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում: Դասախոսական կազմի ընտրության համար ուղենիշ են ծառայում ՀՊՄՀ ռազմավարությունը, ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանը, ՄԿԾ-ի նպատակները: Ֆակուլտետը և ամբիոնները յուրաքանչյուր մասնագետի ներգրավման համար քննարկման են ենթարկում թեկնածուների բազային կրթությունը, աշխատանքային փորձը (ոլորտի)՝ իրականացնելով որակական գնահատում, հաշվի առնելով նաև ՄԿԾ-ի կարիքներն ու նպատակները, հավակնորդի կարողությունների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին: Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ գերակշիռ մասն ունի գիտական աստիճան: Ֆակուլտետի տարբեր մասնագիտություններում դասավանդում են գիտությունների 8 դոկտորներ, մեկ պրոֆեսորի պաշտոնակատար, 28 գիտության թեկնածու դոցենտներ, 11 գիտության թեկնածուներ, ինչպես նաև 15 ոլորտի առաջատար մի շարք մասնագետներ: Ֆակուլտետի մասնագետներն իրականացնում են ՀՀ կրթական, քննչական, ռազմական, սոցիոլոգիական, հասարակական ոլորտների փորձագիտական, հանրակրթական հաստատությունների ուսուցիչների և նուի-երի աշխատակիցների վերապատրաստման աշխատանքներ:

Ֆակուլտետի ՊԴԱ կազմում ներգրավված են նաև գործատուներ, ոլորտի լավագույն պրակտիկ մասնագետներ, ինչը միտված է ֆակուլտետ-գործատու համագործակցության ընդլայնմանը, ուսանողների ուսումնական գործընթացի, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման, տեսականի դասընթացի և գործնականի համադրման, ուսանողների հետագա աշխատանքային գործունեության և մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետության ապահովմանը:

Ֆակուլտետի ՊԴԱ հիմնական կազմն ամբողջովին ներգարվված է ամբիոնների գերակա գիտական ուղղությունների շրջանակներում իրականացվող հետազոտություններում: 2022թ. հունիսի 2-ի Հոգաբարձուների խորհրդի թիվ 17 որոշման համաձայն ֆակուլտետում ստեղծվել է Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնը Ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու 2 ամբիոնների և ՊԴԱ կազմի հիման վրա :



2022-2023 ուս.տարվա պրոֆեսորադասախոսական կազմի պատկերը

Հաշվետու ժամանակահատվածը համնկել է համալսարանի 100 ամյակին նվիրված միջոցառումների հետ, արդյունքում ֆակուլտետի ՊԴԱ կազմը պարգևատրվել է կառավարության ՝ ԿԳՄՍ նախարարության «Ոսկե մեդալ»-ով Ֆակուլտետի դեկան Ռ.Պետրոսյանը, պատվոգրով՝ Ս. Փիլոսյանը,համալսարանական կրթության զարգացման, երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ունեցած նշանակալի ավանդի և ՀՊՄՀ-

ի հիմադրման 100-ամյակի առթիվ պարգևատրվել են «Մանկավարժական համալսարան» մեդալ հետմահու՝ բուհում սոցիոլոգիայի ոլորտի հիմնադիր Յուրի Գասպարյանը,ինչպես նաև Կրթության հոգաբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մի խումբ դասախոսներ: Երկարամյա աշխատանքի և հոգեբանության ոլորտում ունեցած ներդրման համար «Մանկավարժական համալսարան» մեդալ է շնորհվել պրոֆեսորներ Վլադիմիր Կարապետյանին, Կամո Վարդանյանին, ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանին, դոցենտներ Լուսիկ Քյուրքչյանին, Հասմիկ Պետրոսյանին և Լիդա Արամյանին:Երիտասարդ մասնագետների պատրաստման գործում, գիտության և մանկավարժության բնագավառում ունեցած նշանակալի ավանդի համար համալսարանի 100-ամյակի հուշամեդալներ են ստացել դոցենտներ Սոնա Մակիչյանը, Գայանե Խաչիկյանը, Մարիաննա Ավետիսյանը, Լևոն Սարգսյանն ու Զարզանդ Ասատրյանը, պատվոգրեր են ստացել Մելս Մկրտումյանը, Վահրամ Քոսակյանը, Գայանե Գրիգորյանը և Լիլիթ Վարդանյանը, Անահիտ Ջիջյանը շնորհակալագրեր են շնորհվել ֆակուլտետի բոլոր անդամներին:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի ու Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ռազմավարության շրջանակներում հետազոտության զարգացման աշխատանքները ներառել են հետևյալ ուղղությունները:

Կիրառական հոգեբանության ամբիոն՝

- իրավաբանական, զինվորական հոգեբանության տեսական և կիրառական հիմնահարցեր,
- կլինիկական հոգեբանության պրոբլեմների դասակարգման և ախտորոշման սկզբունքներ,
- ամբիոնի ՊԴԱ գիտական հետաքրքրությունների շրջանակ՝ անձի սուիցիդալ վարք և պատճառականություն, շեղվող վարք և դրան առնչվող հիմնահարցեր, սոցիալական հաղորդակցում և դրա հետ առնչվող հիմնահարցեր, անձի ինքնավերաբերմունքի ու ինքնագիտակցության հետ առնչվող երևույթներ, հոգեախտաբանական երևույթներ անձի հատկությունների, վիճակների ուսումնասիրությանը, և այլն:

Ֆակուլտետում Կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ 2022 թվականի մայիսի 25-ին կազմակերպվել է <<Զինվորական հոգեբանության մարտահրավերները 21-րդ դարում, գիտություն և կյանք>> հանրապետական գիտագործնական գիտաժողով, որի շրջանակներում ներկայացված հետազոտությունների արդյունքները ամփոփվել են նաև ժողովածուի ձևաչափով:

ՀՊՄՀ-ի հիմնադրման 100, բուհի և ՀՀ Քննչական կոմիտեի միջև փորձաքննությունների ոլորտում կնքված համագործակցության հուշագրի 5-ամյակի շրջանակներում՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի նախաձեռնությամբ անցկացվեց «Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա» խորագրով կլոր սեղան: Ձեռնարկին ներկա էր բուհի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմը, ՀՀ Քննչական կոմիտեի, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող, ՀՀ ԱՆ պրոբացիոն ծառայությունների, ՀՀ Փորձաքննությունների բյուրոյի ներկայուցիչներ, ուսանողներ: Կլոր սեղանի ընթացքում քննարկված խնդիրները ամփոփվել են «Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա» խորագրով ուսումնաօժանդակ ձեռնարկում:

2022 թվականի հոկտեմբերի 21-22-ը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները» թեմայով երկօրյա միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին ներկայացուցիչներ ՀՀ-ի, Արցախի, ՌԴ-ի, Ուկրաինայի գիտակրթական հաստատություններից: Գիտաժողովի անցկացման գաղափարը ծնվել էր դեռևս 2020 թվականին՝ արցախյան 44-օրյա պատերազմի օրերին, երբ ֆակուլտետի մի խումբ հոգեբան-մասնագետներ, տարբեր ծրագրերի շրջանակներում մասնագիտական գործունեություն ծավալեցին: Գիտաժողովի նպատակային արդյունքներից մեկն էլ «Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները» հոգեբանական հիմնախնդիրներ պարբերականի 1-ին հատորի լույս ընծայումն է: Գիտաժողովի ընթացքում ներկայացվել են բնակչության հոգեբանական առողջության պահպանմանն ու սոցիալ-

հոգեբանական ուղեկցմանը միտված պրատիկ աշխատանքի և գիտական հետազոտությունների արդյունքները:

28.10.2022թ ֆակուլտետում Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի կողմից կազմակերպվել է բաց դաս սեմինար “Մարտական գործողություններին մասնակցած համշմանդամության կարգավիճակ ստացած անձանց զբաղվածության հիմնախնդիրները թեմայով”.

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Современная терапия психических расстройств		1
2	Business Ethics and Leadership /Ukraine	▪ **Directory of Open Access Security Scholarly Resources** ▪ **WorldCat** ▪ **Scilit** ▪ **Lens** ▪ **EconBiz** ▪ **Google Scholar** ▪ **Publication Forum** ▪ **Quality Open Access Marker** ▪ **Index Copernicus** ▪ **Cabells Scholarly Analytics** ▪ **Turkish Education Index** ▪ **ResearchBib** ▪ **UlrichWEB** ▪ **Norsk Senter for Forskningsdata** ▪ **OpenDOAR** ▪ **ErihPlus** ▪ **MIAR** ▪ **Dimensions** ▪ **Sherpa Romeo** ▪ **NAVER** ▪ **ResearchGate** ▪ **OpenAIRE** ▪ **DOAJ**	2
3	Психологі і суспільство Ukraine	https://doi.org/10.35774/pis2022.01.163	1
4	SCIENTIFIC NEWS	DOI:10.24234/scitific.v1i43.1	2
5			
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	SPE (SCIENTIA PAEDAGOGICA EXPERIMENTALIS), Special issue "Teaching crit5ical t5hinking". ISSN: 05822-2351		1
2	EC Psychology and Psychiatry		2
3	Science of Europe	DOI: 10.5281/zenodo.7107028	2
4	The scientific heritage/	DOI: 10.5281/zenodo.7148289	1

	Hungary		
5	Revista Mundi /Spain		2
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ	ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ	1
2	Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ Տեղեկագիր		10
3	Մանկավարժական միտք	ՀՀ ԲՈԿ	2
4	Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր	ՀՀ ԲՈԿ	6
5	Հոգեբանական հիմնախնդիրներ	ՀՊՄՀ	9
6	Արդի հոգեբանություն ԵՊՀ գիտական հանդես	ՀՀ ԲՈԿ	4
7	MAIN ISSUES OF PEDAGOGY AND PSYCHOLOGY	Crossref Worldcat GoogleScholar ErihPlus Roud Directory of Open Access IndexCopernuicus Isindexing	9
8	Alternative quarterly academic journal, Economy and Management		1
9	«Կաճառ» գիտական տարեգիրք	ՀՀ ԲՈԿ	2
	WISDOM	ISSN 1829-3824 (Print) ISSN 2738-2753 (Online)	4
	Армянский журнал психического здоровья	DOI: 10.55436/1829202X-13.2022.1-14	1
	Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԲՈԿ	1

	Լրաբեր Հայ-Ռուսական համալսարանի (հումանիտար և հասարակական գիտություններ)	ՀՀ ԲՈԿ	1
	ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION Scientific Methodological Journal	Crossreff Worldcat GoogleScholar ErihPlus Roud Directory of Open Access IndexCopernuicus	2
	Journal of Sociology: Bulletin of Yerevan University	ՀՀ Բոկ	1

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում: (տեքստը այստեղ)

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Լույս է տեսել ՀՊՄՀ-ի Կիրառական ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների թեկնածու Սուսաննա Փիլոսյանի հեղինակած հերթական հաստափոր գիրքը՝ «Ընդհանուր հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը: Այն նախատեսված է ինչպես բուհերի ուսանողների, բուհական համակարգում դասավանդող մանկավարժների և հոգեբանների, այնպես էլ մարդկային ռեսուրսների խնդիրներով զբաղվող մասնագետների և հոգեբանության հիմնախնդիրներով հետաքրքրվող անձանց համար:

Ուսումնական ձեռնարկում ներկայացված են ընդհանուր հոգեբանության, հոգեբանության զարգացման փուլերի, հոգեկանի կենսաբանական հիմքերի խնդիրները, ուսումնասիրության մեթոդները, հոգեբանական տեսությունները: Գրքում անդրադարձ է կատարված նաև հոգեկանի կառուցվածքին, իմացական գործընթացներին, անձի հոգեբանության, հաղորդակցման և գործունեության հիմնախնդիրներին: Ձեռնարկում զետեղված ուսումնական նյութը փորձարկվել է ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

Ֆակուլտետում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերը իրականացվում են հնարավորինս տեխնիկապես ապահովված լսարաններում:

Ֆակուլտետը տեղակայված է բուհի հինգ ուսումնական շենքերից Խանջյան 5 հասցեի բարձրահարկ մասնաշենքի 7-րդ հարկում:Կրթական ծրագրերի իրականացման համար

անհրաժեշտ ուսումնական միջավայր է ծառայում 2-րդ հարկից 8 լսարան / 1-2 և 3-4ժամեր/ 6-րդ հարկից 3 լսարան,7--րդ հարկից 8 լսարան, 8-րդ հարկից 8 լսարան, 9-րդ հարկից 11 լսարան: Լսարանային ֆոնդերը օգտագործվում են 1-ին և 2-րդ հերթափոխերով: Գործնական պարապունքներ են կազմակերպվում նաև շահառու կազմակերպությունների հաստատություններում և կենտրոններում: Ֆակուլտետը օտագործում է նաև բուհի հագեցած տեղեկատվական տեխնոլոգիայի կաբինետները: 2022-2023 ուսումնական տարվա կտրվածքով ֆակուլտետը համալրված է լսարանային ֆոնդերով: Քննարկման գործընթացի մեջ է հոգեբանական լաբորատորիայի ստեղծման հարցը:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը ապահովել են ներքոնշյալ համագործակցության հուշագրերը.

- Մանկավարժական համալսարանի և ՀՀ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի միջև կնքվեց համագործակցության հուշագիր:Հուշագիրը ստորագրեցին ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը և ՀՀ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի տնօրենի Սուրեն Նազինյանը:Հուշագրի նպատակն է հոգեբանության ոլորտում ապահովել գիտություն-պրակտիկա սերտ փոխգործակցությունը, պատրաստել անհրաժեշտ տեսական գիտելիքներ ունեցող պրակտիկ հոգեբանների, խթանել ոլորտի մասին բուհի ուսանողների իրազեկվածությանը, ինչպես նաև կենտրոնի մասնագիտական վերապատրաստմանն ու վերաորակավորմանը:Հուշագրի համաձայն՝ ֆակուլտետը կիրականացնի Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի տարաբնույթ խնդիրների վերաբերյալ տեսական-գիտական ուսումնասիրություններ, կտրամադրի խորհրդատվական եզրակացություններ, փորձի փոխանակման և ուսումնասիրության արդյունքում՝ կստեղծվի ռիսկի գնահատման դինամիկ մոդել:Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետը կմշակի նաև գործիքակազմ, որը կընդգրկվի դիֆերենցիալ մոտեցումների հիման վրա գործող թեստերի համակարգում, իսկ մասնագիտական ներուժի միջոցով կձևավորվի աշխատողի գործունեությունը կարգավորող համակարգ:«Ֆակուլտետի դասախոսական կազմը կանցկացնի կենտրոնի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ, ուսանողները ուսումնաարտադրական պրակտիկա, իսկ շրջանավարտներն էլ հնարավորություն կունենան աշխատանքային փորձ ձեռք բերել կենտրոնում»,-aspu.am-ի հետ զրույցում նշեց ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը՝ հավելելով, որ կողմերը կհամագործակցեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ բնագավառներում ևս:

- Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն ՀՈԱԿ-ի հետ

-ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության հետ
- պայմանագրեր Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի հետ,
- Երևանի Զատիկ երեխաների աջակցության կենտրոն- ՊՈԱԿի հետ

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
1. Ուկրաինայի Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում և առաջարկությամբ 2022 թվականի հունվարի 24-ին հանդիպում է իրականացվել Կիպրոսի, Լիտվայի գործընկերների հետ՝ Erasmus+ի շրջանակներում ,,Ձեռնարկատիրական հմտություններ սոցիալական աշխատողների համար" խորագրով համատեղ ծրագրի մշակման և ներկայացման նպատակով: Համալսարանի միջազգային համագործակցության բաժնի հետ համագործացության արդյունքում մշակվել են հետագա քայլերը, ծրագիրը: Ֆակուլտետից ծրագրում նախապես ընդգրկվել են ֆակուլտետի դեկան, հ.գ.թ., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, հ.գ.թ.,

դոցենտ Ս.Ա.Մակիչյանը, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ, փ.գ.թ. Ա.Ռ.Ջիջյանը և ամբիոնի դասախոս Գայանե Ասատրյանը:

2. 2022 թվականի մարտի 11-ին տեղի է ունեցել վերապատրաստում "Հոգեկան առողջություն. ետպատերազմյան իրավիճակ՝ պատերազմի մասնակիցներ և նրանց ընտանիքի անդամներ" խորագրով, որը կազմակերպվել է Չիկագոյի գործընկերների կողմից՝ Dr. Patricia H. A. Perez, Dr.Armine Johnson, Lucina Babayants, Ani Hakverdyan: Վերապատրաստմանը մասնակցել են ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ՊԴԱ և ուսանողների, ինչպես նաև Արցախի պետական համալսարանի ՊԴԱ թվով 59 ներկայացուցիչներ, որոնք ստացել են հավաստագրեր՝ Չիկագոյի մասնագիտական հոգեբանության դպրոցի կողմից:
3. 2022 թվականի մայիսի 3-6-ը Erasmus+ ծրագրի շրջանակներում աշխատանքային այցով Մանկավարժական համալսարանում էր Մեծ Բրիտանիայի Քիլի համալսարանի դասախոս, նեյրոլեզվաբան Ստանիսլավ Գլազևսկին: Վերջինս բուհ կատարած այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ նաև Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների հետ: Քիլի համալսարանի դասախոսը ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացրեց նաև հոգեբանության ոլորտում արված նոր հետազոտությունների արդյունքները, բուհում, դպրոցներում աշխատանքային մեթոդների կիրառումը: Ծավալվեցին մասնագիտական քննարկումներ:
4. 2022 թվականի ապրիլ ամսին սկիզբ դրվեց նաև Նիդերլանդների Մաստրիխտի համալսարանի հետ համագործակցությանը, որի շրջանակներում առաջարկվեց համագործակցել առցանց դասընթացի շրջանակներում /virtual mobility/: Վերջինս հնարավորություն կտար Մաստրիխտի և ՀՊՄՀ-ի հոգեբանության ֆակուլտետի ուսանողներին միասին մասնակցել դասընթացին: Գիտության միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալի ուղղորդմամբ և մասնակցությամբ ծրագրում ի սկզբանե ընդգրկվել են Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, հ.գ.թ., դոցենտ Մարիաննա Ավետիսյանը, Հոգեբանության ամբիոնի դասախոս Գերասիմ Հարությունյանը: Վերջինս չի մասնակցել ծրագրի բուն ընթացքին համալսարանից դուրս գալու պատճառով: Ծրագրի բուն փուլը /դասընթաց ուսանողների հետ, խմբային աշխատանքներ/ մեկնարկել է սեպտեմբերի 5-ին և ավարտվել հոկտեմբերի 9-ին: Ծրագրում ընդգրկվել են բակալավրի և մագիստրոսի կրթության հոգեբանություն մասնագիտության թվով 17 ուսանողներ, որոնք բաժանվել են 4 խմբի: Կատարված աշխատանքները ուսանողները կներկայացնեն դեկտեմբերի 9-ին: Հանդիպմանը ներկա կլինեն նաև Մաստրիխտի համալսարանի ներկայացուցիչները:
5. 2022 թվականի մայիսի 20-ին ֆակուլտետում հանդիպում է տեղի ունեցել Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի ներկայացուցիչների՝ Փորձարարական հոգեբանության ինստիտուտի փոխնախագահ Եվգենի Խոզեի, Օտարերկրյա դիմորդների հարցերով զբաղվող բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանի և Աննա Չիկեևայի հետ: Հանդիպմանը ներկա էին գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ս.Ա.Մակիչյանը, ուսումնական հարցերով դեկանի տեղակալ Լ.Արամյանը, ամբիոնների վարիչներ Լ.Սարգսյանը, Մ.Ավետիսյանը, ՊԴԱ կազմը և ուսանողներ: ՄՊՀՄՀ-ի ներկայացուցիչները ներկայացրել

են իրենց մասնագիտական կրթական ծրագրերը, համագործակցության հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց երկուստեք ծանոթանալ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլանների հետ՝ դրանք համադրելու և համատեղ կրթական ծրագիր մշակելու նպատակով: 2-րդ հանդիպումը ՄՊՀՄՀ-ի ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ 2022 թվականի հունիսի 29-ին, որին ներկա էին ՄՊՀՄՀ միջազգային կապերի բաժնի վարիչ Ն.Վ.Սամոտեսովան, Օտարերկրյա դիմորդների հարցերով զբաղվող բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանը, Կրթության հոգեբանության ֆակուլտետի ներկայացուցիչ Ի.Վ.Եմելյանովան, ,,Պրոֆեսոր Լ.Ֆ.Օբուխովայի անվան տարիքային հոգեբանության ամբիոնի վարիչ Ի.Վ.Շապովալենկոն, ,,Խաղը և մանկությունը" մագիստրոսի կրթական ծրագրի ղեկավար, ,Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Ի.Ա.Ռյաբկովան: ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ներկայացուցիչներից հանդիպմանը ներկա էին դեկան Ռուզաննա Պետրոսյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ս.Ա.Մակիչյանը, ուսումնական հարցերով դեկանի տեղակալ Լ.Արամյանը, ամբիոնների վարիչներ Լ.Սարգսյանը, Մ.Ավետիսյանը: Երկուստեք քննարկվեցին մագիստրոսական կրթության ,,Հոգեբանություն" մասնագիտական կրթական ծրագրի համադրելիության խնդիրները և երկու դիպլոմով նոր կրթական ծրագրի մշակման հնարավոր տարբերակները:

6. Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիանա Ավետիսյանն ավարտել է <<Պոզիտիվ հոգեթերապիայի ակադեմիայի (Վիսբադեն, Գերմանիա)>> կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին (200 ժամ տևողությամբ):
7. Ամբիոնի դոցենտ Գոռ Եսայանը Կալուգայի պետական համալսարանում 2022թ. մայիսի 26-ին հանձնել է որակավորման քննություն և ստացել է դատական հոգեբան փորձագետի որակավորման դիպլոմ:
8. Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.դ. Վլադիմիր Կարապետյանը 2022 թվականի դեկտեմբերի 5-ին առցանց տարբերակով բաց դասախոսությամբ հանդես կգա տվյալ հաստատության ներկայացուցիչների և ուսանողների համար ,,Իմացական աններդաշնակություն՝ պատճառահետևանքային կապեր" թեմայով:
9. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրոս Անի Դավթյանը մասնակցել է Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանում տեղի ունեցած «Անկախ պետությունների համագործակցություն-լավագույն ուսանող 2022» միջազգային նախագծին: ՀՊՄՀ մագիստրոսը ներկայացրել է «Ավագ դպրոցականի անձի տիպի ազդեցությունը մասնագիտական կողմնորոշման վրա» թեմայով գիտական հոդվածը. գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Խաչատրյան: Անի Դավթյանի աշխատությունը հանձնաժողովը հավանության է արժանացրել և բարձր գնահատել: Վերջինս արժանացել է առաջին կարգի դիպլոմի և շքանշանի, իսկ գիտական ղեկավար Արմինե Խաչատրյանը՝ պատվոգրի:

Համագործակցության համար հանձնաժողովը հոգեբանական գիտությունների դոկտոր, ՀՊՄՀ պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանին պարգևատրել է շնորհակալագրով:

10. Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնը ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյակի շրջանակներում այս տարի առաջին անգամ կազմակերպել էր «Հոգեբանական հետազոտություններ» խորագրով ուսանողական մրցույթ, որին մասնակցում էին ՀՊՄՀ-ի, Արցախի պետական համալսարանի՝ բակալավրիատի և մագիստրատուրայի 12 ուսանող:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանահակատվածում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ իրականացված աշխատանքները բխել են համալսարանի 2022-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրից և ֆակուլտետի 2022 գործողությունների պլանից: Գործողությունների պլանը և կատարված քայլերը քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում /հիմք՝ արձանագրություններ/: Իրականացված միջոցառումները հնարավորինս նպաստել են համագործակցության շրջանակների ընդլայնմանը: Սակայն դեռևս առկա են խնդիրներ՝ կապված միջազգային համագործակցության շրջանակների հետագա ընդլայնման, ՊԴԱ և ուսանողների՝ փոխանակման ծրագրերում ընդգրկվածության թվի աճի, համատեղ ուսումնական, գիտահետազոտական ծրագրերի մշակման ուղղությամբ: Կնքվել են Հուշագրեր Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն ՀՈԱԿ-ի, ՀՀ արդարադատության նախարարաության պրոբացիայի ծառայության, և պայմանագրեր ,,Առաքելություն Հայաստան" ԲՀԿ-ի, ,, Երևանի Զատիկ երեխաների աջակցության կենտրոն" ՊՈԱԿ-ի հետ:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնք նպաստել են որակի ապահովման ներքին համակարգը արդյունավետության բարձրացմանը: Դրանք են.

- Թեմատիկ տրոհումների վերանայումը
- Առարկայական նկարագրերի վերանայումը, որտեղ մեծ ուշադրություն է դարձվել վերջնաարդյունքների ճիշտ վերաձևակերպմանը՝ Բլումի տեսության համաձայն
- Վերանայվել են գնահատման չափանիշները
- Ուսումնասիրվել է դասախոսների փաթեթները և դրանց համապատասխանությունը թեմատիկ տրոհմանը
- Միջանկյալ հարցաշարերի և քննական հարցաշարերի առկայությունը կիսամյակի սկզբից
- Հետևել ենք էլեկտրոնային մատյանների գրանցմանը, ուսանողների հաշվառմանը

Նշված աշխատանքներից բացի իրականացվել և շարունակվում է իրականացվել հարցումներ ուսանողների շրջանում, որտեղ գնահատվում է դասախոսը և դասընթացը ուսանողի աչքերով: Իրականացվել են հարցումներ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բոլոր

բաժինների երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսեցիների շրջանում: Այժմ նախապատրաստում ենք իրականացնել համապատասխան հարցումը նաև մագիստրոսների շրջանում: Ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգը արդյունավետ է, քանի որ դա պարտավորեցնում է ամբիոնի դասախոսներին և ամբիոնների պատասխանատուներին առավել ակտիվ և պարտաճանաչ ներգրավվել դասախոսությունները պլանավորելու, դրանք կրթական չափանիշներին և վերջնաարդյունքներին համապատասխանեցնելու համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս ուսանողներին, համապատասխան ժամկետների մեջ ծանոթանալ և հասկանալ թեմատիկ տրոհումանը, առարկայի նպատակներին և խնդիրներին: Փաթեթների տեղադրումն էլ հնարավորություն է տալիս ժամանակին ծանոթանալ դասախոսության նյութերին:
Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետը, համապատասխան ամբիոնների պատասխանատուների հետ համատեղ, որակի ապահովման վարչությանն է ներկայացրել իր այն հաշվետվությունը, որտեղ առավել մանրամասն վերլուծված են ֆակուլտետի բոլոր բաժինների երկրորդից մինչև չորրորդ կուրսեցիների հարցման արդյունքները, որտեղ ուսանողները ակտիվ մասնակցել են հարցմանը, որը ցույց է տալիս նրանց ներգրավվածության բարձր աստիճանը: Ուսանողները 1-5բալ գնահատականներով գնահատել են բոլոր դասավանդվող առարկաները, դասախոսներին, ինչպես նաև ներկայացրել են առաջարկություններ՝ ուղղված հետագա ուսումնական գործընթացի բարելավմանը: Այս ամենը, առավել մանրամասն ներառված է համապատասխան հաշվետվության մեջ: Ինչպես արդեն նշել էինք, ներկայումս կազմակերպվում է նույն ուսումնասիրությունը իրականացնել նաև մագիստրոսների շրջանում: Ուսումնասիրելով ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը՝ կարծում ենք, որ այն կարելի է գնահատել լավ, քանի որ ապահովված է դասախոս ուսանող կապը, փոխհամագործակցությունը, որը իր հերթին դրական է ազդում ընդհանուր ուսումնական գործընթացի վրա: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները ակտիվ ներգրավված են նաև պրակտիկայի գործընթացի մեջ, որը նրանց հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները կիրառել գործնական դաշտում:Այս նպատակով բուհը և ֆակուլտետը համագործակցում են մի շարք կառույցների հետ, որոնք հետագայում կարող են նաև հանդես գալ որպես գործատուներ լավագույն ուսանողների համար: Կազմակերպելով պրակտիկան՝ բուհը լավագույնս ապահովում է ուսանող-գործատու կապը, ծանոթացնում է մասնագիտության գործնական կիրառության դաշտին՝ խրախուսելով մասնագիտական հետագա զարգացումը:

Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Կատարված ուսումնական աշխատանքի ծավալը լիովին համապատասխանում է ծրագրվածին:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը կառուցվել են ուսանողակենտրոն ուսուցման մեթոդաբանությանը համապատասխան: Հաշվետու տարում այս ուղղությամբ կատարված աշխատանքների թերությունները վեր են հանվել և այս ուղղությամբ աշխատանքներ են կատարվում:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների գնահատումն իրականացվել է համալսարանի կողմից տրամադրված գնահատման չափորոշիչների և բաղադրիչների հիման վրա:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը. ա/ քննարկվել և վերանայվել են դիպլոմային աշխատանքների և թեզերի թեմաները, բ/ քննարկվել են դիպլոմային աշխատանքներին և թեզերին ներկայացվող պահանջները, գ/ քննարկվել են կրթության ոլորտի հոգեբանների վերապատրաստման ծրագրերը, դ/ քննարկվել են ասպիրանտների և հայցորդների թեմաների վերաբերյալ հաղորդումներ, ատեստավորման հետ կապված խնդիրներ:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
2022 թ.-ի հուլիսի 6-ի թիվ 1 ամբիոնի նիստ	Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Հարությունյան Նաիրաի թեկնածուականի նախապաշտպանություն:	Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Հարությունյան Նաիրաին երաշխավորել պաշտպանության:

2022 թ.-ի սեպտեմբերի 27-ի թիվ 2 ամբիոնի նիստ	2022-2023 ուս. տարվա ամբիոնի ԱՈՒՄՓ-ի վերանայում ու հաստատում: 2022-2023 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում, ղեկավարների նշանակում: Ամբիոնի 2022-2023 ուս. տարվա աշխատանքների պլանի հաստատում:	2022-2023 ուս. տարվա ԱՈՒՄՓ-ը վերանայել կատարել համապատասխան փոփոխությունները: Վերանայել 2022-2023 ուս. տարվա մագիստրոսական թեզերի, բակալավրիատի ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները և հաստատել: Հաստատել Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանը:
2022 թ.-ի հոկտեմբերի 20-ի թիվ 3 ամբիոնի նիստի	Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի ասպիրանտների և հայցորդների հաշվետվության ներկայացում:	Հիմք ընդունելով հաշվետվությունները՝ ատեստավորել Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի ասպիրանտներին և հայցորդներին:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	15	1	1	3	11	3	3	10
Համատեղող	8							8
Ժամավճարային								

Ընդա- մենը								18

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Հաշվետու տարում պրոֆեսորադասախոսական կազմը իրականացրելէ ուսումնամեթոդական աշխատանքներ 1. Առարկայական դասընթացների ձաթեթների վերանայում, մշակում Խորհրդատվություններ ուսանողների հետ

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնը ստեղծվել է 2022թ. Օր հրանաի համարը, և հաշ վետու ժամանակահատվածի գործունեությունը ընդգրկում է սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Վերանայվել են ուսումնամեթոդական փաթեթները, հրատարակված դասագրքերի հիման վրա կազմվել են առարկաների փաթեթները: Վերանայվել են մագիստրոսների ատենախոսությունների թեմաները, շեշտը դրվել է մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորման և հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա: Թեմաները ձևակերպվել են կոնկրետ նեղ գիտական գործնական և ժամանակակից հասարակություն համար արդիական հիմնախնդիրների շրջանակներում:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
	Կիրառական			

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Մակիչյան Սոնա Արամյան Լիդա	Կրտսեր սպաների շրջանում լիդերության դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները	
Մակիչյան Սոնա Արամյան Լիդա Ավետիսյան Անահիտ	Ավագ դպրոցականների կոնֆլիկտային փոխհարաբերությունների առաջացման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները	
Պետրոսյան Ռուզաննա Մակիչյան Սոնա Արամյան Լիդա	Ապագա հոգեբանի մասնագիտական դիրքորոշման բաղադրիչների դինամիկան մանկավարժական պրակտիկայի ընթացքում	
Khachatryan A., Hakobyan N., Gevorgyan S., Petrosyan L.	The Problem of Personal Development in the Context of Social Anomie	7-14
Khachatryan A., Hakobyan N., Dabaghyan A.	THE PHENOMENON OF ANOMIE IN THE CONTEXT OF MARGINALITY	89-104
Khachatryan A., Hakobyan N.	Post-War Anomie in the Field of Management Leadership and Anomie Overcoming Models	94-102

Khachatryan A., Hakobyan N., Dabaghyan A.	Strategies of Post-War Anomie's Overcoming in the Fields of Social Interactions and Business	105-112
Khachatryan A., Hakobyan N., Sarjanyan V.	SOCIO-PSYCHOLOGICAL ANOMIE OVERCOMING MODELS IN A TRANSITIONAL SOCIETY	358-366
Խաչատրյան Ա., Հակոբյան Ն.	ԿՅԱՆՔԻՑ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	215-228
Արմինե Խաչատրյան Մարիամ Քալոյան	ԴՊՐՈՑԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՐԵՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	
Արմինե Խաչատրյան, Անժելա Սարգսյան	ИГРЫ-УПРАЖНЕНИЯ, СПОСОБСТВУЮЩИЕ РАЗВИТИЮ ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА УЧАЩИХСЯ ПРИ ОСВОЕНИИ ШАХМАТНОЙ ТЕМАТИКИ	
Արմինե Խաչատրյան, Անժելա Սարգսյան	EXPERIMENTAL STUDIES OF THE ATTENTION CHARACTERISTICS OF ELEMENTARY SCHOOL STUDENTS STUDYING CHESS DOI 10.24234/se.v6i2.295	28-40
Արմինե Խաչատրյան, Անժելա Սարգսյան	PSYCHOLOGICAL STUDIES OF COGNITIVE STYLES	
Միքայելյան Մ.Ա., Հակոբյան Ն.Մ.	Ուսանողների սուբյեկտիվ բարեկեցության և հաջողությունների հասնելու ձգտման հարաբերակցությունը	73-83

Վարդանյան Լիլիթ Շաբոյան Մերի	Լոգոնևրոզը որպես հետպատերազմական սթրեսային ապրումների հետևանք	10 էջ
Վարդանյան Լիլիթ Սարգսյան Վահան	Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա: Ուսումնաօժանդակ ձեռնարկ	8 էջ
Քյուրքչյան Լուսյա, Հովհաննիսյան Եվա	Մանկավարժական բուհի ուսանողների քննական սթրեսի հաղթահարման քոպինգ ռազմավարությունների հետազոտություն	8 էջ
Քելոյան Մ. Հ.	Անձի հոգեբանական և սոցիալ-հոգեբանական անվտանգության չափանիշները	110-112
Քելոյան Մ. Հ.	Ուսումնական տեքստերի հասկացմանը միտված ուսումնական գործողությունների ձևավորումը	117-131
Келоян М.А., Арутюнян Н.С.	ПОЛОВОЗРАСТНЫЕ ОСОБЕННОСТИ ЦЕЛЕВЫХ УСТАНОВОК МОЛОДЕЖИ	227-232
Келоян М.А.	О некоторых аспектах синергии в высшем образовании	20-24
Арутюнян Н.С.	ЗАВИСИМОСТЬ МОТИВОВ ДОСТИЖЕНИЯ УСПЕХА И ИЗБЕГАНИЯ НЕУДАЧИ ОТ УРОВНЯ РЕФЛЕКСИВНОСТИ	195-199
Келоян М.А., Арутюнян Н.С.	ПОЛОВОЗРАСТНЫЕ ОСОБЕННОСТИ ЦЕЛЕВЫХ УСТАНОВОК МОЛОДЕЖИ	227-232

Harutyunyan Naira	COMPARATIVE THEORETICAL ANALYSIS OF EXPECTATIONS IN DIFFERENT PSYCHOLOGICAL CONCEPTS	
Арутюнян Н.С.	ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОЖИДАНИЙ СТУДЕНТОВ ПЕРВОГО КУРСА В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ	
Հարությունյան Ն.	Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հոգեբանական հետևանքների փորձաքննության առանձնահատկությունները	
Խաչիկյան Գայանե	Մարտական սթրեսի հետևանքների ազդեցությունը ռազմական գործողությունների մասնակիցների հոգեկանի վրա	
Գևորգյան Ս.Ռ, Պետրոսյան Ռ.Հ., Սարգսյան Լ.Կ.	Տեղահանվածների սոցիալ-հոգեբանական հարմարումը կյանքի նոր պայմաններին	

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Միքայելյան Մ.Ա.	Հակոբյան Ն.Մ.	Ուսանողների սուբյեկտիվ բարեկեցության և հաջողությունների հասնելու ձգտման հարաբերակցությունը	«Արդի հոգեբանություն» գիտական հանդես
Միքայելյան Մ.Ա.	Գրիգորյան Ջուլիետա	Երեխայի հոգեբանական հարմարման առանձնահատկությունները նախադպրոցական հաստատությանը	ՀՌՀ հրատարակչություն

Միքայելյան Մ.Ա.	Մկոյան Կ.Դ.	Էրիքսոնյան ուսուցողական պատմությունների ներգործությունը անձի ինքնազգացողության և տրամադրության վրա	ՀՌՀ հրատարակչություն
Խաչատրյան Արմինե	Եվա Բրիկյան	Դեռահասների տագնապայնության և հուզական անկայունության հաղթահարման ուղիները ռազմական դրության պայմաններում	ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Խաչատրյան Արմինե	Եվա Բրիկյան	Դեռահասների հետպատերազմյան տագնապայնության և հուզական անկայունության հաղթահարումը	Հանրապետական գիտաժողով <<Զինվորական հոգեբանության մարտահրավերները 21-րդ դարում, գիտություն և կյանք>>

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
ՀՊՄՀ	<<Հոգեկան առողջությունը. ձևավորման և պահպանման ուղիները>>, Մակիչյան Սոնա	

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնի դասախոսները բազմիցս մասնակցել են հեռուստահաղորդումների, հարցազրույցների, մամլո ասուլիսների:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
Մեթոդական			
Դաստիարակչական			

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնը պարբերաբար փոխադարձ կապի մեջ է գտնվում բուհի Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի հետ, բոլոր որակի ապահովման միջոցառումները իրականացվում են ըստ նախապես կազմած պլանի որտեղ անհրաժեշտ միջոցառումները մանրամասը նկարագրված են և հստակեցված են պատասխանատուները և ժամկետները: 1.Իրականացվել են ՄԿԾ-ների բարելավման քայլերի իրականացմանն ուղղված առաջարկների քննարկում: 2.Առաջարկվել են ՄԿԾ խմբերը սահմանված ժամկետներում իրականացնեն ՄԿԾ հենանշում և արդյունքների ներկայացում: 3.Իրականցվել են SWOT վերլուծության:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ամբիոնի որակի պատասնատուն ՊԴԱ կազմը մշտապես կապի մեջ են Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պատասխանատուների հետ, մասնակցում են բուհի և ՈԱԱԿ-ի կազմակերպված սեմինարներին և դասընթացներին, որտեղ ձեռք բերված գիտելիքները իրենց կիրառությունն են գտել մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման արդյունքահեն առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների կազման գործընթացներում: Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները: (օրինակ՝ հարցումներ և այլն) 1.Ներամբիոնային օղակներում որակի ապահովմանը ուղղված առկա խնդիրների քննարկում 2 .Ամբիոնի ուսումնական, հետազոտական գործունեության վերլուծություն: 3. Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովում (պրակտիկայի բազայի պատասխանատուներ), գործատուների հետ որոակի ապահովման հեռանկարների քննարկում:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
ՄԿԾ-ի վերանայում և բարելավում	Ամբիոնի վարիչ, ՊԴԱ, ամբիոնի որակի պատասխանատու	Ուղիների քննարկում
Մշտադիտարկամնա պլանի կազմում	Ամբիոնի որակի պատասխանատու	Ուղիների քննարկում
Ամենամսյա մշտադիտարկումների իրականացում	Ամբիոնի որակի պատասխանատու	Ուղիների քննարկում

Կիրառական հոգեբանության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Կատարված ուսումնական աշխատանքի ծավալը լիովին համապատասխանում է ծրագրվածին:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները և քաղաքականությունը կառուցվել են ուսանողակենտրոն ուսուցման մեթոդաբանությանը համապատասխան: Հաշվետու տարում այս ուղղությամբ կատարված աշխատանքների թերությունները վեր են հանվել և այս ուղղությամբ աշխատանքներ են կատարվում:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսանողների գնահատումն իրականացվել է համալսարանի կողմից հաստատված գնահատման չափորոշիչների և բաղադրիչների հիման վրա: Ամբիոնը հիմնվում է ԲՈՒՀ-ի կողմից հաստատած ակադեմիական ազնվության ապահովման կարգի և դրանում արտացոլված հիմնական դրույթների վրա:
2022 թ. մարտի 11-ին, N7	1. Պրակտիկայի ամփոփում: 2. Բակալավրատի կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում /վերջնական/: 3. Մասնագիտական պրակտիկայի կազմակերպում «Լրագրություն» բաժնի 1-ին կուրսում: 4. Ընթացիկ հարցեր: • Հոգեբանական գիտությունների թեկնածու Դիանա Հովիկի Մարկոսյանի «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը» աշխատությունը Լրագրության բաժնի ուսանողների համար որպես ուսումնամեթոդական ձեռնարկ հաստատելու մասին հարցը: • Դասալսումների վերաբերյալ	Պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար: Հաստատել բակալավրատի կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզի թեմաները: Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել տարբեր լրատվամիջոցների, և մեր ուսանողները կանցկացնեն իրենց ուսումնական պրակտիկան • ՀՊՄՀ Ռադիոֆամայում Միջնորդել Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդին՝ վերոնշյալ գիրքը հաստատելու որպես ուսումնամեթոդական ձեռնարկ Լրագրության բաժնի ուսանողների համար: Դասալսումների արդյունքները համարել բավարար:

2022 թ. ապրիլի 29-ին, N8	1.Պետական քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում: 2. Պրակտիկայի ամփոփում: 3. Ընթացիկ հարցեր:	Ծանոթանալով սեղմագրերին և լսելով ուսանողներին՝ հանձնաժողովը անդրադարձավ յուրաքանչյուր աշխատանքին, մատնանշելով թերությունները և թերացումները, առաջարկեց մինչև պաշտպանությունը ընկած ժամանակահատվածում շտկել և խմբագրել աշխատանքները՝ հաշվի առնելով արված դիտողությունները և առաջարկությունները: Պաշտպանության թույլտվություն ստացան բոլոր ուսանողները: Ըստ ձևաչափի մագիստրոսական թեզերը մինչև պաշտպանությունը առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ներկայացվեն գրախոսության: Պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար:
2022 թ. մայիսի 27-ին, N9	1.Պետական քննությունների արդյունք ների ամփոփում: 2.Դասախոսների և ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին: 3.2-րդ կիսամյակի սեսիոն քննական տոմս երի քննարկում և հաստատում, զեկ. ամբիոնի վարիչ՝ դոցենտ Լ. Գալստյան: 4.Ընթացիկ հարցեր:	Պետական ավարտական քննությունների արդյունքները համարել լավ: 2. Ամբիոնի դոցենտ Արսեն Առաքելյանը մասնակցել է՝ ՌԴ Մոսկվա քաղաքում "Актуальные проблемы развития и формирования личности обучающегося'' Հոգեբանության ֆորումին (մայիսի 10-15-ը), Մուրմանսկ քաղաքում անցկացվող ''Северный Характер" կինոֆառատոնի, որպես ժյուրիի անդամ (մայիսի 25-29-ը): Հաստատել 2-րդ կիսամյակի քննական հարցաշարերը: Դասալսումների արդյունքները համարել բավարար:
2022թ.հու նիսի 20-ին, N10	1.Պրոֆեսորադասախոսական կազմի վերջին հինգ տարիների	Ընթացքի մեջ են մի շարք ստեղծագործական և գիտամեթոդական աշխատանքներ: Կան

	ստեղծագործական,գիտամեթոդական աշխատանքերի քննարկում: 2.Ամբիոնի դասախոսների տարեկան հաշվետվությունը իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ: 3.Ընթացիկ հարցեր: •Կարծիք Արման Ալեքսանդրի Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակով)» թեմայով ատենախոսության մասին և և Ժ.01.06. «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու հարցը:	հետաքրքիր կարևոր ծրագրեր, որոնք կիրականացվեն հաջորդ ուս տարում: կազմով ձևավորելու մասին: Արման Ալեքսանդրի Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված «Ժուռնալիստիկա» Ժ.01.06 մասնագիտությամբ:
2022 թ. հուլիսի 4-ին, N11	1.Սեսիոն քննությունների ամփոփում, զ եկ. ամբիոնի վարիչ՝ դոցենտ Լ.Գալստյան: 2.Ամբիոնի տարեկան հաշվետվության քննարկում. զեկ. ամբիոնի վարիչ՝ դոցենտ Լ. Գալստյան	Սեսիոն քննությունների արդյունքները համարել բավարար: Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնիում իրականացվել են դասալասումներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և թատրոններ, հրավիրվել են լրագրության ոլորտում ճանաչված հմուտ մասնագետներ վարպետության դասեր անցկացնելու համար:
2022 թ. օգոստոս ի 31-ին N1	1. 2022- 2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում: 2. 2022 - 2023 ուս. տարվա դասաբաշխման ծ անոթացում:	Հաստատել 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանը: Հաստատել ամբիոնի 2022 - 2023 ուս. տարվա ծանրաբեռնավածությունը:

	3. 2022 - 2023 ուս. տարվա ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում՝ զեկ. Լ.Գալստյան: 4.Նոր առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում: 5.Քննարկել անհատական ժամերի հարցը: 6.Ընթացիկ հարցեր:	Դպրոցներում հանդիպումներ կազմակերպել բարձր դասարանցիների հետ՝ ներգրավելով բուհի դասախոսներին,հանրապետությ յան ճանաչված լրագրողներին՝ լրագրողի մասնագիտությունը ներկայացնելու և հետաքրքրությունը ավելացնելու նպատակով: Բաց դռների օր կազմակերպել դպրոցականների մասնակցությամբ: Հաստատել էլեկտրոնային ուսուցման Google Classroom-ի հարթակում տեղադրվող դասընթացների, առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Ավելի լրջորեն մոտենալ անհատական ժամերի կատարմանը և ժամանակին լրացնել մատյաններ ը:
2022 թ. հոկտեմբերի 14-ին N2	1. Ամենամսյա դասալսումների անցկացում և քննարկում: 2. Բակալավրիատի կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում /նախնական/, աշխատանքների ներկայացվող պահանջների չափանիշների սահմանում և հաստատում: 3. Ուսումնական պրակտիկայի կազմակերպումը ''Լրագրություն'' բաժնի 4-րդ կուրսի և ''Լրագրություն'' բաժնի 2-րդ կուրսում: 4. Ընթացիկ հարցեր:	Դասալսումների արդյունքները համարել բավարար: Հաստատել ավարտական աշխատանքների, կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել տարբեր լրատվամիջոցների, և մեր ուսանողները կանցկացնեն իրենց ուսումնական պրակտիկան ·Առավոտ օրաթերթում,Արմենիա հեռուստաընկերությունում . ՀՊՄՀ RadioFama ռադիոյում Պրակտիկայի ընթացքում ղեկավարները պետք է պարբերաբար հանդիպեն ուսանողների հետ, լինեն հետևողական:

2022 թ. նոյեմբերի 18-ին N3	1.Աշխատանքային և ուսանողական կարգապահության հարցը: 2. Պարբերաբար անցկացնել վարպետության դասեր՝ ոլորտում ճանաչված մասնագետների մասնակցությամբ: 3. Պրակտիկայի ամփոփում: 4. Ընթացիկ հարցեր:	Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսանողների և դասախոսների կարգապահության հարցին: Դասախոսները պետք է ժամանակին կատարեն իրենց պարտականությունները: Պարբերաբար հրավիրել փորձառու և ճանաչված մասնագետների վարպետության դասեր անցկացնելու համար: Պրակտիկայի արդյուքները համարել բավարար:
2022 թ. դեկտեմբերի 1-ին N4	1. 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների նախապատրաստում, քննական տոմսերի քննարկում և հաստատում: 2. Տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում: 3. Ընթացիկ հարցեր:	Բավարար գնահատել առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Ամբիոնի նիստին քննարկվեց և հաստատվեց տարեկան հաշվետվությունը: Դասալսումների արդյունքները համարել բավարար:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ. թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	16/8		1	4	2	1	5	
Համատեղող	1		1	1			1	

ժամա վճարային								
Ընդա- մենը	16		2	5	2	1	6	16

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Հաշվետու տարում հիմնական ուշադրությունը բևեռել է մանկավարժական տիրույթում մեդիագրագիտության տարրերի կամ որպես ամբողջական առարկայի դասավանդման ուսումնամեթոդական հարցերին, ինչպես նաև մուլտիմեդիոն լրագրության հիմնախնդիրներին: Այս մեթոդների կիրառման արդյունավետության բարձրացման համար նախորդ հաշվետու տարվա համեմատ ավելի մեծ տեղ է հատկացվել ուսանողների ստեղծագործական ինքնուրույնության խթանմանը՝ համապատասխանաբար վերանայելով և վերահաստատելով ուսումնամեթոդական առարկաների նկարագրերը:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Խնդիր է դրվել հետազոտել արդի լրագրությանը նետված մարտահրավերների՝ սոցիալական ցանցերում այսպես կոչված «հանրային» կամ այսպես կոչված «ժողովրդական» լրագրության մրցակցային առանձնահատկությունները, կատարել վերլուծություն, առաջադրել դրանց դիմակայելու գործիքակազմի որոշման մեթոդներ:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Լույս է տեսել Սերգո Երիցյանի գիրքը՝ նվիրված հանրահայտ լրագրող Վլադիմիր Պոզներին («Իմ սիրտը հայկական կողմում է / Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո Դա Վինչիից»): Լույս են տեսել Սերգո Երիցյանի և Մերի Թադևոսյանի հետ համատեղ ուսումնաօժանդակ ձեռնարկը՝ «Տեղեկատվական հոսքեր. լրագրությունից մինչև մուլտիմեդիա (ժամանակակից հաղորդակցության տեսության և պրակտիկայի հարցեր)», ամբիոնի դասախոս Դիանա Մարկոսյանի ուսումնամեթոդական

ձեռնարկը՝ «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրները»:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Նշված գիտական նյութերը կիրառվել են ուսումնական գործընթացում՝ որպես ուսումնաօժանդակ նյութեր: Կազմվել, վերլուծվել և վերահաստատվել են ԱՈՒՄՓ-ները, տեղադրվել հարթակում. դասընթացները կազմակերպվել են այդ փաթեթների օգնությամբ:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
	Կիրառական			

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«ՏԵՐ բառույթի իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում» /տպ.ընթացքում/	18 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Բառային նշանի, նշանակության և իմաստի փիլիսոփայական ըմբռնումները աշխարհի լեզվապատկերում»	9 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Սպարապետ» և «Հազարապետ» բառույթների իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում/տպ.ընթացքում/	16 էջ

Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Լեզվի և մտածողության հարաբերակցության հիմնախնդիրը բառիմաստի պատմական զարգացման տիրույթում» /տպ.ընթացքում/	16 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Իրական անձինք, մարդիկ» բառաիմաստային խմբի մի քանի բառույթների բառարանագրական մշակումները հայերենում» /տպ.ընթացքում/	16 էջ
Մարկոսյան Դիանա Հովիկի հ.գ.թ.,	Հոգեբանական եվ մեթոդական պատրաստվածություն ունեցող ռազմական լրագրողների պատրաստման եվ վերապատրսատման հիմնախնդիրըՀՀ-ում:	26 էջ
Աբրահամյան Արամ Լևի ա.գ.թ.,	Դիտարկումներ հայկական պետության քաղաքական մշակույթի պատմական արմատների հարցի շուրջ (XX-XXI դդ.)	14 էջ
Аракелян А.А, Серегина А.А.,	"Странствие во снах"	10 էջ
Аракелян А.Р., Ходерян Д.Д.,	"Цифровая трансформация как реальность современного образования: нужно ли бороться с ветряными мельницами?"	12 էջ
Аракелян А. Р, Серегина А.А.,	Модернизация национальных образовательных систем в контексте глобализации культуры	10 էջ
Шакурова М. В., Пашкевич В. В., Аракелян А. Р., Тарлавский В. И.	ЦЕЛЕВЫЕ УСТАНОВКИ МОДЕЛИРОВАНИЯ ПРОФОРИЕНТАЦИОННОЙ РАБОТЫ В СИСТЕМЕ ОБРАЗОВАНИЯ РЕГИОНА	22 էջ
Վարդազարյան Գայանե Վլադիմիրի	Стихи русских поэтесс Звягинцевой и Петровых об Армении в переводе на армянский.	8 էջ

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Քննարկման փուլում են ամբիոնի մասնակցության հնարավորությունները միջազգային հարթակներում:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Գալստյանը և պրոֆեսոր Հակոբ Ավետիքյանը մասնակցել են՝ դեկտեմբերի 1-10-ը HUJ_ը SCI Germany-ի հետ համատեղ կազմակերպվող 10-օրյա «Երիտասարդ լրագրողները հանուն ժողովրդավարության» թրեյնինգ-սեմինարին և հանդես եկել զեկուցումներով: Դեկտեմբերի 2-ին իր զեկույց է ներկայացրել Լևոն Գասլտյանը՝ «Լրագրության լեզուն. նկատառումներ խմբագրական աշխատանքի մասին» թեմայով:

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

«Երիտասարդ լրագրողները հանուն ժողովրդավարության» թրեյնինգ-սեմինար	HUJ_ը SCI Germany	Դեկտեմբերի 1-10-ը	Լևոն Գալստյան Հակոբ Ավետիքյան

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Շարունակվել է ուսումնամեթոդական և ճանաչողական համագործակցությունը ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի հետ, ամբիոնի դասախոսները այցելել են հանրակրթական դպրոցներ: Դպրոցներից եղել են հարցումներ հեռախոսազանգերի միջոցով: Դպրոցներին առաջարկվել է ծանոթանալ ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքին, մասնավորապես՝ ընդունելության պահանջներին:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
ք. Երևան N 118 ավագ դպրոց	Բաղդասարյան Արթուր Վանիկի մ.գ.թ., դոցենտ, Ջիրջյան Էլեն Բենիամինի դասախոս	մասնագիտական կողմորոշում	29.03.2022 թ.
ք. Արթիկի ավագ դպրոց	Ղուկասյան Անահիտ Հրաչյայի դասախոս	մասնագիտական կողմորոշում	04.04.2022 թ.
ք. Երևան, N 198	Բաղդասարյան Արթուր Վանիկի մ.գ.թ., դոցենտ,	մասնագիտական կողմորոշում	06.04.2022 թ

	Տիտանյան Կարինե Նապոլեոնի դասախոս		
ք. Երևան, N 62	Քոչարյան Կարինե Գրիգորի դասախոս, Պողոսյան Գայանե Ռուբենի դասախոս	մասնագիտական կողմորոշում	12.04.2022 թ.
Մեթոդական			
Դաստիարակչական			

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնի նիստերում քննարկվել են որակի ապահովման հարցերը, արվել են առաջարկներ, որոնց մի մասը գործնականում կիրառվել է: Կատարվել են դասալումներ, վերլուծվել են արդյունքները, վերացվել են թերությունները, արվել են առաջարկություններ: Որակի գնահատման չափանիշ է համարվել ոչ միայն ուսանողական աշխատանքների գնահատականը, այլև նրանց հետազոտական կարողությունները ստեղծագործական ակտիվությունը տպագիր, էլեկտրոնային մամուլի և հեռուստադաշտի հարթակներում:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ներքին շահակիցներից է ֆակուլտետի ուսումնական խորհուրդը, որի կազմակերպած միջոցառումներին պարբերաբար մասնակցում են լրագրության բաժնի ակտիվ ուսանողները (ֆակուլտեղի դահլիճում տարբեր միջոցառումներ վարելու և այլ աշխատանքներ): Համատեղ ուսումնական և ստեղծագործական աշխատանքների համար պայմանավորվածություն է ձեռք բերվել ֆակուլտետի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի և երաժշտության ամբիոնի հետ: Արտաքին շահակիցներից (ՋԼՄ-ներ) պարբերաբար հարցումներ ենք ստացել լավագույն ուսանողներին մասնագիտական աշխատանքի ներգրավելու համար: Ի տարբերություն նախորդ հաշվետու տարվա, երբ գրանցվել են աշխատանքի ընդունվելու դեպքեր, այս հաշվետու տարում այդ համագործակցությունը բանակցությունների փուլում է:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Լ.Գալստյան ամբիոնի վարիչ դոցենտի պ.,	բավարար
Սեմինար քննարկումներ	Լ.Գալստյան ամբիոնի վարիչ դոցենտի պ., Մարտիրոսյան Արտաշես բ.գ.թ., դոցենտ,	բավարար
Անանուն հարցումներ	Քոչարյան Կարինե դոցենտի պ., Մարտիրոսյան Արտաշես բ.գ.թ., դոցենտ,	բավարար

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դասախոսների մանկավարժական բավարար փորձառությունը: Դասախոս-ուսանող ինտերակտիվ հաղորդակցման բարձր մշակույթը, դասախոսների հոգածու վերաբերմունքը յուրաքանչյուր ուսանողի առաջադիմությանն ու ուսումնական այլ կարիքներին: Դասախոսների կողմից ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների բարձր արդյունավետությունը: Ավարտական աշխատանքների հրատապ թեմաների որոշումը, նախապաստատական փուլում ինտենսիվ աշխատանքն ուսանողների հետ, նախապաշտպանության տաբեր փուլերի սահմանումն ու կազմակերպումը, ինչն ապահովում է ավարտական աշխատանքների բարձր մակարդակը:	Դասախոսներից ոչ բոլորն են անհրաժեշտ չափով տիրապետում օտար լեզուների, մասնավորապես, անգլերենին, ինչը փոքր-ինչ սահմափակում է լրագրության միջազգային փորձին ու զարգացման միտումներին իրենց շարունակական իրազեկվածությունն ու դրական փորձի կիրառումը: Ոչ բոլոր դասախոսներն են տիրապետում մուլտիմեդիոն տեխնոլոգիաներին, մասնավորպես, լրագրողական նյութը ինքնուրույն մոնտաժելու, սոցիալական առցանց հարթակներում տեղադրելու հմտություններին: Վարպետաց դասերի կազմակերպման ոչ բավարար ընթացքը: Ոչ բավարար չափով ծավալվող միջազգային կապերը:

Համալսարանի Classroom հարթակում առցանց շփման բարձր կարողությունները: Լիովին բացառվել են գրագողության դեպքերը: Այդ խնդիրը հիմնականում լուծվել է այնպիսի միջանկյալ գրավոր աշխատանքների պահանջների և ռեֆերատների թեմաների ձևակերպմամբ, որոնք վերացնում են որևէ կասկածելի աղբյուրից օգտվելու և պատճենելու հնարավորությունը:	Գիտահետազոտական աշխատանքների համեստ քանակը:
Հնարավորություններ	Վտանգներ
Լրագրության բաժնում գործում է ուսումնական ստուդիան, ինչը հնարավորություն է տալիս բարձր արդյունավետությամբ անցկացնել գործնական պարապմունքներն ու սեմինար աշխատանքները: Բոլոր ուսանողներն ապահովված են նկարահանման տեխնիկայով, մոնտաժային սարքավորումներով. առկա են այլ տեխնիկական միջոցներ,որոնք հնարավորություն են տալիս շարունակական ստեղծագործական աշխատանքները ֆակուլտետում կատարելու: Գրեթե բոլոր դասախոսները զուգահեռաբար աշխատում են տարբեր լրատվամիջոցներում, ինչը շահեկան հանգամանք է ուսանեղների ուսումնական պրակտիկայի կազմակերպման և պոտենցիալ գործատուների ներգրավման առումով:	Որոշ ուսանողներ, սոցիալական կարիքներից դրդված, ուսումնառությանը զուգահեռ աշխատում են սպասարկման և առևտրի ոլորտներում, ինչը խոչընդոտում է նրանց կանոնավոր հաճախումներին: Որոշ շնորհալի ուսանողներ չեն կարողանում ժամանակին վճարել ուսման վարձերը, ինչի հետևանքով կարող են դուրս մնալ համալսարանում սովորելու հնարավորությունից:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:

Սկզբնական կրթության ֆակուլտետի 2022 թ. աշխատանքներն իրականացվել են 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի համաձայն:

Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը ծավալել է ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի համաձայն (Տե՛ս՝ 2021-22 թվականի ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը), որտեղ արտացոլված և քննարկվող հարցերը բխում են ՀՊՄՀ 2021-2025թ.թ. ռազմավարական ծրագրի կատարման պլանից: (https://aspu.am/website/images/files/51a25c09.pdf)

Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում հավատարիմ է եղել իր առաքելությանը՝ Սկզբնական կրթության ֆակուլտետը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ստորաբաժանում է, որը նպատակաուղղված է հանրակրթության ոլորտում, մասնավորապես, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և տարրական դպրոցի, ՀՀ և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներով, սոցիալական պատասխանատվության և ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող մասնագետների պատրաստմանը:

ՍԿ ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի նշված բոլոր ուղղություններով 2022 թվականի համար իրականացվել են համակարգված աշխատանքներ ֆակուլտետի համապատասխան հանձնախմբերի կողմից: Դրանք են.

- ուսումնական հարցերով զբաղվող աշխատանքային խումբ,
- կրթության որակի ապահովման աշխատանքային խումբ,
- ուսումնամեթոդական հանձնաժողով,
- համալսարանը ներկայացնող և դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ,
- ուսանողների կամավորական գործունեությունը համակարգող խումբ:

2022 ուսումնական տարում ֆակուլտետը հրավիրել է խորհրդի 11 նիստ: Խորհրդի նիստերին քննարկվել են ֆակուլտետի գործունեությանն առնչվող տարաբնույթ հարցեր. ուսումնական գործընթացի , մանկավարժական պրակտիկաների կազմակերպում, կրթության որակի բարելավում, ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակի միջոցառումներ, «Մուլտիմեդիա» լաբորատորիայի գործունեության բարելավում, մասնագիտական կրթական ծրագրերի կազմում/վերանայում, դասախոսների և ուսանողների գիտական և հետազոտական գործունեություն, համագործակցություն կրթական հաստատությունների հետ, ուսանողական կյանք, կամավորական, հասարակական և մշակութային գործունեություն և այլն:

Նշված ժամանակահատվածում բավականին ակտիվ գործել են սկզբնական կրթության ֆակուլտետի տեղեկատվական հարթակները , ամբիոնային էլեկտրոնային էջերը, սկզբնական կրթության ֆակուլտետի Facebook-յան էջը (https://www.facebook.com/profile.php?id=100030410970717 , https://skzbnakanfakultet.school.blog/?fbclid=IwAR1zk1JcO7FZ282bF5EUL96viCmXQjKvhk48-CxlgdEaTrOe8yOirpUONll

), սկզբնական կրթության ֆակուլտետի ՈՒԽՍ-ի Facebook-յան էջը (https://www.facebook.com/skzbnakan), ուսանողների գիտական ընկերության և ուսանողների կամավորական գործունեության Google-classroom էլեկտրոնային էջերը(https://classroom.google.com/c/MjU5NzUxMzg0ODha, https://classroom.google.com/c/NDE4NzM2MjU1MDVa): Այս համատեքստում եղել է սերտ և պարբերական կապ ՀՊՄՀ կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի հետ:

Ֆակուլտետը նշված ժամանակահատվածում ակտիվ համագործակցել է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության, կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի հետ: Ֆակուլտետի գործունեության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են առցանց (Google-Meet գործիքով) ինչպես նաև առերես, հանդիպումներ, քննարկումներ ուսանողների և դասախոսների հետ: Այս հանդիպումները միտված են եղել ֆակուլտետի գործունեության արդյունաավետ կազմակերպմանը. որակյալ կրթական գործընթացի անխափան կազմակերպում, կարգապահության, նոր կարգերի ներկայացում և այլն: Դեկանատը մշտապես հետևում է, որպեսզի նոր կարգերի (որոնց մշակմանը դեկանատի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում են), հրամանների, տարաբնույթ ժամանակացույցների, նոր նախագծերի, կրթական ծրագրերի և գիտաժողովների, ուսանողների հեռացումների, վերականգնումների և այլնի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, նաև էլեկտրոնային տարբերակով, ժամանակին տրամադրվի ամբիոններին, դասախոսներին և ուսանողներին, կրթական հաստատություններին, պրակտիկայի բազա հանդիսացող դպրոցներին: Ֆակուլտետում պարբերաբար հրավիրվում են նաև դեկանատի նիստեր, որտեղ քննարկվում են ինչպես ուսումնական, կազմակերպչական և կարգապահական, այնպես էլ կրթության որակին առնչվող հարցեր (*Տես՝ դեկանական նիստերի արձանագրությունները):*

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով նախատեսված աշխատանքների մեծ մասն հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են, վերջինիս մասին տեղեկատվությունը ներկայացվել է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը (*Տես՝ ՍԿ ֆակուլտետի ՌԾ-ի կատարողականի հաշվետվությունը):*

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակմանը ներգրավված են ֆակուլտետի որակի ապահովման խմբի անդամները, ինչպես նաև ուսանողներ, ովքեր մասնակցել են բանավոր հարցումների:

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հիմնական ուղղություններն ու դրանց շուրջ կատարվող աշխատանքները պարբերաբար քննարկվել են ամբիոնների նիստերին *(Տես՝ Մաթեմատիկայի և նրա ուսուցման մեթեդիկայի ամբիոնի 2022թ. փետրվարի 25-ի թիվ 7 նիստի արձանագրություն, Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի սեպտեմբերի 19-ի թիվ 2 նիստի արձանագրություն, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի սեպտեմբերի 22-ի նիստի թիվ 2 արձանագրություն):*

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:

Ֆակուլտետում աշխատանքների կազմակերպումը սկսվում է պլանավորման փուլից: Ուսումնական տարվա սկզբում մշակվել է աշխատանքային պլան (*Տես՝ 2022-2023 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը՝ հաստատված 2022թ.սեպտեմբերի 27-ի թիվ 1 նիստով*), որը համապատասխանեցված է ֆակուլտետի ռազմավարական պլանի գործողությունների պլանին :

Ֆակուլտետի աշխատանքային պլանին համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են աշխատանքներ, որոնց մասին հաշվետվությունները ներկայացվել են ֆակուլտետի խորհրդի նիստերում, ինչպես նաև ամբիոնների նիստերում:

Պլանավորման մեջ ներառված են աշխատանքի հետևյալ ուղղությունները.

1. ուսումնական գործընթացի կազմակերպում,
2. կրթության որակի ապահովում,
3. ֆակուլտետի ամբիոնների աշխատանքների կազմակերպում,
4. ուսանողների աշխատանքների համակարգում,
5. մանկավարժական պրակտիկա և այլն:

Այս ուղղություններով աշխատանքները պլանավորվում են ուսումնական տարվա սկզբին:

Իրականացված աշխատանքների վերաբերյալ ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերին ներկայացվում են հաշվետվություններ (*Տես՝ ՍԿ ֆակուլտետի փետրվարի 14-ի նիստի թիվ 8, ֆակուլտետի մարտի 1-ին թիվ 9, մարտի 22-ի թիվ 10 նիստի և այլ արձանագրություններ):*

Հաշվետվությունները որպես կանոն վերլուծական բնույթ են կրում, ներկայացվում են առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ: Առաջարկությունների հիման վրա կազմակերպված գործընթացները ևս մեկ անգամ ենթարկվում են վերլուծության, քննարկվում են առաջարկությունների արդյունավետությունը, ուժեք և թույլ կողմերը:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվող բոլոր հարցերին, որոշումների կայացմանը դասախոսները և ուսանողները տեղեկանում են խորհրդի կազմում ընդգրկված իրենց ներկայացուցիչների միջոցով (*Տես՝ 2021-2022 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի կազմը*), ինչպես նաև իրենց հուզող հարցերը բարձրացվում են ամբիոնային նիստերի, ուսանողների պարագայում՝ ուսանողական խորհրդի նիստերի ժամանակ, այնտեղից էլ՝ առաջարկությունների տեսքով՝ ֆակուլտետի խորհուրդ, ապա նաև համալսարանի համապատասխան կառույցներ:

Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման համար օգտագործվում են տեղեկատվության բոլոր հնարավոր եղանակները (Google classroom էլեկտրոնային կրթական հարթակ, համալսարանի կայքէջ, Facebook-յան էջեր, հեռուստացույց, հայտարարությունների տախտակ, ներքին գրություններ...) համալսարանական կյանքին և ֆակուլտետին առնչվող բոլոր տեղեկատվությունը դասախոսներին և ուսանողներին ժամանակին տրամադրելու համար:

Կազմակերպվում են նաև ֆակուլտետի ընդլայնված նիստեր, որոնք անցկացվել են առերես, հեռավար ձևաչափով: Պլանավորման ընթացքում ներառված բոլոր ուղղությունների շուրջ կատարված աշխատանքների մասին մանրամասն տեղեկատվությունը տրամադրվում է ամբիոնների դասախոսներին, նրանցից հետադարձ կապ և առաջարկություններ ստանալու նպատակով:

Առցանց և առերես տարբերակներով ամեն օր դեկանատի կողմից իրականացվել է դասերի վերահսկողություն, կապ է հաստատվել ուսանողների հետ, ճշտվել առկա բացակայությունների պատճառները, դասերի իրականացման ընթացքը և այլն:

Աշխատանքների արդյունավետությունը գնահատվում է հետադարձ կապի և մշտադիտարկումների միջոցով: Մշտադիտարկումների արդյունքները քննարկվում են ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի առցանց նիստերի ընթացքում, խնդրո առարկա հարցերի բարելավման ուղղությամբ ևս արվում են

առաջարկություններ *(առաջարկությունները ներկայացվում են հաշվետվությունների և զեկույցների, ելույթների տեսքով),* վերջիններս էլ ներկայացվում են համալսարանի համապատասխան կառույցներ, տեղադրվում Google classroom էլեկտրոնային կրթական հարթակում, կամ ուղարկվում աշխատակիցների էլեկտրոնային հասցեներին:

Այսպես օրինակ՝

- մանկավարժական պրակտիկաների կազմակերպումը. նախապատրաստական կազմակերպչական և բովանդակային սեմինար քննարկումներ ուսանողների, մեթոդիստների դպրոցների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ առցանց քննարկում, ծագած խնդիրների վերհանում, լուծումների առաջադրում,
- ընթացքի, բովանդակության բարելավման ուղղությամբ, առաջացած խնդիրների վերաբերյալ պրակտիկայի ղեկավարների պարբերական հաշվետվություններ ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի նիստերին,
- պրակտիկայի ավարտին՝ ամփոփիչ սեմինարների կազմակերպում,
- թղթապանակների պաշտպանություն,
- արդյունքների վերլուծությունների հիման վրա առաջարկությունների ձևակերպում և ամփոփիչ հաշվետվության ներկայացում:

Ֆակուլտետի աշխատանքներում ներգրավված են արտաքին շահակիցները՝ դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: Նրանց հետ քննարկվում են ֆակուլտետում իրականացվող աշխատանքները, դրանց արդյունքները: Արտաքին շահակիցների հետ համագործացության ձևերը, ներգրավումը ֆակուլտետի աշխատանքներում քննարկվել են հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետի խորհրդի նիստերին և կայացվել են որոշումներ: *(Տես՝ ֆակուլտետի խորհրդի ապրիլի 28-ի նիստի թիվ 11 արձանագրությունը):* Մասնավորեպես, այս հարցի վերաբերյալ նշված նիստի ընթացքում որոշում է կայացվել ակտիվացնել համագործակցությունը արտաքին շահառուների հետ, գտնել համագործակցության նոր ճանապարհներ: Ամբիոնների կողմից (մասնավորապես նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի կողմից) կազմակերպվում են հանդիպումներ արտաքին շահառուների հետ: Քննարկվում են մասնագիտական կարիքները, ոլորտների խնդիրներն ու միասին կայացնում որոշումներ, որոնք հաշվի են առնվում տարբեր առարկաների վերջնարդյունքների ձևակերպման ընթացքում, ինչպես նաև առարկաների բովանդակության մեջ կատարվում են փոփոխություններ:

Հետևողական աշխատանքների, մշտադիտարկման արդյունքների վերլուծության արդյունքում բարելավվել են մանկավարժական պրակտիկայի ընթացքում մեթոդիստների և մանկավարժների համագործակցությունը, թղթապանակների պաշտպանության համապատասխանեցումը վերջնարդյունքներին, բարձրացել է ուսանողների պատասխանատվությունը կատարվելիք աշխատանքների նկատմամբ *(Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի մայիսի 31-ի թիվ 12 նիստ, ֆակուլտետի խորհրդի թիվ 13 նիստ, հուլիսի 7-ի թիվ 14 նիստի արձանագրություններ):*

Իրականացված նիստերի որոշումների կատարման մասին ամբիոնները ներկայացնում են հաշվետվություններ:

Կատարված աշխատանքների հիման վրա 2021-2022 ուսումնական տարվա ամռանը ներկայացվել է ֆակուլտետի հաշվետվություն, որի յուրաքանչյուր բաժին ավարտվել է SWOT վերլուծությամբ *(Տես՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության ֆակուլտետի կատարած աշխատանքների հաշվետվություն (2021-2022 թթ.))*: Հաշվետվությունը խորհրդում ներկայացվելուց բացի , ուղարկվել է ամբիոններ՝ առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև SWOT վերլուծության ուժեղ և թույլ կողմերը քննարկելու նպատակով:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին:

Ֆակուլտետը սերտ համագործակցելով ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ մշտական աշխատանքներ է իրականացնում մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման ուղղությամբ:

Այս աշխատանքների պատասխանատուները ֆակուլտետի դեկանն է, ամբիոնի վարիչներն ու կրթության որակի աշխատանքային խումբը: Հաշվետու ժամանակաշրջանում մասնագիտական կրթական ծրագրերի, ինչպես նաև առարկայական նկարագրերի շուրջ աշխատանքները պատասխանատուների ուշադրության կենտրոնում են: ՄԿԾ-ների պատասխանատուների համար ֆակուլտետը ձեռնամուխ է եղել մշակել գործառույթներ, սակայն այդ աշխատանքները դեռևս դանդաղում են: Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում ունենք պլանավորած նմանատիպ գործողություն, որը նախատեսել ենք ավարտել 2024 թվականին, համաձայնեցնելով բուհի համապատասխան ստորաբաժանման հետ *(Տես՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի 2021-2025 ռազմավարական պլանի* գործողությունների պլանը):

2022 թվականի ամռանը ֆակուլտետը նախաձեռնել և իրականացրել է առցանց սեմինարներ մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային և այլ առանձնահատկություններին նվիրված, ապա նաև մասնակցել է ռեկտորատի կողմից կազմակերպված սեմինարներին (*իրականացվել են Հ. Թադևոսյանի, Ս. Ասատրյանի կողմից*) : Այդ սեմինարների արդյունքում փոփոխությունների են ենթարկվել ամբիոնների կողմից դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերն ու թեմատիկ պլանները, գնահատման բաղադրիչը: Շեշտը դրվել է առարկայական նկարագրերի բովանդակության, գործնական, ինքնուրույն աշխատանքների համապատասխանությանը կրթական ծրագրի վերջնարդյունքներին: ՄԿԾ-ների վերափոխման արդյունքում փոփոխության են ենթարկվել ամբիոնների կողմից դասավանդվող առարկաների վերջնարդյունքները, առաջադրանքները, դրանց բովանդակությանմ գնահատման մեթոդները: Այդ աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները, ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և նմանատիպ այլ աշխատանքները յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի

ուշադրության կենտրոնում են: Այդ հարցերը քննարկվում են ֆակուլտետի խորհրդի նիստերում: *(Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի հուլիսի 7-ին թիվ 14 արձանագրություն)*

ՄԿԾ-ների բարելավման, ինչպես նաև առարկայական նկարագրերի և թեմատիկ պլանների վերափոխման ընթացքում հիմք են ընդունվել ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի պահանջները: Այդ երկու փաստաթղթերը տրամադրվել են ինչպես ամբիոնների որակի պատասխանատուներին, այնպես էլ դասախոսներին՝ դրանց հետ ծանոթանալու և ծրագրերը համապատասխանեցնելու նպատակով: *(Այդ աշխատանքներն իրականացվել են ԿԳՄՄՆ նախարարի No 783-Ա «28»ապրիլի 2022թ. հրամանի հիման վրա)*

ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

Մասնավորապես, այս ուսումնական տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1.ՄԿԾ-ների բարելավման և վերանայման ուղղությամբ ֆակուլտետում ձևավորվել են աշխատանքային խմբեր, որտեղ ընդգրկվել են արտաքին և ներքին շահակիցներ: Աշխատանքային խմբերը վերանայել են առարկայական նկարագրերը /այդ աշխատանքները դեռ շարունակվում են/, համապատասխանեցնելով դրանք կրթական ծրագրերի վերջնարդյունքներին: Վերջնարդյունքների մշակման, դրանց համապատասխան առարկաների բովանդակության, դասավանդման և գնահատման մեթոդաբանության համապատասխանեցումը մեր ուշադրոյթնա կենտրոնում է, այդ հարցերը պարբերաբար քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում, նպաստելով կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Ֆակուլտետում պարբերաբար իրականացվում են մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկում, որոնց արդյունքները հաշվի կառնվեն ՄԿԾ-ները վերանայելու ընթացքում: Կատարվող աշխատանքների հիմքում ՀՊՄՀ-ի գիտխորհրդի որոշումը: (Տես՝ գիտխորհրդի հոկտեմբերի 28-ի N1-Լ որոշումը՝ https://aspu.am/website/images/files/10f3b684.pdf)

Մշտադիտարկման ընթացքում իրականացված SWOT վերլուծությունների արդյունքում փոփոխություններ են կատարվում ինչպես առարկաների բովանդակության, այնպես էլ դասավանդման ռազմավարության մեջ:

2.Վերափոխվել են նաև առանձին դասընթացների բովանդակային բաղադրիչները՝ տարրական դասարաններում ուսումնական մի շարք առարկաներում ձեռնարկատիրական կրթության և ֆինանսական կրթության բաղադրիչների ինտեգրման համատեքստում. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի «Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա», «Ես և շրջապատող աշխարհը», «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» դասընթացների նկարագրերն ու համապատասխանաբար ուսումնական փաթեթները *(Տես՝ նշված դասընթացների ԱՈՒՄՓ-ները)*, որպես ընտրովի դասընթաց մագիստրատուրա 2-րդ կուրսում ներմուծվել է «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցում» դասընթացը: Ինֆորմատիկայի ամբիոնի հետ համագործակցության արդյունքում փոփոխությունների է ենթարկվել ՏՀՏ հենքային դասընթացի բովանդակությունը: Այդ փոփոխությունները պայմանավորված են ֆակուլտետում մուլտիմեդիոն ծրագրերի շուրջ իրականացվող աշխատանքներով: Ծրագրերի համապատասխանեցման միջոցով նպաստելու ենք ապագա ուսուցիչների և դաստիարակների մեդիակոմպետենցիաների ձևավորմանը:

3.Պարբերաբար իրականացվում է բենչմարկինգ (հենանշում), որի արդյունքում մի շարք առարկայական նկարագրերում կատարվել են էական փոփոխություններ:

4.Ամբիոններում ստեղծվել են ընտրովի դասընթացների բազաներ, որոնց վերջնարդյունքները համապատասխանեցվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, և որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը: Այդ բազաներում

ընդգրկված առարկաները համապատասխանեցվում են մանկավարժական պրակտիկաների արդյունքում վերհանված այն բացերին, որոնք լրացման կարիք ունեն:

5.Ֆակուլտետում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին շրջանավարտների շրջանում իրականացվում են հարցումներ ՄԿԾ-ների բավարարվածության վերաբերյալ: Արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են առաջարկություններ մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես առաջարկվել է.

- արդիականացնել դասընթացների ուսումնական նյութերը, համապատասխանեցնելով դրանք գիտության վերջին նվաճումներին,
- ընտրել արդյունավետ գնահատման մեթոդներ, դրանք համապատասխանեցնել առարկայի վերջնարդյունքներին, ապահովել դասավանդման, գնահատման մեթոդների տրամաբանական կապը,

ուժեղացնել առարկաների գործնական բաղադրիչը, թեմաների շուրջ կատարվող առաջադրանքները համապատասխանեցնել առարկայի վերջնարդյունքներին,

- և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում ուժեղացնել ուսանողների գիտահետազոտական բաղադրիչը,
- մեկ առարկայի, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորվածության համատեքստում իրականացնել ուսանողների կարիքների վերհանում, դրանց բավարարման ուղղությամբ արդյունավետ աշխատանքների իրականացում,
- համապատասխանեցնել դասընթացի և մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների:
- անընդհատ անդրադառնալ և քննարկել դասընթացների վերջնարդյունքները ուսանողների հետ:

Առաջարկությունների տեղայնացման հնարավարությունները քննարկվել են նաև ամբիոնների նիստերում:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են այն խնդիրները, որոնք շուրջ աշխատանքներ պետք է իրականացվեն բարելավելու ուղղությամբ: Մանսավորապես.

- հարցված ուսանողների գրեթե մեծ մասը խնդիրներ է արձանագրել օբյեկտիվ գնահատման հետ կապված,
- նույն տոկոսային հարաբերությամբ ուսանողները խնդիր են արձանագրել նաև իրենց կարիքների հաշվառման հետ կապված,
- խնդիրենը կան նյութերի մատչելիության, դասավանդման մեթոդների ընտրության հետ կապված և այլն:

6. Ֆակուլտետը մասնակցել է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից կազմակերպված «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցմանը, որի արդյունքների վերլուծվել և ներկայացվել են վարչություն: Հարկ է նշել, որ ուսանողների կողմից լրացված հարցաթերթիկները մեխանիկական բնույթ են կրում: Նրանք դեռևս չեն գիտակցում այդ հարցումների կարևորությունը, չեն գիտակցում նաև իրենց դերը բուհում մանկավարժական գործընթացի բարելավման ուղղությամբ: Առաջարկություն է արվել մեր կողմից, որ այդ աշխատանքների շուրջ անհրաժեշտ է իրականացնել զրույցներ, քննարկումներ ուսանողների շրջանում, նրանց նախապատրաստել նմանատիպ աշխատանքների կատարմանը:

7. Ամբիոնների կողմից մշակվել են դասընթացի ինքնուրույն աշխատանքների փաթեթ, դրանց արդյունքները հաշվի են առնվում դասընթացի արդյունքները վերլուծելու ընթացքում: Սակայն պետք է շեշտենք, որ ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորմանը պատշաճ ուշադրություն և ջանքեր չեն գործադրվում: Մենք այս ուղղությամբ դեռևս աշխատանքներ ունենք կատարելու:

8.Մշակվել են գնահատման ռուբրիկներ տարբեր առարկաների համար:

9.Աշխատանքներ են իրականացվում ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման ուղղությամբ: Սակայն դրանք բավարար չեն: Ուսանողների շրջանում իրականացված հարցումները ևս փաստում են,որ դա մեր թույլ կողմն է: Մագիստրոսական կրթական ծրագրում դասավանդվում է <<Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն>> առարկան, որը նպաստում է այդ կարողությունների ձևավորմանը: Բացի դրանից մագիստրոսական կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները բավականին մեծ կրեդիտներով են ներկայացված ուսումնական պլաններում: Բայց միևնույն է՝ այս գործողությունները չեն լրացնում այն բացը, որ մենք ունենք այս ոլորտում: Ավելի լուրջ է իրավիճակը բակալավրիատում, որի ուսումնական պլաններում նմանատիպ առարկա նախատեսված չէ: Որպեսզի նպաստենք ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորմանը, առաջարկել ենք բակալավրիատում ռեֆերատների և կուրսային աշխատանքների մեջ որպես պարտադիր պայման ներառել հետազոտական աշխատանք: Բացի դրանից, դասավանդվող առարկաների առաջադրանքները ևս հետազոտական բնույթի պետք է լինեն:

Ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը հաշվետու տարում համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնել «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա ուսուցման համակարգով կրթական նոր ծրագրի մասնագիրն ու ուսումնական պլանը*(Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2022թ: մարտի 22-ի նիստի թիվ 10 արձանագրությունը):* Նոր 2022-2023 ուսումնական տարում արդեն կատարվել է ընդունելություն (ընդունվել է 19 ուսանող, նախատեսված 20 տեղի համար), ուսանողները հիմնականում գործող դաստիարակներ են, ովքեր համատեղում են աշխատանքը ուսման հետ: *(Տես՝ գիտխորհրդի ապրիլի 29-ի N3-Լ որոշումը* https://aspu.am/website/images/files/Voroshum_Skzbnakan.pdf)

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման, առարկայական նկարագրերի վերափոխմանը նվիրված սեմինարների ընթացքում քննարկվել են գնահատման բաղադրիչներն ու մեթոդները: 2022-2023 ուսումնական տարում առարկայական նկարագրերի վերափոխումների ընթացքում վերանայվել են նաև գնահատման բաղադրիչներն ու մեթոդները, դրանք համապատասխանեցվել են առարկաների վերջնարդյունքներին: Գնահատման բաղադրիչների փոփոխություններն ու բարելավումներն իրականացվում են ՀՊՄՀ-ի ուսանողների գնահատման համակարգի արդյունավետության գնահատման և բարելավման կարգի համաձայն: (Տես՝ https://aspu.am/website/images/files/us_%20gnahatman%20hamakargi%20ardyunavetutyuan%20barelavman%20karg.pdf)

Գնահատման համակարգի, բաղադրիչների, չափանիշների հարցերը քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Ամբիոնների որակի պատասխանատուները

հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել են ՀՊՄՀ-ի կողմից ընդունված գնահատման կանոնակարգի մանրակրկիտ ուսումնասիրություն և քննարկում:

Առավել ևս այս խնդիրը կարևորվում է մագիստրատուրայում ուսումնական պլանով նախատեսված հետազոտական բաղադրիչի գնահատման արդյունավետության բարձրացման համար: Այդ նպատակով դեռևս 2019-20 ուսումնական տարվանից վերանայվել և կիրառության մեջ են դրվել մագիստրոսների աշխատանքային պլանները, որոնք հստակեցնում են նաև գնահատման բազմագործոն բաղադրիչները և դրանց համար նախատեսված կշիռները. մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան մշակվել է դասընթացների համար տարբերակված գնահատման ձևեր*(Տես՝ «Մագիստրոսի աշխատանքային պլան»-ը):*

Նկատի ունենալով ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը՝ ինչը ենթադրում է ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, ուսանողի ակտիվությունը և ուսումնական գործունեության գնահատումը միջանկյալ գնահատականների միջև ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետն առաջարկել է նաև ընթացիկ գնահատման ձևին տրվող թվային, բալային տարբերակից անցնել խոսքային տարբերակի՝ ստուգված-չստուգված:

Գրագողության դեմ պայքարի նպատակով մագիստրատուրայում սովորող ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների մասին: Հաշվետվություններն իրականացվում են ֆակուլտետի կողմից մշակված «Մագիստրոսի մագիստրոսական թեզի կատարման աշխատանքային պլան»-ի համաձայն *(Տես՝ փաստաթուղթը)*

Յուրաքանչյուր կիսամյակի համար աշխատանքային պլանում մշակված է բովանդակություն, ինչպես նաև գնահատման ձևեր, որոնց համապատասխան սովորողը պետք է իրականացնի աշխատանքներ: Պարտադիր պայման է՝ քննարկել կիսամյակային հաշվետվությունները համակուրսեցիների հետ, լսարանում: Խմբային քննարկումների պարագայում գնահատման բալը բարձրանում է:

Նույն աշխատանքները կազմակերպվում են բակալավրիատում ռեֆերատների, կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքների շուրջ աշխատելիս: Ամբիոնների կողմից մշակվել են ռեֆերատների, կուրսային աշխատանքների ուղեցույցեր, որոնց մեջ նշված է հստակ պահանջ՝ հետևել գրականության հղման կանոնների պահպանումը:*(Տես ուղեցույցերը)*

Գրագողության բացառմանը նպաստում են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը: Թեմաների բազան յուրաքանչյուր ուսումնական տարի փոփոխության է ենթարկվում, կրկնվող թեմաներ չեն ներառվում բազայում, ինչը ստիպում է ուսանողին ինքնուրույն հետազոտություն կատարել: Գրագողության հետ պայքարը ֆակուլտետի ամբիոնների ուշադրության կենտրոնում է: Այս հարցին նվիրված հատուկ ամբիոնային նիստեր են կազմակերպվում, թեմաների ձևակերպման և հաստատման հարցը մի քանի անգամ լսվում, որից հետո նոր հաստատվում է ֆակուլտետի խորհրդի նիստում *(Տես՝ 2021-22 թ. ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրությունները):*

Գրագողության և ցիտման նորմերի պահպանման նպատակով մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում դասավանդվող «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են այդ կանոնների պահպանմանը վերաբերող կարգերին և կանոններին, այդ կանոնների համապատասխան գրում են հոդվածներ և այլ աշխատանքներ, որոնք քննարկվում են լսարանում:

Ֆակուլտետի ՈՒԳ–ի կողմից նախատեսված են սեմինարներ նվիրված գրագողության դեմ պայքարին, գրականության հղման կանոնների պահպանմանը, հոդվածներ գրելու պահանջներին և

նմանատիպ այլ թեմաներով: Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններին աշխատանքները մանրակրկիտ ուսումնասիրվում են գրագողությունը բացառելու նպատակով: *(Տես՝ ՈՒԳ-ի 2022 թ. աշխատանքային պլանը)*

Խնդրի լիարժեք լուծմանը խանգարում է հակապլագիատային հայալեզու ծրագրի բացակայությունը, որը կօգներ արագ բացահայտել խնդիրը: Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատանքների պարագայում այդ ծրագրի առկայություն առավել ևս կարևոր է, քանի որ այլ լեզուներով ծրագրերը չեն բացահայտի առկա խնդիրը: Խնդիր է նաև հայալեզու մասնագիտական գրականության, աղբյուրների սակավությունը, ինչպես նաև մեր ուսանողների օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը:

Կարծում ենք, գրագողության դեմ պայքարելու գործին կօգնի նաև ավարտական և մագիստրոսական թեզերի տեսական և հետազոտական մասերի համամասնության փոփոխությունը՝ տեսական մասերի էջերի քանակի նվազեցումը հետազոտականի համեմատ:

Դեռևս այս խնդիրը արդիական ենք համարում՝ առկա արդյունավետ մեխանիզմների սակավության պատճառով:

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

ՄԿԾ–ների վերանայման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը, կրթական ծրագրերը համեմատվել են այլ երկրների կրթական ծրագրերի հետ. Ֆինլանդիայի Օուլու համալսարան, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարան, Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան: Ուսումնական պլաններում ներառված առարկաները համապատասխանեցվել են տարբեր երկրներում նույն ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունների պլաններին:

Դրա շնորհիվ ֆակուլտետը կարողանում է իրականացնել՝

- ուսանողների փոխանակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ (Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում 2022 ուստարում՝ 2 ուսանող):

Որպես կանոն ֆակուլտետի դասախոսները յուրաքանչյուր տարի ակտիվ մասնակցում են տարաբնույթ վերապատրաստման դասընթացների, միջազգային վեբինարների:

Միջազգային գործընկերների հետ կապերը հիմնականում ապահովում ենք գիտաժողովներին մասնակցելով, վեբինարներ կազմակերպելով:

Ֆակուլտետը մշակել է նաև միջազգայնացման տեսլականը, որը կնպաստի միջազգային կապերի հարստացմանն ու այդ բնագավառում աշխատանքների համակարգմանը: Այն է.

Սկզբնական կրթության ֆակուլտետի միջազգայնացման տեսլականն է մինչև 2025 թվականը մշակել և իրականացնել միջազգային կրթական ծրագիր, նպաստել դասախոսների գիտական միջազգային վերապատրաստումների կազմակերպմանը, կրթության որակի ապահովման ընթացքում կիրառել որակի միջազգային չափանիշներ, հնարավորինս ապահովել դասախոսական անձնակազմի երկու լեզվով դասավանդելու համար անհրաժեշտ պայմաններ, կազմակերպել վեբինարներ և սեմինարներ առաջատար միջազգային գործընկեր-բուհերի հետ, նպաստել ֆակուլտետում իրականացվող հետազոտությունների արդյունքների և փորձի տարածմանը:

Նոյեմբերի 17-22 –ը ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով փոխդեկան Լուսինե Պողոսյանը «Մեդիագրագիտություն մեծահասակների համար 2.0» ծրագրի շրջանակներում իրականացրել է այս Գերմանիա: Այցի նպատակն էր մեդիագրագիտության, քննադատական մտածողության, ապատեղեկատվության հետ տարվող աշխատանքների գերմանական փորձի ուսումնասիրումը: Այցի շրջանակներում կատարված աշխատանքների բովանդակությունը կկազմակերպվեն սեմինարներ դասախոսների և ուսանողների համար:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	302
	հեռակա	317
Մագիստրոսի	առկա	70
	հեռակա	119
Ընդհանուր ուսանողների թիվը		808
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1		0
Ուսանողների ներհոսք		
Հաստատություն/երկիր		16 ուսանող
1	Երևանի պետական ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկում	1
2	Երևանի բժշկական թիվ 2 ուսումնարան	1
3	Սևանի բազմագործառութային պետական քոլեջ	1
4	Արարատի պետական քոլեջ	3
5	Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ	2
6	Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ	1
7	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	1

8	Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ	1	
9	Երևանի պետական հումանիտար քոլեջ	2	
10	Մարտունու պետական քոլեջ	1	
11	Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր պետական քոլեջ	1	
12	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	1,24%	10
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	1,36%	11
3	Իր դիմումի համաձայն ազատված և հետագայում վերականգնման նպատակ ունեցող ուսանողների տոկոսը/ թիվը	4,33%	35

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Ինչպես գիտեք, վերլուծելով նախորդ մի քանի տարիների սկզբնական կրթության ֆակուլտետ դիմող ուսանողների թիվը և սահմանված տեղերի հարաբերակցությունը ուսուցման առկա և հեռակա համակարգերում՝ ֆակուլտետը 2021- 2022 ուսումնական տարվա համար հանդես եկավ առաջարկությամբ՝ ավելացնել առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի դիմորդների համար հատկացվող տեղերի քանակը: Համապատասխանաբար 62 տեղի փոխարեն հատկացվեց 100 տեղ, դիմել էին 102-ը, 20 տեղի փոխարեն հատկացվեց 25 տեղ, դիմել էին 33-ը:

Սակայն 2022-23 ուսումնական տարվա համար հատկացվող տեղերի և դիմորդների հարաբերակցությունն այնքան էլ գոհացուցիչ չէ՝

1. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագիր՝ սահմանված 100 տեղի համար դիմել են 77 դիմորդ,

2. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագիր՝ սահմանված 25 տեղի համար դիմել են 18 դիմորդ:

Սահմանված տեղերն այս տարի չեն լրացվել մի շարք օբյեկտիվ պատճառներով պայմանավորված.

- ընդունելության քննությունների կարգում հընթացս փոփոխություն կատարելը՝ 2 պարտադիր քննություն,
- սկզբնական կրթության ֆակուլտետի մասնագիտությունների համար սահմանված համեմատաբար բարձր ուսման վարձը,
- սկզբնական կրթության ֆակուլտետում սովորել նախընտրող պոտենցիալ դիմողների սոցիալական ցածր վիճակը,
- մանկավարժի ցածր վարկանիշը հասարակության մեջ, մանկապարտեզների և տարրական դպրոցի մանկավարժների ցածր աշխատավարձերը և այլն:

Սրան զուգահեռ հատկապես վերջին երկու տարում նվազել է հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով (հեռակա) դիմողների թիվը (սոցիալական խնդիրներ, ցածր վճարունակություն, այլ բուհերում համանման մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրի բացում ավելի ցածր ուսման վարձավճարով, այլ պատճառներ): Ինչը խոսում է այն մասին, որ այստեղ մենք աշխատանքի մեծ դաշտ ունենք:

Այդուհանդերձ մեր առաջնահերթ խնդիրը շարունակում է մնալ մոտիվացված և բարձր առաջադիմությամբ դիմորդներին սկզբնական կրթության ֆակուլտետ ուղղորդելը:

2022 թ. մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խումբն աշխատել է առցանց և առերես ձևերի համակցմամբ. առաջին կիսամյակում, համավարակով պայմանավորված, առավելապես ակտիվ են եղել աշխատանքներն առցանց տիրույթում (դրանք իհարկե շարունակվել են նաև երկրորդ կիսամյակում), իսկ ահա երկրորդ կիսամյակում կազմակերպվել են նաև փոխադարձ այցելություններ և առերես հանդիպումներ:

Ֆակուլտետի մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խումբն աշխատել է հետևյալ ուղղություններով.

Աշխատանքներ առցանց տիրույթում. ՀՊՄՀ-ն, սկզբնական կրթության ֆակուլտետն ու նրա մասնագիտությունները գովազդելու նպատակով պարբերաբար աշխատանքներ են տարվում առցանց տարածքում՝ հատկապես ֆակուլտետի Facebook-յան էջում: Ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում թարմացվել և տեղադրվել են ֆակուլտետին և ֆակուլտետի մասնագիտություններին վերաբերող բոլոր անհրաժեշտ նյութերը՝ բուկլետներ, փաստաթղթեր, ընդունելության կարգեր, լավագույն պատմություններ, ուսանողների տեսաուղերձներ, սահիկաշարեր «Հաջողության բանաձև» հաղորդաշարի՝ սկզբնական կրթության ֆակուլտետին վերաբերող բոլոր հաղորդումները, հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի նոր կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը: 2022 թվականի հունվարից ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում տեղադրվել է դիմորդներն հյուընկալելու նպատակով «բաց դռների» վերաբերյալ հայտարարությունը: Այս ընթացքում ֆեյսբուքյան մեր գործընկերների թիվը հասել է 2888-ի՝ մանկապարտեզներ, դպրոցներ, կրթահամալիրներ, հասարակական կազմակերպություններ, ուսուցիչներ և այլք: (Տես՝ ֆակուլտետի ֆեյսբուքյան էջը):

Առցանց տիրույթում ֆակուլտետի ամբիոնների դասախոսների կողմից մանկավարժների և և ծնողների համար կազմակերպվող սեմինարների և պարապմունքների ընթացքում ևս մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել ֆակուլտետի և մասնագիտությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ ՀՊՄՀ ռադիո «Ֆամայով» հեռարձակվող «Ծնողական կրթություն» հաղորդաշարի համատեքստում: Այդ աշխատանքների արդյունքում գրանցվել են 18 հավանական դիմորդ:

Հայտարարվել և գործել են բաց դռների օրեր ֆակուլտետում: Այդ օրերին ֆակուլտետ են այցելել նաև միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողները՝

- հունվարի 27-ին Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի այս տարվա շրջանավարտները՝ 9-ը կողմնորոշված ուսանող,
- փետրվարի 2-ին Արարատի պետական քոլեջի շրջանավարտները՝ 7 կողմնորոշված ուսանող,
- ապրիլի 19-ին Երևանի հումանիտար քոլեջի 3 շրջանավարտ (19 հավանական դիմորդ):

Նրանց համար իրականացվել է հագեցած ծրագիր, մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ սեմինար պարապմունք և թեստավորում, շրջայց՝ ամբիոններ, ՀՊՄՀ թանգարան, գրադարան, ռադիո:

(Տես՝ հանդիպումների օրակարգեր, ներկայաթերթիկներ, տեղեկատվական հարթակում և Facebook-յան հարթակում տեղադրված նյութեր, նկարներ):

Այցելություններ դպրոցներ. Սկզբնական կրթության ֆակուլտետի՝ համալսարանը ներկայացնող և դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցերով զբաղվող աշխատանքային խումբը այցելություններ է նախաձեռնել Երևանի և ՀՀ մարզերի միջնակարգ և ավագ դպրոցներ: Կազմվել է այցերի գրաֆիկ և այդ գրաֆիկի համաձայն ֆակուլտետի աշխատանքային խումբը հանդիպումներ է ունեցել աշակերտների հետ. սկզբնական կրթության ֆակուլտետ կողմնորոշված 13 դիմորդ:

Անհատական կողմնորոշիչ աշխատանքներ դեկանատի աշխատակիցների և ֆակուլտետի ամբիոնների դասախոսների կողմից՝ 15 հավանական դիմորդ:

Անմիջական և պարբերական աշխատանք առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների հետ՝ ուսումնառությունը մագիստրատուրայում շարունակելու ուղղությամբ: Այստեղ դժվարությունն այն է, որ ավարտական կուսերի համար դեռևս գործում են ավելի ցածր ուսման վարձեր, իսկ այս ուսումնական տարի ընդունվելիս նրանք պիտի վճարեն ավելի բարձր վարձավճարներ, մոտավորապես 100-120 հազար դրամի տարբերությամբ: Նախնական տվյալներով առկա և հեռակա ուսուցման ձևերում ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրերում իրենց կրթությունը ցանկացել են շարունակել բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների 1/3-րդը: Սակայն սրանք նախնական տվյալներ են:Անվճար տեղերի համար դիմել են՝

- «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մկծ 5 շրջանավարտ 4 տեղի համար,
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մկծ՝ 13 շրջանավարտ 9 տեղի համար:

Դիմորդների հետ աշխատանքները շարունակական են:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Հեռացում.

1. ուսման անբավարար առաջադիմություն,
2. ուսման վարձի պարտք:

Վերականգնում.

1. կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն,
2. աշխատաշուկայում պահանջված մասնագիտությամբ աշխատանք ունենալու հեռանկար,
3. համալսարանում անհրաժեշտ մեխանիզմների առկայություն վերականգնվելու համար:

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:	
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:	
Բակալավր	-

Մագիստրոս		-
Ընդհանուր		-
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		-
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	«Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր/օնլայն ժողովածու/	30

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում աշխատում են համապատասխան որակավորում ունեցող դասախոսներ. • 1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, • 6 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր • 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր • 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր պ/պ • 24 գիտությունների թեկնածու, դոցենտ • 6 ասիստենտ • 9 դասախոս • 1 գիտությունների թեկնածու, ասիստենտ • 1 դոցենտ • 3 գիտությունների թեկնածու, դասախոս: /Տե՛ս ամբիոնների բաշխման գրությունները/: Ամբիոններում աշխատանքներ են իրականացվում դասախոսների մասնագիտական գիտական ներուժը կատարելագործելու ուղղությամբ: Ամբիոններում կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվում են ժամանակակից գիտության նվաճումները, նորարարությունները, տվյալ բնագավառի

հետազոտության արդյունքները /Տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրություններ/, ամբիոնային նիստերում քննարկվում են նաև փոխադարձ դասալսումների արդյունքները:

Դասախոսների կատարած աշխատանքների արդյունավետությունը և համապատասխանությունը համալսարանի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններին քննարկում է ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Հիմնական հարցը, որը շատ հաճախ շոշափվում է՝ դասավանդման մեթոդների, առարկայական վերջնարդյունքների, գնահատման ձևերի համապատասխանեցման հարցն է, որն արդյունավետ և որակյալ կրթության ապահովման գրավականն է:

Ֆակուլտետի դասախոսներն ընդգրկված են ուսուցիչների ատեստավորման նպատակով կազմակերպված վերապատրաստման դասընթացներին որպես վերապատրաստողներ:

Ամբիոններում աշխատանքներն են իրականացվում դասախոսների մասնագիտական կատարելագործման նպաակով: Այդ աշխատանքներն են.

- ներամբիոնային սեմինարները և գիտական լսումները, ֆակուլտետային սեմինարները, վեբինարները (Տես՝ ՀՊՄՀ Google docs-ում տեղադրված ամբիոնային սեմինարների ժամանակացույցերը. մանկավարժական պրակտիկաների , դասընթացների նկարագրերի և բովանդակության բարելավում ...),
- Համագործակցող համալսարանների մասնագետների կողմից դասախոսների համար դասախոսություններն ու վարպետած դասերը,
- պարբերաբար իրականացվող դասալսումները, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում,
- ֆակուլտետի ՈՒԳ-ի կողմից կազմակերպված սեմինարները, որին մասնակցում են ոչ միայն ուսանողները, այլ նաև դասախոսները,
- Մանկավարժական պրակտիկաների բարելավմանն ուղղված սեմինարների կազմակերպումը, որոնց մասնակցում են ուսանողներ, մեթոդնիստներ, դասախոսներ,
- Համալսարանի կողմից կազմակերպվող վերապատրաստումներ,
- Ներֆակուլտետային սեմինարները՝ նոր մասնագրերի և առարկայական նկարագրերի բովանդակության և կառուցվածքի,ՀՊՄՀ–ի կողմից ընդունված կանոնագարգերի վերաբերյալ:

Ըստ ամբիոնների ներկայացված հաշվետվությունների հաշվետու ժամանակահատվածում դասախոսական անձնակազմն իրականացրել է իր առջև դրված խնդիրները, նպաստելով գիտամեթոդական, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Դասախոսներին հետաքրքրող տարաբնույթ տեսական և մեթոդական հարցերի շուրջ կազմակերպվել են ամբիոնային գիտամեթոդական սեմինարներ: Կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման ուղղությամբ ծանոթացում հետազոտական մեթոդների, հետազոտությունների կազմակերպման ընթացքի, հետազոտության տեսակների միջազգային փորձի հետ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանակահատվածում սկզբնական կրթության ֆակուլտետի 3 ամբիոններն աշխատել են հետևյալ հետազոտական ոլորտների ուղղությամբ.

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

- «Տարրական դպրոցի ապագա ուսուցիչների լեզվակարողությունների և գրագիտության զարգացման, մանկավարժական պրակտիկանների բովանդակության ու ձևերի արդիականացման հիմնախնդիրները»,
- «Տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրման գործընթացի արդյունավետության բարձրացումը ծրագիր, դասագիրք և ուսումնաօժանդակ գրականության շրջանակներում»,
- «Ժամանակակից «Հայոց լեզու» և «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական դասընթացների արդիականացում ուսանողակենտրոն մանկավարժական կրթության բուհական համատեքստում»

Նշված ուղղություններով մայրենիի և նրա դասավանդման եմթոդիկայի ամբիոնը տպագրել է 2 ձեռնարկ, 3 դասագիրք և 8 հոդված, որից մեկը ՌԴ-ում:

Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն

- «Կրթական գործընթացում մեթոդամաթեմատիկական կոմպետենտությունների ձևավորում-զարգացում»,
- ««Մաթեմատիկա» դասընթացի պրոյեկտման մեթոդաբանական և տեսական հիմունքներ»,
- «Կրտսեր դպրոցականի կոգնիտիվ, անձնային և խոսքային-տրամաբանական զարգացման հիմնախնդիրը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում՝ կրթության համագործակցության համատեքստում»,
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության շրջանավարտի ստոխաստիկական կոմպենտենտության զարգացման գիտատեսական և գործնական հիմունքները:
- «Կրտսեր դպրոցականի տեղեկատվական մշակույթի զարգացման հիմնախնդիրը՝ կրթության հաղորդայնության համատեքստում»,
- «ԿԱՊԿՈՒ սովորողներին մաթեմատիկա ուսուցանելու հոգեբանամանկավարժական հիմունքները»,
- «Մաթեմատիկայի տարրական դասարանների չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի համեմատական վերլուծություն (միջազգային փորձի ուսումնասիրում)»:

Նշված ուղղություններով մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնը ղեկավարել է 5 մագիստրոսական թեզ, 4 ավարտական աշխատանք: Ամբիոնի դասախոսներն ընդգրկված են նոր չափորոշիչների և ծրագրերի մշակման «Մաթեմատիկա» առարկայական խմբի տարրական կրթության փորձագիտական աշխատանքներում: Կատարված հետազոտական աշխատանքների նյութերը ներառվել են տարբեր դասընթացների ուսումնական նյութերում:

Տպագրվել է աշխատանքային տետր և մեթոդական ուղեցույց «ԿԱՊԿՈՒ սովորողներին մաթեմատիկա ուսուցանելու հոգեբանամանկավարժական հիմունքները» ուղղության շրջանակներում:

ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովին նշված ուղղություններով ամբիոնի դասախոսների կողմից ներկայացվել է 5 զեկույց:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հետազոտական ուղղությունները.

- «Նախադպրոցական կրթության արդի վիճակի և զարգացման հեռանկարների գիտական հետազոտումը»,
- «Գիտություն-պրակտիկա կապի ամրապնդումը»
- «Նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումների ուսումնասիրումը, կապված երեխայի
- բազմակողմանի զարգացման և հատկապես, խաղային գործունեության հետ՝ ներագույն խաղային
- տեխնոլոգիաների կիրառման և այս ոլորտում տեղեկատվական բազան հարստացնելու հետ»
- «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում»
- Նախադպրոցական տարիքի երեխաների մեդիագրագիտության ձևավորման արդի տեխնոլոգիաները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները:

Նշված ուղղություններով մշակված նյութերի շուրջ դասախոսները պարբերաբար հրատարակում են գիտական հոդվածներ տարբեր գիտաժողովների ժողովածուներում և գիտական ամսագրերում:

Նախադպրոցական մանկավարժության և ամբիոնն իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակում 2022-2023 ուս.տարում շարունակել է ընդգրկել «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» խորագրով ուղղությունը, որը ՖԻԴԵ-ի և Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի հետ համագործակցության արդյունք է: 2022 թվականի ապրիլ ամսին համագործակցության արդյունքում կազմակերպվել էր պետական մանկապարտեզների դաստիարակիների առցանց վերապատրաստում. 18 դաստիարակ:

2022 թվականի նոյեմբերի 22-ին ՇԳԻ տնօրեն Ս.Լալուտյանի պայմանավորվածությամբ հանդիպում է կազմակերպվել ամբիոնի դասախոսական կազմի և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ՝ Մ.Խաչատրյանի հետ, քննարկվել են շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակահարմարության հարցը, նախնական պայմանավորվածությամբ որոշվել է պետական նախակրթարաններում փորձ անել ներդնել շախմատային նախագիտելիքները:

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Научный журнал «Интернаука»	РИНЦ	1
2	Евразийский союз ученых.	РИНЦ	1

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	International Journal Scientia Pedagogical Experimentalis (SPE)	WOS	1
2	WISDOM 3(23), 2022 Khachatur Abovyan Armenian State Pedagogical University	SCOPUS	1
3	Main issues of pedagogy and psychology Scientific Periodical		1
4	Sciences of Europe Praha	РИНЦ	1
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Գիտական տեղեկագիր	РИНЦ	1
2	Сборник научных статей	ВАК	1

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Ֆակուլտետի մշակած միջազգայնացման տեսլականում առանձնացված է որպես առանձին ուղղություն միջազգային գործընկերների հետ հետազոտությունների կազմակերպումն ու իրականացնումը, միջմշակութային հետազոտությունների արդյունքների վերլուծությունը, դրանց հիման վրա հաշվետվությունների, գիտաժողովների կազմակերպումը:

Բացի դրանից համագործագցող բուհերի դասախոսների հետ կատարված հետազոտությունների շրջանակներում տպագրվում են հոդվածներ բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում *(Տես՝ ամբիոնների արձանագրությունները կատարած հետազոտությունների, տպագրված հոդվածների մասին)*:

Այս ոլորտում գրանցված արդյունքները գերազանց համարել չենք կարող: Ամբիոնների հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ դեռևս անելիքներ կան, դրանք նաև նշված են ֆակուլտետի միջազգայնացման տեսլականում: Մինչև 2025 թվականը պլանավորում ենք գտնել գործընկերներ և հզորացնել այդ ուղղությամբ աշխատանքները:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Կրթական ծրագրերի բարելավումն ու վերափոխումը իրականացվում է հիմնականում կատարված հետազոտությունների հիման վրա: Ամբիոնների հետազոտական ուղղությունների շուրջ կատարված աշխատանքների հիման վրա ստեղծվում են ուսումնական նյութեր, որոնք կամ հարստացնում են տարբեր առարկաների մոդուլները, կամ մշակվում են ընտրովի դասընթացներ, որոնք նպաստում են կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորմանը ուսանողների շրջանում: Տարբեր ուղղություններով կատարված հետազոտությունները հարստացնում են ոչ միայն առարկաների բովանդակությունը, այլ նաև նպաստում ուսումնական հաստատությունների համար ժամանակի պահանջներին համահունչ ուսուցիչների և դաստիարակների պատրաստմանը :

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման նպատակով իրականացվել է մի քանի առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչների ուսումնասիրություն և համեմատություն: Հաշվի առնելով Ֆինլանդիայի առաջընթացը սկզբնական կրթության զարգացման ոլորտում ուսումնասիրվել են Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի ՄԿԾ-ները: Նշված համալսարանի հետ համագործակցության շրջանակներում բարելավվել են ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի <<Տարրական մանկավարժություն և մեթոդիկա>> ԲԿ և ՄԿ ծրագրերը: Բրիտանական, Շոտլանդական, Ամերիկյան մի շարք համալսարանների փորձն ուսումնասիրելու ընթացքում դուրս է բերվել հետազոտական աշխատանքների իրականացման բովանդակային և կազմակերպական մի շարք հարցեր, որոնք հաշվի են առնվել ֆակուլտետում նույն ուղղությամբ տարվող աշխատանքները պլանավորելիս և կազմակերպելիս: Բենչմարքինգի արդյունքում կատարվել են առաջարկություններ և փոփոխություններ առարկայական նկարագրերում, առարկաների վերջնարդյունքներում:

Ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, որը կօգնի բարելավել հետազոտական աշխատանքների բովանդակությունն ու արդյունքները ՄԿԾ-ում.

1. ՄԿԾ-ում դասավանդվող բոլոր առարկաների մեկ միջանկյալը դարձնել հետազոտական բնույթի և ծառայեցնել մագիստրոսական թեզի հետազոտական աշխատանքին /արդեն իրականացվում է /:

2. Որպես միջանկյալ ստուգման հետազոտական-ստեղծագործական ձևեր կարող են հանդես գալ նախագծային աշխատանքները, իրավիճակների վերլուծությունները, զրույցների և հարցումների իրականացումը և դրանց վերլուծությունն առարկայի համատեքստում/արդեն իրականացվում է /:

3. Աշխատանքները կազմակերպելու ընթացքում հենվել մուլտիմեդիոն լսարանների նյութատեխնիկական բազայի վրա, օգտագործել այդ լսարանների հնարավորությունները սեմինարներ, քննարկումներ հետազոտական աշխատանքի արդյունքները ներկայացնելու և վերլուծելու նպատակով /արդեն իրականացվում է /:

4. Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերը որպես մոդուլներ ներառել տարբեր առարկաների մեջ, դրանք դարձնելով հասանելի բոլորի համար/ընթացքում է/:

Կատարված աշխատանքների արդյունքում մշակվել են մագիստրոսի աշխատանքային պլան, գնահատման չափանիշներ, դրանք դրվել են կիրառության մեջ:

Առաջարկությունները քննարկվել են Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստում և արժանացել հավանության:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ.

1. Ուսանողների հետազոտական աշխատանքներին և դրանց արդյունքներին նվիրված ամենամյա ուսանողական գիտաժողովի կազմակերպում:

2. Հոդվածների հրատարակում ուսանողների կողմից:

3. Դասախոս-ուսանող գիտական հոդվածների համատեղ հրապարակումներ. այս պահանջը ներառված է նաև մագիստրոսի աշխատանքային պլանում:

4. Ուսումնասիրություններ մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքում մանկավարժական պրակտիկայի բազա հանդիսացող կրթական հաստատություններում. այդ պահանջի ներառումը մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերում: Հետազոտությունների, հատկապես case stady, ներկայացումն ու գնահատումը ուսանողների թղթապանակների պաշտպանության ժամանակ:

5. Աշխատող ուսանողների կողմից ուսումնասիրությունների իրականացում իրենց կրթական հաստատություններում և դրանց ներկայացում ֆակուլտետային սեմինարների ժամանակ, մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտություններին ուղղված համապատասխան դասընթացների ժամերին:

Արդյունքում՝ ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացում, ինչպես նաև բարելավված մագիստրոսական և ավարտական աշխատանքներ, մանկավարժական պրակտիկայի թղթապանակներ:

Հաշվետու տարում ուսումնասիրվել են և ամբիոնի վարիչների հետ քննարկվել նշված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների արդիականությունն ու մասնագիտական առնչությունները կրթական հաստատությունների խնդիրներին և գործառույթներին: Քննարկվել են նախորդ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքներն ու նախագահների հաշվետվությունները: Բացահայտվել են առկա խնդիրները, մշակվել դրանց լուծմանը նպաստող համապատասխան մոտեցումներ: Լրամշակվել և հաստատվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Թեմաների բանկը հարստացվել է, արդիական և կիրառական արժեք ներկայացնող վերնագրերով: Բավականին ավելացել են մեդիակրթության ոլորտին առնչվող թեմաներն ու աշխատանքները: Առավել կազմակերպված և արդյունավետ են դարձել շրջանավարտների հետ իրականացվող քննարկումները, խորհրդատվություններն ու նախապաշտպանությունները: Սակայն դեռևս բավարար մակարդակով չեն իրականացվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ուղղությամբ փորձարարական աշխատանքները, արտաքին գրախոսությունների արժանահավատությունը: Վերջիններում հիմնականում նշվում են ընդհանուր դիտողություններ և ոչ արժեքավոր, կառուցողական առաջարկություններ: Հիմք ընդունելով այս ուղղությամբ ֆակուլտետի երեք ամբիոնների կատարած ուսումնասիրությունների արդյունքները՝ ամբիոնների վարիչների հետ քննարկվել են և ձևավորվել մի շարք մոտեցումներ ու առաջարկություններ:

Ֆակուլտետի ռազմավարության գործողությունների պլանի համաձայն ֆակուլտետում աշխատանքներն են իրականացվում նաև համալսարանի առաքելությունից բխող գիտական ուղղությունների զարգացման ուղղությամբ /մանկավարժություն, մեթոդիկաներ/: Այս երկու ուղղությունները ֆակուլտետի ուշադրության կենտրոնում են: ԲԿԾ–ի ավարտական աշխատանքների և ՄԿԾ–ի թեզերի թեմաները ունեն նեղ

մանկավարժական և հետազոտական բնույթ, ուղղված են տարբեր մանկավարժական հիմնախնդիրների, մասնավոր մեթոդիկաների քեյսերի ուսումնասիրությանն ու արդյունքների վերլուծությանը:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Ֆակուլտետն իր գործունեությունը ծավալում է հիմնականում ՀՊՄՀ՝ Խանջյան 5 հասցեում տեղակայված բարձրահարկ մասնաշենքում: Ֆակուլտետը լսարանային ֆոնդն օգտագործում է՝ համագործակցելով մյուս ֆակուլտետների հետ: Գրեթե բոլոր լսարանները հագեցած են անհրաժեշտ սարքավորումներով, գործում է Wi-Fi կապ, իրենց հնարավորությունների ողջ ներուժով օգտագործվում են ֆակուլտետի մուլտիմեդիոն լաբորատորիան և 2 մուլտիմեդիոն լսարանները: Ֆակուլտետի տրամադրության տակ գտնվող լսարաններն ապահովված են անհրաժեշտ տեխնիկայով, առկա է ՏՀՏ–ով հագեցած 6 լսարան, ինչպես նաև խաղերի կենտրոն, 2 մուլտիմեդիոն լսարաններ, 1 մուլտիմեդիոն լաբորատորիա բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: 2019 թվականից մուլտիմեդիոն լաբորատորիան և լսարանները ապահովվել են ծրագրերով, որոնք հնարավորություն են տվել ստեղծել էլեկտրոնային innostud.am մուլտիմեդիոն հարթակ: Հարթակի միջոցով ստեղծված վարժությունները թույլ են տալիս իրականացնել վերապատրաստումներ ինչպես դասախոսների, ուսանողների, այնպես էլ ուսուցիչների և դաստիարակների համար: Նշելի է, որ էլեկտրոնային մուլտիմեդիոն հարթակը վերազինման, բարելավման կարիք ունի: Այդ նպատակով ֆակուլտետը դիմել է ռեկտորատիտ՝ գործընթացը կազմակերպելու նպատակով: Ժամանակ առ ժամանակ խնդիրներ կարող են առաջանալ լսարանային ֆոնդի հետ, պայմանավորված մի շարք օբյեկտիվ պատճառներով: Դրանք են. •սկզբնական կրթության ֆակուլտետը համալսարանի ամենամեծ ֆակուլտետներից է, որտեղ սովորում են շուրջ 800 ուսանող, • ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես <<Տարրական մանկավարժություն և մեթոդիկա>>, նախատեսված առանցքային դասընթացները պահանջում են աշխատանք փոքր խմբերով և հետևաբար մեծ թվով լսարանների կարիք է զգացվում, • հոսքային դասերի ընթացքում մեծ լսարանների կարիք է լինում, որը լուծելու համար ֆակուլտետը համագործակցում է մյուս ֆակուլտետների հետ: Ֆակուլտետի լսարանային ֆոնդը հիմնականում ապահովված է տեխնիկայով, սակայն որոշ լսարաններում տեխնիկայի անսարքությունն առաջացնում է լրացուցիչ դժվարություններ:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Հաշվետու ժամանահատվածում ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները շարունակել են իրենց աջակցությունը պատերազմում տուժած ընտանիքներին և այդ ընտանիքների երեխաներին: Ֆակուլտետի ՊԴԱ-ի դրամական աջակցություն է ցուցաբերել ֆակուլտետի այն ուսանողներին, որոնց ընտանիքի անդամները զոհվել են պատերազմում. մարվել է նրանց ուսման վարձի պարտքերը: Բարեգործական այցեր են իրականացվել մանկատներ և հատուկ դպրոցներ, հավաքվել են ահրաժեշտ իրեր, պարագաներ, հագուստ, սաների համար կազմակերպել են տոնական միջոցառումներ: Այդ միջոցառումները լուսաբանվել են համալսարանի պաշտոնական կայքում և ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում: Ֆակուլտետի կամավորները մասնագիտական կամավորական գործունեություն են ծավալել կրթական տարբեր հաստատություններում, այդ աշխատանքները լուսաբանված են էլեկտրոնային հարթակում: /Տես՝ ուսանողների կամավորական գործունեության էջ/: Ֆակուլտետի դասախոսները մասնագիտական աջակցություն են ցուցաբերում հանրապետության տարբեր դպրոցների ուսուցիչներին և դաստիարակներին: Մասնագիտական աջակցությունն իրականացվում է ինչպես առերես /սեմինարների տեսքով/, այնպես էլ հեռավար ձևաչափով: Նմանատիպ քննարկումները հաճախակի բնույթ են կրում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
Ֆակուլտետն իրականացնում է աշխատանքներ նաև միջազգային համագործակցության ուղղությամբ. մասնակցություն միջազգային գիտաժողովների, հոդվածների հրատարակումներ միջազգային ամսագրերում, մասնակցություն ֆորումների (նաև առցանց), փոխադարձ այցելություններ, հեղինակավոր գիտնականների դասախոսությունների, վարպետաց դասերի կազմակերպում, մասնակցություն ուսանողների փոխանակման ծրագրերին: Այս տարի աշխատանքները փոքր ինչ աշխուժացել են, ի համեմատ նախորդ տարվա (համաճարակով պայմանավորված): Շարունակվում են ֆակուլտետի բավականին տարաբնույթ և սերտ կապերը Ֆինլանդիայի Օուլու համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հետ: Բելառուսի Մաքսիմ Տանկի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպում ենք համատեղ քննարկումներ, գիտաժողովներ: Ֆակուլտետը համագործակցում է նաև ՌԴ մի շարք այլ պետական համալսարանների հետ. Մոսկվայի պետական մանկավարժահոգեբանական համալսարան, Չելյաբինսկի պետական մանկավարժական համալսարան, Կազանի պետական համալսարան, Իրկուտսկի պետական համալսարան, Ստավրոպոլի

մանկավարժական համալսարանի, նոր համագործակցության համաձայնագրեր ունենք նաև Ռոստովի Հարավային ֆեդերալ համալսարանի հետ:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը սերտ համագործակցում է Ուկրաինայի մեր գործընկերների հետ:

Համագործակցությունը սերտացնելու և արտասահմանից ուսանողներ ունենալու նպատակով ֆակուլտետը թարգմանել և անգլերեն տարբերակով Googl.dox –ում տեղադրվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագիրը: Արձագանքել է մեկ սիրիացի դիմորդ:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում հաճախակի քննարկվում են միջազգային համագործակցության հարցերը:

Նախատեսել ենք 2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետի միջազգային համագործակցության շրջանակներում շեշտը դնել հետևյալ ուղությունների վրա.

- բենչմարկինգի իրականացում,
- գիտաժողովների կազմակերպում,
- սեմինարների, վեբինարների կազմակերպում,
- համատեղ հետազոտությունների իրականացում:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի միջազգայնացմանը նպաստող աշխատանքներ.

1.Աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի մշակում օտարերկրյա ուսանողների համար *(Տես՝ ՀՊՄՀ տեղեկատվական հարթակ)*:

2.Համագործակցություն Ֆինլանդիայի Օուլու համալսարանի Կրթության ֆակուլտետի հետ՝ համատեղ կրթական ծրագիր ձեռնարկելու համար:

3.Մասնակցություն կրեդիտային շարժունության ծրագրերի. Erasmus Plus ծրագրի շրջանակներում՝ 2022 թ.՝ 2 ուսանող. Ֆինլանդիա, Օուլու համալսարան:

4. Մասնակցություն միջազգային * գիտաժողովների *(Տես՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոնների հաշվետվություններ)*:

5. Հրապարակումներ միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում:

Նշված աշխատանքներին զուգահեռ՝ միջազգայնացման ուղղությամբ 2022 թվականին նախատեսվում են նաև հետևյալ աշխատանքները.

1. Համագործակցություն Ղազախստանի ազգային համալսարանի հետ հետևյալ ուղղություններով՝
- սովորողների ստեղծագործական աշխատանքների համատեղ ցուցադրություններ,
- ամենամյա ուսանողական միջազգային կոնֆերանսի կազմակերպում,

- ժամանակակից մանկավարժական մոտեցումների վերաբերյալ on line վեբինարի կազմակերպում:

2. Ֆակուլտետը մշակել է միջազգայնացման տեսլական, համաձայն որի նախատեսել ենք մինչև 2025 թվականը ֆակուլտետի միջազգային համագործակցությունը բարձրացնել նոր մակարդակի:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

Ինչպես գիտենք 2022-23 ուսումնական տարվանից ամբիոնների որակի պատասխանատուները իրենց ծանրաբեռնվածության մեջ ունեն որակի ապահովման աշխատանքների իրականացման համար հատկացված ժամաքանակ: Որակի պատասխանատուները պարբերաբար ամբիոններում կատարում են ուսումնասիրություններ, մասնավորապես մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող առարկաների նկարագրերի բովանդակության մշտադիտարկումներ, դրանց վերջնարդյունքների, առարկայի բովանդակության, առաջադրանքների և գնահատման ձևերի համապատասխանեցման ուղղությամբ: Արդյունքները քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի կրթության որակի պատասխանատուների համար նախատեսված հանդիպումների ընթացքում: Այդ հանդիպումները իրականացվում են երկու շաբաթը մեկ և նվիրվում են ինչպես առարկայական նկարագրերի բարելավմանը, այնպես էլ դասավանդման և գնահատման մեթոդների համապատասխանեցմանն ու այլ կարևոր հարցերի:

Կրթության որակի ապահովման ուղղությամբ աշխատանքները ֆակուլտետում և ամբիոններում իրականացվում են սկզբնական կրթության ֆակուլտետի և ամբիոնների գործողությունների՝ ՀՊՄՀ ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված պլանի համաձայն: Կրթության որակի ապահովման աշխատանքներում կիրառվում են հետևյալ մեխանիզմները՝ մասնագիտական կրթական ծրագրեր, հետազոտություն և գիտության զարգացում, որակի ներքին ապահովման համակարգ ֆակուլտետում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի կրթության որակի ապահովման խումբը համագործակցել է համալսարանի ՀՊՄՀ կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի հետ, մասնակցել որակի հարցերին նվիրված քննարկումներին, իրականացրել դասընթացների դասավանդման դիտարկումներ, հիմնականում առցանց, արդյունքների վերլուծության մասին ներկայացրել հաշվետվություններ ամբիոնային նիստերին, նախաձեռնել հանդիպումներ և սեմինարներ ամբիոնների դասախոսների համար:

1. Նշված ուսումնական տարում ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից ուսումնասիրվել են նոր սերնդի ՈԱԾ-ի պահանջները՝ առարկայական դասընթացների կոմպետենտային համակարգը ձևակերպելու նպատակով: ՈԱԾ-ի պահանջների հիման վրա փոփոխության են ենթարկվել նաև վերջնարդյունքների ձևակերպումները, համապատասխանեցվել են վերջնարդյունքներն ու ԱՈՒՄՓ-ի դասախոսությունների դասավադման և ուսումնառության մեթոդները:

2.Ամբիոններում ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներին նախընթաց վերանայվել, քննարկվել և հաստատվելեն բոլոր դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները:

3.Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի կողմից դիմորդների կրթական կարիքների և աշխատաշուկայի ուսումնասիրության հիման վրա մշակվել ու 2022-23

ուսումնական տարվանից մեկնարկել է «Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագիրը հեռակա ուսուցման համակարգում:

4.Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են դասախոսների մասնագիտական որակի ապահովմանն ուղղված կարիքները, առանձնացվել որոշ թեմաներ և դրանց շուրջ կազմակերպվել ամբիոնային գիտամեթոդական սեմինարներ *(Տես՝ ամբիոնային նիստերի արձանագրությունները, սեմինարների օրակարգեր)*: Այսպես՝ նոր սերնդի ՈԱԾ-ի ներկայացում և քննարկում, ծանոթացում հետազոտությունների կազմակերպման միջազգային փորձին, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով իրականացվող ուսումնական տարատեսակ գործընթացների ներկայացում, դժվարությունների հաղթահարմանը միտված առաջարկների քննարկում:

•Թարմացվել է 2022-23 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրերի ընտրովի դասընթացների բազան, ընդգրկվել են դասընթացներ՝ ուղղված ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը (3-րդ կուրս 2-րդ կիսամյակ), ինչը մեծապես կաջակցի նաև ուսանողների ավարտական աշխատանքների արդյունավետ կատարմանը:

5.Փոփոխություններ են կատարվել մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական խմբի առարկաների բովանդակության մեջ, ստեղծվել է մագիստրոսի աշխատանքային պլան՝ գնահատման չափանիշներով:

6.Վերանայվել են մագիստրոսի կրթական ծրագրերի մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերը, ճշտգրտվել, հստակեցվել են վերջնարդյունքները, ապահովելով պրակտիկաների շարունակականությունը: Դրանք դարձել են առավել ճկուն՝ հնարավորություն տալով ընտրության՝ պրակտիկաները ինչպես բուհում, այնպես էլ դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպելու համար: Սա հատկապես կարևոր է ոչ մանկավարժական կրթությամբ մագիստրոսների պրակտիկան կազմակերպելու պարագայում:

7.Կրթության որակին նվիրված սեմինարներ են կազմակերպվել նաև ուսանողների համար(3 սեմինար): 2022 թվականի գարնանը կազմակերպվել է ամենամյա միջհամալսարանական ուսանողական առցանց գիտաժողովը՝ նվիրված սկզբնական կրթության հիմնահարցերին (Տես՝ ֆակուլտետի ՈՒԳԸ հարթակը): Գիտաժողովին ներկայացվել են առավելապես հետազոտական բնույթի աշխատանքներ: Զեկույցներով հանդես են եկել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր ուսանողները, նաև ասպիրանտները: Խմբագրական խորհուրդն այժմ աշխատում է գիտաժողովի աշխատանքները համակարգելու և առցանց եղանակով տպագրության ներկայացնելու ուղղությամբ:

8. Որակի ապահովման խմբի կողմից մանրամասն ուսումնասիրվել է 2021-22 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները, արվել SWOT վերլուծություն և ներկայացվել ֆակուլտետի խորհրդի նիստի քննարկմանը (*Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունը)*:

9.Ամբիոնների որակի պատասխանատուները այս տարվա ընթացքում ամփոփել և ներկայացրել են տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող առարկաների արդյունքները և որակի ապահովման խնդիրները: Այս համատեքստում այժմ վերանայվում են առարկայական նկարագրերի վեջնարդյունքները, և կատարվում են որոշ փոփոխություններ՝ մասնավորապես առարկայական նկարագրերի վեջնարդյունքները մասնագրերի վերջնարդյունքներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այս համատեքստում ֆակուլտետի որակի ապահովման խումբը ս.թ.հուլիս-օգոստոս ամիսներին նախատեսել է սեմինարներ ամբիոնների դասախոսների համար *(Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 29-ի նիստի արձանագրությունը)*:

10. Ամբիոնների որակի պատասխանատուները այս ուսումնական տարվա ավարտին ամփոփել և ներկայացրել են տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող առարկաների արդյունքները և որակի ապահովման խնդիրները: Այս համատեքստում, ֆակուլտետի որակի ապահովման խումբը, մասնակցելով ANQA –ի կողմից կազմակերպած վերապատրաստման դասընթացներին, կազմակերպելու է սեմինարներ վերապատրաստման նյութերով կիսվելու, փորձը տարածելու նպատակով:

11.Ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից մշակվել է հարցաշար և իրականացվել է ուսանողների կրթական ծրագրերից բավարարվածության մակարդակի վերհանում և վերլուծություն, արդյունքները ներկայացվել են ֆակուլտետի խորհրդի վերջին նիստում: Վերլուծության արդյունքները հաշվի են առնվել ամբիոնների կողմից նոր ուսումնական տարում նախապատրաստվելու ընթացքում:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Կրթության որակի ապահովման գործընթացների արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունն ապահովվում է.

- ֆակուլտետի խորհրդի կազմում նրանց առաջադրմամբ,
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում նրանց ներգրավվածությամբ և մասնակցությամբ,
- սեմինարների, տարաբնույթ քննարկումների և ֆոկուս խմբերի աշխատանքներում մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվում են կրթական ծրագրի բովանդակությունը, վերջնարդյունքները, ձեռքբերումներն ու դժվարությունները *(Տես՝քննարկումների օրակարգեր, ներկայութերթիկներ):*

Հաշվետու ժամանակաշրջանում նմանատիպ քննարկումներ են իրականացվել ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում: Ֆակուլտետի ընդլայնված խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են կրթության որակի ապահովման հարցերը, վերհանվում կարիքները, նախանշվում դրանց բավարարման ուղիները:

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Ֆակուլտետի գործունեության համապատասխանությունը համալսարանի առաքելությանն ու նպատակներին:	Ոչ բոլոր դասախոսների ակտիվ ներգրավումը գործընթացներին:

Ֆակուլտետի գործունեության համապատասխանությունը ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի ուղղություններին:	Ամբիոնների գործունեության կազմակերպումը նեղ առարկայական ուղղությամբ:
Ֆակուլտետի ակտիվ համագործացությունը ինչպես համալսարանի տարբեր ստորաբաժանումների, այնպես էլ գործատուների և միջազգային գործընկերների հետ:	Գործատուների ոչ թիրախային մասնակցությունը բուհում իրականացվող աշխատանքներին: Միջազգային համագործակցության նեղ շրջանակները սակավ նյութական պայմանների պատճառով: Երկու լեզվով դասավանդող դասախոսների փոքր թիվը:
Ֆակուլտետի գործունեության թափանցիկությունն ու արագ արձագանքումը նոր կարգերի, հրամանների, հրահանգների ներկայացմանն ու դրանց մասին տեղեկատվության փոխանցումը ֆակուլտետի ամբիոններին և դասախոսներին:	Գերծանրաբեռնվածությունը:
Ֆակուլտետի գործունեության պլանավորում ու դրա համապատասխանությունը ՊԻԳԲ շրջափուլին:	Ոչ բոլոր ստորաբաժանումների հետևումը շրջափուլին:
Ֆակուլտետի կողմից ուսանողների ակտիվ ներգրավումը ֆակուլտետի գործունեության տարբեր աշխատանքներում:	Ուսանողների թույլ նախաձեռնողականություն ու մոտիվացիան:

Ֆակուլտետում կազմակերպվող տարաբնույթ աշխատանքների արդյունավետության գնահատումը հետադարձ կապի, ինչպես նաև կազմակերպվող քննարկումների միջոցով:	Նույն մարդկանց մասնակցությունը քննարկումներին և վերլուծություններին:
Մանկավարժական պրակտիկաների բոլոր փուլերի կազմակերպման հստակ պլանավորումն ու դրանց համապատասխանումը ՄԿԾ-ի վերջնարդյունքներին:	Մանկավարժական պրակտիկաների արդյունքների վերլուծության ընթացքում կատարված առաջարկությունների ներդրման դանդաղ ընթացքը:
Կատարվող աշխատանքների մշտադիտարկումն ու վերլուծությունը:	Ինքնավերահսկողության մեխանիզմների բացակայությունը:
Շարունակական բնույթ կրող համագործակցությունը, արդյունքների քննարկումն ու վերլուծությունը գործատուների հետ:	Գործատուների կողմից աշխատանքներին մասնակցելու թույլ մոտիվացիան: Դրանց կազմակերպման կարևորության գիտակցման ցածր մակարդակը:
Կրթության որակի բարելավման ուղղությամբ ֆակուլտետի կողմից իրականացված հետևողական աշխատանքն ու բարելավման նպատակով կատարված առաջարկությունները:	Առաջարկությունների ներդրման արդյունքների մասին հաշվետվողականության բացակայությունը:
Ուսանողության շրջանում իրականացվող հարցումներն ու դրանց հիման վրա ՄԿԾ-ների բարելավումը:	Ուսանողների կողմից հարցումներին մասնակցելու մեխանիկական և ձևական բնույթը:

Դասավանդման մեթոդների շուրջ իրականացվող շարունակական աշխատանքը:	Մասնագիտացմանը համապատասխան ամբիոնների կողմից մշակված դասավանդման ընդհանուր մեթոդաբանության բացակայությունը: Ընդհանուր մոտեցումների բացակայությունը:
Գրագողության և ցիտման նորմերի շուրջ իրականացվող սեմինարն ու այլ աշխատանքների կազմակերպումը:	Սեմինարների և այլ աշխատանքների արդյունքների ներդրման թույլ մոտիվացիան:
ՄԿԾ-ների շուրջ աշխատանքների կազմակերպման ընթացքում միջազգային փորձի ուսումնասիրությունն ու ներդնումը:	Ընդհարական մոտեցումների և մոտիվացիայի բացակայությունը:
Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ սերտ համագործակցությունը:	Համագործակցության ուղղությունների ընդլայման թույլ հնարավորությունները:
Ֆակուլտետի դասախոսների գիտական և հետազոտական աշխատանքները: Ամբիոնների հետազոտության ուղղություններով աշխատանքի առկայությունը:	Հետազոտությունների շուրջ գիտական դպրոցների ստեղծման, նորույթների մասին հանրության, մանկավարժական հանրության շուրջ դրանց արդյունքների տարածման մեխանիզմների բացակայությունը:
Ֆակուկտետի կողմից դպրոցներ այցերի և դպրոցներից աշակերտներին համալսարան հրավիրելու շուրջ իրականացվող աշխատանքները /դիմորդների հետ իրականցվող աշխատանք/:	Տարեցտարի դիմորդների թվի նվազումը (ազգաբնակչության սոցիալական ոչ բավարար վիճակ, արտագաղթ, մանկավարժի մասնագիտության ցածր վարկանիշ, գրավչության անկում և այլն):

Լսարանային ֆոնդ և մեդիասարքավորումներով հագեցած լսարաններ:	Innostud.am կրթական հարթակի վերագործարկման և թարմացման անհրաժեշտություն:
Հասարակական և կամավորական աշխատանքների կազմակերպում՝ ուսանողների ներգրավմամբ:	Ուսանողների մոտիվացիայի բացակայությունը:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Միջազգային համագործակցության ընդլայնման հնարավորություն ըստ մասնագիտացումների:	
Գործատուների հետ կապերի ընդլայնման միջոցով ՄԿԾ-ի բարելավում:	ՄԿԾ-ների և աշխատաշուկայի պահանջների անհամապատասխանություն:
Միջազգային համագործակցության միջոցով հետազոտական, գիտական փորձի ընդլայնում և հարստացում:	

Աշոտ-Տեր Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:

Ըստ ուսումնական աշխատանքների ծավալի և ծանրաբեռնվածության՝ հաշվետու տարում ամբիոնն ունեցել է 7553ժամ: Ուսումնական տարվա համար նախատեսված աշխատանքների ծավալն ամբողջությամբ կատարված է ինչպես առկա, այնպես էլ հեռակա կրթության համակարգերում (ԲԿԾ, ՄԿԾ): <<Մասնագիտական- առարկայական ներամբիոնային ենթախմբերը>> մշտապես ուսումնասիրել են բոլոր առարկայական փաթեթները, դրանց բովանդակությունը արդիականացրել և երաշխավորել են ներբեռնման:
Նախագծված ծրագրային խնդիրների իրականացումը և որակական մակարդակը մշտադիտարկելու նպատակով իրականացվել են փոխադարձ դասալսումներ և առարկայական սեմինարներ:
Հաշվետու տարում ԲԿԾՀ 5-րդ կուրսի 2 ուսանող վերադարձել է տարկետումից / Ապերյան Հեղինե, Ավետիսյան Տաթևիկ/, նրանց ավարտական աշխատանքներն ամբիոնի դասախոսները ղեկավարել են՝ ունենալով լրացուցիչ անվճար ծանրաբեռնվածություն:

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերը, թեմատիկ պլանավորումներն ու առարկայական փաթեթները լրամշակվել են, քննարկվել <<Մասնագիտական- առարկայական ներամբիոնային ենթախմբերում>> և երաշխավորվել են հարթակում ներբեռնման: Հաշվետու տարում ՄԿԾ և ԲԿԾ համակարգերի համար ստեղծվել և ներդրվել են երկուական նոր դասընթացներ.

1. <<Վերջնարդյունքահեն մոտեցումը մայրենիի ուսուցման գործընթացում>> , հեղինակ՝ մ. գ. թ. ,դոցենտ Ա. Բալայան, ՄԿԾԱ -2րդ կուրս:

2. <<Կրթական հարթակների գործածումը բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում>>, հեղինակ՝ բ. գ. թ. դոցենտ, Լ. Ավագյան ,ԲԿԾԱ-4րդ կուրս

Առցանց ուսումնական գործընթացի անցնելու կապակցությամբ վերանայվել են ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերը և առարկայական փաթեթները՝ դրանք հարմարեցվել են կրթության նոր ձևաչափին, դասախոսությունները հարստացվել են սահիկաշարերով, իսկ գործնական պարապմունքները՝ տեսադասերով:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

՝ Պայմանավորված առերես քննությունները երբեմն առցանց կազմակերպելու հանգամանքով՝ ուսանողների ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գնահատման բաղադրիչները վերանայվել են փոփոխության են ենթարկվել միջանկյալների և քննությունների առաջադրանքների փաթեթներն ու քննական տոմսերը. դրանք դարձել են ավելի գործնական, չափելի և գնահատելի՝ ապահովվելու համար ուսանողների ինքնուրույն գործունեությունն ու ակադեմիական ազնվությունը:
Ուսումնական տարվա սկզբին <<Հայոց լեզու>> և <<Մայրենիի դասավանդման մեթոդիկա>> առարկաներից անցկացրել ենք ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների <<մնացորդային գիտելիքների>> ստուգում: Արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ ուսանողների կողմից մասնագիտական գիտելիքների և կարողությունների յուրացումն ու իմաստավորումը գտնվում են բավարար

մակարդակի վրա: Առկա բացթողումների շտկման և աշխատանքների լրամշակման նպատակով մշակվել են և ուսանողների շրջանում կիրառվել անհատական աշխատանքներ: Ուսանողների ուսումնական գործունեության արդյունքների գնահատման մեթոդներն ու չափանիշները համապատասխանում են համալսարանում ընդունված և առարկայական փաթեթներում նշված բաղադրիչներին: Գնահատման ակադեմիական մակարդակի ապահովման նպատակով միջանկյալ գրավորների և ամփոփիչ քննությունների առարկայական թեստերն ու տարբերակները քննարկվել են <<Մասնագիտական- առարկայական ներամբիոնային ենթախմբերում>> :
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Հաշվետու տարում հրավիրվել է ամբիոնի 13 նիստ, որոնց ընթացքում քննարկվել է շուրջ 60 հարց, որոնց ուղղությամբ ընդունվել մի շարք որոշումներ:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ. հմ. 8 27. 05. 2022	**Ամբիոնում իրականացված փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկում:** **Զեկուցող՝** ամբիոնի դասախոսներ	1. Դասախոսների հաղորդումներն ընդունել ի գիտություն: 2. Ամբիոնի դասախոսների համար կազմակերպել սեմինար պարապմունք << Էլեկտրոնային առաջադրանքների գործիքակազմի մշակման տեխնոլոգիաների առանձնահատկությունները>> թեմայով: 3. Հանձնարարել <<Առարկայական մասանխմբերի>> ղեկավարներին մշտապես քննարկել դասավարման ընթացքում ծագած խնդիրները և աջակցել դրանց հաղթահարմանը:
Արձ. հմ. 8 27. 05. 2022	**<<Մանկավարժություն>> ՈՈԾ բնութագրերի հիման վրա առակայական փաթեթների << Վերջնարդյունքներ>> բաղադրիչի լրամշակման մասին:** **Զեկուցող՝ Ջ. Գյուլամիրյան**	1. Բարեխղճորեն մասնակցել առարկայական փաթեթների լրամշակմանը նվիրված ուսումնական մասի կողմից առաջիկայում կազմակերպվող սեմինարին: 2. Ծանոթանալ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի ապրիլի 22-ի հմ783Ա հրամանին և մինչև 2022 թվականի օգոստոսի 20-ը լրամշակել առարկայական փաթեթները՝ հաշվի առնելով վերոնշյալ հրամանի բովանդակությունը: 3. Առարկայական փաթեթների լրամշակման աշխատանքերին մասնակից դարձնել նաև տվյալ

		դասընթացի գործնական պարապմունքերը վորող դասընթացը վարող դասախոսներին:
30.08.2022 ՀՄ. 1	Աշխատանքային և կատարողական կարգապահության նոր կանոնների մասին: Զեկուցող՝ Ջ. Գյուլամիրյան	1. Ջ. Գյուլամիրյանի հաղորդումն ընդունել ի գիտություն: 2. Հանձնարարել ամբիոնի բոլոր դասախոսներին՝ ա. Ծանոթանալ համալսարանի<< Աշխատանքային և կատարողական կարգապահության կանոններին>> և պահպանել ներկայացված պահանջները: բ. Փոխդեկանին ներկայացնել այլ հաստատություններում իրականացվող աշխատաժամերը՝ դասացուցակի կազմման ժամանակ դրանք հաշվի առնելու համար: գ. Նոր ուսումնական տարվա դասացուցակին ծանոթանալ նախապես, ճշգրիտ և բարեխղճորեն իրականացնել աշխատանքային գործունեությունը:
19. 09. 2022 Հմ. 2	Սկզբնական կրթության ֆակուլտետի <<Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա>> մասնագիտության ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման հարցաշարի քննարկում և հաստատում: / <<Մայրենի լեզու>>, <<Մայրենիի ուսուցման մեթոդիկա>>/ առարկաներից	1. Հաստատել ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման հարցաշարը: 2. 2022թվականի սեպտեմբերի 26-ին կազմակերպել նշված առարկաներից ԲԿԾԱ 3-րդ կուրսի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգում:
19.09.2022 հմ. 2	Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ԲԿԾԱ 3-րդ կուրսի շարունակական և 4-րդ կուրսի ամփոփիչ-գնահատող պրակտիկաների նախապատրաստման մասին:	Մինչև 2022 թ. սեպտեմբերի 30-ը ԲԿԾԱ 3-րդ կուրսերում ուսանողների մնացորդային գիտելիքների և կարողությունների ստուգում անցկացնել «Հայոց լեզու և գրականություն» և «Մայրենիի դասավանդման մեթոդիկա» առարկաներից: Արդյունքները վերլուծել, համակարգել և տվյալ առարկաների դասընթացների ընթացքում ծրագրավորած աշխատանք տանել ուսանողների դժվարությունների պարզեցման և չյուրացրած նյութերի ուսումնասիրման ուղղությամբ: **2.** Ուսումնական տարվա առաջին շաբաթներում 3-րդ և 4-րդ կուրսերում

		ուսանողների հետ քննարկել տարրական դպրոցում մայրենիի դասերի խնդիրները, դասերին ներկայացվող արդի պահանջները, դասի պլանները և ձևավորել անհրաժեշտ նյութերի փաթեթ: **3.** 4-րդ կուրսի ուսանողներին (որոնք ավարտական աշխատանք են գրում «Մայրենիի դասավանդման մեթոդիկա» առարկայից) հանձնարարություններ տալ ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ, աջակցել նրանց մշակելու հետազոտական աշխատանքի պլան և հետամուտ լինել մանկավարժական պրակտիկայի ընթացքում նրա իրականացմանը:
19.09.2022 հմ. 2	<<ՀՊՄՀ-ի 2022-2025 թվականների ռազմավարական ծրագրի>> քննարկում: Զեկուցող՝ Ա. Միքայելյան	1. <<ՀՊՄՀ 2022-2025 թվականների ռազմավարական ծրագրի>> բովանդակային պահանջներն ընդունել ի գիտություն: 2. Ամբիոնի 2022-23 ուսումնական տարվա աշխատանքային պլանը կազմելիս հաշվի առնել նաև նշված ծրագիր դրույթները: 3Հանձնարարել ամբիոնի դասախոսներին իրենց առարկայական փաթեթները լրամշակելիս առաջնորդվել նաև Համալսարանի 2022-25 թվականների ռազմավարական ծրագրի դրույթներով:
20. 10. 2022 Հմ. 3	ԲԿԾԱ 1-ին կուրսի ուսանողների մեկնարկային գրագիտության մակարդակի ստուգման արդյունքների քննարկում: Զեկուցող՝ Ա. Ավագիմյան	1. Ա. Ավագիմյանի հաղորդումն ընդունել ի գիտություն: 2. Հանձնարարել ԲԿԾԱ 1-ին կուրսում <<Հայոց լեզու և գրականություն>> առարկան դասավանդող դասախոս Ա. Ավագիմյանին՝ մշակել հայոց լեզվից ցածր ակադեմիական գիտելիքներ և կարողություններ ունեցող նշված կուրսի ուսանողների հետ լրացուցիչ պարապմունքների ծրագիր և իրականացնել համապատասխան աշխատանք:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆե սոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասա խոս	Ընդ-նը
Հաստիքային	13	2	1	11	11	–-	1	13
Համա տեղող	2	1	--	--	1	–	--	2
Ժամա վճարային	--	--	--	--	--	--	--	--
Ընդա-մենը	13	2	1	11	11		1	13

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ամբիոնի գծով դասավանդվող բոլոր դասընթացները ԲԿԾ-ում և ՄԿԾ -ում ունեն հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում մայրենիի դասավանդման բովանդակային ուղղվածություն, ինչպես նաև ժամանակակից հայոց լեզվի և մայրենիի դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերին միտված ուղղություններ, իսկ ՄԿԾ-ում՝ մանկավարժահոգեբանական արդի հիմախնդիրներին առնչվող գիտական հիմնարար հարցեր:Այս դասընթացների փաթեթները մշտապես քննարկվում են առարկայական մասնախմբերում, ապա նոր երաշխավորվում ներբեռնման: Ամբիոնն ունի ԲԿԾՀ, ԲԿԾԱ, ՄԿԾՀ, ՄԿԾԱ բաժիններում դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, որոնք համապատասխանում են ներկայացված մասնագիտական ելքային արդյունքերին: Ամբիոնն ունի կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և փոխներգործուն մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթներ: Սկզբնական կրթության և Հատուկ կրթության ֆակուլտետներում դասավանդվող 2 տասնյակից ավելի դասավանդվող դասընթացների առարկայական փաթեթները ստեղծվել են աշխատանքային խմբերում, որոնց կազմում ընդգրկված են դասախոսության նյութերի հեղինակը և գործնական վարող դասախոսներ: Բոլոր առարկայական փաթեթները դիտարկվել են մասնագիտական ելքային արդյունքների տեսանկյունով, առաջարկությունների հիման վրա լրամշակվել են, և ներբեռնվել: Հաշվետու ժամանակաշրջանում ամբոնի դասախոսներն իրականացրել են ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից իրականացրած ՀՀ դպրոցների տարրական դասարանների և Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումներ:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը	
Դասագրքեր	Ուսումնական ձեռնարկներ

ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
3	2		2	2	

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
3						2			

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի դասախոսների հիմնական մասի հետազոտական ախատանքները, դրանց արդյունքում տպագրած դասագրքերը, ուսումնաօժանդակ ձեռնարկներն ու հոդվածներ վերաբերում են տարրական դպրոցի հիմնախնդիրներին, ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության առանձնահատկություններին՝ /առավելապես՝ մայրենիի ուսուցման մեթոդիկայից/: Ամբիոնի դասախոսները հետազոտական գրոծունեություն են իրականացրել հետևյալ երեք ուղղություններով. ա. <<Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացումը ծրագիր, դասագիրք և ուսումնաօժանդակ գրականության շրջանակներում>>. բ. <<Ժամանակակից հայոց լեզվու>> և << Մայրենիի ուսուցման մեթոդիկա >> բուհական դասընթացների արդիականացում ուսանողակենտրոն մանկավարժական կրթության համատեքստում>>: գ. <<ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում մայրենիի ուսումնասիրման գործընթացի մեթոդական առանաձնահատկությունները և դժվարությունների հաղթահարման հնարները>>:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի դասախոսները մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների շրջանակներում ուսանողներին աջակցել են և ուղղորդել տարրական դասարաններում հետազոտական-որոնողական աշխատանքներում: Այս համատեքստում ֆակուլտետի տասնութ ուսանող զեկուցումներով

մասնակցել է <<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները>> վերնագրով ՈւԳԸ գիտական նստաշրջանին: Տասնութ ուսանողի հոդվածներն էլ տպագրվել են գիտական <<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները>>վերնագրով ժողովածուում:
Ամբիոնի մի խումբ դասախոսներ իրենց հետազոտական թեմանների շուրջ ուսումնասիրություններ են կատարել բուհական կրթության ոլորտում / Լ. Ավագյան, Ջ. Գյուլամիրյան, Ա. Ավագիմյան, Տ. Ենոքյան/, հաշվետվությամբ հանդես են եկել ամբիոնի նիստերում և հոդվածներ են հրատարակել ինչպես հանրապետականան, այնպես էլ՝ միջազգային մամուլում::

Ա. Պ**րոֆեսորադասախոսական**

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
ա. <<Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացումը ծրագիր, դասագիրք և ուսումնաօժանդակ գրականության շրջանակներում>>.	Կիրառական	–	____	Ջ. Գյուլամիրյան, Մ. Միրումյան,Լ. Տեր-Գրիգորյան,Ա. Բալայան,
բ. <<ժամանակակից հայոց լեզվու>> և << Մայրենիի ուսուցման մեթոդիկա >> բուհական դասընթացների արդիականացում ուսանողակենտրոն մանկավարժական կրթության համատեքտում>>	Կիրառական	_____	_____	Լ. Տեր-Գրիգորյան, Լ. Ավագյան, Ա. Ավագիմյան, Վ. Ներսիսյան, Ջ. Գյուլամիրյան, Մ. Միրումյան և այլք:
գ. <<ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում մայրենիի ուսումնասիրման գործընթացի մեթոդական առանձնահատկությունները և դժվարությունների հաղթահարման հնարները:	Կիրառական			Ա. Միքայելյան, Լ. Ավագյան

	Կիրառական			

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Գյուլամիրյան Ջ.	<<ՆԱԽԱԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ>>, ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր:	7
Միրումյան Մ. , Խաչատրյան Ս	<<Գիշեր և ցերեկ ժամանականիշ բառերի դարձվածակազմիչ արժեքն արդի հայերենում>>, <<Հայագիտական հանդես>> ՀՄ 3-4, Երևան:	8
Միրումյան Մ.	<<Ժամանականիշ բառերի և տարվա եղանակների անվանումների մակդրային արժեքն արդի հայերենում>>, ԼՂՀ <<Մեսրոպ Մաշտոց Համալսարան Լրատու>>, ՀՄ. 2:	10
Միրումյան Մ.	<<Գիշեր և ցերեկ ժամանականիշ բառերով դարձվածային միավորների տարբերակներն արդի հայերենում>>: <<Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, պրակ Գ>>:	10
Խաչատրյան Ս. ,	<<Համանուն ածանցների ուսուցման մեթոդիկան>>, <<Հայագիտական հանդես>՝ 3-4, Երևան:	12
Միքայելյան Ա.	<<Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող նորարարական մոտեցումներ>>, ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր:	9

Ավագիմյան Ա.	<<Բառերի կապակցելիության շուրջ աշխատանքը կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման գործընթացում>>, <<ԳԱԱ Ջահուկյանական ընթերցումների ժողովածու>>:	13
Մնացականյան Ե.	<<Гевонд Алишан и Хримян Айрик в воспоминаниях современников, Евразийский союз ученых. >>,Санкт-Петербург №01 (94)	15
Մնացականյան Ե	<<Յովհաննէս Թումանեանի մանկական գործերի արժևորումը «Մանկական գրադարան» մատենաշարի շրջանակում>>, Հանդէս ամսօրեայ, Վիեննա:	25
Մնացականյան Ե	<<Հ. Թումանյանի ուղևորությունը Պոլիս. մտավորականության արձագանքը>> ,Գրականագտական հանդես>>, հատոր ԻԴ:	22
Մնացականյան	<<Изучение литературных базовых знаний в начальных классах>>,ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր:	15
Մնացականյան Ե.	<<Հովհաննես Թումանյանը Սերգեյ Նարովչատովի գնահատմամբ>>, Сборник научных статей, Երևան:	9
Մնացականյան Ե.	<<<<Երեքի>> դեկլարացիան ժամանակի քննադատության բանավեճի թիրախ>>: Հայագիտական հանդես 3-4/57-58/	20
Ավագյան Լ. Մ.	«Դարձվածքները Ջիվանու ստեղծագործություններում», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Սուրբ Մեսրոպ Մաշտոցը և հայ դպրոցը» խորագրով գիտաժողովի նյութեր>>:	9
Ավագյան Լ. Մ. , Ենոքյան Տ. Վ. ,	«Հեքիաթը որպես մեդիագրագիտության ձևավորման միջոց», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները>>:	12
Ներսիսյան Վ.	<<Աճանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում>>,ԳԱԱ ԼԻ «Ջահուկյանական ընթերցումների ժողովածու»:	12

Ներսիսյան Վ.	<<Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում>>,<<ԳՊՀ գիտական պարբերական>>:	11
Աղաբաբյան Կ.	ДИНАМИКА НАПРАВЛЕННОГО РАЗВИТИЯ ЧУВСТВА ЯЗЫКА СТУДЕНТОВ ПЕДАГОГИЧЕСКИХ ВУЗОВ И УЧАЩИХСЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ, Сб. трудов межд. конф. Инновационные процессы в социально-гуманитарных науках и образовании. М. 2022 НИУ МГСУ МОСКВА РОССИЯ	13

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	**Անցկացման վայրը, օրը**
<<Էլեկտրոնային առաջադրանքների գործիքակազմի մշակման տեխնոլոգիաների առանձնահատկությունները>>, սեմինարավար՝ բ. գ. թ. դոցենտ Լ. Ավագյան	Ա. Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն 17. 06. 2022թ:
<<Հետազոտական աշխատանքի կազմակերպման փուլերը և քայլաշարի բովանդակությունը>>: սեմինարավար՝ բ. գ. թ. դոցենտ Ա. Ավագիմյան	Ա. Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն 12. 12. 2022թ:

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
Մնացականյան Եվա	դոկտորական ատենախոսություն, <<Թեման՝ <<Հ. Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ:>>	10. 12. 2021	05. 12. 2022

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Ամբիոնը համագործակցում է ֆակուլտետի ՈՒԳ-ի աշխատանքներին՝ ուսանողներին մասնակից դարձնելով ֆակուլտետում կատարվող աշխատանքներին:			

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Միրումյան Մ.	Հարությունյան Աղավնի	<<Ազգային ավանդույթների դիտարկումը հայկական հեքիաթների ուսումնասիրման ընթացքում>>:	<<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրներ>> գիտժողովի նյութեր առցանց տարբերակ
Գյուլամիրյան Ջ.	Ստեփանյան Լալա	<<Արտահայտիչ կարդալու կարողության զարգացման խնդիրները գրաճանաչության ընթացքում>>:	առցանց տարբերակ
Միրումյան Մ.	Սարգսյան Սվետլանա	<<Նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում:	առց<<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրներ>> գիտժողովի նյութեր անց տարբերակ
Գյուլամիրյան Ջ.	Սիրեկանյան Կիմա	ՀՀ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	առցանց տարբերակ <<Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրներ>> գիտժողովի նյութեր

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
բուհական ուսանողական գիտական կոնֆերանս	Սկզբնական կրթության ֆակուլտետ, << Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները>>	տասնութ ուսանող

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
———
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
2022 թվականի փետրվարին Ջ. Գյուլամիրյանը վերապատրաստումներ է անցկացրել Լոս Անջելեսի հայկական դպրոցների 15 ուսուցիչների շրջանում: Նույն թվականի մարտ ամսին տեսահանդիպում է կազմակերպել նշված տարածաշրջանի հայկական դպրոցների տարրական դասարանների աշակերտերի հետ / որպես իրենց մայրենիի դասագրքերի հեղինակ/: Նույն թվականի հունիսին Ջ. Գյուլամիրյանը վերապատրաստում է իրականացրել է Մոսկվայում ՌԴ դեսպանատանը կից գործող <<Վերածնունդ>> մեկօրյա դպրոցի ուսուցիչների շրջանում: Նա մշտական մասնագիտական խորհրդատվություններ է կազմակերպում Հալեպի << Հայագիտական քառամյա ուսումնական հաստատության>> դասախոսների և հայկական դպրոցի ուսուցիչների շրջանում:

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Մանկավարժական հասարակության շրջանում աշխատանքներն իրականացվել են երեք ուղղություններով՝

I. **I-IV դասարաններում մանկավարժական պրակտիկայի երեք տեսակների կազմակերպման ընթացքում ապահովվել** է ոչ միայն ուսանող-դպրոց կապը, այլև ամբիոնի մեթոդիստների միջոցով մանկավարժամեթոդական նորարարությունները պրոպագանդվել և ներդրվել են դպրոցներում: Մեթոդիստները մասնակցել են հենակետային դպրոցների մեթոդմիավորման նիստերին, հանդես են եկել զեկուցումներով: Մեթոդիկայի գծով ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր գրող ուսանողները ոչ միայն իրենց գիտափորձերն են կազմակերպել այն դպրոցներում, որտեղ անցկացրել են իրենց պրակտիկան, այլև գիտափորձերին մասնակից են դարձրել ուսուցիչներին:

II

Հետադարձ կապ, գիտահետազոտական համագործակցություն: Ամբիոնը հետադարձ կապի մեջ է <<Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկաներ>> մասնագիտության շրջանավարտների հետ: նրանց մասնակցությամբ են կատարում իրենց հետազոտական թեմաների շուրջ կատարելով ամբիոնի գիտական ուսումնասիրությունները: Շրջանավարտները մասնակցում են ֆակուլտետի կազմակերպած գիտական կոնֆերանսներին, կլոր սեղաններին և այլն: Դասախոսները նախկին շրջանավարտների կողմից հրավիրվել են դպրոցներ՝ հանդիպումների, սեմինարների, կլոր սեղանների: Հաշվետու տարում մայրենիի մեթոդիկայից ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող 3 ուսանող իրենց հետազոտությունների շրջանակում հոդվածներ են տպագրել ԲՈԿ-ի կողմից հաստատվված <<Մանկավարժական միտք>> գիտամանկավարժական ամսագրում:

III

Մանկավարժի մասնագիտության քարոզչության կազմակերպման նպատակով ամբիոնի դասախոսները ֆակուլտետի ղեկավարության հետ այցեր են կազմակերպել Երևանի, Վանաձորի, Արարատի մի շարք ավագ դպրոցներ, որտեղ ներկայացրել են ՀՊՄՀ-ի մասնագիտական ֆակուլտետների, մասնավորապես՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի մասնագիտությունների բովանդակությունն ու հեռանկարները:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական			
Մեթոդական	Ամբիոնի դասախոսներ		

Աշխատանք հանրության շրջանում	
Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը
Ջ. Գյուլամիրյան Ա. Բալայան Վ. Ներսիսյան Ա. Ավագիմյան Լ. Ավագյան	Ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշում ավագ դպրոցում:

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնի դասախոսների մասնագիտական գործունեության որակի ապահովվման նպատակով կազմակերպվել են փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են << Մասնագիտական-առարկայական ներամբիոնային մասնախմբերում>>: Դասալսումների արդյունքերի շրջանակում իրականացվել են քննարկումներ: Ինչպես յուրաքանչյուր տարի, այս ուտսումնական տարում ևս, ԲԿԾԱ 3-րդ կուրսում իրականացվել է << Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգում>>, որի արդյունքների հիման վրա և բարելավվել են են առարկայական ծրագրերն ու ուսումնական փաթեթները:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
• Նպատակաուղղված աշխատանք տարրական կրթության մանկավարժության, ժամանակակից հայոց լեզվի և մայրենիի դասավանդման մեթոդիկայի նկատմամբ ընդգծված հետաքրքրություն դրսևորող ուսանողների շրջանում, նրանց ներգրավում ամբիոնի հետազոտական -որոնողական աշխատանքների մեջ: • Համագործակցություն ՀՀ ԳԱ-ի Լեզվի և գրականության ինստիտուտների, ԵՊՀ-ի, ԵՊՀԻ մասնաճյուղի, և ԿՋՆԱԿ հիմնադրամի հետ: • Ամբիոնը սերտ համագործակցության մեջ է Երևանի ՀՀ տարբեր տարածաշրջանների մի շարք դպրոցների /Երևանի հմ. 135, Քվանտ վարժարան, Գլոբալ Բրիջ, ՀՊՄՀ հենակետային հմ 57,Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի Ա. Տեր- Գրիգորյանի անվան,Արագածոտնի մարզի Կարբի գյուղի Վահան Թեքեյանի անվան հանրակրթական դպրոցների տարրական դասարաններ/, նրանց հետ համատեղ քննարկվում են ինչպես տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացի, այնպես էլ տարրական դասարանի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման խնդիրները: • Ամբիոնի դասախոսները համագործակցում են Սկզբնական կրթության ֆակուլտետի տարբեր տարիների շրջանավարտների հետ՝ ա. նրանց անմիջական մասնակցության ճանապարհով իրականացնելով փորձարարական աշխատանքներ, բ. աջակցելով ուսուցիչներին ուսումնաորոնողական գործունեության կազմակերպմանը,դրանց արդյունքների վերլուծությանը ու գիտական հոդվածների տպագրությանը:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Փոխադարձ դասալսումներ	Ամբիոնի առարկայական մասնախմբեր	Ակնառու են:
Մասնագիտական սեմինարներ / Երկուսը/	Ամբիոնի առարկայական մասնախմբեր	Շոշափելի է:

Համալսարանի ուսումնական մասի կողմից ամբիոնի առարկայական փաթեթների բովանդակության լրամշակման ձևաչափին նվիրված սեմինա-պարապմունք: Վարողներ՝ մ. գ. թ. ,դոցենտներ Հ. Թադևոսյան , Ս. Ասատրյան:	Ամբիոնի առարկայական մասնախմբեր	Շոշափելի է:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Փոխադարձ դասալսումներ և արդյունքների քննարկում:	ամբիոնի առարկայական մասնախմբեր	Իրականացվել է փորձառնության կիրառում հետագա գործունեության մեջ
Ուսումնական գործընթացների իրագործման փորձառնության փոխանակում	Որակի ապահովման հանձնախումբ	Հավաստի

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1. <<Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկաներ>> մասնագիտության ԲԿԾ և ՄԿԾ բաժինների համար մշակված ընտրովի դասընթացների լրամշակում, նոր թեմաններով հարստացում, դրանց բովանդակության և ուսումնասիրման մեթոդների արդիականացում: 2. Ուսանողների շրջանում իրականացվող հետազոտական գործունեության հիմնախնդիրների արդիականացում, տարրական դասարանների մայրենիի դասընթացի կրթության բովանդակության և կազմակերպման արդիական մոտեցումների յուրացում:	1. Միջազգային կրթական գործընթացներին անբավարար ներգրավվածություն: 2. Ամբիոնի դասախոսների վերապատրաստումների, վերավորակավորումների ուղղությամբ աշխատանքների նվազում: 3. Միջազգային գիտական ամսագրերում մասնագիտական հոդվածներով հանդես գալու ուղղությամբ անբավարար ներգրավածություն:

3. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկաներ բաժնի շրջանավարտների /ԲԿԾ և ՄԿԾ/ հետ մասնագիտական կապի ապահովում՝ համարժեք կարողունակությունների և հետազոտական ունակությունների շարունակական զարգացման նպատակով: 4. ՀՀ տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման , պետական կրթական փաստաթղթերի մշակման գործընթացներում ամբիոնի մասնագետների ներգրավվածություն: 5. Տարրական դասարաններում մայրենիի ուսումնասիրման գործընթացի բովանդակության և եղանակների արդիականացման և կատարելագործման ուղղությամբ ընթացող գործընթացներում մասնակցություն, հրատարկվող ձեռնարկների, հոդվածների հրատարակում, գրախոսում: 6. << Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկաներ>>. մասնագիտության բաժինների շրջանավարտներին աշխատանքի տեղավորման և հետագա մանկավարժահետազոտական գործունեության ոլորտում աջակցություն / մեթոդական օգնություն, մասնակցություն ամբիոնի դասախոսների հետազոտական աշխատանքներին, գիտական հոդվածների հրատարակում:	
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. Ինչպես տարրական դպրոցի, այնպես էլ ամբիոնում դասավանդող դասընթացների և մեթոդական համալիրների տպագրություն: 2. Նորարական կրթական ծրագրերի յուրացման նպատակով վերապատրաստում ան դասընթացներին ակտիվ մասնակցություն: 3. Տարրական դպրոցում դասավանդվող <<Մայրենի>> առարկայի ուսումնասիրման գործընթացի խնդրահարույց բաղադրիչների ուղղությամբ	1. Ամբոնի դասախոսների կողմից մանկավարժամեթոդական հետազոտական ուսումնասիրութ յուններ կատարելու, դրանց հիման վրա մենագրություններ հրատարակելու հնարավորությունների նվազում: 2. 2. Տարրական կրթության <<Մանկավարժություն և

ուսուցիչների վերապատրաստման համալիր դասընթացների վարում առերես և առցանց եղանակով: 4. Դպրոցի հետ կապի ամրապնդման նպատակով հենակետային դպրոցների ցանցի ընդալայնում, մանկավարժական պրակտիկաների կազմակերպման բովանդակության ձևերի մշակում:	մեթոդիկաներ>> մասնագիտությամբ դիմորդների շրջանում առարկայական / մայրենի/և մասնագիտական նախապատրաստությունների բացակայություն, դիմորդների քանակի աստիճանական նվազում:

Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. աշխատանքներն իրականացվել են ՀՊՄՀ 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի (https://aspu.am/website/images/files/51a25c09.pdf), Սկզբնական կրթության ֆակուլտետի աշխատանքային պլանի (*տե՛ս՝ 2021-22 ուստարվա և 2022-23 ուստարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը)* և ամբիոնի աշխատանքային պլանի (*տե՛ս՝ 2021-22 ուստարվա և 2022-23 ուստարվա ամբիոնի աշխատանքային պլանը*) համաձայն: Ամբիոնի ծանրաբեռնվածությունը ըստ կրթական ծրագրերի բաշխված է հետևյալ կերպ. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ՝ ԱԲԿԾ-1740ժ;ԱՄԿԾ-969ժ;ՀԲԿԾ-916ժ;ՀՄԿԾ-563ժ: 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակ՝ ԱԲԿԾ-1953ժ;ԱՄԿԾ-503ժ;ՀԲԿԾ-814ժ;ՀՄԿԾ-729ժ: 2022թ. /2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակ/ պաշտպանվել է 55 ավարտական աշխատանք / ՀԲԿԾ-29 և ԱԲԿԾ-26/, 20 մագիստրոսական թեզ : 2021-2022ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և 2022-2023ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի նիստերով (*2021թ. Արձանագրություն հմր 1 և 2022թ.Արձանագրություն հմր 1*) հաստատված աշխատանքային պլանը և դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությամբ նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ. առարկայական ուսումնամեթոդական փաթեթներով /առարկայական նկարագիր, թեմատիկ տրոհում, դասախոսությունների և գործնական առաջադրանքների նյութեր, հարցաշարեր/ ամրագրված աշխատանքները կատարվել են: Առարկայական նկարագրերում փոփոխություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի որակավորումների ոլորտային շրջանակի “Մանկավարժություն” որակավորման բնութագրերը հաստատելու մասին 2022թ. ապրիլի 28-ի թիվ 783 Ա հրամանը: Փաթեթները տեղադրվել են google classroom էլեկտրոնային հարթակում: Ամբիոնի ծանրաբեռնվածությունը ըստ կրթական ծրագրերի բաշխված է հետևյալ կերպ. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ՝ ԱԲԿԾ-1740ժ;ԱՄԿԾ-969ժ;ՀԲԿԾ-916ժ;ՀՄԿԾ-563ժ:

2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակ՝ ԱԲԿԾ-1953ժ;ԱՄԿԾ-503ժ;ՀԲԿԾ-814ժ;ՀՄԿԾ-729ժ:

2022թ. /2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակ/ պաշտպանվել է 55 ավարտական աշխատանք / ՀԲԿԾ-29 և ԱԲԿԾ-26/, 20 մագիստրոսական թեզ :

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը. որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ընտրվում են ամբիոնի կողմից վարվող դասընթացների նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների հաշվառմամբ:

Դասընթացների նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները ձևակերպվել/սահմանվել են՝ ըստ Բլումի տաքսոնոմիաների

-
- Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում մշակվել է <<Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության ՄԿԾ -ի Գիտական հետազոտությունների քանակական մեթոդներ դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը:
- Նորացվել/թարմացվել է ուսումնական գործընթացը՝ փորձարկվել և հիմնավորվել է անցումը ոչ գծային ուսուցման:
- Կատարելագործվել է ուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովումը՝ մշակվել/լրամշակվել են ուսումնական էլեկտրոնային պաշարներ. արդյունքում ամբիոնը ունի 90-98% մշտադիտարկման ցուցիչ:
- Միջանկյալ և հանրագումարային ստուգումներում ուսանողները ցուցաբերում են վերջնարդյունքների պահանջներն ապահովող կարողունակություններ:
- Ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների 2022 տարվա /2021-2022 ուստարվա առաջին կիսամյակ և 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակ՝ ԲԿԾ առկա (ընթացքի մեջ է), ՄԿԾ (ընթացքի մեջ է), 2022-2023 ուստարվա ԲԿԾՀ և ՄԿԾԿ / համար նախատեսված ուսումնական աշխատանքների ծավալն ամբողջությամբ կատարված է :

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված՝ ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ուսանողների ուսումնական գործունեության արդյունքների գնահատման մեթոդներն ու չափանիշները համապատասխանում են համալսարանում ընդունված և առարկայական փաթեթներում նշված բաղադրիչներին:

Ամբիոնի կողմից վարվող դասընթացների բովանդակային ուղղվածությանը /Մաթեմատիկայի տարրական դասընթացի տեսական հիմքեր, Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա/ համապատասխան՝ ամբիոնի դասընթացավարների թիմային աշխատանքի արդյունքում մշակվել են ուսանողների գիտելիքների, կարողությունների ստուգման ու գնահատման ռուբրիներ, ռեֆերատի,

թղթապանակի /պորտֆոլիո/ ձևանմուշներ,, միջանկյալ գրավոր աշխատանքի, էլեկտրոնային գնահատվող առաջադրանքների, ամփոփիչ կիսամյակային քննության, գործնական աշխատանքների ամփոփիչ ստուգման ձևերի գնահատման մեթոդաբանություն՝ համապատասխանեցված ԲԿԾև ՄԿԾ վերջնարդյունքային պահանջներին:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Ամբիոնի նիստերի շրջանակներում անդրադարձ է արվել աշխատանքային պլանով նախատեսված առանցքային հարցերին: Դրանցից առանձնացվել և խորությամբ քննարկվել են. 1. Մագիստրոսական, ավարտական, կուրսային աշխատանքների թեմաները: 2.Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում տեղադրված նյութերի ակադեմիական մակարդակը: 3.Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի տարբեր բնույթի պրակտիկաների աշխատանքների SWOT վերլուծություն: 4.Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի Առարկայական նկարագրերի, ուսումնամեթոդական փաթեթների, գնահատման մեթոդաբանության բովանդակության վերաբերյալ քննարկումներ, վերլուծություններ: 5.Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: 6.Դասալսումների քննարկումներ և վերլուծություններ: 7. Ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին վերաբերող հարցեր:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ.N 7, 13.01.2022	1. Ամբիոնի դասախոսների կողմից 2021-2022թթ. 2-րդ կիսամյակում դասավանդվով դասընթացների ուղությամբ կազմակերպվող միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, տոմսերի, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և ԱՈՒՄՓ-ների քննարկում, հաստատում:	1. Հաստատել ամբիոնի դասախոսների կողմից 2021-2022թթ. 2-րդ կիսամյակում դասավանդվով դասընթացների ուղությամբ կազմակերպվող միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերը, տոմսերը, առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ԱՈՒՄՓ-ները:

Արձ.N 8, 25.02.2022	1. Հաշվետվություն հեռակա ուսուցման համակարգի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին: 2. Բակալավր հեռակա (V կուրս) և առկա (IV կուրս) ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների ընթացք:	1. Հեռակա ուսուցման համակարգի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքները համարել բավարար: 2. Բակալավրի կրթական ծրագրի հեռակա (V կուրս) և առկա (IV կուրս) ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների ընթացքը համարել բավարար
Արձ.N 9, 18.03.2022	1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: 2. Առաջին միջանկյալ ստուգումների արդյունքների քննարկում:	1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը համարել բավարար: 2. Առաջին միջանկյալի արդյունքները համարել բավարար:
Արձ.N 10, 15.04.2022	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքները պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի մագիստրոսական աշխատանքները պաշտպանության երաշխավորելու հարցը:	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության: 2. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի մագիստրոսական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:
Արձ.N 11, 05.05.2022	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի կրթական

	մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքները պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Լենա Սարգսյանի Տարրական դասարաններում երկրաչափական նյութի ուսուցման մեթոդական առանձնահատկությունները խորագրով ավարտական աշխատանքը պաշտպանության երաշխավորելու հարցը:	ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության: 2. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Լենա Սարգսյանի Տարրական դասարաններում երկրաչափական նյութի ուսուցման մեթոդական առանձնահատկությունները խորագրով ավարտական աշխատանքը երաշխավորել պաշտպանության:
Արձ.N 12, 02.06.2022	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ ավարտական և մագիստրոսական աշխատանքների արդյունքների քննարկում:	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ ավարտական և մագիստրոսական աշխատանքների արդյունքները համարել բավարար:
Արձ.N 1, 26.08.2022	1. Ամբիոնի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:	1. Հաստատել 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը:
Արձ.N 2, 05.09.2022	1. Լուծարային քննությունների վերաբերյալ կազմակերպական աշխատանքների քննարկում: 2. ՀՊՄՀ-100 գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների քննարկում:	1. Հաստատել լուծարային քննությունների հարցաշարերը: 2. ԱՄբիոնի կողմից ներկայացված նյութերից հետևյալները երաշխավորել ՀՄՊՀ-100 գիտաժողովին ներկայացնելու. Լ. Ս. Ավանեսյան, Կ. Ս. Շաքարյան-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

		Մ. Ս. Բարսեղյան, Մ. Ա. Հովհաննիսյան-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ Ա. Գ. Կարապետյան-ԿՈՄԲԻՆԱՏՈՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ Ք. Ա. Հովհաննիսյան, Տ. Ա. Հակոբյան-ՍԽԱԼՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ Սահակյան Ա.Ս.-ՍՏՈԽԱՍՏԻԿԱՅԻ ՏԱՐՐԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
Արձ.N 3, 27.09.2022	1. Լուծարային քննությունների վերաբերյալ կազմակերպական աշխատանքների քննարկում: 2. Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը: 3. Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա և Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:	1. Հաստատել Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին: 2. Հաստատել Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշատանքների թեմաներն ու ղեկավարներին: 3. Հաստատել Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա և Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշատանքների թեմաներն ու ղեկավարներին: 4. Հաստատել Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և

	4. Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:	մեթոդիկա մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:
Արձ.N 4, 20.10.2022	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի ԲԿԾ-ի առկա համակարգի IV կուրսի նախորդ տարիների պետական որակավորման քննությունից ‹‹անբավարար›› ստացած Հռիփսիմե Լյովայի Հովհաննիսյանի ավարտական աշխատանք գրելու թույլտվության մասին:	1. Հռիփսիմե Լյովայի Հովհաննիսյանի համար նախատեսել ավարտական աշխատանքի թեմա և ղեկավար:
Արձ.N 5, 03.11.2022	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի ԲԿԾ-ի հեռակա համակարգի V կուրսի նախորդ տարիների պետական որակավորման քննությունից ‹‹անբավարար›› ստացած Էմմա Սլավիկի Սիմոնյանի ավարտական աշխատանք գրելու թույլտվության մասին:	1. Էմմա Սլավիկի Սիմոնյանի համար նախատեսել ավարտական աշխատանքի թեմա և ղեկավար
Արձ.N 6, 24.11.2022	1. Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի առրկա ուսուցման համակարգի IV կուրսի ուսանող Հովհաննիսյան Հռիփսիմեի և հեռակա ուսուցման համակարգի V կուրսի ուսանող Սիմոնյան Էմմայի ավարտական աշխատանք գրելու թույլտվության մասին հարցը:	1. Նշված ուսանողների համար հաստատել ավարտական թեմաներն ու ղեկավրները: 2. Ատեստավորել՝ հիմք ընդունելով ներկայացված հաշվետվությունը: 3. Հաստատել 2022 թվականի ամբիոնի հաշվետվությունը:

	2. Ամբիոնի ասպիրանտ՝ Տաթևիկ Հակոբյանի ատեստավորման հարցը: 3. 2022 թվականի ամբիոնի հաշվետվություն:	

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	8	2	3	8	5	2	4	14
Համատեղող		2						
Ժամավճարային								
Ընդամենը	8	2	3	8	5	2	4	

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի գծով 2022 թվականի /2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի և 2022-2023 ուստարվա1-ին կիսամյակի ԲԿԾԱ և ՄԿԾԱ ,2022-2023 ուսումնական տարում ԲԿԾՀ և ՄԿԾՀ դասավանդվող բոլոր դասընթացները կրթական ծրագրերում ունեն հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման բովանդակային ուղղվածություն: Ամբիոնում առկա են բոլոր դասընթացների առարկայական ուսումնամեթոդական փաթեթները: Պարբերաբար քննարկվում, լրամշակվում են ամբիոնի կողմից վարվող դասընթացները, ծավալը, բովանդակությունը, չափորոշչային պահանջները և ակնկալվող վերջնարդյունքները: Ամբիոնի բոլոր ուսումնամեթոդական ձեռնարկներն ընդգրկված են Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում՝ գործնական, լաբորատոր աշխատանքների, PPP –ի և այլ էլեկտրոնային միջոցների տեսքով:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
				2	1

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
							1		2՝ / ամբիոնի դասախոսների մասնակցությամբ/, 3՝ /առցանց՝ հանրապետության 1-4-րդ դասարանների ուսուցիչների մասնակցությամբ/

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
• Կրթական գործընթացում մեթոդամաթեմատիկական կոմպետենտությունների ձևավորում-զարգացումը, • <<Մաթեմատիկա>> դասընթացի պրոյեկտման մեթոդաբանական և տեսական հիմունքները,

• Կրտսեր դպրոցականի կոգնիտիվ, անձնային և խոսքային-տրամաբանական զարգացման հիմնախնդիրը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում՝ կրթության համագործակցության համատեքստում, • «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» մասնագիտության շրջանավարտի մաթեմատիկականմեթոդական կոմպետենտության պրոյեկտման գիտատեսական հիմունքները, • «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)»մասնագիտության շրջանավարտի ստոխաստիկական կոմպենտենտության զարգացման գիտատեսական և գործնական հիմունքները, • Կրտսեր դպրոցականի տեղեկատվական մշակույթի զարգացման հիմնախնդիրը՝ կրթության հաղորդայնության համատեքստում, • Սահմանափակ մտավոր կարողություններով սովորողներին մաթեմատիկա ուսուցանելու հոգեբանամանկավարժական հիմունքները:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնը հաշվետու տարում հրատարակել է 3 ուսումնական ձեռնարկ և 1 ուսումնամեթոդական ձեռնարկ տպագրության մեջ է:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները՝ ըստ ՊԻԳԲ շրջափուլի
Վերանայվել են ուսումնամեթոդական փաթեթները, հրատարակված դասագրքերի հիման վրա կազմվել են առարկաների փաթեթները: Վերանայվել են մագիստրոսների ատենախոսությունների թեմաները:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
	Կիրառական			

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Карапетян Аида Гришаевна	«ФОРМИРОВАНИЕ СПОСОБНОСТЕЙ РЕШЕНИЯ КОМБИНАТОРНЫХ ЗАДАЧ В НАЧАЛЬНЫХ КЛАССАХ»	4
Карапетян Аида Гришаевна, Мкртчян Рипииме Гагиковна	МЕТОД КОМБИНАТОРНОГО РЕШЕНИЯ ЗАДАЧ С ПОМОЩЬЮ ГРАФА В КУРСЕ МАТЕМАТИКИ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ	4
Աիդա Կարապետյան	ԿՈՄԲԻՆԱՏՈՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ	7
Ավանեսյան Լ. Աբրահամյան Ս.	Հանրահաշվի տարրերի ուսուցման շարունակակա-նությունը տարրական դպրոցում	5
Ավանեսյան Լ. Շաքարյան Կ.	Մաթեմատիկական էքսկուրսիաները որպես կրտսեր դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման միջոց	8
Айрапетян Гагик	Философско - методологическая инфокультура образования	8
Knarik Hovhannisyan, Vahan Sargsyan, e.t.	THE INTEGRATION OF CHESS AND MATHEMATICS AS A PREREQUISITE FOR ENHANCING THE QUALITY OF EDUCATION	8

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Բարսեղյան Մ.	Կիրակոսյան Ք.	Պատմական տարրերի կիարռումը մաթեմատիկայի դասերին՝ որպես կրտսեր դպրոցականների տեղեկատվական կարողունակության ձևավորման պայման	Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները
Հովհաննիսյան Ք.	Յարազյան Վ.	Մաթեմատիկայի էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող պահանջները	Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
Բուհական	Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները/ՀՊՄՀ/	2

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
-
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում /նշել ուղղությունները և հիմնավորել մեջբերումներով/
Ամբիոնը սերտորեն համագործակցում են ՀՍՀ-ի, ԵՊՀ-ի, ՀՀ ԳԱԱ-ի, և այլ ուսումնական հաստատությունների հետ:

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:

Ամբիոնը մասնագիտական կողմնորոշման նպատակով կատարել է այցեր ՀՀ տարբեր մարզերի դպրոցներ:

Կազմակերպվել են առցանց խորհրդատվություններ Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի դիմորդների հետ:

Կազմակերպվել են առցանց և առերես ձևաչափով սեմինարներ /Ք.Հովհաննիսյան, Լ.Ավանեսյան/ հանրապետության և Ջավախքի ուսուցիչների շրջանում՝ նախաօես գնահատելով նրանց մասնագիտական կարիքները:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Ք.Հովհաննիսյան, Լ.Ավանեսյան	Վարպետաց դաս՝ Երևանի թիվ 71 դպրոցի 3-րդ դասարանում	26.04.2022
Մեթոդական			
Դաստիարակչական			

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Սեմինար	Ք.Հովհաննիսյան	Սեմինար տարրական դասարանների 200 ուսուցչի մասնակցությամբ՝ Տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթացի տեսական հիմքերը խորագրով	28.10.2022

Սեմինար	Ք.Հովհաննիսյան	Սեմինար տարրական դասարանների 200 ուսուցչի մասնակցությամբ՝ Նախագծային ուսուցում /տեսական դրույթներ և դրանց գործնական պրոյեկտումները տարրական դասարանների մաթեմատիկայի ուսուցման/ուսումնասիրման գործընթացում/	06.03.2022
Սեմինար	Լ.Ավանեսյան	Նոր Արար ՀԿ-ի հետ համատեղ սեմինար-քննարկում՝ Մոդելավորման հնարները տարրական դասարանների մաթեմատիկայի ուսուցման գործընթացում խորագրով	22.10.2022
Սեմինար-քննարկում	Լ.Ավանեսյան	Հանդիպում՝ քննարկում Ջրվեժի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների մասնախմբի ուսուցիչների և աշակերտների հետ՝ դասագրքի հեղինակային խմբի մասնակցությամբ	15.11.2022
Սեմինար-քննարկում	Լ.Ավանեսյան	Սեմինար-քննարկում Երևանի թիվ 104 դպրոցի տարրական դասարանների մասնախմբի ուսուցիչների հետ	30.11.2022
Ամփոփիչ քննարկում	Ք.Հովհաննիսյան Մ.Բարսեղյան Նախաձեռնություն հանուն կրթական և սոցիալ-իրավական ներառման, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրեն	Աջակցություն ՀՀ-ում հարմարեցված ուսումնական նյութերի մշակմանն ու ներդրմանը համընդհանուր ներառական կրթության համակարգում	14.02.2022

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
• Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում որակի ապահովման աշխատանքները կատարվել են ՀՊՄՀ-ի, սկզբնական կրթության ֆակուլտետի և ամբիոնի՝ կրթության որակի ապահովմանն ուղղված համապատասխան փաստաթղթերի հիման վրա:

- Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում որակի ապահովման ուղղությամբ կատարվում են հետևյալ աշխատանքները.
- Պարբերաբար կատարվում են դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում,
- Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում ակտիվ ներգրավածություն:
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ միտված դասընթացների առարկայական նկարագրերում հետազոտական բաղադրիչի ուժեղացմանը:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

- Տաղանդավոր ուսանողների ի հայտ բերում և նպատակաուղղված աշխատանքների իրագործում:
- Կազմակերպվում են գիտական սեմինարներ, որոնց ներկա են եղել նաև հրավիրյալ անձինք.
- Ամբիոնը սերտորեն համագործակցում են ՀՍՀ-ի, ԵՊՀ-ի, ՀՀ ԳԱԱ-ի, և այլ ուսումնական հաստատությունների հետ:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Փոխադարձ դասալսումներ և արդյունքների քննարկում:	ամբիոնի առարկայական մասնախմբեր	Իրականացվել է փորձառության կիրառում հետագա գործունեության մեջ
Ուսումնական գործընթացների իրագործման փորձառության փոխանակում	Որակի ապահովման հանձնախումբ	Հավաստի

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի նոր ընտրովի դասընթացների մշակում, ամբիոնի կողմից վարվող դասընթացների	1. Ամբիոնի դասախոսների ակադեմիական շարժունության նվազում:

ուսումնամեթոդական համալիրների պարբերական լրամշակում/թարմացում: 2. Տարրական դասարանների մաթեմատիկայի ուսուցման գործընթացի կատարելագործմանն ուղղված գիտամեթոդական, ուսումնական և ուսումնաօժանդակ աշխատանքների հրատարակում, գրախոսում: 3. ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների կողմից կատարվող հետազոտական աշխատանքների իրականացուն և արդյունքների ներդրում կրթական գործընթաց, 4. ՀՊՄՀ շրջանավարտների շրջանում սեմինար խորհրդատվությունների իրականացում մասնագիտական կոմպետենտությունների թարմացման նպատակով՝ կրթական գործընթացի առջև դրված մարտահրավերների հաղթահարման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, «հետադարձ կապի» ապահովում: 5. Ապագա ուսուցիչների պատրաստման, գործող ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացներում ամբիոնի առաջատար մասնագետների ներգրավվածություն: 6. Ասպիրանտական ծրագրի միջոցով ամբիոնի համակազմի գիտամեթոդական պատրաստման համակարգի նորացում/թարմացում:	2. Ամբիոնի դասախոսների վերապատրաստման/վերաորակավորման հնարավորությունների նվազում: 3. Միջազգայնացման գործընթացներին ոչ բավարար ներգրավվածություն: 4. Դասագրքաստեղծ գործունեության ոչ բավարար ներգրավվածություն:
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. Ակադեմիական շարժունության ծրագրերի մշակում՝ համագործակցելով արտերկրի բուհերի համապատասխան ամբիոնների հետ: 2. Ամբիոնի կողմից դասընթացների ուսումնական և մեթոդական համալիրների տպագրություն:	3. Ամբիոնի աշխատակիցների աշխատանքի որակի գնահատման ոչ չափելի հատկորոշիչներ, **4.** Ամբիոնի աշխատակիցների կողմից գիտական աշխատանքներ հրատարակելու հնարավորությունների բացակայություն: **5.** Դիմորդների/ապագա ուսանողների նախնական մաթեմատիկական

3. Ամբիոնի դասախոսների վերապատրաստման համակարգի մշակում և իրագործում: 4. Միջազգային գործունեության զարգացում՝ դասախոսների, ասպիրանտների և ուսանողների փոխանակման միջոցով, 5. Տարբեր բնույթի պրակտիկաների իրականացման գործընթացում մեթոդամանկավարժական պատրաստվածության լավարկմանը նպաստող աշխատանքների պլանավորում: 6. Գործընկերային համագործակցության հենքի վրա միջառարկայական հետազոտությունների իրականացում:	կարողունակությունների ոչ բավարար շեմի առկայություն:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծանրաբեռնվածությունն ըստ ուսումնական պլանի համապատասխանում է կատարված ուսումնական աշխատանքի ծավալին: Ամբիոնի դասախոսները կատարում են ծանրաբեռնվածությամբ նախատեսված դասաժամերը: Ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիբրիդային տարբերակով՝ ըստ դասացուցակի՝ առցանց և առերես: 2022թ. հուլիսի 4-ին և 6-ին Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից կազմակերպվել էր վերապատրաստում, որի նպատակն էր դասախոսներին զինել ՄԿԾ-ների վերանայման, դասավանդվող առարկաների թեմատիկ տրոհումներում և նկարագրերում փոփոխություններ կատարելու, կրթական նոր ծրագրերի մշակման, կարդացվող դասընթացների վերամշակման և կատարելագործման հմտություններով: Ամբիոնի բոլոր դասախոսները մասնակցել են վերապատրաստմանը, որի արդյունքում վերամշակվել են ամբիոնում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթները, առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, տեղադրվել են բոլոր կուրսերի էլեկտրոնային հարթակներում: Քննարկվել և հաստատվել են 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, https://drive.google.com/file/d/1o_dyf6CT8qjo4EM8ZZvGHDDN5OeLtn-_/view?usp=sharing, կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները, ուսումնասիրությունները առավելապես վերաբերվել են դասավանդման նյութերի արդիականացման շուրջ կատարված աշխատանքներին, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությանը: Ամբիոնի դասախոսները դասավանդման գործընթացում օգտվում են անհրաժեշտ տեխնիկական միջոցներից, կիրառելով մեդիատեխնոլոգիական լուծումներ, ծավալելով ակտիվ փոխներգործություն Google classroom էլեկտրոնային հարթակում, ապահովելով հետադարձ կապն ուսանողների հետ: Դասաժամերն իրականացվում են փոխգործուն մեթոդների կիրառմամբ՝ «Մտքերի տարափ», «Բանավեճ», «Դերային խաղ» և այլ մեթոդներով: Ուսուցանվող նյութի յուրացումն իրականացվում է խմբային առաջադրանքների կատարման միջոցով՝ «Ջիքսոյի», «Իրավիճակների վերլուծություն», «Գործնական խաղ» համագործակցային ուսուցման մեթոդներով: Ուսանողների ուսումնական ձեռքբերումները բացահայտվում են «Հեղինակի աթոռ», «Վեննի դիագրամ», «ԳՈՒՍ», «Կարճ շարադրություն», «Սոլո» ինքնագնահատման մեթոդներով:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական բարեվարքության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Յուրաքանչյուր առարկայի ուսումնառության արդյունքները ստուգվում են տվյալ առարկային համապատասխան ստուգման ձևերով (բանավոր և գրավոր ստուգողական աշխատանք, ռեֆերատ, ներկայացում, թղթապանակ, թեստային աշխատանք), որը որոշվում է ամբիոնի և դասավանդող դասախոսի կողմից՝ ելնելով առարկայի առանձնահատկություններից: Յուրաքանչյուր առարկայի ստուգման ձևերի գնահատման չափանիշները ներկայացվել են առարկայական նկարագրերում, որոնք նախապես տեղադրվել են բոլոր դասընթացների էլեկտրոնային հարթակներում:
Գնահատման բաղադրիչները տոկոսային տարբերակով համապատասխանում են տեղեկատվական կենտրոնի կողմից ներկայացված և տեղադրված տոկոսներին:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերն են.

- ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի արդիականացումը, դրանց կատարման ընթացքի մասին առցանց քննարկումների կազմակերպումը google classroom հարթակի համապատասխան էջերում:
- պրակտիկաների կազմակերպման ընթացակարգի, մանկապարտեզների ընտրության և դրանց հետ համագործակցության նոր ձևաչափերի մշակումը:
- «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» և ՖԻԴԵ-ի հետ համագործակցության արդյունքում «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» ծրագրի շրջանակներում աշխատանքների կազմակերպման, Երևանի քաղաքապետարանի Հանրակրթության վարչության և ՀՀ ԿԳՄՍՆ ԿՋՆԱԿ հիմնադրամի և պետական մանկապարտեզների ներկայացուցիչների հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա հետագա աշխատանքների պլանավորում:
- ՀՀ կառավարության կողմից 2022-2023 ուստարվանից Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ հեռակա ուսուցման համակարգի մագիստրատուրայի կրթական ծրագրի հաստատման արդյունքում տրամադրվել է 20 տեղ, դիմել է 22 դիմորդ, ընդունվել է 19-ը:

- Ամբիոնի կողմից կազմակերպվել և իրականացվել է «Սերունդների խաչմերուկում» միջոցառումը նվիրված ԲՈՒՀ-ի 100-ամյակին (հոկտեմբեր ամսին):
- Ամբիոնի դասախոսների 2022 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:

https://orcid.org/0000-0002-8435-8223

https://orcid.org/0000-0003-4365-1447

https://orcid.org/0000-0002-5984-7623

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Հունվար 25, արձանագրություն թիվ 7	1. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը: 2. Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը: 3. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը: 4. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:	1. Հաստատել 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի քննական առարկաների տոմսերը: 2. Ըստ ներկայացված դասացուցակի կազմակերպել հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացները, քլասրում էլ հարթակում բացել դասընթացների էջերը: 3. Հաստատել 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները: Ամբիոնի քլաս էջով ամբիոնի մասնագետը տեղադրել է բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները համապատասխան էջերում: 4. Հաստատել քննական հարցաշարերը:
Փետրվար 21, արձանագրություն թիվ 8	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական	1. Պրակտիկայի ղեկավար Ա. Ղազարյանը նախապատրաստական կոնֆերանսին ներկացրեց ուսումնաճանաչողական պրակտիկայի ղեկավարներին և

	պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը: 2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ երկկողմանի հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ: 3. Ամբիոնի հայցորդների աշխատանքային գործունեության ընթացքի մասին /հաշվետվություն/:	խմբերին, ինչպես նաև մանկապարտեզները: Քլասրում էլ հարթակում ըստ խմբերի բացվել են համապատասխան քլաս էջեր: 2. ՄԿԾ 2-րդ կուրսի ուսանողները ներկայացրեցին մագիստրոսական թեզի վերաբերյալ հաշվետվությունները, ուսանողների բոլոր հարցերը ստացան սպառիչ պատասխաններ, հստակեցվեցին հետազոտական աշխատանքների վերջնարդյունքների վերլուծության ընթացակարգը: 3. Ամբիոնի հայցորդներ՝ Լ.Ղազարյանը և Ժ.Հարությունյանը ներկայացրեցին հաշվետվություններ իրենց աշխատանքային ընթացքի մասին:
Մարտ 7 և 21, արձանագրություն թիվ 8 և 9	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին հարցը: 2. ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: 3. Ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հեղինե Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման հարցը: 4. Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանի	1. Պրակտիկայի ղեկավար Ա. Ղազարյանը ներկայացրեց առկա 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի վեցշաբաթյա մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ հարցերը, նշեց պրակտիկայի անցկացման վայրերը, ղեկավարներին և խմբերին: Ամբիոնի մասնագետի կողմից բացված են էլեկտրոնային էջեր քլասրում հարթակում՝ ըստ հրամանների: 2. Կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական քննարկում, վերհանել ուսանողների խնդիրները և տալ լուծումներ,

	դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հետ համատեղ քննարկման արդյունքում:	նախապատրաստվել նախապաշտպանությանը: 3. Նկատի ունենալով, որ տվյալ բնագավառում գրեթե բացակայում են մանկան հոգեբանության վերաբերյալ հրատարակումները մայրենի լեզվով, ինչպես նաև տեսական և գործնական նյութերի դասավանդման նպատակահարմարությունը Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների և նախադպրոցական հաստատությունների մասնագետների համար, երաշխավորել Հ.Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակելու համար: 4. Աննա Սիմոնյանի դիմումի համաձայն Երաժշտության մանկավարժության և Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնները կազմակերպեցին առցանց համատեղ նիստ: Քննարկումների և քվեարկության արդյունքում 2 ամբիոնի դասախոսները միաձայն քվեարկեցին Աննա Սիմոնյանի օգտին՝ դոցենտի գիտական կոչման երաշխավորելու համար և Ներկայացնել Գեղարվեստական կրթության ֆակուլտետ՝ քննարկման և հետագա ընթացք տալու համար:
Ապրիլ 13, արձանագրություն թիվ 10	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա ուսուցման	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա ուսուցման

	համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժահետազոտական պրակ տիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը: 3. Ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի թեմայի մասնակի փոփոխությամբ հաստատման և գիտական ղեկավարի վերահաստատման հարցը: 4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքների և գրախոսությունների կազմակերպման հարցը: 5. Ընթացիկ հարցեր:	համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության 2 փուլերի արդյունքների հիման վրա երաշխավորել հրապարակային պաշտպանության: 2. Նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին պրակտիկայի ղեկավարները, ուսանողները և պրակտիկայի ընթացակարգը՝ ըստ ներկայացված դասացուցակի: 3. Ամբիոնի հայցորդ Ժ.Հարությունյանի ատենախոսության հաստատված թեման «Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները ավագ նախադպրոցական տարիքում» վերաձևակերպել և հաստատել հետևյալ վերնագրով «Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները նախադպրոցական հաստատություններում» և գիտական ղեկավար վերահաստատել՝ մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Մարությանին: 4. Նշված ժամանակահատվածում կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքները և գրախոսությունները կազմակերպել ըստ կանոնակարգի: 5. - Ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանդիպում Երևանի քաղաքապետարանի նախադպրոցական կրթության բաժնի, ՀՀ ԿԳՄՍՆ ԿՀՆԱԿ հիմնադրամի նախադպրոցական մասնագետի և պետական մանկապարտեզների

		ներկայացուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր մի շարք մասնագիտական և նախադպրոցական ոլորտի առաջնային հարցերի քննարկումը և շարունակական համագործակցությունը համապատասխան օղակների հետ: - Ամբիոնի և ՇԳԻ համագործակցության արդյունքում դեկտեմբեր ամսին որոշվել էր կազմակերպել առցանց վերապատրաստում ՀՀ պետական մանկապարտեզների որոշակի թվով դաստիարակների համար: Վերապատրաստման մոդուլը կազվել էր ամբիոնի պրոֆեսորի պ/կ Ա.Դալլաքյանի և մ.գ.թ.դասախոս՝ Մ.Ամիրաղյանի կողմից և նրանք էլ իրականացնելու են առցանց վերապատրաստումը: Արդյունքները կքննարկվեն ամբիոնում:
Մայիս 23, արձանագրություն թիվ 11	1. Հեռակա ուսուցման համակագի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ներկայացում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին: 3. 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում: 4. Դասալսումների քննարկման հարցը: 5. Նախադպրոցական կրթության ոլորտի վերապատրաստումների մրցույթներին ամբիոնի կողմից հայտի ներկայացման հարցը: 6. Բուհի 100-ամյակին նվիրված միջոցառման քննարկում:	1. Նախապաշտպանության արդյունքների հիման վրա երաշխավորել հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքները: 2. Նախապատրաստվել ամփոփիչ ավարտական քննություններին, որոնք կազմակերպվելու են առերես տարբերակով: Ամբիոնի մասնագետը նախապես հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը և տեղադրում ամփոփիչ ատեստավորման համապատասխան էլ.էջերում: 3. Հաստատել 2-րդ կիսամյակի քննական առարկաների հարցաշարերն ու տոմսերը: 4. Ամբիոնի վարիչը ներկայացրեց յուրաքանչյուր դասախոսի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ իր

		նկատառումները և քննարկումների արդյունքում եղան առաջարկներ: 5. Ամբիոնը հետևողական կլինի կազմակերպվող վերապատրաստումների մրցույթներին և կներկայացնի հայտ: 6. Ամբիոնի որոշմամբ կազմակերպել միջոցառում՝ նվիրված բուհի 100-ամյակին, որը նվիրված է լինելու նախադպրոցական կրթության նվիրյալներին և ոլորտի բացթողումների և խնդիրների քննարկմանը:
Հունիս 6, արձանագրություն թիվ 12	1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկում: 2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների քննարկում: 3. Ընթացիկ հարցեր: Նախադպրոցական կրթության խնդրահարույց հարցերի վերհանման և ոլորտի մի շարք խնդիրների քննարկում մանկապարտեզների և քաղաքապետարանի հրավիրված ներկայացուցիչների հետ:	1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն: 2. Նշված կուրսերի ուսումնաճանչողական և մանկավարժական պրակտիկաների պաշտպանությունները կազմակերպվել էր առերես, արդյունքները պրակտիկայի ղեկավարը ներկայացրեց հաշվետվության տեսքով: 3. քննարկման արդյունքում ձևավորված առաջարկությունները ձևակերպել և ուղարկել ԿԳՄՍ նախարարության համապատասխան վարչություն: Նմանօրինակ հանդիպում-քննարկումները դարձնել պարբերական:
Օգոստոսի 29, արձանագրություն թիվ 1	1. Ամբիոնի դասախոսների 2022-23 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացում: 2. Ամբիոնի գծով 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ.հարթակում էջերի	1. Ըստ առարկայական ծանրաբեռնվածության դասավանդվող առարկաները համակարգել ըստ բովանդակության և դասախոսի

	բացման, առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը: 3. 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջակյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը: 4. Ամբիոնի կողմից մշակված Շախմատը նախադպրոցական հաստատություններում գրքի հրատարակման հարցի քննարկում:	գիտական ու մեթոդական հետաքրքրությունների: 2. Հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները /ծանրաբեռնվածությունը նախօրոք քննարկվել և ներկայացվել է/, երաշխավորել google classroom ներբեռնելու համար: 3. Հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը: 4. Քննարկման արդյունքում որոշվեց լրամշակել և հարստացնել գրքի բովանդակությունը:
Սեպտեմբերի 22, արձանագրություն թիվ 2	1. Ամբիոնի ասպիրանտ Նադյա Սայադյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը: 2. Ամբիոնի գծով 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ.հարթակում էջերի մշտադիտարկման արդյունքների ներկայացման և քննարկման հարցը: 3. Ամբիոնի կողմից ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված «Սերունդների խաչմերուկ» միջոցառման նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը: 4. ՖԻԴԵ-ի և ամբիոնի համագործակցությամբ կազմակերպված «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» գիտագործնական կոնֆերանսի	1. Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասպիրանտ Նադյա Սայադյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ավագ նախադպրոցականի օտարալեզու բառապաշարի զարգացման մեթոդական համակարգն առցանց խաղերի միջոցով», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ., դոցենտ Արմենուհի Մանուկյանին: 2. Ամբիոնի մասնագետի կողմից ըստ ներկայացված ձևաչափերի մշտադիտարկվել են 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակում ամբիոնի գծով դասավանդվող բոլոր դասընթացների էլ.էջերը և մանրամասն հաշվետության տեսքով ներկայացվել է նիստի ժամանակ: Որոշվեց բոլոր

	նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը: 5. Առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսերի կուրսային աշխատանքների վերնագրերի և ղեկավարների հաստատման հարցը: 6. Առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի քննարկման և հաստատման հարցը: 7. Ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման հարցը: 8. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2022-2025թթ.) գործողությունների կատարման պլանի քննարկման հարցը:	բացթողումները լրացնել մեկ շաբաթվա ընթացքում: 3. «Սերունդների խաչմերուկ» միջոցառումը կազմակերպել հոկտեմբերի 8-ին և հստակեցնել միջոցառման նախապատրաստական աշխատանքներին յուրաքանչյուր դասախոսի աշխատանքը: Հաստատել աշխատաժողովի օրակարգը: 4. Քննարկվեց և որոշվեց կոնֆերանսի աշխատանքային ուղղությունները և ամբիոնի կողմից ներկայացվող հոդվածները՝ անգլերեն լեզվով: 5. Հաստատել կուրսային աշխատանքների վերնագրերը և ղեկավարներին, անհրաժեշտ տեղեկատվությունը տեղադրել կուրսային աշխատանքների խորհրդատվություն էլ.էջում: 6. Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին: 7. Հաստատել 2022-2023 ուստարվա ամբիոնի աշխատանքային պլանը: 8. Առաջնորդվելով ՀՊՄՀ զարգացման ՌԾ-ի 2022-25թթ. գործողությունների կատարման պլանով, կազմաերպել ամբիոնում իրականացվող ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացները, որոնք համապատասխանեցվել են նաև ամբիոնի 2022-2023թթ. աշխատանքային պլանին:
Հոկտեմբերի 21,	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	1. Հաստատել մանկավարժահետազոտական

արձանագրություն թիվ 3	մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման հարցը (3 շաբաթ): 2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի ընթացիկ հաշվետվությունների ներկայացման հարցը: 3. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը: 4. Ամբիոնի դասախոսների 2022 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը: 5. 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի 1-ին կիսամյակների մանկավարժական պրակտիկաների կազմակերպման հարցը: 6. «Սերունդների խաչմերուկ» աշխատաժողովի արդյունքների ամփոփում: 7. Ընթացիկ հարցեր:	պրակտիկայի դասացուցակը և պրակտիկան կազմակերպել ըստ ժամանակացույցի: 2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ղեկավարները ներկայացրեցին իրենց ղեկավարությամբ մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ: Ըստ ներկայացված հաշվետվությունների ավարտված են գրեթե բոլոր թեզերի տեսական ուսումնասիրությունները և աշխատանքային փուլի մեջ են հետազոտական աշխատանքները, որոնք քննարկվում են ղեկավարների հետ: 3. Հաստատել հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաներն ու ղեկավարներին՝ ըստ 2022-23 ուստարվա ծանրաբեռնվածության: 4. Ամբիոնի մասնագետ Թ.Նալբանդյանը նշեց, որ բոլոր դասախոսները ուղարկված ձևաչափով, նշված ժամանակահատվածում ուղարկել են իրենց աշխատությունները, որոնք ընդհանրացվել են և մեկ ամբողջական ձևաչափով ներկայացվել է դեկանատ: Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը նշեց, որ ամբիոնի դասախոսները պետք է շարունակեն ընդլայնել իրենց հետազոտական աշխատությունների ցանկը և նշեց նաև, որ ամբիոնը պետք է

		թափ տա «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» ձեռնարկի վերանայման և տպագրման աշխատանքներին: 5. Պրակտիկայի ղեկավարը նշեց, որ հեռակա 4-րդ և 5-րդ կուրսերի 1-ին կիսամյակների մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ժամանակացույցերը փոփոխվել են և պրակտիկաների կազմակերպումը հետաձգվել է նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 11-ը: Խմբերը ղեկավարներով բաշխված են ըստ ծանրաբեռնվածության, մանկապարտեզների բազան դեռ հաստակեցված չէ՝ պայմանավորված ուսանողների թվաքանակով: Աշխատող և սահմանամերձ ուսանողներն իրենց դիմումների և տեղեկանքների համաձայն պրակտիկան կանցկացնեն համապատասխան մանկապարտեզներում: Որոշվեց ըստ ժամանակցույցի ընթացք տալ ԲԿԾ հեռակա 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաներին: 6. Նշվեց, որ աշխատաժողովը նվիրված էր ԲՈՒՀ-ի 100-ամյակին և հետաքրքիր էր իր ձևաչափով: Ներկաները տպավորված էին և հուզված: Աշխատաժողովի ողջ ընթացքը նկարահանվում էր և կցուցադրվի հաջողության բանաձև հաղորդաշարով: 7. - Վերանայել և վերսկսել աշխատանքներն ուղղված "Նախադպրոցական կրթության

		որակի փորձաքննություն" մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ: - ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված պարգևատրման ներկայացված աշխատակիցների ցուցակի հաստատում: - Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացի ծրագրի կազմում և ԿԳՄՍՆ-ի կողմից կազմակերպված մրցույթին ներկայացնելու հարցը: - Ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Մ.Ամիրաղյանը Գիտական խորհրդի որոշմամբ ընտրվեց դոցենտի պաշտոնում:
Նոյեմբեր 22, արձանագրություն թիվ 4	1. Ամբիոնի և ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի նախաձեռնությամբ Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության հետ հանդիպման կազմակերպում: 2. Ընթացիկ հարցեր:	1. ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի պայմանավորվածությամբ հանդիպում կազմակերպվեց ամբիոնի դասախոսական կազմի և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ՝ Մ.Խաչատրյանի հետ, քննարկվեցին շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակահարմարության հարցը, նախնական պայմանավորվածությամբ որոշվեց պետական նախակրթարաններում փորձ անել ներդնել շախմատային նախագիտելիքները:
Դեկտեմբերի 7, արձանագրություն թիվ 5	1. Ամբիոնի 2022թ. հաշվետվության ներկայացման և քննարկման հարցը: 2. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման հարցը: 3.Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման	1. Հաստատել հաշվետու ժամանակահատվածում ներկայացված հաշվետվությունը: 2. Նախապատրաստվել 2-րդ կիսամյակին՝ առաջնորդվելով յուրաքանչյուր դասախոսի ծանրաբեռնվածությամբ և

	դասընթացի մրցույթին 2-րդ փուլով դիմելու հարցի քննարկում: 4.Առկա 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ աշխատանքների քննարկում: 5.Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման արդյունքների քննարկում: 6.Ընթացիկ հարցեր:	ներկայացված դասացուցակների /առկա, հեռակա/: 3. Նախատեսված ժամանակահատվածում վերանայել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման մոդուլը և կրկին դիմել մրցույթի 2-րդ փուլին: 4. Նշված կուրսերի ուսանողներին տալ անհրաժեշտ խորհուրդներ՝ գիտահետազոտական աշխատանքնեն անհրաժեշտ ուղղությամբ կատարելու համար: Պարզաբանել բոլոր ուսանողների հարցերը: 5. Ատեստավորել ամբիոնի 2 հայցորդներին և 1 ասպիրանտին՝ ներկայացված հաշվետվությունների հիման վրա: 6. Կազմել և ներկայացնել քաղաքային և մարզային դպրոցների այցելությունների ժամանակացույցը՝ ապագա դիմորդների կողմնորոշման և տեղեկատվության տարածման համար:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ. թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասա խոս	Ընդ-նը
Հաստիքային	8		2	1,75	4,25	1,5	1,5	11
Համատեղող	0,5				0,5			0,5
Ժամավճարային								
Ընդամենը	8.5		2	1,75	4,75	1.5	1,5	11,5

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ուսումնամեթոդական աշխատանքն ամբիոնում կազմակերպվում է չորս ուղղությամբ. 1. Աշխատանք ուսանողների հետ google classroom էլ. հարթակում հետադարձ կապի ապահավում, ուսանողների մեդիագրագիտության ձևավորում: 2. Բարձր կուրսերում ուսումնագիտական հետազոտությունների կատարման ընթացակարգերի, հետազոտության համագիտական և նեղ մասնագիտական մեթոդների վերաբերյալ գիտելիքների, դրանց արդյունավետ կիրառման տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների ձևավորումը: 3. Կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարների և դրանք կատարող ուսանողների համագործակցությունը արդյունավետ և թափանցիկ դարձնելու նպատակով համապատասխան էլեկտրոնային էջերի ստեղծումը google classroom հարթակում՝ ապահովելով ակտիվ համագործակցությունը, խորհրդատվությունը և հետադարձ կապը: 4. Ամբիոնի դասախոսների կողմից մագիստրոսական նոր առարկայական ծրագրերի մշակում՝ “Մանկական հեքիաթների մանկավարժահոգեբանական վերլուծությունը”, “Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում”, “Սոցիալական մեդիաներ՝ մեդիակրթությունը ՆՈՒՀ-երում”, և այլ ծրագրերի բովանդակային արդիկանացում:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՄՍՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՄՍՆ դասիչով	Այլ դասիչներով
	7				1

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
4						4			

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
-			

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
2022-2023 ուսումնական տարում ամբիոնն իր հետազոտական գործունեությունը պլանավորել և կազմակերպել է նախադպրոցական կրթության նոր չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան, առավելապես շեշտադրելով նախադպրոցական կրթության հեռանկարային զարգացման միտումները ՀՀ-ում, հիմք ընդունելով նախադպրոցական կրթության ոլորտում համաշխարհային առկա փորձը, տեսական և հետազոտական փորձարարությունները տարիքային տարբեր փուլերում: Ամբիոնի 2022-2023 ուս.տարվա գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն են. 1. Նախադպրոցական կրթության արդի վիճակն և զարգացման հեռանկարները՝ «Գիտություն-պրակտիկա» կապի ամրապնդումը. *Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը յուրաքանչյուր ուս.տարվա համար ներկայացնում է գիտական, մեթոդական և հետազոտական աշխատանքների ցանկը: Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են տարբեր* սեմինարների, *մասնագիտական գիտաժողովների*, վերապատրաստման դասընթացների: Ամբիոնի դասախոսներ Ս.Մարությանը, Ա.Ղազարյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ամիրաղյանը, Մ.Ավագյանը, Ա.Դալլաքյանը, Ա.Խուգեյանը, Ի.Պոնոմարենկոն որպես վերապատրաստողներ պարբերաբար մասնակցում են նախադպրոցական մանկավարժների մասնագիտական որակի բարելավման վերապատրաստումներին: Մշակված նյութերի շուրջ դասախոսները պարբերաբար հրատարակում են գիտական հոդվածներ տարբեր գիտաժողովների ժողովածուներում և գիտական ամսագրերում: 2.*Ամբիոնի համագործակցությունը միջազգային ԲՈՒՀ-երի համապատասխան ամբիոնների հետ.* Ամբիոնը սերտ համագործակցում է միջազգային մի շարք ԲՈՒՀ-երի՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելոռուսի Մ.Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գ.Ս.Սկովորոդի անվան Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի, Յարոսլավլի Ուշինսկու անվան մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնների հետ: 3.Ամբիոնի գիտահետազոտական կարևորագույն ուղղություն է նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությունը, սկսած 2019 թվականից: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը որոշ դիտարկումներով և առաջարկություններով կարծիք է ներկայացրել ՀՀ ԿԳՄՍՆ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատակիցների տարիֆիկացման փաստաթղթի վերաբերյալ, որի արդյունքում ԿԳՄՍՆ-ի կողմից ամբիոնի ներկայացված առաջարկությունները հաշվի են առնվել: 4. «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» Ամբիոնն իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակում 2022-2023 ուս.տարում շարունակել է ընդգրկել «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» խորագրով ուղղությունը, որը ՖԻԴԵ-ի և Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի հետ համագործակցության արդյունք է: 2022 թվականի ապրիլ ամսին համագործակցության արդյունքում կազմակերպվել էր պետական

մանկապարտեզների որոշակի թվով դաստիարակների առցանց վերապատրաստում՝ 3 շաբաթ տևողությամբ, որն իրականացնում էին ամբիոնի պրոֆեսորի պ/կ Ալլա Դալլաքյանը և մ.գ.թ., դասախոս Մարիաննա Ամիրաղյանը: 2022 թվականի նոյեմբերի 22-ին ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի պայմանավորվածությամբ հանդիպում կազմակերպվեց ամբիոնի դասախոսական կազմի և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ՝ Մ.Խաչատրյանի հետ, քննարկվեցին շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակահարմարության հարցը, նախնական պայմանավորվածությամբ որոշվեց պետական նախակրթարաններում փորձ անել ներդնել շախմատային նախագիտելիքները: 2021 թվականին innostud.am էլեկտրոնային հարթակում «Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» ծրագրի շրջանակում մշակվել են շախմատային բովանդակությամբ 30 և ավել էլեկտրոնային խաղ-առաջադրանքներ: 5.Հաջորդ գիտահետազոտական ուղղությունը նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումների ուսումնասիրումն է, որը առաջնային կապվում է երեխայի խաղային գործունեության հետ՝ նորագույն խաղային տեխնոլոգիաների կիրառման և այս ոլորտում տեղեկատվական բազան հարստացնելու հետ՝ բոլոր մեթոդիկաների, ինչպես նաև մեդիագրագիտության ուղղությամբ:
Ամբիոնի ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի դասախոսական կազմը սերտորեն համագործակցում է ուսանողների հետ, ուղղորդում նրանց գիտահետազոտական գործունեության շրջանակներում: 2022 թվականին ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ֆակուլտետի կազմակերպած «Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» միջազգային առցանց գիտաժողովին, որի նյութերը հրատարակման ընթացքում են:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները: 1. Հաշվետու տարում ուսումնաճանաչողական, մանկավարժական և կիրառական-վերլուծական պրակտիկաների շրջանակներում դասախոսների ուղղորդմամբ ուսանողների կողմից ակտիվորեն կիրառվում են ձեռք բերված տեսական գիտելիքները, ինչն ապահովում է կիրառական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորումը: Հատկանշական է, որ ավարտական աշխատանքների հետազոտական մասն իրականացվում է հիմնականում բազային մանկապարտեզներում՝ պրակտիկայի ընթացքում: 2. Արդիականացվել է ամբիոնի կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, նախագծերի թեմատիկան, արմատապես փոխվել են ամբիոնի գծով մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության հարցաշարերը:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ

«Նախադպրոցական կրթության արդի վիճակի և զարգացման հեռանկարների գիտական հետազոտումը», «Գիտություն-պրակտիկա կապի ամրապնդումը»	Հիմնարար	-	-	Ամբիոնի ՊԴԱ կազմ
«Նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումների ուսումնասիրումը, խաղային գործունեության մեդիականացման և տեղեկատվական բազայի հարստացման արդյունքում նախադպրոցականների բազմաբնույթ մտածողության ձևավորումը»	Հիմնարար	-	-	Ամբիոնի վարիչի պ/կ Ա.Մանուկյան https://classroom.google.com/u/0/c/NTQ0MjI3MzIxODg4 https://classroom.google.com/c/NTQ0NzUzMTM5Mzk5 https://classroom.google.com/c/NTQ0NzU0MDgxNjI2
Նախադպրոցական տարիքի երեխաների մեդիագրագիտության ձևավորման արդի տեխնոլոգիաները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները	Հիմնարար	-	-	Ամբիոնի վարիչի պ/կ Ա.Մանուկյան https://classroom.google.com/u/0/c/NTQ0MjI3MzIxODg4 https://classroom.google.com/c/NTQ0NzUzMTM5Mzk5 https://classroom.google.com/c/NTQ0NzU0MDgxNjI2
«Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում»	Կիրառական	ՖԻԴԵ /մասնակի ֆինանսավորում, մեծամասամբ առանց	-	Ամբիոնի ՊԴԱ կազմ

		ֆինանսավոր ման/		

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
-			

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Մանուչարյան Սաթենիկ, Նալբանդյան Թամարա	Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման առանձնահատկությունները	6 էջ
Հովսեփյան Ս.Պ. Կիրակոսյան Լ.Ս.	Շախմատի պարապմունքների արդյունավետությունը մանկապարտեզում	5 էջ
Մանուկյան Արմենուհի	Socio-psychological hypnotic manipulation mechanisms of public mind used in media space on the example of thematic subscriptions on the YouTube channel	12 էջ
Պոնոմարենկո Իրինա, Մարության Սվետլանա	ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ	6 էջ
Մանուկյան Արմենուհի	Медиапсихология-новый этап развития психологии /ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված գիտաժողով/	Հանձն. է տպ.
Խաչատրյան Ժաննա	СПОСОБЫ СОПОСТАВЛЕНИЯ РАЗЛИЧНЫХ РИСУНКОВ КАК СРЕДСТВО ДЛЯ РАЗВИТИЯ У СТАРШИХ ДОШКОЛЬНИКОВ /ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված գիտաժողով/	Հանձն. է տպ.
Խաչատրյան Հեղինե	Ուսումնական նախագծային աշխատանք. բնութագիրն ու առանձնահատկությունները /ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված գիտաժողով/	Հանձն. է տպ.
Պոնոմարենկո Իրինա, Ասմարյան	ԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	Հանձն. է տպ.

Քնարիկ, Խուգեյան Արևիկ	/ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված գիտաժողով/	
S.Khachatryan, H. Khachatryan, N.Movsisyan	USING ACT MODEL IN TEACHING/LEARNING OF CHESS SCHOOL SUBJECT	3 էջ թեզիս
Armenuhi Manukyan	SOCIO-PSYCHOLOGICAL HYPNOTIC MANIPULATION MECHANISMS OF PUBLIC MIND USED IN MEDIA SPACE ON THE EXAMPLE OF THEMATIC SUBSCRIPTIONS ON THE YOUTUBE CHANNEL	13 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Սերունդների խաչմերուկ գիտագործնական աշխատաժողով	Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, հոկտեմբերի 8

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
-			

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Ամբիոնի ողջ ՊԴԱ կազմ	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ	Հուլիսի 4 և 6	Դասախոսներին զինել ՄԿԾ-ների վերանայման, դասավանդվող առարկաների թեմատիկ տրոհումներում և նկարագրերում հնարավորինս ճիշտ լրացումներ կատարելու, կրթական ծրագրերի մշակման, վերամշակման և կատարելագործման հմտություններով:

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Կամավորական գործունեություն ՈՒԽ հետ համատեղ	2022 թվական ի դեկտեմբ		

աշխատանքների կազմակերպում	եր ամսվա վերջում ամբիոնը նախաձեռնել է ամանորյա ծրագիր՝ այց հատուկ դպրոց:		
Հոգեբանական մանիպուլյացիաները մեդիադաշտում ՍԿ ՈՒԳԸ հետ համատեղ տեղեկատվական սեմինար	2022թ. նոյեմբերի 17	https://drive.google.com/file/d/1CN7NhQO6kqoQhp0ZdDruxFl6k37MWHGQ/view?usp=share_link	

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
-			

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս /միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
-		

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			

Հանրապետական			
	Լավագույն ուսանող	1	Ջուլիետա Արթուրի Մանուկյան https://aspu.am/hy/content/hpmh_usanoghnery_lavaguyn_usanogh_mrcuyti_haghtoghner/#sthash.qNzZ6UBg.dpbs
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ամբիոնը սերտ համագործակցում է միջազգային մի շարք ԲՈՒՀ-երի՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելոռուսի Մ.Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գ.Ս.Սկովորոդի անվան Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի, Յարոսլավլի Ուշինսկու անվան մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնների հետ: Ամբիոնը պարբերաբար ստանում է այդ ԲՈՒՀ-երում իրականացվող գիտահետազոտական գործընթացների մասին տեղեկատվություն և մասնակցում է տարբեր միջազգային կոնֆերանսների և տպագրում է նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների, մանկավարժական հոգեբանության, ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների մասնագիտական գործիմացության, նրանց մեդիագրագիտության և մեդիամշակույթի ձևավորման, նախադպրոցականների ոլորտային զարգացմանը նպաստող տարբեր մեթոդիկաներում շախմատի ներառմանն առնչվող հոդվածներ, որոնք տպագրվել են SCOPUS, РИНЦ և այլ ամսագրերում: https://orcid.org/0000-0002-8435-8223 https://orcid.org/0000-0003-4365-1447 https://orcid.org/0000-0002-5984-7623
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ամբիոնը համագործակցում է. • ՍԿ ֆակուլտետի երկու և համահամալսարանական "Մանկավարժության" ամբիոնների հետ: • Շարունակվում է սերտ համագործակցությունը «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» հետ՝ "Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում" ծրագրի շրջանակում: • ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ ամբիոնի մասնագետները մասնակցել են նախադպրոցական պետական կրթական և միջին մասնագիտական կրթության չափորոշիչների,

ինչպես նաև նախադպրոցական կրթական համալիր ծրագրերի վերամշակման գործընթացներին: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը որպես վերապատրաստողներ ընդգրկվել են ոլորտում իրականացվող վերապատրաստման տարբեր ծրագրերին:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարան			ՀՊՄՀ-ն հանդես է գալիս որպես 6 կազմակերպիչների ց մեկը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ներկայացմամբ		
Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի Նախադպրոցական կրթության, նախադպրոցական մանկավարժության մեթոդիկաների ամբիոններ	Ամբիոնը պարբերաբար քննարկումներ է ունենում տվյալ ամբիոնների մասնագիտական խմբի հետ, նորարարական ուսումնամեթոդական գործընթացներին ծանոթանալու նպատակով, ինչպես նաև փորձի փոխանակման շրջանակներում:				
Մ.Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական համալսարան		Психолого-педагогический практикум по дошкольной педагогике: Учебно-методическое			

		пособие /–Եր.: 2022.–160 стр.: /Վ. Կարապետյան, Ա. Դալլաքյան/			

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
ՍԿ Ֆակուլտետի հետ համագործակցությամբ, ամբիոնի փիառ խմբի դասախոսներն այցելել են քաղաքային և գյուղական դպրոցներ՝ ըստ կազմված ժամանակացույցի: Դպրոցների ավարտական դասարանների աշակերտների և ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների կողմից մեծ հետաքրքրություն է ցուցաբերվել 2022-23թթ. "նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա" մասնագիտությամբ հեռակա մագիստրոսական կրթական ծրագրի նկատմամբ:

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Սկբզնական կրթության ֆակուլտետի գործունեության և Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության վերաբերյ	Ա. Խուգեյան Ք. Ասմարյան	Փիառ խմբի աշխատանքների կազմակերպում ՀՀ տարբեր մարզերում	Տարվա ընթացքում տարբեր ամիսների

ալ տեղեկատվության տարածում			
Առցանց տիրույթում ամբիոնի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տարածում	Թ. Նալբանդյան	Facebook սոցիալական ցանցում ամբիոնի էջի /https://www.facebook.com/Chairofpreschoolpedagogyandmethodology/ միջոցով մասնագիտական և աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկության փոխանցում	2020 թ. -ից սկսած /մշտական/
Հանրապետական մեդիագրագիտության շաբաթ	Ա.Մանուկյան	Հոգեբանական մանիպուլյացիաները մեդիադաշտում https://drive.google.com/file/d/1CN7NhQO6kqoQhp0ZdDruxFI6k37MWHGQ/view?usp=share_link	նոյեմբերի 17
Մեդիաեթեր	Ա.Մանուկյան Ա.Դալլաքյան	ՀՊՄՀ "Հաջողության բանաձև հաղորդաշար"՝ Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	https://www.youtube.com/watch?v=OuLloofrqUc https://www.youtube.com/watch?v=iOiddnn9ci4&list=PLbbEkgHyhRd621zI-bmCt9DTlXzpK_0va

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնի դասախոսները հետևողականորեն աշխատում են մասնագիտական որակի բարձրացման, առարկայական ծրագրերի արդիականացման, նկարագրերի և թեմատիկ տրոհումների չափաբերման՝ ՄԿԾ-ի վերջնարդյունքներին համապատասխան, ինչը դասալսումների միջոցով պարբերաբար վերահսկվում է ամբիոնի վարիչի պ/կ Արմենուհի Մանուկյանի և ամբիոնի պրոֆեսորներ Ա.Դալլաքյանի և Ս.Մարությանի կողմից: Առարկայական նկարագրերում փոփոխություններն իրականացվել են հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի "Մանկավարժություն" որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը հաստատելու մասին 2022թ. ապրիլի 28-ի թիվ 783 Ա հրամանը: Հետևելով ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պահանջին ամբիոնի մասնագետ՝ Թ.Նալբանդյանը սահմանված ժամկետներում պարբերաբար իրականացնում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի առարկայական էլեկտրոնային էջերի մշտադիտարկում՝ ըստ ձևաչափի:

Ամբիոնի վարիչի ժ/պ Ա.Մանուկյանը և ամբիոնի մասնագետ Թ.Նալբանդյանը հետևում են էլեկտրոնային էջերում դասախոսների կողմից ուսանողներին տրամադրվող նյութերի բովանդակային և մեթոդական համապատասխանությանը առարկայական նկարագրերին և թեմատիկ տրոհումներին:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
ՀՀ ԿԳՄՍՆ, ԿՋՆԱԿ հիմնադրամ, Երևանի քաղաքապետարանի նախադպրոցական կրթության բաժին, Երևանի քաղաքապետարանի ՆՈՒՀ-եր, մասնավոր զարգացման կենտրոններ, ՀՊՄՀ Շախմատի գիտահետազոտական ինստիտուտ: • ՀՀ ԿԳՄՍՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԻՖԱՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ վերաբերյալ ամբիոնի կարծիք, որի արդյունքում ԿԳՄՍՆ կողմից փոփոխվել է 4 դրույթ (հիմք՝ ամբիոնի կարծիք և ՀՀ ՆՈՒՀ-երի վարչական և մանկավարժական կազմի տարիֆավորակավորման բնութագրեր) • ՀՀ ԿԳՄՍՆ "Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման ու տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տրամադրելու, տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգերի վերաբերյալ" ամբիոնի կարծիք (հիմք՝ ամբիոնի կարծիք, որն ընդունվել է ի գիտություն):

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Արմենուհի Մանուկյան, ամբիոնի պրոֆեսորներ՝ Ս.Մարության, Ա. Դալլաքյան	Առարկայական նկարագրերում և թեմատիկ տրոհումներում դասախոսների կողմից նշված դասի թեմայի, տեսակի, կիրառվող մեթոդների, նպատակի, քննարկվող հարցերի, առաջադրանքների համապատասխանությունը դասագործընթացին: Դասախոսի մանկավարժական մշակույթը, մեդիագրագիտությունը, հաղորդակցման հմտությունները, քննադատական և վերլուծական մտածողությունը, համագործակցելու կարողությունը, գնահատման օբյեկտիվությունը, հետադարձ կապի և վերջնարդյունքների ապահովումը:

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)	
Հաշվետու տարում ամբիոնում իրականացվող ուսումնամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքները ընթացել են արդյունավետ, տեղ գտած որոշ բացթողումներ չեն խոչընդոտել ամբիոնի բնականոն աշխատանքին, աշխատանքային մթնոլորտը եղել է ակտիվ և համագործակցային, ինչի արդյունքում ունեցել ենք շոշափելի առաջընթաց:	
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Մասնագիտական կայուն թիմ	Մայրենի լեզվով մասնագիտական գրականության սակավություն
ՀՀ-ում պետական բուհերի մակարդակով միակ մասնագիտական ամբիոն և մեթոդական կենտրոն	Դասախոսների մեդիագրագիտության և մեդիամշակույթի ցածր մակարդակ
Համագործակցություն ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ԿՀՆԱԿ հիմնադրամի, Երևանի քաղաքապետարանի և «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» հետ	Որոշակի թերացումներ դասախոսների կողմից ակադեմիական բարեվարքության կանոնների պահպանման գործընթացում
	Օտար լեզուների իմացության ցածր մակարդակ
Ամբիոնում նոր առարկայական ուսումնական ծրագրերի ներդրումը, գիտահետազոտական ուղղությունների արդիականացումը	
Ամբիոնի ֆեյսբուքյան էջի ակտիվ գործունեություն՝ տեղեկատվության տարածում սոցիալական հարթակում, (2700-ից ավել հետևորդ)	
Հնարավորություններ	**Վտանգներ**
ՀՀ-ում նախադպրոցական կրթության ոլորտում տարբեր ձևաչափերով իրականացվող վերապատրաստումներին մասնակցելու պատրաստակամությունը	ՀՀ նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվող գիտական և մեթոդական գործընթացներում միակ մասնագիտական ամբիոնի դերի և նշանակության ոչ բավարար արժևորում
Դասախոսների մասնագիտական աճը, դրանց մեդիագրագիտության և մեդիամշակույթի ձևավորումը, մասնագիտական կարողությունների և հմտությունների մեդիականացումը՝ առցանց դասընթացներ, թրեյնինգներ, վերապատրաստումներ	

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)	
Նոր ՄԿԾ-ների մշակում և ներդրում՝ Նախադպրոցական կրթության որակի փորձաքննություն մագիստրոսական կրթական ծրագիր (2023-24թթ.)	
Արտասահմանյան Բուհերի համանուն ամբիոնների հետ համագործակցության ընդլայնում	

ՀԱՏՈՒԿ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետն իր առաքելությանն ու ռազմավարական պլանին համապատասխան հաշվետու ուսումնական տարում իրականացրել է աշխատանքներ հետևյալ ուղղություններով. 1, Ուսումնական գործընթացի կազմակերպման և բովանդակության կատարելագործում: 2, Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերման գործընթացի բարելավում 3,Ուսանողների, հայցորդների , ասպիրանտների և դասախոսների գիտահետազոտական աշխատանքի խթանում 4,Միջազգային համագործակցության ընդլայնում, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում 5,Մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային վերանայում 6, Հանրության շրջանում մասնագիտական իրազեկման աշխատանքներ՝ դիմորդների համալրման նպատակով 7,Ուսանողական և ուսանողական գիտական խորհրդի աշխատանքների համակարգում 8,Գործատու- համալսարան կապերի ընդլայնում 9,Ուսանողների մասնագիտական կամավորական աշխատանքի խթանում 10,Պայմանավորված արդի աշխատաշուկայի պահանջարկից՝ ,,Օլիգոֆրենոմանկավարժություն,, ,,Սուրդոմանկավարժություն,, , ,,Տիֆլոմանկավարժություն,, մասնագիտացումների փոխարեն բակալավրի կրթական ծրագրում նոր ,, Հատուկ մանկավարժություն,, մասնագիտացման կրթական ծրագրի ձևակերպում:

Ելնելով նախանշված ուղղություններից ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ քայլերը.

1,1Առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, քննական հարցաշարերի բովանդակային վերանայում և ձևակերպումների համապատասխանեցում ՈՒՇ-ի պահանջներին:

1,2Մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում և ելքային վերջնարդյունքների ձևակերպումների հստակեցում՝ ապահովելով համադրելիությունը ՈՒՇ-ի պահանջներին:

1,3 Մասնագիտական ընտրովի դասընթացների բազայի ընդլայնում ըստ մասնագիտացումների՝ համապատասխանեցնելով տվյալ կրթական ծրագրի ՄԿԾ-ի ելքային վերջնարդյունքներին:

2,1 Մանկավարժական պրակտիկայի անցկացման վայրերի ընդլայնում՝ ՏմՈՒԿ-ների ներգրավմամբ:

2,2 ՏՄՈՒԿ-ների ներկայացուցիչների և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ համատեղ կլոր սեղան-քննարկում՝ միտված տվյալ հաստատություններում պրակտիկայի կազմակերպման հարցերին:

2,3Մանկավարժական պրակտիկայի ավարտից հետո պրակտիկայի ընթացքի քննարկում, SWOT վերլուծություն:

2,4 Մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպում ՝ բակալավրիատում առարկաների դասավանդման գործընթացում առաջնահերթությունը տալով մագիստրոսական թեզի ուղղվածությանը(հատկապես այն մագիստրոսների համար, ովքեր չունեն բակալավրի մասնագիտական կրթություն)

3,1ԲՈՒԿ-ի կողմից հաստատված և միջազգային բարձր վարկանիշ ունեցող ,,Հատուկ կրթության հիմնախնդիրները,, ժողովածուում անվճար տպագրվելու հնարավորություն:

3,2Մասնագիտական գիտական կոնֆերանսների, սեմինարների, աշխատաժողովների, կլոր սեղան-քննարկումների, վեբինարների, վարպետաց դասերի կազմակերպում

3,3Հայցորդների և ասպիրանտների գիտական թեմաների ընտրության գործընթացում թեմայի հրատապության, ոլորտում առկա գիտահետազոտական մարտահրավերների կարևորում

3,4 Ուսանողների ներգրավում համատեղ գիտահետազոտական աշխատանքներին և համատեղ գիտական հոդվածների տպագրում

3,5 Մագիստրոսական թեզերի թեմաների ընտրություն՝ կարևորելով գործնական ուղղվածությունը և մեթոդական ելքային արդյունքների ապահովումը

4,1 ԱՄՆ–ի Պեռկինս տեսողության և զարգացման բարդ խանգարումներ ունեցող միջազգային ծրագրի շրջանակներում վերապատրաստումների միջազգային ծրագրերին 12 դասախոսի մասնակցություն՝ արդյունքում կրեդիտավորված հավաստագրերի տրամադրում

4,2 ԱՄՆ–ի Պեռկինս տեսողության և զարգացման բարդ խանգարումներ ունեցող միջազգային ծրագրի շրջանակներում վերապատրաստումների միջազգային ծրագրի արդյունքում մագիստրոսի կրթական ծրագրի շրջանակներում մասնագիտական ընտրովի դասընթացի առարկայական նկարագրի, թեմատիկ տրոհման, ուսումնական նյութի մշակում

4,3 Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարտուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի համագործակցության շրջանակներում ֆակուլտետի 6 դասախոսի այցելություն Պարտուբիցեյի համալսարան, դասավանդում և միջազգային գիտաժողովի մասնակցություն

4,4 Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարտուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի համագործակցության շրջանակներում ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի Լոգոպեդիա մասնագիտացման 3-րդ կուրսի 2 ուսանողի ուսումնական գործընթացի 1 կիսամյակի կտրվածքով կազմակերպում Պարտուբիցեյի համալսարանում, ուսանողների մասնակցություն տվյալ համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովին:

4,5 Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարտուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի համագործակցության շրջանակներում Լոգոպեդիա մասնագիտացման 3-րդ կուրսի 1 ուսանողի մանկավարժական պրակտիկայի կազմակերպում Պարտուբիցեյի համալսարանում, կրթական և վերականգնողական հաստատություններում

4,6rasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարտուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի համագործակցության արդյունքում ներառական կրթության մարտահրավերներին առնչվող գիտամեթոդական , վերլուծական համատեղ ձեռնարկի մշակում

4,7– Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Ֆինլանդիայի Օուլու համալսրանի 1 դասախոսի, և ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի Օլիգոֆրենոմանկավարժությում մասնագիտացման 2-րդ կուրսի 1 ուսանողի 1 կիսամյակ ուսումնառություն Օուլուի համալսարանում:

4,8 Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված SKLAD առցանց վերապատրաստման դասընթացներին մասնակցություն /թվով 4 դասընթաց/,

4,9– ՌԴ-ի «Со-единение» չտեսնող-չլսողների աջակցության հիմնադրամի կողմից մագիստրոսների թեզերի համատեղ ղեկավարում,2 դասախոսի մագիստրոսի կրթական ծրագրի 1 ուսանողի և 1 հայցորդի ներգրավմամբ ,

5,1 Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման, բովանդակային բարելավման ուղղությամբ ֆակուլտետում /այդ թվում յուրաքանչյուր ամբիոնում/ ձևավորվել էաշխատանքային խումբ, որում ընդգրկված են ֆակուլտետի դեկանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալը, երկու ամբիոնների վարիչները և ամբիոնների որակի պատասխանատուները:

5,2 Իրականացվել է Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետում գործող Բակալավրի կրթական 4 ծրագրերի և մագիստրոսի կրթական 8 ծրագրերի վերանայում և ելքային վերջնարդյունքների համապատասխանեցում ՈՒՇ-ի պահանջներին

5,3 Բակալավրի կրթական ծրագրի Օլիգոֆրենոմանկավարժություն, Սուրդոմանկավարժություն և Տիֆլոմանկավարժություն մասնագիտացումների փոխարեն միասնական նոր ,,Հատուկ մանկավարժություն,, մասնագիտացման մասնագիտական կրթական ծրագրի մշակում :

6,1 Քաղաք Երևանի և մարզային հանրակարթական դպրոցների ավագ դասարանցիների շրջանում ֆակուլտետի մասնագիտացումների լուսաբանմանն ուղղված աշխատանքների կազնակերպում և անցկացում թղջ տարվա ընթացքում:

6,2Բժշկական ուսումնարանի և քոլեջի ուսանողների շրջանում ֆակուլտետի մասնագիտացումների լուսաբանմանն ուղղված աշխատանքների կազնակերպում:

6,3Ֆակուլտետի ֆեյսբուքյան էջով ֆակուլտետի մասնագիտացումների լուսաբանմանն ուղղված աշխատանքների կազնակերպում,ՀՊՄՀ-ի կողմից նկարահանվող, մասնագիտացումները լուսաբանող Հաջողության բանաձև հաղորդաշարի տարածում, տեսանյութերի, բացատրական տեքստերի տեղադրում

6,4 Ավագ դպրոցի աշակերտների համար ,,բաց դռների օր,, միջոցառման կազմակերպում ՀՊՄՀ-ում

7,1Ուսանողների ներգրավում գիտահետազոտական տարբեր ծրագրերում, ուսանողների հետ համատեղ հոդվածների տպագրում

7,2Ուսանողների շրջանում Օտար լեզուների իմացության կարևորում

7,3Ուսանողական խորհրդի ներգրավում ֆակուլտետի ուսումնադաստիարակչական գործընթացում

7,4 Ուսանողական խորհրդի ներգրավում կուրսերում դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման գործընթացում, առկա խնդիրների համատեղ քննարկում, հաղթահարման ուղիների համատեղ հաղթահարում

8,1 Գործատուների ներկայացուցիչների ներգրավում ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովներում

8,2գործատուների ներգրավվածություն ֆակուլտետի խորհրդի կազմում

8,3Գործատուների ներգրավվում մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման գործընթացում՝ ապահովելով դրանց համադրելիությունը աշխատաշուկայի պահանջներին

8,4Գործատուների ակտիվ մասնակցություն ֆակուլտետում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, կլոր սեղան-քննարկումներին

8,5 Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետում առկա շրջանավարտների բազայի տրամադրում գործատուներին ըստ բնակության մարզերի

9,1 Կամավորական աշխատանք իրականացնող ուսանողների գրանցում էլեկտրոնային բազայում

9,2 Ակտիվ համագործակցություն այն կառույցների հետ, որտեղ պահանջվում են կամավորական աշխատանք իրականացնող ուսանողներ

9,3 Կամավորական աշխատանքի արդյունքում ձևավորված ժամաքանակի հիման վրա համապատասխան միավորի տրամադրում ամփոփիչ ատեստավորման քննությանը:

9,4 Ուսանողների շրջանում քննարկումների կազմակերպում՝ կամավորական աշխատանքի խթանման և կարևորման նպատակով

10,1 Աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն

10,2Օլիգոֆրենոմանկավարժություն, Սուրդոմանկավարժություն, Տիֆլոմանկավարժություն մասնագիտացումներում դիմորդների քանակի նվազման պատճառների ուսումնասիրություն և վերլուծություն 10,3 ,Ելնելով վերը շարադրվածից ՝ ,,Օլիգոֆրենոմանկավարժություն,, ,,Սուրդոմանկավարժություն,, , ,,Տիֆլոմանկավարժություն,, մասնագիտացումների փոխարեն բակալավրի կրթական ծրագրում նոր ,, Հատուկ մանկավարժություն,, մասնագիտացման կրթական ծրագրի ձևակերպում:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սիրանուշ Գևորգի Կարապետյան Ուսումնական գծով դեկանի տեղակալ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Արմենի Կիրակոսյան Գիտության և միջազգային համագործակցության հարցերի գծով դեկանի տեղակալ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Սերգեյի Մուրադյան Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ստեփան Վաղինակի Գրիգորյան Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյան Ֆակուլտետի կառավարման համակարգը ապահովում է կանոնակարգված գործընթաց և ունի ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: ֆակուլտետի ղեկավարությունը հիմնվելով նորմատիվային ցուցանիշների վրա՝ կազմակերպել և իրականացրել է վարչական աշխատանակազմի լիազորությունների, պարտականությունների հստակեցում՝ ելնելով յուրաքանչյուրի աշխատանքային ծավալից: Ֆակուլտետի կառավարման գործընթացում լայնորեն ներգրավվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ուսանողները, գործատուները: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը հիմնվելով իր ռազմավարական ծրագրում սահմանված նպատակներին, խնդիրներին, իրականացրել է միջոցառումներ: Արդյունքում քննարկվել են իրականացված միջոցառումները, հաշվի են առնվել առաջարկությունները, վերլուծությունները, կարծիքները, որոնք նաև հիմք են հանդիսացել գործողությունների գնահատման համար և հնարավորություն են տվել մշակել հետագա գործողություններ՝ ուղղված գործընթացի բարելավմանը:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Ֆակուլտետը ներկայումս սպասարկում է բակալավրի 4 մասնագիտական կրթական ծրագիր և մագիստրոսի 8 մասնագիտական կրթական ծրագիր: Բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը 2022 վերանայվել և լրամշակվել են հաշվետու ժամանակահատվածում: Մասնավորապես մասնագիտական կրթական ծրագրերում վերանայվել և խմբագրվել են ուսումնառության ելքային վերջնարդյունքների ձևակերպումները, որոնք էլ իրենց դրսևորումն են գտել նաև առարկայական նկարագրերում և ուսումնական նյութերում: Մասնագիտական կրթական ծրագրերի լավարկման շրջանակներում ՀՊՄՀ-ի կողմից իրականացվել են վերապատրաստման դասընթացներ, որտեղ հանգամանորեն ներկայացվել և վերլուծվել են հիմնական մոտեցումները: Այս համատեքստում ֆակուլտետի 2 ամբիոնների որակի պատասխանատուների կողմից պարբերաբար մշտադիտարկման են ենթարկվել վերանայված մասնագիտական կրթական ծրագրերը և դիտարկվե է դրանց համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և որակավորումների ազգային շրջանակին: 2022 թվականին բակալավրի կրթական ծրագրի Օլիգոֆրենոմանկավարժություն, Սուրդոմանկավարժություն և Տիֆլոմանկավարժություն մասնագիտացումների փոխարեն իրականացվեդ է միասնական նոր ,,Հատուկ մանկավարժություն,, մասնագիտացման մասնագիտական կրթական ծրագրի մշակում :
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ֆակուլտետում հաշվետու տարում աշխատանքներ են իրականացվել գնահատման մեթոդների և չափանիշների հստակեցման և բարելավման ուղղությամբ, գնահատման *մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա:* *Գնահատվում են ուսանողի՝* *ա) գիտելիքը,* *բ) ունակություններն ու կարողությունները,* *գ) ինքնուրույնությունը և ակտիվությունը:* *Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը:* *Գնահատման նպատակով կիրառվում են գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ):* *Հետազոտական աշխատանքների (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական թեզ) գնահատումն իրականացվում է նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:*

Գնահատման ընթացքում կիրառվում է փառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների: *Գրագողության կանխարգելման նպատակով պարտադիր է համարվում մասնագիտական գիտական աղբյուրների* հղումների առկայությունը, թեստերի կազմումը Google Forms համակարգչային թեստավորման ձևանմուշով:
Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1, Ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության խթանում(ֆակուլտետի դասախոսական ներուժի միջոցով ռուսերեն և անգլերեն լեզուներով մասնագիտական քննարկումների պարբերաբար կազմակերպում): 2.Դասախոսների շրջանում օտար լեզուների գիտելիքների կատարելագործման նպատակով ՀՊՄՀ-ի կողմից համապատասխան դասընթացի մասնակցություն 3.Միջազգային գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվության տարածում ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում, մասնակցության խթանում, ձեռքբերված փորձի փոխանակում, նոր կապերի ամրապնդում 4.Ուսանողների շրջանում միջազգային փորձի ձեռքբերման կարևորում, հաջողված փորձերի վերլուծություններ, դրական կողմերի և հնարավորությունների բացահայտում և մեկնաբանում:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	156
	հեռակա	124
Մագիստրոսի	առկա	92
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	Ազատված իր դիմումի համաձայն	1 առկա բակալավր կրթական ծրագիր

		1 հեռակա բակալավր կրթական ծրագիր 1 մագիստրոսի կրթական ծրագիր	
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը		11
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը		3

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Ֆակուլտետի ուսանողների հավաքագրման մեխանիզմներն իրականացվում է ՀՀ կառավարության հաստատած ընդունելության կարգով, ԿԳՄՍ նախարարության հրամանով հաստատված ընդունելության կանոնների համաձայն, ինչպես նաև բուհում սահմանված կարգով: Ֆակուլտետի ուսանողների թվի ցածր լինելը մեծամասամբ պայմանավորված է ՀՀ-ում դիմորդների թվի նվազումով: Այս ուղղությամբ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը շարունակաբար ակտիվ իրականացնում է մասնագիտական իրազեկումներ մայրաքաղաքի և մարզերի միջնակարգ և ավագ դպրոցներում՝ դրանով իսկ էլ ավելի կարևորելով և ամրապնդելով բուհ-դպրոց կապը, համագործակցությունը: Սահմանվել են <<Ֆակուլտետային բաց դռների օրեր>>, որի ընթացքում աշակերտներին ծանոթացնում ենք բուհի, ֆակուլտետի պայմաններին, անցկացվում են բաց դասեր, քննարկումներ, այցելություններ բուհի թանգարան, գրադարան: Դիմորդներին տեղեկատվություն է տրամադրվում բուհի պաշտոնական կայք էջի, <<Հաջողության բանաձև>> հաղորդաշարի, ֆակուլտետի և ամբիոնների Facebook-յան էջերի միջոցով, ինչպես նաև ֆակուլտետի ուսանողական խորհրդի ուսանողների միջոցով:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Հաշվետու տարում ֆակուլտետում բոլոր հեռացումները եղել են ակադեմիական պարտքերի պատճառով, 11ուսանողից 9-ի դեպքում առկա է եղել նաև ուսման վարձի պարտք: Վերականգնվող 3 ուսանողներն էլ նպատակադրված են ավարտին հասցնելու բուհական կրթությունը:

Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:	
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:	
Բակալավր	14

Մագիստրոս		17
Ընդհանուր		31
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1	«Մտագրոհ» ինտելեքտուալ խաղ-մրցույթ «Շիրակացու ճեմարան» միջազգային կրթահամալիրում նվիրված ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառում /հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ, ՀՊՄՀ-ի բոլոր ինը ֆակուլտետներից ուսանողներ, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարան, Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան Տեսողության խանգարում ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի աշակերտներ/ /25. 02. 2022թ. / https://aspu.am/hy/content/mtagroh_shirakacu_chemaran_mijazgayin_krtahamalirum/#sthash.YxsqVdHJ.dpbs	67
2	IFES հայաստանյան գրասենյակի տնօրեն Ժերոմ Լեյրոնի կողմից սեմինար–քննարկում «Մատչելիություն և քաղաքական ներառում» թեմայով /28. 03. 2022/ https://aspu.am/hy/content/mankavarzhakanum_er_zherom_leyrony/#sthash.vJbz2FHQ.dpbs	52
3	«Ներառականությունը վերջնարդյունք չէ, այլ գործընթաց» աշխատաժողով /01. 07. 2022/ https://aspu.am/hy/content/nerarakanutyuny_verjnardyunq_che_ayl_gortsyntac/#sthash.rjZROrZW.dpbs	48
4	«Ճախրուկ» միջազգային երաժշտական փառատոն /05. 09. 2022/ https://aspu.am/hy/content/masnakcecin_mijazgayin_paratoni/#sthash.0iNcLUwX.dpbs	12
5	«ԿԱՊԿ ունեցող անձանց սոցիալական հարմարավողականության հիմնախնդիրները» աշխատաժողով /20. 10. 2022/ https://aspu.am/hy/content/qnnarkvecin_kapku_socialakan_harmaravoghakanutyan_himnakhndirnery_/#sthash.M3LPhJNX.dpbs	67

6	Մասնագիտական իրազեկման աշխատանքներ հանրության շրջանում, այցելություններ մայրաքաղաքի և մարզերի ավագ և միջնակարգ դպրոցներ	13
7	«Ժպտա և ջերմացրու աշխարհը» հաշմանդամների միջազգային օրվան նվիրված բարեգործական միջոցառում Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանում /03. 12. 2022/	23
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	Обогащение словарного запаса у детей с нарушениями слуха в процессе билингвального обучения – армянского и русского языкам. Научно-теоретический журнал <<Наука и образование сегодня>>N3 (72),май 2022г., г.Москва.	Մալումյան Տաթև Մանուկյան Անահիտ /մ.գ.թ.դոցենտ/
2	Исследование процесса сотрудничества специалист-родитель-ребенок с нарушением слуха в условиях онлайн-обучения. <<Проблемы педагогики>> N3(71), май 2022, г.Москва.	Կիրակոսյան Շողիկ Մանուկյան Անահիտ/մ.գ.թ,դոցենտ/
3	Analysis of parental awareness regarding the role of art therapy in the development of children with complex multiple disabilities. INTERNATIONAL SCIENCE JOURNAL , Armenian Journal of Special Education, p.88-95, 2022. DOI: https://doi.org/10.24234/se.v5i1.289 Crossref Google scholar DOAJ World Cat Armenian	Գաբրիելյան Ամալյա Մուրադյան Սվետլանա /մ.գ.թ,դոցենտ/
4	Применение мандалотерапии в коррекционно-развитой работе с детьми с нарушением слуха. г. Переяслав-Хмельницкий / Украина, INTERNATIONAL SCIENCE JOURNAL. с.180-184, 2022. GoogleScholar https://scholar.google.com.ua/citations?user=JP57y1kAAAAJ&hl=uk Бібліометрика української науки http://nbuviap.gov.ua/bpnu/index.php?page_sites=journals Index Copernicus http://journals.indexcopernicus.com/++++,p24785301,3.html	Բարսեղյան Լիանա Մուրադյան Սվետլանա /մ.գ.թ.դոցենտ/
5	Խմբային պարապմունքների կիրառման առանձնահատկությունները աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման լոգոպեդական աշխատանքում: Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-3 (43) 2022. Scientific journal «KPO-SCIENCE» Issue №12-2 (43) 2022.	Մելոյան Անուշ Հովյան Գոհար /մ.գ.թ.դոցենտ/

6	Ընթերցանության ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների ընտրության նպատակները դիսլեքսիայի հաղթահարման գործընթացում: Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-2 (42) 2022. Scientific journal 3 «KPO-SCIENCE» Issue №12-2 (42) 2022.	Շահբազյան Անի Հովյան Գոհար /մ.գ.թ.դոցենտ/

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականությունը կրթական ծրագրեր, աշխատանքային համապատասխան գործունեություն ծավալելու համար համապատասխան որակավորում ունեցող մասնագետների ընտրությունն է: Նախապես հաստատվել է տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները, հաստատվել է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետները: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ դասախոս, գիտությունների թեկնածուներ, ասիստենտ, դոցենտ, դոկտոր, պրոֆեսոր: Ֆակուլտետի դասախոսների 89,2 %-ն ունի գիտական կոչում և աստիճան: Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը բաղկացած է 38 անձից, որից 6-ը՝ համատեղող: Վերոնշյալ ընդհանուր թվակազմից 4-ը պրոֆեսոր է, որից 2-ը մանկավարժական գիտությունների դոկտոր, 20 դոցենտ, 6 գիտությունների թեկնածու, 4 ասիստենտ, իսկ 4-ը դասախոս: Ֆակուլտետի գիտական աստիճան ունեցող բոլոր դասավանդողները ունեն ԺԳ.00.03 կամ Ժգ.00.01 թվանիշը, որը հնարավորություն է տալիս թողարկել ֆակուլտետի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերով(4 բակալավրի կրթական ծրագիր, 8 մագիստրոսի կրթական ծրագիր) շրջանավարտներ՝ ՈԱԾ-ի պահանջներին համապատասխան: Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 40-45 տարեկանը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմն իր որակավորումներով, մասնագիտական պատրաստվածությամբ, գիտական գործունեությամբ և գիտական կոչումներով համապատասխանում է ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի առաջադրված նպատակներին: Միևնույն ժամանակ վստահաբար կարող ենք փաստել, որ ֆակուլտետում դասավանդող մասնագետների հենքային կրթությունը համապատասխանում է դասավանդվող դասընթացների ուղղվածությանը: Դասախոսական կազմը անհրաժեշտության դեպքում համալրվում է նախապես հայտարարված մրցույթով:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու տարում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել իր հիմնական ռազմավարական ուղղություններին համապատասխան: Կատարվել են գիտահետազոտական ուսումնասիրություններ ներառական կրթության կազմակերպման խնդիրների վերլուծության, ԿԱՊԿ ունեցող անձանց հոգեբանամանկավարժական աջակցության հիմնախնդիրների շուրջ: Հետազոտությունների արդյունքներն արտացոլվել են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրված գիտական հոդվածներում և ուսումնամեթոդական ձեռնարկներում, ինչպես նաև միջազգային և հանրապետական գիտաժողովներին, սեմինարներին, կլոր սեղան-քննարկումներին ներկայացված զեկույցներում:

Ֆակուլտետի գիտահետազոտական ուղղությունները տարբեր են և մասնավորապես ներառում են հատուկ հոգեբանության, հատուկ մանկավարժության, ներառական կրթության, հանընդհանուր ներառականության համատեսքստում, զարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող անձանց կրթության բնագավառում տարվող հետազոտական աշխատանքներ: Վերը նշված ուղղություններով իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ներառվում են ուսանողներին տրամադրվող ուսումնասական նյութերում:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել է 31 հոդված, որից 6-ը՝ ուսանողների հետ համատեղ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	БГПУ	РИНЦ	2
2	Актуальные научные исследования в современном мире // Журнал - г. Переяслав-Хмельницкий, Украина	РИНЦ Google Scholar Index Copernicus	5

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Scientific journal «KPO-SCIENCE»	РИНЦ	2
22	OBM Neurobiology USA	Google Scholar Crossref	1

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ

1	Armenian Journal of Special Education Scientific Methodological Journal	Google Scholar Crossref DOAJ /Directory of open access journals/	8
2	WISDOM	ISSN 1829-3824	1

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում: (տեքստը այստեղ)

Ֆակուլտետը կարևորել է արտասահմանյան համալսարանների հետ գիտահետազոտական ծրագրերի իրականացումը, որի շրջանակներում համագործակցություն է իրականացվել Չեխիայի Պորտուբիցե համալսարանի, Նովոսիբիրսկի պետական մանկավարժական համալսարանի հետ, ինչպես նաև մասակություն է ունեցել ԱՄՆ–ի Պեռկինս տեսողության և զարգացման բարդ խանգարումներ ունեցող միջազգային ծրագրին:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1,Ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական ուսումնասիրություններ և արդյունքների վերլուծություն գիտաժողովներին զեկույցների և ամսագրերում համահեղինակությամբ հոդվածների տպագրման ձևաչափով

2, Գիտահետազոտական ուսումնասիրությունների արդյունքների արտացոլում մասնագիտական առարկաների ուսումնական նյութերում

3,Հետազոտական հարցերի վերհանում և մասնագիտական առարկաների գործնական դասաժամերին խմբային քննարկում, արդյունքների վերլուծություն

4,Մանկավարժական պրակտիկայի ընթացքում մեթոդիստի կողմից ուղղորդված (մանկավարժահոգեբանական հետազոտությունների կատարում՝ ԿԱՊԿ ունեցող երեխաների հոգեբանամանկավարժական բնութագրի կազմում, դեպքերի վերլուծություն և այլն) հետազոտությունների իրականացում և արդյունքների վերլուծություն

5,Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացման շրջանակներում վերլուծության արդյունքների ներկայացում -քննարկում մասնաիտական սեմինարներին, կլոր սեղան-քննարկումներին:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Ֆակուլտետի ենթակառուցվածքն իր մեջ ներառում է դեկանատ, լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն, հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոն, լսարանային ֆոնդ: Հաշվետու տարում ֆակուլտետը ունեցել է տարածքային տեղակայման փոփոխություն, մասնավորապես 9 հարկանի մասնաշենքից տեղափոխվել է հարակից մասնաշենք: Նշված մասնաշենքում բոլոր լսարանները հագեցած են տեխնիկական միջոցներով, ինչը մեծ կարևորություն ունի ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Պարբերաբար կազմակերպվող քննարկումներն ու զրույցները փաստում և հավաստում են, որ ֆակուլտետի ուսումնական միջավայրից շահակիցների գոհունակության աստիճանը կարելի է գնահատել բավարար:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորումն ու ամրապնդումն իրականացվում է ամբիոնների ուսումնական և գիտական տարեկան հաշվետվությունների հիման վրա: Ֆակուլտետի ամբիոնների վարիչները հաշվետվություններ են ներկայացնում օրացուցային տարվա վերջում և ուստարվա վերջում: Հաշվետվությունների հիմքն են հանդիսանում ֆակուլտետի գործող ռազմավարական ծրագրերը, բարեվարքության կանոնները: Ֆակուլտետի հաշվետվությունը տեղադրվում է բուհի պաշտոնական կայքում: Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ տեղեկատվության, կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի, նորությունների, հայտարարությունների հասանելիության տեսանկյունից կիրառվում են մի շարք միջոցներ, դրանք են՝ ՀՊՄՀ-ի պաշտոնական կայք էջի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի կայք էջ /տեղադրված նյութերը ներկայացված են նաև օտար լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն/ https://aspu.am/hy/page/hatuk_krtutyan_fakultyet/ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ֆեյսբուքյան էջ https://www.facebook.com/profile.php?id=100018879586957&__tn__=%2CdlC-R-R&eid=ARDhkxKcUEsA-vD1_KM7tav7_SIh0w1VT3yO2M2ryq3OWZfTaPJRHaJbrsEocOtq_VZO77thJn8yWpSK&hc_ref=ARQ__HGSMtDAgT4JTS-nx0zpm7XKbv62Og_q4V-ho2n_OjzwgSBJqRejPfiHOfZW7no Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջ https://www.facebook.com/profile.php?id=100003147259082

<<Հաջողության բանաձև>> հաղորդաշար https://www.youtube.com/watch?v=-0y4jsUSnc8

ֆակուլտետի մասնագիտությունները լուսաբանող տեղեկատվական բուկլետներ,

Ֆակուլտետի գործունեության մասին պատմող մի շարք հաղորդումներ, միջոցառումներ, տեսանյութեր, որոնք հեռարձակվում են լրատվական տարբեր միջոցներով, այդ թվում նաև մանկավարժական համալսարան պաշտոնական թերթի միջոցով: Ֆակուլտետի կայք էջում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում մշտապես տեղադրվում են տեղեկատվություններ այն բոլոր միջոցառումների, գիտաժողովների, քննարկումների, նախատեսվող վերապատրաստումների, սեմինարների, ինչպես նաև ուսանողական ակտիվ գործունեության մասին, որոնք նախատեսվում և իրականացվում են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ֆակուլտետի ուսանողների, ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ հանրության շրջանում իրականացրել է հետևյալ միջոցառումները.խորհրդատվական հանդիպումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների և ընտանիքների հետ,

վերապատրաստումներ, տեսագործնական դասընթացներ, գիտաժողովներ, խաղ-մրցույթներ, զարգացման տարբեր խանգարումներ ունեցող անձանց միջազգային օրերին միջոցառումների, ժամանցային ծրագրերի կազմակերպում, որի շրջանակներում ֆակուլտետը համագործակցել է տարբեր կառույցների, հատուկ և ներառական ուսուցում իրականացնող դպրոցների, հասարակական կազմակերպությունների, անհատների, հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների հետ:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
ԱՄՆ–ի Պեռկինս տեսողության և զարգացման բարդ խանգարումներ ունեցող միջազգային ծրագրի շրջանակներում վերապատրաստումների միջազգային ծրագրերին 12 դասախոսի մասնակցություն/, Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարտուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի 6 դասախոսի, 3 բակալավր կրթական ծրագրի ուսանողի այցելություն /արդյունքում համատեղ ձեռնարկի մշակում և տպագրում/, Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված SKLAD առցանց վերապատրաստման դասընթացներին /թվով 4 դասընթաց/, Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Ֆինլանդիայի Օուլու համալսրանի 1 դասախոսի կողմից դասավանդում ՀՊՄՀ-ում և ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի բակալավր կրթական ծրագրի 1 ուսանողի 1 կիսամյակ ուսումնառություն Օուլուի համալսարանում: ՌԴ-ի «Со-единение» չտեսնող-չլսողների աջակցության հիմնադրամի կողմից մագիստրոսների թեզերի համատեղ ղեկավարում առցանց սեմինարներին /մագիստրոսական թեզ, ատենախոսական

աշխատանքների համատեղ ղեկավարում, այդ համատեքստում մասնակցություն առերես և առցանց համատեղ հանդիպում-քննարկումներին 2 դասախոսի, 1 մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողի, 1 հայցորդի մասնակցություն Վերը նշված համագործակցությունների արդյունքում ձեռք է բերվել. 1,Միջազգային փորձի փոխանակում 2,Համատեղ ուսումնամեթոդական ձեռնարկի մշակում 3,Նոր դասընթացի մշակում
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Հաշվետու տարում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի կողմից արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1, Համալսարանի գործընկեր միջազգային կառույցների հետ համագործակցության ակտիվացում 2,Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում արտաքին կապերի ձևավորման և միջազգայնացման կարևորում և անձնական կապերի խթանում 3,Համագործակցության շրջանակներում համատեղ գիտահետազոտական աշխատանքների ծավալում .նոր դասընթացի՝ առարկայական նկարագրի, թեմատիկ տրոհման մշակում և այլն .ուսումնամեթոդական ձեռնարկի մշակում և այլն Վերը նշված աշխատանքների արդյունքները պարբերաբար քննարկվել են և կարելի է այն համարել բավարար (արձանագրություն……)

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:
Ֆակուլտետի որակի ապահովման գործառույթներն իրականացվում են ըստ որակի ապահովման ռազմավարական պլանի, համապատասխան ընթացակարգի: Որակի ապահովման համատեքստում, ֆակուլտետի ամբիոններում ընտրվել են որակի պատասխանատու դասախոսներ, ովքեր մշտապես կատարում են մշտադիտարկում, համակարգում են ամբիոնների ռազմավարական աշխատանքների իրականացման ընթացքը, իրազեկում են ամբիոնների աշխատողներին կրթության որակի բարելավման, չափանիշների ճիշտ ներդրմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ, մասնակցում են ինստիտուցիոնալ հավատարմագրմանն ուղղված գործընթացին, ինչպես նաև ներկայացնում են յուրաքանչյուր տարվա ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքները: Մշտադիտարկման արդյունքները մշտապես ներկայացվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետների նիստերին: Ֆակուլտետում պարբերաբար իրականացվում է առցանց և առերես ձևաչափով հանդիպում - քննարկումներ ՀՊՄՀ-ի կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի աշխատակիցների հետ,

որի ընթացքում բարձրաձայնվում և քննարկվում են ֆակուլտետի որակի ներքին ապահովմանն առնչվող մի շարք հարցեր: Որակի պատասխանատուի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1, Ամբիոնի ռազմավարական աշխատանքների իրականացման համակարգում 2,Կրթության որակի բարելավման և չափանիշների ճիշտ ներդրման վերաբերյալ ամբիոնի աշխատանկիցների իրազեկում 3,Ամբիոնների կրթության որակի բարելավման հետ կապված միջոցառումների իրականացումը Համակարգելով ամբիոնների որակի պատասխանատուների կողմից իրականացված աշխատանքները համակարգվում են ֆակուլտետի կրթության որակի պատասխանատուի կողմից:
Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:
Ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ապահովելու համար կիրառվում է մի շարք մեխանիզմներ. հաշվետվությունների ներկայացում, ՀՊՄՀ-ի կայք-էջում տեղադրվող տեղեկատվությունը ներքին գործընթացների և կանոնակարգերի վերաբերյալ, ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվող ստուգումներ, որի արդյունքները քննարկվում են ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի հետ, իրազեկվածության բարձրացման պարբերական հանդիպումներ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ, որի ժամանակ քննարկվում են կատարված աշխատանքները, առկա խնդիրները, դրանց լուծման հնարավոր տարբերակները: Ֆակուլտետի ամբիոնները համագործակցում են համալսարանի որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ: Լուսաբանում են որակի ապահովման հետ կապված ցանկացած խնդիրները: Նման հանդիպումների միջոցով հնարավոր է դառնում ապահովել դասախոսների անհրաժեշտ և համարժեք ակտիվությունը Google classroom էլեկտրոնային հարթակում՝ արդյունավետ դարձնելով հարթակի կիրառությունը ուսումնական գործընթացում: Նշված հարցերը պարբերաբար քննարկվում են նաև գործատուների հետ կազմակերպվող հանդիպումների ընթացքում, հաշվի են առնվում աշխատաշուկայի պահանջարկը, կատարված առաջարկությունները և դիտարկումները:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ճնշող մեծամասնությունը պրակտիկ գործունեություն է ծավալում հանրապետության կրթական, սոցիալական, բժշկական հաստատություններում, ակտիվորեն մասնակցում է միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների և ձեռք բերած հմտություններն ու փորձը ներդնում են ուսումնական գործընթացում:	Ֆակուլտետի որոշ մասնագիտացումներում /օլիգոֆրենոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն, տիֆլոմանկավարժություն/ դիմորդների թվաքանակի նվազում:
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետում կրթությունն իրականացվում է եվրոպական չափանիշներին համապատասխան ուսումնական պլաններով և ծրագրերով՝ կրթական նորագույն մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառմամբ:	
Ֆակուլտետում մասնագիտական որոշ գործնական ժամեր անցկացվում են մասնագիտական գործունեություն ծավալող համապատասխան կառույցներում, որն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում լիարժեք դարձնել տեսական և գործնական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացումը: Դասավանդող անձնակազմի երիտասարդ տարիք Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ներգրավում գիտահետազոտական գործունեության մեջ	
Հնարավորություններ	Վտանգներ
1Մագիստրոսի կրթական ծրագրերում ոլորտին հարակից նոր մասնագիտությունների ձևավորում:	Ուսանողների թվաքանակի նվազման հետևանքով վերոնշյալ մասնագիտացումների միավորում և առավելապես մարզերում վերոնշյալ մասնագիտացումներով մասնագացումներով կադրերի թվի նվազում:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
2021-2022 ուս տարվա համեմատ (ամբիոնի ծավալը կազմում է 12652ժամ:Այլ ամբիոնից փոխանցված ժամերը՝ 840ժամ: Այլ ամբիոն փոխանցած ունենք 47ժամ: 2021-2022 ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը 13445ժամ է), 2022-2023 ուս տարում ամբիոնի ծավալը կազմում է 13638 ժամ: Այլ ամբիոնից փոխանցված ժամերը՝ 180 ժամ: 2022-2023 ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը 13458 ժամ է:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ուսումնառության արդյունքների, նրանց համապատասխան դասավանդման մոտեցումների և մեթոդների 2022 թվականի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունքները ընդհանուր առմամբ գնահատվում է գոհացուցիչ: Դասախոսական փաթեթների և դասավանդվող նյութերին մեծ ուշադրություն է դարձվել արդիականացմանը, շեշտադրելով մասնագիտական նոր մոտեցումները, սկզբունքները, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, վերջնարդյունքները և Google Classroom Էլեկտրոնային հարթակում աշխատանքների համակարգումը, կատարելագործումը: Հատուկ ուշադրություն է դարձվել տեսական նյութի պարբերաբար արդիականացման գործընթացին, կարևորելով ուսումնառության գործընթացում մասնագիտական նորամուծությունների, նոր սկզբունքների և ապացուցողական բնույթ ունեցող նորագույն հոգեբանամանկավարժական մեթոդների, մոտեցումների ներդրման անհրաժեշտությանը: Նշված ժամանակահատվածում ամբիոնը պարբերաբար կազմակերպել է քննարկումներ, ուսումնական, մանկավարժական, հետազոտական և մանկավարժահետազոտական պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ, իսկ արդյունքների ամփոփումը վկայում է ուսանողների կողմից տեսական գիտելիքների, գործնական հմտությունների, թիմային և հետազոտական աշխատանք իրականացնելու մասին: Առանձնահատուկ շեշտադրվել է այն հանգամանքը, որ հետազոտական և մանկավարժական պրակտիկի վերջնական միավորը կազմում է ամփոփիչ ատեստավորման բաղադրիչներից մեկը: Մասնավորապես կարևորվել է ամբիոնի կողմից Google classroom Էլեկտրոնային հարթակում հանձնարարությունները դիտարկել պարտադիր գնահատման բաղադրիչ, որը կազմում է ընթացիկ ստուգման 20-30%: 2022-2023ուս տարվա բոլոր ԱՈՒՄՓ-ները տեղադրվել են բովանդակային և տեխնիկական վերանայումներից հետո Google classroom էլեկտրոնային հարթակում բացված համապատասխան պանակներում : Օրինակ՝ Նոր առարկայական նկարագրերում ուշադրություն է դարձվել դասընթացի նպատակին, մասնագիտական գիտելիքների իմացությանը, գործնական մասնագիտական կարողություններին, կրթական ծրագրի վերջնարդյունքներին: Թարմացվել են գրականության ցանկը շեշտը դրվելով վերջին հինգ տարիների ընթացքում հայալեզու և օտարալեզու հրատարակված գրականությանը: Ամբիոնի ՊԴԱ-ի կողմից իրականացվել են աշխատանքներ բակալավրիատում <<Հատուկ մանկավարժություն>> նոր մասանագիտական կրթական ծրագրի հայտի ներկայացման ուղղությամբ, ինչը կփոխարինի գործող <<Օլիգոֆրենոմանկավարժություն>>, <<Սուրդոմանկավարժություն>>, <<Տիֆլոմանկավարժություն>> մասնագիտական կրթական ծրագրերը: Դա կնպաստի աշխատաշուկայի պահանջներին, դիմորդների թվի ավելացմանը և միջազգայնացմանը:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ուսումնառության արդյունքներին համապատասխան ամբիոնում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ուսումնառողների գնահատման մոտեցումների վերանայումները և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները: 2022 թվականին ամբիոնը ուղղորդվել է համալսարանում ընդհանուր սահմանված գնահատման բաղադրիչներով՝ համապատասխանաբար քննական և ոչ քննական առարկաների: Մեծ նշանակություն է տրվել այդ սահմանված գնահատման բաղադրիչների չափանիշների վերանայմանը: Ամբիոնի կողմից դասավանդվող յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված միջանկյալ ստուգման ձևերը/գրավոր աշխատանք, թեստավորում, թղթապանակ, ռեֆերատ և այլն/,վերանայվել են համալսարանի պահանջներին համապատասխան: Բացի վերոնշյալ միջանկյալ ստուգումներից ամբիոնը բանավոր ձևով անցկացրել է ամփոփիչ և ընթացիկ ստուգումներ: Անկախ առարկաների բազմազանությունից, այդ չափորոշիչները ստանդարտ են պրոֆեսորադասախոսական կազմի համար: Գնահատման չափանիշները ամբիոնում սահմանված են յուրաքանչյուր գիտելիքների ստուգման ձևին համապատասխան: Ուսումնառողների գնահատման գործընթացում կարևորվել և կարևորվում են՝ ծրագրավորվածությունը, համակարգվածությունը, օբյեկտիվությունը, թափանցիկությունը, խնայողականությունը, թեմատիկությունը, պահանջների նույնականացումը: Ակադեմիական ազնվությունը ապահովելու նպատակով, ամբիոնը, ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացը պայմանական բաժանել է 3 մակարդակի.

Ա.Ակադեմիական կոմպետենտության մակարդակ

բ. Նախորդ ուսումնական տարվա կոմպետենցիաների ձևավորման մակարդակ

գ. Հետազոտական կոմպետենտության կամ արտալսարանային աշխատանքի իրականացման մակարդակ:

Համալսարանի գիտական խորհրդի որոշման արդյունքում հաճախման սահմանված 10 տոկոս բաղադրիչը վերանայվել և դառձել է 5 տոկոս, արդյունքում վերանայվել են առարկայական նկարագրերում այդ բաղադրիչները:

Ամբիոնում դասավադվող մեթոդական ուղղվածություն ունեցող առարկաների գնահատման բաղադրիչները վերանայվել են, ընթացիք ստուգմանն այդ առարկաների շրջանակներով հատկացվել են ամփոփիչ գնահատականից 35-40% : Դրան նպաստեց տվյալ առարկայի վերանայված վերջնարդյունքները, պրակտիկայի առավել կարևորումը ուսումնառության ընթացքում; Գնահատման գործընթացում ներգրավված են ուսանողի համակուրսեցիները, ամբիոնի այլ ներկայացուցիչները, նյութի վերլուծությունը լինի գիտական հենքի վրա:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերի վերլուծություն, իրականացման ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (նաև տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկած հիմնական հարցերը վերաբերում էին կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարմանը և հաստատմանը, ուսումնական, մանկավարժական, հետազոտական և

մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման հարցերին, ամբիոնի հայցորդների ձևակերպման, թեմայի հաստատման , գիտական ղեկավար նշանակելուն, ինչպես նաև հայցորդների հաշվետվության քննարկմանը և ատեստավորմանը: Ամբիոնի յուրաքանչյուր մասնագիտացման ուղղություններով նշանակվել են պատասխանատուներ ՄԿԾ- ների, մագիստրատուրայի և ավարտական աշխատանքների թեմաները վերանայելու ուղղություններով:Կազմակերպվել են արտահերթ ամբիոնի նիստեր մագիստրորսական թեզեր և ավարտական աշխատանքների նախնական նախապաշպանությունից առաջ աշխատանքները քննարկելու նպատակով:

Կուրսային աշխատանքների թեմաների ընտրությունը հետագայում կնպաստի ավարտական աշխատանքների առավել հեշտ կատարմանը, ինքնուրույն աշխատելու կարողությանը , ակադեմիական ազնվությանը,թեմաները համեմատում ենք նախորդ հինգ տարիների թեմաների հետ խուսափելով կրկնություններից, թեմաների ընտրությունը իրականացնում ենք հստակ ավելի նեխ շրջաակներում հաշվի առնելով ուսանողի նախասիրությունը, մագիստրատուրայում ՝աշխատանքի վայրը, մեծ ուշադրություն է դարձվում աշխատանքում առկա հղումների առկայությանը գրականության ցանկում, պարտադիր պահանջներից մեկն է օգտագործված գրականության ցանկում վերջին հինգ տարում հրապարակված աշխատանքներն կազմեն շուրջ 15%:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
ԱՐՁՆ 1. 31.01.2022թ.	1. 2021-2022 ուս տարվա երկրորդ կիսամյակի մեկարկի մասին: 2. Առարկա ուսումնական համակարգի առաջին կիասամյակի քննաշրջանի արդյուքների քննարկում, ամփոփում: 3. 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում: 4. Ընթացիք հարցեր:	Ամբիոնի նիստին հաստատվեց 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը, և թեմատիկ տրոհումները: Ամբիոնի վարիչը՝ ներկայացրեց քննաշրջանի արդյունքերը, ուսանողների հիմնական մասը քննություններին ստացել են դրական գնահատականներ, կան նաև տարբեր պատճառներով քննությանը չներկայացած և անբավարար ստացած ուսանողներ: Նշվեց նաև, որ մեծ ուշադրություն պետք է դարձնեն ուսանողի ինքնուրունության բաղադրիչին: Հաստատել <<Դասընթաց ուսանողի ընտրությամբ>> առարկան, ճշգրտվեց կիսամյակային ԴԱՍ-ուսների քանակի, նրանց որպես դասավանդվող առարկաների անվանումների և բովանդակության հարցերը: Քննարկվեց և հասատվեց ամբիոնի աշխատանքային տարեկան պլանը:

ԱՐՁՆ 2. 24.02.2022թ.	1. Մագիստրատուրա 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին: 2. Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին ընդառաջ իրականացվող միջոցառումների մասին: 3. Ընթացիք հարցեր:	Պրակտիկայի ղեկավարը խոսեց մագիստրատուրա առաջին կուրսերի պրակտիկայի մեկնարկի և ընթացքի մասին, դիտարկվեցին առաջարկություններ: Ամբիոնի վարիչը խոսեց Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանին նվիրված 100 -ամյակի միջոցառումների մասի: Հաստատվեց ամբիոնում իրականացվելիք միջոցառումների գրաֆիկը:
ԱՐՁՆ 3. 30.03.2022թ.	1. Մագիստրատուրա 2-րդ կուրսերի, մագիստրոսական թեզերի, հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների ընթացքի քննարկում, նախապաշպանության գրաֆիկի հաստատում: 2. Պրակտիկայի քննարկում /մագիստրատորւրա 1-ին կուրս ,բակալավր 3-րդ կուրս 3. Ընթացիկ հարցեր	Քննարկվեցին նախնական լսումների արդյուքները, հասատվեց մագիստրատուրա 2-րդ կուրսերի, մագիստրոսական թեզերի, հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշպանության գրաֆիկը: Պրակտիկայի ընթացքը համարվեց գոհացուցիչ:
ԱՐՁՆ 4. 22.04.2022թ.	1. Մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունների ընթացքի մասին 2. Ընթացիկ հարցեր	Մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության:
ԱՐՁՆ 5. 13.05.2022թ.	1. Մագիստրոսական թեզերի և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների պաշտպանությունների մեկնարկի մասին: 2. 2022-2023 ուս. տարվա ընդունելության մասին	Հաստատել մագիստրատրոսական թեզերի և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքերի պաշտպանությունների ժամանակացույցը, հաշվի առնելով ամբիոնի

	3. Ընթացիք հարցեր	լիարժեք պատրաստականությունը գործընթացին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց իրազեկման արդյունքները, ներկայացրեց ընդունելության դիմումների ժամանակահատվածը:
ԱՐՁՆ 6. 22.06.2022թ.	1. Մագիստրատրոսական թեզերի և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյուքների քննարկում, հաստատում: 2. 2022-2023 ուս տարվա ծավալի և ծանրաբեռնվածության մասին: 3. Ընթացիք հարցեր:	Մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների քննարկում. 2022-2023 ուսումնական տարվա ՊԴԱ տարեկան ծանրաբեռնվածության նախապատրաստական աշխատանքերի քննարկում:
ԱՐՁՆ 7. 29.08.2022թ	1. 2022-2023 ուստարվա մեկնարկի մասին: 2. 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում: 3. Ընթացիք հարցեր:	ՊԴԱ տարեկան ծանրաբեռնվածության ներկայացում: 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները տեղադրել Google classroom Էլեկտրոնային հարթակում բացված պանակներում ըստ սահմանված ժամանակացույցի : Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Հաստատել <<Դասընթաց ուսանողի ընտրությամբ>> առարկան, ճշգրտվեց կիսամյակային ԴԱՍ-ուսների քանակի, նրանց որպես դասավանդվող առարկաների անվանումների և բովանդակության հարցերը:

ԱՐՁՆ 8. 27.09.2022թ.	1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում: 2. Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին: 3. Ընթացիք հարցեր:	Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները քննարկվեցին ամբիոնի գիտական ղեկավարների հետ ովքեր պատասխանատվություն են կրում ընտրված թեմաների շրջանակներում իրականացվող պատշաճ հետազոտությունների իրականացման, ինչպես նաև՝ կրկնություններից խուսափելու համար: Որոշվեց հաստատել մագիստորոսական թեզերի և ավարտական աշխատանքերի թեմաները և ներկայացվեց ֆակուլտետի խորհուրդ: Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկում իրականացրել է ամբիոնի որակի ապահովման պատասխանատուն՝ արդյունքները համարվեց բավարար, հատկացվեց ժամանակ թերությունները ողղելու համար:
ԱՐՁՆ 9 29.09.2022թ.	1. ՀՊՄՀ- 100- ամյակի առիթով պարգևատրումների ներկայացում. 2. Ընթացիք հարցեր:	Քննարկվեցին և հաստատվեցին ՀՊՄՀ -100 ամյակի առիթով ներկայացված դասախոսների թեկնածությունները:
ԱՐՁՆ 10. 01.11.2022թ.	1. Ամբիոնի Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքների մասին քննարկում. 2. Բակալավր երկրորդ, երրորդ և մագիստրատուրա երկրորդ կուրսերի պրակտիկայի ընթացքի քննարկում 3. Ընթացիք հարցեր	Ամբինոի որակի պատասխաանտու ներկայացրեց Google classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման արդյունքները: ԱՈՒՄՓ-ները բովանդակային և տեխնիկական վերանայումներից հետո տեղադրվել են Google classroom էլեկտրոնային հարթակում բացված համապատասխան պանակներում, գործընթացը շարունակական է, արդյունքները համարել բավարար: Պրակտիկայի ղեկավարը ներկայացրեց պրակտիկայի ընթացքի մասին, վերհանված խնդիրները հիմնականում վերաբերվում էր մագիստրատուրայի ուսանողների դասերի վարման ընթացքին , բակալավրիատի երկրորդ և երրորդ կուրսերում պրակտիկայի ընթացքը

		գոհացուցիչ է: Արդյունքները համարել բավարար:
ԱՐՁՆ 11. 06.12.2022թ.	1. Մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և բակալավրիատ առկա 4-րդ կուրսերի, հեռակա 5-րս կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: 2. Ամբիոնի հայցորդների հաշվետվության քննարկում և հաստատում: 3. Ընթացիք հարցեր:	Ամբիոնի՝ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գիտական ղեկավարները ներկայացրեցին իրենց ավարտական կուրսերի ուսանողների կատարողականությունը և հաշվետու ժամանակահատվածում իրականացրած աշխատանքները: Ներկայացվեցին յուրաքանչյուրի կողմից կատարված աշխատանքները, առկա բաց թողումները: Կատարման ընթացքը համարվեց բավարար: Ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդներ Ա. Ասլանյանին, և Ս. Պետրոսյանին:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային		1	1	1	14	3	2	21
Համատեղող				1	1			2
Ժամավճարային								
Ընդամենը		1	1	1	14	3	2	21

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Առարկայական նկարագրերի ստեղծման շուրջ կատարված աշխատանքների ներկայացումը և վերլուծությունը: Ամբիոնի ուսումնական պլանների փոփոխման արդյունքում ներդրված նոր առարկաների համար համապատասխան դասախոսների կողմից կազմվել են անհրաժեշտ առարկայական նկարագրեր, մնացած բոլոր նկարագրերը հաշվետու տարում վերանայվել են, կատարվել են համապատասխան դիտարկումներ: Վերանայման ընթացքում, բացի բովանդակային փոփոխություններից շեշտը դրվել է նախապայմանի, նպատակի, կոմպետենցիաների և գրականության ցանկի, առարկայական թեմատիկ տրոհման վրա: Բոլոր առարկայական նկարագրերը առկա են ամբիոնում և յուրաքանչյուր դասախոսի կողմից տեղադրված են Google classroom էլեկտրոնային հարթակում: Առանձնահատուկ շեշտադրվել է այն հանգամանքը, որ հետազոտական և մանկավարժական պրակտիկի վերջնական միավորը կազմում է ամփոփիչ ատեստավորման բաղադրիչներից մեկը: Մասնավորապես կարևորվել է ամբիոնի կողմից Google classroom Էլեկտրոնային հարթակում հանձնարարությունները դիտարկել պարտադիր գնահատման բաղադրիչ: 2022-2023ուս. տարվա դասընթացների բոլոր ԱՈՒՄՓ-ները տեղադրվել են բովանդակալի և տեխնիկական կողմերը վերանայելուց և փոփոխելուց հետո:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով

			Հատուկ մանկավարժական տերմինների բացատրական բառարան.Երևան , Ռ.Ն. Ազարյան, Լ.Հ. Սարատիկյան,Ս.Հ . Սվաջյան <<Զանգակ>> հրատ., 2022.- 296 էջ	Արդյունավետ հարմարեցումներ Որակյալ կրթություն Մեթոդական ուղեցույց Ձեռնարկ մանկավարժների համար Սվաջյան Ա. Հ. , Ազատյան Թ. Յու., Բաբայան Լ.Ա., Թադևոսյան Է.Ռ., Հարությունյան Մ.Ռ., Մանուկյան Ա.Տ., Մուրադյան Ս.Վ., Ադամյան Հ. Ա. Օհանյան Հ.Վ. Երևան, 2022, 142 էջ:	
				«Ուսուցչի օգնականի ձեռնարկ» մեթոդական ուղեցույց: Սվաջյան Ա. Հ. , Ադամյան Հ. Ա. , Գարեգինյան Ա. Ա. և այլք, Եր. : Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. , 2022. - 94 էջ	
				Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խաղեր և վարժություններ,	

				Մեթոդական ուղեցույց, Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա. և այլք, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2022, 215 էջ:	

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
27 առցանց	12 առցանց	30 առցանցԱռերես			41 Առցանց Առերես		30 Առցանց Առերես	9 Առցանց Առերես	5 Առցանց Առերես

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի հիմնական գերակա ուղղություններն են:
Ներառական կրթություն /հանընդհանուր ներառականության համատեսքստում
Զարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող անձանց կրթություն :
Այդ համատեքստում ամբիոնի դասախոսները մշտապես իրականացնում են հետազոտական աշխատանքներ վերլուծելով համընդհանուր ներառականաություն համատեքստում առկա խնդիրները հաջողությունները, կապը պահելով համապատասխան հաստատությունների ներկայացուցիչների հետ հաշվի առնելով իրենց փորձի մատուցելով նոր գիտելիքներ, /սեմիներներ, վերապատրաստումներ, քննարկումներ/: Հետազոտության ընթացքը քննարկվում է ամբիոնում իրականացվում են առցանց հանդիպումներ այլ երկրների մասանգետների հետ/ Չեխիա, Պորտուգալիա, Իտալիա, Խորվաթիա, ՌԴ և այլ երկրներ /: Մեծ կարևորություն է տրվել Պերկինս Կոյր և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների միջազգային դպրոցի հետ համագործակցությանը ամբիոնի 6 դասախոսի դասընթացների

մասնակցությանը ինչը հիմք դրեց ամբիոնում մագիստրատուրա 2-րդ կուրսում նոր ընտրովի դասընթացի իրականացմանը և այդ շրջանակներում հետազոտությունների կազմակերպմանը: Ամբիոնի աշխատակիցների կողմից հաշվետու տարում տպագրվել են գիտական հոդվածներ, հետազոտական աշխատանքներ տպագրվել են կոնֆերանսների նյութերի ժողովածուներում՝ այդ թվում միջազգային: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է գիտական սեմինարների: Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի գիտահետազոտական և գիտամեթոդական ուղղությունները վերաբերում են կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարմանը և հաստատմանը, ուսումնական, մանկավարժական, հետազոտական և մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման հարցերին, ամբիոնի հայցորդների ձևակերպման, թեմայի հաստատման, գիտական ղեկավարներ նշանակելուն, ինչպես նաև հայցորդների հաշվետվության քննարկմանն ու ատեստավորմանը: Առաջնային է ամբիոնի գերակա ուղղույթունների ճշգրիտ ընտրությունը և համապատասխան ուղղություններով հետագա կազմակերպչական աշխատաքների պլանավորումն ու կազմակերպումը:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնում հետազոտական գործունեությամբ զբաղվում են ներկա պահին 2 հայցորդ: Ավարտած հայցորդներից 1 պատրաստվում է աշխատանքը ներկայացնել ամբիոն նախնական քննարկմանը և 1 հայցորդ կատարել է աշխատանքի 80% հանձնելու է մասնագիտական քննություն:Աշխատանքների արդյունքները և դրանց վերաբերյալ հայցորդների հաշվետվությունները ներկայացվել և քննարկվել են ամբիոնի նիստերի ընթացքում:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
Դրամաշնորհային Erasmus+ շարժունության ծրագիր	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Erasmus+	—	Թ . Ազատյան Սվ.Մուրադյան Վ. Մարուքյան

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Azatyan Tereza	Brain Interhemispheric Interaction in Children with Mental Disabilities with Spatial Orientation Disorders Armenian Journal of Special Education Scientific Methodological Journal Vol.5 Issue 1 (2022)Yerevan 2022 DOI: https://doi.org/10.24234/se.v5i1	13
Azatyan Tereza	Արդյունավետ հարմարեցում որակյալ կրթություն Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ մանկավարժների համար Երևան-2022 Հայերեն ՀՏԴ https://hmk.am/wp-content/uploads/2022/02/ardyunavet-harmarecumner_vorakyal-krtutyun.pdf	143
Azatyan Tereza	Influence of developmental teaching methods on the regulation of nervous functions in children with intellectual disability and interhemispheric asymmetry of the brain Science for Education Today, vol 12, issue 3 Yerevan2022 DOI:10.15293/2658-6762.2203.06 http://sciforedu.ru	22
Azaryan Robert	Информированность родителей в вопросах воспитания детей с нарушениями умственного развития В международном научно-методическом рецензируемом журнале “Образование в XXI веке”. Ереван, 2022.-N 2, С. 141-146 **DOI: 10.46991/ai.2022.8.174 https://webcache.googleusercontent.com**	5
Azaryan Robert	К проблеме изучения зрительного восприятия у слабовидящих школьников В международном научно-методическом рецензируемом журнале “Образование в XXI веке”. Ереван, 2022.-N 1 (7), С. 130-135 http://webcache.googleusercontent.com	5
Հասմիկ Սերգեյի	Своеобразие мыслительной деятельности умственно отсталых младших школьников Социально- педагогическая поддержка лиц с ограниченными возможностями:Теория и практика Участник 3 Международной научно-практической конференции 2022 июль http://kpni76.ru/pic/userfile/files	4
Lilit Saratikyan	SPEECH THERAPY INTERVENTION AS A WAY FOR MAKING DIFFERENTIAL DIAGNOSES OF COMMUNICATION SKILLS FOR PRESCHOOL CHILDREN WITH SHY BEHAVIOR AND CHILDREN WITH AUTISM. Armenian Journal of Special	16

	Education, 2(2), 79-95. DOI:10.24234/se.2021.4.2.2 https://specedjournal.aspu.am/index.php/se/article/view/277	
Lilit Saratikyan	The necessity of improving information Consulting system of speech therapy support regarding The Stuttering issues in the educational structures. Vol. 6 No. 2 (2022): ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION https://specedjournal.aspu.am/index.php/se/issue/view/13/15	15
Марутян Marine	Взаимосвязь между родительской гиперопекой и развитием детей с особыми образовательными потребностями // Universum: психология и образование : электрон. научн. журн. 2022. 11(101). https://media.foxford.ru/articles/giperopeka-nad-rebenkom	10
Susanna Muradyan	CONTEMPORARY ART VS TOTALITARIAN ART: SEMIOTIC ANALYSIS, Volume 11, Yerevan, ISSN 1829-3824, 3(23) (2022), WISDOM https://arthist.net/archive/37972	11
Marianna Harutyunyan, Araksia Svajyan, Shushanik Antonyan,	Comparative analysis of quantitative indicators of the pedagogical-psychological support teams' activities in Armenia, ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION Scientific Methodological Journal Volume 5 Issue 1, p34-51 https://specedjournal.aspu.am/index.php/se/article/view/285	16
Igor Val Danilov , Sandra Mihailova, Araksia Svajyan	Computerized Assessment of Cognitive Development in Neurotypical and Neurodivergent Children, OBM Neurobiology 2022, Volume 6, Issue 3, doi:10.21926/obm.neurobiol.2203137 , https://www.lidsen.com/journals/neurobiology/neurobiology-06-03-137	
Алина Манукян	Отношение как важнейший фактор, влияющий на эффективность инклюзивного образования. Актуальные вопросы профессиональной подготовки современного учителя начальной школы.Материалы междунарой научной конференции , выпуск 9.Издательство СМОЛГУ, 2022, с.216-225, ISBN 978-5-88018-573-3 http://www.ibe.unesco.org	9
Алина Манукян,	К вопросу об этическом воспитании младших школьников.Аксиологические проблемы педагогики: межвузовский сборник научных трудов. Выпуск 13. Издательство СМОЛГУ, 2022, с.231-238.	7

Надежда Бурнучкова	https://smolgu.ru	
Anna Charchyan, Lilit Karapetyan	OVERVIEW AND ANALYSIS OF THE INCLUSIVE WORKING GROUP ACTIVITY AT THE CHESS RESEARCH INSTITUTE, ASPU, AFTER KH.ABOVYAN (2015-2021), Armenian Journal of Special Education, Scientific- methodical journal, volume 5, issue 1, 2022, pp. 6-17 https://specedjournal.aspu.am/index.php/se/article/view/282	9
Светлана Мурадян Гурген Зурначян	Проблема социально-трудовой адаптации лиц с умственной отсталостью в Республике Армения. г. Переяслав-Хмельницкий / Украина, INTERNATIONAL SCIENCE JOURNAL. с. 46-50, 2022. Google Scholar https://scholar.google.com.ua/citations?user=JP57y1kAAAAJ&hl=uk Бібліометрика української науки http://nbuviap.gov.ua/bpnu/index.php?page_sites=journals Index Copernicus http://journals.indexcopernicus.com/++++,p24785301,3.html	4

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
«Համընդհանուր ներառման մարտահրավերները նախադպրոցական ուսումնական հաստատություններում»	24.01.2022թ. ՀՊՄՀ կլոր սեղան - քննարկում:
<<Հատուկ և ներառական կրթության խնդիրներն ու հեռանկարները>> միջազգային սմինար	18.03.2022թ.
«Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական հարմարվողականության հիմնախնդիրները» խորագրով սեմինար	20.10.2022թ.
<<Ներառականություն և քաղաքացիական կրթություն>> սեմինար	23. 03. 2022թ.
Գիտական սեմինար–քննարկում Մեծ Բրիտանիայի Կիլ համալսարանի դասախոս, նյարդաբան Ստանիսլավ Գլազևսկի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ համատեղ	04. 05. 2022– 05. 05. 2022թ

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական- մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Լ.իլիթ Սարատիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ ՊՈԱԿ. Երևան	2022 հուլիսի-հոկտեմբեր	Հաշմանդամություն ունեցող երեխաների և մեծահասակների ստանդարտացված ֆունկցիոնալ գնահատման կարողությունների որակի բարձրացում
Մանուկյան Անահիտ	SKLAD - онлайн-курс <<Учимся легко: Нейропсихология в детском саду и школе>>	Մոսկվա, 2022, փետրվար-ապրիլ	Հատուկ կրթության գործընթացում նեյրոհոգեբանական մոտեցումների կիրառման կարողություն
Մանուկյան Անահիտ	Интенсив - онлайн-курс <<Научиться легко читать>> на образовательной платформе SKLAD	Մոսկվա, 2022, 27 սեպտեմբեր - 8 հոկտեմբեր	Ն.Ե.Արբեկովայի <<Մտածում եմ, ընթերցում եմ, ընկալում եմ>> հեղինակային մեթոդիկայի հետ ծանոթացում
Լ.իլիթ Սարատիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ ՊՈԱԿ	Երևան, 2022 փետրվար	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ ՊՈԱԿ-ի կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման բաժնի կողմից <<Որդեգիր ընտանիքներին տրամադրվող հոգեբանամանկավարժական աջակցություն>> թեմայով
Susanna Muradyan	Virtual Symposium	September 23-24, 2022	CHILD AND ADOLESCENT MENTAL HEALTH AND NEURODEVELOPMENTAL DISORDERS DEDICATED TO THE MEMORY OF PROFESSOR KONSTANTIN DANIELYAN /Certificate/

Susanna Muradyan	ASPU	September 2021 - June 2022	Cerebral/Cortical Visual Impairment, Trainings organized by Perkins International /USA-Armenia/ /Certificate/
Սուսաննա Մուրադյան	ՀՊՄՀ	Հուլիս 1,2,3,4, 2022	EduArmenia 2022 Համահայկական գիտակրթական աշխատաժողովի «Ներառական կրթություն» բաժնի խոսնակ /Certificate/
Սվետլանա Մուրադյան	SKLAD - онлайн-курс <<Учимся легко: Нейропсихология в детском саду и школе>>	Մոսկվա, 2022, փետրվար-ապրիլ	Վկայական
Ալինա Մանուկյան	«Երեխաների և դեռահասների հոգեկան առողջությունը և զարգացման խանգարումները» վիրտուալ սիմպոզիում	Երևան, Սեպտեմբերի 23-24, International Center for Professional Development (ICPD)	Վկայական
Ալինա Մանուկյան	<<Կրթական գնահատում-Հաջողության ճանապարհային քարտեզ>> Perkins միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված	ՀՄԿ	Վկայական

	վերապատրաստում		
Ալինա Մանուկյան	SKLAD - онлайн-курс <<Учимся легко: Нейропсихология в детском саду и школе>>	Մոսկվա, 2022, փետրվար-ապրիլ	Վկայական
Ալինա Մանուկյան	«Միջանձնային հաղորդակցություն և համայնքի ներգրավվածություն ներառական կրթության համար»	ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ	Վկայական
Լիլիթ Կարապետյան Վերա Մարուքյան	SKLAD - онлайн-курс <<Учимся легко: Нейропсихология в детском саду и школе>>	Մոսկվա, 2022, ապրիլ-հունիս	Վկայական
Լիլիթ Կարապետյան	«Երեխաների և դեռահասների հոգեկան առողջությունը և զարգացման խանգարումները» վիրտուալ սիմպոզիում	Երևան, Սեպտեմբերի 23-24, International Center for Professional Development (ICPD)	Վկայական,7 ՇՄՋ կրեդիտ ԱՆ-ի կողմից, բանախոս
Լիլիթ Կարապետյան	«Սխեմա-թերապիա» վերապատրաստմա դասընթաց	Երևան, մայիս ՄՀՐ	Վկայական
Լիլիթ Կարապետյան	ASPU	September 2021 - June 2022	Certificate

	Cerebral/Cortical Visual Impairment, Trainings organized by Perkins International /USA-Armenia/		
Լիլիթ Կարապետյան	Հայ- ֆրանսիական II գիտաժողով, ՀՀԱ, «Տրավմա և տոկունություն»	Երևան, հոկտեմբեր 7-8	Վկայական, ՇՄՋ կրեդիտ ԱՆ-ի կողմից
Լիլիթ Կարապետյան	«Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» գիտաժողով, ՀՍԱ	Երևան, նոյեմբերի 25	Վկայական, ՇՄՋ կրեդիտ ԱՆ-ի կողմից
Ազատյան Թերեզա Մուրադյան Սվետլանա Մուրադյան Սուսաննա Կարապետյան Լիլիթ. Մարության Մարինե Հարությունյան Ինեսսա Սարգսյան Հասմիկ	Պեռկինս չտեսնող և զարգացման բարդ խանգարումներ ունեցողների միջազգային դպրոց	2022 հունիս	Հավաստագիր
Դաշյան Անահիտ	SKLAD - онлайн-курс <<Учимся легко: Нейропсихология в детском саду и школе>>	Մոսկվա, 2022, փետրվար-ապրիլ	Վկայական

Դաշյան Անահիտ	SKLAD - онлайн-курс ,, Смешанное обучение. <<BLENDED LEARNING >>	Մինսկ, 2022 հունիս-օգոստոս	Վկայական

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Манукян Анаит	Малумян Татевик	Обогащение словарного запаса у детей с нарушениями слуха в процессе билингвального обучения – армянского и русскому языкам https://cyberleninka.ru	Научно-теоретический журнал <<Наука и образование сегодня>>N3 (72),май 2022г., г.Москва
Манукян Анаит	Киракосян Шогик	Исследование процесса сотрудничества специалист-родитель-ребенок с нарушением слуха в условиях онлайн-обучения https://webcache	<<Проблемы педагогики>> N3(71), май 2022, г.Москва
Հաշվետու տարում դպրոցներ կատարվել է 4 այց՝ Մ.Մ. եղել է Կոտայքի մարզի մի շարք դպրոցներում, Ս.Է. Նուրալովան այցելել է Երևանի թիվ 195 դպրոց, Կ.Խանյանը եղել է Դիլիջանի ավագ դպրոցում:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Ռ.Թադևոսյան, Ի.Սարկիսյան	Վիկտորինա ռուս գրականությունից	15.04.2022
Մեթոդական	-	-	-
Դաստիարակչական	-	-	-

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:

Ամբիոնը իրականացնում է որակի պատասխանատուի համակարգմամաբ, փոխգործակցային մասնագիտական դասալսումների շրջանակներում առարկայական ծրագրերի և ԱՈՒՄՓ-ների վերանայում՝ ուսումնական պլանում կատարվող փոփոխություններին համապատասխանեցում: **(տես՝ Արձ. №7, 03.02.2022, Արձ. №1, 26.08.2022)**:

Դասավանդման որակի ապահովման նպատակով՝ դասալսումների (1.ամբիոնի վարիչի և որակի պատասխանատուի կողմից, 2. փոխադարձ) կազմակերպում և դրանց քննարկումները ամբիոնի նիստերում **(տես՝ Արձ. №8, 21.02.2022, Արձ. №10, 18.04.2022, Արձ. №2, 12.09.2022, Արձ. №5, 30.11.2022)**:

Ամբիոնի դասախոսների մեթոդական աշխատանքների քննարկում ամբիոնի նիստերում **(տես՝ №1, 26.08.2022, Արձ. №3, 10.10.2022)**: Ամբիոնը կատարում է նաև ուսանողների հետ համատեղ դասալսումներ: Մագիստրոսական ծրագրի շրջանակներում, պրակտիկայի ընթացքում իրականացված դասալսումների քննարկում ուսանողների կողմից**(տես՝ №5, 30.11.2022)**:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Հաշվետու տարում ամբիոնը ներքին և արտաքին շահակիցներին ներգրավել է իր ուսումնական, գիտական և հետազոտական գործընթացներում: Ամբիոնի միջազգային գիտաժողովի աշխատանքներին մասնակցել են ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակիցները, Բրյուսովի անվան ԵՊԼՀ և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ տարբեր ամբիոնների դասախոսները: Ռ.Թադևոսյանը ԵՊՀ-ում և Հայ-Ռուսական համալսարանում եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ: Ք. Բեջանյանը Երևանի Մ. Խորենացու անվան համալսարանում եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ: Ի.Սարկիսյանը ԵՊՀ-ում եղել է պետական քննական հանձնաժողովի անդամ: Р. Татевосян в рамках конкурса на лучшую магистерскую диссертацию РАУ представила рецензию независимого эксперта на работу **«Жанр семейной хроники в творчестве Людмилы Улицкой»**. Ս.Նուրալովան որպես ԲՈԿ-ի փորձագետ ներկայացրել է թեկնածուական ատենախոսության “20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությունը (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Հոսեյնի)” կարծիք: Ք. Բեջանյանը ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և համեմատական գրականագիտության բաժնի վարիչն է: Համագործակցություն մասնագիտական կրթական համայնքների հետ, Ռուսաստանի Դաշնային գործակալություն (Россотрудничество), մասնագիտական համայնք (պաշտպանական խորհուրդներ, մասնագիտական ընկերակցություններ, գիտական հանդեսներ): Ռ.Թադևոսյանը պաշտպանական խորհրդի անդամ է – Ժ.01.03.: Ամբիոնը տվել է թեկնածուական թեզի արտաքին կարծիք: **(Տես՝ Արձ. № 6 08.12.2022**)

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն

Որակի դիտարկման և ապահովման նիստեր	Ի.Վ.Սարկիսյան	Մշտադիտարկման արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերի ժամանակ: (Տես՝ Արձ. №4 19.10.2022, Արձ. № 5 08.12.2022)

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• 1 բ.գ.դ. պրոֆեսոր, 1 բ.գ.թ. պրոֆ.պ, 5 բ.գ.թ., դոցենտ: • ՊԴԱ-ի բարձր որակավորում: • Գիտական աշխատանքների մակարդակն ու ծավալը: •Միջազգային գիտաժողովներում և պարբերականներում դասախոսների ընդգրկվածությունը: •Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն: •Միջազգային գիտաժողովներում ուսանողների ընդգրկվածություն - 2:	•Ամբիոնի ՊԴԱ-ի միջին տարիքը:
Հնարավորություններ	Վտանգներ
•Ամբիոնի գիտական ներուժի առավել ակտիվ ներգրավում՝ ՀՊՄՀ միջազգայնացման և հավատարմագրման գործընթացում: •Գիտական համագործակցության ընդլայնում մասնագիտական համայնքում՝ տեղի և միջազգային: •Միջազգային գիտական կապերի ընդլայնում:	•Ուսուցչի մասնագիտության գրավչության նվազումը: •Բանասիրության, մասնավորապես ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության հանդեպ հետաքրքրության նվազումը հասարակության մեջ: •Գրականության դասավանդման ժամաքանակի նվազեցումը դպրոցական ծրագրերում:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Կադրային ներուժը 2021-2022թ.՝ 1 բ.գ.թ.,մ.գ.դ., պրոֆեսորի պ., 2 բ.գ.թ. դոցենտ, 12 մ.գ.թ., դոցենտ, 1 մ.գ.թ.,ասիստենտ, 7 դասախոս,1 դասախոս գտնվում է ֆիզ. արձակուրդում: Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2021 - 2022 ուս.տարվա ուսումնական աշխատանքների ծավալային ժամաքանակը կազմել է 18146 ժամ: Թափուր - 478 ժամ, **17668** ժամը բաշխվել է ամբիոնի դասախոսների միջև: 2021-2022 ուստարվա 1-ին կուրսի ուսանողների վերանայման արդյունքում Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ծավալային ժամաքանակի մեջ տեղի է ունեցել փոփոխություն: Ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ռուսաց լեզվի ամբիոնի ներքոհիշյալ դասախոսների ծանրաբեռնվածությունը վերանայելու և վերաբաշխելու առանց հաստիքաչափի փոփոխության: 2022-23 ուստարում նվազել է ուսանողների թիվը, խոշորացվել են խմբերը, որի արդյունքում տեղի է ունեցել անհամատեղելի մասնագիտությունների միացում: Այդ փոփոխությունները կարող են դիտարկվել որպես ռիսկային միջոցներ համալսարանի համար: Կադրային ներուժը 2022-2023թ.՝ 1 բ.գ.թ.,մ.գ.դ., պրոֆեսորի պ., 1 բ.գ.թ. դոցենտ, 10 մ.գ.թ., դոցենտ, 1 մ.գ.թ.,ասիստենտ, 6 դասախոս,1 դասախոս գտնվում է ֆիզ. արձակուրդում: Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 - 2023 ուս.տարվա ուսումնական աշխատանքների ծավալային ժամաքանակը կազմել է 17381 ժամ: 14507 ժամը բաշխվել է ամբիոնի դասախոսների միջև: **Գրաֆիկ 1**



2021-2022 ուստարվա համեմատ 2022-2023 ուստարում ամբիոնի ժամերը նվազել են:

Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Վերանայվել են 2022-2023 ուսումնական տարվա՝ Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնի համար ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում մշակված ուսումնական ծրագրերը, կատարվել են համապատասխան լրացումներ: 1-ին կիսամյակի համար նախատեսված ծրագրերի արդյունավետությունը փորձարկվել է ուսումնական գործընթացի շրջանակներում, փորձարկման արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերի ընթացքում: Մագիստրատուրայի և բակալավրիատի համար նախատեսված որոշ ուսումնական ծրագրեր վերանայվել և վերամշակվել են: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ Օտար լեզուների ֆակուլտետի վերոնշյալ բաժնի ուսումնական ծրագրերի արդյունավետությունը բարձր մակարդակի վրա է: Ինչ վերաբերվում է ոչ մասնագիտական ֆակուլտետների համար նախատեսված ռուսաց լեզվի ուսումնական ծրագրին, ապա վերջինս ենթարկվել է սկզբունքային վերանայման և ներկայացվել է ամբիոնի քննարկմանն և հաստատմանը:

Ամբիոնի կողմից վերանայվել են նաև դասավանդման մեթոդները. դասախոսությունները անց են կացվում ինտերակտիվ մեթոդների ներառմամբ, իսկ գործնական դասերի ընթացքում օգտագործվում են նախագծային, և քեյս մեթոդները:/N 2 , 28.09.2022 /

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ուսումնառության արդյունքներին համապատասխան ամբիոնում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ուսումնառողների գնահատման մոտեցումների վերանայումները և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները: Գնահատման գոյություն ունեցող համակարգը համարում ենք արդյունավետ: Գնահատման՝ առավելագույնը 100 միավոր ենթադրող համակարգը ուսանողների գիտելիքների հիմնավորված և արդարացի գնահատման հնարավորություն է ընձեռում: Ամբիոնի կողմից վերանայվել են գնահատման մեթոդները՝ կախված յուրաքանչյուր խմբի ուժեղ և թույլ կողմերից: /N 3 , 03.10.2022/
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Ամբիոնի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի շրջանակը վերաբերում է հիմնականում կրթության որակի բարձրացմանը, գործող ծրագրերի արդյունավետության մակարդակին, Google Classroom հարթակում տեխնիկական հարցերի քննարկմանը, հետադարձ կապի ապահովմանը, ինչպես նաև գնահատման սկզբունքներին: Մոնիտորինգի մեթոդները և ձևաչափը. դասալսումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, կարծիքների փոխանակում:Այս հարցերը քննարկվել են որակի պատասխանատու մասնագետի մասնակցությամբ:Այս ամենն արտացոլված է ամբիոնի նիստերի 2022 թվականի հունվարից մինչև 2022 թվականի դեկտեմբերը հրավիրված ամբիոնի նիստերի քաղվածքներում:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
N 7 , 31.01.2022	1. Առկա բաժնում քննաշրջանի արդյունենրի ամփոփում 2. Ավարտական, դիպլոմային աշխատաքների, մագիստրոսական թեզերի քննարկման ժամանակացույց 3. Երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները 4.ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումներ 5. Քարոզարշավի շրջանակներում ՀՀ միջնակարգ դպրոցներ այցեր	1.Ընդհանուր առմամբ, դրական գնահատել առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները 2.Իրականացնել մոնիտորինգ 3. Classroom հարթակում տեղադրել առկա բաժնի երկրորդ կիսամյակի համար անհրաժեշտ նյութերը:

		4. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումների իրականացում 5.Ակտիվ զբաղվել ՀՄՊՀ գովազդմամբ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներով:
N 8 ,24.02.2022	1. ՕԼՖ-10-ի հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների քննարկում 2.Դասալսումներ. 1-ին կիսամյակի հաշվետվություն 3. 2022-23 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական նյութերի (առարկայական նկարագիր, թեմատիկ տրոհում, հարցաշար, հավելյալ նյութեր) տեղադրում Google Classroom էլեկտրոնային հարթակում 4.Որակի բարձրացման դասընթացներ 28.02-03.03.2022	1. Ամբիոնի վարիչ, մ.գ.դ.Ն. Դալյանը ով հայտնեց, որ, համաձայն ՕԼՖ-10-ի հեռակա բաժնի 5-րդ կուրսի ուսանողների գիտական ղեկավարների բանավոր տեղեկացման,ավարտական աշխատանքները շուտով պատրաստ կլինեն առաջիկա ատեստավորման համար: 2.Ն.Դալյանն ամփոփեց 2022-23 ուս.տարվա 1-ին կիսամյակում կատարած դասալսումների արդյունքները, նշելով, որ դասալսումները շարունակվելու են և 2-րդ կիսամյակում:Ամբիոնի վարիչը հատկապես կարևորեց խոսքային գործունեության 4 ձևերի կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր դասի ընթացքում: 3. Ն. Դալյանը նշեց, որ անհրաժեշտ է Google Classroom էլեկտրոնային

		հարթակում տեղադրել 2022-23 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական նյութերը, այն է՝ առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը, ինչպես նաև այլ հավելյալ նյութեր: 4. 28.02-03.03.2022 ամբիոնի դասախոսները կմասնակցեն ՈՐ դասընթացին /Курсы по повышению квалификации преподавателей-русистов,организованные Федеральным государственным бюджетным образовательным учреждением высшего образования «Государственный институт русского языка им. А.С. Пушкина» по программе повышения квалификации «Интегративный потенциал современной лингвистики: личность, концепты, дискурс». (36 часов)
N 9 ,31.03.2022	1.Ավարտական, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի մոնիթորինգի արդյունքների ամփոփում 2. Միջանկյալ ստուգման նախապատրաստական աշխատանքները 3. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում 4. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումների ցանկ 5. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառում 365 օր դպրոցի հետ	1.Ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը նշանակել ապրիլի 20-ին: 2.Նախապատրաստվել միջանկյալ ստուգմանը՝ անցկացնելու այն հիմնականում բանավոր: 3 Ն. Դալյանը նշեց, որ մագիստրոսները ակտիվ

	6 . Դասալսումներ:	մասնակցել են պրակտիկային , ներկայացրել իրենց թղթապանակները: 4. Նախապատրաստվում են մի շարք միջոցառումներ նվիրված ՀՊՄՀ 100 ամյակին: 5. Քննարկում:
N 10 , 02.05.2022	1. Քննաշրջան 2.Ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները 3.ՕԼՖ-10 առկա մագիստրատուրա 1-ին կուրսի պրակտիկան և հաշվետվությունները կատարած աշխատանքի վերաբերյալ: 4. Աշխատանք Google Classroom էլեկտրոնային հարթակում	Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ անց է կացվել ՕԼՖ մագիստրատուրայի 2-րդ կուրսի, բակալավրիատի առկա ուսուցման բաժնի 4-րդ կուրսի և հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանություն, որի արդյունքներն արձանագրվել են: Ն. Դալյանը կարևորեց հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնելու կարևորությունը, մանկավարժական պրակտիկայի դերն ու նշանակությունը ապագա մանկավարժների պատրաստման հարցում՝ շեշտելով, որ այդ հարցերին անհրաժեշտ է մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ և իրականացնել մագիստրատուրայի 1-ին կուրսից տարվող աշխատանքների մոնիթորինգ

N11 30.07 .2021	1. Պետական քննությունների արդյունքների ամփոփում 2. Քննաշրջանի ամփոփում 3. Գալիք ուստարվա բեռնվածությունը և ամբիոնի աշխատանքների պլանը 4. Այլ	ա/ ընդհանուր առմամբ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիսրատուրայի ավարտական քննություններն ընթացել են առանց որևէ խնդիրների, դրանք տեխնիկապես կազմակերպվել են բարձր մակարդակով, չի եղել որևէ բողոքարկում: բ/ Դեկանը շնորհակալություն հայտնեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր գրախոսներին մանրակրկիտ և անաչառ աշխատանքի համար:
2022-23 ուս.տարի N 1 նիստ 29.08.2022	1.2022-23 ուս. տարվա դասախոսների բեռնվածքներ 2.Ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների քննարկում 3. Հեռակա բաժնի քննությունների անցկացում 4. Ծրագրերի և թեմատիկ պլանների քննարկում 5.ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումներ: 6.Ամբիոնի որակի պատասխանատուի փոփոխության հարցը:	Ամբիոնի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ: Անհրաժեշտ է ՕԼՖ ուսանողների ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաներ առաջարկել՝ նախապես հստակ մտածելով կատարվելիք աշխատանքի կառուցվածքը: Այդ աշխատանքների կատարման մոնիթորինգն անց է կացվելու ամիսը մեկ: Վերանայել, լրամշակել առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Հաստատել Գ.Բալյանի թեկնածությունը որպես ռուսաց լեզվի ամբիոնի որակի պատասխանատու:

N 2 , 28.09.2022	1. Բեռնվածքներ 2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հաստատում 3. Աշխատանքը Classroom հարթակում 4. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և անցկացում 4. Դասախոսների հաշվետվություններ 5.Ամբիոնի կողմից վերանայվել են նաև դասավանդման մեթոդները. դասախոսությունները 6. Այլ	Ամբիոնի վարիչ Ն. Դալյանիը հայտնեց, որ 1 կուրսի առկա բակալավրիատում և մագիստրատուրայում որոշ խմբեր չեն ձևավորվել: Այս հանգամանքով պայմանավորված՝ որոշ դասախոսների բեռնվածքներում կատարվել են փոփոխություններ: Բեռնվ ածքները կրկին կենթարկվեն փոփոխության հեռակա բաժնի առաջին կուրսի ընդունելությունից հետո: Հաստատվեցին ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: ԼՍԵՑԻՆ՝ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկա յի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լևոն Մարկոսյանի «Ռուսաց լեզվի գործնական դասընթաց (ԵԱՀԿ փաստաթղթերի հիման վրա)» / Практический курс русского языка (на материале документов ОБСЕ) /

		ուսումնամեթոդական ձեռնարկի երաշխավորման հարցը և «Ռուսաց լեզվի ձևաբանության հիմունքները» / Основы морфологии современного русского языка / դասագրքի երաշխավորման հարցը:
N 3 , 03.10.2022	1.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ 2.Աշխատանքը Classroom հարթակում 3.Մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և անցկացում 4. Դասալսումներ: 5.Ամբիոնի կողմից վերանայվել են գնահատման մեթոդները՝ կախված յուրաքանչյուր խմբի ուժեղ և թույլ կողմերից: 6.Ամբիոնի կողմից վերանայվել են ոչ մասնագիտական ֆակուլտետներում ուսումնասիրվող թեմաները, դասագրքերը, հետազոտական աշխատանքների թեմաները, դասավանդման մեթոդները: 7. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառում 365 օր դպրոցի հետ 8. Այլ	Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ: Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: Քննարկում: Թեմաները արդիականացվել են և համապատասխանեցվել ժամանակի թելադրանքին:
N 4 , 03.11.2022	1.Աշխատանքը Classroom հարթակում, Գ. Բալյանի հաշվետվությունը 2. Միջանկյալների անցկացում 3.ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումներ 4.Միջբուհական գիտաժողով /«Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ» 08.12.22	1.Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:

	5.Նոր նյութերի ստեղծում, մշակում և քննարկում: Այդ նյութերի հետագա իրականացումը:	2. Դալյանի հաղորդումը առ այն, որ 2022 թ. դեկտեմբերի 8-ին տեղի կունենա երկրորդ հանրապետական միջբուհական գիտաժողով «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»:
N 5 , 01.12.2022	1.Բեռնվածքներ 2. 2022թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվության քննարկում և հաստատում: 3.Միջբուհական գիտաժողով նվիրված ՀՊՄՀ-ի 100 ամյակին/«Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ» :https://aspu.am/ru/content/obsuzhdalis_aktualnye_lingvisticheskie_i_metodicheskie_problemy/#sthash.YKOKSB7v.dpuf 4. Դասալսումներ: 5. Միջակյալների և քննությունների նախապատրաստում: 6.Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ /ՆՎԻՐՎՈՒՄ Է Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ /https://aspu.am/hy/content/mijazgayin_gitazhoghovn_ampopum_e_ashkhatanqnery/#sthash.rYEPgyzE.dpuf / 7. Научно-методологический дискуссионный семинар в формате круглого стола <<Литературное медиапроектирование как новейший инструмент культурного кодирования>>. Ереван , 5 декабря 2022 г. 8. Քարոզարշավի շրջանակներում այցեր ՀՀ միջնակարգ դպրոցներ	Ամբիոնի դասախոսների բեռնվածքները հաստատվել են: Քննարկեցին և հաստատեցին 2022 թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությանը: Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.դ. Ն.Ե. Դալյանի հաղորդումը առ այն, որ 2022 թ. դեկտեմբերի 8-ին տեղի կունենա երկրորդ հանրապետական միջբուհական գիտաժողով «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»: Նիստին քննարկվեցին տվյալ ժողովածույի հոդվածները որոնք համապատասխանում էին գիտաժողովի թեմատիկ ուղվածությանը: Ամբիոնի վարիչ Ն. Դալյանը իրականացրել է դասալսումներ որից հետո տեղի են ունեցել քննարկումներ:

		6.Գիտաժողովի անցկացման ձևաչափը՝ առկա և առցանց: Գիտաժողովի աշխատանքային լեզուներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Գիտաժողովի անցկացման օրը և վայրը՝ դեկտեմբերի 15-16-ը, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Ալեք Մանուկյան 13, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ: 7.Վերջնարդյունքը՝ էլ. սերտիֆիկատ: 8..Ակտիվ զբաղվել ՀՄՊՀ գովազդմամբ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներով:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	18	1	1	12	11	1	6	19
Համատեղող	2			2	2			2
Ժամավճարային								
Ընդամենը								

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:

Ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքը ստուգվում է դասալսումների (տես համապատասխան քաղվածքները մատյանում), ինչպես նաև ամբիոնի նիստերի և մեթոդական սեմինարների ընթացքում:

Արձ. N 8 ,24.02.2022,N 9 ,31.03.2022,N 3 ,03.10.2022,N 5 ,01.12.2022

Ամբիոնի վարիչի դասալսումներ որակի պատասխանատուի հետ	**Փոխադարձ դասալսումներ**
16	10

Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների, միջազգային վերապատրաստումների, միջազգային և ամբիոնական գիտամեթոդական սեմինարների: Արձ. 29.08.2022 , N 4 , 03.11.2022, N 5 , 01.12.2022

Ռուսաց լեզվի ամբիոնը սերտորեն համագործակցել է Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի լեզվաբանության ինստիտուտի հետ՝ ՀՊՄՀ և նշյալ բուհերի միջև կնքված պայմանագրերի համաձայն: Համագործակցությունը ենթադրվում է շարունակել նաև ապագայում: Անձնական շփումների մակարդակով տարվում են նաև որոշակի աշխատանքներ՝ ուղղված փորձի փոխանակման կազմակերպմանը և իրականացմանը:

ՀՊՄՀ-ի Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիա Բալասանյանն 09.06.2022 թ. մասնակցել ՝է «Ոսկե դասախոսություն» լուսավորչական միջազգային առցանց նախագծին, որն իրականացվում է Երևանում Ռուսական տան աջակցությամբ:/https://aspu.am/hy/content/nerkayacrec_rusereni_dasavandman_metodabanutyuny/#prettyPhoto

04.03.2022 Կլոր սեղան-քննարկում: Կլոր սեղանին մասնակցում էին ինչպես Ռուսաստանի Դաշնության Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի Լեզվաբանության ամբիոնի անվանի մասնագետները, այնպես էլ ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դասախոսներն, մագիստրոսները. քննարկվեցին երկլեզվության, արդի լեզվաբանության խնդիրները, ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի նորարարությունները, լեզվական բացերը:
https://aspu.am/hy/content/mankavarzhakanum_er_rusac_lezvi_petakan_instituti_patvirakutyuny/#sthash.qTF1Z0cy.dpuf

01.07.2022 թ. ՀՊՄՀ-ի և ՀՀ-ում «Ռոսստրուդնիչեստվո» դաշնային ծառայության համատեղ նախաձեռնությամբ Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանում կայացավ «Պուշկինը թանգարանում» միջոցառումը որին մասնակցել է ՀՊՄՀ-ի Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը:https://aspu.am/hy/content/pushkiny_tangaranum/#sthash.nk5P1eHL.dpuf

16 июля 2022г. в Московском культурно-деловом центре «Дом Москвы» в Ереване прошла программа повышения квалификации на тему «Специфика курсовой методики по русскому

языку».О специфике методики преподавания русского языка на краткосрочных курсах рассказали кандидат педагогических наук, доцент кафедры русского языка Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна Эвелина Баятян и заведующая кафедрой русского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна Наира Далян.По окончании семинара участникам были вручены сертификаты.

16.12.2022 «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողով : Զեկուցումներով հանդես եկան ՀՊՄՀ-ի և հանրապետության այլ բուհերի ներկայացուցիչներ:
https://aspu.am/hy/content/mijazgayin_gitazhoghovn_ampopum_e_ashkhatanqnery/#sthash.rYEPgyzE.dpuf
05.12.2022 Միջբուհական գիտաժողով նվիրված ՀՊՄՀ-ի 100 ամյակին «Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման և լեզվաբանության արդի խնդիրները» թեմայով միջազգային 3-րդ գիտաժողովը՝ նվիրված ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյակին /«Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»
:https://aspu.am/ru/content/obsuzhdalis_aktualnye_lingvisticheskie_i_metodicheskie_problemy/#sthash.YKOKSB7v.dpuf

06.12.2022 Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում էր Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Օլգա Մաչեխինան:
https://aspu.am/hy/content/tsanotacan_grakanakan_mediatsragravormany/#sthash.GJXIIJFm.dpuf

Ամբիոնի կողմից վերանայվել են ոչ մասնագիտական ֆակուլտետներում ուսումնասիրվող թեմաները, դասագրքերը, հետազոտական աշխատանքների թեմաները, դասավանդման մեթոդները: Թեմաները արդիականացվել են և համապատասխանեցվել ժամանակի թելադրանքին:/ Արձ. N2 , 28.09.2022 , N 3 , 03.10.2022 /
Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները պարբերաբար անց են կացնում այլընտրանքային ձևաչափով դասեր:

սախոս, որը ցկացնում է նտրանքային չափով դասեր	**Լռարկա**	**Դասի թեմա**	**ս**	**Դասի անցկացման վայրը**

Դալյան Ն. ,մ.գ.դ.,պրոֆ.պ.	Современные бщественные ыковые реалии	нь известных деятелей наук и и культуры	ь	ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետ Պուշկինի անվան ց լեզվի ուսումնասիրման և թեստավորման կենտրոնում /
Ղարկոսյան Լ.Ե. բ.գ.թ.,դոցենտ	Актуальные емы семантики	ория речевых актов агматическое значение и го выражение зных уровнях языка)	ь	ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետ Պուշկինի անվան ց լեզվի ուսումնասիրման և թեստավորման կենտրոնում
ինուկյան Ի.Յու. մ.գ.թ.,դոցենտ	ославянский язык	ирилические памятники лисьменности рактеристика го памятника)	ь	ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետ Պուշկինի անվան ց լեզվի ուսումնասիրման և թեստավորման կենտրոնում

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
		1			14

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
7	2					1		1	7

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական աշխատանքը հիմնականում վերաբերում է ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկային, բազմամշակույթանին կրթության և դաստիարակության հիմնահարցերին: Ամբիոնի դասախոսներն իրենց հետազոտությունների արդյունքները հրատարակել են տեղական և արտասահմանյան գիտական հանդեսներում: Նոր նյութերի ստեղժում, մշակում և քննարկում: Այդ նյութերի հետագա իրականացումը: / N 4 , 03.11.2022/
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Հոդվածները, մենագրությունները, ինչպես նաև ուսումնամեթոդական ձեռնարկները քննարկվում են ամբիոնի նիստերի, ինչպես նաև գիտական սեմինարների ընթացքում: Ամբիոնում կազմակերպվում են կլոր սեղան-քննարկումներ, վարպետաց դասեր ինչպես ամբիոնի դասախոսների, այնպես էլ ուսանողների համար:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/					
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ	
	Հիմնարար				

Համեմատական տիպաբանություն	տեսագործնական	ինքնաֆինանսավորում		Դալյան Ն.Ե.	
Միջմշակութային հաղորդակցություն	գործնական	ինքնաֆինանսավորում		Դալյան Ն.Ե., Մելիքյան Լ.Վ.	
Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա	գործնական	ինքնաֆինանսավորում		Բայաթյան Է.Ա.	
Ձևաբանություն	տեսագործնական	ինքնաֆինանսավորում		Մարկոսյան Լ.Ե.,Դալյան Ն.Ե.	
Ընդհանուր լեզվաբանություն	տեսական	ինքնաֆինանսավորում		Մարկոսյան Լ.Ե.,Դալյան Ն.Ե.	
Ոճաբանություն	գործնական	ինքնաֆինանսավորում		Բայաթյան Է.Ա.	
Շարահյուսություն	տեսագործնական	ինքնաֆինանսավորում		Մարկոսյան Լ.Ե.,Դալյան Ն.Ե.	
Բազմամշակութայի ն ուսուցում	տեսական	ինքնաֆինանսավորում		Դալյան Ն.Ե.	
Լեզվի տեսություն	տեսական	ինքնաֆինանսավորում		Դալյան Ն.Ե.	
Թարգմանության տեսություն	գործնական	ինքնաֆինանսավորում		Բայաթյան Է.Ա.	
Հնչյունաբանություն	տեսագործնական	ինքնաֆինանսավորում		Մանուկյան Ի.Յու.	
Բառակազմություն	տեսագործնական	ինքնաֆինանսավորում		Մարկոսյան Լ.Ե.	
Ռուս գրական լեզվի պատմություն	տեսական	ինքնաֆինանսավորում		Մանուկյան Ի.Յու.	

Ռուսաց լեզվի պրակտիկում	գործնական	ինքնաֆինանսավորում		Բայաթյան Է.Ա., Բալյան Գ.Ա.	
	Կիրառական				
Ռուսերենը որպես օտար լեզու/ դասավանդման մեթոդիկա	տեսագործնական	ինքնաֆինանսավորում		Կունդրատս Լ.Ա, Բալյան Գ.Ա., Բայաթյան Է.Ա., Բաղրամյան Ա.Ի.,Ստեփանյան Գ.Ս., Իսպիրյան Մ.Մ.,Մելկիկյան Զ.Ա.,Ճանճապանյան Գ.Ա.,Միրզոյան Կ.Թ.,Մելիքյան Լ.Վ.,Գրիգորյան Մ.Ռ.,Այվազյան Ն.Ս.,Հախումյան Ռ.Ս.	

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Դալյան Ն.Ե.	Лексические единицы русского языка в речи армян билингвов	տպգ.
Դալյան Ն.Ե.	Непрямая коммуникация: механизмы понимания»	տպգ.
Բայաթյան Է.Ա	Трудности освоения предложно-падежных конструкций русского языка у студентов-армян	տպգ.
Բայաթյան Է.Ա	Технология мастерских как нестандартная инновационная форма организации современного урока РКИ	4
Բայաթյան Է.Ա.	ПРОБЛЕМЫ И ПРОТИВОРЕЧИЯ СОВРЕМЕННОГО ИНОЯЗЫЧНОГО ОБРАЗОВАНИЯ	
Մանուկյան Ի.Յու.	Системный подход к моделированию дискурса Материалы IV Международной конференции в рамках XIV Дней русского слова, посвященных 30-летию со дня образования Содружества Независимых Государств	56-60

Մանուկյան Ի.Յու.	Когнитивная доминанта в структуре дискурса и ее роль в процессе формирования коммуникативных компетенций	տպգ.
Մանուկյան Ի.Յու.	Прагматические свойства и функциональная специфика дейктических существительных в современном русском языке. Проблемы современной русистики. Научно-методический журнал	տպգ.
Բալասանյան Լ.Գ.	О некоторых вопросах профессиональной деятельности учителей русского языка и литературы национальной школы	տպգ.
Բալասանյան Լ.Գ.	Инновационные практики преподавания русского языка в системе образования Республики Армения	562-568
Բալասանյան Լ.Գ.	Русский язык в системе образования Республики Армения: некоторые проблемы и инновационные практики в поликультурном обществе	տպգ.
Բալասանյան Լ.Գ.	Некоторые научные исследования в сфере методики преподавания русского языка как неродного в армянской школе	տպգ.
Իսպիրյան Մ.Մ., Վարդանյան Մ.	ՈՉ ՖՈՐՄԱԼ ԵՎ ԻՆՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.СОСТОЯНИЕ И ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ НЕФОРМАЛЬНОГО И ИНФОРМАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ http://scientificnews.aspu.am/index.php/scientific/article/view/2/2	22-32 /10
Իսպիրյան Մ.Մ., Գևորգյան Ս.Ռ.,Միքայելյան Տ.Բ.	Critical thinking – educational epopee https://www.lotuswebtec.com/en/current-issues-spe	97-112
Իսպիրյան Մ.Մ., Գևորգյան Ս.Ռ.,Կարապետյան Վ., Դալլաքյան Ա.	THE EXPRESSION OF DISPOSITIONAL BEHAVIORAND PSYCHOLOGICAL ATTITUDES IN THE CONTEXT OF SOCIAL RISK https://wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/812/496	38-46
Իսպիրյան Մ.Մ., Ազատյան Թ.Յու	РЕКОМЕНДАЦИИ ПО УЛУЧШЕНИЮ ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ УЧИТЕЛЕЙ В НЕСТАБИЛЬНЫХ СИТУАЦИЯХ https://pedklassy.bspu.by/articles/events_future/iv-mezhdunarodnaja-nauchno-prakticheskaja-konferencija-pedagogicheskie-klassy-opyt-i-perspektivy/	
Իսպիրյան Մ.Մ.	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ	

	https://aspu.am/hy/content/_mijazgayin_gitazhoghov/	
Մելկիկյան Զ.Ա.	Просторечная лексика в системе современного русского языка	տպգ.
Այունց Բ.Ն.	Инновационные технологии контроля лингводидактических умений студентов	տպգ.
Բալյան Գ.Ա.	в истории армянской нотописи. Научный журнал «Образовательный форсайт» № 2(14), Москва, Издательство Международный Центр «Искусство и образование» 2022.	8

Գրաֆիկ 2



2022 թ. հրատարակվել է 13 ձեռնարկ, 20 հոդված , որոնցից 2- SCOPUS, 7- РИНЦ :

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
“Языковые мосты понимания” - Далян Н.Е.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 04.03.2022
Вызовы современного языкового образования - Балян Г.А.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 14.04.2022
Русский язык и культура речи - Кундратс Л.А.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 25.05.2022
Актуальные проблемы коммуникативной лингвистики, основы теории текста и дискурса - Манукян И.Ю.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 27.09.2022
Имплицитные коммуникативные смыслы в различных типах дискурса - Маркосян Л.Е.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 19.10.2022
Непрямая коммуникация: механизмы понимания- Далян Н.Е.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 21.11.2022
Языковая интерференция: теория и практика - Баятян Э.А.	ՀՊՄՀ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն 02.12.2022

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ / տես գրաֆիկ 2 /			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Դալյան Նաիրա Երվանդի գ/դ, պրոֆեսոր ի պ. Այունց Բելլա Նորիկի	Курсы по повышению квалификации преподавателей-русистов,организованные Федеральным государственным бюджетным образовательным учреждением высшего образования «Государственный институт русского языка им. А.С. Пушкина» по программе повышения квалификации «Интегративный потенциал современной лингвистики: личность, концепты, дискурс». (36 часов) https://aspu.am/hy/content/mankavarzhakanum_er_rusac_lezvi_petakan_instituti_patvirakutyuny/#sthash.qTF1Z0cy.dpuf	28.02-03.03.2022	սերտիֆիկատ

գ/թ, դոցենտ Բայաթյան Էվելինա Ամատունու գ/թ, դոցենտ Իսպիրյան Մարիամ Մկրտիչի գ/թ, դոցենտ Կունդրատս Լայմա Արիի գ/թ, դոցենտ Մարկոսյան Լևոն Երվանդի գ/թ, դոցենտ Մելիքյան Լաուրա Վալիկի գ/թ, դոցեն Բաղրամյան Անահիտ Իլյայի գ/թ, ասիստենտ Այվազյան Նունե Սուրենի դասախոս Բալյան Գայանե Արամայիսի դասախոս			

Գրիգորյան Մարինե Ռոլենի դասախոս Մելկիկյան Զարուհի Արտավազդի դասախոս Ստեփանյան Գայանե Սաբիրի դասախոս			
Դալյան Նաիրա Երվանդի գ/դ, պրոֆեսորի պ. Այունց Բելլա Նորիկի գ/թ, դոցենտ Բայաթյան Էվելինա Ամատունու գ/թ, դոցենտ Իսպիրյան Մարիամ Մկրտիչի գ/թ, դոցենտ Կունդրատս Լայմա Արիի գ/թ, դոցենտ	Հյուսիսկովկասյան դաշնային համալսարան (ՌԴ) Северо-Кавказский федеральный университет (СКФУ) «Современные образовательные методики преподавания литературы в ВУЗе. https://aspu.am/hy/content/rusac_lezvi_ev_grakanutyan_dprocakan_dasavandman_nor_motecumner/#prettyPhoto	14-28.10.2022	սերտիֆիկատ

Մարկոսյան Լևոն Երվանդի գ/թ, դոցենտ Մելիքյան Լաուրա Վալիկի գ/թ, դոցեամյան Անահիտ Իլյայի գ/թ, ասիստենտ Այվազյան Նունե Սուրենի դասախոս Բալյան Գայանե Արամայիսի դասախոս Գրիգորյան Մարինե Ռոլենի դասախոս Մելկիկյան Զարուհի Արտավազդի դասախոս Ստեփանյան Գայանե Սաքիրի դասախոս Մանուկյան Իրինա Յուրիի			

գ/թ, դոցենտ Ճանճապանյան Գայանե Արամի գ/թ, դոցենտ Միրզոյան Կարինե Թևուշի գ/թ, դոցենտ			

Բ. Ուսանողական

Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողներ՝ Սաթենիկ Բաբայանը և Հովհաննիսյան Վիկտորիան ստանում են կրթաթոշակ Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն «ԴՈՄ ՄՈՍԿՎԻ»-ից:

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Լեզվաբանական խմբակ	օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողներ	Շաբաթական մեկ անգամ	Խմբակի ղեկավար բ.գ.թ.,դոցենտ Մարկոսյան Լ.Ե.

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
МЕЖДУНАРОДНЫЙ ПРОЕКТ «РУССКИЙ ЯЗЫК: МОЯ ФОРМУЛА УСПЕХА	СевероКавказский федеральный университет совместно с Армянским государственным педагогическим университетом имени Хачатура Абовяна при поддержке Россотрудничества начинает реализацию международного проекта «Русский язык: моя формула успеха	21 ուսանող

Կոնֆերանս/ միջազգ	«Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման և լեզվաբանության արդի խնդիրները» թեմայով միջազգային 3-րդ գիտաժողովը՝ նվիրված ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյակին: https://aspu.am/hy/content/qnnarkvecin_dasavandman_ev_lezvabanutyan_ardi_khndirnery/#sthash.aSYqtj23.dpuf	ՌԴ-ի առաջատար բուհերի ներկայացուցիչներ, ուսանողներ:
Համահամալսարանական ռուսաց լեզվի թեստավորում	Սանկտ-Պետերբուրգի Հերցենի անվան Ռուսական պետական համալսարան	112 ուսանող

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական	Литературный конкурс чтецов /ПОЭТЫ РОССИИ ОБ АРМЕНИИ Литературный диктант 29.09.2022	6 7	Հովհաննիսյան Վիկտորիա Բաբայան Սաթենիկ Գրիգորյան Աննա Մարտիրոսյան Լիլիթ Հովհաննիսյան Ռիմա Սերգեևա Սարա Հովհաննիսյան Ռիմա Գրիգորյան Աննա Մարտիրոսյան Լիլիթ

-	-	-	-
Տարածաշրջանային			
-	-	-	-

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ռուսաց լեզվի ամբիոնը սերտորեն համագործակցում է Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի, Մոսվայի պետական մանկավարժական համալսարան, ռուսաց լեզվի ամբիոն /ՌԴ/, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի լեզվաբանության ինստիտուտի հետ՝ ՀՊՄՀ և նշյալ բուհերի միջև կնքված պայմանագրերի համաձայն: Համագործակցությունը ենթադրվում է շարունակել նաև ապագայում: Անձնական շփումների մակարդակով տարվում է նաև որոշակի աշխատանք՝ ուղղված փորձի փոխանակման կազմակերպմանը: Ամբիոնի նախաձեռնությամբ անց են կացվել կիոր սեղաններ, վեբինարներ, բաց քննարկումներ:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը սերտորեն համագործակցում է Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն «ԴՈՄ ՄՈՍԿՎԻ»,Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի, Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի,Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի լեզվաբանության ինստիտուտի հետ՝ ՀՊՄՀ և նշյալ բուհերի միջև կնքված պայմանագրերի համաձայն: Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում էր Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Օլգա Մաչեխինան: 06.12.2022 Մանկավարժական գիտությունների դոկտորն Արտասահմանյան գրականության, Ռուսաց լեզվի և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնների դասախոսների և ուսանողների համար անցկացրեց «Գրականական մեդիաձրագրավորումը որպես մշակութային կոդավորման նորագույն գործիք» թեմայով սեմինար:https://aspu.am/hy/content/tsanotacan_grakanakan_mediatsragravormany/#sthash.vHQj4iD6.dpuf /

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ

Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտ / ՌԴ/	Ուսումնական	Մեթոդական			ֆորում
Մոսվայի պետական մանկավարժական համալսարան, ռուսաց լեզվի ամբիոն /ՌԴ/	Ուսումնական	Մեթոդական			
ՌԺԲՀ, ռուսաց լեզվի ամբիոն /ՌԴ/	Ուսումնական	Մեթոդական			
Ռուսաստանի պետական Հումանիտար համալսարանի լեզվաբանության ինստիտուտ	Ուսումնական	Մեթոդական			ֆորում
Մոսկվայի պետական տեխնոլոգիական համալսարան/<<СТАНКИН>>		Միջազգային գիտաժողով			
Մանկավարժական կրթության միջազգային կենտրոն/ ՄՊԳՄ/		Սեմինարներ			

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				
Ուակովա Օ.Ա.,	բ.գ.դ.,պրոֆ.	ՌԴ ՄՊԼՀ	14.12-18.12. 2022	ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովում Ելույթ https://aspu.am/ru/content/podvedeny_itogi_mezhdunarodnoi_konferentcii_/#prettyPhoto

Մասլովա Ի.Բ.	բ.գ.թ.,դոցենտ	ՌԴ ՄՊԼՀ	14.12-18.12.2022	ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովում Ելույթ https://aspu.am/ru/content/podvedeny_itogi_mezhdunarodnoi_konferentcii_/#prettyPhoto
Շատալովա Մ.Ս.	մ.գ.դ.,պրոֆ.	ՌԴ ՄՊԼՀ	14.12-18.12.2022	ՀՊՄՀ 100ամյակին նվիրված գիտաժողովում Ելույթ
Լյովինա Գ.Մ.	մ.գ.դ.,պրոֆ	ՌԴ ՄՊԼՀ	14.12-18.12.2022	ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովում Ելույթ https://aspu.am/ru/content/podvedeny_itogi_mezhdunarodnoi_konferentcii_/#prettyPhoto
Վասիլևա Տ.Վ.	մ.գ.դ.,պրոֆ	ՌԴ Մոսկվայի պետական տեխնոլոգիական համալսարան/<<СТАНКИН>>	14.12-18.12.2022	ՊՄՀ 100 ամյակին նվիրված գիտաժողովում Ելույթ https://aspu.am/ru/content/podvedeny_itogi_mezhdunarodnoi_konferentcii_/#prettyPhoto
Մաչեխին Ա Օ.Ն.	մ.գ.դ.,պրոֆ	ՌԴ ՄՔՄՀ	05.12 - 07.12.2022	սեմինար https://aspu.am/ru/content/oznakomilis_s_literaturnym_mediaprogrammirovaniem/#sthash.DoO8GKa1.dpuf

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Erazmus+	Սլովակիայի Ռուժոմբերոկի կաթոլիկ համալսարան	29.10-03.11.2022	Դալյան Ն.Ե., Կունդրատս Լ.Ա, Բալյան Գ.Ա., Բայաթյան Է.Ա., Բաղրամյան Ա.Ի.,Ստեփանյան Գ.Ս., Իսպիրյան Մ.Մ.,Մելկիկյան Զ.Ա.,Ճանճապանյան Գ.Ա.,Միրզոյան Կ.Թ.,Մելիքյան Լ.Վ.,Գրիգորյան Մ.Ռ.,Այվազյան Ն.Ս.,Հախումյան Ռ.Ս.

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Կազմակերպվել են այցելություններ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի դպրոցներ, իրազեկելով և կողմնորոշելով բարձր դասարանների աշակերտներին Խ.Աբովյանի ՀՊՄՀ-ի 2022-23 ուստարվա ընդունելության ծրագրերին և բուհում գործող մասնագիտություններին: 2021-2022 ուստարվա ընթացքում ռուսաց լեզվի ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

Բաց դռների օր ռուսաց լեզվի ամբիոնում / ներկայացում-պրեզենտացիա ՀՊՄՀ-ի մասին, բուկլետների ներկայացում /

Ֆեյսբուք սոց. ցանցում բացվել է ռուսաց լեզվի ամբիոնի էջ
2022 թ. քարոզարշավ Երևանի և մարզերի դպրոցներում

Ամբիոնի վարիչ՝ մ.գ.դ. Ն. Դալյանն ընդգծեց բուհ-դպրոց կապի ուժեղացման և պոտենցիալ ուսանողների ներգրավման հարցը, խնդրեց, որ դասախոսները ներկայացնեն տվյալներ առ այն, թե երբ և որ դպրոցներում է անցկացվել քարոզչություն:

2021-2022 ուստարվա և 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում ամբիոնի դասախոսներ

Ն. Դալյանը, Է. Բայաթյանը, Բ. Այունցը., Գ.Ստեփանյանը , Ռ.Հախումյան , Զ. Մելկիկյանը այցելել են 7 դպրոց. 5-ը քԵրևանում, 1 -ը Կոտայքի մարզում , 1-ը Արարատի մարզում :

ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառում 365 օր դպրոցի հետ /Արձ. N 9 ,31.03.2022, N 3 ,0310.2022 /

Անցակցման վայրը	Ժամանակը	Միջոցառման անվանումը
Պուշկինի անվան թիվ 8 դպրոց	2022 թ.ապրիլ Գ.Ստեփանյան	Վիկտորինա
Աբովյանի նվան թիվ 2 դպրոց	2022 թ. հոկտեմբեր Բ.Այունց	Ռուսաց լեվի բաց դաս

№	Քաղաք, մարզ	Դպրոց	Ամսաթիվ	Դասախոսի անուն, ազգանուն	Նշումներ կատարման վերաբերյալ

1	Կոտայքի մարզ	Ողջաբերդի ավագ դպրոց	հոկտեմբեր	Նաիրա Դալյան	12-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա
2	Արարատի մարզ	Ազատավանի միթնակարգ դպրոց	մարտ	Նաիրա Դալյան	12-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա
3	Երևան	Ս.Շահումյանի անվան թիվ 1 դպրոց	հոկտեմբեր	Էվելինա Բայաթյան	12-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա
4	Երևան	Թիվ 77	ապրիլ	Գայանե Ստեփանյան	12-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա

5	Երևան	Վ.Տերյանի անվ. թիվ 60	ապրիլ	Զարուհի Մելկիկյան	12-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա
6	Երևան	Ե.Չարենցի անվ.թիվ 67	նոյեմբեր	Բելլա Այունց	9-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա
7	Երևան	թիվ 76 հիմնական դպրոցում :	2022թ. նոյեմբերի - դեկտեմբեր	Դալյան Ն.,Այունց Բ., Ստեփանյան Գ.,Հախումյան Ռ	9-րդ դասարանի աշակերտների հետ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ներկայացում-պրեզենտացիա

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Դալյան Ն.,Այունց Բ., Ստեփանյան Գ.,Հախումյան Ռ., Բալասանյան Լ.Գ.	մանկավարժական պրակտիկա	Օտար լեզուների ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրի 2022-2023 ուստարվա ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների 1-ին կիսամյակի

			մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվել է 2022թ. հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 4-ը Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի 1-4-րդ կուրսերում. Օտար լեզուների ֆակուլտետի հեռակա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 4-5-րդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է 2022թ. նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 9-ը Երևանի թիվ 76 հիմնական դպրոցում :
Մեթոդական	Այունց Բ.Ն.	интеллектуальная игра <<Что? Где? Когда?>>	Ե.Չարենցի անվան թիվ 67 դպրոցում ուսանողների մանկավարժական պրակտիկայի ընթացքում
Դաստիարակչական	Բալյան Գ.Ա.,Այվազյան Ն.Ս.,Բայաթյան Է.Ա.	Այցելություն թանգարան / Էրեբունի պատմական թանգարան, Ռուսական արվեստի թանգարան, Ս.Փարաջանովի անվ. թանգարան/	հոկտեմբեր-նոյեմբեր 2022

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Խրհրդատվություն	Բայաթյան Է.Ա.	Ուսումնական ծրագրերի վերանայում	սեպտեմբեր-հոկտեմբեր 2022
Գիտական կարծիք ծրագրերի վերաբերյալ	Դալյան Ն.Ե.	Գիտական աշխատանք	2021-2022 թ.
Մասնակցություն գիտական խորհրդի աշխատանքներին	Դալյան Ն.Ե.	Ընդիմախոսություն	2021-2022 թ.

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Հաշվետու տարում ամբիոնը կազմակերպել և իրագործել է իր գործունեությունը հետևյալ ուղղություններով՝ Աշխատանքը Google Classroom-ում Ուսումնական և ուսումնամեթոդական գործունեություն Գիտահետազոտական աշխատանք Արտաքին կապեր և միջազգային գործունեություն Ամբիոնի կողմից ընտրվել է որակի պատասխանատու / Բալյան Գ.Ա./: Դասալսումներ Ուսումնական տարվան ընդառաջ վերանայվել և թարմացվել են ամբիոնի կողմից դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցարաններն ու ուսումնական գործընթացի կազմակերպման անխափան աշխատանքի համար անհրաժեշտ այլ նյութեր: ԱՈՒՄՓ-երի և պահանջվող մյուս փաստաթղթերին առնչվող հարցեր, Google Classroom էլետրոնային հարթակում դրանց տեղադրման ժամանակացույցները քննարկվել են ամբնիոնի նիստերին: Իրականացվում են մեթոդական սեմինարներ, որոնց ընթացքում ներկայացվում է գիտամեթոդական գրականության ամփոփում, ինչպես նաև նոր մեթոդաբանական տեխնոլոգիաներն ու մոտեցումները: Ձևավորվել է Classroom-ում աշխատանքը համակարգող խումբ /Ն.Ե.Դալյան, Գ. Ա. Բալյան/: Կրթության որակի վերահսկման և բարելավման նպատակով մշակվել է դասալսումների պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման (ՊԻԳԲ) ծրագիր: Դասալսումները իրականցվել են ամբիոնի վարիչի և ՈԱ պատասխանատուի կողմից, ինչպես նաև անց են կացվել դասախոսների կողմից փոխադարձ դասալսումներ: Դասալսումների արդյունքում վեր են հանվել ուժեղ և թույլ կողմերը, տրվել են մեթոդական խորհուրդներ: Ամբիոնի նիստերին պարբերաբար քննարկվել են առցանց դասավանդման տեխնիկական և մեթոդաբանական հարցեր, դրանց տրվել են համապատասխան լուծումներ, մեթոդական խորհուրդներ: 2. Ուսանողների շրջանում ուսումնառության մոտիվացիայի բարձրացման նպատակով անց են կացվել այլընտրանքային դասեր, քննարկումներ, այցեր թանգարաններ: Ուսանողները դրական են արձագանքել այլընտրանքային դասերին և ակտիվորեն մասնակցել են դրանց: Հաշվի առնելով

դրական արդյունքները՝ որոշում է կայացվել ավելի հաճախակի անցկացնել այլընտրանքային դասեր:

3. Էլեկտրոնային հարթակում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվել է Google գործիքների միջոցով, մասնավորապես Google Forms և Google Docs գործիքների միջոցով կազմված թեստերով, առաջադրանքներով:
4. Վերանայվել և փոփոխվել է «Ռուսերենը որպես օտար լեզու» առարկայի ծրագիրը, ինչից ելնելով ամբիոնում ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակում է փոփոխված ծրագրի պահանջները բավարարող նոր դասագիրք: Նոր դասագրքի առաջին մասը, որը նախատեսված է առաջին կուրսի համար, պատրաստ է: Այն կիրառվում է բոլոր ֆակուլտետներում, ինչի շնորհիվ ապահովվում է դասավանդվող առարկայի ծրագրի և ուսումնական նյութի միօրինակությունը: Բացի այդ, միասնական դասագրքի առկայությունը թույլ է տվել կազմել և ՀՄՊՀ բոլոր ֆակուլտետներում կիրառել նաև միօրինակ, միասնական թեստեր: Աշխատանքային խումբն աշխատում է երկրորդ կուրսի դասագրքի ստեղծման վրա: Նոր դասագրքի ստեղծումը էապես բարձրացնելու է դասավանդվող առարկայի որակը և ավելի տեսանելի է դարձնելու գիտելիքների ստուգումը և վերջնարդյունքները:
5. Ամբիոնի ներկայացուցիչները մասնակցել են Որակի վարչության, ANQA-ի կողմից իրականացված վերապատրաստումներին, ստացած գիտելիքներով կիսվել են ամբիոնի աշխատակիցների հետ: Նշված վերապատրաստումները զգալիորեն բարելավել են կրթական գործընթացի կազմակերպումը և իրականացումը, առցանց ձևաչափով դասավանդման տեխնիկական կողմը էապես լավացել է:
6 .Պարբերաբար իրականացվել են ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ ամբիոնի վարիչի կողմից, որի արդյունքում բացահայտվել են որոշակի խնդիրներ, թերացումներ: Դրանց կապակցությամբ տրվել են ցուցումներ: Կատարված աշխատանքի արդյունքում ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը, իսկ հետո նաև բուն պաշտպանությունն անցել են որակապես ավելի բարձր մակարդակով՝ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական առումով:
7. Լրջագույնս գրախոսվել, ինչպես նաև գրագողության ստուգում են անցել ավարտական, դիպլոմային աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Անաչառ գրախոսումը և տեղ գտած խնդիրների վերհանումը նպաստում են հետազոտական աշխատանքների որակի բարձրացմանը:

Google Classroom էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքները մշտադիտարկվել են, տեղ գտած թերացումների մասին տեղեկացվել են համապատասխան դասախոսները, ովքեր էլ իրենց հերթին շտկել են դրանք: Հարկ է փաստել, որ նախորդ ուստարում դասախոսների տեխնիկական հմտությունների կատարելագործման նպատակով անցկացված սեմինարների շնորհիվ՝ հաշվետու տարում Google Classroom հարթակում իրականացված ուսումնական գործընթացն անցել է գրեթե անխափան, ըստ ժամանակացույցի, համաձայն ուսումնական պլանի, զգալի բարձր որակով:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները գրանցված են **ORCID** էլ.հարթակում :

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ամբիոնի որոշմամբ վերականգնվում են նախաքովիդային ավանդույթները՝ բարձր ակադեմիական առաջադիմություն ունեցող ակտիվ ուսանողների մասնակցությունը ամբիոնի նիստերին և դասալսումներին, ուսումնական խնդիրների քննարկումներին:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Դալյան Ն.Ե.	Ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների որակի ապահովում: Ընդլայնվել են դասերի ժամանակ օգտագործվող մեթոդները:
Մեթոդական սեմինարներ	Դալյան Ն.Ե., Բայաթյան Է.Ա., Բալյան Գ.Ա., Ստեփանյան Գ.Ս., Մանուկյան Ի.Յու.	Լավագույն դասավարման փորձի փոխանակում: Ամբիոնի դասախոսների կողմից դասավանդման մեջ կիրառվել են ձեռքբերված նոր գիտելիքներն ու հմտությունները:
Google-classroom հարթակում կատարած աշխատանքների մշտադիտարկում	Դալյան Ն.Ե., Բալյան Գ.Ա.	Google-classroom հարթակում ԷԿԿ բաժնի կողմից մշտադիտարկման արդյունքում ավելի արդյունավետ են օգտագործվում հարթակի հնարավորությունները:
ԱՈՒՄՓ-ների վերանայում	Դալյան Ն.Ե., Բալյան Գ.Ա.,Բայաթյան Է.Ա.	Շտկվել են թերությունները, կատարվել են փոփոխություններ
Թեմատիկ տրոհումների վերանայում	Դալյան Ն.Ե., Բալյան Գ.Ա.,Բայաթյան Է.Ա.	Շտկվել են թերությունները,կատարվել են փոփոխություններ
	Դալյան Ն.Ե	

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

• Կադրային ներուժը 2022-2023թ.՝

• 1 բ.գ.թ.,մ.գ.դ., պրոֆեսորի պ., 1 բ.գ.թ. դոցենտ, 10 մ.գ.թ., դոցենտ, 1 մ.գ.թ.,ասիստենտ, 6 դասախոս: Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն՝Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն «ԴՈՄ ՄՈՍԿՎԻ»,Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի, Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի,Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի լեզվաբանության ինստիտուտի հետ, СевероКавказский федеральный университет)՝ ՀՊՄՀ և նշյալ բուհերի միջև կնքված պայմանագրերի համաձայն ;

• Գիտական աշխատանքների մակարդակն ու ծավալը:

· 2022-2023 թ. - 25 հրատարակված հոդված:

• Միջազգային գիտաժողովներում և պարբերականներում դասախոսների ընդգրկվածությունը – 17:

• Ամբիոնը ուսումնական և գիտամանկավարժական գործընթացում կիրառում է ժամանակակից տեխնոլոգիաներ ՝ COOGLE CLASSROOM, COOGLE Meet,Zoom, Power point-ի ծրագրերով կազմակերպված դասախոսություններ և միջազգային գիտաժողովներ:

· Ակտիվ մասնակցություն ՀՊՄՀ-ի քարոզարշավին:

- Ոչ բոլոր դասախոսների մասնակցությունը միջազգային գի
- Ամբիոնի ՊԴԱ-ի միջին տարիքն է՝ 55:

Մանուկյան Ա. Մ.	Socio-psychological hypnotic manipulation mechanisms of public mind used in media space on the example of thematic subscriptions on the youtube channel.	14 էջ
Թոփուզյան Ա.Օ.	Մանկավարժության զարգացման ժամանակակից հիմնախնդիրները:	ՀՊՄՀ գիտաժողով
Մանուկյան Ա. Մ.	Медиапсихология-новый этап развития психологии	ՀՊՄՀ գիտաժողով
Դալլաքյան Ա.Հ. Եգանյան Գ.Գ.	Ապագա մանկավարժի գործունեության մոդելը:	ՀՊՄՀ գիտաժողով
Հակոբյան Գ.Հ.	Կարողունակությունների վրա հիմնված գնահատման մոտեցումները հանրակրթության գործընթացում:	ՀՊՄՀ գիտաժողով
Ասատրյան Զ.Ա.	Դաստիարակության հարցերը հայ պարբերական մամուլում:	ՀՊՄՀ գիտաժողով
Բաբայան Ի.Գ.	Հաղորդակցական կարողությունը որպես ապագա ուսուցչի մասնագիտական կարևորագույն կոմպետենցիա:	ՀՊՄՀ գիտաժողով
Ասատրյան Լ.Թ. Ասատրյան Մ.Ա.	Հայ մանկավարժների ներդրումը համաշխարհային մանկավարժական մտքի պատմության մեջ:	ՀՊՄՀ գիտաժողով
Մարկոսյան Ն.Ռ.	Ժամանակակից մանկավարժի մոտիվացիոն համակարգի առանձնահատկություններն ու դրա ազդեցությունը մանկավարժական գործընթացի արդյունավետության վրա:	ՀՊՄՀ գիտաժողով
Ջանիկյան Ս.Ռ.	Նախագծային տեխնոլոգիայի կիրառումը բուհի կրթական գործընթացում:	ՀՊՄՀ գիտաժողով

Պողոսյան Լ.Մ.	Ուսանողների մասնագիտական զարգացման հիմնախնդիրը բուհում միջգիտական բնագավառների ազդեցության համատեքստում:	ՀՊՄՀ գիտաժողով
Աղուզումցյան Գ.Վ.	Բուլինգի վտանգը անձի սոցիալական զարգացման գործընթացում:	ՀՊՄՀ գիտաժողով
Հովհաննիսյան Ա.Վ.	Ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորումն ուսուցման նորագույն մեթոդների ստեղծման գործընթացում:	ՀՊՄՀ գիտաժողով
Գևորգյան Մ.Մ.	Влияние эмоционального интеллекта на учебную мотивацию учащихся.	ՀՊՄՀ գիտաժողով
Մարտիրոսյան Ն.Հ.	Կրտսեր դպրոցականների հեռավար ուսուցման իրականացման մանկավարժական պայմանները:	ՀՊՄՀ գիտաժողով
Հարությունյան Գ.Ն.	Մանկավարժական պրակտիկան որպես ուսանողների մասնագիտական կայացման միջոց:	ՀՊՄՀ գիտաժողով
Սիսյան Ս.Բ.	Մանկավարժական ռեֆլեքսիայի դերը 21-րդ դարի մանկավարժի գործունեության մեջ:	ՀՊՄՀ գիտաժողով

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
«Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրներ» մշտական գործող սեմինար:	Ամիսը մեկ անգամ, 3-րդ շաբաթվա չորեքշաբթին

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ			
Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական-մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում
Բոլորը պաշտպանած են			

Մկրտչյան Վարդիթեր Ջանիբեկի	Մանկավարժության տեսություն և պատմություն	27.10.2022թ.	

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Թոփուզյան Ա.Օ. Ասատրյան Լ.Թ. Դալլաքյան Ա.Հ. Բաբայան Ի.Գ. Աղուզումցյան Գ.Վ. Հովհաննիսյան Ա.Վ. Հակոբյան Գ.Հ. Սիսյան Ս.Բ. Պողոսյան Լ.Մ. Հարությունյան Գ.Ն. Գևորգյան Մ.Մ. Մարկոսյան Ն.Ռ. Եգանյան Գ.Գ.	ՀՊՄՀ-ի և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի	26.10.2022թ.-16.11.2022թ.	«Մեդիագրագիտություն» դասընթացի մասնակցության վկայական
Պողոսյան Լ.Մ.	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ, Հանրային լրագրության ակումբի հետ համատեղ	2022թ. հուլիս /եռօրյա	վկայական
Պողոսյան Լ.Մ.	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ,	2022թ. նոյեմբեր 17-21	Առարկայական նկարագրերի վերափոխում

	Հանրային լրագրության ակումբի հետ համատեղ /Գերմանիա/		
Պողոսյան Լ. Մ.	«Events for Future» /курс по устойчивому управлению мероприятиями/	2022 հոկտեմբեր–հունվար	Ընթացքի մեջ է, ավարտին կտրվի վկայական
Պողոսյան Լ.Մ. Հարությունյան Գ.Ն.	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ	2022 մայիս-հունիս	Թվային ուսուցումը մեծահասակների կրթությունում/ Цифровое обучение в образовании взрослых Հավաստագիր
Պողոսյան Լ.Մ. Հարությունյան Գ.Ն.	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ	2022 օգոստոս 26-28	«Մեդիագրագիտություն հասարակության խոցելի մեծահասակների համար 2. 0» Կարողությունների զարգացման եռօրյա դասընթաց Հավաստագիր
Դալլաքյան Ա.Հ.	ՀՊՄՀ	02.02.2022-23.03.2022	Intermediate English language training course, mixed-skill-based assessment level A2/B1
Ամբիոնի դասախոսներն ընդգրկված են տարբեր բնագավառի մասնագետների վերապատրաստման գործընթացներում որպես վերապատրաստողներ			
Ասատրյան Լ.Թ.	Վերապատրաստման իրականացում ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար	2022թ., մայիս	
Թադևոսյան Հ.Վ.	ՀՀ ԱՍՀՆ, միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցներ	19-20. 04. 2022թ. , Աղվերան	Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվող երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և զբաղվածության ծրագրի ներդրում ՀՀ-ում

Թադևոսյան Հ.Վ.	ՀՀ ԱՍՀՆ, միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցներ	25-26. 04. 2022թ. , Աղվերան	Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվող երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և զբաղվածության ծրագրի ներդրում ՀՀ-ում
Թադևոսյան Հ.Վ.	«Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներ՝ սոցիալական մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող	05. 2022թ.	ԱԾԽՄ երեխաների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում մեթոդական աջակցություն /վերապատրաստում/
Թադևոսյան Հ.Վ.	«Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի սաներ	05. 2022թ.	Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված պարապմունք
Թադևոսյան Հ.Վ.	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տարածքային ստորաբաժանումների սոցիալական մանկավարժներ	09. 2022թ.	«Հանրակրթական դպրոցում սոցիալ-մանկավարժի աշխատանքի մեթոդաբանություն» թեմայով սեմինար
Թադևոսյան Հ.Վ.	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տարածքային ստորաբաժանումների սոցիալական մանկավարժներ	10. 2022թ.	«Մասնագիտական կողմնորոշման հանրակրթական մոդելը» թեմայով սեմինար
Թադևոսյան Հ.Վ.	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տարածքային ստորաբաժանումների սոցիալական մանկավարժներ, ՀՊՄՀ սոցիալական մանկավարժություն մասնագիտության բակալավրի 3-րդ կուրսի ուսանողներ	11. 2022թ.	«Հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման մեթոդական ապահովում» թեմայով սեմինար

Թադևոսյան Հ.Վ.	Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ՊԴԱ	06-08. 2022թ.	«Առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստում
Թադևոսյան Հ.Վ.	Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, պարտադիր ատեստավորանը մասնակցող ՆՀՊ ուսուցիչներ	25- 26. 08. 2022թ.	ՆՀՊ առարկայի «Բարոյահոգեբանական ապահովում», «Դասավանդման մեթոդիկա» թեմաներով վերապատրաստում
Հակոբյան Գ.Հ.	ՀՊՄՀ	2022թ., օգոստոս	Պարտադիր ատեստավորման ենթական ուսուցիչների վերապատրաստում
Մարտիրոսյան Ն.Հ.	ՀՈՒՀ-ի տնօրենների և տնօրենի տեղակալների վերապատրաստում	2022թ. մայիս	Վերապատրաստող մասնագետ
Մարտիրոսյան Ն.Հ.	Ուսուցիչների վերապատրաստում	2022թ. հուլիս-հոկտեմբեր	Վերապատրաստող մասնագետ
Մարտիրոսյան Ն.Հ.	ՆՈՒՀ–ի տնօրենների վերապատրաստում	03. 08. .2022- 05.08.2022	ՆՈՒՀ–ի տնօրենների վերապատրաստող մասնագետ
Ասատրյան Լ.Թ.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևանի թիվ 173 հանրակրթական դպրոց:	2022 օգոստոս, սեպտեբեր	Դասախոսություններ՝ ՀՀ կրթության համակարգի օրենսդրական դաշտը
Դալլաքյան Ա.Հ.	Ուսուցիչների վերապատրաստում	08.08.2022- 16.08.2022	Վերապատրաստող մասնագետ
Դալլաքյան Ա.Հ.	ՆՈՒՀ–ի տնօրենների վերապատրաստում	25.07.2022- 08.08.2022	ՆՈՒՀ–ի տնօրենների վերապատրաստող մասնագետ
Դալլաքյան Ա.Հ.	Երեխաների աջակցության հիմնադրամի մասնագետների վերապատրաստում	08.10.2022	Մանկավարժական արդի հիմնախնդիրների շուրջ, հաղորդակցության կարողությունների զարգացման

			ուղղությամբ թրեյնինգի վերապատրաստող մասնագետ

Բ. Ուսանողական

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Եգանյան Գ.Գ.	Բաղդասարյան Սոնա	Օժտվածության դիագնոստիկան տարրական դպրոցում:	ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ, «Սոցիալ - մանկավարժական նորարարությունները կրթության մեջ», միջազգային գիտագործնական համաժողով /15-16 մարտի 2022/, հոդվածների ժողովածու:
Հարությունյան Գ.Ն.	Գալստյան Լյուբա	Կրտսեր դպրոցականների փոխօգնության հիմնահարցը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր:	ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ, «Սոցիալ - մանկավարժական նորարարությունները կրթության մեջ», միջազգային գիտագործնական համաժողով /15-16 մարտի 2022/, հոդվածների ժողովածու:
Դալլաքյան Ա. Հ.	Անտոնյան Սեդա	Տարրական դպրոցի շախմատի ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները:	ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի գիտաժողով, 2022թ.
Հակոբյան Գ.Հ.	Կոստանյան Աննա	Երեխայի և սոցիալական միջավայրի փոխհարաբերությունների դրսևորումը Վ. Սարոյանի ստեղծագործություններում	Հայագիտական հանդես -2(56) - Եր. : 2022, 134-145 էջեր
Սիսյան Ս.Բ.	Ադամյան Նարինե	Մանկավարժական ռեֆլեքսիայի դերը 21-րդ դարի դասավանդողի գործունեության մեջ:	«Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային

			գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան, 2022, դեկտ.15-16, 8 էջ:

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
Բուհական	Ուսանող-դասախոս գիտաժողով, ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոն	29

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
(տեքստը այստեղ) Ամբիոնը համագործակցում է Ռուսաստանի, Ֆինլանդիայի, Գերմանիայի բուհերի հետ: Համագործակցությունը տարբեր արտասահմանյան բուհերի հետ իրականացվում է մի քանի ուղղություններով. Ամբիոնի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովին մասնակցել են Մինսկի Մակսիմ Տանկի անվան Բելոռուսի պետական մանկավարժական համալսարանի, Կազանի ֆեդերալ համալսարանի, Բելոռուսի մասնագիտական կրթության հանրապետական ինստիտուտի դասախոսները:

Ամբիոնի դոցենտներ Լ. Պողոսյանը, Ս. Սիսյանը, Գ. Հարությունյանը, Գ. Եգանյանը մասնակցել են Մոսկվայի, Պետերբուրգի, Ղազախստանի, Մոլդովայի մանկավարժական համալսարանների առցանց կոնֆերանսների և վեբինարների:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
(տեքստը այստեղ) Ամբիոնը հիմնականում համագործակցել է ԴԻ-ՎԻ-ՎԻ ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի հետ: Կազմակերպվել է համատեղ սեմինար ″Մեծահասակների կրթությունը ՀՀ-ում″ թեմայով: Քննարկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Վերաիմաստավորելով համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության» զեկույցը: Ամբիոնի 3 դասախոսներ մասնակցել են «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» վերապատրաստմանը և ստացել դասընթացավարի հավաստագիր: Ամբիոնի 13 դասախոսներ վերապատրաստվել են ԴԻ-ՎԻ-ՎԻ ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված ″Մեդիագրագիտություն″ դասընթացի շրջանակներում: Մյուս ուսումնական տարում կշարունակվի համագործակցությունը ԴԻ-ՎԻ-ՎԻ ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի հետ՝ ″Անդրագոգիկա″ դասընթացի առարկայական նկարագիրը վերանայելու և վերապատրաստողների դասընթացավարների պատրաստման ոլորտում:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Երեխաների կրթության սոցիալականացման և անհատականացման գիտահետազոտական կենտրոն, Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա			√	√	
Կրթության զարգացման դաշնային ինստիտուտ, Մոսկվա			√		

Ստավրոպոլի պետական մանկավարժական ինստիտուտ, ընդհանուր մանկավարժության և կրթական տեխնոլոգիաների ամբիոն			√		

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
Պողոսյան Լ.Մ.	ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ	Գերմանիա, Ազատ համալսարան	2022թ. նոյեմբերի 17-21	Վերանայվել են «Անդրագոգիկա» և «Մեդիակրթությունը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում» առարկաների ՄԿԾ-ը:
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

Կրթական հետազոտությունների եվրոպական ասոցիացիայի /EERA 2022/թ.-ի տարեկան համաժողով Հետազոտության խորագիր՝ Distance Training Process at Armenian State Pedagogical University After Kh. Abovyan in the Context of Current Education Challenges.		22-26. 08.2022	Հակոբյան Գրետա Սիսյան Սուսաննա Հովհաննիսյան Արուսյակ

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
«Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» 12-շաբաթյա դասընթաց	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ	2022 հուլիս-հոկտեմբեր	Դասընթացավարներ Գայանե Հարությունյան Լուսինե Պողոսյան
«Մեդիագրագիտություն»	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ	2022 հոկտեմբեր-նոյեմբեր	Դասընթացավարներ Գայանե Հարությունյան Լուսինե Պողոսյան

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
(տեքստը այստեղ) Ամբիոնը մշտապես կանգնած է հանրակրթական դպրոցների կողքին, մասնավորապես, ամբիոնի հենակետային դպրոցներում ստեղծվել են ծնողական համալսարաններ, որտեղ նրանց մեր դասախոսների օգնությամբ հոգեբանամանկավարժական, առողջապահական, իրավական, քաղաքացիական գիտելիքներ են փոխանցվում:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը

Ուսումնական	Թոփուզյան Ա.Օ. Աղուզումցյան Գ.Վ. Ջանիկյան Ս.Ռ. Բաբայան Ի.Գ. Մարտիրոսյան Ն.Հ	Ավագ դպրոցականների հանրապետական օլիմպիադա մանկավարժությունից	2022թ. մարտ-հունիս
	Ասատրյան Լ.Թ.	Հանդիպումներ ավագ դպրոցականների հետ Շիրակի մարզի Ջորակապ, Սառնաղբյուր գյուղերի հանրակրթական դպրոցներում, Մարալիկ քաղաքի թիվ 2 և Երևանի Ավ. Իսակյանի անվան թիվ 16 դպրոցներում	2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին
	Եգանյան Գ.Գ. Հարությունյան Գ.Գ.	«Մասնագիտական կողմնորոշում՝ մանկավարժի, մասնավորապես ուսուցչի մասնագիտության կարևորություն» (ՀՊՄՀ-ի մասնագիտությունների ներկայացում Արմավիրի մարզի "Ոսկեհատի միջնակարգ դպրոց" ՊՈԱԿ-ի ավագ դպրոցականների շրջանում)	06.04.2022թ.
	Բաբայան Ի.Գ. Հովհաննիսյան Ա.Վ.	«Տարածենք բարություն» հանդես Երևանի թիվ 104 դպրոց	25. 05. 2022թ.
	Բաբայան Ի.Գ. Սիսյան Ս.Բ.	«Ինչու եմ ես ցանկանում մանկավարժ դառնալ» թեմայով մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ Արամուսի Վ.Առաքելյանի անվան միջն. դպրոցի ավագ դասարանների և Երևանի թիվ 127 ավագ դպրոցի աշակերտների շրջանում:	13.04.2022
	Մարկոսյան Ն.Ռ.	«Ինչ եմ ուզում դառնալ»թեմայով բանավեճ Ջերմուկի կրթահամալիրում	04.2022թ.

	Ջանիկյան Ս.Ռ.	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ Երևան քաղաքի թիվ 148 ավագ դպրոցում, Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի միջնակարգ դպրոցում, Կոտայքի մարզի Չարենցավանի Մեսրոպ Մաշտոցի անվան ավագ դպրոցում, Կոտայքի մարզի Արզականի Խ.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում:	08.04.22 11.04.22 14.04.22
	Մարտիրոսյան Ն. ՍԿ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներ	«Հայ դպրոցի և մանկավարժական մտքի երախտավորները Մաշտոցից մինչև մեր օրերը» թեմայով Նախագծային աշխատանք Երևանի թիվ 104 հիմնական դպրոց:	2022թթ. մայիս
	Մարտիրոսյան Ն. ՀԿ ֆակուլտետի մագիստրոսներ	«Յուրաքանչյուր երեխա ապրելու իրավունք ունի» թեմայով քարոզի մրցույթ Երևանի թիվ 104 հիմնական դպրոց	2022թ. ապրիլ
Մեթոդական	Ասատրյան Լ.Թ.	«Դպրոցի կառավարման ժամանակակից մարտահրավերներ » թեմայով դասախոսություն Շիրակի մարզի Ջրափի գյուղի հանրակրթական դպրոցի կոլեկտիվի համար:	2022 թ., ապրիլ
	Թադևոսյան Հ.Վ.	Մասնագիտական կողմնորոշման պարապմունք Երևանի թիվ 46 ավագ դպրոցում	2022թ.մայիս
	Թադևոսյան Հ.Վ.	Մասնագիտական կողմնորոշման պարապմունք Երևանի թիվ 112 ավագ դպրոցում	2022թ.մարտ

	Թադևոսյան Հ.Վ.	«Ինչպե՞ս հասնել հաջողության» թեմայով պարապմունք Երևանի թիվ 134 հիմնական դպրոցում	2022թ.մայիս
	Մարտիրոսյան Ն.Հ.	Երևանի 104 դպրոցի 9-րդ դ-ի այց ՀՊՄՀ-ի Թանգարան	2022թ. հոկտեմբեր
Դաստիարակչական	Մարտիրոսյան Ն. ՍԿ ֆակուլտետի մագիստրոսներ	«Հավերժի ճամփով» հուշ-ցերեկույթ Երևանի թիվ 104 հիմնական դպրոց:	2022թ. Նոյեմբեր
	Մարիտիրոսյան Ն. Հ. Աղուզումցյան Գ. Վ. Դալլաքյան Ա.Հ.	Մասնագիտական կողմնորոշում Կոտայքի մարզի Մարմարիկ, Փյունիկ,Արտավազդ, Մեղրաձոր գյուղերի միջնակարգ դպրոցների աշակերտների շրջանում	2022թ. ապրիլ
	Դալլաքյան Ա.Հ. Գևորգյան Մ.Մ.	Մասնագիտական կողմնորոշում Երևանի թիվ 54 ավագ դպրոցի աշակերտների շրջանում	2022թ. փետրվար
	Մարիտիրոսյան Ն. Հ. Աղուզումցյան Գ. Վ. Մանուկյան Ա.Մ.	Մասնագիտական կողմնորոշում Երևանի թիվ 198 դպրոցի աշակերտների շրջանում	09.12.2022թ.
	Հակոբյան Գ.Հ.	«Աբովյանը մի կտոր Հայաստան է»/Աբովյան քաղաքի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոց/	01.04. 2022թ.
	Մարտիրոսյան Ն.Հ. Սոց. մանկ. 4-րդ կուրսի ուսանողներ	«Իմ իրավունքները իմ աչքերով» թեմայով կլոր սեղան Երևանի թիվ 104 հիմնական դպրոց:	Մայիս 2022թ.

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող	Միջոցառման անվանումը	Ժամկետը

	Ա.Ա.Հ.		
Ելույթ ռադիոյով	Հովհաննիսյան Ա.Վ.	«Ժամանակի վկան» հաղորդաշար	29.01.2022թ.
Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի 15 դեռահաս սաների ուսումնաճանաչողական այցի կազմակերպում 100-ամյա Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ	Եգանյան Գ.Գ.	100-ամյա Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ PR Մասնագիտական կողմնորոշման նպատակով	14.11.2022 թ.
Միջոցառում նվիրված բուհի 100-ամյակին Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոցում	Ասատրյան Զ.Ա.	Հայոց Աստղաբույլ	01. 04. 22թ.
Դասախոսություն	Թադևոսյան Հ.Վ.	Բարոյահոգեբանական ապահովմանն ուղղված հարցերի մասին ՀՀ ՋՈՒ զորամասերում	02. 2022թ.
Սեմինար ՀՀ ՋՈՒ ուսումնական զորամասի հրամանատարական կազմի համար	Թադևոսյան Հ.Վ.	«Զինվորական առաջնորդության հիմնախնդիրը հոգեբանության մեջ» թեմայով	10. 2022թ.
Ելույթ հանրային ռադիոյով	Թոփուզյան Ա.	1.«ՀՊՄՀ-ն 100տարեկան է»թեմայով: 2.«ՈՒսուցչությունը համագործակցային մասնագիտություն է:»թեմայով:	
Ելույթ Հեռուստատեսությամբ	Թոփուզյան Ա.	1.Հ1-Մեր արխիվը:«Դպրոցները և արտադպրոցականուսումնական հաստատությունները:» թեմայով 2.Հաջողության բանաձև-«Մեդիագրագիտությունը՝ժամանակի պահանջ:» թեմայով:	

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
(տեքստը այստեղ) Ամբիոնը 2022 թվականի ընթացքում կատարելագործել է դասավանդվող բոլոր առարկաների փաթեթների բովանդակությունը՝ ավելի համապատասխանեցնելով դրանք մասնագիտական վերջնարդյունքներին: Հատկապես քննարկվել են գործնական աշխատանքների, ինքնուրույն աշխատանքի, յուրաքանչյուր դասախոսության ընթացքում և դրանից հետո տրվող առաջադրանքները և դրանց ուղղակի կապը կրթական հիմնական վերջնարդյունքների հետ: Ամբիոնի նիստերում, լսվել, քննարկվել և համապատասխան եզրակացություններից հետո հաստատվել են վերափոխված ԱՈՒՄՓ-ները:Պրակտիկա է դարձել դասախոսների կողմից միմյանց ՄԿԾ-ի փաթեթների ուսումնասիրությունը և գնահատումը,որը նպաստում է փորձի փոխանակմանը և ՄԿԾ-ի մշակման կատարելագործմանը: Հիմնովին վերանայվել են մագիստրոսական կրթական ծրագրերի համար նախատեսված «Մանկավարժական մարդաբանություն» և «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկաների փաթեթները: Վերանայվել է նաև ընտրովի առարկաների ցանկը՝ առաջադրվել են նոր դասընթացներ, որոնց ծրագրերը մշակման փուլում են՝ մասնավորապես «Թվային գրագիտություն» և «Գնահատում և ռեֆլեքսիա»:Լ.Պողոսյանի Գերմանիայի գործուղումից հետո վերանայվել են նաև «Անդրագոգիկա » և «Մեդիակրթությունը տարրական դպրոցում »դասընթացների ծրագրերը: Վերանայվել է բակալավրիատում դասավանդվող «Մանկավարժություն» առարկայի ծրագիրը, որի արդյունքում առարկայի դասավանդման ժամաքանակից դասաժամեր են հատկացվել հանրակրթության քաղաքականությունն արտահայտող օրենսդրական փաստաթղթերի ուսումնասիրության համար, որպես ԱՈՒՄՓ պարտադիր բաղադրիչ: ԱՈՒՄՓ վերջնական տարբերակը հաստատվել է 2022 թվականի սեպտեմբերի համապատասխան ամբիոնի նիստում: Ամբիոնը իրականացրել է ինքնավերլուծություն 2021-2022 ուս. տարվա համար: Ամբիոնում 2022 թվականի ընթացքում կատարվել են փոխադարձ դասալսումներ՝ ըստ նախապես պլանավորված և ամբիոնի նիստով հաստատված ժամանակացույցի, արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերում: 2022-2023 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում պարբերաբար մշտադիտակվել է Google Classroom էլեկտրոնային հարթակում բոլոր դասախոսների ակտիվության աստիճանը: Բոլոր դասախոսների կողմից՝ իրենց կողմից դասավանդվող առարկաների էլեկտրոնային էջերում առկա էին անհրաժեշտ նյութերն ու փաթեթները, միակ բաց թողումը կապված էր էլեկտրոնային մատյանների լրացման հետ, որն էլ համապատասխան կարգադրությունից հետո շտկվել է: Ամբիոնի անձնակազմը 2022թ.-ի հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին անցել է մեդիակրթության վերապատրաստման դասընթաց:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
(տեքստը այստեղ)

2022թ. -ին ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյա միջոցառումների շրջանակներում, ամբիոնը նախաձեռնել էր մանկավարժական հանրապետական օլիմպիադա, որին մասնակցեցին հանրապետության բոլոր մարզերից 520 աշակերտներ:Օլիմպիադայի հաղթողը՝ Մարտունու Տիգրան Աբրահամյանի անվան դպրոցի 12-րդ դաս-ի աշակերտուհի Էդիտա Օսեյանը անվճար հիմունքներով ընդունվեց համալսարանի պարարվեստի բաժին:

Համալսարանի հիմնադրման 100-ամյա միջոցառումների շրջանակում Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտի կողմից համալսարանին ի ցուցադրության տրված արևմտյան Հայաստանում և օսմանյան կայսրության այլ հայաշատ քաղաքներում մինչև հայոց ցեղասպանությունը գործած հոչակավոր հայկական վարժարանների և դպրանոցների մասին պատմող ցուցահանդեսում ամբիոնի բոլոր դասախոսները, բոլոր ֆակուլտետներում կազմակերպել են բաց դասեր, որոնք անցկացվել են տվյալ ֆակուլտետի ուսանողների կողմից: Այս դասերը մեծապես նպաստեցին դասախոս- ուսանող համագործակցությանը և միասին գիտելիք ստեղծելու նպատակի իրականացմանը:Այդ նույն նպատակին է ուղղված նաև ամբիոնի, ՀՊՄՀ թանգարանի և Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտի հետ համատեղ անցկացվող «Օսմանյան կայսրության հայկական վարժարանների հետքերով. ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանողական նախագծերի մրցույթը, որը կամփոփվի 2023թ.ապրիլին:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Մանկավարժության ամբիոնի սեպտեմբեր ամսվա ընթացքում էլեկտրոնային հարթակում իրականացրած մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություն	Լ. Նազարյան	Մշտադիտարկման վերլուծության արդյունքում դասախոսներին հրահանգվել է առարկայական նկարագրերը և հարցաշարերը ներբեռնել առանձին տոփիկներում:
Մանկավարժության ամբիոնի հոկտեմբեր ամսվա ընթացքում էլեկտրոնային հարթակում իրականացրած մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություն	Լ. Նազարյան	Մշտադիտարկման վերլուծության արդյունքում դասախոսներին հրահանգվել է լրացնել էլեկտրոնային մատյանները:
Մանկավարժության ամբիոնի նոյեմբեր ամսվա ընթացքում էլեկտրոնային հարթակում իրականացրած մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություն	Լ. Նազարյան	Մշտադիտարկման վերլուծության արդյունքում դասախոսներին հրահանգվել է ուսանողներին ավելի հստակ ներկայացնել գնահատվող առաջադրանքների գնահատման կարգը և դնել կատարման իրատեսական ժամկետներ:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ամբիոնի պրոֆեսոադասախոսական անձնակազմը /ՊԴԱ/ հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, որը հստակ նշված է նաև ամբիոնի ՊԴԱ անհատական աշխատանքային պլաններում: Աշխատանքային պլանի կատարողականը քննարկվել է ամբիոնի նիստում, ինչպես նաև հաստատվել են ներակայացված հաշվետվությունները: Ուսումնական աշխատանքների պլանավորված ծավալն՝ ըստ ուսումնական պլանի համապատասխանում է կատարված աշխատանքների ծավալին: Ամբիոնի դասախոսները ապահովել են ծանրաբեռնվածությամբ նախատեսված դասաժամերը: Կատարվել են առարկայական ուսումնամեթոդական փաթեթների վերանայումներ և լրամշակումներ: Մասնավորապես վերանայվել են կառավարում մշակույթի ոլորտում կրթական ծրագիրը և նրանում բովանդակված առարկայական նկարագրերը, որը ըստ նախատեսված կարգի մինչև 2022-2023 ուս.տարվա ավարտը կներկայացվի հաստատման սահմանված կարգի համապատասխան:Կրթության կառավարում մագիստրոսական ծրագրում ընդգրկված ընտրովի դասընթացներն ևս համալրվել են նոր արդիական առարկայական նկարագրերով՝ որոնց վերջնարդյունքները համահունչ են գործատուների պահանջներին: Վերանայվել են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը՝ անհրաժեշտության դեպքում կատարվել են վերաձևակերպումներ՝ պահպանելով թեմատիկան: Ընդհանրացնելով, կարող ենք փաստել, որ հաշվետու տարում Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը կատարել է ուսումնական աշխատանքների նախատեսված ծավալը: Ամբիոնի աշխատակազմը առերես դասերի հետ միասին սահուն կերպով իրականացնում է նաև առցանց ուսուցում՝ համալսարանի կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից մշակված ընթացակարգի համաձայն: Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ ամբիոնը ապահովել է ուսումնական գործընթացի անընդհատությունը և նախատեսված աշխատանքների ծավալների կատարումը:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացված աշխատանքները համապատասխանում են բուհի և ամբիոնի առաքելությանը, առաջադրված նպատակներին և խնդիրներին: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները, ուսանողակենտրոն ուսուցման մեթոդների կիրառումը և գիտական գործունեության արդյունքների ինտեգրումը դասավանդման գործընթաում նպաստում են ամբիոնի կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Դասավանդման մեթոդները միտված են ուսանողակենտրոն մոտեցմանը՝ ուսուցման բոլոր փուլերում խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների աճը, մասնագիտական գիտելիքների ձեռքբերումը, որոնք նպաստում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարմանը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունների և քննադատական ու ստեղծագործական մտածողության դրսևորմանը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև

հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական ծրագրերի հիմնական պահանջների:

Դասավանդումը ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատական/ պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:

Դասախոսությունների ընթացքում թեմաները ներկայացվում են ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականությամբ: Սեմինարների ընթացքում իրականացվում են խմբային և անհատական քննարկումներ և անդրադարձի կատարում՝ նպատակ ունենալով ուսանողների մոտ զարգացնել քննադատական, ստեղծագործական մտածողություն:

Գործնական պարապմունքներն ուղղված են խնդիրների լուծմանը, որոշման կայացմանը, փաստաթղթերի վերլուծությանը և թեմատիկ քննարկումներին: Ուսանողների ինքնուրույն ուսմանը նպաստելու համար՝ առավել խորը գիտելիքներ ձեռքբերելու նպատակով կատարվում են անհատական խորհրդատվություն, անհատական հետազոտական աշխատանքի և ինքնազարգացման աջակցում՝ լրացուցիչ նյութերի տրամադրման միջոցով:

Ամբիոնի նիստերի ընթացքում քննարկվում և վերանայվում են դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքները՝ նպատակ ունենալով ապահովել դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը/ արդյունքները բերված են աղյուսակում/:

Պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական որակները համապատասխանում են «Կրթության կառավարում» «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին: Ամբիոնում հաշվետու տարում յուրաքանչյուր կրթական ծրագրի առարկայի դասավանդման պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Յուրաքանչյուր կրթական ծրագրի առարկան դասավանդվում է միայն համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ և փորձառություն ունեցող մասնագետի կողմից, որոնք դիտարկվում են դասալսումների ընթացքում, այնուհետև արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում:

Հաշվետու տարում արձանագրվել են մասնագետների որակի բարձրացման ցուցանիշներին համապատասխան արդյունքներ: Այս հարցում առավելապես կարևորվել է ուսանողներից հետադարձ կապը, ամբիոնի վարիչի և որակի պատասխանատուի կողմից դասալսումների իրականացումը:

Ամբիոնի վարիչի կողմից արձանագրված նկատառումները և աշխատանքի բարելավման առաջարկները ներկայացվել են ամբիոնի քննարկմանը: Հարկ է նշել, որ դասախոսների մասնագիտական գիտելիքների կատարելագործմանն նպաստում են նաև նրանց ակտիվ մասնակցությունը տարբեր միջոցառումներին՝ գիտաժողովներ, սեմիներներ և կլոր սեղաններին և այլն:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հաշվետու տարում ամբիոնի կողմից իրականացված գործընթացները նպատակաուղղված են եղել մասնագիտությունների կրթական ծրագրերի ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության արդյունավետ մեթոդների ընտրությանը՝ նպաստելով ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքների կիրառմանը:

Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության սկզբունքի վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով:

Գնահատվում են ուսանողի՝ ա. գիտելիքը, բ. ունակություններն ու կարողությունները, գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգի համաձայն գնահատում է դիմորդի նախնական գիտելիքները և ելքային արդյունքների համապատասխանությունը: Դասընթացների գնահատման մեթոդներն են՝

- տեսական դասընթացների պարագայում՝ գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),
- գործնական դասընթացների պարագայում՝ գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ:

Հետազոտական աշխատանքների (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական թեզ) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ սահմանված գնահատման կարգի համաձայն:

Գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների: Վերածևակարպվել են կրթական ծրագրի վերջնարդյունքը ըստ՝ մասնագիտական գիտելիքի և իմացության, գործնական մասնագիտական կարողությունների, ընդհանրական (փոխանցելի) կարողությունների:

Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչների մոդել-ընթացակարգերի համաձայն՝

հստակեցվել են ընթացիկ հանձնարարականների, գործնական աշխատանքների գնահատման բաղադրիչները և չափանիշները, Էլեկտրոնային հարթակում գնահատվող հանձնարարությունները

մշակվել են նաև կուրսային աշխատանքի բովանդակային մասի գնահատման սանդղակը թեմայի վերաբերյալ ուսանողի տիրապետման և ներկայացման մակարդակների:

Գնահատման մանրամասները ներկայացված են ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում (http://armspu.am): Ակադեմիական ազնվություն ապահովման նպատակով աշխատանքները ստուգվում են համեմատելով նախորդ տարիների աշխատանքների հետ, թեմաները ընդհանրական խնդիրներից իջեցվել են տեղային խնդիրների բացահայտման և լավագույն փորձի ուսումնասիրության մակարդակի: Խրախուսվում է համեմատական վերլուծության և բենչմարքինգի կիրառումը մագիստրոսական թեզերում, կուրսային և ավարտական աշխատանքներում:

Նշենք նաև, որ գիտելիքների ստուգումը իրականացվում է ընթերակայի անմիջական մասնակցությամբ, որը նպաստում է գնահատման օբյեկտիվությանը: Գործում է նաև բողոքարկման համակարգը սահմանված կարգի համաձայն:

Վերոնշյալ գործընթացների իրականացումը՝ կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետադարձ

կապի ապահովումը, ակադեմիական ազնվության մեխանիզմների կիրառումը հաշվետու տարում նպաստել են ուսուցման որակի բարելավմանը:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերից առանձնացվել են Էլեկտրոնային կառավարման Google Classroom հարթակում առկա խնդիրների լուծմանը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակի բարձրացմանը, դրանց աշխատանքների կատարման ընթացքի և ուսուցման արդյունավետ կազմակերպման վերաբերյալ այլ հիմնահարցերը, որոնք պարբերաբար ներկայացվում և քննարկվում են ամբիոնում: Քննարկվող հիմնական հարցերից է նաև մասնագիտական պրակտիկաների կազմակերպման, նոր համագործակցությունների և ամբիոնի գործունեության մի շարք այլ առաջնային հարցեր, որոնք ամփոփ ներկայացված են ստորև:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
2022թ. հունվարի 2 1-ի նիստ N 6	1. Առաջին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփման հարցը: 2. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատում: 3. Ընտրովի դասընթացների ներկայացման և ուսունական պլանում ընդգրկման հարցը: 4. Էլեկտրոնային կառավարման Google Classroom հարթակում ամբիոնի դասախոսական կազմի գործունեության մշտադիտարկման հարցը, որն իրականացվել է հանձնախմբի՝ ամբիոնի վարիչի, որակի	1.Քննարկման արդյուքում որոշեցին առաջին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփման հարցը ընդունել դրական: 2.Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈւՄՓ-երը /թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերը/: 3. Քննարկումների արդյունքում որոշեցին հաստատել 2021-2022 ուստարում ամբիոնի՝ համապատասխան կուրսերում դասավանդվող ընտրովի դասընթացների առարկայացանկը: 4. Էլեկտրոնային կառավարման Google Classroom հարթակում տեղադրված դասընթացներում առկա խնդիրների քննարկումը և կատարված եզրահանգումները ընդունել ի գիտություն, առաջնորդվել Google Classroom հարթակում գործունեության բարելավմանն ուղղված

	պատասխանատուի և ամբիոնի մասնագետի կողմից: 5. 2021-2022 ուսումնական տարվա ՀԲ 4-րդ կուրս 1-ին կիսամյակի Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության ուսումնական պրակտիկայի պաշտպանության ամփոփման և հաշվետվության ներկայացման հարցը: 6. ԱԲ 3-րդ կուրս 2-րդ կիսամյակի Կառավարում (ըստ ոլորտի) ուսումնական պրակտիկայի կազմակերպման հարցը:	մոտեցումներով՝ ապահովելով PDCA շրջափուլը, 5.Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա ՀԲ 4-րդ կուրս 1-ին կիսամյակի Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության Ուսումնական պրակտիկայի հաշվետվությունը և ներկայացնել պրակտիկայի վարչություն: 6.Մշակույթի կառավարմամբ սովորող ուսանողների Պրակտիկան կազմակերպել համաձայն սահմանված ժամանակացույցի Երևանի քաղաքապետարանի Մշակույթի և տուրիզմի ստորաբաժանումներում:

2022թ. փետրվարի 18-ի N7	1. Էլեկտրոնային կառավարման Google Classroom հարթակում ընդգրկված դասընթացներում առկա խնդիրների վերացման արդյունքների քննարկում: 2. ՈՒսումնական պրակտիկայի կազմակերպման արդյունքների ներկայացում: 3. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը: 4.Հեռկա 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախնական քննարկում	1.Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն և սահմանված ժամանակում վերացնել բացթողումները: 2.Պրակտիկայի անցկացման գործընթացը գնահատել դրական: 3.Հաստատել 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը: 4. Հեռկա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ընթացքը համարել դրական և շարունակել ղեկավարել ուսանողների աշխատանքները՝ ուշադրություն դարձնելով հետազոտական մասը գործնական տվյալներով ապահովվելուն:
2022թ.մարտ 09-ի նիստ N 8	1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատաքների հաշվետվությունը՝ ըստ ղեկավարների: 2.Կրթության Կառավարում մագիստրատուրա առկա1-ին կուրս և հեռակա 2-րդ, Կառավարում /ըստ ոլորտի/ ԱԲ 3-րդ և ՀԲ 4-րդ կուրսերում ուսումնական պրակտիկան կազմակերպելու հարցը: 3.Կրթության Կառավարում մագիստրատուրա առկա1-ին և հեռակա 2-րդ, Կառավարում/ըստ ոլորտի/ 3-րդ կուրսերի պրակտիկայի հաշվետվությունների ներկայացման և հաստատման հարցը:	1.Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատաքների կատարման ընթացքը համարել դրական: 2.Կրթության Կառավարում մագիստրատուրա առկա1-ին կուրս և հեռակա 2-րդ, Կառավարում /ըստ ոլորտի/ ԱԲ 3-րդ և ՀԲ 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկան կազմակերպելու ընթացքը համարել դրական: 3.Հաստատել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի Կառավարում մագիստրատուրա առկա1-ին և հեռակա 2-րդ, Կառավարում/ըստ ոլորտի/ 3-րդ կուրսերի պրակտիկայի հաշվետվությունները: 4.Հաստատել 2021-2022 ուստարվա 2-ին կիսամյակի քննության հարցատոմսերը:

	4.2021-2022 ուստարվա 2-ին կիսամյակի քննության հարցատոմսերի հաստատման հարցը:	
2022թ.ապրիլի 13-ի նիստN 9	1.Առկա ուսուցմամբ Կրթության կառավարում և Պրոդուսերական գործ ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության երաշխավորելու հարցը՝ ուսանողների ատեստավորման արդյունքնների հիման վրա: 2.Մագիստրոսական թեզերը գրախոսության ուղարկելու հարցը: 3.Կրթության Կառավարում մագիստրոսական ծրագրի 2-րդ կիսամյակի ուսանողների 2-րդ միջանկյալ ստուգման արդյունքնների ամփոփման հարցը ինչպես նաև այլ ֆակուլտետներում ամբիոնի կողմից իրականացվող միջանկյալ ստուգումների նախապատրաստման հարցը:	1.Մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը համարել դրական և երաշխավորել պաշտպանության: 2.Քննարկման արդյուքում որոշվեց արտաքին և ներքին գրախոսախոսների կազմը՝ Կրթության Կառավարում և Պրոդուսերական գործ մագիստրատուրա 2-րդ կուրսերի շրջանավարտների աշխատանքների համար: 3.Իրականացվող աշխատանքնները համարել դրական:

2022թ.Մայիս 16-ի N 10	1.Մագիստրատուրայում ուսուցման միջանկյալ ստուգումների և հեռակա բակալավրում ուսուցման կազմակերպման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը: 2.Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստման և կազմակերպման, գրախոսներ նշանակելու հարցը 3. Գիտական հոդվածների և բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում մասնագիտական նյութերի տպագրման հարցը:	1.Աշխատանքները իրականացնել ըստ սահմանված կարգի ապահովելով ուսումնական պլանով նախատեսված ժամանակացույցը 2.Պաշտպանության երաշխավորել ՀԲ 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքները, նշանակել գրախոսներ: 3. Ակտիվացնել ուսումնական տարում գիտական հոդվածների և ուսումնամեթոդական աշխատանքների տպագրումը
2022թ. հունիսի 8-ի նիստ N 11	1.Մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփման և հաշվետվությունների հաստատման հարցը: 2.2022-2023 ուստարվա ծավալի և ծանրաբեռնվածության նախնական քննարկում: 3.Գիտական հոդվածների և ուսումնամեթոդական նյութերի պատրաստման ուղղությամբ իրականացվող աշխատանքնների արդյունքները	1.Մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփման հարցը համարել դրական հաստատելով հաշվետվությունները և ներկայացնել ուսումնական բաժին: 2.2022-2023 ուստարվա համար տրամադրած ծավալը և ծանրաբեռնվածությանը ընդունել ի գիտություն: 3.Գիտական հոդվածների, ուսումնամեթոդական աշխատանքների, գիտաժողոների մասնակցության արդյունքները ընդունել ի գիտություն:

2022թ. օգոստոսի 30-ի նիստ N 1	1.Ամբիոնի 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը: 2.Ամբիոնի 2022-2023 ուս. տարվա ծավալի և դասաբաշխման հարցը: 3.Ընտրովի դասընթացների ներկայացման և ուսունական պլանում ընդգրկման հարցը: 4.1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների թեմատիկ տրոհման, առարկայական նկարագրերի և ուսումնական փաթեթների հաստատման հարցը: 5.2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերի հաստատման հարցը:	1.Քննարկման արդյուքում որոշեցին, հաստատել ամբիոնի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը: 2.2022-2023 ուս. տարվա ծավալի և դասաբաշխման գործընթացը համապատասխանում է դասախոսների մասնագիտական ուղղվածությանը և համապատասխանում է սահմանված պահանջներին: 3.Քննարկումների արդյունքում որոշեցին հաստատել 2022-2023 ուս. տարում ամբիոնի՝ համապատասխան կուրսերում դասավանդվող ընտրովի դասընթացների առարկայացանկը 4.Հավանության արժանացնել և հաստատել ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների 2022-2023 ուս. տարվա ուսումնական փաթեթները, որոնք ներառում են առարկայական նկարագրերի, տրոհումների, դասախոսություններ և սեմինար պարապմուքների առաջադրանքների վերանայված տարբերակները: 5.Հաստատել առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերը և հարցատոմսերը:

2022թ. սեպտեմբերի 16-ի նիստN 2	1.Ամբիոնի միջազգային գործունեության, և համաժողովներին մասնակցության արդյուքների ներկայացում և քննարկում: 2.Դասախոսների անհատական աշխատանքային պլանների հաստատում: 3.Ամբիոնի որակի պատասխանատուի ներկայացրած 2022-2023 ուստարվա որակի ապահովման ծրագրի քննարկում և հաստատում, որը բովանդակում է նաև ամբիոնի կողմից իրականացվող կրթական երկու ծրագրերի բարելավման և վերանայման աշխատանքները: 4.2022-2023 ուս.տարում Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մշտադիտարկու մ իրականացնելու հարցը: 5.Մասնագիտական պրակտիկաների նախապատրաստման հարցը: 6.Ամբիոնում գիտահետազոտական աշխատաքների կատարման հարցը /2022թ. կատարած գիտական աշխատաքների մասին/:	1.Քննարկման արդյուքում որոշեցին ամբիոնի միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով գործընկերային կապեր հաստատել արտերկրյա համալսարանների հետ, մասնավորապես նշվեց Իտալիայի Մաչերատա համալսարանի հետ համագործակցության հիմնական ուղղությունները: 2.Հաստատել 2022 – 2023 ուսումնական տարվա անհատական աշխատանքային պլանները: 3.Քննարկումների արդյունքում որոշեցին հաստատել 2022-2023 ուստարվա որակի ապահովման ծրագրը: 4.2022-2023 ուս. տարում հաստատված հանձնաժողովի կողմից էլեկտրոնային հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մշտադիտարկում ՝ սահմանված բաղադրիչների համաձայն: 5.Հաստատել Մասնագիտական պրակտիկաների ժամանակացույցերը ըստ ուսումնական պլանի: 6.Հաստատել և գիտահետազոտական կետրոնին ներկայացնել 2022 թվականի ընթացքում կատարած գիտական աշխատաքների ցանկը:

հոկտեմբերի 19-ի նիստ N 3	1.Առաջին միջանկյալ ստուգումների կազմակերպման հարցը: 2.Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի կուրսային/1-ին կիսամյակ/, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում և գիտական ղեկավարների նշանակման հարցը: 3.Հեռակա ուսուցման (մագիստրատուրա) առաջին կուրսերի պարապմունքների նախապատրաստում և կազմակերպում:	1.Առաջին միջանկյալ ստուգումները իրականացնել ընթերականների մասնակցությամբ, նախապես կազմակերպել խորհրդատվություն: 2.Հաստատել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի կուրսային/1-ին կիսամյակ/, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները 3.Հեռակա ուսուցման (մագիստրատուրա) առաջին կուրսերի պարապմունքների նախապատրաստումը և կազմակերպումը համարել դրական:
Նոյեմբերի 22-ի նիստ N 4	1.Հետազոտական և մասնագիտական պրակտիկաների արդյուքների ամփոփում: 2.2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցի հաստատման հարցը 3.Մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատաքների ընթացքի քննարկման հարցը 4.2022թ. ամբիոնի տարեկան հաշվեվության ներկայացման հարցը: Ընթացիկ հարցերում ամբիոնի վարիչի զեկույցը՝ Մաչերատայի համալսարանում իրականացրած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն և հետագա համագործակցության վերաբերյալ տեղեկատվություն:	1.Պրակտիկաների արդյուքները համարել դրական: 2.2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցը: 3.Որոշեցին ատեստավորման նպատակով մինչև նախապաշտպանությունը կազմակերպել խորհրդատվական հանդիպում ՀՄ 3-րդ կուրսի ուսանողների հետ,իսկ մինչև 2022-ի ավարտը Կրթության կառավարման բոլոր կուրսերում և կառավարում ըստ ոլորտի առկա և հեռակա ավարտական կուրսերում սահմանել խորհրդատվությունների գրաֆիկ մագիստրոսական թեզերի ընթացքը համարել դրական 4.Հաստատել 2022թ. ամբիոնի տարեկան հաշվեվությունը:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	
Հաստիքային	4	-	-	7	5	1	1	
Համատեղող	4	-	1	4	4	-	2	
Ժամավճարային	-	-	-	-	-	-		
Ընդամենը								

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ամբիոնում մեծ ուշադրություն է դարձվում ուսանողներին ԱՈՒՄՓ փաթեթների տրամադրմանն ու դասավանդման էլեկտրոնային հարթակում տեղադրված նյութերի որակի ապահովմանը: 2022թ. հունվարի 21-ի նիստի № 6 արձանագրությամբ քննարկվել և հաստատվել են II կիսամյակի առարկայական փաթեթները: Առարկայական նոր փաթեթներին համապատասխան կազմվել են էլեկտրոնային դիտանյութեր (սլայդներ): Դրանք ներկայացվում են առցանց ուսուցման ընթացքում՝ նպաստելով դասախոսությունների յուրացմանը: Google classroom ձևաչափով էլեկտրոնային հարթակում ուսանողներին հասանելի են բոլոր դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները, անհրաժեշտ գրականության ցանկը, տեղադրված ուսումնամեթոդական վերանայվա նյութերը: Առդեմ ուսուցման ընթացքում դասընթացները իրականացվում են ինտերակտիվ դասախոսությունների ու սեմինար պարապմունքների հիմքով: 2022թ. սեպտեմբերիի 20-ի № 2 արձանագրությամբ քննարկվել և հաստատվել են՝ I կիսամյակի առարկայական փաթեթները, իսկ I կիսամյակի դասալսումների գրաֆիկը հաստատվել է հոկտեմբերի 17 N3 նիստով: Արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստում ներկայացնելով ամբիոնի վարիչի որակի պատասխանատուի և գործընկերային դասալսումների վերաբերյալ նկատառումները և առաջարկվել են բարելավման ուղիները: 2022-2023 ուսումնական տարում ամբիոնի ՊԴԱ կողմից հրատարակվել են երեք ուսումնամեթոդական աշխատանքներ՝ Ս. Ա. Դալլաքյան՝ Մարքեթինգային գործունեությունը արվեստում Արմեն Բեջանյան, Վահան Սարգսյան և այլոք՝ Հոգեբանական վարժանքներ

Գրիգոր Մնացականյան, Վարսենիկ Սարգսյան՝ Կազմակերպությունների սնանկացումը և տնտեսահրավական կարգավորումը:

Ամբիոնի ուսումնական աշխատանքներում կարևորվում է նաև ամբիոնի վարիչ Ռիտա Գևորգյանի այցը Իտալիայի Մաչերատայի հաալսարան, որտեղ նա հանդես եկավ դասախոսություններով 2022/23 ուսումնական տարվա հրավիրյալ դասախոս անհատական շարժունության երկամսյա ծրագրի շրջանակում «Տնտեսագիտության և իրավունքի» ֆակուլտետի մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողների համար: «Ռազմավարական կառավարման դասընթացում ընդգրկված մագիստրոսները բացի տեսական գիտելիքներից՝ հնարավորություն ունեցան նաև զարգացնել գործնական հմտություններ, որոնց ձեռքբերման լավագույն միջոցներից են հենց իրավիճակային վերլուծության կիրառումը: Մինչ դասընթացի սկիզբը մագիստրոսների հետ իրականացվել է որոշակի նախապատրաստական աշխատանք՝ վերլուծելով հաջողության հասած ընկերությունների ռազմավարությունները, որի ընթացքում ուսանողները ներկայացրեցին իրենց նկատառումները և դատողությունները: Նախքան դասընթացի ներկայացումը ուսանողներին Մաչերատայի համալսարանի «Տնտեսագիտության և իրավունքի» ֆակուլտետի դեկան Ելենա Չեդրոլայի հետ քննարկվել է դասընթացի տեսական և գործնական ասպեկտները, որն այնուհետև հաստատվել է Մաչերատայի համալսարանի «Տնտեսագիտության և իրավունքի» ֆակուլտետի նիստում: Դասընթացը հաջողությամբ ավարտած ուսանողները ստացան սահմանված կրեդիտային միավոր:

Ամբիոնի ՊԴԱ մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին և սեմինարներին, `

Rita Gevorgyan "Strategic Planning and Implementation Process by the Usage of Hoshin Kanri Matrix" , AIP Conference

Светлана Даллакян Кластеризация как инструмент повышения конкуренто способности социальной-экономического развития региона , "VII международной научно-практической конференции «Технологии социальной работы в различных сферах жизнедеятельности»,

Svetlana Dallaqyan 4th World Conference on Management, Business and Economics, 02 – 04 December 2022 | Paris, France

Sasunik Melikyan “Developing Interdisciplinary Postgraduate Programmes and Strengthening Research Networks in Geoinformation Technologies in Armenia and Kyrgyzstan”, Erasmus+ GeoTAK workshop, October

Սասունիկ Մելիքյան Էրասմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող <<Հայաստանում և Ղրղզստանում աշխարագրական տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետբուհական միջառարկայական կրթական ծրագրերի մշակում և հետազոտական կապերի ուժեղացում>> նոյեմբերին. Իսպնիա, ք. Վալենսիա կազմակերպված համաժողովին

Լուսինե Անգեղուշ՝ ՀՀ-ի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող լեզվական քաղաքականության հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ 11-րդ միջազգային գիտաժողով

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով

					երեք

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
հինգ		մեկ							

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի գործունեության առաջնահերթություններից է գիտական աշխատանքների կատարման և զարգացման բնականոն ընթացքի ապահովումը: Տնտեսագիտության և կառավարման ոլորտում ամբիոնի կողմից բարձրացված հիմնահարցերը իրենց բնույթով արդիական են և գտնվում են ոչ միայն երկրի այլև միջազգային հանրության, ոլորտի մասնագետների դիտարկման շրջանակներում: Մեծ կարևորություն տալով նաև ուսանողության ներգրավվածությանը համատեղ գիտական աշխատանքների կատարմանը: Ուսանողների ավարտական աշխատանքներում և մագիստրոսների թեզերում կարևորվում է հետազոտական աշխատանքի բաղադրիչը, որը գործնականորեն հիմնված է պրակտիկայի ընթացքում կատարված ուսումնասիրությունների վրա: Որոշ մասնագիտությունների շրջանակում գործատուները մասնակցում են ոչ միայն թեմաների հաստատման գործընթացին այլև տալիս են խորհրդատվություն թեմայում բարձրացված հիմնախնդիրների լուծմանը:

Ամբիոնում հետազոտությունները իրականացվել են ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝

Մարդկային կապիտալի զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում

Մարքեթինգի առանձնահատկությունները կրթական ծառայությունների մատուցման ոլորտում

Փոքր և միջին ձեռներեցությունը հեռանկարային զարգացումը

Ռազմավարական կառավարման հիմնահարցերը բարձրագույն կրթական համակարգում:

Զանգվածային մշակույթի ասպեկտները

Պատմամշակութային ժառանգության արդի հիմնահարցերը

Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման հեռանկարները ՀՀ–ում

Թվային տնտեսությունը բնութագրող համաթվերի վերլուծությունը

Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:

Բացի վերոնշյալ աշխատանքներից հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի կողմից բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում լույս են տեսել հետևյալ թեմաներով հետազոտական աշխատանքները.

Rita Gevorgyan, Valeriya Konovalova, Elena Mitrofanova, “The Impact of Artificial Intelligence on Human Resources Management Strategy: Opportunities for the Humanisation and Risks” SCOPUS

Даллакян С.А., Арутюнян Г.А. “Развитие предпринимательства в условиях цифровизации (на примере Китая)” РИНЦ

Ամբիոնի դոցենտ Ս. Դալլաքյանը հաշվետու տարում ստացել է դոցենտի կոչում և իրականացրել է հետևյալ գիտահետազոտական աշխատանքները՝

Մարքեթինգային գործունեությունն արվեստում՝ հետազոտական թեման բովանդակում են մշակույթի և արվեստի ոլորտի մարքեթինգային գործունեության ժամանակակից հայեցակարգը, տեղեկատվությունը ու մարքեթինգային հետազոտությունների կազմակերպումը և իրականացումը, սպառողների ուսումնասիրության գործընթացը և շուկայի հատվածավորումը մշակութային կազմակերպություններում, ինչպես նաև ի«Ֆանդրայզինգի (ֆոնդահայթայթման) կազմակերպման առանձնահատկությունները և հեռանկարները արվեստի ոլորտում» վերնագրով: Հետազոտոիթյան արդյունքում լույս է տեսել ուումնամեթոդական ձեռնարկ «Մարքեթինգային գործունեությունն արվեստում» թեմայով:

ՀՀ գործարարության զարգացման հեռանկարները ինովացիոն տնտեսության համատեքստում (ՀՀ օրինակով)՝ հետազոտական թեմայում ներկայացվել են գործարարաության զարգացման հեռանկարները ինովացիոն և թվային տնտեսության պայմաններում՝ պարզաբանելով օտաերկրյա փորձը (Չինաստան, Էստոնիա): Մշակվել է Հայաստանի տնտեսության թվային զարգացմանն ուղղված ալգորիթմ: Ուսումնասիրվել և վերլուծվել է գործարարությունը, ինովացիոն և թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ցուցիչներ: Հետազոտության արդյունքում լույս է տեսել կոլեկտիվ մենագրություն «Գործարարությունն ինովացիոն տննեսության պայմաններում ՀՀ-ում» վերնագրով:

«Բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորություններն ու կառուցակարգերը ՀՀ-ում» թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են բարձր տեխնոլոգիական հենքի վրա ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման ուղիներն և հնարավորությունները՝ շեշտադրելով գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության անհրաժեշտությունը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական տնտեսության դիվերսիֆիկացման ինստիտուցիոնալ մոտեցումները և հեռանկարները ՀՀ-ում: Հետազոտոյան արդյունքում լույս են տեսել թվով 4 հոդված և մեկ մենագրություն:

Ամբիոնի ասիստենտ Գրիգոր Մնացականյանը տպագրել է ուսումնամեթոդական ձեռնարկ, որտեղ քննարկվում են ՀՀ-ում կազմակերպությունների սնանկացման կառավարման և կանխարգելման հիմնահարցերը: Ներկայացված են սնանկության տեսակներն ու փուլերը, ֆունկցիոնալ դերը շուկայական համակարգում, ինչպես նաև կանխարգելմանն ուղղված միջոցառումներն ու ծրագրերը:

Ուսումնասիրված են կազմակերպությունների սնանկացման տնտեսահիրավական կարգավորման հիմնախնդիրները և ՀՀ սնանկության ինստիտուտի կատարելագործման հիմնուղիները:

Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող <<Պատմություն և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը և հեռանկարի ուրվագծումը>> թեմայի շրջանակներում ամբիոնի երիտասարդ դասախոս Լուսինե Անգելուշը հունիս-սեպտեմբեր ամիսներին դաշտային հետազոտություններ է կատարել Երևանում, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում, Արցախում:

Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:

Տնտեսագիտության և կառավարման ոլորտում ամբիոնի կողմից բարձրացված հիմնահարցերը իրենց բնույթով արդիական են, իսկ հետազոտության արդյունքները անմիջականորոն ամփոփվում են դասախոսության համապատասխան թեմաների շրջանակում: Մեծ կարևորություն տալով նաև

ուսանողության ներգրավվածությանը համատեղ գիտական աշխատանքների կատարմանը: Ուսանողների ավարտական աշխատանքներում և մագիստրոսների թեզերում կարևորվում է հետազոտական աշխատանքի բաղադրիչը, որը գործնականորեն հիմնված է պրակտիկայի ընթացքում կատարված ուսումնասիրությունների վրա:

Մշակույթի ոլորտին միտված գիտական հետազոտությունները նպատակաուղղված են նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի, մշակույթի ոլորտի զարգացման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների ուսումնասիրությանը:

Տնտեսագիտության և կառավարման ուղղությամբ ներկայացված հետազոտությունները բովանդակում եմ ՀՀ-ում տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարների, ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրների ու զարգացման ուղենիշերի, թվային միջավայրի և սպառողի վարքագծի ուսումնասիրմանը:

Աբիոնը ակտիվորեն համագործակցում է ՀՀ տաբեր կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ՝ կնքելով պայմանագրեր, նպատստելով ուսանողնների գործնական կարողությունների զարգացմանը: Պետք է նշել, որ հաշվետու տարում համագործակցային պրակտիակա է իրականացրել՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»

«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ»-ի

Երևանի քաղաքապետարանի մշակույթի և տուրիզմի վարչություն

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

«Շանթ Հեռուստաընկերություն»

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

Հարկ է նշել, որ գործատուները մասնակցում են ոչ միայն թեմաների հաստատման գործընթացին այլև տալիս են խորհրդատվություն թեմայում բարձրացված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Ստորև ներկայացված են ամբիոնի կողմից հրատարակված հետազոտական աշխատանքները:

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Ս. Ա. Դալլաքյան	Գործարարությունն	ՀՀ ԳԱԱ	160

	ինովացիոն տնտեսության համատեքստում	Երևան 2022	

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Rita Gevorgyan	THE IMPACT OF ARTIFICIAL INTELLIGENCE ONHUMAN RESOURCES MANAGEMENTSTRATEGY: OPPORTUNITIES FOR THE HUMANISATION AND RISKS	11
Rita Gevorgyan	"Strategic Planning and Implementation Process by the Usage of Hoshin Kanri Matrix"	
Ս. Ա. Դալլաքյան Ս. Հ. Սարգսյան	Թվային տնտեսությունը բնութագրող համաթվերի վերլուծությունը և թվային օրակարգը Հայաստանում	18
Ս. Ա. Դալլաքյան Ս. Հ. Սարգսյան	Գործարարությունը և ինովացիոն տնտեսությունը	
Knarik Hovhannisyan, Samvel Misakyan, Vahan Sargsyan, Rima Muradyan	THE INTEGRATION OF CHESS AND MATHEMATICS AS A PREREQUISITE FOR ENHANCING THE QUALITY OF EDUCATION 2022.	20
Ա.Գ. Մինասյան	PR, արվեստ, մշակույթ	7
Լ. Անգելուշ	ՀՀ-ի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող լեզվական քաղաքականության հարցի շուրջ	

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Թվային տնտեսության արդի մոտեցումները	
Ռազմավարական կառավարման գործընթացը կրթական հաստատություններում	

Պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրները ՀՀ-ում	
ՀՀ-ում կազմակերպությունների սնանկացման կառավարման և կանխարգելման հիմնահարցերը	
Գովազդի կազմակերպումը մշակութային կազմակերպություններում	

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք
Ռ. Գևորգյան	Իտալիա	նոյեմբեր	Տեսական գիտելիքներ և գործնական մոտեցումներ մետավերսը տնտեսագիտության բնագավառում
Ս. Մելիքյան	Ղրղզստան	նոյեմբեր	Գործնական կարողությունների ընդլանում հետազոտական ցանցերի կիրառման և արդյունքների մշակման համատեքստում

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցել է նաև ներքին և արտաքին ռեսուրսների ներգրավմամբ մասնագիտական վերապատրաստման ծրագրերին: Անհատական շարժունության ծրագրի շրջանակում ամբիոնի վարիչ Ռ. Գևորգյանը մասնակցել է Իտալիայի Մաչերատայի համալսարանում կազմակերպած դասընթացին՝ բանկային համակարգի և ՏՀՏ տեխնոլոգիաների մասնագետների կողմից ներկայացված Մետավերսը տնտեսագիտության ոլորտում դասընթացին, իսկ ամբիոնի դոցենտ Սասուն Մելիքյանը մասնակցել է հետազոտական ցանցերի հզորացում թեմայի շուրջ վերապատրաստումներին:

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:

Արտաքին համագործակցության հիմնական ուղղություններն են փորձի փոխանակությունը, առարկայական ծրագրերի մշակման, քննարկման ու փորձաքննության իրականացումը, մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվածությունը, համատեղ միջազգային ծրագրերում մասնակցությունը:

Դասախոսական կազմը, իր գիտական հետաքրքրությունների շրջանակում, մասնակցել է այլ տեղական և միջազգային կրթական և գիտահետազոտական հաստատությունների կողմից կազմակերպված աշխատաժողովներին:

Համալսարան-դպրոց կապը ապահովվել է ոչ միայն պրակտիկայի կազմակերպման ընթացքում, այլև քարոզչական աշխատանքի միջոցով. մասնավորապես այցելելով դպրոցներ՝ մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումների միջոցով, որոնք կազմակերպվել են այդ դպրոցներում արդեն իսկ վարչական աշխատանք իրականացնող շրջանավարտների աջակցությամբ:

Համագործակցությունը այլ կազմակերպությունների հետ ՀՀ կենտրոնական բանկ ֆինանսական կրթության հիմնահարցերը դպրոցում թեմայի ուղղությամբ քննարկում:

Համագործակցային երկարատև կապեր են ձևավորվել Ամերիայան խորհուրդների հետ, որը այս տարի ավելի ընդլայնվեց «Ամենաարդյունավետ մարդկանց յոթ սովորույթները» խորագրով սեմինարի ընթացքում:

«Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագրի ուսանողներն ու շրջանավարտները անգլերենով ներկայացրին Սթիվեն Քովիի հեղինակային գրքի՝ կրթության կառավարման համատեքստում դիտարկած սկզբունքները:

Սեմինարին ներկա էին Հայաստանում Ամերիկյան խորհուրդների տնօրեն Դեյգն Վելընթայնը, փոխտնօրեն Նանե Աբրահամյանը, ԱՄՆ դեսպանատան շրջանավարտների համակարգող Լուսինե Մկրտչյանը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ներկայացուցիչներ, ուսանողներ, շրջանավարտներ:

Ամփոփելով ուսանողների ելույթները՝ Հայաստանում Ամերիկյան խորհուրդների տնօրեն Դեյգն Վելընթայնը ներկայացրեց հաջողության հասնելու իր փորձը՝ ներկայացնելով ինտերակտիվ որոշ մեթոդներ:Ներկայացված թեմաները ժամանակի ընթացքում կդառնան ուսանողների համար վերապատրաստման կարևոր աղբյուր, այն արդյունավետ կլինի տարբեր ֆակուլտետների ուսանողների համար ևս:

Միջազգային համագործակցության շրջանակները այս տարի ընդլայնվեցին Մաչերատայի համալսարանի հետ: Ամբիոնի վարիչ Ռիտա Գևորգյանն աշխատանքային այցով Իտալիայի Մաչերատայի համալսարանում էր: Նա 2022-23 ուսումնական տարվա հրավիրյալ դասախոս անհատական շարժունության երկամսյա ծրագրի շրջանակում Տնտեսագիտության և իրավունքի ֆակուլտետի մագիստրոսների համար հանդես է եկել դասախոսություններով:

«Ռազմավարական կառավարում» դասընթացի շրջանակներում ուսանողները տեսական գիտելիքներից բացի, իրավիճակային վերլուծության կիրառման շնորհիվ հնարավորություն են ունեցել զարգացնել նաև գործնական հմտությունները, վերլուծել են հաջողության հասած ընկերությունների ռազմավարությունները, որոնց վերաբերյալ ուսանողները ներկայացրել են իրենց նկատառումները:

Մաչերատայի համալսարանի Տնտեսագիտության և իրավունքի ֆակուլտետի դեկան Ելենա Չեդրոլայի հետ համատեղ մագիստրոսների և հետազոտող-ուսանողների համար իրականացվել են լրացուցիչ

հանդիպումներ՝ միտված բիզնեսի և շուկայավարման մոդելների ուսումնասիրությանը, փոքր և միջին ձեռնարկությունների միջազգայնացման գործընթացին:

Աշխատանքային այցի ընթացքում դասախոսություններից բացի, ամբիոնի հետազոտական ծրագրում ընդգրկված ուսանողների հետ իրականացվել են մի շարք խորհրդատվական հանդիպումներ՝ մարքեթինգի կառավարում, կրթությունը և ժամանակակից տեխնոլոգիաները, թվայնացման գործընթացը տնտեսագիտության ոլորտում թեմաների շուրջ: Այցը բազմաբովանդակ էր, լի՝ արդյունավետ քննարկումներով՝ մասնավորապես Մաչերատա համալսարանի ռեկտորի և պրոռեկտորի հանդիպման ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության և հետազոտական աշխատանքների հնարավոր ուղղությունները:

Մասնավորապես Մաչերատա համալսարանի Տնտեսագիտության և Իրավունքի ամբիոնի հետազոտական ծրագրում ընդգրկված Մարտա Ջիովանետիի և Ջուլիա Ամադիոյի հետ մարքեթինգի կառավարման, կրթությունը և ժամանակակից տեխնոլոգիաները, թվայնացման գործընթացը տնտեսագիտության ոլորտում թեմաների շուրջ: Բավականին գործնական էր բարձրացված հարցադրումների դիտարկումը Կայուն զարգացման նպատակների համատեքստում:

Հետազոտական աշխատանքների տեսանկյունից առավել արդյունավետ էր պրոռեկտոր Սոչի Կլաուդիոյի և Ֆրանչեսկա Սեվերինի հետ համատեղ կատարված հետազոտական թեմայի շուրջ քննարկումները միտված Մակրոտնտեսական հիմնահարցերին, զբաղվածության բազմագործոն մոդելի ներկայացմանը՝ սոցիալական հաշվառման մատրիցայի կիրառմամբ (SAM):

Առանձնակի ուշագրավ էր Մաչերատայի համալսարանի Տնտեսագիտության և իրավագիտության ամբիոնի դասախոս Լուկա Ջիրալդիի հետ՝ առցանց հարթակում քննությունների կազմակերպման ընթացքում ուսանողների հետ հաղորդակցման և նրանց էմոցիոների, վարքագծի դրսևորման ուղղությամբ ուսումնասիրությունների շուրջ քննարկումները:

Հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել ոչ միայն «Տնտեսագիտության և իրավունքի» ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ, այլև Մաչերատայի համալսարանի «Քաղաքագիտության, հաղորդակցման և միջազգային հարաբերությունների» ֆակուլտետի պրոֆեսոր Բարբիսան Բենեդետայի հետ՝ միտված հաղորդակցման և մարդկային ռեսուրսների կառավարման հարցադրումների շուրջ:

Գրանտների գրասենյակի աշխատակից Լաուրա Կոնչետի հետ հանդիպումը ընթացավ Մաչերատայի համալսարանի գործունեության ռազմավարական հիմնական ուղղությունների շուրջ՝ անդրադառնալով հետազոտական ներուժի ուժեղ կողմերին: Ուշագրավ էր հետդոկտորական կրթաթոշակներին դիմող հետազոտողների, կարիերայի զարգացմանը նպաստող ծրագրերի, շարժունության և վերապատրաստման ծրագրերին դիմելու հնարավորությունների մասին քննարկումները:

Մաչերատայի համալսարանի Միջազգայնացման ռազմավարական գրասենյակի ղեկավար Անդրեա Դեզիի հետ քննարկումը բովանդակում էր կարևոր հարցեր՝ որակի ապահովման քաղաքականության, Մաչերատայի համալսարանի կրթական ծրագրերի մոնիտորինգի և պարբերաբար վերանայման, ուսումնական դասընթացների արդիականացման, ինքնագնահատման մակարդակում հավասարապես կազմված ուսանող-դասախոս հանձնաժողովի աշխատանքների շուրջ քննարկումները:

Համագործակցող արտերկրյա համալսարանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է համապատասխան աղյուսակում:

Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ամբիոնը սերտ համագործակցում է հայաստանյան բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների հետ, մասնավորապես Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի, Հայաստանի պետական ազգային ճարտարագիտական համալսարանի հետ ինչպես նաև Peoples' Friendship University of Russia, Նիժնի Նովգորոդի պետական մանկավարժական համալսարանի, Մեծ Բրիտանիայի Միդլսեքսի և Սաուֆհամփթոն համալսարանների հետ: Ամբիոնի առաջատար մասնագետների կողմից համագործակցությունն ընդլայնվել է նաև Մաչերատայի համալսարանի և Մոսկվայի պետական կառավարման համալսարանի տնտեսագիտության ամբիոնի մասնագետների հետ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտաժողովների, վերապատրաստումների, սեմինարների անցկացման ուղղությամբ: Մշակութային կազմակերպությունների հետ համագործակցությունը ընդլայնվել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Մոսկվայի պետական կառավարման համալսարան			+	+	
Նիժնի Նովգորոդի Կ. Մինինի անվ. պետական մանկավարժական համալսարան	+	+			
Սաուֆհամփթոնի համալսարան			+	+	
Լոնդոնի Միդլսեքսի համալսարան			+	+	
Իտալիայի Մաչերատայի համալսարան	+			+	

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն				
Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ

Ռ. Գևորգյան	ամբիոնի վարիչ	Իտալիա Մաչերատայի համալսարան	երամսյա այց	Ռազմավարական կառավարման դասընթացը հաջողությամբ ավարտած մագիստրոսներըստացել են համապատասխան կրեդիտային միավոր

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ իրականացվում են մասնավորապես հասարակությանը տրամադրվող ծառայությունների միջոցով՝ ապահովելով նաև հետադարձ կապը, շահակիցների հետ համագործակցության շրջանակում հանդիպումների, սեմինար-ների, կլոր սեղանների քննարկումների և մասնագիտական կողմնորոշման նպատակով առցանց գովազդային նյութերի տեղադրման, ինչպես նաև տեսասահիկների և կրթական ծրագրի շրջանավարտների մասնագիտական առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման միջոցով: Համագործակցության շրջանակում ամբիոնում իրականացվել և իրականացվում են համապատասխան աշխատանքներ կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին մոտեցնելու ուղղությամբ: Ուսումնասիրվել է միջազգային նմանատիպ կրթական ծրագրի փորձը և այն տեղայնացնելով՝ կիրառվել է կրթության կառավարում կրթական ծրագրի շրջանակներում: Իրականացվել են առցանց հանդիպումներ և շահագրգիռ քննարկումներ սոցիալ–մշակութային ոլորտի մասնագետների հետ կապն ամրապնդելու համար, կրթական ծրագրի ծրջանակում շրջանավարտների հետ իրականացվել են քննարկումներ պարզելու համար ստացած մասնագիտության համապատասխանությունն ակնկալված արդյունքներին, կրթական ծրագրում ներառված առարկաների դերը ապագա մասնագիտական գործունեության հաջող իրականացման համար: Ամբիոնի նախաձեռնությամբ հաշվետու տարում իրականացվել է համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառում՝ ներկայացնելով մշակույթի ոլորտի կառավարում մասնագիտության ուսանողների հաջողությունները: «Կառավարիչները 100-ամյա պատմության մեջ» խորագրով կազմակերպած միջոցառման ընթացքում ներկայացվեց «Կառավարում» (ըստ ոլորտի) կրթական ծրագրի ընձեռած լայն հնարավորությունները ուսանողների և շրջանավարտների կողմից: Առանձնակի ընդգծվեց մշակույթի ոլորտի կառավարման համար տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով օժտված բարձրակարգ մասնագետների պատրաստման կարևորությունը, մշակույթի ոլորտի մենեջերների պահանջարկվածությունը, ովքեր տիրապետում են տնտեսագետի և գործարարի որակների՝ ձեռներեցության, տնտեսական և ֆինանսական գործունեության կազմակերպման հմտություններին: Ապագա կառավարիչները ներկայացրին բուհի հիմնադրման պատմությունը, Կուլտուրայի ֆակուլտետի գործունեությունը, հետաքրքիր իրավիճակներով հագեցած իրենց ուսանողական առօրյան և պրակտիկ գործունեությունը՝ մեծագույն ձեռքբերումներից համարելով իրենց մասնակցությունը ԿԳՄՍ

նախարարության կազմակերպած «Մշակույթի ոլորտի կազմակերպությունների ռազմավարական պլանավորում» վերապատրաստման դասընթացին: Միջոցառման ընթացքում ներկայացվեցին ուսանողների ստեղծագործական և կառավարչական հմտությունները, ոմանք հանդես եկան երաժշտական կատարումներով, իսկ որոշ շրջանավարտներ նույնիսկ ներկայացրեցին իրենց ղեկավարած ստեղծագործական խմբերի կատարումները: Միջացառումը նաև հնարավորություն տվեց ներկայացնելու տարբեր մշակութային կառույցների հետ համագործակցությունն ու ձեռքբերումները:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Մասնագիտական կողմնորոշում	Գևորգյան Ռիտա, Սողոմոնյան Լուսինե, Պողպատյան Սոնա Խոջոյան Կարեն Սարգսյան Փիրուզա	Իրազեկման այց	Մասնագիտական կողմնորոշման ժամանակացույցի համապատասխան

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Կառավարում ըստ ոլորտի կրթական ծրագրի ուսանողները	ԿԳՄՍ նախարարություն	Ռազմավարական կառավարման առանձնահատկությունները մշակույթի ոլորտում	երեք ամիս
Կրթության կառավարման ուսանողներ և շրջանավարտներ	Ամերիկյան խորհուրդներ	Ամենաարդյունավետ մարդկանց յոթ սովորույթները	երեք ամիս

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:

Ուսումնական գործընթացների որակը ապահովելու և բարելավելու նպատակով ամբիոնում իրականացվում է հետևողական և համակարգված քաղաքականություն: Այսպես՝

Ամբիոնի կողմից բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտություններում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի, ուսումնամեթոդական փաթեթների վերանայում:

Քննական և միջանկյալ ստուգումների հարցաշարերի, թեստերի վերանայում:

Փոխադարձ դասալսումների գրաֆիկի կազմում և իրականացում:

Քննաշրջանի և լուծարքի շրջանի արդյունքների քննարկում ու վերլուծություն:

Google Classroom-ի հարթակում իրականացվող գնահատման էլեկտրոնային համա կարգի գործառնության հետևում:

Աշխատաշուկայում շրջանավարտների պահանջարկվածությունը

Ուսումնական տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

2022թ. սեպտեմբերի 1-ի, . հոկտեմբերի 7-ի նիստին ամբիոնի դասախոսներ՝ Ռ. Գևորգյանը, Ս. Պողպատյանը, Վ. Սարգսյանը, Լ. Սողոմոնյանը, Ա. Միսակյանը, Ա. Մկրտչյանը, Ս. Մելիքյանը, Կ. Խոջոյանը, Ս. Դալլաքյանը, Գ. Մնացականյանը, Ա. Մինասյանը, Լ. Անգելուշը ուսումնասիրել և քննարկել են բակալավրիատի «Կառավարում /ըստ ոլորտի/», և մագիստրատուրայի «Կրթության կառավարում», կրթական ծրագրերով նախատեսված առաջին կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, միջանկյալ ու ամփոփիչ ստուգումների հարցաշարերը և դասախոսությունների փաթեթները: Դասախոսներին հանձնարարվել է լրամշակել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և դասախոսական փաթեթները, քննությունների հարցաշարերը և հարցատոմսերը՝ ապահովել դրանց համապատասխանությունը սահմանված ձևաչափին:

Կազմակերպվել է կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում:

Դասախոսներին տրամադրվել է հավելյալ խորհրդատվություն Google Classroom հարթակում նոր ձևաչափով առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհում տեղադրելու հարցում:

Իրականացվել է էլեկտրոնային ուսումնական հարթակի դասընթացների տիրույթի մշտադիտարկման արդյունքների քննարկում: Ներկայացվել են առկա թերությունները, անհամապատասխանությունները: Դասախոսներին հանձնարարվել է կատարել շտկումներ, լրամշակումներ առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, դասախոսությունների, էլեկտրոնային հանձնարարականների և հարցաշարերի պատշաճ որակը ապահովելու համար: Կազմակերպվել է դասալսումների գործընթացը: Նախապատրաստական աշխատանքներ են արվել միջանկյալ ստուգումների անցկացման, պրակտիկայի կազմակերպման նպատակով:

2022 թ. նոյեմբերի 21–ի աշխատաժողովին ամբիոնի դասախոսներ՝ Ռ. Գևորգյանը, Ս. Պողպատյանը, Լ. Սողոմոնյանը, Ա. Մկրտչյանը, Կ. Խոջոյանը, Ս. Դալլաքյանը, Ա. Միսակյանը, Գ. Մնացականյանը քննարկել են հեռակա ուսուցման հետ կապված ընթացիկ հարցերը: Մասնավորապես քննարկվել է հեռակա առաջին կուրսերի ուսանողների ընդգրկվածությունը և ակտիվությունը Google Classroom էլեկտրոնային ուսուցման հարթակում: Վերահսկվել է էլեկտրոնային ուսումնական նյութերի

և հանձնարարությունների ձևավորման և տեղադրման գործընթացը: Նախապատրաստվել է քննությունների կազմակերպման և անցկացման, պրակտիկայի կազմակերպման գործընթացը: Քննարկվել է կուրսային և ավարտական աշխատանքների, պրակտիկայի անցկացման հետ կապված հարցեր:

2023թ. –ին նախատեսվում է իրականացրել խորհրդատվություններ առկա բացթողումները շտկելու համար և ուսուցման գործընթացում ներմուծել նոր մեթոդներ և մոտեցումներ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Քննարկվել է հեռավար կրթությամբ դասապրոցեսի առանձնահատկությունները՝ դասախոսությունները, սեմինար գործնական պարապմունքները, միջանկյալ, կիսամյակային քննությունները, ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության հիմնահարցերը: Որոշվել է սահմանված ժամանակացույցի համաձայն

կազմակերպել խորհրդատվություններ Google Classroom էլեկտրոնային համակարգի կիրառման հետ կապված հարցերի շուրջ,

կազմակերպել մագիստրատուրայի ուսանողների հետազոտական աշխատանքի պլանների և հաշվետվությունների վերահսկում,

ամբիոնի դասախոսների հետ քննարկել դասապրոցեսի վարման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հարցերը՝ յուրաքանչյուր առարկայի առանձնահատկություններից ելնելով,

քնարկել ՊԴԱ վերապատրաստման և որակավորման բարձրացման խնդիրները (ամբիոնի նիստերում ընթացիկ հարցերի քննարկման ժամանակ),

քնարկել ՊԴԱ գիտահետազոտական ու գիտաուսումնական աշխատանքների ակտիվացման հարցը:

Ամբիոնի կողմից մշտապես անցկացվել են հարցումներ ուսանողների շրջանում՝ փորձելով բացահայտել դասապրոցեսում առկա թերությունները, դասախոսությունների մատչելիությունը և մասնագիտական պիտանելիությունը, կատարյալ դասապրոցեսի նրանց պատկերացումները, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել դասավանդման գործընթացը ուսանողի աչքերով և նախապայմաններ ստեղծել դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավման համար:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ինչպես համալսանի մյուս մասնագիտական կրթական ծրագրերում այդպես էլ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի բակալավրատուրայի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման հիմքում ընկած են ՀՊՄՀ–ում մշակված որակի ապահովման քաղաքականությունը, որակի ապահովման հայեցակարգը և մի շարք ընթացակարգեր, որոնք հաստատված են ՀՊՄՀ գիտական խորհրդի կողմից:

Որակի բարելավման գործընթացներում հաշվի են առնվել որպես արտաքին շահակիցներ Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմնական դպրոցի, «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի, Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոցի,Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի, Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոցի, Ավետսիյան կրթահամալիրի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Կոմիտասի թանգարան ինստիտուտի,<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ >>-ի, «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ

նվագախումբ»-ի,Երևանի քաղաքապետարանի մշակույթի և տուրիզմի վարչության,ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, «Շանթ Հեռուստաընկերության»,«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ և այլ գործընկեր կազմակերպությունների մասնագետների նկատառումները, իսկ ներքին շահակիցները՝ ամբիոնի դասախոսական կազմը և բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողները իրենց գործնական մասնակցությամբ նպաստել են որակի մեխանիզմների ներդրմանն, ուսուցման և դասավանդման գործընթացներում, ինչպես նաև իրենց հետազոտական աշխատանքներում:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Կրթական ծրագրերի վերանայում	Ամբիոնի վարիչ Ռ. Գևորգյան Որակի պատասխանատու՝ Ա. Միսակյան, առաջատար դասախոսներ	Բենչմարքինգի արդյունքներին համապատասխան բարելավված կրթական ծրագրերի վերջնարդյունքներ
Մշտադիտարկում ASPU Google Classroom հարթակում	Ամբիոնի վարիչ Ռ. Գևորգյան Որակի պատասխանատու՝ Ա. Միսակյան ամբիոնի մասնագետ՝ Փ. Սարգսյան	Աշխատանքները կատարվել են ըստ ժամանակացույցի /ամեն ամիս/: Դասախոսության նյութերի մատչելիության և որակի ապահովում, հանձնարարությունների միջոցով տեսական գիտելիքների ամրապնդում:
Դասալսումներ	Ամբիոնի վարիչ և դասախոսներ	Դասընթացների բարելավում, փորձի փոխանակում, դասախոսական աշխատանքի արդյունավետության բարձրացում
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)		
Ուժեղ կողմեր		Թույլ կողմեր

Ռազմավարական պլանի ուղենիշներին համահունչ գործընթացների պլանավորում և կազմակերպում, գործողությունների իրականացման և վերահսկման պլան-ժամանակացույցի մշակում	
Ամբիոնի կողմից երիտասարդ մասնագետներին տրվող աջակցությունը և մենթորությունը նպաստում է նրանց մասնագիտական առաջընթացին	Մագիստրոսների և ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին չի կրում շարունակական բնույթ
Կրթական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայությունը	ՄԿԾ-ների վերանայման ժամանակ գործատուների մասնակցության սակավությունը
Աշխատաշուկայում շրջանավարտների պահանջվածությունը	
Մագիստրոսների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին	
ՄԿԾ-ների վերանայում և բենչմարքինգի իրականացում	
Դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներին մասնակցությունը	
ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման իրականացում Google Classroom հարթակում ԱՈՒՄՓ-Ի՝ առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհում, էլ. առաջադրանքների, հարցաշարերի և այլ լրացուցիչ նյութերի պարբերաբար մշտադիտարկում	
Դիմորդների ներգրավման մեխանիզմների իրականացում	
ՊԴԱ մասնակցությունը գիտաժողովներին և բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հոդվածների հրատարակում	
Դասախոսների մասնակցությունը շարժունության ծրագրերին	
Ուսանողների և դասախոսների մասնակցությունը միջազգային և արտաքին կապերի ընդլայնմանը/ իրականացված ծրագրերը նշված են հաշվետվության մեջ/:	
Վերանայված գնահատման սանդղակի առկայություն	
Ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակում	

ՊԻԳԲ շրջափուլով գործընթացների իրականացում	
Հնարավորություններ	Վտանգներ
Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ամրապնդում	Շարժունության ծրագրի շրջանակում ուսանողների և դասախոսների վիզաների ստացման հետ կապված դժվարությունները և արգելքները*
Միջազգային կապերի ընդլայնում՝ մասնավորապես Մոսկվայի պետական կառավարման և Իտալիայի Մաչերատայի համալսարանների հետ:	Goole ընկերության կողմից հետագայում որոշ գործիքամիջոցների կիրառման սահմանափակումը կամ պայմանագրային ոչ ցանկալի կետերի կամ որոշ ֆինանսական պարտավորությունների կիրառում
ՀՀ ԲՈՒՀ-երի տնտեսագիտական և կառավարման համալսարանների հետ համագործակցության ամրապնդում՝ թեզերի գրախոսում, մասնագիտական հանձնաժողովներին ներգրավվածություն, գիտաժողովներին մասնակցություն և այլն	Դիմորդների թվի նվազումը պայմանավորված Կառավարում՝ ըստ ոլորտի կրթական ծրագրի շրջանակում ներքին ընդունելության կազմակերպման գործընթացի դադարեցմամբ:

* Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի Կրթության կառավարում կրթական ծրագրի ավարտական կուրսի մագիստրոսներ Մերի Թաշճյանը և Ղազարյան Սաթենիկը մասնակցել են Լա Վերնի Համալսարանի (ԱՄՆ) կրթաթոշակի մրցույթին և 2023 թվականի հունվարին 25 օրով այցի իրավեր են ստացել՝ մասնակցելու համալսարանի կողմից կազմակերպվող մասնագիտական կարճաժամկետ դասընթացին, սակայն ԱՄՆ վիզա ստանալու նրանց դիմումը մերժվել է:

Բարելավման գործընթացներ՝

Արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածություն ներքին որակի ապահովման գործընթացներին:

Վերլուծական տվյալների հավաքագրման և մշակման մեխանիզմների բարելավում:

Դիմորդների ներգրավվման մեխանիզմների ընդլայնում:

Գործատու- բուհ կապի ամրապնդման իրականացում:

Հետազոտական աշխատանքում դասախոսն-ուսանող ներգրավվածության ակտիվացում:

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը և կատարված ուսումնական աշխատանքի ծավալը
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
2022թ. Ամբիոնի աշխատանքները կազմակրեպվել են նոր ծրագրերի և չափորոշիչների հիման վրա, որոնք հաստատվել են ամբիոնի նիստում: Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները պարբերաբար քննարկվել են ամբիոնի նիստերում: Ամբիոնում առկա են բոլոր առարկաներին վերաբերող, թեմաներ ծրագրեր և մեթոդական ուղեցույցներ:Ամբիոնի դասախոսները վերանայում են առարկայական նկարագրերը՝ համապատասխանեցնելով այն,պահանջված նոր ձևաչափերով:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Ուսումնառության արդյունքներին համապատասխան ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման 100 միավորանոց համակարգը հանդիսանում է ակադեմիական, գիտելիքի ազնվության ապահովող կարևորագույն մեխանիզմ: Ըստ գնահատման մեթոդների ու չափորոշիչների վերանայվել են նաև առարկայական նկարագրերը կապված գնահատման նոր համակարգի և ուսուցման էլեկտրոնային հարթակի կիրառման հետ:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
2022թ. ընթացքում ամբիոնի նիստերում հիմնականում քննարկվել են ուսումնական աշխատանքների բարելավմանը և կատարելագործմանն ուղղված հարցեր, մասնավորապես ՊԴԱ կողմից կազմած առարկայական նկարագրերի, առարկաների ուսումնամեթոդական փաթեթների վերանայում և քննարկում, առաջարկվել է մասնակի փոփոխությունների ենթարկել ուսանողներին տրամադրվող նյութերի բովանդակությունը, համապատասխանեցնելով այն ժամանակակից պահանջներին, գիտության ոլորտում ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու նպատակով: Քննարկվել են ուսումնական և մանկավարժական պրակտիկաների նախապատրաստումը, անցկացման մեխանիզմները:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ.N6, 20.01.2022	2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասերի կազմակերպման հարցը, պետական որակավորման քննությունների հարցաշարերի հարցը:	Հաստատել
Արձ.N1, 26.08.2022	2022-2023 ուսումնական տարին սկսելու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, ամբիոնի ծավալի և դասաբաշխման հարցը: ԱՈՒՄՓ-ների քննարկման, հաստատման, վերահաստատման և առարկայական ծրագրերի նոր ձևաչափերով վերաբայման հարցերը:	Հաստատել
Արձ.N2, 19.09.2022	2022-2023 ուսումնական տարում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:	Հաստատել
Արձ.N3, 24.10.2022	Դասալսումների քննարկում և գնահատում, մանկավարժական պրակտիկայի ընթացքը:	Ընդունել ի գիտություն:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	4	1	1	5	5			6
Համատեղող	1							
Ժամավճարային								
Ընդամենը	5	1	1	5	5			6

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
2022 թ. ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունն ընթացել է նախապես կազմած և ամբիոնի նիստում հաստատված աշխատանքային պլանների և հանձնարարականների հիման վրա: Հաշվետու

տարում ամբիոնում իրականացվել են թվով 44 դասընթացներ համալսարանի գրեթե բոլոր ֆակուլտետներում, առկա, հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատում և մագիստրատուրայում:

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
Գյուղատնտեսական բույսերի վնասատու ականաճանճերը Արցախի Հանրապետությունում: Պայքարի նորագույն միջոցառումները:	24 ամիս	7 մլն.	Հովհաննիյան Վ.Ս.
Հեռավար ուսուցման հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կոռոնավիրուսային համավարակի պայմաններում:	3 տարի	22.5մլն.	Շողերյան Ս.Ա.

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է գիտահետազոտական գործունեություն, որը հիմնականում բխում է դասավանդվող թեմաների բնույթից: Ամբիոնի նիստերում և առանձին սեմինարներում լսվել և քննարկվել է էկոլոգիական ուղղվածությամբ ուսումնական ձեռնարկներ, բուհական դասագրքեր, գիտական հոդվածներ և թեզեր: Ամբիոնում աշխատում է 6 հիմնական դասախոս, 1 պրոֆեսոր, 5 դոցենտ:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները իրականացնում են անհատական թեզեր, որոնք նախօրոք հաստատվում են ամբիոնի նիստում, պարբերաբար լուսաբանվում են արդյունքները: Հետաքրքիր աշխատանքները ներկայացվում են գիտական կոնֆերանսներին և հրատարակվում գիտական անսագրերում: 1.Շահբազյան Մերի - « Անվտանգ սննդամթերքի դերը մարդու առողջության մեջ» 2.Գևորգյան Զվեդա «Ինքնակամ ռիսկի գործոնների բացառումը որպես մարդու առողջության պահպանման » 3.Հարությունյան Անի- «80 րոպե տևողությամբ դասաժամի արդյունավետության գնահատման

Ֆիզիոլոգիական մեխանիզմները ուսումնական գործընթացում»
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեություն, ուսումնական, մմասնագիտական պրակտիկաներ: Դրանք կազմում են ամբիոնի աշխատանքների հիմնական մասը, որոնք անցկացվում են ՀՀԳԱԱ լավագույն գիտահետազոտական կենտրոններում և ղեկավարվում բազմաթիվ տարիների փորձ ունեցող դասախոսների կողմից:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
Կենսաբազմազանության պահպանման ժամանակակից հիմնահարցերը:				Հովհաննիսյան Վ Գասպարյան Ա.
Ընդհանուր էկոլոգիա և կայուն զարգացում				Լ.Ավանեսյան Ս.Շողերյան Ս.Եղիազարյան
Էկոլոգիայի և բնապահպանության գիտակրթական առանձնահատկությունները				Լ.Ավանեսյան
Մարդու էկոլոգիա				Լ.Ավանեսյան Ս.Շողերյան Ս.Եղիազարյան
Բնապահպանություն				Ս.Եղիազարյան Լ.Ավանեսյան

				Ս.Շողերյան Ա.Գասպարյան
	Կիրառական			
Կենդանիների էկոլոգիա				Վ.Հովհաննիսյան
Բույսերի էկոլոգիա				Ա.Գասպարյան
Հիդրոէկոլոգիա				Վ.Հովհաննիսյան
Երկրաէկոլոգիա				Վ.Հովհաննիսյան
Էկոտուրիզմ				Ս.Շողերյան
Ագրոէկոլգիա				Լ.Ավանեսյան

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
V. Hovhannisyan, A. Vaseashta, L.Avavesyan, R.Sadoyan, A.Gasparyan. S.Shogheryan	Ecological Characterization and Bio-mitigation Potential of Heavy Metal Contamination in Metallurgically Affected Soil.	12
В.С.Оганесян, Л. Д. Арутюнова, Л.С. Мирумян, М.А. Магомедова, П. Д.Магомедова2	Особенности накопления тяжелых металлов в организме моллюсков (Molluska, Limacidae) южного	5

Т.Э. Погосян.	склона горного массива Арагац	
Оганесян Б.С., Мирумян Л.С. Арутюнова Л.Д, Аветусян А.А, Магомедова М.З ,Гаспарян А.С.	Видовой состав беспозвоночных (Diptera, Aphidiidae, Molluska) ущелья реки Азат и их биоэкологические особенности	8
Ա.Հ.Բաբայան, Վ.Ս.Հովհաննիսյան, Լ.Ս.Միրումյան	Երևան քաղաքի կանաչապատ գոտիներում ակացիայի գալամլակի և ակացիայի սղոցողի դեմ պայքարի արդի միջոցառումներ	5
Բաբայան Ա.Հ. Հովհաննիսյան Վ.Ս.	Երևանի զբեսայգիների և պուրակների բուրավետ որոշ ծառատեսակների վնասատուները	6
Авакян Мариам А.	Проблема техногенной угрозы нубаршенс кого кладбища ядохимикатов?	
E.A.Avetisyan., A.A.Petrosyan., V.H.Sarkisyan., L.G.Avanesyan., S.A.Shoghery an. N.A.Sahakyan.	Restoration of the morpho-functional features of the central regulatory structures of the brain during the development of psycho-emotional	

	stress under conditions of Taurine use.	
E.A.Avetisyan, A.A.Petrosyan, S.A.Shogheryan V.H.Sargsyan., N. A. Saakyan.	Impact of makrovipera lebetina obtusa venom on cardiovascular and neuronal reactions in adult rats.	
С.А.Шогерян,. Э.А.Аветисян., Л.Г.Аванесян., А.Саакян., Н.А. Саакян.	Оценка воздействия музыки различных жанров при информационных нагрузках на функциональное состояние мозга студентов разных специализаций.	
H.Martirosyan, R.Sadoyan. S.Shogheryan, A.Avetisyan	The effect of "Complex-Co" preparation on the tillering and efficiency indicators of a few spiked cereals (Barley, Emmer, Wheatgrass)	

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
«Մանրէների կիրառումը օրգանական սննդի արտադրության գործընթացում»:	Հայկենսատոխնոլոգիա ՊՕԱԿ մանրէների ավանդադրման լաբորատորիա: 02.05.2022թվ.

ՀՀ կենսաբազմազանության հիմնահարցերը: Սևան ազգային պարկի հիմնահարցերը լճի մակարդակի բարձրացման պայմաններում:	ՀՀԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտ.կենտրոն 10.07.2022թվ.
Ալավերդու հանքարդյունաբերական ձեռնարկությունների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Հանրային առողջության հիմնախնդիրներ:	Ալավերդու պղնձամոլիբդենային գործարան: Հոկտեմբերի 14-17 2022թվ.

Բ. Ուսանողական

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Շողերյան Ս.Ա.	Հարությունյան Անի	80 րոպե տևողությամբ դասաժամի արդյունավետության գնահատման Ֆիզիոլոգիական մեխանիզմները ուսումնական գործընթացում	Հայ-Ռուսական համալսարանի 25-ամյակին նվիրված

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
ՀՊՄՀ ուսանողական գիտական ֆորում	«Աղետներ, համաճարակներ, հանրային առողջություն և կրթություն»- Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն	1.Շահբազյան Մերի - « Անվտանգ սննդամթերքի դերը մարդու առողջության մեջ» 2.Գևորգյան Զվեդա «Ինքնակամ ռիսկի գործոնների բացառումը որպես մարդու առողջության պահպանման »
Հայ-Ռուսական համալսարան	«ՀՌՀ հիմնադրման 25 ամյակին» Հայ-Ռուսական համալսարան	Հարությունյան Անի- 80 րոպե տևողությամբ դասաժամի արդյունավետության գնահատման

		Ֆիզիոլոգիական մեխանիզմները ուսումնական գործընթացում

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային	-	-	-
Հանրապետական	-	-	-
Տարածաշրջանային	-	-	-

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ամբիոնի միջազգայնացման աշխատանքները հիմնականում նպատակաուղղված են էկոլոգիայի, կայուն զարգացման և կենսաբազմազանության համատեղ ուսումնասիրություններին: Այդ ուղղությամբ գիտական հոդվածքներ են հրատարակվել մի շարք միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերում և թեզիսներում:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ամբիոնը էկոլոգիայի ուղղությամբ համագործակցում է տեղական գիտահետազոտական հաստատությունների (ՀՀԳԱԱ բուսաբանության և կենդանաբանության, ֆիզիոլոգիայի ինստիտուտներ, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտական կենտրոն) բուհերի և նախարարությունների հետ: Ամբիոնը նախատեսում է միջազգային լայն կապեր հաստատել կլիմայի գլոբալ փոփոխության և կենսաբազմազանության հիմնախնդիրների շուրջ համագործակցելու և համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով: Վերոնշյալ ծրագրերի կարևոր արդյունքները ընդգրկվել են դասընթացներում և ուսանողների կողմից պատրաստվող թեզերում: Բացի այդ, Լյուդմիլա Ավանեսյանը ընդգրկվել է ՄԱԿ-ի «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության, իրազեկության բարձրացման միջոցով» ծրագրի խորհրդատվական կոմիտեում: Ս.Շողերյանը ՀՀ հանրային խորհրդի հանձնաժողովի անդամ է:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Դաղստանի հանրապետության Մախաճկալայի պետական համալսրանի Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն:			+	+	
Սամարայի պետական սոցիալ մանկավարժական համալսարան	+	+	+		
Վորոնեժի պետական համալսարանի և քիմիայի ֆակուլտետի կենդանաբանության ամբիոն:	+		+		

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնը զգալի գործունեություն է ծավալում հանրության շրջանում էկոլոգիայի և բնապահպանության ուղղությամբ, լայն ու բազմակողմանի լուսաբանման (թերթերի, հեռուստատեսության և համակարգչի մեթոդներով), ինչպես նաև ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտների հետ ակտիվ կապերի ձևավորման և քարոզչության:

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Լ. Ավանեսյան	Գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրներ	Աշտարակ 18.03.2022

Դաստիարակչական	Վ. Հովհաննիսյան Ս.Եղիազարյան Ս.Շողերյան Ա.գասպարյան	դասախոսություն քարոզարշավ	Գառնի, Գյումրի 23.09.2022, 09.06.2022 Ալավերդի 23.11,-27.11.2022,
Ուսումնական Դաստիարակչական	Լ. Ավանեսյան Ս.Եղիազարյան	դասախոսություն քարոզարշավ Գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրներ	Երևանի հումանիտար քոլեջ 20.05.2022

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնն ունի որակի ապահովման մշակված համակարգ և պատասխանատու, որը մասնակցում է համալսարանում առցանց դասալսումներին ու քննություններին, օգնում է դասի համար անհրաժեշտ նյութերի հայթհայթմանը, ինչպես նաև լաբորատոր պայմանների բարելավման աշխատանքներին:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Հաշվետու տարում ամբիոնը ներքին շահակիցների ներգրավվածությամբ (ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական) կազմակերպել է գիտ-արշավ Բյուրականի անտառ-Ամբերդ երթուղով Երևանի բուսաբանական և կենդանաբանական այգիներ, բնության թանգարան, ԱԻՆ, Ջրերի մաքրման կայան, ՀՀ ԱՆ նարկոլոգիական կենտրոն, Ծաղկաձորի Օրբելի ղբայրների տուն-թնագարան:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսում	Ս. Շողերյան Ս.Եղիազարյան	Դասի վերլուծության արդյունքում կատարելագործել դասավանդման մեթոդներն ու սկզբունքները

Սեմինար	Լ.Ավանեսյան Ս. Շողերյան Մ. Ավագյան	Բարելավել ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքը
Զրույց-քննարկում	Ս. Շողերյան Վ. Հովհաննիսյան Ա.Գասպարյան Լ.Ավանեսյան Ս.Եղիազարյան Մ. Ավագյան	Հոդվածների քննարկում, ընտրովի դասընթացների թեմաների քննարկում, աշխատանքրի նոր մոտեցման և ուղղությունների առաջարկում

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1,Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր որակները:	1.Լաբորատոր սարքավորումների բացակայություն:
2. Գիտահետազոտական աշխատանքներում ամբիոնի դասախոսների ակտիվ ընդգրկվածոյուն:	
3.Web of Science միջազգային բարձր վարկանիշայն (Scopus) պարբերականներում տպագրություններում:	
4. ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոնների և ԲՈՒՀ-երի հետ սերտ համագործակցություն	
5. Հանրապետության տարբեր շրջանների սոցիալական տներում էկոլոգիական թեմաներով դասախոսությունների ընթերցում:	
6, Դրաշնորհային ծրագրի իրականացում	

Հնարավորություններ	Վտանգներ
1.Օտար լեզուներով մասնագիտական դասախոսություններ վարելու հնարավորություն:	1.Մանկավարժական բաղադրիչի բացակայություն և «Շրջակա միջավայրի գիտություններ» մասնագիտության անվանման հետ կապված դիմորների թվաքանակի զգալի նվազում
2.Արտասահմանյան բուհերի հետ համագործակցություն:	

Ակադեմիկոս Գ. Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամբանության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում (2022 թ.) 2021-2022 ուս. տարվա երկրորդ և 2022-2023 ուս. տարվա առաջին կիսամյակներում ծրագրված աշխատանքները՝ ըստ նույն ժամանակահատվածներն ընդգրկող աշխատանքային պլանների սահմանված ժամանակացույցի, իրականացվել է 100 %-ով:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Հաշվետու տարում ամբիոնում իրականացվող բոլոր դասընթացների ուսուցանումից ակնկալվող արդյունքները համապատասխանում են դրանց դասավանդման և ուսումնառության առկա փաստացի արդյունքներին, այնքանով, որքանով դա տեսանելի է Ամբիոնի ՊԴԱ-ի և սպասարկվող ֆակուլտետների դեկանատների դիտանկյունից: Դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները պարբերաբար արդիականացվել են, դրանց նկատմամբ վերահսկողությունը Google Classroom-ի հարթակում մշտադիտարկվել է Ամբիոնի վարիչի, Ամբիոնի Google Classroom-ի հարթակի պատասխանատուի, Ամբիոնի որակի պատասխանատուի, ինչպես նաև ՀՊՄՀ որակի վարչության կողմից: Դասավանդման, ուսումնառության մեթոդների, գնահատման չափանիշների և մեխանիզմների վերամշակման, կատարելագործման և դրանց արդյունավետության բարձրացման հարցը պարբերաբար քննարկվում է Ամբիոնում՝ այդ խնդիրների շուրջ ՀՊՄՀ-ում իրականացված լայնածավալ վերապատրաստման պարապմունքների պահանջների դիտանկյունից: Այդ քննարկումների արդյունքներն արտացոլված են Ամբիոնում իրականացվող դասընթացների վերամշակված ուսամնամեթոդական փաթեթներում:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, ուսանողների գնահատման համակարգը, մասնավորապես գնահատման մեթոդները, չափանիշները ու մոտեցումները վերանայվել են և իրականացվել են մի շարք միջոցառումներ ու մեխանիզմներ գնահատման արդյունավետությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև՝ ուսանողների ակադեմիական ազնվությունը ապահովելու ուղղությամբ: Այս տեսանկյունից ամբիոնի իրականացրած գործողություններն ու գործառույթները ընթանում են

սկզբունքորեն նույն մեթոդաբանությամբ և մեթոդիկայով, ինչ որ նախորդ տարիներին, քանի որ հաշվետու տարում նոր դասավանդվող առարկաներ Ամբիոնը չի իրականացրել: Այսպես՝

- Առարկայական նկարագրերում ամրագրվել են գնահատման չափանիշները, վերջնական կամ ամփոփիչ գնահատականի բաղադրիչներն ու դրանց ձևավորման մեխանիզմները, սահմանվել են միջանկյալ ստուգումների (խմբային, վերլուծական, թեստային, գրավոր շարադրանքի, էսսեի) ինչպես նաև ընթացիկ ստուգումների գնահատման չափորոշիչները և գնահատականի ձևավորման մեխանիզմներն ու բաղկացուցիչ տարրերը:

- Գնահատման հարցում Ամբիոնն առաջնորդվում է Համալսարանի ուսումնական և որակի վարչությունների կողմից մշակված ընդհանրական գնահատման համակարգով:

- Գնահատման համակարգում մշտապես կարևորվում է ուսանողի վերլուծական, ինքնուրույն, ստեղծագործական, աշխատանքի բաղադրիչը, որը նպատակաղուղղված է ուսանողի հետազոտական քննադատական-վերլուծական մտածողության խթանմանը: Այդ նպատակով միջանկյալ ստուգումներն ու ընթացիկ ստուգումները իրականացվում են էսսեների, վերլուծական աշխատանքների, խմբային (թիմային) աշխատանքների, թեստերի միջոցով, իսկ որոշ դասընթացների դեպքում՝ զուգակցվում ավանդական գրավոր շարադրանքների հետ:

- Գնահատման համակարգում Ընթացիկ ստուգման բաղադրիչը իրականացվում է ա) խմբային աշխատանքի կամ էսսեի, բ) էլեկտրոնային ակտիվության՝ (Google Classroom հարթակում ժամանակին գրանցվելու, դասընթացի էջում տեղ գտած առաջադրանքները ժամանակին կատարելու, դասախոսի կողմից ֆորումներում առաջադրված քննարկումներին ժամանակին արձագանքելու) կամ գ) լսարանում ուսանողների դրսևորած ակտիվության ցուցանիշով:

Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի իրականացման փուլում դասախոսները գործնականում անդրադարձել են ստուգման յուրաքանչյուր կոնկրետ ձևի առանձնահատկություններից բխող պահանջների իրականացման եղանակներին ըստ առարկայական նկարագրերում սահմանված ելքային արդյունքների՝ մատնանշելով և մեկնելով գնահատման սահմանված հիմնաքարային մոտեցումները՝ տեսական հարցերի հնարավորինս ամբողջական ներկայացումը, ձևակերպումների ստույգությունը, շարադրման տրամաբանությունը, տեսական գիտելիքը ձևայնացնող առաջադրանք-վարժանքների ճիշտ իրականացնումը (մասնավորապես՝ "Տրամաբանություն" և "Փաստարկման տեսություն" առարկաների դեպքում), հետևությունների ու գնահատականների ինքնուրույնությունը, թեմայի ինքնուրույն արժևորումը, գրականության հնարավորինս ամբողջական օգտագործումը և այլն: Ընդ որում թվարկված յուրաքանչյուր պահանջի համար յուրաքանչյուր կոնկրետ առարկայի դեպքում սահմանվել են գնահատման կոնկրետ որոշակի տոկոսաչափեր՝ պայմանավորված առարկայի առանձնահատկություններով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ակադեմիական ազնվությունը ապահովելու գործում բարոյա-խրատական զրույցներն ու սպառնալիքները ժամանակի զուր և ապարդյուն վատնում են և հանգեցնում են ուսանողի ինքնագնահատականի իջեցման, անկարողության գիտակցման, Ամբիոնը վերջին տարիներին որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որը ըստ էության, լուծում է խնդիրը: Այն է՝ ստուգման ձևերն իրականացնելիս սահմանել այնպիսի պահանջներ և առաջադրել հանձնարարականների կատարման այնպիսի քայլեր, որոնց «մեխանիկական» կատարմամբ ուսանողը ինքնին կապահովի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանք և կրմբոշխնի սեփական աշխատանքի արգասիքը: Այսպիսի «տեխնիկայով» աշխատող ուսանողը երբևէ չի կարող և չի ցանկանա յուրացնել ուրիշի միտքը:

Այս խնդիրն իրագործելու նպատակով դասախոսը մշակում է Վերլուծական աշխատանքի, էսսեի իրականացման քայլերը, ըստ անհրաժեշտության Google Classroom-ի հարթակում տեղադրում է տիպօրինակներ, կազակերպում է արտալսարանային պարապմունքներ և խորհրդատվություն՝ Ամբիոնին կից

գործող և իր կազմը շարունակաբար ընդլայնող «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակի շրջանակներում, վիդեո ֆիլմերի, գեղարվեստական երկերի քննարկումների և ընտրված հիմնախնդիրների դիտարկումներ այդ թվում նաև՝ տեսական սեմինարների շրջանակներում:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Հաշվետու տարում Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, դրանց իրականացմանը նպաստող մեխանիզմները և դրանց կապակցությամբ ընդունված որոշումներն ամրագրվել են Ամբիոնի նիստերի արձանագրություններում (2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի և 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի նիստերի արձանագրությունների մասին հանգամանալից տվյալները տե՛ս ստորև ներկայացված համապատասխան սանդղակի նշումներ բաժնում):

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
ՆԻՍ ԹԻՎ 6, 25.01.2022 թ.	1. Կուրսային աշխատանքի պաշտպանություն (ուսանող՝ Լիլիթ Միլիտոնյան – Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ, առկա բակալավրիատ, Հասարակագետ 3-րդ կուրս: Թեմա՝ Ն. Մաքիավելիի քաղաքական- փիլիսոփայական հայացքները: Գիտական ղեկավար՝ փ.գ.թ., դոցենտ Անդրանիկ Ստեփանյան): 2. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում:	Հաստատել Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի առկա բակալավրիատի Հասարակագիտություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Միլիտոնյանի Ն. Մաքիավելիի քաղաքական-փիլիսոփայական հայացքները խորագրով կուրսային աշխատանքի պաշտպանությունը՝ աշխատանքը գնահատելով գերազանց (100 միավոր): Սահմանված ժամկետներում լրացնել քննությունների ամփոփագրերը և հետագայում հետևել լուծարումների ընթացքին:
ՆԻՍ ԹԻՎ 7, 01.02.2022 թ.	1. 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում և վերահաստատում: 2. Google Classroom հարթակում 2-րդ կիսամյակի դասընթացների էջերի ձևա-վորման (մինչև փետ. 7-ը) և 2-րդ կիսամյակում իրականացված	Հաստատել 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Հետևել Google Classroom հարթակում դասընթացների բոլոր էջերում անհրաժեշտ նյութերի ապահովմանը: Հաստատել 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների, ստուգարքների և ամփոփիչ քննություն-ների հարցաշարերը:

	դասընթացների էջերի արխիվացման շուրջ: 3. 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների միջանկյալ ստուգումների և ամփոփիչ քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում: 4. 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակների տրամադրման հարցը: 5. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների լուծարումների շուրջ:	Մինչև փետրվարի 9-ը ըստ ուղարկցած ձևաչափի տրամադրել 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակները: Հետևել սահմանված ժամկետներում լուծարային ամփոփագրերի լրացմանը:
Г.Х.Мушегян, М.В.Погосян, Дж.С.Саркисян, Г.М.Араджян	Синаптические процессы в большом ядре шва при активации околоводопроводного серого вещества на ротеноновой модели болезни паркинсона, индуцированной односторонним введением.	
G.Musheghyan, G.Arajyan, I.Harutunyan, A.Ter-Hovsepyan, M.Matsakyan, M.Isajanian	Cochlear implantation as a way to overcome hearing problems.	
Հ.Մ.Գրիգորյան Դ.Ն.Խուդավերդյան Ա.Ս.Տեր-Մարկոսյան Հ.Կ.Ղամբարյան	Ֆիզիոլոգիա Ուսումնական ձեռնարկ Երևան, 2022 <<Մեկնարկ>> ՍՊԸ	504 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
Սեմինար նվիրված քաղպաշտպանության միջազգային օրվան	ՀՊՄՀ, ամբիոն, օրը՝ մարտի 4
Սեմինար	

Բ. Ուսանողական

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Նարինե Սահակյան	Սահակյան Աշխեն Արմենի	Պարտադրված հեռավար ուսուցման հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները	16-րդ Տարեկան գիտաժողովի նյութերում՝ նվիրված Հայ-

		կորոնավիրուսային համաճարակի պայմաններում	ռուսական համալսարանի հիմնադրման 25 ամյակին

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
հանրապետական	ուսանողական գիտական ֆորում՝ “Աղետներ, համաճարակներ, հանրային առողջություն, կրթություն “ կազմակերպիչ՝ ամբիոն	21 ուսանողական զեկույց

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
(տեքստը այստեղ)

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ամբիոնը «Դասավանդի՛ր, Հայաստան» գրասենյակի հետ համատեղ այցելել է Վայոց ձորի Արենիի միջնակարգ դպրոց, որտեղ հանդիպում է կազմակերպվել միջին և ավագ դպրոցականների, առաջնորդ ուսուցիչների և տեղի ուսուցչական անձնակազմի հետ: Որպես սահմանամերձ գոտի, ՊԴԱ կողմից

կարդացվել են քաղպաշտպանության թեմայով դասախոսություններ:Աշակերտներին ներկայացվել են հանրային առողջության խնդիրների կարևորությունը: Փոխհամագործակցության շրջանակներում ներկայացվել են ՀՊՄՀ-ի մասնագիտությունները և մանակավարժական կրթության առաջնահերթությունը սահմանամերձ շրջաններում:

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Հաշվետու տարում ամբիոնը ունեցել է որակի ապահովման մշակված համակարգ, որն իրենից ներկայացնում է կրթական գործընթացում գիտելիքների ստեղծման և ուսուցման արդյունավետության բարձրացման նոր մեթոդների մշակում, կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետություն, ամբիոնի դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացում, դասավանդվող առարկաների դասընթացների թարմացում, մեթոդական նյութերի, առարկաների, ուսումնամեթոդական համալիրների մշակում: Ամբիոնի կադրային ներուժը կատարելագործվելու կարիք ունի, որի համար մշակել է խնդիրների լուծման մի շարք ուղիներ՝ ամբիոնի կադրային ներուժի մշտական աուդիտի կազմակերպում, որակավորման բարձրացման նպատակով համապատասխան ուղենիշների մշակում, արտասահմանյան պարբերականներում հոդվածների, նյութերի հրատարակում:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
(տեքստը այստեղ)

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Սեմինարներ	Ն. Սահակյան	Քննարկումներ
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)		

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմուտ կարողությունների ուսուցանում, աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված ուսումնակրթական գործունեություն: 2. Մանկավարժական կոմպետենցիաների ձևավորման գործառույթ, ըստ բժշկագիտության և քաղաքաշտպանության հիմունքների: 3. Հիմնարար և կիրառական հետազոտություններ, գիտատեսական և գիտագործնական ձեռքբերումներ ֆիզիոլոգիական գիտության ուղղությամբ: 4. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ցիտվող պարբերականներում (web of science, scopus, SpringerLink, impact factor (IF)), տպագրություն: 5. Գիտական սեմինարների, գիտաժողովների, ուսանողական ֆորումների կազմակերպում, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում, online սեմինարներում, վեբինարներում և մասնագիտական քննարկումներում ակտիվ մասնակցություն: 6. Դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցություն և ծրագրի իրականացում:	1. Բժշկագիտության և քաղաքաշտպանության ուղղությամբ գործնական պարապմունքների և ուսանողների պրակտիկ գործունեության բաղադրիչի բացարձակ բացակայություն: 2. Ամբիոնի կողմից սպասարկվող ֆիզիոլոգիական բլոգի դասընթացների լաբորատոր պարապմունքնե համար (կենդանիների հերձում) նախատեսված լաբորատորիայի բացակայություն: 3. Անթույլատրելի ուղղությունների միավորում՝ "Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիան" չի կարող հանդիսանալ նույն բուհի մեկ այլ ամբիոնի՝ "Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության" ամբիոնի ուսումնակրթական ուղղություններից մեկը: 4. Ամբիոնների միավորման արդյունքում ամբիոնին տրամադրվում պրակտիկայի ժամեր, մինչդեռ ամբիոնը հանդիսանում է դպրոցական ծրագրում ներառված 8-րդ դասարանի առարկաներից մեկի՝ մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնո ամբիոն:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Հայաստանի Հանրապետության բուհական համակարգում Հատուկ և Ներառական կրթության ֆակուլտետը հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, արտ-թերապևտներ, էրգոթերապիստներ, հատուկ հոգեբաններ պատրաստող միակ կրթօջախն է, որի շրջանավարտները աշխատանքային գործունեություն են իրականացնում ոչ միայն ներառական ու հատուկ դպրոցներում, մանկապարտեզներում, այլ նաև պոլիկլինիկաներում, հիվանդանոցների նյարդաբանական բաժանմունքներում, բժշկական տարբեր հաստատություններում, բժշկա-հոգեբանամանկավարժական գնահատման կենտրոններում:Այս առումով ԱԲՕ-ի ամբիոնը հատուկ և ներառական կրթության ոլորտում մասնագիտական կրթական՝ Ֆիզիոլոգիական բլոգի դասընթացների սպասարկումն իրականացնող հիմնական	1. ֆիզիոլոգիայի՝ որպես առանձին գիտական ուղղության բացակայությունը լիովին սահմանափակ է միջազգային համագործակցման հնարավորություն այլ բուհերի ֆիզիոլոգիայի և համապատասխան ամբիոնների հետ: 2. Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի որպես առանձին գիտական միավորի չգոյության պատճառով, տարբեր բուհերի, ինչպես նաև գիտահետազոտական ինստիտուտների պաշտպանական մասնագիտական հանձնաժողովն կողմից բուհը նշված ուղղությամբ այլևս չի դիտվում որպես առաջատար կազմակերպություն:

ամբիոններից մեկն է, որը առանցքային նշանակություն ունի մանկավարժության նորագույն ճյուղերից մեկի՝ բժշկա-մանկավարժության զարգացման և ամրապնդման մեջ: Հետևապես այս ուղղությամբ վերապատրաստումը խիստ կարևորվում է մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման, գիտելիքների բարձրացման, գործնական հմտությունների ձեռքբերման և զարգացման, ինչպես նաև բժշկամանկավարժության բնականոն գործունեությունն ապահովելու համար: Այս առումով ամբիոնը առաջարկում է Բժշկամանկավարժության ոլորտը սպասարկող մասնագիտական դասընթացների վերապատրաստման եռալեզու դասընթացներ առկա և հեռավար ձևաչափով: ՀՊՄՀ-ում վերապատրաստման ծրագրերը կիրականացվեն գիտաբժշկական բարձր մակարդակի եռալեզու դասախոսությունների և գիտագործնական պարապմունքների միջոցով, բարձր որակավորում ունեցող դասախոսների՝ բժիշկների և ֆիզիոլոգների կողմից, ովքեր ունեն բուհերում, կրթական, գիտահետազոտական, բժշկական տարբեր հաստատություններում աշխատելու, ինչպես նաև անգլալեզու և ռուսալեզու դասախոսություններ կարդալու համապատասխան փորձ: Առաջարկն ընդունվելու դեպքում ամբիոնը կներկայացնի վերապատրաստվող դասընթացների ծրագիրը:	3. Անթույլատրելի միավորման արդյունքում ֆիզիոլոգիական գիտության ուղղությամբ ասպիրանտների և հայցորդների դիմելիության սահմանափակում: 4. Ամբիոնների միավորման արդյունքում հոգեբանամանկավարժության տեսակ հիմքը հանդիսացող մի շարք դասընթացների (տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա, Վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների հիգիենա և մանկաբուժության հիմունքներ) անտեսում և դուրս թողում ուսումնական ծրագրերից:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին

1. Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի.

N	Նպատակները, խնդիրները.
1	Ներդնել և ծավալել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի պատրաստում՝ առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:
2	Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի բարելավմանը, նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը, ինչպես նաև ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքների ձևավորմանը:
3	Մասնակցել ՏՏ-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովմանը՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով:

4	Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը կառավարման տեղեկատվական-վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:
5	Մասնակցել համալսարանի տեղեկատվական ներուժի համալրման գործընթացին, նպաստել դրանց մատչելիությանն ու արդյունավետ օգտագործմանը կրթական և հետազոտական կարիքների զարգացմանը համահունչ:
	Բաժնի խնդիրներն են.
1.	Համակարգել և բարելավել՝ ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովված կրթական գործունեություն, ներդրված առցանց ուսուցման բազմագործառույթ էլեկտրոնային համակարգ, էլեկտրոնային ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ դասընթացներ, կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ, առցանց ուսուցման տեխնոլոգիաները կիրառող դասախոսների թիվ, դասախոս - ուսանող գործունեության էլեկտրոնային ուսուցման լայն կիրառում:
2.	Մասնակցել՝ փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի ձևավորմանը, համալսարանի կառավարման տեղեկատվական միասնականացված համակարգի, կրթական-տեղեկատվական էլեկտրոնային միջավայրի ձևավորմանը, առցանց ուսուցման էլեկտրոնային պորտալի համակարգի ապահովմանը՝ վեբ հենքով, էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների 100% հաշվեկշռի ապահովմանը, էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում 100% հիմնական դասախոսների կողմից:

2. Հաշվետու տարվա համար Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պլանավորած աշխատանքները.

ա/ ռազմավարական պլանի համաձայն.

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
Խնդիր 1.1	Շարունակել ընդլայնել Google for Education կրթական համակարգի լայն կիրառմանը՝ ՀՊՄՀ	Հունվար, սեպտեմբեր	2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի սկզբում ֆակուլտետների և ամբիոնների աշխատակիցներին տեղեկացվել է

	բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում:		անհրաժեշտ գործողությունների կատարման և իրականացման քայլերը՝ ըստ ժամանակացույցի, հետևել ենք քլասրում էլեկտրոնային հարթակում բոլոր դասընթացների էջերի ակտիվացմանը՝ ըստ դասաբաշխման, վերահսկել էջերում անհրաժեշտ նյութերի, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների տեղադրմանը, դասախոսների և ուսանողների ներգրավվածությանը համապատասխան դասընթացների էջերում: Ուսումնական գործընթացի առցանց տիրույթի գործունեությունը գնահատվել է մշտադիտարկումների արդյունքների հիման վրա:
Խնդիր 2.1	Օպտիմալացնել ուսումնական գործընթացի մասնակիցների գործառույթներն առցանց տիրույթում:	Հունվար, օգոստոս	Յուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկից առաջ ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքների կատարման քայլերի քարտեզագրում, աշխատանքների տարանջատում և ժամանակի սահմանում՝ ըստ կազմված ուղեցույցի:
Խնդիր 2.2	Վերամշակել էլեկտրոնային ուսուցման կազմակերպման առկա ուղեցույցները:	Հունվար, օգոստոս	Էլեկտրոնային ուսուցման կազմակերպման վերաբերյալ առկա փոփոխությունների վերաբերյալ շահակիցներին իրազեկելու եղանակներից մեկն էլ վերամշակված ուղեցույցներն են, որի մեջ ներառված են նոր գործիքակազմի օգտագործման վերաբերյալ տեղեկություններ՝ ճիշտ ընտրության և նախագծման առաջնահերթությունները հաշվի առնելով:
Խնդիր 2.3	Շարունակաբար մշտադիտարկել էլեկտրոնային դասընթացները՝ դուրս բերելով առկա թերությունները և մշակել բարելավման քայլեր:	Փետրվար-մարտ- ապրիլ, սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր	Տարվա ընթացքում առնվազն 4 անգամ իրականացնել էլեկտրոնային դասընթացների էջերի մշտադիտարկում: 2021-2022 ուստարվա փետրվար-ապրիլ և 2022-2023 ուստարվա սեպտեմբեր- նոյեմբեր ամիսներին Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից մշտադիտարկվել են էլեկտրոնային մատյանները և դասացուցակները, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի առկայությունը էլեկտրոնային դասընթացներում: Դուրս են հանվել բոլոր ամբիոններից առկա բացթողումները, որոնց մասին նրանք ևս տեղեկացվել են և սահմանված ժամկետում հանձնարարվել է շտկել սխալները և լրացնել բացթողումները, որից հետո կրկին

			իրականացվել է վերամշտադիտարկում: Յուրաքանչյուր ամսվա ավարտին մեզ ներկայացվում են ամբիոնային մշտադիտարկումներ՝ հաշվետվությունների տեսքով:

3. Հաշվետու տարում Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/.

Աշխատանքի թվարկում
Բաժինը հաշվետու տարում. պարբերաբար ապահովել է ASPU Google for Education համակարգի անխափան տեխնիկական աշխատանքը ՀՊՄՀ ներքին և արտաքին շահառուների համար, համակարգել է կիսամյակում էլ. դասընթացների իրագործումը ASPU Google Classroom համակարգում առկա և հեռակա ուսուցման ձևերի համար, համակարգել է ASPU Google Meet առցանց տեսահանդիպումների հավելվածի արդյունավետ կիրառումը դասախոսների և ուսանողների ՀՊՄՀ յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, ինչպես նաև ամբիոնների և ֆակուլտետների առցանց հանդիպումներ կազմակերպման համար, իրականացրել է խորհրդատվական հանդիպումներ ՀՊՄՀ ֆակուլտետների և ամբիոնների աշխատակիցների հետ, տրամադրել է առցանց տեխնիկական օժանդակություն ՀՊՄՀ ուսումնաօժանդակ կազմի համար՝ ASPU Google for Education համակարգի վերաբերյալ, կազմակերպել է առցանց ռեկտորատներ և վարչական ստորաբաժանումների այլ առցանց հանդիպումներ aspu դոմենի շրջանակներում, հունվար նախանշել է բաժնի տարեկան աշխատանքները՝ ՌԾ-ի կողմից Բաժնի առջև դրված նպատակներին, խնդիրներին և տարեկան գործողությունների պլանին համապատասխան, թարմացրել է ASPU Google Classroom համակարգի տեխնիկական բաղադրիչները՝ հաշվետու տարվա ուսումնական գործընթացի էլեկտրոնային տիրույթը ապահովելու նպատակով, համակարգել է հեռակա համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի 1-2-3 կուրսերի էլ. դասընթացների ստեղծման գործընթացը, կազմակերպել և համակարգել է հեռակա ուսուցման համակարգի մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ավարտական ատեստավորման քննությունները՝ ASPU Google Classroom համակարգի միջոցով,

վերահսկել է ամբիոնների աշխատանքը՝ Class-երում ուսումնական էլ. նյութերի տեղադրման տեխնիկական գործառույթը,

նախապատրաստել է ASPU Google Classroom համակարգը առկա ուսուցման ձևի էլ. դասընթացների ձևավորման համար,

էլեկտրոնային մատյանների ձևաչափի վերանայում,

փետրվար

համակարգել է առկա ուսուցման ձևի բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի էլ. դասընթացների ստեղծումը ASPU Google Classroom համակարգում,

համակարգել է համապատասխան ուսանողների և դասախոսների կցումը Class-երին և յուրաքանչյուր էլ. դասընթացում ուսումնական նյութերի տեղադրումը,

իրականացրել է էլեկտրոնային դասընթացների, էլ. մատյանների և դասացուցակների մշտադիտարկում:

մարտ

ապահովել է ուսումնական գործընթացի շարունակականությունը՝ առցանց համակարգի գործածման միջոցով,

ստեղծել և վերամշակել է ուղեցույցներ դասախոսների և ուսանողների համար առցանց համակարգի հնարավորություններից գրագետ և արդյունավետ օգտվելու համար,

համակարգել է առկա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի առցանց միջանկյալների իրականացման անխափան գործընթացը,

Admin տիրույթում իրականացրել է ուսանողների էլ. հասցեների համակարգման աշխատանքներ,

իրականացրել է էլեկտրոնային դասընթացների, էլ. մատյանների և դասացուցակների վերամշտադիտարկում:

ապրիլ

իրականացրել է առկա ուսուցման համակարգի ամփոփիչ ատեստավորման քննությունների իրականացման նախապատրաստական աշխատանքներ,

ստեղծել է տեսական ուղեցույցներ և տեսաձայնագրություններ ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման կարգի վերաբերյալ,

համակարգել է հեռակա ուսուցման ձևի բակալավրիատի կուրսերի ուսումնական գործունեությունը առցանց ASPU Google for Education տիրույթում,

մայիս

նախապատրաստել է կանոնակարգ Classroom էլեկտրոնային հարթակի միջոցով “Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ”-ի անցկացման համար,

իրականացրել է վերապատրաստումներ ամբիոնների և դեկանատների աշխատակիցների հետ՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի անցկացման վերաբերյալ՝ ըստ ուղեցույցների,

հունիս

ամբիոնների և ֆակուլտետների համար աուդիտի 2022 մեյլերի ստեղծում,

համակարգել է առկա /բակալավրիատ, մագիստրատուրա/ և հեռակա /բակալավրիատ/ ամփոփիչ ավարտական քննությունների իրականացումը ՀՊՄՀ բոլոր մասնագիտությունների համար,

հուլիս

համակարգել է ֆակուլտետների գործառույթը ուսանողների ավարտական դիպլոմի տվյալների առցանց հավաքագրման հարցում և ճշգրիտ որակավորումների լրացման գործում,

օգոստոս

ադմին պանելում ստեղծել է ուսանողների համար պանակներ և իրականացրել համապատասխան տեղափոխությունները,

կազմակերպել է Classroom հարթակում էլեկտրոնային դասընթացների արխիվացման աշխատանքները,

նախապատրաստել է առցանց ուսումնական համակարգը նոր ուսումնական տարվա և կիսամյակի համար

սեպտեմբեր

համակարգել է դասախոսների և ուսանողների կցվածության ապահովումը էլ. դասընթացներին,

համակարգել է ամբոինների գործառույթը ուսումնամեթոդական փաթեթների հաստատման և դրանց տեղադրման վերաբերյալ համապատասխան Class-երում,

ստեղծվել է 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի էլ. դասացուցակի համակարգ ՀՊՄՀ բոլոր մասնագիտությունների և բոլոր կրթական ձևերի համար,

համակարգել է էլ. դասացուցակի լրացումը և գրագետ վարումը դեկանատների մասնագետների կողմից՝ հավաքագրելով ուսումնական գործընթացին վերաբերող ամբողջ գործընթացի ժամանակացույցը և նշումները մեկ ֆայլում՝ հասանելի դարձնելով այն ուսանողների համար,

հոկտեմբեր

իրականացրել է առցանց ուսումնական գործընթացի, էլեկտրոնային դասընթացների և դասացուցակների մշտադիտարկում,

ստեղծել է 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի դիմորդների համար էլեկտրոնային հասցեներ և տրամադրել օգտատերերին,

իրականացրել է 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրին պատկանող բոլոր էլեկտրոնային դասընթացների և էլ. մատյանների մշտադիտարկում,

իրականացրել է առցանց ուսումնական գործընթացի վերամշտադիտարկում,

նոյեմբեր

իրականացրել է էլեկտրոնային դասացուցակների և մատյանների մտադիտարկում,

իրականացրել է առկա ուսուցման համակարգի բակալավրիատ և մագիստրատուրա 1-ին կուրսերի ուսանողների էլեկտրոնային ուսանողական տոմսերի ստեղծման աշխատանքներ,

իրականացրել է հեռակա ուսուցման ձևի դասերի մեկնարկի կապակցությամբ նախապատրաստական աշխատանքներ,

ստեղծել և համակարգել է հեռակա ուսուցման համակարգի էլեկտրոնային դասացուցակների 1-ին կիսամյակի համակարգ,

համակարգել է դեկանատների և ամբիոնների մասնագետների աշխատանքը,

դեկտեմբեր

վերանայել է ԿԷԿ բաժնի ռազմավարական ուղղությունը՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2022 - 2025 թթ.) գործողությունների կատարման պլանում՝ տարեկան հաշվետվության գործընթացն իրականացնելուն զուգահեռ,

համակարգել է ՀՊՄՀ ստորաբաժանումների 2022 տարեկան հաշվետվությունների առցանց հավաքագրումը:

ավարտին է հասցրել ուսանողների էլեկտրոնային ուսանողական տոմսերի ստեղծման և համակարգման աշխատանքները:

Կատարման վերլուծություն

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն արդեն 7 տարի է (2015 թվականից մինչ օրս), ինչ ավանդական կրթությունը համատեղում է էլեկտրոնային կրթության հետ՝ Google For Education համակարգի միջոցով: Այն մեզ հնարավորություն է տվել ուսանող-դասախոս կապը դասընթացների շրջանակներում բացի առերես և լսարանային հանդիպումներն ապահովելուց, նաև համագործակցել Classroom էլեկտրոնային տիրույթում, որտեղ ամեն դասընթաց ունի իր էլեկտրոնային էջը, էլեկտրոնային դասարաններին համապատասխանաբար կցված են ուսանողները, դասախոսները, դեկանատի ներկայացուցիչները և ԿԷԿ բաժինը: Classroom հարթակում տեղադրվում են առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, ընթացիկ ստուգման և քննական հարցաշարերը, դասախոսությունները, գործնական և լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև հավելյալ և լրացուցիչ այլ նյութեր: Առցանց ուսուցման դեպքում 2020 թվականից մշակվել և գործարկվել է /մինչև օրս կիրառվում են/ էլեկտրոնային մատյանների ձևաչափը, որոնք տեղադրվել են համապատասխան քլաս էջերում: ԿԷԿ բաժնի կողմից ստեղծվել են էլեկտրոնային դասացուցակների ձևաչափերը և տրամադրվել համապատասխան ֆակուլտետներին: Էլեկտրոնային դասացուցակները հնարավորություն են տալիս ֆակուլտետներին և ամբիոններին կատարել ուսումնական գործընթացում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն:

Շարունակական բնույթով Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից մշտադիտարկվել են էլեկտրոնային մատյանները և դասացուցակները, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի առկայությունը էլեկտրոնային դասընթացներում: Դուրս են հանվել բոլոր ամբիոններից առկա բացթողումները և դրանց շուրջ իրականացվել համապատասխան աշխատանքներ՝ թերությունները շտկելու նպատակով:

Առցանց դասաժամերն իրականացվել են Google Meet հավելվածի միջոցով, որը մեզ հնարավորություն է տվել արդյունավետորեն և առանց որևէ խնդիրների հաղթահարել և բարեհաջող իրականացնել մեր էլեկտրոնային դասերը Classroom հարթակում: Հավելվածն ունի շատ առավելություններ, որոնցից է օրինակ էկրանը կիսելու հնարավորությունը, այս գործողության միջոցով դասախոսը կարող է իր էկրանը՝ տեսասահիկների, տեսանյութերի, դասախոսությունների կամ առաջադրանքների տեսքով, ցուցադրել ուսանողներին, ուսանողները նույնպես: Այստեղ ունենք նաև հաղորդագրությունների տիրույթ, որտեղ ինչ-որ տեխնիկական խնդիրների դեպքում տեղյակ են պահում, ունենք էլեկտրոնային գրատախտակ, մեր նկարի

ետնականկարը ընտրելու հնարավորություն և նմանատիպ այլ գործիքներ: Ուսանողները հնարավորություն ունեն նաև ձեռք բարձրացնելու և իրենց հարցերը դասախոսին և միմյանց ուղղելու:

Classroom հարթակում էլեկտրոնային դասերն անցկացնելուց զատ, համապատասխան գործիքների միջոցով մեծ պատասխանատվությամբ և առանց խոչընդոտների իրականացրել ենք նաև պետական որակավորման ամփոփիչ քննությունների նախապաշտպանությունները, պաշտպանությունները՝ նախօրոք դասախոսներին և ուսանողներին ուղեցույցներով վերապատրաստելուց հետո: Քննությունների գնահատումն իրականացվել է Google classroom էլեկտրոնային հարթակի միջոցով:

Հաշվետու տարում ԿԷԿ բաժինն ապահովել է արտաքին և ներքին տեղեկատվության հասանելիությունը ՀՊՄՀ շահակիցների շրջանում:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի գործառույթների հիմնական մասը կազմում է ASPU Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակի համակարգումը ՀՊՄՀ ուսումնական գործընթացի շրջանակներում, ուստի ներկայացնում ենք դրա կիրառման SWOT-վերլուծություն-ը.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ստեղծված աշխատող էլեկտրոնային ուսուցման համակարգ	ոչ լիարժեք արդյունք որոշ մասնագիտական ուղղություններում
7-ամյա փորձ՝ ուսուցումը էլեկտրոնային բաղադրիչներով իրականացնելու համար	կախվածություն արտաքին սերվերներից
ճկուն էլեկտրոնային հավելվածներ	
անընդհատ բարելավվող գործիքներ	
միասնական էլեկտրոնային տվյալների համակարգման տիրույթ	
Հնարավորություններ	**Վտանգներ**
միասնական դաշտ և համագործակցություն այլ բուհերի Google for Education համակարգերի միջև	Google ընկերության գործունեության դադարեցում
հեռավար կրթական ծրագրերի իրականացման բազմաթիվ հնարավորություններ	հեղինակային ուսումնական էլեկտրոնային նյութերի արտահոսք:
հեռավար վերապատրաստումներ իրականացնելու հնարավորություն	
ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպման հնարավորություն	

Կրթության որակի ապահովման և կառավարման բաժին

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի նպատակները,
	հիմնել որակի ապահովման պատասխանատուների և փորձագիտական բազա, պարբերաբար կազմակերպվող հանդիպումների միջոցով բարձրացնել համալսարանի շրջանում կրթության ոլորտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, մասնակից դարձնել ՀՊՄՀ աշխատակիցներին և ուսանողներին կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների, որոշումների կայացման գործընթացներին:
	Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի խնդիրները
1.	Ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք
2.	ՀՊՄՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերաբար վերանայում, վարչական աջակցություն բոլոր մակարդակներում:
3.	Որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ՀՊՄՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:
4.	Կրթության որակի համար ՀՊՄՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահեկիցների առջև:
5.	Տրամադրել վարչական օժանդակություն՝ ՀՊՄՀ և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար՝ ապահովելով որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապը:
6.	Նպաստել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ՈԱ գործընթացների հետ համեմատելի ու համադրելի գործընթացների կիրառման ապահովմանը
7.	Ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ բաժինների հետ կապերի հաստատում և ամրապնդում
8.	Աջակցել ՀՊՄՀ ինքնաուսուցանվող համակարգի ու համայնքի ձևավորման ապահովմանը:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
1	Կատարելագործել որակի ապահովման ներբուհական և ստորաբաժանումների շարունակական բարելավման գործուն	պարբե րաբար	Վերապատրաստված ՈԱ պատասխանատուներ:

	համակարգերը՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը և իրականացումը		Որակի կառավարման բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ, սեմինարներ:
2	Մշակել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգում որակի ապահովման պատասխանատուների աշխատանքային նկարագրերը և հստակեցնել գործառույթները	2022 2023	Համալսարանի կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների առկայություն.
3	Կազմակերպել ՄՈՒՀ-ի կրթության որակի ապահովման գործընթացների և աշխատանքների բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումներ	պարբերաբար	ՄԿԾ շրջանակներում բուհի կարողությունների զարգացմանն ու դրա գնահատմանն ուղղված միջոցառումների կազմակերպում
4	Ապահովել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկությունն ու հրապարակայնությունը	պարբերաբար	Բաժնի կայքէջի թարմացում, հապատասխան փաստաթղթերով և հասնալիության ապահովում:
5	Աջակցել որակի ապահովման գործընթացների իրականացմանը համալսարանի բոլոր ստորաբաշանումներում՝ իրականացնելով խորհրդատվություններ	2022-23	Մշակված մեխանիզմներ՝ ստորաբաժանումների ՈԱ պատասխանատուների հետ հանդիպումներ իրականացնելու, կարիքները վերհանելու, լուծումներ գտնելու և առաջարկություններ անելու նպատակով:
6	կատարելագործել որակի ապահովման և կառավարման գործընթացում կիրառվող հարցաշարերի բովանդակությունը	2022-23	միջացների և մեխանիզմների մշակում՝ որակի ապահովման և կառավարման գործընթացի բարելավման համար

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
1	Կազմակերպել փաստաթղթերի պարբերական վերանայման գործընթացները:	պարբերաբար	Վերամշակված փաստաթղթեր:

2	Մշակել և թարմացնել բաժնի կայքէջում առկա տեղեկատվությունը:	պարբերաբար	Որակի ապահովման գործառույթների թափանցիկության ապահովում: Տեղեկատվության հասանելիություն:
3	Կազմակերպել հանդիպումներ ՈԱ պատասխանատուների և ուսանողական կազմակերպությունների հետ:	պարբերաբար	Հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ: Կարիքների վերհանում: Քայլեր են ձեռնարկվում խնդիրների լուծման համար:
4	Մշակել կրթության որակի ապահովման առաջիկա տարիների գործառույթներն, ըստ զարգացման ռազմավարական ծրագրի:	2022-23	Կրթության որակի ապահովման գործառույթների առաջիկա տարիների պլանավորում:
5	Աջակցություն որակի ապահովման գործընթացների իրականացմանը համալսարանի բոլոր ստորաբաժանումներում:		Սեմինարներ, քննարկումներ, անհատական հանդիպումներ: Լավագույն փորձի վերհանում:
6	Իրականացնել ուսանողների կարիքների վերհանում:	սեպտեմբեր-նոյեմբեր	Ֆոկուս խմբային հանդիպումներ-քննարկումներ: Քայլեր են ձեռնարկվել խնդիրների վերհանման, տիպաբանման ուղղությամբ
7	Համակարգել ՈԱԱԿ կողմից որակի ներքին ապահովման համակարգի գործունեության և մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարման աշխատանքները:		Մշտադիտարկված մասնագիտության կրթական ծրագրեր: Արտաքին շահակիցների ներգրավվածություն, լավագույն փորձի վերհանում:
8	Թարմացնել ՈԱ պատասխանատուների, կամավորների և փորձագետների բազան:	հունիս-նոյեմբեր	ՈԱ պատասխանատուների և կամավորների թարմացված բազա: ՄԿԾ շրջանակներում բուհի կարողությունների դուրս բերում և գնահատում
9	Տեղեկատվության հավաքագրում համալսարանում անցկացվող	պարբերաբար	Սատացված տեղեկատվության վերլուծություն և արդյունքների ամփոփում: Կարիքների դուրս բերում:

	հարցումների վերաբերյալ:		
10			

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում

Համալսարանում շարունակվել են որակի ապահովման բարելավման գործընթացները: Թարմացվել է ստորաբաժանումների որակի ապահովման պատասխանատուների և փորձագետների բազան:

Իրականացվել են մի շարք գործողություններ

ա/ Զարգացման ռազմավարական ծրագրի 2021-2025թթ. գործողությունների կատարողականի հավաքագրում և վերլուծություն:

բ ՀՊՄՀ բարելավման պլանի վերանայում:

Մշտապես թարմացվել է բաժնի կայքէջը, իսկ ստեղծված իրազեկման թափանցիկ էլեկտրոնային հարթակը յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ծանոթանալ կրթության որակի ապահովման համակարգի և ընթացիկ գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթերին, ինչը հնարավորություն է տալիս առցանց խմբագրել, մշտապես խորհրդատվություն տրամադրել որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար:

Իրականացվել են բազմաթիվ սեմինարներ, քննարկումներ:

Բաժինը համագործակցում է միջազգային տարբեր կազմակերպությունների ՈԱ ստորաբաժանումների հետ, արդյունքում իրականացվել են սեմինարներ, գիտական աշխատանքների տպագրում:

Իրականացվել են սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների արդյունքների վստահելիությունը ապահովվել է հստակ սահմանված մեթոդաբանության և ընտրված ընթացակարգի և վերահսկողության:

Կերպարվեստ ՄԿԾ շրջանակներում բուհի կարողությունների զարգացմանն ու գնահատմանն ուղղված վերապատրաստումների արդյուքների ամփոփման ուղեկցումը համապատասխան միջոցառումների կազմակերպմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր խնդրի տարբեր տեսանկյունից դիտարկումը, նրա հեռանկարային տեսլականի գնահատումը և կշռադատված ընտրության կատարումը, առօրյա աշխատանքի գրավականն են, քանի որ արդյունքների վերլուծությունները և տվյալների ամփոփումը կարիքների վերհանումը և լուծման ուղիներ առաջարկելու կարողություններով է պայմանավորված ուսանողին առաջարկվող լուծումների արդյունավետությունը:

Կատարման վերլուծություն
Համալսարանի ռեկտորի հրամանի համաձայն կազմվել և հաստատվել է 2021-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիր՝ ըստ ռազմավարական ուղղությունների, նպատակների խնդիրների լուծման գործողությունների: Ինչի արդյունքում իրականացվել են հանդիպումներ, անհատական քննարկումներ աշխատանքային խմբերի պատասխանատուների հետ: Այսպիսով, պլանավորվել են 2021-2025թթ. ընթացքում կազմակերպվող աշխատանքները: Կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող մեկ այլ կարևոր գործոն է պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում /ՊԻԳԲ/ շրջափուլը, ինչը հարկավոր է իրականացնել բոլոր գործընթացներում արդյունավետության հասնելու համար:
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՈՒ գործընթացներում աշխատակիցների և ուսանողների ներգրավվածության բարելավում և աճ: Կրթության որակի ապահովման մթնոլորտի և մշակույթի ձևավորում:	Անհատական նախաձեռնությունների սակավություն ֆակուլտետների և ամբիոնների մակարդակում:
Ազգային, տարածաշրջանային և միջազգային բուհերի հետ համագործակցություն, ուսումնասիրած ՈՒ լավագույն փորձի ներդրում:	Սակավ է բաժնի աշխատակազմի և միջազգային կրթության ոլորտի մասնագետների հետ համագործակցությունը: Հիմնականում էլեկտրոնային, անհատական նախաձեռնության շնորհիվ է իրականացվում:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Ուսանողների ակտիվության և որակյալ կրթության մոտիվացիայի աճը երաշխիքային գրավական է կրթության որակի բարելավման համար:	ՈՒ գործընթացների վերաբերյալ արտաքին շահակիցների ցածր հետաքրքրություն և շահագրգռվածություն:
ՈՒ միջազգայնացման միտումները նոր հնարավորություններ կստեղծեն ՈՒ պատասխանատուների մասնագիտական զարգացման համար:	ՈՒ արտաքին գործընթացներում կրթության ոլորտի մասնագետ-փորձագետների սակավությունը լրջորեն կարող է խոչընդոտել համալսարանի որակի արտաքին գնահատման օբյեկտիվացիային:

Ուսանողական ակադեմիական հետագծի (շարժի) կազմակերպման բաժին

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
	Բաժնի նպատակներն են ՝ Ապահովել և վերահսկել ուսանողների ակադեմիական շարժունությունը,
	Ապահովել համալսարանի շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման գործընթացը,
	Ապահովել ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներին ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման գործընթացը,
	Նախապատրաստել և հաշվառել ուսանողների շարժի հետ կապված (ընդունելության, հեռացման, ուսանողական իրավունքների վերականգնման, տեղափոխության, տարկետման, կրթաթոշակ տրամադրելու և այլն) հրամանները,
	Ապահովել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ուսումը բուհում շարունակելու գործընթացը,
	Իրականացնել բաժնի իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ այլ գործառույթներ:
	Բաժնի խնդիրներն են՝ Համալսարանի ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպում և վերահսկում,
	Համապատասխան ժամկետներում փաստաթղթաշրջանառության կազմակերպում
	Ուսումնական գործընթացում մասնակցող Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպումը և վերահսկումը

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին

	Համալսարանի ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների աշխատանքային գիտելիքների, հմտությունների և կարողությունների բարելավում	հաշվետու տարվա ընթացքում	ընթացքի մեջ է /սեմինարների, քննարկումների և անհատական խորհրդատվության միջոցով/
	Ապահովել համահամալսարանական գործընթացների թափանցիկությունը, բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանական գործընթացներում	հաշվետու տարվա ընթացքում	ընթացքի մեջ է

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	հունվար-փետրվար/ուսումնական պարապունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում	Ուսանողների վերականգնման դիմումների ընդունում, մշակում, վերանայում, հրամանների պատրաստում/առկա/	կատարված է
	հունվար-փետրվար	Ուսանողներ ներբուհական տեղափոխության դիմումների ընդունում, մշակում, վերանայում, հրամանների պատրաստում /առկա, հեռակա/	կատարված է
	փետրվար	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/հեռակա մագիստրատուրա/	կատարված է
	փետրվար	Ամփոփիչ ատեստավորման քննություններից դրական նիշեր ստացած ուսանողներին դիպլոմ տրամադրելու	կատարված է

		հրամանների պատրաստում /հեռակա մագիստրատուրա/	
	մարտ	Առկա ուսուցման 1-ին կիսամյակի ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների հեռացում/առկա/	կատարված է
	ապրիլ-մայիս	Նախորդ տարիների ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար ստացած ուսանողների քննության վերահանձնման դիմումների ընդունում, մշակում, վերանայում, հրամանների պատրաստում/առկա, հեռակա/	կատարված է
	մայիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/առկա մագիստրատուրա/	կատարված է
	մայիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/առկա բակալավրիատ/	կատարված է
	հունիս	Տվյալ տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլտվության հրամանների պատրաստում/հեռակա բակալավրիատ/	կատարված է
	հունիս-հուլիս	Ամփոփիչ ատեստավորման քննություններից դրական նիշեր ստացած ուսանողներին դիպլոմ տրամադրելու հրամանների պատրաստում/առկա, հեռակա բակալավրիատ, առկա մագիստրատուրա/	կատարված է
	հունիս-հուլիս	Ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար ստացած ուսանողների հեռացում	կատարված է

	հուլիս	Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ տրամադրելու մասին հրամանների պատրաստում	կատարված է
	մայիս-օգոստոս	ՄՄՈՒՀ բարձր կամ գերազանց առաջադիմությամբ ավարտած շրջանավարտների փոստաթղթերի ընունում/առկա,հեռակա/	կատարված է
	սեպտեմբեր	ՄՄՈՒՀ բարձր կամ գերազանց առաջադիմությամբ ավարտած շրջանավարտների կցագրման հրամանների պատրաստում, առարկայական տարբերությունների հանձնման անհատական ժամանակացույցերի կազմում/առկա,հեռակա/	կատարված է
	օգոստոս-սեպտեմբեր /ուսումնական պարապունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում/	Ուսանողների վերականգնման դիմումների ընդունում, մշակում, վերանայում և հրամանների պատրաստում /առկա/	կատարված է
	օգոստոս- սեպտեմբեր /ուսումնական պարապունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում/	Ուսանողներ ներբուհական տեղափոխության դիմումների ընդունում, մշակում, վերանայում, հրամանների պատրաստում /առկա, հեռակա/	կատարված է
	հունիս-սեպտեմբեր	Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող ուսուցիչների ուսումը շարունակելու դիմումների ընդունում, փաստաթղթերի մշակում, վերանայում/հեռակա/	կատարված է
	սեպտեմբեր- հոկտեմբեր	Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող ուսուցիչների ուսումը շարունակելու հրամանների պատրաստում, առարկայական տարբերությունների	կատարված է

		հանձնման անհատական ժամանակացույցերի կազմում /հեռակա/	
	սեպտեմբեր	Առկա ուսուցման 2-րդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների հեռացում	կատարված է
	սեպտեմբեր	Առաջին կուրսերի ուսանողների հրամանագրում/առկա/	կատարված է
	սեպտեմբեր	Ուսանողներին կուրսից կուրս տեղափոխելու հրամանների պատրաստում, մշակում և հաստատում /առկա/	կատարված է
	հոկտեմբեր	Հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների հեռացում	կատարված է
	նոյեմբեր	Առաջին կուրսերի ուսանողների հրամանագրում/հեռակա/	կատարված է
	նոյեմբեր	Ուսանողներին կուրսից կուրս տեղափոխելու հրամանների պատրաստում, մշակում և հաստատում/հեռակա/	կատարված է
	դեկտեմբեր /ուսումնական պարապունքներին նախորդող 3 շաբաթվա ընթացքում/	Ուսանողների վերականգնման դիմումների ընդունում, մշակում, վերանայում և հրամանների պատրաստում /հեռակա/	պլանավորվում է կատարել համապատասխան ժամկետներում

	Հաշվետու տարվա ընթացքում	Ուսանողների ազատման, տարկետման դիմումների ընդունում, մշակում, վերանայում և հրամանների պատրաստում	
	Հաշվետու տարվա ընթացքում	Նախկին շրջանավարտների դիպլոմների կրկնօրինակների, դիպլոմների հավելվածների տրամադրում, դիպլոմում առկա թերությունների ուղղում, դիպլոմների իսկության վերաբերյալ հարցումների պատասխանում	

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում	
Google հարթակում Google Drive ֆայլային հոսթինգի կիրառում, Հիմնական աշխատանքների ավտոմատացում և նորագույն տեխնոլոգիաների կիրառում:	
Կատարման վերլուծություն	
Բարձր մակարդակ	
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Հաշվետու տարվա ընթացքում կատարած աշխատանքները գնահատում ենք լավ:	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների առկայություն	Համապատասխան կարգերի վերամշակում
Պլանավորած աշխատանքների ճշգրիտ համակարգում	տեխնոլոգիաների բարելավում
Թիմային աշխատանքի առկայություն	
համալսարանի ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների հետ անխախտ համագործակցություն	դիմումների ընդունման,հրամանների պատրաստման ժամկետների վերանայում

Ուսանողներին առավելագույն չափով տեղեկատվության տրամադրում ուսանողական գործընթացների վերաբերյալ	
Հնարավորություններ	Վտանգներ
Գործող օրենքներում եղած փոփոխությունների արագ տեղեկացվածություն և արձագանքում	Ուսանողներին ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրում, այլ կառույցների գործառույթների հետ կապված ուսումնական գործընթացների կազմակերպում ոչ համապատասխան ժամկետներում

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
1	ՀՊՄՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման հաշվետու ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի և տեղերի ձևավորում ու պլանավորում, ինչպես նաև ուսումնական գործընթացին մասնակցող համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների համակարգում և վերահսկում՝ ուսումնական գործընթացը լսարանային ֆոնդով ապահովում, ժամանակացույցի ստուգում, օպտիմալացում, դասերի կայացման վերահսկում,
2	ուսուսումնառության արդյունքների և ուսուցման կազմակերպական արդյունավետության գնահատման որակի և հավաստիության բարձրացման նպատակով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման գործող համակարգերի ու գործընթացների կատարելագործման ուղղությամբ ՀՊՄՀ-ում իրականացվող աշխատանքներին աջակցում և մասնակցություն: Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կազմի ձևավորում և ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն, հանձնաժողովների ամբողջական կազմի ձևավորում և ներկայացում ռեկտորի հաստատման
3	ընտրովի դասընթացների, պրակտիկաների, ընթացիկ /միջանկյալ/ ստուգումների, հանրագումարային և ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման գրաֆիկների հստակեցում, համակարգում

4	միասնական էլեկտրոնային համակարգով ուսումնական պլանների, ծավալների, ծանրաբեռնվածությունների, ստուգարքային և քննական տեղեկագրերի, ուսման առաջադիմության տվյալների մուտքագրման և մշակման գործընթացի կազմակերպում, վերահսկում
5	ամբիոնների տարեկան ուսումնական աշխատանքների ծավալների ստեղծում և կատարման վերահսկում, ֆակուլտետի և ամբիոնի կողմից ներկայացվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան անհատական բեռնվածությունների և հրամանագրման հիմքերի ստուգում
6	ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպում և հաշվառում
7	մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողների (շրջափոխման) մրցույթի կազմակերպում, ամփոփում, արձանագրությունների կազմում և հրամանների նախապատրաստում
8	պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու համար ուսանողների փաստաթղթերի հավաքագրում և ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն
9	ուսանողների սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ ուսման վճարը ուսումնական նպաստի ձևով մասնակի փոխհատուցման գործընթացի ամփոփում, արձանագրությունների կազմում և հրամանների նախապատրաստում, ուսանողների ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի ապահովում
10	ուսումնական աշխատանքների նորագույն տեխնոլոգիաների մշակում և համակարգում
11	ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ձևաթղթերի պահանջարկների ընդունում ըստ կառուցվածքային ստորաբաժանումների ամփոփում և տպագրման համապատասխան հայտի ներկայացում

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	2022-23 թթ.	Վերանայել բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի /առկա և հեռակա/ կառուցվածքը և	բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի փոփոխման հետ կապված բաժինը կատարել

		բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթղթերը	է ավտոմատ կառավարման համակարգում համապատասխան փոփոխությունները
	2022-23 թթ.	Ապահովել դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկումը կրթական ծրագրերում:	Ապահովել է դասավանդման և գնահատման պատշաճ իրականացումը և համապատասխանեցրել է փաստաթղթային հիմքերին

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	սեպտեմբեր	պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու համար ուսանողների փաստաթղթերի հավաքագրում և ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն	ս/թ սեպտեմբերին փաստաթղթերը հավաքագրվել և ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարություն
2	տարեկան	առկա և հեռակա ուսանողների սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ ուսման վճարը ուսումնական նպաստի ձևով մասնակի փոխհատուցման գործընթացի ամփոփում, արձանագրությունների կազմում և հրամանների նախապատրաստում	ս/թ սեպտեմբեր ամսից զեղչերի կիրառման գործընթացի առաջին փուլը սկսվել և ավարտվել է /դիմումների հավաքագրում, հրամանների նախապատրաստում, արձանագրության կազմում, հրամանագրում/ գործընթացը շարունակվելու է հուվար, փետրվար, մարտ, հունիս և հուլիս ամիրսներին
3	հունիս սեպտեմբեր	մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողների (շրջափոխման) մրցույթի կազմակերպում, ամփոփում, արձանագրությունների կազմում և հրամանների նախապատրաստում	մրցույթի արդյունքները ամփոփվել են ս/թ սեպտեմբեր ամսին համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերի և քանակի
4	հոկտեմբեր	ուսանողների ընդունելության հրամաններից հետո ծավալների և	վերահաշվարկը կատարված է 39 ամբիոններում

	նոյեմբեր	պրոֆեսորադասախոսական անձնակազմի ժամաքանակի վերահաշվարկ	
5	մարտ ապրիլ	ծավալային ժամաքանակների հաշվարկման համար նախատեսվող գրաֆիկների հավաքագրում,ստուգում և մուտքագրում էլեկտրոնային համակարգ /ընտրովի դասընթացների, պրակտիկաների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի /	համալսարանի 10 ֆակուլտետները ներկայացնում են գրաֆիկներ, որը ստուգվում է ըստ ուսումնական տարվա մասնագիտությունների համար հաստատված ուսումնական պլանների, այնուհետև մուտքագրվում համակարգ
6	մայիս հունիս հուլիս սեպտեմբեր	ամբիոնների տարեկան ուսումնական աշխատանքների ծավալների ստեղծում, պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան անհատական բեռնվածությունների բաշխումների և հրամանագրման հիմքեի ստուգում և ներկայացում հրամանագրման	ամբողջական գործընթացի հստակեցումից հետո բաժնի կողմից ստեղծվում են ամբիոնների ծավալային ժամաքանկները, այնուհետև վերահսկվում և ստուգվում է անհատական բեռնվածություններ և հրամանագրման հիմքերը
7	ապրիլ մայիս հունիս	շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ գրություններ, հանձնաժողովների ամբողջական կազմի ձևավորում, գրությունների պատասխաններ պատրաստում, ժամանակացույցի հաստատում և քննությունների արդյունքների ամփոփում	պատրաստվում է հանձնաժողովների կազմերի հրամանը

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժինը իր գործառույթների շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում պլանավորել և կազմակերպել է համալսարանի ուսումնական գործընթացը:

Ուսումնական գործընթացը կազմակերպվել է 10 ֆակուլտետների դեկանատներում և 40 ամբիոններում:

2022-2023 ուստարվա հաստիքակազմի, ժամաքանակի, թափուր ժամերի, ժամավճարային ֆոնդի, ինչպես նաև անցած ուստարվա համեմատական արդյունքի վերլուծությունն ունի հետևյալ պատկերը:

1. 2022-2023 ուստարում հրամանագրվել է 468.75 դասախոսական հաստիք, իսկ դասախոսական հաստիքային աշխատող՝ 592

ա/ սեպտեմբերի 1-ով՝ 460.5հ.

բ/ լրացուցիչ՝ ավելացել է 8.25 հ.

2. Ընդհանուր ժամաքանակը կազմում է՝ 408252 ժամ, որը գոյացել է՝

ա/ սեպտեմբերի 1-ով՝ 489923 ժամ

բ / ընդունելության վերահաշվարկի արդյունքում նվազել է՝ 81671 ժամ

3. Թափուր ժամեր՝ 1725 ժամ:

4. Դասախոսական ժամավճարային ֆոնդ՝ 1020 ժամ / 13 դասախոս

5. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության միջինը՝

871* (408252ժ. : 468.75հ.)

865* * (408252 ժ.- 1020 ժմվճ.- 1725 ժ. թափուր = 405507 ժ. : 468.75 հ.)

Ուսումնական տարի	Ժամաքանակ	Հաստիք / Աշխատող	Միջին ծանրաբեռնվածություն
2021-2022	431801* 428368 **	510.25/655	846* 840**
2022-2023	408252* 405507 **	468.75/592	871* 865**

Ծանոթություն* - միջին ծանրաբեռնվածությունը՝ ըստ ընդհանուր ժամաքանակի

** - միջին ծանրաբեռնվածությունը՝ առանց ժամավճարային և թափուր ժամերի

Նախորդ տարվա համեմատության արդյունքում ունենք հետևյալ պատկերը՝

1. 2022-2023 ուստարվա ընդհանուր ժամաքանակը 23549 ժամով նվազել է 2021-2022 ուստարվա ընդհանուր ժամաքանակից:

2. 2022-2023 ուստարվա հաստիքների թիվը 41.5 հաստիքով նվազել է 2021-2022ուստարվա համեմատ:

3. Հաստիքային աշխատողների թիվը 2022-2023 ուստարում 63-ով նվազել է 2021-2022 ուստարվա համեմատ:

Ստորև ներկայացվում է 2022-2023 ուստարվա պրոֆեսորադասախոսական կազմի ծավալ-ծանրաբեռնվածության ամփոփ տեղեկատվության աղյուսակը:

N	Ֆակուլտետ	Ժամաքանակ 2022-2023			Հաստիք 2022-2023				ժամավճար	թափուր
		նախնական	լրացուցիչ	ընդամենը	նախնական	լրացուցիչ	ընդամենը	հաստիքային աշխատող		
1	ԲՍ-1	23641	-6534	17107	21	0	21	25	0	0
2	ՄՖԻ-2	42429	-9353	33076	37.75	+0.5	38.25	52	183	0
3	ԿՔԱ-3	20913	-3459	17454	17.25	+2.5	19.75	23	43	215
4	ՊԻ-4	27377	-7943	19434	23.5	0	23.5	32	135	0
5	ԳԿ-5	64279	-10194	54085	59.75	0	59.75	74	176	0
6	ԿՀՍ-6	53137	-7150	45987	52	+0.25	52.25	65	0	938
7	Կ-7	89211	-9470	79741	85.75	+3.25	89	115	406	557
8	ՍԿ-8	26871	-2634	24237	28.75	0	28.75	40	0	0
9	ՀԿ-9	27886	-3886	24000	28.5	0	28.5	37	0	0
10	ՕԼ-10	64989	-13277	51712	59.5	+0.5	60	69	0	0
11	ՀՄՀ-11	49190	-7771	41419	46.75	+1.25	48	60	77	15
Ընդամենը		**489923**	**-81671**	**408252**	**460.5**	**+8.25**	**468.75**	**592**	**1020**	**1725**

ՇՐՋԱՓՈԽՈՒՄ

2021-2022 ուսումնական տարվա քննությունների, ստուգարքների /ստուգման այլ ձևերի/ արդյունքով առավել բարձր գնահատական ունեցող ուսանողներ մասնակցել են շրջափոխման մրցույթին: Մրցույթին մասնակցել են բակալավր 2-րդ, 3-րդ, 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի թվով 2146 ուսանող:

Ամփոփված արդյունքները համապատասխանեցվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերին և քանակին:

2022-2023 ուսումնական տարում շրջափոխվել են՝

Բակալավր

2-րդ կուրսից - 78 ուսանող

3-րդ կուրսից - 76 ուսանող

4-րդ կուրսից - 80 ուսանող

Մագիստրատուրա

2-րդ կուրս- 95 ուսանող

Ապահովվել է հրապարակայնությունը, ուսանողների կողմից բողոքներ չեն արձանագրվել:

Մրցույթով անցած ուսանողները, սահմանված կարգով, հրամանագրվել են ռեկտորի կողմից:

2022-2023 ուսումնական տարում համալսարանի միջոցների հաշվին անվճար համակարգ փոխատեղված 25 ուսանողների ուսման վարձի գումարը փոխհատուցվել է Պետության կողմից:

2022-2023 ուսումնական տարում /1-ին կուրս ընդունված/ համալսարանի միջոցների հաշվին անվճար համակարգ փոխատեղված 7 ուսանողների ուսման վարձը փոխհատուցվել է ԲՈՒՀ-ի կողմից:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

2021-2022 ուսումական տարվա 1-ին կիսամյակի Համալսարանի միջոցների հաշվին փոխհատուցվել է հեռակա ուսուցմամբ սովորող 195 ուսանողի ուսման վարձ:

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի Համալսարանի միջոցների հաշվին փոխհատուցվել է առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 782 ուսանողի ուսման վարձ:

2021-2022 ուսումնական տարում Պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացել է 120 ուսանող:

2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում Համալսարանի միջոցների հաշվին փոխհատուցվել է առկա ուսուցմաբ սովորող 446 ուսանողների ուսման վարձ:

2022-2023 ուսումնական տարում ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-ն որոշման 34-րդ կետով սահմանված ժամկետներում համալսարանի շահառու 451 ուսանողների անվանացանկերը համապատասխան ֆինանսական միջոցներ ստանալու համար ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն:

2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման 2-րդ կիսամյակի և հեռակա ուսուցման 1-ին, 2-րդ կիսամյակների փոխհատուցման դիմումները կընդունվեն կիսամյակերի սկզբում:

ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1005-ն որոշման համաձայն , համալսարանի լավագույն ուսանողների փաստաթղթերը, անվանական կրթաթոշակների մրցույթի մասնակցության համար:

Կատարման վերլուծություն
Իրականացված աշատանքներն ամրագրվել են համապատասխան ՊԴԱ ծանրաբեռնվածություններում, որոնք հստակեցվել են՝ համաձայն համապատասխան կանոնակարգի և չափակարգի: Բացառվել են թերբեռնումները և դասապրոցեսի արդյունավետությունից ելնելով՝համապատասանեցվել են խմբերի քանակը, ուսանողների բաշխվածությունները հետևյալ հիմնական գործընթացների շրջանակներում՝ տեսական դասընթացներ, անհատական պարապմունքներ, պրակտիկա և հետազոտական աշխատանք: Առանձնակի ուշադրություն է հատկացվել ավարտական աշխատանքների ղեկավարմամբ պայմանավորված ծանրաբեռնածություններին և կամընտրական դասընթացներին՝ ելնելով ամբիոնների մասնագիտական ներուժից և ակադեմիական կատարողականությունից: Կատարումն իրականացվել է համաձայն հետևյալ ուղենիշների. - ՊԴԱ ծանրաբեռնվածության բաշխման թափանցիկության ապահովում, -դասընթացների (հատկապես՝ կամընտրական) ընտրության և ուսանողների համապատասխան վերաբաշխման սկզբունքների հստակ կիրառում, -էլեկտրոնային հարթակների (առցանց ուսուցման Google հարթակ, գնահատման տեղեկագրեր, ուսումնական ծրագրեր և ժամանակացույց, ՊԴԱ աշխատանքային ծանրաբեռնվածության էլեկտրոնային շտեմարաններ) համապատասան կապակցվածության ապահովում, -զուգահեռ գործընթացների վերահսկողության և կառավարման արդյունավետության և թափանցիկության ապահովում, -փաստաթղթաշրջանառության նվազեցում՝ էլեկտրոնային հարթակների զարգացման հաշվին:
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Բաժնի կողմից իրականացվող գործառույթների որակական վերահսկողությունը բացահայտել է հաշվետվողականության, համաժամանակյա առցանց վերահսկման և արձագանքման որակի բարձրացում: Առավել արդյունավետ են դարձել կամընտրական առարկայախմբի որոշմամբ, պրակտիկայի և հետազոտական աշխատանքների ղեկավարմամբ պայմանավորված քննարկումները: Նվազել են կարգապահական խախտումները՝ բացառելով խմբերի ինքնակամ վերաբաշխումները, դասընթացների կամայական ընտրությունը և այլն: Բաժնի կողմից իրականացվելիք աշխատանքների շարքում բաժնի վերահսկողության ներքո առկա էլեկտրոնային հարթակների առնչակցության ապահովումն է և հարթակների հնարավորինս համահունչ կիրարկումը՝ միավորելով ուսումնական ծրագրերի, դրանցով սահմանված ամբիոնների աշխատանքային ծավալների և ՊԴԱ ծանրաբեռնվածությունների, գնահատման հարթակների, ինչպես նաև առցանց ուսուցման Google հարթակի հնարավորինս մեծ թվով բաղադրիչներ և ենթաբաժիններ:

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
1	Կազմակերպել և իրականացնել Համալսարանի տեղեկատվական և քարոզչական քաղաքականությունը՝ հնարավոր տարբեր միջոցներով.
2	Իրազեկել հասարակայնությանը Համալսարանի գործունեության մասին՝ «Մանկավարժական համալսարան» թերթի, Համալսարանի՝ www.aspu.am պաշտոնական կայքէջի, ռադիո«Ֆամա»-ի՝ www.radiofama.am միջոցով, ինչպես նաև այլ ռադիո-հեռուստատեսային հեռարձակումների տեսքով՝ մասնավորապես ԱՏՎ (Կրկնությունները՝ Ֆրինյուզով) հեռուստաընկերությամբ հեռարձակվող, ապա մեր ունեցած բոլոր էլեկտրոնային հարթակներում, ռեսուրսներում տեղադրվող, նաև dasaran.am կայքում մեր ձեռք բերած անվանական էջում Հաջողության բանաձև հաղորդաշարի: Ի դեպ, հաղորդաշարը հեռարձակվում է նաև մարզային հեռուստաընկերություններով՝ ապահովելով առավելագույն լսարան հաղորդման համար:

3	Ապահովել տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը, պլանավորել, իրականացնել և փոխանակել տեղեկատվություն համատեղ աշխատանքային միջոցառումների մասով.
4	Պատրաստել զանգվածային լրատվամիջոցներում տեղ գտած հաղորդագրությունների, հրապարակումների տեսության, այլ տեղեկանքների, վերլուծական նյութեր՝ռեկտորի կամ պրոռեկտորի հանձնարարությամբ.
5	մասնակցել ռեկտորի ղեկավարությամբ անցկացվող միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
Խնդիր 6.1-1	Ապահովել պաշտոնական կայքէջում համալսարանի գործունեության մասին օպերատիվ լրատվություն և սեփական գովազդային նյութերի հրապարակում	հունվար-դեկտեմբեր	Համալսարանի Լրատվության վարչությունը պարբերաբար՝ ամենօրյա ռեժիմով ապահովում է եռալեզու տեղեկատվություն համալսարանի կայքէջի միջոցով, որտեղ բացի տպագիր նյութերից տեղ են գտնում նաև տեսանյութեր՝ համալսարանում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին: Տեղադրվում են նաև գովազդային և տեղեկատվական տեսահոլովակներ, որոնք պատմում են ոչ միայն համալսարանում կատարվող իրադարձությունների, դասավանդվող մասնագիտությունների մասին, այլև ուղղակի ուղեցույցներ ապագա դիմորդների համար:
Խնդիր 6.1-2	Ապահովել համալսարանի կայքէջի պարբերական զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները:	հունվար-դեկտեմբեր	Համալսարանի կայքէջի բովանդակային և ծրագրային հարուստ և արդիական բաղադրիչներն, որոնք հաշվետու տարում ևս թարմացվել են, այսօր բավարարում են անհրաժեշտ չափանիշներին. կայքի տեխնիկական հագեցվածությունը բավարարում է իր առաքելությունն իրականացնելու ըստ պատշաճի:
Խնդիր 6.1-3	Կատարելագործել համալսարանի Ռադիո Ֆաման, բազմազանեցնել	հունվար-	Ռադիո Ֆաման՝ radiofama.am, իր 9-ամյա գործունեության ընթացքում

	համալսարանի ներքին կյանքին վերաբերող տեղեկատվությունը, ստեղծել համալսարանը ներկայացնող հաղորդաշարեր՝ ուսանողների ջանքերով, բարձրացնել դրանց տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը: Թարմացնել radiofama.am կայքէջը	դեկտեմբեր	կատարելագործվել և պարբերաբար թարմացվել է, մասնավորապես նոր հաղորդաշարեր են ստեղծել ինչպես ուսանողները, այնպես էլ մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-վարժարանի սաները: Տեխնիկապես և բովանդակային առումով ապահովել ենք համալսարանը մեր արտաքին շահառուներին ներկայացնելու գործառույթը՝ Համալսարանը բազմակողմանիորեն և մանրամասն ներկայացնող հաղորդաշարերի առկայությամբ, յուրաքանչյուր ֆակուլտետի մասին պատմող ակնարկով, տեղի ունեցող իրադարձություններով և այլն:
Խնդիր 6.1-4	Ապահովել հանրային կապերի ոլորտում համալսարանի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու նպատակով:	հունվար-դեկտեմբեր	Ամենօրյա մշտադիտարկում ենք իրականացնում ոչ միայն մամուլի հրապարակումների, այլև սոցիալական կայքերում համալսարանի, ինչպես նաև անմիջապես Լրատվության վարչության աշխատանքի կապակցությամբ արվող մեկնաբանությունների միջոցով: Մանկավարժական համալսարանի կայքէջի, յութուբյան էջի, Ռադիո Ֆամայի էջի, Հաջողության բանաձև հաղորդաշարի էջի բաժանորդները նախորդ տարվա հեմամետությամբ բազմապատկվել են: Իսկ սա վկայում է աշխատանքի արդյունավետության մասին:
Խնդիր 6.1-5	Համակարգել և նպատակաուղղել համալսարանի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային, լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները:	հունվար-դեկտեմբեր	Գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային գրեթե բոլոր միջոցները ներդրվել են Համալսարանի վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացան համար: Դրա վկայությունն են տարբեր քարոզչական միջոցներով մանկավարժական համալսարանի մասին

			տեղեկացած ու ՀՊՄՀ դիմած, ընդունված ուսանողները:
Խնդիր 6.1-7	Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով	հունվար-դեկտեմբեր	Հանրային կարծիքի ամենաօրյա ուսումնասիրություն կարելի է համարել մեր կայքի ընթերցողների, հաղորդումները դիտողների, թերթի բաժանորդների, ռադիոյի ունկնդիրների արձագանքները, որոնք բավականին բազմաբնույթ են՝ սկսած dasaran.am կայքի դպրոցահասակ երեխաների արձագանքներից, վերջացրած մինչև իսկ հայտնի բրենդների էջերում մեր հաղորդումների տեղադրման փաստով: Այս միջոցով նաև որոշակիորեն իրականացնում ենք կարիքների գնահատում, ինչը խիստ կարևոր է ոչ միայն Լրատվության և հանրության հետ կապերի վարչության գործունեության արդյունավետության բարձրացման, այլև ԲՈՒՀ-ի գործունեության գնահատման, անհրաժեշտության դեպքում՝ սրբագրումների և խմբագրումների համար:
Խնդիր 6.1-8	Ներգրավվել հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային, միջազգային և համազգային ծրագրերում:	հունվար-դեկտեմբեր	Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը իր հնարավորությունների սահմանում ներգրավված է հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային, միջազգային և համազգային ծրագրերում: Իրականացվող բոլոր ծրագրերին մասնակցում է, լուսաբանում, անհրաժեշտության դեպքում՝օգնում կազմակերպչական աշխատանքներին և հաշվետվություններ ներկայացնելիս: Ցավոք, դեռևս անմիջական մասնակցություն վարչությունը չի կարողանում ապահովել տեղում՝ արտերկրում,միջազգային ծրագրերի լուսաբանման, նկարահանումների

			իմաստով, կապված ֆինանսական խնդիրների հետ:
Խնդիր 6.1-9	Համալսարանի պաշտոնական խորհրդանիշների կիրառման արարողակարգի մշակում	հունվար-դեկտեմբեր	Համալսարանի պաշտոնական խորհրդանիշների կիրառման արարողակարգ, որպես այդպիսին, մշակված չէ, բայց կարգ գործում է, մասնավորապես ԲՈՒՀ-ի օրիներգը՝ ՀՀ օրներգից անմիջապես հետո հնչում է ամեն առավոտ՝ 9.20, radiofama.am կայքում, որը հեռարձակվում է ամբողջ համալսարանի տարածքում և օնլայն հարթականում: Այսինքն, յուրաքանչյուր ուսանող ակամա ականջալուր է լինում իր երկրի և հարազատ ուսումնական հաստատության օրիներգերին: Մեր տարբերանշանը՝ լոգոտիպը, տեղադրվում է բոլոր պաշտոնական գրությունների, փաստաթղթերի վրա: Իսկ դրոշը տեղադրված է համալսարանում ամենաերևացող տեղում: Բոլոր պաշտոնական միջոցառումներին դրոշի առկայությունը պարտադիր է:
Խնդիր 6.1-10	Նպաստել 'Մանկավարժական համալսարան' պաշտոնաթերթի բովանդակային զարգացմանը, Մուհ-ի PR -ին նպաստելուն, ինչպես նաև լրագրության բաժնի ուսանողների համար որպես հարթակ կիրառմանը:	հունվար-դեկտեմբեր	Ամիսը երկու անգամ հրատարակվող 'Մանկավարժական համալսարան' երկշաբաթաթերթն իր էջերում անդրադառնում է ոչ միայն պաշտոնական լրահոսին, բուհում տեղի ունեցող իրադարձություններին, այլև տարածք է տրամադրում ստեղծագործող ուսանողներին՝ իրենց նյութերը տպագրելու համար: Թերթի էլեկտրոնային տարբերակը տեղադրվում է ինչպես պաշտոնական էջում, այնպես էլ սոցիալական էջերում: Նախկինում թերթը տպագրվում էր, դրանք տարածվում էին բոլոր պետական և հասարակական շահագրգիռ կառույցներին, մայրաքաղաքի բոլոր դպրոցներին՝ թվով 450 հասցեներով: Այսօր սակայն ֆինանսական խնդիրների պատճառով քննարկվում է թերթի թղթային տարբերակից հրաժարվելու

			խնդիրը, ինչը, անշուշտ կխնայի որոշակի միջոցներ, սակայն կհանգեցնի տեղեկատվության տարածման սահմանափակման, հատկապես միջին և ավագ սերնդի շրջանում:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
ԽՆԴԻՐ 5.2.2	հունվար-դեկտեմբեր	Լրատվության վարչությունը պետք է նպաստեր համալսարանի տեղեկատվական համակարգերի զարգացմանը, ընդլայներ կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում, ապահովեր համալսարանի գործունեության տարբեր ձևերի տեղեկատվական բազաների փոխազդեցությունն ու կապակցումը:	Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը իր ունեցած տեղեկատվական ռեսուրսներով նպաստում է առաջադրված խնդրի պատշաճ լուծմանը, մասնավորապես իր պաշտոնական բոլոր լրատվամիջոցներով, ներառյալ դրանց ֆեյսբուքյան էջերը, անհատական նամակագրությամբ, նաև հեռուստահաղորդման միջոցով տեղեկացնում է լայն հանրությանը համալսարանում ներդրվող նոր տեխնոլոգիաների, տեղեկատվական նոր մեթոդների մասին: Դրա արդյունքում համալսարանին տեղեկատվական միջոցներով կապված բաժանորդների, հեռուստադիտողների, ընթերցողների, յութուբի հետևողների թիվը կտրուկ աճել է՝ պահպանելով հանրապետության բուհական համակարգի բացարձակ առաջատարի դերը:

ՌԾ ԽՆԴԻՐ 6.3. 2	հունվար-դեկտեմբեր	Ստեղծել հանրօգուտ նոր ծառայություններ՝ օգտագործելով շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացների կազմակերպման փորձը և խորհրդատվական տեղեկատվական ներուժը՝ դրանք հասանելի դարձնելու լայն հանրությանը:	Այս իմաստով հաշվետու տարում Լրատվության վարչությունը նկարահանել և տեղադրել է մի շարք դասախոսություններ, բաց դասեր, վարպետության դասեր՝ լավագույն մասնագետների մասնակցությամբ: Դրանք բավականին դիտումներ են ապահովել և նպաստել դիմորդների շրջանում գիտելիքների ձեռքբերմանը, որի շնորհիվ ունեցել ենք ՀՊՄՀ դիմած և ընդունված ուսանողներ:
ԽՆԴԻՐ 7.3.2	հունվար-դեկտեմբեր	Համալսարանի կայքում ներկայացնել ՀՊՄՀ -ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, կրթական հաջողությունները , ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր :	aspu.am պաշտոնական կայքը եռալեզու է: Այսինքն, ամբողջ տեղեկատվությանը օտարերկրյա դիմորդը, ուսանողը ամեն օր կարող է ծանոթանալ անգլերեն և ռուսերեն լեզուներով: Բացի այդ, պարբերաբար ուսումնական ծրագրերը, որոնցով դասավանդվում են օտարերկրյա ուսանողները, թարգմանվում են և տեղ կգտում կայքում: Իսկ ուսանողների ուսումնառության պայմանների, նրանց կրթական հաջողությունների մասին պարբերաբար ունենում ենք հրապարակումներ, նաև հեռուստահաղորդումներ, որոնք հետո տեղադրվում են մեր յութուբյան էջում, հետևաբար և կայքէջում: Որոշ հեռուստահաղորդումներ թարգմանվում են անգլերեն և ռուսերեն:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
ՀՊՄՀ Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը այս հաշվետու տարում ևս պատշաճ կատարել է իր առջև դրված, գիտխորհրդով ու հոգաբարձուների խորհրդով հաստատված

կանոնադրական պարտականությունները: Այսօր Մանկավարժական համալսարանը միակն է հանրապետության համալսարաններում, որն ունի 24 ժամ գործող օն-լայն ռադիո, ինչը տեղեկատվական անփոխարինելի պորտալ է ոչ միայն մանկավարժականի ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, այլև արտերկրից մեզ լսող բազմաթիվ ունկնդիրների համար:

2021 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը Ռադիո Ֆաման լսել են 5 108 497 րոպե՝ 85 141 ժամ: Միացումների քանակը՝ 227 274, որից 114 264 հոգի ունիկալ լսողների քանակն է: Միջինում մեզ լսում են 25.6 րոպե: Ռադիո Ֆաման լսել են 208 երկրից, որոնց թոփ հնգյակն է ԱՄՆ 59 957, ՌԴ- 51 369, Բրազիլիա 43 844, Հայաստան 40 927, Ֆրանսիա 16 738: Ռադիո Ֆամայի ֆեյբուքյան էջը ունի 1552 հետևորդ:

Ռադիոյով հաղորդումներ են պատրաստում ոչ միայն ուսանողները, այլև Մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-վարժարանի սաները, որոնք հենց այստեղ սիրահարվում են մասնագիտությանն ու հետագայում ընտրում հենց լրագրողի մասնագիտությունը: Ռադիոն ունի նաև իր կայքը, որը ևս ամեն օր թարմացվում է ուսանողների հետաքրքրող տեղեկատվությամբ:

Մյուս՝ շատ կարևոր տեղեկատվական գործիքը Մանկավարժական համալսարանի յութուբյան էջն է, որը դեկտեմբերի 1-ի դրությամբ ունի 5788 բաժանորդ, իսկ դիտումների թվով դեկտեմբերի 1-ի դրությամբ անցել ենք մեկ միլիոնի սահմանագիծը և ապահովել 1 մլն 26 հազար 602 դիտում: Մանկավարժական համալսարանը բուհական համակարգում այս իմաստով բացարձակ առաջատար է: Համեմատության համար նկատենք, որ ԵՊՀ-ն 3790 բաժանորդ ունի, Ամերիկյան համալսարանը՝ 1990: Երրորդ տեղում հայ-ռուսական համալսարանն է՝ 1790 բաժանորդով: Տնտեսագիտական համալսարանի էջն ունի 438 բաժանորդ, իսկ Բրյուսովի անվան պետական համալսարանը՝ 238 յութուբյան բաժանորդ:

Վարչության կազմում գործող Պաշտոնական կայքի ապահովման բաժինը ամենօրյա ռեժիմում ապահովում է եռալեզու տեղեկատվություն համալսարանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: aspu.am կայքի օրական դիտումների թիվը տատանվում է 1400-1600, շաբաթական՝ շուրջ 9000-10000, իսկ ամսական կտրվածքով՝ 39.000-41.000, տարեկան՝ շուրջ 350. 000: Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքի ֆեյսբուքյան էջին դեկտեմբերի 1-ի դրությամբ միացած է 25 959 մարդ: Օրական բազմաթիվ նամակներ ենք ստանում, որոնց օպերատիվ և ամենայն մանրամասնությամբ պատասխանում ենք՝ ապահովելով հետադարձ կապի անխափան մեխանիզմ:

Մանկավարժական համալսարանը Հայաստանում միակն է, որի հեռուստաարտադրանքը հեռարձակվում է հանրապետական սփռում ապահովող և մուլտիպլեքսում ներառված 2 հեռուստաընկերություններով՝ ԱՏՎ-ով, Ֆրի նյուզով: Արդեն յոթերորդ տարին Լրատվության վարչությունում պատարստվում է Հաջողության բանաձև հեռուստահաղորդումը, որը բավականաչափ բարձր վարկանիշ ունի: Մայր հաղորդումը հեռարձակվում է երկու անգամ ԱՏՎ-ով, ապա Ֆրի նյուզ հ/ը ցուցադրում է հաղորդման կրկնությունները: Ի դեպ, նրանք օգտվում են նաև Մանկավարժական համալսարանի յութուբյան էջի արխիվից և ցուցադրում են տարիների վաղեմության հաղորդումները ևս: “Հաջողության բանաձև”ի Ֆեյսբուքյան էջին դեկտեմբերի 1-ի դրությամբ միացած է 9100 մարդ: Հաղորդումն ունի իր սեփական տարածքը՝ էջը, dasaran.am –ում: Այստեղ մեզ ամեն օր հետևում է 43 598 մարդ, նրանք մեր բաժանորդներն են, հետևաբար նաև ապագա դիմորդները, քանի որ այս հարթակը ապահովում է կապը մեր թիրախային լսարանի հետ՝ աշակերտների, որոնք վաղը դիմորդ են դառնալու և ուսանող: Հաղորդումը հեռարձակվում է նաև մարզային հեռուստաալիքներով՝ Արմավիրի մարզում, Վանաձորում, Հրազդանում, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում: Հաղորդումները առանձին երիզներով ստացել է ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության մասնագիտական կողմնորոշման վարչությունը, որն էլ իր հերթին բազմացրել և հանրապետության դպրոցնում տարածում է Հաջողության բանաձևի թողարկումները՝ իբրև մասնագիտական կողմնորոշման գործուն և օգտակար գործիք:

Թերթը ևս, իր առաքելության և գործառույթների շրջանակում, պատշաճ կատարում է իր գործը: Այս տարի դեռևս թողարկվում է թերթի տպագիր տարբերակը, որին զուգահեռ կայքում տեղադրվում է էլեկտրոնային թերթը: Այս տարի թերթը թողարկեց հոբելյանական, կավճապատ համար՝ նվիրված բուհի 100-ամյակին:

Կատարման վերլուծություն

Տեղեկատվական բոլոր միջոցներով Մանկավարժական համալսարանի Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունը իր շահառուներին ապահովում է անհրաժեշտ տեղեկատվությամբ և նյութերով: Օպերատիվ կերպով արձագանքում է մամուլում տեղ գտած հրապարակումներին, անհրաժեշտության դեպքում պատրաստում պարզաբանող նյութեր, որոնք ուղարկվում են ինչպես հասցեատիրոջը, այնպես էլ տեղադրվում են մեր ֆեյսբուքյան պաշտոնական էջում, կազմակերպում է ասուլիսներ, տարբեր համապետական սփռման հեռուստաընկերություններով և ռադիոներով, թերթերով, իր դասախոսական կազմի միջոցով հասցնում ասելիքը լսարանին: Ժամանակին և պատշաճ իրականացնում է իր առջև դրված բոլոր խնդիրները, տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում գիտական խորհրդի և հոգաբարձուների խորհրդի նիստում: Իր ունեցած բոլոր միջոցներով, անձնական կապերով նպաստում Մանկավարժական համալսարանի վարկի բարձրացմանն ու հանրային ընկալման դրական փոփոխություններին: Ամեն տարի՝ նախորդի համեմատ շատ ավելի մեծ ձեռքբերումներ է գրանցում ինչպես տեղեկատվության ոլորտում, այնպես էլ՝ լայն հանրության շրջանակներում ԲՈՒՀ-ի իմիջի բարձրացման առումով:

Անցնող տարին շահեկան էր այն իմաստով, որ բուհի 100-ամյակին նվիրված բազմաթիվ միջոցառումներ իրականացվեցին, իսկ գալա համերգը, որն անցկացվեց Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ցուցադրվեց երկու մեզ հետ համագործակցող հեռուստաընկերությունների եթերներով՝ ամբողջությամբ՝ 2 ժամ տևողությամբ:

Ընդհանրապես, հաշվետու տարին դրական էր նախորդ տարվա ֆոնին, երբ բուհի ղեկավար կազմի փոփոխություն էր տեղի ունեցել, և մամուլը պարբերաբար անդրադառնում էր համալսարանին: Այս տարի մամուլի հրապարակումներն աչքի են ընկել համալսարանի մասին գերակշիռ մասով դրական հիշատակումներով: Սոցիալական հարթակներում համալսարանական թեման ակտիվացավ բուհերի միավորման մասին խոսակցությունների և շահարումների առումով, սակայն գրագետ և ճիշտ քաղաքականության շնորհիվ Մանկավարժական համալսարանը գտնվեց իր բարձունքում, խուսափեց բացահայտ և հրապարակային բանավեճերից, չտրվեց պրովոկացիոն հրապարակումների՝ դրանով իսկ շահելով շահառուների, կամ խնդրով հետաքրքրված զանգվածի համակրանքը:

Ինչպես ամեն տարի, այս տարի ավելի մեծ հաճախականությամբ հանրապետության դպրոցներից առանձին դասարաններ են հաճախել համալսարան, որոնք ի թիվս թանգարանի, գրադարանի, և այլ ստորաբաժանումների, հյուրընկալվել են ռադիոյում: Ձայնագրվել, փորձել իրենց ուժերը այս հարթակում, ինչը հանրության հետ կապերի և քարոզչության հիանալի մեթոդ է:

Ինչ վերաբերում է տեխնիկական հագեցվածությանը, ապա այն այսօր բավարարում է դրված խնդիրների լուծման պահանջներին, իսկ նոր ուսումնական տարում վարչության տեխնիկան համալրվեց

ժամանակակից նոր սարքերով, որոնք կնպաստեն աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Այսօր վստահաբար կարող ենք արձանագրել, որ համալսարանն ունի ամբողջական մեդիա հոլդինգ՝ իր կայքով, թերթով, ռադիոյով և հեռուստաարտադրությամբ: Նախատեսված էր իրականացնել ևս մեկ ծրագիր՝ հիմնել ուսումնական հեռուստատեսություն, որը կլինի բացառիկ երևույթ հայ իրականության մեջ: Դրա համար անհրաժեշտ կադրային ռեսուրսներն ունենք, տեխնիկական հնարավարությունները սկզբի համար բավարար են, իսկ ֆինանսական միջոցների ներգրավման շուրջ անցնող տարում հնարավորություններն մնացին անփոփոխ, ինչն առայժմ թույլ չի տալիս գաղափարը կյանքի կոչել: Առաջիկա տարում՝ 2023-ին, կփորձենք ներգրավվել ֆինանսական միջոցներ և ստեղծել նաև այդ գործիքը, որը ուսանողներին կապահովի ինչպես բարձրորակ տեղեկատվական, ուսուցողական, նեղ մասնագիտական տեսանյութերով, այնպես էլ թեթև սկետչերով, ուրախ ուսանողական պատմություններով և այլ հեռուստատեսային արտադրանքով:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. ՀՊՄՀ-ում անխափան գործում է հաշվետվողականության համակարգ, որի շնորհիվ ՀՊՄՀ-ի գործունեության մասին հաշվետվությունները պատշաճ կերպով ներկայացվում են շահակիցներին և հանրությանը՝ կայքի, թերթի, տեսաֆիլմերի, առանձին հանդիպումների միջոցով:	1. Լրատվության և հանրության հետ կապերի վարչությանը անցնող տարում չհաջողվեց ներդնել հարցումների միջոցով հասարակայնության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը պարզող մեխանիզմ: Պատճառները տարբեր էին, երբեմն կախված ոչ մեզանից:
2. Հաշվետվողականության ինքնատիպ գործիք, լուծում կարելի է համարել «Հաջողության բանաձև» ամենշաբաթյա հեռուստահաղորդումը, որն արդեն 7 տարի անդադար և անխափան հեռարձակվում է հանրապետական սփռման մի քանի հեռուստաալիքներով: Նման երևույթ առկա չէ ոչ միայն բուհական, այլև շատ դեպքերում պետական գերատեսչական հաստատությունների համակարգում, օրինակ, նման հաղորդում չունի ԿԳՄՍՆ-ն, մյուս նախարարությունները, բացառությամբ՝ ՊՆ-ի:	2.Թեև ԲՈՒՀ-ն ունի հասարակայնության և մամուլի հետ աշխատող կայուն մեխանիզմ, բայց այն ըստ էության տեղական նշանակության է: Չնայած մեր բոլոր ձգտումներին, դեռևս չի հաջողվում լայնորեն և ըստ պատշաճի, այսինքն, տեղում լուսաբանել մեր ուսանողների արտասահմանյան այցերն, ամառային դպրոցներն ու համալսարանի ղեկավարության արտերկրյա հանդիպումները, շփումները, վերապատրաստումները և մեր դասախոսների վարպետության դասերը:
3. Անփոխարինելի քարոզչական հարթակ է 24 ժամ գործող ռադիո Ֆաման, որի շնորհիվ ցանկացած պահի մեր ուսանողը և ունկնդիրը կարող է տեղեկանալ ցանկացած հրատապ լուրի: Սրանով բուհը կարող է իրականացնել ցանկացած	3.Ֆինանսական հնարավորությունների սղության պատճառով հնարավոր չի լինում երբեմն իրականացնել պլաններ, որոնք միտված են էլ ավելի բարելավելու հասարակայնության հետ հետադարձ կապի մեխանիզմները:

գործառույթ՝ ցանկացած իրավիճակում՝ ընդհուպ արտակարգ իրավիճակների ժամանակ:	
4.ՀՊՄՀ-ի ներքին գործընթացների վերաբերյալ հասարակության հետաքրքրության բարձր մակարդակ ունենք այլ երկրներում, որը հնարավոր է դառնում պաշտոնական կայքի, ռադիոյի, հեռուստահաղորդումների և Facebook սոցիալական ցանցում դրանց պաշտոնական էջերի միջոցով:	
Հնարավորություններ	Վտանգներ
1. Նախատեսում ենք շարունակել ներքին շահակիցների շրջանում սկսած հարցումների պրակտիկան, ինչպես նաև, համագործակցելով ՀՊՄՀ-ի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի և Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ՝ ընդլայնել արտաքին շահակիցների շրջանում կատարվող հարցումները:	1. Հասարակության անտարբերությունը բուհում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ:
2. Այս տարի կկրկնապատկենք ջանքերը վերջապես բացելու ուսումնական հեռուստատեսություն, որը ուսանողների համար կլինի բացառիկ աղբյուր՝ նյութեր հայթայթելու, իրենց տեսնելու, այն հետաքրքիր կլինի բոլոր տարիքային խմբերի համար, բայց նաև կնպաստի հաշվետվողականությանը և թափանցիկությանը:	2. Որոշ համայնքներում համացանցի անհասանելիությունը:
3. Բավարար ֆինանսական ապահովման պարագայում վարչության ներուժը և տեխնիկական հագեցվածությունը թույլ է տալիս ևս մեկ հեռուստանախագիծ իրականացնել, որը եթեր կհեռարձակվի կրկին հանրապետական սփռման հեռուստաընկերություններից մեկով:	3. Ֆինանսական մուտքերի նվազումը՝ կապված հանրապետությունում դիմորդների ընդհանուր թվի նվազման հետ:
4. ՀՊՄՀ-ի ներկայիս պաշտոնական կայքը ունի ընդլայնման և խորացման հնարավորություններ, միտումներ: Մասնավորապես, նախատեսում ենք Ինֆորմատիկայի ամբիոնի մագիստրոսների աջակցությամբ ստեղծել նոր կայք՝ ապագա	4. Հասարակության լայն շերտերի մեդիագրագիտության ցածր մակարդակը, որը կարող է հանգեցնել միտումնավոր տարածվող ապատեղեկատվության պատճառով բուհի հեղինակության և բարի համբավի վնասմանը:

լրագրողների համար, հեռուստալրագրության բաժնի ուսանողների, որոնք իրենց նյութերը կտեղադրեն և կհետևեն կայքի գործունեությանը: Այն կցված կլինի մեր հիմնական՝ պաշտոնական կայքին, կտարածվի սոցիալական էջերով, որի միջոցով կավելանա հետաքրքրությունը և կայքի, և համալսարանի նկատմամբ, քանի որ լրագրողների գործունեությունը բազմապրոֆիլ է, և կարող է ներգրավել տարբեր ոլորտների ներկայացուցիչների, շարժել նրանց հետաքրքրությունը:	Չնայած կանխարգելմանն ուղղված բոլոր միջոցառումները պատշաճ կատարվում են:

Պաշտոնական կայքի ապահովման բաժին

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
	ՀՊՄՀ-ի մասին ամբողջական տեղեկատվության ապահովում, անհրաժեշտ թարմացումների և լրացումների կատարում, այդ թվում՝ առաքելություն, ռազմավարական ծրագիր, տարեկան հաշվետվություն, բյուջե, իրավական ակտեր և փաստաթղթեր):
	Բուհի բոլոր ստորաբաժանումների, ֆակուլտետների, ամբիոնների, այդ թվում՝ համահամալսարանական, համագործակցություն.տարվա կտրվածքով դրանց գործունեության, ինչպես նաև աշխատակազմի վերաբերյալ պատշաճ տեղեկատվության ապահովում:
	Բուհի կրթական գործունեության թափանցիկության ապահովում՝ կրթական, դրամաշնորհային ծրագրերի, կրթաթոշակների վերաբերյալ տեղեկատվության տարածում: Դիմորդների ուղեցույցերի, քննությունների ժամանակացույցերի, վարձավճարների, հարցաշարերի, գրաֆիկների, դասացուցակների, ուսումնական ծրագրերի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի տեղադրում:
	Բուհի գիտական գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տարածում. գիտական լաբորատորիաների, հանդեսների, պաշտպանությունների, մասնագիտական խորհուրդների վերաբերյալ տեղեկատվության տեղադրում և տարածում:
	Դիմորդների և համալսարանի սովորողների համար գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ապահովում (նախապատրաստական դասընթացներ, ընդունելության կարգ, մասնագիտությունների ցանկ, դիմումների շարժն՝ ըստ մասնագիտությունների, ինչպես նաև ընդունելության մրցույթի արդյունքների, մրցույթը հաղթահարած դիմորդների ցանկերի ամբողջական տեղեկատվության հասանելիություն):
	Բուհական, միջբուհական ձեռնարկների օպերատիվ լուսաբանում՝ ամենատարբեր ձևաչափերով. տեղեկատվության տարածում, համալսարանում և դրանից դուրս անցկացվող իրադարձությունների, այդ

	թվում՝ հանրապետական, տարածաշրջանային և միջազգային գիտաժողովներ (նորություններ՝ եռալեզու, հայտարարություններ, անոնսներ, տեսասրահ, նկարադարան):
	Անհրաժեշտ փոփոխությունների ապահովում «Մեդիա» բաժնում, այդ թվում՝ բուհի «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի էլեկտրոնային տարբերակի տեղադրում՝ ամսական 2 անգամ, թարմացումներ՝ տեսադարանում և պատկերասրահում: Էլեկտրոնային փոստի և սոց.ցանցերի միջոցով բուհի վերաբերյալ այցելուներին հետաքրքրող հարցերի ընդգրկուն տեղեկատվության հասանելիություն և հետադարձ կապի ապահովում:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	Ներդնել միջազգայնացման խթանման և բուհի տեսանելիության բարձրացման մարքեթինգային ռազմավարություն	հունվար-դեկտեմբեր	Բուհի պաշտոնական կայքում ողջ տարվա ընթացքում տեղադրվել են հայտարարություններ, նորություններ՝ օտարերկյա բուհերում ուսուցման, փոխանակման, դրամաշնորհային և կրթական ծրագրերի մասնակցության հնարավորությունների մասին: Լուսաբանվել են ՀՊՄՀ-ի գործընկեր բուհերի ներկայացուցիչների փոխադարձ այցերը, օտարերկյա բուհերի հետ համագործակցությունը, հետագա գործընկերության հնարավորությունները, այդ թվում՝ գիտակրթական ամենատարբեր ծրագրերի շրջանակներում իրականացված փորձի փոխանակում, վերապատրաստումներ, հուշագրերի ստորագրում, սեմինար-քննարկումներ և այլն: Ներկայացվել է նաև Մանկավարժականում սովորող ուսանողների առօրյան, կրթական ձեռքբերումներն ու այլ մանրամասներ: Համագործակցելով բուհի Միջազգային բաժնի հետ՝ պաշտոնական կայքում փոփոխության է ենթարկվել վերոնշյալ ստորաբաժանման էջը՝ դարձնելով առավել բովանդակալից և տեղեկատվության առումով հեշտ հասանելի:
	Համագործակցել համալսարանի համապատասխան ենթակառույցների հետ դիմորդների մասնագիտական կողմնորոշման, համալսարանի կրթական	հունվար-դեկտեմբեր	Բուհի պաշտոնական կայքն ամենօրյա ռեժիմով, շարունակում է օպերատիվորեն ապահովել եռալեզու տեղեկատվության տարածում: Կայքը, ստեղծման օրվանից, շարունակում է հանդիսանալ տեղեկատվության համախմբման միջոց՝ բուհի հետ առնչություն ունեցող այլ կառույցների համար: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, լուսաբանվել, «Նորություններ» բաժնում տեղադրվել են

	ծրագերի ներկայացման գործընթացում		համալսարանում և դրանից դուրս անցկացվող իրադարձությունները: Այդ թվում՝ ֆակուլտետների, ամբիոնների(համահամալսարանական)ձեռնարկներն ու նախաձեռնությունները, որոնք նաև միտված էին դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը: կողմնորոշման հարցերին: Կայքն անմասն չի մնացել նաև համալսարանի կրթական ծրագերի գործընթացից՝ համապատասխան բաժիններում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ, տեղադրվել դրանց վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ տարբեր ձևաչափերով: Տեղադրվել են նաև տեղեկատվական տեսահոլովակներ, որոնք պատմում են ինչպես համալսարանում կատարվող իրադարձությունների, դասավանդվող մասնագիտությունների մասին, այնպես էլ հանդիսանում են ուղեցույց՝ ապագա դիմորդների համար:
	Համալրել և թարմացնել տարբեր ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվությունը ՀՊՄՀ կայքում, հրապարակել բոլոր հայտարարությունները, նորությունները, հաշվետվությունները և այլ տեղեկատվություն՝ բարձրացնելով գործունեության թափանցիկությունը: Ներդնել հետադարձ կապի արդյունավետության գնահատման և վերլուծության հստակ մեխանիզմ	հունվար-դեկտեմբեր	Հաշվետու տարվա ընթացքում կայքը համագործակցել է բուհի բոլոր ստորաբաժանումների, ֆակուլտետների, ամբիոնների, այդ թվում՝ համահամալսարանական, հետ: Կայքում ընթացիկ տարում ևս կատարվել են մի շարք փոփոխություններ, լրացումներ: Հիմնական էջերում, ըստ անհրաժեշտության, փոփոխության են ենթարկվել ստորաբաժանումները, ֆակուլտետները, ամբիոնները, ստեղծվել են նոր, առանձին այլ էջեր ևս. փոփոխվել է նաև դրանց դիզայնը: Տարվա կտրվածքով ներկայացվել է դրանց գործունեության, աշխատակազմի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն: Այս տարի բուհը նշում էր հիմնադրման 100-ամյա հոբելյանը: «Նորություններ» բաժնում տեղադրվել է ավելի քան 2000 նյութ: Օպերատիվ լուսաբանվել են վերոնշյալ կառույցների նախաձեռնությամբ՝ համալսարանում և դրանից դուրս անցկացվող իրադարձությունները, ձեռնարկները, նախաձեռնությունները, այդ թվում՝ հանրապետական, տարածաշրջանային և միջազգային մասշտաբի: Տեղեկատվությունն առկա է եռալեզու:

			Սեփական նյութերը տարածելու համար՝ կայքում մշտապես թարմացվել է տեսասրահի բաժինը՝ համալրելով նոր տեսանյութերով, լուսանկարներով: Յուրաքանչյուր շաբաթ տեղադրվել է ՀՊՄՀ-ի ԼՀՎ-ի կողմից պատրաստվող «Հաջողության բանաձև» հաղորդումը, ինչպես նաև «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի էլեկտրոնային համարները՝ ամսական երկու անգամ: Գրեթե ամենօրյա ռեժիմով հրապարակվել են տարատեսակ միջոցառումներին վերաբերող հայտարարություններ, տեղադրվել են հաշվետվություններ: Բուհի պաշտոնական կայքում տեղադրվել է նաև համալսարանի վերաբերյալ սեփական արտադրության տեսանյութեր, քարոզչական նյութեր, մամուլի և ԶԼՄ-ի անդրադարձը, գովազդային հոլովակներ և այլն: Պաշտոնական կայքն իր այցելուների հետ հետադարձ կապը տարիներ շարունակ ապահովում է Էլեկտրոնային փոստի և սոց.ցանցերի միջոցով՝ ամենօրյա ռեժիմով այցելուներին տրամադրելով է բուհի վերաբերյալ հետաքրքրող հարցերի ընդգրկուն տեղեկատվություն:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	հունվար-դեկտեմբեր	Օպերատիվ ռեժիմում անհրաժեշտ տեղեկատվության ապահովում:	Հաշվետու տարում լուսաբանվել են տարատեսակ միջոցառումներ,ձեռնարկներ, հանդիպումներ, տեղադրվել սպասվելիք իրադարձությունների անոնսը, հայտարարություններ:
	հունվար-դեկտեմբեր	Իրականացվել է անհրաժեշտ կառուցվածքային փոփոխություններ, ըստ այդմ, թարմացվել են մի շարք ստորաբաժանումների և ենթաբաժինների տեղեկատվությունը:	Այս տարի ևս բուհում կատարվող կառուցվածքային փոփոխությունները համապատասխան փոփոխություններն են գտել տարբեր ստորաբաժանումների՝ կայքերում. կատարվել է առկա տեղեկատվության փոփոխություն և լրամշակում:

	հունվար-դեկտեմբեր	Բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածում, այդ թվում՝ սոցիալական ցանցերի միջոցով:	Facebook սոցիալական հարթակում բուհն ունի պաշտոնական էջ՝ 24 427 հավանում և 25 959 հետևորդ, օրական դիտումների թիվը տատանվում է 1600-1700: Ամեն օր թարմացվում է առկա տեղեկատվությունը. միջոցառումներից բացի, սոցիալական հարթակում տարածվում են նաև մրցույթների հայտարարություններ, ընդունելության, քննությունների անցկացման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն:
	հունվար-դեկտեմբեր	Կրթական գործընթացի թափանցիկություն, հասանելիություն՝ ուսանողների և դիմորդների համար:	Բուհի պաշտոնական կայքը դիմորդների և ուսանողների համար շարունակում է մնալ տեղեկատվության հասանելիության կարևորագույն հարթակ: Հաշվետու տարում ևս բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի առկա և հեռակա բաժիններում ընդունելության քննություններին ընդառաջ տեղադրվել են մասնագիտությունների նորացված ցանկը, տվյալ ուսումնական տարվա ընդունելության կարգը, ամբողջական տեղեկատվություն քննությունների և վարձավճարների վերաբերյալ: Ի դեպ, ամեն օրվա ռեժիմով ներկայացվել է դիմումների շարժ (առկա բակալավրիատ), մագիստրատուրայի ընդունելության արդյունքներ (առկա, հեռակա, ԲՀ), դիմումների շարժ (հեռակա բակալավրիատ), դիմումների շարժ (առկա մագիստրատուրա, հեռակա մագիստրատուրա, շարունակական կրթություն): Կայքը, ըստ անհրաժեշտության, ապահովել է նաև ներբուհական քննությունների առցանց հեռարձակումը, ներբուհական քննությունների գնահատականները, մագիստրատուրայի ընդունելության արդյունքները, առկա բակալավրիատի ուսուցման մրցույթի արդյունքները, թեստերի պատասխաններ (հեռակա), հեռակա ուսուցման քննությունների արդյունքներ, թափուր տեղերի մրցույթի արդյունքներ, հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքներ: Այս ուսումնական տարում ևս՝ յուրաքանչյուր կիսամյակ կայքում տեղադրվել են ֆակուլտետների դասացուցակները, կիսամյակային քննություններին ընդառաջ՝ համապատասխան բաժնում նաև ընթացիկ (միջանկյալ) ստուգման, ամփոփիչ ատեստավորման և որակավորման քննությունների հարցաշարերը, գրաֆիկները:
	հունվար-դեկտեմբեր	Բուհի գիտական կյանքի լուսաբանում	Գիտություն բաժնում տեղադրվել են բուհի գիտական կառույցների կատարած աշխատանքների, աշխատակազմի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Վերանայվել են մի շարք

			ենթաբաժիններ, այդ թվում՝ գիտաժողովներ, գիտական հանդեսները, և այլն: Մանկավարժական համալսարանում այս տարի, բուհի 100-ամյա հոբելյանի առթիվ, անցկացվեցին տարատեսակ միջազգային և հանրապետական մեծածավալ գիտաժողովներ, մեծամասշտաբ հանդիպումներ, հրավիրյալ օտարազգի և տեղացի դասախոսների դասախոսություններ, որոնք լուսաբանվել են օպերատիվ և ողջ ծավալով՝ տեղ գտնելով Գիտական նորություններ բաժնում ևս: Պարբերաբար տեղադրվել են գիտաժողովների վերաբերյալ հայտարարությունները, ծրագրերը, մասնակցության ձևաչափերն ու պահանջները: Այս տարի ևս տեղադրվել են պաշտպանությունների սեղմագրերը:
	հունվար-դեկտեմբեր	Կատարվել են ընթացիկ այլ աշխատանքներ ևս:	Համալսարանի պաշտոնական կայքի ապահովման բաժինը ընթացիկ տարում ապահովել է այցելուների մեծ քանակ: Google Analytics-ի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ տարվա ընթացքում կայքն ունեցել է ավելի քան 350. 000այցելու:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
1.Հաշվետու տարի հոբելյանական էր Մանկավարժական մայր դարբնոցի համար: Կայքի կարևորագույն խնդիրն էր օպերատիվ աշխատանքն ու ամենատարբեր ձեռնարկների մասին տեղեկատվության բազմակողմանի տարածումը: Հաշվի առնելով մի շարք փոփոխություններ՝ թարմացվել է Մանկավարժական համալսարանի մասին տեղեկատվությունը, բաժիններում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ: Պաշտոնական կայքի ապահովման բաժնի համագործակցությունը տարբեր ստորաբաժանումների հետ շարունակվում է: Կայքն այցելուների համար ապահովել է բազմակողմանի տեղեկատվություն՝ յուրաքանչյուրի ռազմավարության, գործունեության, խնդիրների և նպատակների մասին: Անհրաժեշտության դեպքում խմբագրվել, փոփոխությունների է ենթարկվել առկա տեղեկատվությունը: Աշխատանքների ընթացքում հաշվի են առնվել ոչ միայն ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, այլև կայքի այցելուների դիտարկումներն ու առաջարկները, որոնք իրականացվում են կայքի հետադարձ կապի միջոցով: Բուհի կայքում լուսաբանվել են ղեկավար

մարմիններում (Խորհուրդ, Գիտական խորհուրդ) բարձացրած հարցերը, համապատասխան կարգերի մշակումները, որոշումները, քննարկման առաջադրված հարցերը, հաշվետվություններն ու այլն:

2.Կարևորելով ոլորտի ժամանակակից միտումներն ու աշխարհի առաջատար բուհերի լավագույն փորձը՝ հաշվետու տարում ևս կայքը շարունակել է լրամշակվել:

Օպերատիվ աշխատանքի շնորհիվ՝ ամենատարբեր ձևաչափերում լայնորեն տարածվել է ներբուհական և միջբուհական ձեռնարկների մասին տեղեկատվություն:

Պարբերաբար լրացվել, խմբագրվել և անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվել բուհի ֆակուլտետների, ամբիոնների և համահամալսարանական ամբիոնների պատմությունները, աշխատակազմը, առարկայական և ուսումնական ծրագրերը: Համապատասխան փոփոխություններ են կրել նաև ՀՊՄՀ, Գլխավոր, Կրթություն, Գիտություն, Դիմորդ բաժինները: Կայքում յուրաքանչյուր շաբաթ տեղադրվել է նաև Լրատվության և հանրության հետ կապերի վարչության կողմից թողարկվող «Հաջողության բանաձև» հաղորդաշարը, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը: Համալսարանի կայքի ապահովման բաժինն ամեն օր բուհի վերաբերյալ թարմ տեղեկատվություն է հաղորդել սոցիալական ցանցերի միջոցով, ստուգվել են էլեկտրոնային հասցեները, տրվել անհրաժեշտ պատասխաններ:

3.Պաշտոնական կայքը շարունակում է հանդիսանալ տեղեկատվության համախմբման միջոց՝ բուհի հետ առնչություն ունեցող այլ կառույցների և վերջիններիս կայքերի համար:

Հնարավոր է տարանջատել տեղեկատվության տեսակները և առանձնահատկությունները՝ միևնույն ժամանակ պահպանելով ընդհանուր տրամաբանությունն ու մոտեցումները:

Կայքում առկա է նաև կառույցի առանձին նորությունների հատվածը,առանձնացված նկարադարան և տեսադարան՝ յուրաքանչյուրն իր վերնագրով և այլ ցուցանիշներով: Կայքի տեղեկատվությունը հնարավորության սահմաններում բերված է օրինաչափ տեսքի՝ ըստ թեմատիկայի:

aspu.am կայքում առկա առանձին էջերը հնարավորություն են տալիս տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործել ուսումնական նյութը կամ անհրաժեշտ ինֆորմացիան դյուրըմբռնելի ներկայացնելու համար:

Կատարման վերլուծություն

10 տարի շարունակ բուհի պաշտոնական կայքը դիմորդների, ուսանողների, դասախոսների, գործընկերների, հետաքրքրված անձանց և կառույցների համար տեղեկատվություն ստանալու, այն տարածելու հիմնական աղբյուրն է՝ ուսման վարձերից մինչև ընդունելության քննություններ, ժամկետներ, դասացուցակներից մինչև քննությունների անցկացման գրաֆիկներ, վերապատրաստումներից մինչև արտասահմանյան բուհերում սովորելու կամ դասավանդելու համար հայտարարված մրցույթներ, համագործակցության առաջարկներից մինչև հրավերներ:

Այս տարի բուհը նշում էր մեկդարյա հոբելյանը: Պաշտոնական կայքն ամենօրյա ռեժիմով ապահովել է վերոնշյալ իրադարձության վերաբերյալ բազմակողմանի լրատվություն. եղել այդ լրատվության տարածման կարևոր միջոց:

Կայքում մշտապես տեղ են գտել թափուր աշխատատեղերի համար հայտարարված մրցույթների հայտարարությունները, լուսաբանվել պրակտիկայի գործունեությանը վերաբերող նորություններն ու գործընթացները՝ պրակտիկա կազմակերպող դպրոցների տնօրենների հետ հանդիպումներից մինչև պրակտիկայի շրջանակներում կազմակերպված միջոցառումներ: Ողջ տարվա ընթացքում լուսաբանվել են Գիտական խորհրդի և հոգաբարձուների խորհրդի նիստերը, տեղադրվել դրանցում ընդունված որոշումները, կարգերը:

Կատարվել են ընթացիկ այլ աշխատանքներ ևս: Աշխատանքներ են տարվում նաև կայքի դիզայնը վերանայելու, տեխնիկական նոր հնարավորություններ ավելացնելու ուղղությամբ:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Հաշվետու տարում ևս գրանցվել է կայքի այցելողների թվի աճ. ամենօրյա այցելությունների քանակը 1400-1600, շաբաթական՝ շուրջ 9000-10000, իսկ ամսական կտրվածքով՝ 39.000-41.000, տարեկան՝ շուրջ 350. 000:

Հետևելով analytics.google.com կայքի տվյալներին՝ հստակ երևում են, որ ամենաշատ այցելություններն ունեն Նորություններ, Դիմորդ, Հայտարարություններ, Ֆակուլտետներ, Կապ, Թափուր աշխատատեղեր էջերն են:

Նախորդ տարվա համեմատությամբ՝ հաշվետու տարում ևս ավելացել է կայքի օտարալեզու էջերի այցելուների թիվը, ինչը նշանակում է, որ բուհի միջազգայնացման գործընթացքում պաշտոնական կայքն ունի իր կարևոր և ուրույն տեղը: Օտարալեզու էջերի այցելուները հետևյալ երկրներից են՝ Հայաստան, ՌԴ, ԱՄՆ, Վրաստան, Մեքսիկա, Գերմանիա, Նիդերլանդներ, Ինդոնեզիա, Ադրբեջան և այլն: Եթե նախորդ տարիներին www.aspu.am-ի այցելուներն հավասարապես էին օգտվում են նաև շարժական տարբերակներից ՝ հեռախոս, պլանշետ, ապա այս տարի 74 տոկոսով այցելուներն օգտվում են հեռախոսով՝ կայքի մոբայլ տարբերակից, 25. 4 տոկոսը՝ համակարգչով, մնացյալ 0. 6 տոկոսը՝ այլ տարբերակներով: Սա վկայությունն է այն բանի, որ կայքի ռեսպոնզիվ դիզայնով 3 լուծումներն էլ գործում են արդյունավետ:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Եռալեզու, ծավալուն կայք, որը շարունակում է լինել տեղեկատվության համախմբման միջոց՝ ուսանողների, դիմորդների,	ժամանակակից դիզայնով և բազմաֆունկցիոնալությամբ աչքի ընկնող կայքում թեպետ կատարվել են մի շարք փոփոխություններ, բայց այսօր այն ունի կառուցվածքային փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Հետևելով ժամանակակից միտումներին՝ արդիական է փոփոխել կայքի դիզայնը: Նախկինում արագագործ կայքն, այսօր ունի գործունեությունը դանդաղեցնող գործիքների կիրառումից հնարավորինս խուսափելու,

բուհի հետ առնչություն ունեցող այլ կառույցների և վերջիններիս կայքերի համար: Պաշտոնական կայքի բաժինը ինչպես տեղի, այնպես էլ օտարազգի դիմորդների, ուսանողների, դասախոսների, գործընկերների և պարզապես հասարակության հետ կապն իրականացնում է ինչպես կայքի Հետադարձ կապ բաժնի, այնպես էլ aspu.am@aspu.am էլեկտրոնային հասցեների միջոցով: Օրական բազմաթիվ նամակներ, ամենատարբեր բնույթի հարցումներ, համագործակցության առաջարկներ, գիտաժողովների կամ այլ ձեռնարկների հրավերներ և այլն: Դրանց օպերատիվորեն տրվում են պատասխաններ, անհրաժեշտության դեպքում նամակն ուղարկվում է համապատասխան բաժին: Ընդլայնվել է կայքից օգտվողների թիվը, հետաքրքրության շրջանակը, դիտողների աշխարհագրությունը: 2022թվականին Facebook սոցիալական ցանցում բուհի պաշտոնական էջն ունի 24 427 հավանում և 25 959 հետևորդ:	անհամեմատ արագագործ և առավել ծավալուն դարձնելու խնդիր: Կայքի որոնում բաժինը ևս չի ապահովում անհրաժեշտ տեղեկատվություն:
Հնարավորություններ	**Վտանգներ**
ՀՊՄՀ-ի ներկայիս պաշտոնական կայքը ունի ընդլայնման և խորացման հնարավորություններ, միտումներ: Այն ողջ տարվա ընթացքում ապահովել է ՀՊՄՀ-ի մասին ամբողջական և պատշաճ տեղեկատվություն, անհրաժեշտ թարմացումներ ու լրացումներ, ինչպես նաև բուհի կրթական գործունեության թափանցիկության ապահովում:	Չնայած կայքի անվտանգությանը, դարձյալ խնդիր է մնում հակերային հարձակումները, մասնավորապես՝ որոշ պատմական իրադարձությունների հետ կապված: Խնդրի արդիականության մասին է վկայում նաև այն, որ ընթացիկ տարվա ընացքում կայքի այցելուների քանակով թվով 5-րդ հորիզոնականում ադրբեջանցիներն են:

Տեխնիկական շարունակական վերազինման արդյունքում նոր ծրագրերի, նախագծերի իրականացում:	Տեխնիկական վերազինում չկատարելու դեպքում՝ խնդիր կառաջանա կայքի արագագործության, անհրաժեշտ տեղեկատվության տեղադրման ծավալի հետ կապված:
	Կայքի այցելուների թվաքանակի սահմանափակման վերացում՝ անհրաժեշտ դեպքերում: Իքս թվով այցելուների դեպքում՝ խնդիր է առաջանում կայքի ֆունկցիոնալության հետ կապված:
Բուհի պաշտոնական կայքը դիմորդների, ուսանողների, դասախոսների, գործընկերների, հետաքրքրված անձանց և կառույցների համար տեղեկատվություն ստանալու, այն տարածելու հիմնական ու կարևոր միջոցն է:	

«Մանկավարժական համալսարան» թերթ բաժին

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
	Խմբագրությունն իր առջև նպատակ է դրել թերթի միջոցով իրականացնել անաչառ տեղեկատվության ապահովում, համալսարանի բոլոր ստորաբաժանումներին տեղեկացնել համալսարանում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունների մասին, պատրաստել ռեկտորատի, գիտական խորհրդի և այլ նիստերում քննարկվող կարևորագույն հարցերի, համալսարանի գործունեությանը և կրթական գործընթացներին վերաբերող հոդվածներ, բուհի հիմնախնդիրներին և միջազգային գործունեությանն առնչվող նյութեր, կրթական գործընթացներին վերաբերող բազմաբնույթ հրապարակումներ, երկշաբաթաթերթը տարածել բուհի ներսում և նրանից դուրս:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	Բուհի առաքելությանը և ռազմավարական պլանին համապատասխան՝ թերթի հրապարակումները նպատակաուղղվել են մանկավարժական արժեքների տարածմանը, նոր սերնդին առաջարկվող նորարարական մոտեցումներով կրթական ծրագրերի, կրթական նորագույն տեխնոլոգիաների, ուսումնառության ու դասավանդման նոր մեթոդների լուսաբանմանն ու տարածմանը: Գիտաժողովների լուսաբանմանն ուղղված հրապարակումները նպաստել են բուհի գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գիտահրատարակչական գործունեության, նոր, արժեքավոր ձեռնարկների մասին իրազեկվել է ,, Լույս է տեսել,, խորագրի ներքո տպագրված հոդվածներով, լուսաբանվել է մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման հարցերը: Թերթը մշտապես անդրադարձել է համալսարանի միջազգային համագործակցությանն ու կապերի ընդլայնմանը, անդրադարձ է արվել միջազգային բոլոր հանդիպումներին: Համալսարանի ռազմավարության մեջ ներառված հիմնարար արժեքների համատեքստում թերթը եղել է բազմակարծության լավագույն հարթակ, որը հաշվի է առել դասախոսների, ուսանողների, աշխատակիցների կարծիքներն ու առաջարկությունները: Թերթի էջերում մշտապես անդրադարձ է արվել համալսարանի ուսանողակենտրոն քաղաքականությանը, ուսանողների ձայնը լսելի է դարձել ,,Ուսանողի օրագիր,, ,,Ապագա լրագրողի էջ,, և այլ խորագրերի ներքո տպագրված նյութերով: Օտարերկրյա ուսանողների համակազմի ներգրավմանն են ուղղված եղել հարցազրույցները օտարերկրյա ուսանողների հետ, որոնք համալսարան են այցելել փոխանակման տարբեր ծրագրերով: Լայնորեն լուսաբանվել է համալսարանի ուսանողների և շրջանավարտների մասնակցությունը Արցախյան 44-օրյա պատերազմին, զոհվածներին նվիրված միջոցառումները,	սեպտեմբեր-հուլիս	Պարբերաբար, հաշվետու ժամանակաշրջանում

	նրանց մասին բազմաթիվ հրապարակումներ են պատրաստվել: Հարցազրույցները բացահայտել են լավագույն դասախոսների գործունեությունը, բացվել են նոր խորագրեր, այդ թվում՝ ,,Հիշելու հրամայականը,, Համալսարան-100,,: Լավագույնս ներկայացվել է բուհի հիմնադրման հոբելյանին նվիրված ձեռնարկները՝ գիտաժողովներ, հանդիպումներ դպրոցներում, ցուցահանդեսներ:		

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
		,,Մանկավարժական համալսարան,, պաշտոնաթերթը ձևավորվել է ,,Ֆենոմեն,, հրատարակչությունում և տպագրել ,,Տիգրան Մեծ,, տպագրատանը ամիսը 2 անգամ, 2 մամուլ ծավալով, 1800 օրինակ: Հաշվետու տարում այն լույս է տեսել նույն պարբերականությամբ և տպաքանակով, բացառությամբ մեկ համարի. նոյեմբերի 1-ի հոբելյանական համարը տպագրվել է կավճապատ թղթի վրա՝ 1000 օրինակ տպաքանակով, որը կազմել է 144 հազար դրամ: Թերթը գունավոր PDF տարբերակով տեղադրվում է ՀՊՄՀ պաշտոնաթերթի պաշտոնական կայքում, տարածվում սոցիալական հարթակներում: Պաշտոնաթերթն անվճար բաշխվում է համալսարանի ֆակուլտետներին, ռեկտորատին, բոլոր ստորաբաժանումներին, ուղարկվում հանրապետության տարբեր գերատեսչություններ ու կազմակերպություններ, բուհեր ու դպրոցներ:	ամիսը 2 անգամ ողջ ուսումնական տարվա ընթացքում

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակումներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Թերթի էջերում տպագրվել են հոդվածներ «Համալսարանը 100 տարեկան է», «Ուսանողի օրագրից», «Համալսարանի երախտավորները», «Ուսուցիչը մեր շրջանավարտն է», «Մեր անվանի շրջանավարտները», «Սփյուռք-Հայաստան», «Լույս է տեսել», «Հիշելու հրամայականը» և այլ հետաքրքրիր խորագրեր, որոնք դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս պատմել իրենց մասնագիտությունների,հաջողությունների և ծրագրերի մասին: Տպագրվել են բուհի ստորաբաժանումներին վերաբերող ամենատարբեր հոդվածներ՝ միջոցառումների լուսաբանումից մինչև հարցազրույցներ ու ակնարկներ: Ուսումնական տարվա ընթացքում պաշտոնաթերթի մեկական համարներ են նվիրվել առանձին ֆակուլտետների լուսաբանմանը, ինչը հնարավորություն է ընձեռել անդրադառնալ յուրաքանչյուր ֆակուլտետի առանձնահատկություններին:
Կատարման վերլուծություն
Հաշվետու ժամանակաշրջանում պաշտոնաթերթի խմբագրությունն առաջնորդվել է համալսարանի ռազմավարական ծրագրի հիմնական դրույթներով, պաշտոնաթերթի կանոնադրական պահանջներով, ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվել թերթի ստեղծման և տարածման աշխատանքներին, հրապարակումների շուրջ արձագանքներին ու հասարակական կարծիքին, մշտապես հետամուտ է եղել դասախոսների և ուսանողների արձագանքներին ու առաջարկություններին:Թերթը մշտապես եղել է դասախոսների և ուսանողների ձայնը լսել դարձնելու հարթակ, հասանելի է եղել բոլորին, թերթի էջերում հանդես են եկել բոլոր նրանք, ովքեր ասելիք են ունեցել կրթական համակարգի և ուսումնական գործընթացների վերաբերյալ:
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն) Կատարված աշխատանքները թույլ են տալիս արձանագրել, որ խմբագրության բաժինը մեծ պատասխանատվությամբ ու լրջությամբ է վերաբերվել իր առջև դրված նպատակների ու խնդիրների կատարմանը, մշտապես համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների, նրանց ղեկավարների, դասախոսների և ուսանողների հետ, հասանելի ու բաց հարթակ է եղել՝ ներկայացնելու համալսարանի առօրյայի ամենակարևոր իրադարձությունները: Խմբագրությունը շարունակել է համագործակցված աշխատել ,,Ֆենոմեն,, հրատարակչության և ,,Տիգրան Մեծ,, տպագրատան, Հայմամուլի հետ՝ հետևելով պայմանագրային պարտականությունների կատարմանը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Թերթը 57 տարեկան է, ունի կայացած նպատակներ ու խնդիրներ, կայուն լսարան, հետաքրքիր խորագրեր:	Խմբագրությունն ունի ընդամենը մեկ հաստիք՝ խմբագիր, որը 2003-ից մինչև այսօր՝ շուտով արդեն 20 տարի, իրականացնում է թերթի տպագրության կազմակերպման գործառույթները՝ նյութերի պատրաստումից մինչև թերթի սրբագրում ու տարածում: Տեխնիկական անհրաժեշտ աշխատանքները հաճախ բացասաբար են անդրադառնում թերթի գաղափարական ուղղվածությանն ավելի շատ ժամանակ հատկացնելու վրա:
Հնարավորություններ	**Վտանգներ**
Կարելի է թերթը ավելի գրավիչ դարձնելու նպատակով կարելի է պարբերաբար ստեղծել կարևոր, միջազգային կապերին վերաբերող նյութերի թարգմանական էջեր:	Թերթը երբեմն ունենում է տեխնիկական խնդիրներ՝ վատ տպագրություն, լուսանկարների անորակ՝ մուգ կամ բաց պատճենում:
	Հաջորդ տարվանից, ֆինանսական սղության պատճառով,դադարեցվելու է թերթային տպագրությունը, թողնելով միայն էլեկտրոնային տարբերակը ՀՊՄՀ կայքում և սոցիալական հարթակներում տեղադրելու ձևաչափը: Սա հատկապես միջին և բարձր տարիքի ընթերցողներին կզրկի համալսարանի պաշտոնաթերթը կարդալու և բուհի մասին իրազեկված լինելու հնարավորությունից:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Վարչության հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
	Կազմել Համալսարանի բյուջեի տարեկան ծրագիր. Նպատակն է արդյունավետ, նպատակային և թափանցիկ կառավարել Համալսարանի ֆինանսական միջոցները, որոնք հիմք են հանդիսանում Համալսարանի կրթական,գիտահետազոտական ծրագրերի իրականացման և ուսումնական միջավայրի պահպանման համար՝ հաշվի առնելով ռազմավարակն ծրագրում նշված խնդիրների և նպատակների առաջնայնությունը:

	Կազմել Համալսարանի բյուջեի իրականացման հաշվետվություն/կատարողական/ Նպատակն է հաշվետու լինել Համալսարանի արտաքին և ներքին շահառուներին, թե ին և ինչ ուղղություններով են տնօրինվել և օգտագործվել Համալսարանի ֆինանսական ռեսուրսները: Ինչպես նաև նախորդ տարվա փաստացի ծախսերը կարող են օգտագործվել որպես հիմնավորում՝ բյուջեի նախահաշվի որոշ հոդվածների՝ ներառյալ չնախատեսված ծախսերի դեպքում, որի արդյունքում հնարավոր է ավելի իրատեսորեն և արդյունավետ պլանավորել հաջորդ տարվա դրամական մուտքերն ու ելքերը:
	Կազմել Համալսարանի հաստիքացուցակը. Նպատակ է հետապնդում առավել արդյունավետ և թափանցիկ տնօրինել մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Հաստիքացուցակի առկայությունը հնարավորություն է տալիս Համալսարանին ոչ էական շեղումներով պլանավորել աշխատավարձի ֆոնդը, ինչպես նա վերանայել և վերակազմավորել Համալսարանի ենթակառուցվածքներն ու ստորաբաժանումները՝ իրենց համապատասխան հաստիքակազմով:
	Կազմել վիճակագրական հաշվետվություններ. Նպատակն է ունենալ պարբերաբար թարմացված տեղեկատվական բազա՝ վիճակագրական տվյալների շտեմարան, որից կարող են օգտվել Համալսարանի բոլոր շահառուները: Համալսարանի վիճակագրական տվյալների հասանելիությունը կնպաստի կառավարմանն առնչվող որոշումների ընդունման արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ վիճակագրական տվյալները կարող են օգտագործվել բուհ-ի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց գործունեությունը մշտադիտարկելու, ինքնավերլուծելու, գնահատելու և բարելավելու, ինչպես նաև բուհ-ի հիմնական խնդիրները բացահայտելու համեմատական առավելություններն ու մրցակցային դիրքը գնահատելու նպատակով: Վերը նշվածը հենք է հադնիսանում բուհ-ի զարգացման տեսլականը կառուցելու համար:

2. Հաշվետու տարվա համար Վարչության պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
Խնդիր 5.4, քայլ 2	Ներմուծել Համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ և այն ընդունել որպես հիմք Համալսարանի ենթակառուցվածքների և այլ ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար:	մարտ	Համալսարանի հետագա գործունեությունն ավելի նպատա կաուղղված և արդյունավետ կազմակերպելու, զարգացման ռազմավարությունն ուղղորդելու համար՝մշակվում են Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ), որոնք ապահովում են ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողություններ գործնականությունն ու դրանց կապը Համալսարանի արտաքին և ներքին միջավայրի կարևորագույն տարրերի հետ: ԳԱՑ-երի ցանկը կազմելիս որոշվում են Համալսարանի գործունեության հիմնական ոլորտները և

			յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվում են Համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշները:
Խնդիր 5.4, քայլ 4	Մշակել բյուջետային ցուցանիշների համակարգ՝ ըստ գործունեության բնագավառների և զարգացման ուղղությունների:	դեկտեմբեր - հունվար	Կատարվում է բյուջեի ցուցանիշների մշակում, վերլուծություն, համադրում ՝ ըստ պլանավորան և փաստացի կատարման:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	Հունվար-դեկտեմբեր	Համեմատել բյուջեի հոդվածների փաստացի ցուցանիշները պլանային ցուցանիշների հետ:	Յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, որոշ դեպքերում՝ նաև ամսվա կտրվածքով, համեմատվել է բյուջեի մուտքերի և ելքերի հոդվածների փաստացի ցուցանիշները պլանային ցուցանիշների հետ: Ուսումնասիրվել և վերլուծվել են Համալսարանի դրամական հոսքերի վրա ազդող ներքին և արտաքի գործոնները:
	Հունվար-դեկտեմբեր	Հաստիքացուցակի վերանայում և կազմում:	Ելնելով կառավարման արդյունավետությունից, ռեսուրսների օգտագործման նպատակայնությունից և հասցեականությունից՝ պարբերաբար վերանայվել է Համալսարանի կառուցվածքը, կրթական, գիտահետազոտական ծրագրերը սպասարկող ստորաբաժանումների, ենթակառուցվածքների քանակը, որի հիման վրա Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կազմվել են հրամանների նախագծեր՝ ստորաբաժանումների վերակազմավորման, հաստիքների բացման, կրճատման կամ վերանվանման վերաբերյալ: Վերանայվել են որոշ ստորաբաժանումների աշխատողների աշխատավարձեր՝ դրանք համապատասխանեցնելով իրենց նոր գործառույթներին և ծանրաբեռնվածությանը:
	Հունվար-դեկտեմբեր	Ուսանողների, ասպիրանտների, հայցորդների,նախապատրաստական դասընթացների ունկնդիրների թվաքանակի հաշվառում, ամսական շարժի կազմում	Առկա և հեռակա ուսուցման համակարգու սովորող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, ասպիրանտների ընդունման, ազատման, հեռացման տեղափոխման, ընդհատման,

		և վերջիններս ուսման վարձերից ձևավորվող եկամուտների հաշվեգրում:	վերականգնման հրամանների հիման վրա կազմվել է ուսանողների ամսական շարժը հաշվարկվել միջին ամսական թվաքանակը և հաշվապահություն ներկայացվել հաշվարկներ՝ վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձից ձևավորված եկամուտների վերաբերյալ:
	Հունվար-դեկտեմբեր, փետրվար	Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին պետական վիճակագրական հաշվետվության կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Կազմվել և ներկայացվել է հաշվետվություն աշխատողների միջին ամսական թվաքանակի, /առանց համատեղության/ և միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ, ինչպես նաև համատեղությամբ, կապալային կամ քաղիրավական պայմանագրերով աշխատողների թվաքանակի և աշխատավարձերի վերաբերյալ:Տարեկան կտրվածքով, բացի վերը նշվածից, ներկայացվել են վիճակագրական տվյալներ աշխատուժի վրա Համալսարանի կատարած ծախսերի, հաշվարկված աշխատավարձի չափի, աշխատողների և աշխատատեղերի շարժի վերաբերյալ:
	Հունվար-դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջեից Համալսարանում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ներառված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրման պայմանագրի, հայտերի կազմում և ներկայացում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե:	Կազմվել և ներկայացվել են ֆինանսավորման հայտեր ծրագրերում ընդգրկված և օրենքի սահմնված կարգով հավելավճար ստացող գիտաշխատողների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ՝ ըստ գիտական աստիճանի, վկայագրի շնորհման տարեթվի, աշխատավարձի չափի:
	Հունվար-դեկտեմբեր (եռամսյակայի ն)	Պետական վիճակագրական հաշվետվություն Զև 6-Ֆ կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական ծառայություն:	Ներկայացվելէ եռամսյակային պարբերությամբ:Լրացվել են տարվա սկզբի և հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ մնացորդները:
	Հունվար	Արտոնությամբ և պետպատվեր համակարգում սովորող ուսանողների ֆիանսավորման հայտի ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն:	Ներկայացվել է անհրաժեշտ ֆինանսավորման հայտ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվճար ուսման արտոնությունից օգտվող ուսանողների թվաքանակի և նրանց ուսման վարձերի փոխհատուցման չափի վերաբերյալ՝ ըստ առանձին

			մասնագիտությունների և վարձավճարի չափի: Ներկայացվել են նաև չորս տարվա կտրվածքով տվյալներ բուհն ավարտողների թվակազմի վերաբերյալ, ովքեր սովորում են պետպատվերի շրջանակներում:
	Փետրվար	Պետական վիճակագրական հաշվետվություն Ձև ԳՄ 1 կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Հավաքագրվել են վիճակագրական տվյալներ, որոնցով կազմվել է հաշվետվություն մագիստրանտների, ասպիրանտների, դոկտորանտների. գիտության թեկնածուի գիտական աստիճան հայցողների թվաքանակի վերաբերյալ՝ ըստ կուրսերի, ուսման ձևերի, գիտության ճյուղերի, մասնագիտությունների, քաղաքացիության, սեռի:
	Փետրվար	Պայմանագրերի կազմում և ներկայացում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե:	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ղեկավարների հետ համատեղ, սահմանված ձևաչափով, կազմվել են պայմանագրեր՝ իրենց կից հավելվածներով, որտեղ եռամսյակային կտրվածքով ներկայացվել է ծրագրի նախահաշիվը:
	Ապրիլ	Պետական վիճակագրական հաշվետվություն Ձև 1-ՏԳ կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Ներկայացվել է Համալսարանի տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշները՝ ներառյալ Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ցուցանիշները:
	Ապրիլ	Պետական վիճակագրական հաշվետվություն Ձև 3-Ֆ կազմում և ներկայացնում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Ներկայացվել է կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից հասույթը:
	Հոկտեմբեր	Պետական վիճակագրական հաշվետվություն Ձև ԳՄ 3 կազմում և ներկայացում ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն:	Հավաքագրվել են վիճակագրական տվյալներ, որոնցով կազմվել է հաշվետվություն պետպատվեր և վճարովի համակարգում սովորող բակալավրիատի ուսանողների թվաքանակի բաշխվածության վերաբերյալ՝ըստ ուսուցման ձևերի, կուրսերի, մասնագիտությունների, ուսման վարձաչափերի, կրթաթոշակի չափերի քաղաքացիության, տարիքի, սեռի: Հիմնական և համատեղող պրոֆոսորադասախոսական, գիտական, վարչական, ուսումնաօժանդակ,

			սպասարկող աշխատակազմի բաշխվածությունը ըստ գիտական աստիճանի, կոչման, դրույքաչափի, զբաղեցրած պաշտոնի, տարիքի և սեռի: Հաշվետվությունում ներկայացվել են նաև տվյալներ ուսումնալաբորատոր շենքերի օգտագործման, ֆինանսական միջոցների ստացման և օգտագործման վերաբերյալ:

3. Հաշվետու տարում Վարչության պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Վարչությունը հաշվետու տարում կատարել է հետևյալ աշխատանքները՝ Կազմել է Համալսարանի բյուջեի նախահաշիվը, կատարողականը, հաստիքացուցակը: Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմել և ներկայացրել է պահանջվող հաշվետվությունները համապատասխան պետական կառույցներին և Համալսարանի շահառուներին: Ուսումնասիրել է Համալսարանի բյուջեի վրա ազդեցություն ունեցող նշանակալի իրադարձությունները՝ դրանք հաշվի առնելով բյուջեի նախահաշվի կազմման գործընթացում: Կատարել է կանխատեսում-հաշվարկներ՝ դրամական հոսքերի վերաբերյալ: Վարչությունը հավաքագրել և հաշվարկել է հետևյալ հիմնական վիճակագրական տվյալները՝ աշխատողներ ընդհանուր թվաքանակ, այդ թվում հիմնական, համատեղությամբ, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական, տնտեսական, գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների ինչպես նաև կապալային կամ քաղիրավական պայմանագրով աշխատանք կատարողների թիվը նրանց վարձատրության չափը, աշխատողների բաշխվածությունը ըստ սեռի, տարիքի, զբաղեցրած պաշտոնի, գիտական աստիճանի և կոչման, կադրերի հոսունությունը՝ ընդունված/ ազատված, ուսանողների թվաքանակի բաշխվածությունը՝ ըստ ուսուցման ձևի, մարզերի, ֆակուլտետների, մասնագիտությունների,կուրսերի, տարիքի, սեռի, ուսման վարձի չափերի: Կազմել է ուսանողական թվակազմի (անվճար և վճարովի) և աշխատակազմի ամենամսյա շար Ամսական կտրվածքով հաշվարկել է վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողն ստացվող պլանային եկամուտները՝ համադրելով և համեմատելով նախորդ տարիների տվյալների հետ: Կազմել է հաշվետվություններ ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքներ ուսանողների առաջադիմության վերաբերյալ: Կազմել և ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե է ներկայացրել ՀՀ պետ բյուջեից Համալսարանում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների հավելավճարների տրամադրման հայտերը: Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ղեկավարների հետ համատեղ սահմանված ձևաչափով, կազմել է է պայմանագրեր, կից հավելվածների՝ բյուջեի նախահաշիվ ներկայացրել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե: Կազմել է Վարչության գործունեությանը վերաբերող հրամանների (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգավիճակ ունեցող

ուսանողների անվճար ուսուցման համակարգ տեղափոխման, նոր հաստիքի հատկացման, կրճատման.ստորաբաժանումների վերակազմավորման, գիտաշխատողների ընդունման, ազատման, պարգևատրման և այլ նախագծերը: Պրոռեկտորների հանձնարարությամբ նշված ժամկետներում պատասխանել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության
և այլ պետական և ոչ պետական կառույցների, կազմակերպությունների գրություններին:

Կատարման վերլուծություն

Կատարել է վերլուծություններ հավաքագրված վիճակագրական տվյալների, այդ թվում՝ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների կիրառմամբ: Վերլուծել է Համալսարանի դրամական հոսքերի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները, ինչպես նաև ֆինանսական հոսքերի աղբյուրները բազմազանեցնելու և լրացուցիչ միջոցներ ներգրավելու հնարավորությունները:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
վերլուծություններ իրականացնելու փորձառություն	ուսանողության թվի և այլ ելամուտների նվազման արդյունքում կանխատեսման ոչ լիարժեքություն
ֆինանսական մուտքերի և ելքերի ռեալ գնահատում	
աշխատանքի իրականացում բարձր պատասխանատվությամբ	
Հնարավորություններ	Վտանգներ

	2017-2018	2018-2019	2019-20	2020-21	2021-22
Ուսանողների թվակազմ	8940	7944	7070	6736	6144
Ընդունված ուսանողների թվաքանակ	2235	1619	1651	1953	1641

Ընդհանուր ուսանողների և 1-ին կուրս ընդունված ուսանողների թվաքանակի դինամիկան՝ ըստ ուս. տարիների



	2017-2018	2018-2019	2019-2020	2020-21	2020-21
ընդունված ուսանողների թվաքանակ	2235	1619	1651	1953	1641
առկա բակալավրիատ	973	554	701	903	867
հեռակա բակալավրիատ	539	443	462	439	387
առկա մագիստրատուրա	602	505	396	508	295
հեռակա մագիստրատուրա	121	117	92	103	92



Ֆակուլտետների վճարովի ուսուցումից ստացված եկամուտների համեմատականը

2020թ.



2021թ.



Նյութատեխնիկական մատակարարման և գնումների համակարգման բաժին

1. Կենտրոնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
	1)Համալսարանի բնականոն գործունեությունն ապահովելու և ուսումնակրթական արդյունավետ, լիարժեք գործունեությունը կազմակերպելու նպատակով, անհրաժեշտ ժամկետներում, ստորաբաժանումների մշտադիտարկման արդյունքում բացահայտված խնդիրները՝ կարիքները ապահովելու նպատակով, կազմակերպել անհրաժեշտ ռեսուրսների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
	2) Սահմանված ժամկետում (յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր 10-ը) համաձայն ձևաթղթի ՆՏՄ և Գնումների համակարգման կենտրոն ներկայացնել ստորաբաժանումների կողմից անհրաժեշտ ռեսուրսների , ծառայությունների ու աշխատանքների տեխնիկական բնութագրերով և քանակներով զետեղված տեղեկատվությունը,
	3) Ամփոփված տեղեկատվության հիման վրա կազմել Գնումների Պլան
	4) Հետագայում ցանկացած ռեսուրսի անհրաժեշտության դեպքում, կատարել փոփոխություն Գնումների պլանում և կազմակերպել գնման ընթացակարգ:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
1	Համակարգչային՝ սարք - սարքավում, քաթրիջ	05.04. 22-06. 07. 22	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն կազմակերպվել է «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի 2022 թվականի կարիքների համար համակարգիչների և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգ /4 փուլով/

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	2022թ-ի 01-12 ողջ ընթացքում	Համակարգիչ, դյուրակիր Համակարգիչ, համակարգչային՝սարք-սարքավորումներ, աքսեսուարներ, տոներ	Դյուրակիր համակարգիչ -4, օպերատիվ հիշողություն- 8, կոշտ սկավառակ -2, սնուցման բլոկ- 20 հատ, համակարգչային տեսախցիկներ-10, մկնիկ-20, ստեղնաշար-20, քարտրիջների աքսեսուարներ -32, տոներ-10 կգ և 41 հատ, սկավառակներ CD, DVD, մալուխ ինտերնետի՝ UTP, բարձրախոսներ, անվտանգության տեսախցիկներ, օժանդակ սարքեր
2	2022թ-ի 05-10	Ուսումնական նյութերի տպագրություն, ապրանքներ, սարքեր, քիմիական նյութեր, սպորտային գույք, արվեստի նյութեր	Դիպլոմի հավելված՝ 1400 հատ, սպորտային գույք, կերպարվեստի նյութեր, մոլբերտներ, վրձիններ տարբեր համարների, գուաշ, գունավոր մատիտներ, շրջանակներ, կտավ, յուղաներկեր տաբեր , ենթաշրջանակ, ՀՊՄՀ լոգոյով բաժակներ, գրիչներ, շարֆեր, բրելոկներ, բլոկնոտներ, շապիկներ, թղտապանակներ, կրծքանշաններ, մեդալներ, մեդալների տուփեր, նվերների տոպրակներ ՀՊՄՀ 100-ամյա միջոցառման համար, հավաստագրեր, գովասանագրեր, Ավագ դպրոց -վարժարանի համար՝ մարզադահլիճի համար սպորտ գույք, սպորտային ապրանքներ, տնտեսական մաքրման միջոցներ, շինարարական ապրանքներ:
3	2022թ-ի 03-10	դեղորայք, բժշկական աքսեսուարներ	հաբեր, սանտավիկ,սիրտ-անոթային հանգստացնող հեղուկներ, բինտ, բամբակ, ներարկիչներ- ամպուլաներ, սպիրտ 96%, ջերմաչափ՝ հեռահար, պարզ, յոդ, տոնոմետր, արյան ճնշման իջեցման,ստամոքսի,ալերգիկ, հականեխի չներ, աչքի,քիթ-կոկորդի, սպազմայի համար դեղորայք և այլ պարագաներ նախատեսված՝2 բուժկետերի, ուսանողների,

			աշխատակիցների, վարորդների, անվտանգության աշխատողների, սպորտ ամբիոնի, 2 դպրոցների համար
4	2022թ-ի 01-02	Գրենական պիտույքներ /Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար գրենական պիտույքների գնման ընթացակարգի կազմակերպում/	A4 չափի տպագրման թուղթ նաև գունավոր թուղթ, գրիչ, մատիտ, ռետին, ամրակ, թղթապանակներ՝ռեգիստր, ֆայլով, ռետինով, ամրակով,սթեպլեր,սթեպլերի ասեղներ, ծրարներ տարբեր չափերի, սոսինձ՝ չոր և հեղուկ շտրիխ, մկրատ,նշումների թուղթ, ֆայլ, սկրեպ, ապակարիչ,հաշվիչ,արագակար, գրասենյակային գիրք՝կոշտ և փափուկ կազմով,սեղանի հավաքածու, A5 չափի նոթատետր,կնիքի թանաք, սոսինձ, թղթե սկոչ, գլոբուս, սեղանի օրացույցներ և այլ պարագաներ
5	2022թ-ի 01-12	Տրանսպորտ	Ավտոտեխսպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի կնքում: Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար դիզելային վառելիքի գնման ընթացակարգի կազմակերպում: Ավտոլվացման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի կնքում:
6	2022թ-ի 01-12	Կենցաղային սարքավորումներ	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար թվով 26 հատ օդորակիչների գնման ընթացակարգ և 2 հատ հեռախոս: Օդորակիչների սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում: Օդորակիչների մասերի գնում թվով 7 հատ մաս:
7	2022 թ-ի 01-12	Գրքեր, գիտական հանդեսներ, ուսումնական ձեռնարկներ, բառարան գիտաժողովի նյութերի ժողովածու	«Հայագիտական Հանդես <Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ> <Հատուկ կրթության հիմնախնդիրներ> պարբերական, <Հայրենիքի համար> գիրք 200 հատ, Վիզդոմ գիտական հանդես 200 հատ
8	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար տնտեսական, մաքրման ապրանքների գնման ընթացակարգի կազմակերպում	Ավտոմատ անջատիչներ, վարդակներ, էլ.կոնտակտներ, լամպեր տարբեր, լուսարձակներ, կուտակիչ մարտկոցներ, աստիճան, խոտհնձիչ մեքենա , բանվորական ձեռնոցներ. մաքրման միջոցներ, սանիտարական պարագաներ, էլեկտ. լարեր , մալուխ, ներկարարական տարբեր նյութեր և վրձիններ, ներքին շերտավարագույրներ, վերելակների համար սարքեր, դռան փականներ, ծխնի, պրոֆիլներ, ցուցանակներ, կպչուն մեծ և

			փոքր ժապավեններ, բազալտ քար խաչքարի պատվանդանի համար և այլ ապրանքներ:
9	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Աուդիտորական ծառայությունների գնման ընթացակարգի կազմակերպում
10	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Վերելակների պահպանման և սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգի կազմակերպում
11	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Համացանցային ծառայությունների մատուցման գնման ընթացակարգի կազմակերպում
12	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Հենակետային վարժարան ավագ դպրոցի մարզադահլիճի վերանորոգման /կապալային/ աշխատանքների կատարման գնման ընթացակարգի կազմակերպում
13	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	ՀՈՒՇԱՐՁԱՆ ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ընթացակարգի կազմակերպում
14	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Միջոցառումների տեխնիկական ապահովման ծառայության գնման ընթացակարգի կազմակերպում
15	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Տաղավարների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման գնման ընթացակարգի կազմակերպում /Աղավնաձորի ուսումնական բազայում/
16	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Էլեկտրական ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի կազմակերպում
17	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Պրոյեկտորի լամպերի ձեռքբերման գնման ընթացակարգի կազմակերպում
18	2022 թվականի 01-12	Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն 2022 թվականի կարիքների համար	Ներկայացուցչական ծախսեր հոդվածով կազմակերպված՝ ֆուրշետների, հյուրասիրության, բանկետի կազմակերպման ծառայությունների մատուցման գնման պայմանագրերի կնքում:

3. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձրացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակումներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Մշտադիտարկման արդյունքում, հնարավոր է լինում ստորաբաժանումների կարիքները տրամադրել ըստ ուսումնական պիտանելիության և արդյունավետ օգտագործման, որի հետևանքով խնայվում են ռեսուրսներ: Ստորաբաժանումների ծավալներից ելնելով ստորաբաժանումներին տրամադրվում է նորմատիվներին համարժեք ռեսուրսներ:	Գնման ընթացակարգով անհրաժեշտ ապրանքների ձեռք բերման ժամկետներից ելնելով ոչ միշտ է հաջողվում պահպանել հրատապությունը: Այդ պատճառով ստորաբաժանումների կողմից պահանջվում է նախորոք մեկ ամիս շուտ ներկայացնել գնման հայտ համապատասխան տեխնիկական բնութագրով:
Հնարավորություններ	Վտանգներ
Պատասխանատու ստորաբաժանումների կողմից ճիշտ կազմակերպված և ժամանակին ներկայացված գնման հայտերը, ձեռք բերվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հնարավորություն են տալիս ժամանակին կազմակերպել գնման գործընթացը:	Տարեկան նախատեսված բյուջեի սղության պատճառով հնարավոր է չիրականացնել բոլոր ստորաբաժանումների կողմից պլանով նախատեսված ապրանքների ձեռքբերումը:

Միջազգային համագործակցության բաժին

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
	Խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը, նպաստել համալսարանի ներգրավվածությանը համաշխարհային կրթական գործընթացներում և զարգացումներում՝ զարգացնելով միջազգային գործընկերների հետ փոխգործակցությունը:
1	Ապահովել համալսարանի համագործակցությունը միջազգային շահակիցների հետ, խթանել համալսարանի ուսանողների և դասախոսների մասնակցությունը միջազգայնացման գործընթացներում, բարձրացնել համալսարանի մասնակցությունը միջազգային փորձերում:
2	Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործունեությունը՝ ակտիվ ինտեգրելով եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին:
3	Նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համակազմի աճին ՀՊՄՀ-ում՝ բարձրացնելով ՀՊՄՀ տեսանելիությունը միջազգային կրթական տարածքում:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
1.1	Բազմազանեցնել համագործակցության ուղղությունները արտասահմանյան համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ:		ՀՊՄՀ միջազգային համագործակցության նոր ուղղությունների ընդլայնում, համագործակցության պայմանագրերի թվի աճ
1.2	Ներգրավել պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին կրթական, հետազոտական և կարողությունների զարգացման միջազգային ծրագրերում:		Ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների աճ
1.3	Իրականացնել միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակում և իրականացում:		Միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակում
1.4	Նպաստել ՀՊՄՀ կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդաբանության բարելավմանը միջազգային ծրագրերի մասնակից դասախոսների փորձի տեղայնացման միջոցով:		
1.5	Բարձրացնել առցանց միջազգային ծրագրերում ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը:		Առցանց միջազգային գործունեության թվի աճ
1.6	Բարձրացնել համալսարանի ֆակուլտետների ներգրավվածությունը միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետների անձնակազմի շարունակական վերապատրաստումների և խորհրդատվության տրամադրման միջոցով:		Ֆակուլտետների ներգրավածության թվի աճ և նախաձեռնությունների ընդլայնում
1.7	Խթանել համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությանը միջազգային շարժունության ծրագրերին:		Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի՝ միջազգային շարժունության ծրագրերին մասնակցության աճ
1.8	Բարձրացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի տեղեկացվածությունը միջազգային ծրագրերի, գիտաժողովների, դրամաշնորհային և կրթաթոշակային ծրագրերի մասին՝ տեղեկատվության տարածման և խորհրդատվությունների միջոցով:		Տեղեկատվության տարածում ֆեյսբուքյան հարթակում, թիրախավորված տարածում ֆակուլտետների միջոցով, խորհրդատվության տրամադրում, տեղեկատվական օրերի կազմակերպում

2.1	Աջակցել համալսարանի գիտական համագործակցությանը արտասահմանյան համալսարանների և գիտական կենտրոնների հետ, օժանդակել համալսարանի ներգրավումը եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին, օժանդակել միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը:		Աջակցություն միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը:
3.3	Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ-ում օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման և կողմնորոշման համար՝ օժանդակելով օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրների լուծմանը՝ կեցության ապահովումը, կողմնորոշումը, կացության իրավունքի ձեռքբերումը և այլն:		Արտալսարանային միջոցառումներ, խորհրդատվություն առկա և առցանց տարբերակներով, կեցության և կացության ձեռքբերման գործընթացներում օժանդակություն:
3.7	Բարձրացնել ՀՊՄՀ տեսանելիությունը միջազգային ուսանողների շրջանակում՝ ներկայացնելով ՀՊՄՀ մասին տեղեկատվություն տարբեր միջազգային կրթական հարթակներում:		ՀՊՄՀ տեսանելիության բարձրացում

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.1	01-12	Բազմազանեցնել համագործակցության ուղղությունները արտասահմանյան համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ:	ՀՊՄՀ միջազգային համագործակցության նոր ուղղություններ՝ Կրետեի համալսարան, Հունաստան Պանթեոնի համալսարան, Հունաստան Զիգենի համալսարան, Գերմանիա Նիժնի Նովգորոդի Կ. Մինինի անվան պետական մանկավարժական համալսարան, Ռուսաստան Նիժնի Նովգորոդի Լոբաչևսկու անվան ազգային հետազոտական համալսարան, Ռուսաստան Մաաստրիխտի համալսարան, Նիդերլանդներ Դելիի համալսարան, Հնդկաստան Վարշավայի համալսարան, Լեհաստան

			Արգենտինայի արվեստների պետական համալսարան Եվրամիության կողմից ֆիանանսավորվող ծրագրեր՝ ARMDOCT /Դոկտորական կրթության բարեփոխումը հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և եմ փորձին համապատասխան / MODEST / Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը/ BETTER TEACHING FOR BETTER LEARNING ծրագիր՝ Յյուրիխի մանկավարժական համալսարան PROMOEU /Եվրոպական ուսումնասիրությունների խթանումը Հայաստանում/Էրազմուս+ Ժան Մոնե գործողություններ «Կերպարվեստի ուսուցիչների վերապատրաստում» Յյուրիխի արվեստների համալսարան, Արտաս հիմնադրամ Հյուսիս Կովկասյան համալսարանի կողմից ռոսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստում
1.2	01-12	Ներգրավել պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին կրթական, հետազոտական և կարողությունների զարգացման միջազգային ծրագրերում:	ARMDOCT /Դոկտորական կրթության բարեփոխումը հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և եմ փորձին համապատասխան /ծրագրի շրջսանակներում՝ Վերապատրաստում Լիտվայի համալսարանում՝ 4 աշխատակից Ուսուցողական այց Իտալիայի Տերամոյի համալսարան՝ 5 աշխատակից MODEST / Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և

			դասավանդման մեթոդաբանության բարելավումը/ Ուսուցողական այց Լեհաստանի Յագելոնյան համալսարան՝ 3 աշխատակից Աշխատաժողով Լատվիայի համալսարանում՝ 1 աշխատակից BETTER TEACHING FOR BETTER LEARNING ծրագիր՝ Յյուրիխի մանկավարժական համալսարան Վերապատրաստում Յյուրիխի մանկավարժական համալսարանում՝ 2 աշխատակից PROMOEU /Եվրոպական ուսումնասիրությունների խթանումը Հայաստանում/Էրազմուս+ Ժան Մոնե գործողություններ Ուսուցողական այց Սլովենիայի Մարիբորի համալսարան՝ 2 աշխատակից
1.3	01-12	Իրականացնել միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակում և իրականացում:	3 դրամաշնորհային ծրագրի ներկայացում ֆիանանսավորման՝ Erasmus + (Capacity Building in the field of Higher Education: Strand 3 - Structural reform projects) “INTRODUCING INSTITUTIONAL RESEARCH FOR UNIVERSITY GOOD GOVERNANCE AND MANAGEMENT IN LINE WITH EUROPEAN BEST PRACTICES” (IRGOV) ERASMUS-EDU-2022-CBHE-STRAND-2 Development of Soft Skills at Higher Education Institutions of Armenia and Georgia in Compliance with the 21st Century Labour Market Requirements ERASMUS-EDU-2022-CB-VET ESSW (Entrepreneurial Skills for Social Workers)
1.6	01-12	Բարձրացնել համալսարանի ֆակուլտետների ներգրավվածությունը միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետների անձնակազմի շարունակական վերապատրաստումների	1.Միջազգայնացման ծրագրերում ներգրավված ֆակուլտետներ՝ -Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

		և խորհրդատվության տրամադրման միջոցով:	-Օտար լեզուների ֆակուլտետ -Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ -Սկզբնական կրթության ֆակուլտետ -Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ -Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ -Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ -Գեղարվեստական կրթության ֆակուլտետ 2. Անհատական և խմբային խորհրդատվությունների տրամադրում ՀՊՄՀ-ի ֆակուլտետների և ամբիոնների ներկայացուցիչներին և ուսանողներին տարբեր հարթակներում:
1.7	02-12	Խթանել համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությանը միջազգային շարժունության ծրագրերին:	Ֆինանսավորված Էրազմուս+ շարժունության հայտեր՝ 1.Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան 2.Ֆինլանդիայի Օուլուի համալսարան 3.Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարան, 4.Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, 5.Իսպանիայի Վալադոլիդի համալսարան, 6.Իսպանիայի Սեվիլիայի համալսարան 7.Իսպանիայի Վալենսիայի համալսարան, 8.Սլովակիայի Ռուժոմբերոկի համալսարան, 9.Լիտվայի Վիտաուտաս Մագնուսի անվան համալսարան 10.Չեխիայի Պարդուբիցեյի համալսարան 12.Իտալիայի Մաչերատայի համալսարան 13. Վիտաուտաս Մագնուսի անվան համալսարան, Լիտվա

			14. Տրանսիլվանիայի Բրաշովի համալսարան, Ռումինիա Իրականացված 43 արտագնա և 18 ներգնա շարժունություն -Վալադոլիդի համալսարան՝ 1 արտագնա ուսանող, 1 արտագնա դասախոս -Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան՝ 2 արտագնա ուսանող, 1 արտագնա դասախոս -Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարան՝ 1 ներգնա դասախոս -Կիլի համալսարան՝ 5 արտագնա ուսանող, 5 արտագնա դասախոս, 1 ներգնա դասախոս -Չեխիայի Պարդուբիցեյի համալսարան՝ 6 արտագնա և 2 ներգնա դասախոս, 3 արտագնա ուսանող -Ֆինլանդիայի Օուլուի համալսարան՝ 1 ներգնա դասախոս, 3 արտագնա ուսանող -Իտալիայի Մաչերատայի համալսարան՝ 1 ներգնա և 2 արտագնա դասախոս -Յյուրիխի արվեստների համալսարան՝ 2 արտագնա դասախոս, 5 ներգնա դասախոս, 9 արտագնա ուսանող, 7 ներգնա ուսանող -Սլովակիայի Ռուժոմբերոկի համալսարան՝ 1 ներգնա դասախոս -Վիտաուտաս Մագնուսի անվան համալսարան՝ 1 արտագնա դասախոս -Սևիլիայի համալսարան՝ 1 արտագնա վարչական աշխատակից

1.8	01-12	Բարձրացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի տեղեկացվածությունը միջազգային ծրագրերի, գիտաժողովների, դրամաշնորհային և կրթաթոշակային ծրագրերի մասին՝ տեղեկատվության տարածման և խորհրդատվությունների միջոցով:	1.Էրազմուս+ տեղեկատվական օրեր ՀՊՄՀ-ում, միջազգայնացման առկա ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում: 2. Առկա միջազգային ծրագրերի, դրամաշնորհների, մրցույթների վերաբերյալ տեղեկատվության տարածում տարբեր հարթակներում՝ միջազգային համագործակցության բաժնի ֆեյսբուքյան էջ, ՀՊՄՀ կայքէջ, տեղեկատվության տարածում էլեկտրոնային հասցեների միջոցով: 3.Խորհրդատվություններ
2.1	01-12	Աջակցել համալսարանի գիտական համագործակցությանը արտասահմանյան համալսարանների և գիտական կենտրոնների հետ, օժանդակել համալսարանի ներգրավումը եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին, օժանդակել միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը:	Իրականացվում է դոկտորոկան կրթության բարեփոխումներին ուղղված 2 միջազգային ծրագիր Էրազմուս+ ARMDOCT /Դոկտորական կրթության բարեփոխումը հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և եմ փորձին համապատասխան / ծրագրի իրականացմանը, որի նպատակն է բարեփոխել դոկտորական կրթությունը Հայաստանում Զալցբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով:

			ERASMUS+ MODEST /Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը /եռամյա ծրագիր է, որի նպատակն է Եվրոպական Բարձրագույն Կրթական տարածքի (EHEA) և Եվրոպական Հետազոտական տարածքի (ERA) շրջանակներում գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցային կարողությունների ընդլայնումը հետբուհական կրթության ոլորտում: 2. ՀՊՄՀ դասախոսների մասնակցություն միջազգային գիտաժողովին: Աջակցություն ՀՊՄՀ-ում միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպում
3.3	01-12	Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ՀՊՄՀ-ում օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման և կողմնորոշման համար՝ օժանդակելով օտարերկրյա ուսանողների առաջնային խնդիրների լուծմանը՝ կեցության ապահովումը, կողմնորոշումը, կացության իրավունքի ձեռքբերումը և այլն:	1.Արտալսարանային միջոցառում նախապատրաստական բաժնի ունկնդիրների համար, պայմանավորված վարձակալության գնաճով՝ հանրակացարանի հարցերի օժանդակում, կեցության քարտերի ստացում, անհատական խորհրդատվություն ոչ միայն կրթական գործընթացների, այլև Հայաստանում բնակվելու վերաբերյալ, առկա խնդիրների բացահատում և լուծում: 2.ՀՊՄՀ կողմից համակարգվող Erasmus+ BOOST ծրագրի շրջանակներում ստեղծված www.studyinarmenia.am կայքի պարբերաբար թարմացում: 3.Շարունակական խորհրդատվություն և տեղեկատվության տրամադրում օտարերկրյա դիմորդներին և ուսանողներին:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Խնդիր 1: Ապահովել համալսարանի համագործակցությունը միջազգային շահակիցների հետ, խթանել համալսարանի ուսանողների և դասախոսների մասնակցությունը միջազգայնացման գործընթացներում, բարձրացնել համալսարանի մասնակցությունը միջազգային փորձերում: ՀՊՄՀ-ն իրականացրել է մի շարք ներգնա և արտագնա շարժունություններ: ՀՊՄՀ 2 ուսանող մեկնել են Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, 3 ուսանող՝ Չեխիայի Պարդուբիցեի համալսարան, 1 ուսանող՝ Իսպանիայի Վալադոլիդի համալսարան, 4 ուսանող՝ Անգլիայի Կիլի համալսարան, 3 ուսանող՝ Ֆինլանդիայի Օուլուի համալսարան, 9 ուսանող Յուրիխի արվեստների համալսարան: Իրականացվել է նաև դասախոսների արտագնա և ներգնա շարժունություն Չեխիայի Պարդուբիցեի համալսարան, Իտալիայի Մաչերատայի համալսարան, Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան, Յուրիխի արվեստների համալսարան, Անգլիայի Կիլի համալսարան, Ռուժոմբերոկի համալսարան, Վիտաուտաս Մագնուսի անվան համալսարան, Վալադոլիդի համալսարան և Ֆինլանդիայի Օուլուի համալսարան: Ընդհանուր առմամբ Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ֆինանսավորման է ներկայացվել 22 ծրագիր, որոնցից ֆինանսավերվել են 13-ը: Էրազմուս Պլյուս կրեդիտային շարժունության ծրագրի, ինչպես նաև այլ շարժունության ծրագրերի իրականացման ընթացքում ինտենսիվ աշխատանքներ են տարվել հունվարից մինչև դեկտեմբեր ամիսները, մասնավորապես՝ · Տեղեկատվության տարածում · Ուսանողներին և ֆակուլտետներին խորհրդատվության տրամադրում · Դիմումների և այլ փաստաթղթերի հավաքագրում, մշակում · Մրցութային հանձնաժողովների կազմի քննարկում և հաստատում, · Մրցույթի կազմակերպում, հաղորդակցում ուսանողների և աշխատակիցների հետ · Ուսումնառության, դասավանդման և վերապատրաստման պայմանագրերի կազմում · Ավիատոմսերի և մուտքի արտոնագրերի ստացման գործընթացների կազմակերպում · Ուսանողների վերադարձից հետո կրեդիտների ճանաչման գործընթացի կազմակերպում Հոկտեմբեր ամսին Էրազմուս+ օրերի շրջանակներում անցկացվել են տեղեկատվական հանդիպումներ բուհի աշխատակիցների և ուսանողների համար: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է Էրազմուս+ ծրագրի նորությունները, միջազգային՝ բարձրագույն կրթության կարողությունների զարգացման, կրեդիտային շարժունության ծրագրերի մանրամասները, դրամաշնորհային ծրագրերը, դրանց դիմելու պայմանները, ընթացակարգն ու ընձեռած հնարավորությունները:

Յյուրիխի արվեստների համալսարանի և ԱՐՏԱՍ հիմնադրամի համագործակցության շրջանակներում փետրվարի 20-մարտի 6-ը գեղարվեստական կրթության ֆակուլտետի թվով 9 ուսանող պրակտիկա են անցել Յյուրիխի արվեստների համալսարանում:

Մարտի 28-ից ապրիլի 8-ը Գեղարվեստական կրթության ֆակուլտետում իրենց երկշաբաթյա պրակտիկան են անցկացրել Շվեյցարիայի՝ Լյուցերնի, Բազելի և Յյուրիխի արվեստի համալսարանների 7 ուսանող: Ծրագրին մասնակիցել են նաև նույն համալսարանների 3 դասախոսներ, ինչպես նաև Արտաս հիմնադրամի ներկայացուցիչները: Ծրագրի մասնակիցներին են միացել նաև Վրաստանի Իլյայի անվան պետական և Աբխազիայի պետական մանկավարժական համալսարանների 4 դասախոս:

ԱՐՏԱՍ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում օգոստոսի 21-27-ը ՀՊՄՀ Աղավնաձորի ուսումնական բազայում իրականացվել է <<Հայկական դպրոցներում <<Տեխնոլոգիա>> և <<Կերպարվեստ>> առարկաների ուսուցիչների կարողությունների ամրապնդման>> վերապատրման ծրագրի առաջին փուլը, իսկ 2-րդ փուլը՝ հոկտեմբերի 9-15-ը:

Ապրիլ և նոյեմբեր ամսիներին Իտալիայի Մաչերատայի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ՀՊՄՀ Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի , ինչպես նաև Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2 աշխատակից երկամսյա դասախոսություններով են հանդես եկել Մաչերատայի համալսարնում:

Սեպտեմբեր ամսից սկսած Ամերիկյան դեսպանատան կողմից ֆինանսավորվող Ֆուլբրայթ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Օտար լեզուների ֆակուլտետում դասախոսություններով է հանդես գալիս դասախոս Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանից: Նույն ծրագրի շրջանակներում հատուկ կրթության ֆակուլտետը հունվար ամսից մեկ կիսամյակ կհյուրընկալի ԱՄՆ Գրանդ Վելի պետական համալսարանի դասախոսին:

Սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 26-ը Նիդերլանդների Մաստրիխտի համալսարանի Հոգեբանության ֆակուլտետեի ուսանողները և ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները միասին իրականացրել են նախագծային աշխատանք, որի արդյունքները ամփոփվել են դեկտեմբերի 9-ին կազմակերպելով միջոցառում Մաստրիխտի համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ :

ՀՊՄՀ Կենսաբանության բաժնի շրջանավարտ Անուշ Առաքելյանի միջամտությամբ /Էրազմուս Մունդուս շրագրի շրջանակներում սովորում է Կրետեի համալսարանում/ ՄՀԲ-ն Կրետեի համալսարանի հետ բանակցություններ է վարել համագործակցություն սկսելու համար: Արդյունքում վերջինիս հետ կնքվել է Փոխըմբռնման հուշագիր: Ինչպես նաև Կրետեի համալսարանի հետ նախատեսվում է համագործակցություն Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հունաստանի Պանթեոնի համալսարանի հետ վարած բանակցությունների արդյունքում ՀՊՄՀ-ն ներառվել է Էրազմուս + միջազգային կրեդիտային շարժունության ծրագրում և շարժունությունները կիրականացվեն 2023թ. ից սկսած:

Դեկտեմբեր ամսին Փոխըմբռնման հուշագիր է ստորագրվելու Գերմանիայի Զիգենի համալսարանի հետ:

Հոկտեմբերի 12-ից 22-ը Ամերիկյան դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Բաց Աշխարհ» ծրագրի շրջաբնակներում ՀՊՄՀ 2 աշխատակից ԱՄՆ—ում մասնակցել են Կրթությունը թվային դարում խորագրով վերապատրաստումների:

Ընդլայնվել է համագործակցությունը ԱՊՀ երկրների բուհերի հետ առկա և առցանց ձևաչափով, մասնավորապես.

Հուլիսի 6-ին Նիժնի Նովգորոդի Կ. Մինինի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ իրականացվել է փոխըմբռնման հուշագրի և կից ճանապարհային քարտեզի համաձայնեցում և ստորագրում հեռակա ձևաչափով:

Հուլիսի 26-ին անցկացվել է օնլայն հանդիպում Նիժնի Նովգորոդի Ն. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի ներկայացուցիչների հետ նվիրված համագործակցության համաձայնագրի ստորագրման և հետագա համատեղ միջոցառումներին:

Հուլիսի 29-ին անցկացվել է օնլայն հանդիպում Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ներկայացուցիչների հետ 2022 թ. աշնանը նախատեսվող միջոցառումների վերաբերյալ:

ՄՀԲ 1 աշխատակցուհի սեպտեմբերի 26-30-ը մասնակցել է Ստավրոպոլի Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանում անցկացվող «Ռուսերենի՝ որպես ոչ մայրենի/օտար լեզվի դասավանդման արդիական հիմնախնդիրները. ռուսաստանյան և արտասահմանյան փորձ» խորագրով միջազգային մեթոդական գիտաժողովին և հանդես է եկել զեկուցումով:

Սեպտեմբերի 20-ին ՀՊՄՀ-ն հյուրընկալել է Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան ռուսաստանյան մանկավարժական համալսարանի պատվիրակությանը:

Շարունակվել է համագործակցություն Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հետ: ՀՊՄՀ-ի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը սեպտեմբերի 22-ին մասնակցեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հանրային խորհրդի՝ ԱՊՀ երկրներում մանկավարժական կադրերի պատրաստման բազային կազմակերպության նիստին:

Հոկտեմբեր ամսին ՀՊՄՀ-ն հյուրընկալել է Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի պատվիրակությանը և այցի շրջանակներում Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի առաջատար մասնագետները «Ռուսաց լեզվի և գրականության դպրոցական դասավանդման նոր մոտեցումներ» դասընթացի շրջանակներում որակավորման բարձրացման քառօրյա դասընթացներ անցկացրեցին թվով 130 մանկավարժների և ՀՊՄՀ-ի Պատմության և հասարակագիտության, Օտար լեզուների ֆակուլտետների դասախոսների համար:Նույն համագործակցության շրջանակներում ՀՊՄՀ 3 ուսանող հոկտեմբերի 24-29-ը մասնակցեցին Ստավրոպոլում կայացած Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի (ՌԴ) կազմակերպած «Ազգային տնտեսական համակարգերի զարգացման միտումները գլոբալ վերափոխումների դարաշրջանում» խորագրով «Աշնանային դպրոց-2022» ծրագիրին: Նախատեսվում է նաև իրականացնել Ձմեռային դպրոց:

Հոկտեմբերի 21-ին ՀՊՄՀ-ի հրավերով բուհում հյուրընկալվել էր Էրգոթերապիստների համաշխարհային ֆեդերացիայի նախագահ Սամանտա Շենը: Կառույցը կարևոր դեր ունի ոլորտում. համակարգում է աշխարհում գործող էրգոթերապիստների ասոցիացիաներն ու կրթական ծրագրերի աշխատանքները: Այցի շրջանակներում ֆեդերացիայի նախագահը հանդիպեց բուհի շրջանավարտ-էրգոթերապիստների հետ, ներկայացրեց ոլորտի ներկա վիճակը, առկա խնդիրներն ու մարտահրավերները: Բանախոսն անդրադարձավ նաև ֆեդերացիայի ծրագրերին, մեթոդաբանությանն ու դրանց օժանդակմանը: Հանդիպում տեղի ունեցավ նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների հետ, որտեղ քննարկվեց

Մանկավարժական համալսարանում «էրգոթերապիա» մասնագիտությունը բակալավրիատի կրթական ծրագրում վերակագնելու անհրաժեշտությունը:

Նոյեմբերի 11-ին ՀՊՄՀ-ում կայացավ «Ռուսերենը՝ 21-րդ դարում մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխավոր» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված մեծանուն մանկավարժ, պրոֆեսոր Բելա Եսաջանյանի ծննդյան 90-ամյակին: Ձեռնարկին ներկա էին Հայաստանում ՌԴ դեսպանատան, «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցիչներ:

Դեկտեմբերի 13-15-ը Հայկական պետական մանկավարժական և Հյուսիսկովկասյան դաշնային (ՌԴ, ք. Ստավրոպոլ) համալսարանների նախաձեռնությամբ՝ Ռոսսոտրուդնիչեստվոյի աջակցությամբ ՀՊՄՀ-ում կիրականացվի միջազգային ձմեռային դպրոց «Ծրագրային գործունեության դպրոց» խորագրով, որին կմասնակցեն Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի և Տաջիկստանի ուսանողները՝ թվով 50 հոգի:

Դեկտեմբերի 17-ին Էրազմուս+ MODEST ծրագրի շրջանակում կազմակերպվել է «Ձմեռային դոկտորական դպրոց» ՀՊՄՀ ասպիրատների և հայցորդների համար ծրագրի շրջանակներում մշակված դասընթացներին ծանոթացնելու և վերապատրաստում իրականացնելու նպատակով :

Խնդիր 2: Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործունեությունը՝ ակտիվ ինտեգրելով եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին:

«Էրազմուս+» ծրագրի «MODEST» նախագծի շրջանակում Երևանի պետական համալսարանում իրականացվել է քառօրյա հանդիպումների շարք՝ (դոկտորական դպրոց) ծրագրի գործընկեր համալսարանների ներկայացուցիչների և ասպիրանտ-հետազոտողների հետ: Դոկտորական դպրոցին մասնակցել են ՀՊՄՀ ասպիրանտները և դասախոսները:

Նոյեմբերի 3-ին Լատվիայի համալսարանում մեկնարկեց Էրազմուս+ MODEST (Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը) ծրագրի ամփոփիչ համաժողովը: Որպես գործընկեր համալսարան՝ համաժողովին մասնակցում էր նաև Մանկավարժական համալսարանը՝ ի դեմս աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի: Նույն ծրագրի շրջանակներում Աղավնաձորի ուսումնական բազայում թվով 10 ասպիրանտների համար դեկտեմբեր ամսին կանցկացվի աշնանային դոկտորական դպրոց: Դպրոցի նպատակն է ասպիրանտներին զինել հետազոտություն և գիտական նորարարություն իրականացնելու հմտություններով և գիտելիքներով:

Մայիսի ամսին Էրազմուս+ ARMDOCT ծրագրի շրջանակներում Լիտվայի Վիլնյուսի համալսարանում տեղի է ունեցել ուսուցողական այց ծրագրի գործընկեր համալսարանների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Հայաստանից, Ֆրանսիայից, Պորտուգալիայից և Իտալիայից: Ուսուցողական այցի նպատակն է ծանոթանալ դոկտորական կրթության վերաբերյալ Լիտվայի օրենսդրությանն ու քաղաքականությանը, կանոնակարգերին և ֆինանսավորմանը, Վիլնյուսի համալսարանում դոկտորական կրթության կազմակերպման գործընթացներին, դոկտորական դպրոցների հիմնական գործառույթներին, ինչպես նաև քննարկել ծրագրի ընթացքը, իրականացվող գործողություններն ու խմբերի աշխատանքները:

ՀՊՄՀ 5 աշխատակից նոյեմբերի 14-18-ը մասնակցել են Էրազմուս+ ARMDOCT/Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան/ ծրագրի շրջանակներում Իտալիայի Տերամոյի համալսարանում կազմակերպված ուսուցողական այցին: Այցի ընթացքում Իտալիայում դոկտորական կրթության կազմակերպման գործընթացին, Տերամոյի համալսարանի հետազոտական աշխատանքներին և

միջառաջկայական տիրույթում իրականացվող հետազոտություններին, հետազոտական աշխատանքների որակի ապահովման գործընթացին:

Դեկտեմբերի 12-ից 14-ը Better Teaching for Better Learning ծրագրի շրջանակներում նախատեսվում է այց Յյուրիխի մանկավարժական համալսարան ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքները քննարկելու նպատակով:

Բուհը նախապատրաստական աշխատանքներ է սկսել Էրազմուս Պլյուս կարողությունների զարգացման ծրագրերի շրջանակներում 3 դրամաշնորհային ծրագրերի մշակման և ֆինանսավորման ներկայացման ուղղությամբ:

2022 թվականի ընթացքում միջազգային համագործակցության բաժինը աջակցել է մեծաթիվ միջազգային գիտաժողովների կազմակերպմանը այդ թվում՝

Փետրվարի 25-ին «Մանկավարժական համալսարանում ուսուցիչների վերապատրաստման որակի մոնիտորինգի կազմակերպում» միջազգային հանրային խորհրդի նիստ՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան:

Փետրվարի 28-ին «Ուսուցում ռուսերեն» միջազգային օնլայն դասախոսությունների անցկացում: Ա.Ս. Պուշկինի անվան Ռուսաց լեզվի պետական ինստիտուտ

Մարտի 10-ին «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660-ամյակ» միջազգային հայերենագիտական գիտաժողով:

Մարտի 18-ին «Ուսուցիչների կրթության զարգացումը ԱՊՀ-ում» միջազգային կլոր սեղան:

Մարտի 31-ին «Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողով

Ապրիլի 8-ին և 9-ին «Անձի զարգացման արդիական խնդիրները արդի իրականությունների պայմաններում» III միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ Ռուս-Հայկական Համալսարան:

Մայիսի 12-ին «Մանկավարժության արդի հիմնախնդիրներ, լուծումներ» խորագրով միջազգային գիտաժողով:

Հունիսի 9-ին «Ոսկե դասախոսություն» լուսավորչական միջազգային առցանց նախագիծ:

Հունիսի 25-ին և 26-ին «Շախմատը կրթության մեջ» միջազգային առցանց երկօրյա գիտաժողով. ՖԻԴԵ-ի «Շախմատը կրթության մեջ» հանձնաժողով (EDU) և ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի համատեղ նախաձեռնություն:

Հունիսի 29-ին և 30-ին «Հայության տեղաշարժերը և հասարակական-քաղաքական փոխակերպումները 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողով,

Հունիսի 29-ին «Հայության տեղաշարժերը և հասարակական-քաղաքական փոխակերպումները 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին» միջազգային գիտաժողով,

Հոկտեմբերի 6-ին և 7-ին «Մաթեմատիկական կրթություն-10» միջազգային գիտաժողով

Հոկտեմբերի 10-ին «ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյա հոբելյանին նվիրված», միջազգային գիտագործնական գիտաժողով, Արտասահմանյան գրականության ամբիոն,

Հոկտեմբերի 13-ին «Եվրոպան և հարևան երկրները» միջազգային գիտաժողով

Հոկտեմբերի 21-ին «Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները» միջազգային գիտաժողով:

Հոկտեմբերի 20-ին «Ոսկե դասախոսություն» միջազգային կրթական առցանց նախագիծ 2022թ., Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան

Նոյեմբերի 10-ին «Ռուսերենը՝ 21-րդ դարում մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցման երաշխավոր» խորագրով միջազգային գիտաժողով

Նոյեմբերի 15-ին Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, գիտության և կրթության փորձագիտական խորհուրդ ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովին կից գիտության և կրթության փորձագիտական խորհրդի նիստ:

Նոյեմբերի 24-ին «Մանկավարժական բուհերի Եվրասիական ասոցիացիայի ընդհանուր հաշվետու և ընտրական ժողով» ԵԱՀՀ անդամ բոլոր բուհերի ղեկավարների մասնակցությամբ

Նոյեմբերի 25-ին և 26-ին «Ռուս ուսուցիչների մարդաբանական առաքելությունը ժամանակակից աշխարհում» XVII միջազգային գիտագործնական կոնֆերանսի լիագումար նիստ: Ստավրոպոլի պետական մանկավարժական ինստիտուտ,

Դեկտեմբերի 8-ին «Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման և լեզվաբանության արդի խնդիրները» միջազգային 3-րդ գիտաժողով

Դեկտեմբերի 15-ին և 16-ին «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողով

Խնդիր 3: Նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համակազմի աճին ՀՊՄՀ-ում՝ բարձրացնելով ՀՊՄՀ տեսանելիությունը միջազգային կրթական տարածքում:

Էրազմուս+ BOOST ծրագիր շրջանակներում ստեղծված www.studyinarmenia.am կայքը 2022 թվականի ընթացքում պարբերաբար թարմացվել է տեղեկատվությամբ և ուղարկվել է արտասահմանյան համագործակցի համալսարաններ և ՀՊՄՀ դիմող արտասահմանյան ուսանողներին:
Նախապատրաստական բաժնի միջազգային ուսանողների համար ապրիլ ամսին կազմակերպվել է բաց դաս Դիլիջանում: Բաժնի կողմից տրամադրված թափանցիկ տեղեկատվության և համագործակցային աշխատանքի արդյունքում ՀՊՄՀ նախապատրաստական բաժին է դիմել թվով 26 ունկնդիր Իրանի Իսլամական հանրապետությունից՝ գերմաներեն լեզվի նախապատրաստական բաժնում սովորելու համար և 45 սփյուռքահայ ուսանողներ: ՄՀԲ-ն իրականացրել է արտասահմանցի ուսանողների գործերի ընդունում, գրանցում, տվյալների էլեկտրոնային կառավարում և կացության քարտերի ստացում ՀՀ Անձնագրային և վիզաների վարչությունից:

ՀՊՄՀ-ն ընդգրկվել է https://www.topuniversities.com/universities/khachatur-abovyan-armenian-state-pedagogical-university համալսարանների վարկանշային աղուսյակում:

Աշխատանքներ են իրականացվում ՀՊՄՀ-ն QS Ranking վարկանշային էջում ընդգրկելու համար:

Հունիս ամսից ՀՊՄՀ-ն մեկնարակել է համագործակցություն ամերկյան SRAS կազմեկերպության հետ: Համագործակցության շրջանակներում 2023 թվականի ամռանը ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետը

կիյուրընկալի շուրջ 20 ամերիկացի ուսանողների ֆակուլտետում ռուսաց լեզվի դասընթացների մասնակցելու նպատակով:

Կատարման վերլուծություն

2022 թվականի ընթացքում միջազգային համագործակցության բաժինը իրականացրել է լայնածավալ գործունեություն ուղղված ՀՊՄՀ միջազգայնացմանը հիմք ընդունելով բաժնի տարեկան աշխատանքային պլանը: Ընդլայնվել է համագործակցությունը Ռուսաստանի և Եվրոպայի մի շարք բուհերի հետ: Կնքվել են համագործացկության պայմանագրեր և հուշագրեր Լեհաստանի, Արգենտինայի, Հնդկաստանի, Գերմանիայի, Հունաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Շարունակվում է համագործակցությունը Ռուսաստանի, Իսպանիայի, Իտալիայի, Ֆինլանդիայի, Լիտվայի, Ավստիրայի, Սլովակիայի, Մեծ Բրիտանիայի ուսումնական հաստատությունների հետ/Պատկեր 1/:

Պատկեր1. ՀՊՄՀ համագործակից երկրներ

Իտալիայի Մաչերատայի համալսարանի հետ համագործակցության արդյունքում ՀՊՄՀ 2 դասախոս հնարավորություն են ստացել 2 ամիս դասավանդել Մաչերատայի համալսարանի ուսանողներին: ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցության շրջանակներում Ֆուլբրայթ դրամաշնորհային ծրագրով ՀՊՄՀ-ն հյուրընկալել է ԱՄՆ համալսարանների դասախոսների ՀՊՄՀ-ում մեկ տարի դասավանդելու նպատակով:

Էրազմուս+ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել է 61 շարժունություն եվրոպական համալսարաններ/Պատկեր 2/:

Պատկեր 2.



Այսպիսով, 2022 թվականի ընթացքում կրեդիտային շարժունության կողմից ֆինանսավորվող շարժունությունների ընդհանուր գումարը կազմել է 113 500 եվրո/Պատկեր 3/:

Պատկեր 3.

ՀՊՄՀ-ն ընդգրկված է Հայաստանի դոկտորական կրթության բարեփոխումներին ուղղված 2 կարողությունների զարգացման ծրագրերում, որոնց շրջանակներում մշակվել է ՀՀ-ում դոկտորական կրթության քաղաքականություն և ընթացակարգեր, ստեղծվել է դոկտորական կրթության կենտրոն, մշակվել են դասընթացներ ասպիրանտների փափուկ հմտությունների զարգացման համար:

Բաժինը ակտիվորեն իրականացրել է՝

դրամաշնորհային ծրագրերի մշակում և ներկայացում ֆինանսավորման

շարունական աջակցություն արտասահմանցի ուսանողներին

միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տարածում

աջակցություն միջազգային գիտաժողովների կազմակերպման հարցում

շարժունության և միջազգային այլ ծրագրերի մասնակցող ուսանողների և դասախոսների անհրաժեշտ գործողությունների համակարգում

2022 թվականի ընթացքում բաժինը իրականացրել է 23 միջազգային գիտաժողովների կազմակերպման և մասնակցության աշխատանքներ : Բաժինը համակարգել է ՀՊՄՀ 100- ամյակին նվիված միջոցառումների շարքը ընգրկելով համալսարանի միջազգային գործընկերներին, արտասահմանյան և տեղական կազմակերպություններին :

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ֆակուլտետների կարողությունների զարգացում և նախաձեռնողականության աճ	ՀՊՄՀ ուսանողական կացարանի բացակայություն
ՀՊՄՀ ռազմավարական առաջնահերթություն	Ֆինանսական միջոցների սակավություն
Ուսանողների անգլերեն լեզվի իմացության բարելավում	
Երկարաժամկետ փոխանակման ծրագրերի առկայություն	Մոտիվացիայի պակաս ուսանողների մոտ
ՀՊՄՀ կարողությունների զարգացում դրամաշնորհային ծրագրերի միջոցով	
Հնարավորություններ	Վտանգներ

Ռուսաստանյան համալսարանների հետ համագործակցության ակտիվացում	Բնակարանների վարձավճարի գնաճ, որպես խոչընդոտ արտասահմանցի ուսանողների ներհոսքի
Օտար լեզու սովորելու մոտիվացիա ուսանողների մոտ	Կովիդ 19 համաճարակի վերսկսում
Դրամաշնորհային նոր ծրագրերի մշակում	Պատերազմական իրավիճակների պատճառով Հայաստանի գրավչության անկում արտասահմանցի ուսանողների մոտ

Անձնակազմի հաշվառման բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
1	Իրականացնել Համալսարանի աշխատողների փաստաթղթերի գործավարությունը. ● Նախապատրաստում է աշխատանքի ընդունման, ազատման, արձակուրդի տրամադրման, գործուղման և այլ աշխատանքային բնույթի հրամանների նախագծեր. ● Կազմում է աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր) և ներկայացնում է Համալսարանի ռեկտորի հաստատմանը. ● Կազմում և տրամադրում է աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանքներ. ● Արխիվացնում է ազատված աշխատակիցների անձնական գործերը. ● ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկում է աշխատակիցների աշխատանքային պայմանագրերի ժամկետները, իրականացնում է համապատասխան գործընթացները. ● Կազմակերպում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի և Համալսարանի ստորաբաժանումների աշխատատեղերի տարակարգերի թափուր աշխատատեղերի համար հայտարարված մրցույթների աշխատանքները. ● Սահմանված կարգով կազմում է Համալսարանի աշխատողների համար անձնական գործեր և ապահովում անձնական տվյալների գաղտնիությունը:
2	Ապահովել Համալսարանի կադրային հաշվառման աշխատանքները: ● Կազմում է աշխատողների արձակուրդի գրաֆիկ և ներկայացնում է Համալսարանի ռեկտորի և Արհեստակցական կազմակերպության ղեկավարի հաստատմանը. ● Թվայնացնում է Համալսարանի անձնակազմի անձնական տվյալները,

ստեղծում տվյալների բանկ (ՀԾ Ձեռնարկություն).

- Իրականացնում է Համալսարանի հիմնական աշխատակիցների բժշկական ապահովագրության գործընթացը:
- Աշխատողներին ծանոթացնում է Համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոնակարգին և անհրաժեշտ այլ փաստաթղթերին.
- Համագործակցում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ.
- Իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորների հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

Իրականացնում է Հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի որոշումներից բխող համապատասխան գործընթացները:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
խնդիր1 h/h1	Ուսումնասիրել և վերլուծել առաջատար համալսարաններում մարդկային ռեսուրսների կառավարման մոդելներն ու ձևերը ՌԾ2022-2025,	20022-2023 Շարունակական	Ուսումնասիրման և քննարկման փուլ

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	Հունվար-դեկտեմբեր	Համալսարանի ռեկտորի 25.12.2015թ. թիվ 2-1267 հրամանով հաստատված «Ստորաբաժանումների տեսակները, աշխատեղերի տարակարգերը և դրանց զբաղեցման կանոնակարգ»-ի համաձայն	Հայտարարվել և կազմակերպվել են թվով 13 մրցույթ,որին մասնակցել է 52 հավակնորդ:

		հայտարարել և կազմակերպել մրցույթներ թափուր աշխատատեղերի համար:	Արդյունքում տեղակալվել է 12 թափուր հաստիք այդ թվում՝ 2- դեկանի օգնական, 4- դեկանատի մասնագետ; 4- ամբիոնի մասնագետ, 2-մասնագետ վարչական ստորաբաժաններում : Նշված գործընթացն իր մեջ ներառում է՝ ❖համապատասխան բաժնի կողմից ներկայացված և ռեկտորի կողմից մակագրված զեկուցագիրը ❖հայտարարությունների պատրաստումը՝ լրատվության վարչության հետ համատեղ հայտարարությունների հրապարակումը՝ ՀՊՄՀ-ի կայքում ❖համապատասխան փաստաթղթերի հավաքագրումն ու ամփոփումը ❖ մրցույթի անցկացման և արդյունքների արձանագրում ❖հրամանի նախագծի պատրաստում:
2	Հունվար- դեկտեմբեր	Իականացնել Համալսարանի աշխատողների փաստաթղթերի գործավարությունը	Բաժինն ապահովել է Համալսարանի ռեկտորի հրամանների ձևակերպումները / կադրային գծով, թվով 700 հրաման/: Հրամանների կատարումն իր մեջ ներառում է համաձայն ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի հետևյալ գործառույթները՝ աշխատանքի ընդունում և ազատում արձակուրդի գրաֆիկի կազմում, հաստատում , ձևակերպում· աշխատանքային պայմանագրերի և համաձայնագրերի կազմում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին, աշխատակիցներին աշխատանքային պայմանագրերի ժամկետների վերահսկում, համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի՝

			ծանուցումների կազմում, տրամադրում, գրանցում: աշխատանքից ազատվածների գործերի և հրամանագրքերի արխիվացում: Աշխատակիցների պահանջով պատրաստվել և տրամադրվել են տեղեկանքներ՝ թվով 230:
3	Օգոստոս-սեպտեմբեր	Կազմակերպել նոր 2022-2023 ուսումնական տարվա Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում:	Պրոֆեսորադասախոսական աճնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժնի կողմից հաստատված ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասաբաշխման համաձայն , ըստ ամբիոնների ներկայացվել են ՊԴԱ –ի 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության և ծանրաբեռնվածության հրամանների նախագծերը, կազմվել են աշխատանքային պայմանագրեր, համաձայնագրեր, մուտքագրվել են նոր տվյալներ թվայնացված բազայում (ՀԾ): 2022թ. ՊԴԱ /Ուսանող հարաբերակցությունը եղել է 1/9
4	Հունվար-դեկտեմբեր	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության հետ Համալսարանի աշխատակիցների կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրերի ապասարկման գործընթաց:	Այդ գործընթացն ապահովվելու համար բաժինը համագործակցում է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության հետ, կատարում աշխատակիցների տվյալների բազայի ճշտում, տրամադրում պայմանագրերը, Համալսարանի հաշվապահություն ներկայացնում ամսական հաշվետվությունները, ապահովում առցանց ապահովագրության պահանջները՝ Ապահովագրված անձի ուղեցույցը տրամադրում բոլոր ապահովագրված աշխատակիցներին:

3. Հաշվետու տարում Անձնակազմի հաշվառման բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/







Աշխատանքի թվարկում

Վերահսկվում են աշխատանքային պայմանագրերի ժամկետները: Ժամանակին տրամադրվում են Ծանուցումները, ստորաբաժանման ղեկավարներին իրազեկում ստորաբաժանման, ամբիոնի աշխատակիցների պայմանագրային ժամկետների մասին:

Համագործակցում է Գիտահետազոտական կենտրոնի Գիտաուսումնական աշխատանքների համակարգման բաժնի հետ՝ համալսարանի աշխատակիցների վերապատրաստման տվյալներն ուսումնասիրելու և թվայնացված բազայում մուտքագրելու համար:

Համալսարանի բազային և թեմատիկ գիտական ծրագրերի աշխատակիցների տվյալներն մուտքագրվել են թվայնվացված բազայում, կազմվել են աշխատանքային պայմանագրեր և կազմվել են անձնական գործեր:

Պատասխանել ենք բաժնին հասցեագրված բոլոր գրություններին նամակներին, ինչպես թղթային այնպես էլ էլեկտրոնային տարբերակով:

Կատարվել է ՊԴԱ-ի տարիքային բաշխվածության վերլուծություն՝ որի արդյունքում փաստվել է դասախոսական կազմի միջին տարիքի թվաքանակի բարձրացում:

Կատարման վերլուծություն

Բաժնի աշխատանքները կատարվել են պատշաճ, անխափան, բարեխիղճ և ժամանակին: Բոլոր հաշվետվությունները ներկայացվել են ժամկետներում:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բաժնի գրեթե բոլոր գործառույթները իրականացվում են էլեկտրոնային(ՀԾ Ձեռնարկություն)տարբերակով և ընթանում են հստակ, կանոնակարգված մեխանիզմներով:	
Համալսարանի աշխատեղերի և ՊԴԱ պաշտոնների տեղակալման կանոնակարգերի առկայությունը:	
Հնարավորություններ	**Վտանգներ**
Վերապատրաստումներ	Մարդկային գործոնի առկայություն

Հատուկ բաժին

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
	Բաժնում գտնվում է բուհի զինանշանով կնիքը: Բաժինը անմիջականորեն ենթակա է ռեկտորին և պրոռեկտորներին: Բաժնի հիմնական նպատակները՝ գործունեությունն իրականացնում է համալսարանի կանոնադրությամբ և այլ նորմատիվ ակտերով սահմանված դրույթների համաձայն: Բաժնի աշխատանքները հիմնականում կապված են ՀՀ զինկոմիսարիատների հետ և պարբերաբար ստուգվում են վերջիններիս կողմից: (այժմ՝ տարածքային ստորաբաժանումներ) ՀՀ ԿԳ Նախարարի 17.11.2011թ. թիվ 1242-ն հրամանի 14-րդ կետի համաձայն մեկօրյա ժամկետում համապատասխան գրություններ են ուղարկվել զինկոմիսարիատներ՝ տարկետման իրավունքով սովորող և բուհից հեռացված ուսանողների վերաբերյալ: Ամառային և ձմեռային զորահավաքի համար 4-րդ կուրսի ուսանողների մասին ուղարկվում է տեղեկատվություն: Զինկոմիսարիատներ ներկայացնելու համար, տարկետման իրավունքից չօգտվող զինակոչիկ ուսանողներին տրվում են տեղեկանքներ իրենց մասնագիտության մասին: Ըստ կանոնակարգի 2014 թ. ՀՀ կառավարության որոշման, ձմեռային զորակոչի հետ կապված բաժինը լավագույնս համագործակցում է հանրապետության 14 զինկոմիսարիատների հետ, ուսանողների մասին տրվում են լրացուցիչ տեղեկություններ: Դեկանների հետ համագործակցելով՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա ուսանողներին զգուշացվում է ժամանակին համապատասխան զինկոմիսարիատներ ներկայանալու մասին:
	Բաժնի խնդիրներն են՝ 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապահովել գաղտնի փաստաթղթերի շրջանառությունը. 2) ապահովել համապատասխան տեղեկատվության ժամանակին և սահմանված կարգով տրամադրումը ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն, զինվորական կոմիսարիատներ և իրավասու այլ մարմիններ. 3) կնքել Համալսարանի անունից տրվող փաստաթղթերը: Բաժինն իր խնդիրների իրականացման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 1) ապահովում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված գաղտնիության կանոններին համապատասխան գաղտնի փաստաթղթերի շրջանառությունը, ներկայացնում համապատասխան հաշվետվություններ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և Հայաստանի Հանրապետական ու Երևանի թիվ 2 զինվորական կոմիսարիատներ և իրավասու այլ մարմիններ. 2)Համալսարանի ռեկտորի հրամանների համաձայն՝ իրականացվում է աշխատողների, ուսանողների ընդունման և ավարտման շարժի ապահովումը, սահմանված կարգով իրազեկվում է համապատասխան զինկոմիսարիատներին՝ ասպիրանտների ընդունման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողների աշխատանքի ընդունման մասին.

3) Համալսարանից հեռացված /ազատված/, ինչպես նաև «Պատիվ ունեմ»ծրագրին մասնակցող արական սեռի ներկայացուցիչների վերաբերյալ հրամանները սահմանված կարգով և բովանդակությամբ 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է համապատասխան զինկոմիսարիատին, ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության պետին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

4) իրականացվում է պարտադիր զինծառայության ենթակա ուսանողների տեղեկանքների ձևակերպումը, դրանք հանձնում համապատասխան զինկոմիսարիատներ և կատարում նրանց շարժի հետ կապված բոլոր անհրաժեշտ գործառույթները.

5) նախապատրաստում է ՀՀ իրավապահ մարմիններից և այլ մարմիններից ստացված գրությունների նախագծեր՝ սահմանված ժամկետներում.

6) պատասխանատու է Համալսարանի անունից ձեռքբերվող բոլոր տեսակի կնիքների պատվիրման և դրանք ըստ նշանակության հանձնելու գործընթացի համար, պահպանում է Համալսարանի կնիքը.

7) պատասխանատու է ամփոփիչ ատեստավորման քննությունների մատյանների հաշվառման և վավերացման համար.

8) իրականացնում է Համալսարանի կողմից տրամադրվող ավարտական փաստաթղթերի ստուգման և վավերացման համար նախատեսված աշխատանքները.

9) իրականացնում է Համալսարան 1-ին կուրս ընդունված առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ստուգման գրքույկների կնքման աշխատանքները.

10) Իրականացնում է արտաքին կառույցներում հաստատման ներկայացվող փաստաթղթերին՝արտասահման մեկնող շրջանավարտների դիպլոմներին, միջուկներին ռեկտորի ստորագրությամբ ամրակալվում է հավելյալ թերթ /ապոստիլով վավերացնելու համար/:

11) իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	Սեպտեմբեր-հոկտեմբեր	Ուղղարկվել են տեղեկանքերը համապատասխան զինկոմիսարիատներին տարկետում ձևակերպելու	Ռեկտորի ստորագրությամբ
2	շարունակական	Արտասահմանյան երկրներ մեկնող բազմաթիվ շրջանավարտների դիպլոմներին և միջուկներին հավելյալ թերթ ամրակալելու	Պրոռեկտոր Գևորգյան Սրբուհու ստորագրությամբ

3	շարունակական	Շրջանավարտների փաստաթղթերը ծրարներով վավերացնելու և արտասահման ուղարկելու	Պրոռեկտոր Հարությունյան Մարիաննայի ստորագրությամբ
4	շարունակական	1-ին կուրս ընդունված արական սեռի ուսանողների / առկա, հեռակա, մագիստրատուրա/ T-2 անձնական քարտերի լրացում	Տվյալները ուղարկվում են համապատասխան զինկոմիսարիատներ
5	շարունակական	Անձնակազմի հաշվառման բաժնից ստացվող հրամանների համաձայն արական սեռի աշխատողների և դասախոսների քարտերի լրացում	Տվյալները ուղարկվում են համապատասխան զինկոմիսարիատներ ռեկտորի ստորագրությամբ
6	շարունակական	Մարտական հերթապահության, ապրիլյան, 2020թ. , պատերազմին մասնակցած զեղչային արտոնությունից օգտվող ուսանողների զինգրքույկներից համապատասխան փաստաթղթեր վավերացում բաժնի պետի ստորագրությամբ	Մարտական գործողություններին մասնակցած, մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների զինգրքույկների հավաստիության հաստատումը:
7	շարունակական	Բոլոր ներսի և դրսի փաստաթղթերի կնքում ռեկտորի և պրոռեկտորի ստորագրությամբ	
8	Ընդունելության քննությունների ընթացքում	Ստուգվում է արական սեռի դիմորդների փաստաթղթերը և վավերացվում բաժնի շտամպով	Ընդունող հանձնաժողով
9	շարունակական	Հատուկ բաժնի ընթացիկ և պլանավորված աշխատանքների մասին անմիջապես զեկուցվում է ռեկտորին կամ համապատասխան պրոռեկտորին:	

3. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Բուհի ռեկտորի հրամանների հիման վրա բաժինը շարունակաբար իրականացրել է բոլոր աշխատակիցների, դասախոսների, ուսանողների ընդունման և ավարտման շարժը: Ասպիրանտների և դասախոսների ընդունման մասին սահմանված կարգով իրազեկվել է համապատասխան զինկոմիսարիատներին: Քննաշրջանների ընթացքում բաժինը համագործակցում է ֆակուլտետների հետ. մասնավորապես կնքվում են մեծ քանակությամբ կանչ-տեղեկանքներ, բանկային փոխանցումներ, ակադեմիական տեղեկանքներ, քննական տեղեկագրեր, պայմանագրեր, լուծարքի գրաֆիկներ, անհատական հաշվետվության տիտղոսաթերթեր, հաշվապահական փաստաթղթեր, արխիվի տեղեկանքներ և այլն: Բաժինը համագործակցում է նաև կադրերի բաժնի հետ. մասնավորապես կնիքվում են բոլոր համաձայնագրերը, հիշեցումները և պայմանագրերը: Բաժնում կնիքվում են նաև մեծ քանակությամբ հավաստագրեր, գովասանագրեր, պատվոգրեր, ատենախոսությանը վերաբերվող կարծիքներ, գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակներ, մասնագիտական խորհրդի կողմից կազմված ԲՈՀ ուղարկվող և բազմաբնույթ այլ փաստաթղթեր: Բաժնի կողմից կատարվել են մագիստրոսական թեզերի մատյանների համարակալման, կնքման և վավերացման աշխատանքներ, մագիստրատուրայի շրջանավարտների ցուցակների ստուգումը և դիպլոմների կնքումը, ինչպես նաև շրջիկ թերթիկների ստուգումը և կնքումը: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է կորցրած դիպլոմների ստուգման և կրկնօրինակների կնքման աշխատանքները: Բաժնի կողմից կատարվել է բոլոր ֆակուլտետներից ներկայացված պետական քննությունների մատյանների համարակալումը և վավերացումը: Բաժնի կողմից ստուգվում է բոլոր պետական քննությունների մասնակիցների ցուցակները, որից հետո հրամանագրման է ներկայացվում համապատասխան ստորաբաժնում: Մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվում բոլոր դիպլոմները: Ընդունելության քննությունների ընթացքում բաժնի աշխատակիցն ընդունող հանձնաժողովի կազմում ստուգում է արական սեռի դիմորդների փաստաթղթերը և վավերացնում բաժնի շտամպով: Բաժնի կողմից իրականացվում է պետպատվերի շրջանակներում ընդունված զինակոչիկ ուսանողների անվանացուցակները համապատասխան զինկոմիսարիատներ ուղարկելու աշխատանքները: Սահմանված կարգով ուսումնական տարվա սկզբին կանչվում են բոլոր արական սեռի ուսանողները, կազմվում է համապատասխան փաստաթուղթ, որով կատարվում են հետագա աշխատանքները: Միևնույն ժամանակահատվածում կանչվում են նաև զինապարտ աշխատակիցները, դասախոսները, որից հետո աշխատակիցների անվանացանկն ըստ բնակության վայրի ուղարկվում է համապատասխան զինկոմիսարիատներ: Բաժինն ուղղակի մասնակցություն է ունենում ընդունելության արդյունքներով բուհ ընդունված անձանց հրամանների ճշգրտման, ինչպես նաև ստուգման գրքույկների կնքման աշխատանքներում: Բաժնի կողմից իրականացվում են նաև ուսանողների հետ համապատասխան պայմանագրերի կնքման աշխատանքներ: ՀՀ Պաշտպանության Նախարար Ս. Օհանյանի 07.10.2014թ. ՊՆ/510-1755 գրության համաձայն բաժինը համագործակցում է մեթոդական բաժնի հետ, ինչպես նաև վերջերս ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016թ սեպտեմբերի 1-ի թիվ 01/06. 2/10525-16 գրության ապրիլյան պատերազմի և Արցախի հանրապետության դեմ 2020 թվականի սանձազերծած պատերազմի ընթացքում մարտական գործողության

մասնակից ուսանողների՝ զեղչային արտոնությունից օգտվող ուսանողների զինգրքույկներից տրամադրելով համապատասխան փաստաթղթեր: Հատուկ բաժնի գործունեության մաս է կազմում նաև «Գաղտնի» դրոշմով փաստաթղթերի հետ աշխատանքները:
Կատարման վերլուծություն
Հաշվետու ժամանակահատվածում մեծ քանակությամբ տեղեկանքներ են տրվել հումանիտար մասնագիտության ֆակուլտետի /ՀՄՖ/ շրջանավարտներին: Միաժամանակ նախկին ՀՄՖ-ի չհրամանագրված ուսանողներին տրվել են բանավոր պատասխաններ: ՀՄՖ-ի վերաբերյալ հանրապետության ՀՀ տարբեր ոստիկանական բաժիններից ստացվել են բազմաթիվ գրություններ, բանավոր հարցումներ և սահմանված ժամկետում ուղարկվել պատասխաններ: Հաշվետու ժամանակաշրջանում արտասահմանյան երկրներ մեկնող բազմաթիվ շրջանավարտներ բուհ են դիմել իրենց դիպլոմներին հավելյալ թերթ ամրակալելու համար /ապոստիլ/: Տարբեր տարիների մեր շրջանավարտները դիմել են մեզ իրենց փաստաթղթերը ծրարներով վավերացնելու և արտասահման ուղարկելու համար:
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)
բաժինը իր գործունեությունը կատարել է ժամանակին և պատշաճ մակարդակով:

Իրավաբանական կենտրոն

1. Իրավաբանական կենտրոնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
1.	Իրավաբանական կենտրոնի հիմնական նպատակն է ապահովել օրինականության պահպանումը Համալսարանի գործունեության ընթացքում:
2.	Խնդիրներն են՝
2.1.	Մասնակցել Համալսարանի առջև դրված նպատակներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, պայմանագրերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստմանը.
2.2.	ՈՒսումնասիրել Համալսարանի ռեկտորի հրամանների, ՀՊՄՀ կանոնակարգերի, ստորաբաժանումների կանոնադրությունների և իրավական բնույթի այլ փաստաթղթերի նախագծերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրության պահանջներին.

2.3.	Իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ.
2.4.	Վերը նշված 2.1, 2.2 և 2.3 կետերում որոշված խնդիրների իրականացման ընթացքում տրամադրել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն.
2.5.	Սահմանված կարգով ներկայացնել Համալսարանի շահերը դատարանում և այլ մարմիններում, ապահովել Համալսարանի ներկայացուցչությունը դատական ատյաններում և այլ մարմիններում, իրականացնել Համալսարանի շահերի պաշտպանությունը:

2. Հաշվետու տարվա համար Իրավաբանական կենտրոնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՀՊՄՀ զարգացման 2020-2025թթ. ռազմավարական պլանով Իրավաբանական կենտրոնի համար 2022թ. ընթացքում աշխատանքներ նախատեսված չեն:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1.	2022 ընթացիկ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական դիմումները և լուծել դրանց ընթացքը.	ընթացք է տրվել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց ավելի քան 1000 դիմումներին.

2.	2022 ընթացիկ	իրականացնել ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց ընդունելություն, որի ընթացքում պարզաբանել նրանց իրավունքները, պարտականությունները՝ իրավական առումով սպառիչ պատասխանելով նրանց կողմից բարձրացված հարցերին.	պարբերաբար կազմակերպվել և իրականացվել է ՀՊՄՀ-ի ուսանողների, աշխատողների և այլ մարմինների ու ֆիզիկական անձանց ընդունելություն, որի ընթացքում պարզաբանվել են նրանց իրավունքները, պարտականությունները և տրվել են նրանց կողմից բարձրացված հարցերի սպառիչ պատասխաններ.
3.	2022 ընթացիկ ըստ գործերի շարժի	ընթացք տալ դատական գործերին, ներկայացնել հայցադիմումներ, անհրաժեշտ միջնորդություններ և շարունակականաբար իրականացնել դատական ներկայացուցչություն:	Օրենքով նախատեսված կարգով կատարվել է դատական ներկայացուցչություն
4.	2022 ընթացիկ	ՀՊՄՀ ռեկտորի լիազորագրերի հիման վրա Համալսարանը ներկայացնել ՀՀ պետական մարմիններում, կազմակերպություններում և այլ անձանց հետ հարաբերություններում:	ՀՊՄՀ ռեկտորի լիազորագրերի հիման վրա Համալսարանը ներկայացվել է ՀՀ պետական մարմիններում, կազմակերպություններում և այլ անձանց հետ հարաբերություններում:

5.	2022 ընթացիկ	ՀՀ օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրել ՀՊՄՀ-ի ռեկտորի բոլոր հրամանների նախագծերը:	ՀՀ օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի ռեկտորի բոլոր հրամանների նախագծերը իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին, որոնք նախապատրաստվում են տարբեր ստորաբաժանումների կողմից: Մասնավորապես, ուսումնասիրվել և եզրակացություն է տրվել՝ ա/ անձնակազմի հաշվառման բաժնի կողմից նախապատրաստված հրամանների նախագծերի վերաբերյալ, բ/ ուսումնական բաժնի կողմից նախապատրաստված հրամանների նախագծերի վերաբերյալ, գ/ պրակտիկայի կենտրոնի կողմից նախապատրաստված ուսանողների վերաբերյալ հրամանների նախագծերի վերաբերյալ,
6.	2022 ըստ ներկա յացման	Ուսումնասիրել ՀՊՄՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցման դիմումներն իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին և հայտնվել է համապատասխան դրական կամ բացասական կարծիք:	Ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցման ավելի քան 3000 դիմումներ, իրենց փաստաթղթերի փաթեթների հետ միասին և հայտնվել է համապատասխան դրական կամ բացասական կարծիք:
7.	2022 ընթացիկ՝ ըստ գնումների հրավերի ներկա-	Իրավական ապահովման տեսանկյունից մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից իրականացվող գնումների գործընթացին:	Իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից իրականացվող գնումների գործընթացին՝ իրավական ապահովման տեսանկյունից:

	յացման		
8.	2022 ընթացիկ	Իրավական ապահովման տեսանկյունից մասնակցություն ՀՊՄՀ-ում ուսումնա-օժանդակ անձնակազմի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթների հանձնաժողովի աշխատանքներին:	Իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ի կողմից ուսումնաօժանդակ անձնակազմի թափուր տեղերի համար հայտարարված բոլոր մրցույթների հանձնաժողովի աշխատանքներին՝ իրավական ապահովման տեսանկյունից:
9.	2022 ընթացիկ	Մասնակցություն ՀՊՄՀ-ում միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին:	Իրականացվել է մասնակցություն ՀՊՄՀ-ում միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին՝ իրավական ապահովման տեսանկյունից:
10.	2022 ընթացիկ	Ապահովել, որ ՀՊՄՀ-ի անունից կազմված պայմանագրերի նախագծերը համապատասխանեն ՀՀ օրենսդրության պահանջներին /առուվաճառք, վարձակալության, ծառայությունների մատուցման և այլն/:	ՀՊՄՀ-ի անունից կազմվել կամ կազմված պայմանագրերի նախագծերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրության պահանջներին /առուվաճառք, վարձակալության, ծառայությունների մատուցման և այլն/:

11.	2022 ընթացիկ	Ապահովել, որ ՀՊՄՀ-ի կանոնակարգերի վերանայում և մշակում համապատասխանեցնել գործող օրենսդրության դրույթներին:	Կազմվել կամ վերանայվել են ՀՊՄՀ-ի կանոնակարգերը:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
· · Ուսումնասիրվել են ավելի քան 1000 դիմումներ · Գործող օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրվել են ՀՊՄՀ ռեկտորի բոլոր հրամանների նախագծերը · Ռեկտորի կողմից տրված լիազորագրի հիման վրա իրականացվել է ՀՊՄՀ ներկայացուցչությունը ՀՀ դատական և պետական մարմիններում: · Ապահովվել է ՀՊՄՀ-ի անունից կազմված պայմանագրերի նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին
Կատարման վերլուծություն

Իրավաբանական կենտրոնը Համալսարանի գործունեության ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ ապահովում է օրինականությունը՝

- մասնակցելով Համալսարանի առջև դրված նպատակներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, պայմանագրերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստմանը.

- ուսումնասիրելով և ներկայացնելով կարծիք Համալսարանի ռեկտորի հրամանների նախագծերի, ՀՊՄՀ կանոնակարգերի նախագծերի, ստորաբաժանումների կանոնադրությունների նախագծերի և իրավական բնույթի այլ փաստաթղթերի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ հարցերով.

- իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնելով այլ գործառույթներ,

- տրամադրելով անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն.

- սահմանված կարգով ներկայացնելով Համալսարանի շահերը դատարանում և այլ մարմիններում, ապահովելով Համալսարանի ներկայացուցչությունը դատական ատյաններում և այլ մարմիններում, իրականացնելով Համալսարանի շահերի պաշտպանությունը:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ՀՀ գործող օրենսդրության պահանջներն համապատասխան՝ ՀՊՄՀ գործունեության ապահովումը	
Հնարավորություններ	**Վտանգներ**
ՀՊՄՀ կողմից ընդունվող ներքին իրավական իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ապահովում	

Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն

1. Կենտրոնի հիմնական խնդիրները և գործառույթները՝ համաձայն հաստատված կարգի

N	Կենտրոնի խնդիրներն են՝
	ապահովել Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սարքինությունը և բնականոն աշխատանքը, արագ արձագանքել ու լուծել տեխնոլոգիական, ներառյալ՝ Համալսարանի համար արդիական համակարգչային ծրագրավորման խնդիրները,
	ապահովել համակարգչային ներքին ցանցի անխափան աշխատանքը,
	աջակցել Համալսարանում տեղի ունեցող տարատեսակ գործընթացներին՝ տեղեկատվական տեխնոլոգիաներով,
	իրականացնել ժամանակակից պայմաններին բավարարող ավտոմատ կառավարման համակարգերի մշակում և համապատասխան ոլորտներում ներդնում:
N	Կենտրոնն իր խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառույթները՝
	կատարում է Համալսարանի համակարգչային ֆոնդի տեխնիկական և ծրագրային սպասարկում,
	կառուցում և սպասարկում է համակարգչային ներքին ցանցը և ենթացանցերը, ըստ պահանջի դրանք փոփոխում և հնարավորություններն արդիականացնում, բաշխում լարային և անլար ինտերնետ կապը և տրամադրում ու կառավարում է մուտքի իրավունքները,
	ծրագրավորում է օգտագործվող սերվերները, իրականացնում ընթացիկ սպասարկումն ու անվտանգության ապահովումը,
	Համալսարանում տեղի ունեցող միջոցառումների, գիտաժողովների, նիստերի ընթացքում ապահովում է համակարգչային տեխնոլոգիաներով ու սպասարկում, իրականացվող նախագծերի և ծրագրերի ընթացքում ապահովում է տեղեկատվական-տեխնիկական աջակցություն,
	աջակցում է ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնմանը,
	նախագծում, պատրաստում (ծրագրավորում) և կիրառում է Համալսարանի ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգեր (ծրագրային ապահովումներ, առանձին բաղադրիչներ և հավելվածներ),
	իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

2. Հաշվետու տարվա համար կենտրոնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին

7.1.1	Իրականացնել նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացման գործընթաց՝ գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը	Անընդհատ շարունա- կական	Կատարվել են SS ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքներ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում), նախահաշվարկվել և ներկայացվել են հաջորդ տարվա համապատասխան աշխատանքներում անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ծառայությունների ցանկը:
7.1.2	Իրականացնել համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման և աշխատանքային հնարավորությունների բարելավման շարունակական բնույթի աշխատանքներ	Անընդհատ շարունա- կական	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
7.1.3	Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների, լաբորատորիաների մասնակի վերանորոգման, արդիականացման և կահավորման գործընթաց	Անընդհատ շարունա- կական	Անընդհատ Իրականացվում է ինտերակտիվ դասընթացների համար նախատեսված լսարանների համապատասխան տեխնիկայի սպասարկման և աշխատանքի բարելավման գործընթաց (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
7.1.5	Ընդլայնել համալսարանի «Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի» գործիքակազմը, ավելացնել մոդուլների ֆունկցիոնալությունը	Անընդհատ շարունա- կական	Կատարված աշխատանքները թվարկված են 3-րդ կետում

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	Անընդհատ շարունա- կական	Համալսարանի համակարգչային տեխնիկայի սպասարկում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
	Անընդհատ շարունա- կական	Համալսարանի ներքին լարային ցանցի, ինչպես նաև անլար ցանցի լրացման, կառավարման և սպասարկման աշխատանքներ, համացանցի	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):

		անընդհատ հասանելիության ապահովման աշխատանքներ:	
	Փետրվար-մարտ	համալսարանի 3-րդ, 5-րդ և 6-րդ մասնաշենքերում նոր՝ կորպորատիվ դասի Wi-Fi ցանցի կառուցման աշխատանքներ	Իրականացվել է ամբողջությամբ, մանրամասները շարադրված են 3-րդ կետում
	Անընդհատ շարունա-կական	Համալսարանի ներքին և արտաքին էլեկտրոնային ռեսուրսների կառավարման և անվտանգության ապահովման աշխատանքներ:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
	Մայիս-հուլիս	Էլեկտրոնային գնահատման համակարգով ավարտական քննությունների նախապատրաստում և քննական գործընթացի տեխնիկական սպասարկում:	Կատարվել է ըստ համապատասխան կարգի (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
	Մայիս-հուլիս	Ավարտական դիպլոմների տպում:	Իրականացվել է ընթացիկ տարվա բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ծրագրերով ավարտական դիպլոմների ամբողջ քանակի տպում:
	Անընդհատ շարունա-կական	Համակարգչային և տեսաձայնային տեխնիկայով հագեցած ինտերակտիվ լսարանների տեխնիկական սպասարկում և վիճակի մշտադիտարկում, դասախոսական կազմին օգտագործման հարցերում օժանդակում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
	Անընդհատ շարունա-կական	Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի սպասարկում, օգտատերերին օժանդակում և ուղղորդում, ըստ ընթացիկ պահանջի հնարավորությունների ավելացում:	Իրականացվում է անընդհատ (մանրամասը ներկայացված է 3-րդ կետում):
	Անընդհատ շարունա-կական	Ընթացիկ պահանջներից ելնելով համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացվող նախագծերում, ինչպես նաև անցկացվող տարատեսակ միջոցառումներում SS ներդնում և սպասարկում:	Կատարված աշխատանքները թվարկված են 3-րդ կետում:

3. Հաշվետու տարում կենտրոնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձրացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակումներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից իրականացրել են հետևյալ աշխատանքները. ● Համալսարանում (ներառյալ համալսարանի հիմնական և ավագ դպրոցներում ու ուսումնամարզական բազայում) առկա համակարգչային տեխնիկայի (ընդհանուր թվով շուրջ 700 համակարգիչ՝ ներառյալ դյուրակիր, իրենց հարակից սարքավորումներով) ծրագրային և տեխնիկական սպասարկման անընդհատ շարունակական բնույթի աշխատանքներ. ○ համակարգիչներում օպերացիոն համակարգերի տեղադրում և կարգավորում, ընթացիկ սպասարկում, ○ անհրաժեշտ ծրագրային փաթեթների տեղադրում, կարգավորում, դրանց մշտադիտարկում և տարբերակների՝ ժամանակին համահունչ փոփոխում, ընթացիկ ծրագրային սխալների վերացում, պարբերաբար առաջացող ծրագրային խնդիրների լուծում, հնարավորության սահմաններում վնասված կամ ջնջված տվյալների վերականգնում, ○ հակավիրուսային փաթեթների տեղադրում, դրանց աշխատանքի անընդհատ վերահսկում, բազաների թարմացում, համակարգչային վիրուսների մաքրում, ○ տեխնիկական անսարքությունների վերացում, շարքից դուրս եկած մասերի փոխարինում, հնարավորության դեպքում վերանորոգում, ժամանակակից պայմաններին չբավարարող՝ սակավ աշխատունակությամբ համակարգիչների տեխնիկական պարամետրերի հզորացում (փոխարինվող կամ կից ավելացվող համակարգչային սարքավորումների տարբերակով), նոր լրացվող համակարգչային տեխնիկայի տեխնիկական պարամետրերի ձևակերպում, համակարգիչների տեխնիկական վիճակի անընդհատ վերահսկում, բնականոն աշխատունակության ապահովում, ○ հարակից համակարգչային տեխնիկայի՝ ներառյալ տպիչների, սքաներների, բազմաֆունկցիոնալ սարքերի, պրոեկցիոն-տեսաձայնային սարքավորումների սպասարկում, ○ այլ նմանատիպ աշխատանքներ: ● Համալսարանի ներքին լարային ցանցի՝ ընթացիկ պահանջներից ելնելով փոփոխման, նոր ենթացանցերի ստեղծման, նոր ավելացված համակարգիչների և տեխնիկական միջոցների՝ ընդհանուր ցանցին միացման և այլ շարունակական բնույթի մոնտաժային աշխատանքներ, ցանցի սպասարկման անընդհատ աշխատանքներ (տեղամասային և ընդհանուր բնույթի վթարների վերացում, ենթացանցերում ֆայլերի շրջանառության կազմակերպում, ներառյալ տպիչների ցանցային կիրառման հնարավորության ստեղծում, ծրագրային և տեխնիկական բնույթի այլ աշխատանքներ): ● Սերվերային համակարգերի, ցանցային սարքավորումների սպասարկման և անվտանգության ապահովման աշխատանքներ, համացանցի և ներքին ցանցային ծառայությունների հասանելիության և

մուտքի համապատասխան իրավունքների տրամադրման աշխատանքներ, ցանցի կառավարման այլ աշխատանքներ:

- Համալսարանի կայքերի, դրանց դոմենային անունների և հոսթինգների կարգավորման, կառավարման, տվյալների պահպանման և արխիվացման, տեխնիկական սպասարկման և անվտանգության ապահովման աշխատանքներ:

- Անլար ցանցի վերազինման, Wi-Fi ծածկույթի որակի բարձրացման, անլար ցանցից օգտվողների հնարավոր թվի աստիճանաբար մեծացման, ծածկույթի ընդլայնման աշխատանքներ: Փետրվար-մարտ ամիսներին UCOM ընկերության հետ համատեղ իրականացվել է համալսարանի 3-րդ, 5-րդ և 6-րդ մասնաշենքերի ողջ տարածքում կորպորատիվ դասի Wi-Fi ծածկույթի ապահովմանն համար նախագծման աշխատաքներ, ապա համապատասխան սարքավորումների տեղադրման և կարգավորման աշխատանքներ: Ապահովվել է նշված մասնաշենքերից յուրաքանչյուրում մինչ 1022 միաժամանակյա միացումների հնարավորություն:

- Համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացված տարատեսակ ծրագրերում և նախագծերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում և սպասարկում.

  - Ավարտական դիպլոմների տպում (մայիս-հունիս ամիսներին):

  - Լսարաններում համակարգչային տեխնիկայի, ներառյալ պրոեկտորների և Էկրանների, ինչպես նաև հեռուստացույցների տեղադրման կամ վերաբաշխման կազմակերպում, դրանց աշխատանքային վիճակի անընդհատ վերահսկում, տեխնիկական սպասարկում և վերանորոգում, տեխնիկական պարամետրերի մշտադիտարկում և բարելավում, կիրառման հարցերում աջակցում: Ինտերակտիվ դասընթաց ապահովող լսարանների ընդհանուր թիվը այժմ 120 է: Եվս 20 տարբեր լսարաններում համապատասխան դասընթացներ են իրականացվում շարժական տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

  - Գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահներում համակարգչային տեխնիկայի ավելացում, ներքին ենթացանցի փոփոխում, դրանում էլեկտրոնային գրականության ընդհանուր շտեմարանի տեղադրում, ֆայլաշրջանառության ապահովում, համացանցի հասանելիության (որակյալ, գերարագ ինտերնետ կապի) ապահովում, համակարգչային և տեսաձայնային համակարգերի մշտադիտարկում և տեխնիկական սպասարկում, գրադարանային միջոցառումների սպասարկում:

  - Համալսարանի աշխատակիցների մուտքի-ելքի ֆիքսման համակարգի՝ համապատասխան սարքերի, ցանցային միացումների և ծրագրային ապահովման աշխատանքի վերահսկում և տեխնիկական սպասարկում:

  - Մասնաշենքերի նախասրահներում տեղադրված տեսաձայնային վահանակների միասնական համակարգի աշխատունակության վերահսկում և տեխնիկական սպասարկում:

  - Հաշվապահության ՀԾ համակարգի աշխատանքի ապահովմանն ուղղված ցանցային սպասարկման աշխատանքներ, անվտանգության ապահովման և տվյալների պահեստավորման աշխատանքներ, հնարավոր խնդիրների արագ վերացման տեխնիկական բնույթի աշխատանքներ:

Մայիս-հուլիս ամիսներին՝ էլեկտրոնային գնահատման կարգով ավարտական քննությունների իրականացումն ապահովելու համար՝ համապատասխան 9 լսարանների տեխնիկական կահավորման, անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի ծրագրային հագեցման, ներքին ենթացանցերի կառուցման և կարգավորման, համացանցի հասանելիության ապահովման աշխատանքներ, տեսաձայնագրման հնարավորության ապահովման տեխնիկական բնույթի աշխատանքներ: Քննությունների ընթացքում

իրականացվել է համակարգչային տեխնիկայի և ցանցի աշխատանքի անընդհատ վերահսկում և սպասարկում, առաջացած խնդիրների արագ կարգավորում:

Հուլիս և հոկտեմբեր ամիսներին՝ առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ներբուհական ընդունելության քննությունների ողջ ընթացքի youtube-յան լայվ հեռարձակման կազմակերպում (քննական բոլոր կենտրոններում [9 կենտրոն ԱԲ և 4 կենտրոն ՀԲ] տեխնիկական նախապատրաստում և ընթացքի սպասարկում) :

○ Համալսարանի ակտիվների և պարտավորությունների տարեկան հաշվառման ընթացքում՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, համակարգչային տեխնիկայի գույքագրում, ըստ անվանումների ստուգում, համապատասխան գույքային կոդերի ամրացում, համակարգչային սարքավորումների տեխնիկական վիճակի մասին մասնագիտական եզրակացությունների տրամադրում:

○ Համալսարանում գործող «Գիտական տեղեկագիր», «Մաթեմատիկան դպրոցում» և «Հայագիտական հանդես» պարբերականների համար OJS համակարգով կայքերի նախագծման, պատրաստման և գործարկման աշխատանքներ, ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Wisdom ամսագրի կայքի PKP հոսթինգ միգրացիայի տեխնիկական նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներ:

○ Այլ նմանատիպ աշխատանքներ:

● Կենտրոնի գործունեության մեջ կիրառվող, ինչպես նաև թվարկվող գործընթացների ապահովման համար անհրաժեշտ սարքավորումների, պարագաների և տեխնիկական միջոցների գնահատում և պահանջագրերի կազմում:

● Անցկացված գիտաժողովների, նիստերի, ատենախոսությունների պաշտպանությունների, բազմաբնույթ միջոցառումների տեխնիկական աջակցում և սպասարկում (դահլիճներում, հանդիպումների սենյակներում, նախասրահներում և այլ վայրերում համապատասխան համակարգչային-տեսապատկերման տեխնիկայի կիրառում և սպասարկում, հեռավար միացումների և տեսակոնֆերանսների տեխնիկական կազմակերպում, լայվ հեռարձակումների ապահովում, ձայնային տեխնիկայի սպասարկում, կամ սպասարկման օժանդակում):

● Դասապրոցեսում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հարցում տեխնիկական աջակցություն, ուսումնաօժանդակ և վարչական կազմին իրենց աշխատանքներում համակարգչային տեխնոլոգիաների մասով խորհրդատվություններ և աջակցություն:

● Կենտրոնի ծրագրավորողների կողմից ստեղծված ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացմանն ուղղված էլեկտրոնային տեղեկատվական համակարգում (ՈւԳԱԿՀ – ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ) ընթացիկ տարում իրականացվել են արդեն կիրառվող՝ «ՈՒսումնական մաս», «Ամբիոն», «Դեկանատ», «Դասախոս» և «Վարչական մաս» մոդուլների սպասարկում, ընթացիկ պահանջներին համաձայն փոփոխում, աշխատանքի բարելավում և նոր հնարավորությունների ավելացում: Մասնավորապես.

դեկանատների կողմից ամփոփագրերի ստեղծման ժամկետների վերահսկման ծրագրային ապահովման ստեղծում,

դասախոսների կողմից լրացվող ամփոփագրերի ժամկետների վերահսկման ծրագրային ապահովման ստեղծում,

մասնագիտական և ոչ մասնագիտական ՄՈԳ-երի դիտման գործիքակազմի բարելավում և աշխատանքի պարզեցում,

դասախոսների և դեկանատների կողմից ամփոփագրերի հետ աշխատանքի արագացում,

բաշխումների սահամանափակումների թույլատրություններ՝ բաշխում իրականացնել կարող են միայն այն ամբիոնները, որոնց համար առկա են համապատասխան թույլատրություններ,

դեկանատների, ինչպես նաև դասախոսների կողմից ամփոփագրերի դիտման ժամանակ ավելացվել է ստեղծման ամսաթիվը տեսնելու հնարավորություն,

դեկանատներում ուսանողների տեղափախման մեջ ավելացվել է սեփական դիմումի համաձայն ուսանողի ազատման հնարավորություն,

ավելացվել է նոր գործիքակազմ, որի միջոցով հնարավոր է դիտել կոնկրետ ուսանողի կոնկրետ առարկայից ստացված բոլոր գնահատականները ըստ կուրսի, կիսամյակի և ուսումնական տարվա,

ամփոփագրերի դիտման մեջ այսուհետ ավելացվել է կոնկրետ ուսանողի վերաբեյալ մեկնաբանություն տեսնելու հնարավորություն,

դեկանատի աշխատակիցների առաջարկով ավելացել է համակարգով ակադեմիական տեղեկագիր ստեղծելու հնարավորություն,

չլրացված ամփոփագրերի հեռացման գործիքակազմը ավելի լավարկվել և պարզեցվել է,

սկսվել են նոր՝ «Ուսանող» մոդուլի նախագծման աշխատանքները:

Կատարման վերլուծություն

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են եղել համակարգչային և ցանցային սպասարկման տեխնիկական և ծրագրային բնույթի անընդհատ շարունակական աշխատանքները, ընդհանուր ՏՏ ենթակառուցվածքի՝ ներառյալ սերվերային համակարգերի, հոսթինգների, Էլեկտրոնային ծառայությունների կառավարման և տեխնիկական սպասարկման աշխատանքները, համալսարանի ղեկավարության և ստորաբաժանումների կողմից իրականացված ծրագրերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և սպասարկման, ինչպես նաև ՈՒԳԱԿՀ-ի նոր բաղադրիչների ծրագրավորման աշխատանքները: Նշված գործողությունների ծավալները, մեթոդները և բովանդակությունը անընդհատ փոփոխվում են ՏՏ ոլորտի սրընթաց զարգացմանը և համալսարանում ՏՏ հագեցվածության պարբերաբար աճին համահունչ: Այս հանգամանքը ստիպում է աշխատանքների պլանավորումն իրականացնելիս խուսափել գործողությունների ու մեթոդների կոնկրետացումից, և առաջնորդվել ընթացիկ պահին ծագած կամ առաջադրված նոր խնդիրները արագ լուծելու և ՏՏ միջավայրի բնականոն աշխատանքը ժամանակակից պայմաններին և հնարավորություններին համապատասխան ապահովելու սկզբունքով:

Ինքնագնահատում

ՏՏ կենտրոնի աշխատակազմը մշտապես ձգտում է, իր առջև դրված խնդիրներն իրականացնել պատշաճ մակարդակով՝ համահունչ ժամանակակից մեթոդներին և չափանիշներին:

Պրակտիկայի կենտրոն

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
	Կառավարել և գնահատել ՀՊՄՀ-ում պրակտիկայի կազմակերպումն ու դրա շարունակական բարելավման գործընթացները,
	Մշակել և պրակտիկայի կազմակերպման գործընթացում ներդնել ուսանողների մեթոդական և այլաբնույթ աջակցության տեխնոլոգիաներ և մոդելներ:
	Նախապատրաստել, կազմակերպել և իսկել համալսարանի պրակտիկայի գործընթացը
	Խթանել ինտերակտիվ - նորարարական և զարգացնող կրթական միջավայրի բաղադրիչների ներդրումը ՀՊՄՀ պրակտիկայի գործընթացում
	Նպաստել պրակտիկայի արդյունքների և ուսանողների ձեռքբերումների գնահատման արդիականացմանը՝ հետադարձ կապի կառուցակարգերի ներդրման և հաջողված փորձի իմաստավորման, տարածման և ինստիտուցիոնալացման ճանապարհով:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	Ներդնել ուսանողների էլեկտրոնային թղթապանակի /պորտֆոլիո/ տեխնոլոգիան, պրակտիկայի և մասնագիտական առաջընթացի մշտադիտարկման համար:	Շարունակական 2017-2022	Հաշվետու տարում այս խնդիրն իրագործվել է ամբողջովին և արդյունավետությամբ: Համալսարանի բոլոր ՝ առկա, հեռակա համակարգում սովորողները արդյունավետորեն օգտագործում են այն: Այն հնարավորություն է տվել մշտադիտարկել յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը պրակտիկայի ընթացքում:
	Ներդնել քննական-վերլուծական մտածողության ու թիմային հետազոտական աշխատանքների կարողությունների զարգացման դասավանդման և ուղղորդման մոդելներ	Շարունակական 2017-2022	Պրակտիկայի գործընթացում թիմային աշխատանքի արդյունավետության խթանման նպատակով կազմակերպվել է թիմային աշխատանքի գնահատում, ներդրվել է սիմուլյացիոն իմիտացիոն դերային խաղերի տեխնոլոգիան, վեր են հանվել առկա խնդիրները և դրանց մասին զեկուցվել է համալսարանի ռեկտորատի նիստին (ս.թ. նոյեմբերի 18)

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	02. 202- 04. 2022	հեռակա ուսուցման համակարգի սովորողների պրակտիկայի կազմակերպում	սահմանված ժամկետներում կազմակերպվել է ուսանողների տեղաբաշխումը, պայմանագրերի կնքումը, հրամանագրման գործընթացը և պրակտիկաների արդյունավետությունը վկայող հիմքերի ստեղծումը
	02. 2022 04. 2022	հեռակա ուսուցման համակարգի սովորողների պրակտիկայի մշտադիտարկում	սահմանված ժամկետներում կազմակերպվել է պրակտիկաների դիտարկում ամբիոնների պատասխանատուների և կենտրոնի աշխատակիցների կողմից:
	02. 2022	բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի սովորողների պրակտիկայի կազմակերպում	սահմանված ժամկետներում կազմակերպվել է ուսանողների տեղաբաշխումը, պայմանագրերի կնքումը, հրամանագրման գործընթացը և պրակտիկաների արդյունավետությունը վկայող հիմքերի ստեղծումը
	02. 2022	հեռակա ուսուցման համակարգի սովորողների պրակտիկայի մշտադիտարկում	սահմանված ժամկետներում կազմակերպվել է պրակտիկաների դիտարկում ամբիոնների պատասխանատուների և կենտրոնի աշխատակիցների կողմից:
	03. 2022 04. 2022	առկա ուսուցման համակարգի սովորողների պրակտիկայի կազմակերպում	սահմանված ժամկետներում կազմակերպվել է պրակտիկաների բազաներում ուսանողների տեղաբաշխումը, պայմանագրերի կնքումը, հրամանագրման գործընթացը և պրակտիկաների արդյունավետությունը վկայող կատարողական ակտերի ստորագրումը
	03. 2022 - 04. 2022	առկա ուսուցման համակարգի սովորողների պրակտիկայի մշտադիտարկում	սահմանված ժամկետներում կազմակերպվել է պրակտիկաների դիտարկում ամբիոնների պատասխանատուների և կենտրոնի աշխատակիցների կողմից:
	04. 2022 - 05. 2022	Ավարտված պրակտիկաների փաստաթղթերի համակարգում	Պրակտիկաների ավարտը վկայող կատարողական ակտերի ստորագրում բուհի և համապատասխան կազմակերպության կամ ուսումնական հաստատության կողմից: Պրակտիկաների հաճախման թերթիկների և պրակտիկա չանցած ուսանողների տվյալների հավաքագրում

			Ֆակուլտետի կողմից կազմակերպվող պրակտիկաների ամփոփիչ կոնֆերանսների մասնակցություն:
	05.2022	Մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունը կազմակերպող հրամանագրման գործընթաց	Պրակտիկայի կենտրոնի կողմից, սահմանված կարգի համաձայն, հրամանագրման է ներկայացվել պրակտիկայի արդյունքների պաշտպանության ժամանակացույցը, հանձնաժողովների կազմերը: Որի հիման վրա, ՀՊՄՀ-ի ռեկտորի համապատասխան հրամանների համաձայն , հաստատվել է 2021-2022 ուստարվա առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 2-րդ և 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի պրակտիկայի արդյունքների պաշտպանության հանձնաժողովների կազմերը և ժամանակացույցը:
	06.2022	Մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանություն	Սահմանվել է վերահսկողություն՝ ըստ նախապես հաստատված պաշտպանության ժամանակացույցի: Մանկավարժական պրակտիկայի կազմակերպումը և թղթապանակի պաշտպանությունը իրականացվել է ըստ համապատասխան ուղեցույցի պահանջների:
	06.2022 07.2022	Ճամբարային պրակտիկաների կազմակերպում	Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարության հունիսի 30-ի թիվ 05/1112459-2022 գրությանը՝պրակտիկայի կենտրոնը զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան դպրոցահասակ երեխաների 2022թ. ամառային հանգստի կազմակերպման ուղղությամբ, ճամբարներում կազմակերպչական աշխատանքներ իրականացնելու նպատակով ներկայացրել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 16 ուսանողի՝ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, սկզբնական կրթության, օտար լեզուների, հատուկ և ներառական կրթության ֆակուլտետներից:

	08.2022	2022-2023 ուստարվա մեկնարկի նախապատրաստական աշխատանքներ:	Բոլոր ֆակուլտետները պրակտիկայի կենտրոն են ներկայացրել 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պրակտիկայի անցկացման ժամանկացույցերը, պրակտիկա մեկնող ուսանողների ցուցակները և նախատեսվող պրակտիկայի անցկացման վայրերը: ՀՊՄՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոններից պրակտիկայի կենտրոն է ներկայացվել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում՝ համաձայն բաշխման, ուսումնաճանաչողական պրակտիկաներին կցվող մանկավարժների և հոգեբանների ցանկը:
	09.2022	Պրակտիկայի կենտրոնի հիմնական բազաների արդեն կնքված պայմանագրերի ճշգրտում և նոր պայմանագրերի կնքում:	Նոր ուսումնական տարում պրակտիկաները կազմակերպվել են պրակտիկայի կենտրոնի հիմնական բազաներում (դպրոցներ, նախակրթարաններ, հոգեբանական և մշակութային կենտրոններ և այլն), որոնց հետ արդեն ունենք պայմանագրեր, ինչպես նաև ավելացվել են նոր բազաներ, թարմացվել են ժամկետները: Ֆակուլտետների պրակտիկաների ղեկավարների կողմից ներկայացվել են համագործակցության առաջարկներ, որոնք դիտարկելուց հետո կնքվել են պայմանագրեր: Հիմնական բազաների ցանկին սույն թվականի օգոստոսի 30-ից ավելացվել են նշված կրթական, գիտական, հոգեբանական կենտրոն-հաստատությունները՝ Երևանի Նվեր Սաֆարյանի անվան հ. 164 հիմնական դպրոց Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան ՀԱՀ Փափազյանի անվան գրադարան Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն Աուտիզմ ազգային հիմնադրամ. «Իմ ուղին» ուսումնավերականգնողական մասնագիտական ուսուցման ցերեկային կենտրոն

			«Դիա լոգ» հոգու և մտքի ներդաշնակ զարգացման կենտրոն «Էմ Ջի Էմ Փարտներս» ՍՊԸ Շարունակվել է համագործակցությունը մարզային դպրոցների հետ: Հաշվի առնելով այն, որ դպրոցներում լոգոպեդական աշխատանքները հիմնականում իրականացվում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից ուղղորդված մասնագետների կողմից, պրակտիկայի կենտրոնը ընդունեց ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի առաջարկը, այն է՝ բացի Երևանում գործող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության 4 կենտրոններից (ՏՄԱԿ-ներից), համագործակցել նաև մարզային հետևյալ՝ Վաղարշապատի, Գեղարքունիքի, Աշտարակի, Կոտայքի, Արմավիրի, Շիրակի ՏՄԱԿ-ների հետ: Մի քանի կենտորնների հետ կնքվել են համագործակցության հուշագրեր՝ ՀՀ կախվածությունների բուժման ազգային կենտրոն Աբովյանի աջակցության կենտրոն ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն
	09.2022	2022-2023 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով պրակտիկայի մեկնող ուսանողների նախապատրաստական կոնֆերանսների կազմակերպում	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում: Ուսանողները ծանոթացել են խմբին կցված մեթոդիստների, 3-րդ կուրսում նաև մանկավարժ հոգեբանների հետ, տեղեկացել են պրակտիկայի անցկացման վայրի և այլ մանրամասների մասին:
	09.2022 10.2022	2022-2023 ուստարվա առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի 1-ին կիսամյակում պրակտիկա մեկնող ուսանողների հրամանագրում	Առկա ուսուցման բակլավրի կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի 1-ին կիսամյակի բոլոր պրակտիկաները մեկնարկել են, բացառությամբ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի, մաթեմատիկայի,ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետների 4-րդ կուրսերի (վերոնշյալ

			ֆակուլտետներում պրակտիկայի մեկնարկը նախատեսվում է նոյեմբեր ամսին): Հրամանագրման գործընթացն իրականացվել է պատշաճ, պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի դրույթների համապատասխան: Նկատվել է հրմանագրման հիմքերի ներկայացման ժամկետների որոշ ոչ էական խախտումներ: Պրակտիկայի մշտադիտարկման համար Google classroom համակարգում պրակտիկայի մեթոդիստների կողմից ստեղծվել են խմբեր:
	11.2022	2022-2023 ուստարվա հեռա ուսուցման 1-ին կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով պրակտիկայի մեկնող ուսանողների նախապատրաստական կոնֆերանսների կազմակերպում	Կոնֆերանսները կազմակերպվել են ժամանակին, սահմանված ժամկետներում: Ուսանողները ծանոթացել են խմբին կցված մեթոդիստներին:
	10.2022 11.2022	1) 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 4-րդ և 5-րդ կուրսերի 1-ին կիսամյակում պրակտիկա մեկնող ուսանողների հրամանագրում: 2) 2022-2023 ուստարվա ՄՖԻ և ԿՀՍ ֆակուլտետների առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի հրամանագրում: 3)2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կիսամյակի պրակտիկա մեկնող ուսանողների հրամանագրում:	Հեռա ուսուցման բակլավրի կրթական ծրագրի 4-րդ և 5-րդ կուրսերի,առկա ուսուցման 4-րդ կուրսի երկու ֆակուլտետի, առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի բոլոր պրակտիկաները մեկնարկել են ուսումնական պլանի համաձայն: Հրամանագրման գործընթացն իրականացվել է պատշաճ, պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի դրույթներին համապատասխան:
	11.2022	«Մանկավարժահոգեբանական եվ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող (30 կրեդիտ) մանկավարժի հավաստագրման» ծրագրի դիմորդների	«Մանկավարժահոգեբանական եվ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող (30 կրեդիտ) մանկավարժի հավաստագրման» ծրագրի շրջանակներում կատարվել է տվյալների հավաքագրում, մասնագիտությամբ աշխատող

		պրակտիկայի հրամանագրման գործընթաց	դիմորդների դիմում-տեղեկանքների հավաքագրում, ապա՝ հրամանագրում:
	12.2022	Ավարտված պրակտիկաների փաստաթղթերի համակարգում	Պրակտիկաների ավարտը վկայող կատարողական ակտերի ստորագրում բուհի և համապատասխան կազմակերպության կամ ուսումնական հաստատության կողմից: Պրակտիկաների հաճախման թերթիկների և պրակտիկա չանցած ուսանողների տվյալների հավաքագրում: Մասնակցություն՝ ֆակուլտետի կողմից կազմակերպվող պրակտիկաների ամփոփիչ կոնֆերանսներին:
	Թանգարանի խնդիրները Ներկայացնել Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմությունն ու գործունեությունը, նպաստել բուհական կրթական գործի զարգացմանը, նպաստել ուսանողի մտահորիզոնի ընդլայնմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, թանգարանը դարձնել ուսանողների և դասախոսների գիտահետազոտական գործունեության կենտրոն, Նպաստել բուհի միջֆակուլտետային կապերի ընդլայնմանը և ուսանողների համախմբմանը, համագործակցել հանրապետության և արտերկրի համալսարանական թանգարանների հետ, թանգարանը դարձնել ուսանողների և դասխոսների ինտելեկտուալ ժամանցի և հանգստի վայր: նպաստել դիմորդներին համալսարանում դասավանդվող մասնագիտություններին, համալսարանի գործունեությանն ու հնարավորություններին ծանոթացնելու գործին:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
1	Գիտա-ֆոնդային աշխատանք Կազմակերպել թանգարանային ֆոնդերի համալրում, համակարգում, անվտանգության ապահովում և թանգարանային առարկաների պահպանության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծում Թանգարանային առարկաների թվայնացում Թանգարանային առարկաների հաշվառում Ֆոնդերի գիտական ուսումնասիրում:	Տարվա ընթացքում	Կատարված
2	Մշտական և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպում	Տարվա ընթացքում	Կատարված
3	Համագործակցություն ուսումնական հաստատությունների և թանգարանագիտական գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների ու թանգարանների հետ 1. Բուհի ֆակուլտետների դասախոսական կազմի և ուսանողների հետ համատեղ ծրագրերի իրականացում	Տարվա ընթացքում	Կատարված
4	Այցելուների էքսկուրսիոն սպասարկում Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում Թեմատիկ էքսկուրսիաների կազմակերպում (դպրոցականների և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող, ֆակուլտետներին և նշանավոր դասախոսներին նվիրված էքսկուրսիաներ)	Տարվա ընթացքում	Կատարված
5	Կրթական ծրագրերի կազմում և միջոցառումների իրականացում	Տարվա ընթացքում	Կատարված

6	Տեղեկատվության տարածում 1. Այցելուների աուդիոգիդային սպասարկում 2. ՀՊՄՀ կայքի, թանգարանի ֆեյսբուքյան էջի և «Մանկավարժական համալսարան» թերթի միջոցով միջոցառումների լուսաբանում և առաջիկա ծրագրերի մասին հայտարարությունների տեղադրում	Տարվա ընթացքում	Կատարված
7	Համալսարանի ուսանողների հետազոտական աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով թանգարանը դարձնել լրացուցիչ կրթական տարածք 1. Թանգարանի ցուցադրության և ֆոնդերի նյութերի հիման վրա առաջարկել թեմաներ ուսանողների ավարտական, դիպլոմային հետազոտական աշխատանքների համար 2. Համալսարանի ֆակուլտետների հետ համատեղ կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված համալսարանի նշանավոր դասախոսներին և շրջանավարտներին 3. Պրակտիկայի բաժնի և ֆակուլտետների հետ համատեղ կազմակերպել թանգարանային ծրագրեր դպրոցականների համար ուսանողական պրակտիկայի ընթաքցում	Տարվա ընթացքում	Կատարված

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	Տարվա ընթացքում	Թանգարանի կրթադաստիարակչական գործունեություն Այցելուների էքսկուրսիոն սպասարկում Ճանաչողական էքսկուրսիա 1-4-րդ դասարանի երեխաների համար	Հաշվետու ժամանակահատվածում թանգարան է եկել 9133 այցելու: Կազմակերպվել է 174 էքսկուրսիա բուհի ուսանողների, դասախոսների, աշխատակիցների, դպրոցականների, ինչպես նաև տեղի և արտասահմանցի հյուրերի համար:

		«Մեսրոպ Մաշտոց» խաղ-էքսկուրսիա 9-15 տարեկան երեխաների համար խաղ-վիկտորինաներ՝ «Թանգարանային էթիկա» թեմայով՝ 4-9-րդ դասարանի աշակերտների համար «Ճանաչենք Աբովյանին» թեմայով՝ 9-12-րդ դասարանի աշակերտների համար «Ընտրում ենք մասնագիտություն» թեմայով՝ միջին դպրոցական տարիքի սովորողների համար: Դպրոցականների մասնագիտական կողմնորոշման ծրագրերի իրականացում Առաջին կուրսի ուսանողների համար ճանաչողական էքսկուրսիաների անցկացում: ՀՊՄՀ թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի ուսանողների ուսումնական	

		պրակտիկաների կազմակերպում և անցկացումը թանգարանում:	
2	Տարվա ընթացքում	Ուսանողների կուրսային աշխատանքների և մագիստրոսական թեզերի,ուսանողական,գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում	Նյութեր են տրամադրվել տարբեր ֆակուլտետների ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար:
3		Գիտա-ֆոնդային աշխատանք	
	Տարվա ընթացքում	Թանգարանի հավաքածուների համալրում	Հաշվետու տարում ձեռք է բերվել 331 նյութ:
	Տարվա ընթաքում	Թանգարանի ֆոնդերի հաշվառում	Թանգարանի ֆոնդում մշակվել, համալրվել և հաշվառվել է 331 ընդունված առարկա և էլեկտրոնային տարբերակով գրանցել նախնական և հիմնական մատյաններում (կազմել է 44 ակտ):
	Տարվա ընթացքում	Թանգարանի ֆոնդերի պահպանության ապահովում	Կատարված
	Տարվա ընթացքում	Թանգարանային առարկաների թվայնացում	963 թանգարանային առարկա
	Տարվա ընթաքում	Իրականացվել է 2020 թ. Արցախյան պատերազմում ՀՊՄՀ-ի ուսանող-մասնակիցների և զոհվածների տվյալների վերաբերյալ հասանելի նյութերի հավաքագրում և տեսասահիկի ստեղծում	Կատարված

4	Տարվա ընթացքում	Թանգարանի ցուցադրական գործունեություն Հիմնական ցուցադրության համալրում:	Թանգարանի հիմնական ցուցադրությունը համալրվել է 10 ցուցանմուշով:
	Տարվա ընթացքում	Թանգարանի ֆոնդերում պահվող նյութերի վիրտուալ թեմատիկ ցուցադրություն՝ թանգարանի էկրանների վրա:	Պատրաստվել է 17 սահիկահանդես ցուցասրահների էկրաններով ցուցադրելու համար:
		Ժամանակավոր ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպում:	Հաշվետու ժամանակահատվածում թանգարանում իրականացվել է 17 միջոցառում նվիրված հիշարժան դեպքերին և իրադարձություններին: Կազմակերպվել են 15 ժամանակավոր ցուցահանդեսներ՝ 1.Մանկավարժական համալսարանի 100-ամյակին ընդառաջ՝ ՌԴ կրթության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեմս Ներսիսյանի «Իմ Սյունիք» խորագիրը կրող գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը /07.03.22-21.03.22/: 2.Նամականիշերը ցուցադրություն՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից//07.03.2022-08.04.22/: 3.Տիեզերագնացության օրվա նվիրված նամականիշերի, բացիկների և ծրարների ժամանակավոր ցուցադրություն /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի

			անձնական հավաքածուից//11.04.2022-18.04.2022/: 4.Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցի առթիվ նամականիշերի ցուցադրություն /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից//18.04.2022-02.05.2022/: 5.ՌԴ կրթության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեմս Ներսիսյանի «Քրիստոնյա Հայաստան» խորագիրը կրող գեղանկարչական աշխատանքների ցուցադրություն՝ նվիրված Հուշարձանների միջազգային օրվան և հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին /25.04.22-23.06.22/ 6.«Հայաստանի միջնադարյան հուշարձանները» խորագրով վիրտուալ ցուցադրություն թանգարանում՝ համատեղ իրականացված ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ: 7.Հայոց ցեղասպանության նվիրված նամականիշերի ցուցադրություն: /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից/: 8.Մայիսյան եռատոնին նվիրված նամականիշերի ցուցադրություն /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական

			հավաքածուից/ մայիսի 2-ից մինչև մայիսի 13-ը: 9.Թանգարանների միջազգային օրվան նվիրված <<Թանգարանային գիշեր>> միջոցառման շրջանակներում նամականիշերի ցուցադրություն /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից/ մայիսի 18-ից մինչև մայիսի 31-ը: 10.Ցուցահանդես նվիրված համալսարանի դասախոս, ռեժիսոր Ֆրունզե Դովլաթյանի 95-ամյակին /05.25.2022-31.05.2022/: 11.Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված նամականիշերի ցուցադրություն /Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից /մայիս 27-ից մինչև հունիսի 1-ը/: 12.Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի 75-ամյակին նվիրված ցուցահանդես /21.06.2022- 04.07.2022/: 13.Բուհի 100-ամյակին ընդառաջ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ կրթության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեմս Ներսիսյանի «Ողջ ծաղկաբույլս քեզ՝ 100-ամյա իմ դպրանոց» խորագիրը կրող գեղանկարչական աշխատանքների ցուցադրություն 2022 թ. հոկտեմբերի 24-ից մինչև նոյեմբերի 3-ը:

			14.Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ համատեղ ցուցահանդես <<Օսմանյան կայսրության հայկական վարժարանների հետքերով. Ույալ ազգի վկայագիրը>> /15.11.2022-15.12.2022/: 15.Բուհի 100-ամյակին նվիրված ցուցահանդես <<<Հին ու նոր>> ցուցահանդես՝ (2022 թ. դեկտեմբեր): Միջոցառումներ 1.Հայոց ցեղսպանության օրվան նվիրված «Վանդալիզմ» ֆիլմի ցուցադրություն և լեկտորիում Հայոց պատմության ամբիոնի հետ համատեղ: 2.ՀՊՄՀ թանգարանի 10-ամյակի առիթով թանգարանային բաժնի շրջանավարտների հանդիպման երեկո:
5	Տարվա ընթացքում	Համալսարանի թանգարանի ֆոնդերի լուսաբանում ԶԼՄ-ների միջոցով (Facebook, Dasaran.am)	Թանգարանի ցուցադրության և գործունեության վերաբերյալ հոդվածներ է տրամադրվել «Մանկավարժական համալսարան» թերթին /4 հոդված/:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում

1.1 Թանգարանի աշխատակիցները ձեռք են բերել թանգարանային առարկաներ և տեղեկություն բուհի հիմնադրման, պատմության, կառուցվածքի, ստորաբաժանումների, վաստակաշատ դասախոսների, գիտական և հրատարակչական գործունեության վերաբերյալ:
1.2. Թանգարանի ֆոնդապահոցում կատարվել են առարկաների պահպանման և հաշվառման աշխատանքներ:
1.3. Ֆոնդային նյութերի հիման վրա ստեղծվել են ֆոտոշարքեր՝ էկրանների վրա ցուցադրելու համար:
1.4. Նյութեր են տրամադրվել տարբեր ֆակուլտետների ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար:
2. Թանգարանի ցուցադրական գործունեություն 2.1. Թանգարանի հիմնական ցուցադրությունը համալրվել է նոր ցուցանմուշներով:
3. Գիտա-մեթոդական և կրթական աշխատանք 3.1. Հաշվետու ժամանակահատվածում թանգարանում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ նվիրված հիշարժան դեպքերին և իրադարձություններին, հոբելյաններին: 3.2. Իրականացվել են խոհրդատվություններ բուհի ուսանողների, դասախոսների, այլ բուհերի դասախոսների, թանգարանների աշխատակիցների, դպրոցների ուսուցիչների համար, ցույց է տրվել խորհրդատվական օգնություն, մասնավորապես թանգարանային մանկավարժության բնագավառում: 3.3. Կազմակերպվել են էքսկուրսիաներ բուհի ուսանողների, դասախոսների, աշխատակիցների, դպրոցականների, ինչպես նաև տեղի և արտասահմանցի հյուրերի համար: 3.4. Թանգարանի գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է «Մանկավարժական համալսարան» թերթում, համալսարանի կայքում, թանգարանի ֆեյսբուքյան էջում և համացանցի այլ կայքերում:
Կատարման վերլուծություն
Հաշվետու ժամանակահատվածում բուհի թանգարանի աշխատակիցները՝ Կազմակերպել են 15 ժամանակավոր ցուցադրություններ և 2 միջոցառում թանգարանում: Ֆոնդը համալրվել են նոր 331 առարկաներով: Հաշվետու ժամանակահատվածում թանգարանի ֆոնդում մշակվել, համալրվել և հաշվառվել է 331 ընդունված առարկա: Պատրաստվել է 17 նոր սահիկահանդեսներ ցուցասրահների էկրաններով ցուցադրելու համար: Անցկացվել է 174 ճանաչողական և մասնագիտական էքսկուրսիաներ: Նյութեր են տրամադրվել ՝ Տարբեր ֆակուլտետների ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար: Կուտուրայի ֆակուլտետի դասախոս Ժիրայր Դադասյանին՝ լուսանկարներ էլեկտրոնային տարբերակով բուհի 100-ամյակին նվիրվբած ֆիլմ նախապատրաստելու համար::

Կուտուրայի ֆակուլտետի դասախոս Արմեն Խաչատրյանին լուսանկարներ <<Հին ու նոր>> ցուցահանդես նախապատրաստելու համար:

Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանին գրքեր են տրամադրվել (ԺՕՀ)՝ բուհի 100-ամյակին նվիրված ֆիլմի սցենարը նախապատրաստելու համար:

Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության բաժնի ուսանողներին հնարվորություն է ստեղծվել նկարահանել ռեպորտաժ համալսարանի թանգարանի վերաբերյալ:

Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտության բաժնի ուսանողուհի Էլեն Մարտիրոսյանին նյութեր են տրամադրվել ավարտական աշխատանքի համար:

Փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանին լուսանկարներ էլեկտրոնային տարբերակով:

Օտար լեզուների ֆակուլտետի դասախոս Գայանե Գաբրիելյանին՝ առարկաներ (ԺՕՀ) միջոցառման համար:

Հոգեբանության ամբիոնի վարիչ Լ. Սարգսյանին՝ առարկաներ (ԺՕՀ), ակադեմիկոս Մ. Մազմանյանի կաբինետի բացման արարողության համար (11.05.2022 թ.):

Բանասիրական ֆակուլտետի 1-ին ուսանողուհի Մելինե Սրոցանցին նյութեր ռեֆերատի համար:

Մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանի օգնական Էդիկ Գուլյանին (ԺՕՀ) ՝ նյութեր համալսարանի ուսանողական կյանքի վերաբերյալ (15.06.2022 թ.):

ՀՊՄՀ լրատվության և հանրության հետ կապերի վարչության պետ Դիանա Մարկոսյանին՝ նյութեր և Խ.Աբովյանին նվիրված տեսահոլովակը՝ բուհի 100-ամյակին նվիրված ֆիլմի համար (16.06.2022 թ.):

Խորհրդատվություն է տրամադրվել Հյուսիսային համալսարանի աշխատակից Ավետիք Հարությունյանին՝ համալսարանի դասախոսների վերաբերյալ (հոկտեմբերի 10-ին):

Խորհրդատվություն է տրամադրվել Հայոց պատմության ամբիոնի Ա. Փիլիփոսյանին ամբիոնի պատմությանվերաբերյալ (հոկտեմբերին):

Խորհրդատվություն է տրամադրվել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի դեկան Գ. Դեմիրխանյանին ֆակուլտետի պատմության վերաբերյալ (15.11.2022 թ.):

Հոդվածներ են տրամադրվել թանգարանի ցուցադրության վերաբերյալ «Մանկավարժական համալսարան» թերթին /4/:

Համալրել են թանգարանի կայք էջերը թանգարանին առնչվող նյութերով/ Facebook, Dasaran.am, ՀՊՄՀ թանգարանի կայք էջ/http://tangaran.aspu.am//:

Նյութեր և բանավոր խորհրդատվություններ են տրամադրվել բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար:

Իրականացվել են կոնսուլտացիաներ բուհի ուսանողների, դասախոսների, այլ բուհերի դասախոսների, թանգարանների աշխատակիցների, դպրոցների ուսուցիչների համար, ցույց է տրվել խորհրդատվական օգնություն, մասնավորապես թանգարանային մանկավարժության բնագավառում:

Կազմակերպվել է 174 էքսկուրսիա բուհի ուսանողների, դասախոսների, աշխատակիցների, դպրոցականների, ինչպես նաև տեղի և արտասահմանցի հյուրերի համար: Թանգարանն ունեցել է 9133 այցելու:

Թանգարանի գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է «Մանկավարժական համալսարան» թերթում, համալսարանի կայքում, թանգարանի ֆեյսբուքյան էջում և համացանցային այլ կայքերում:

Համալրվել են 2020 թ. Արցախյան պատերազմում ՀՊՄՀ-ի ուսանող-մասնակիցների և զոհվածների տվյալները (էլեկտրոնային տարբերակով):

Բուհի 100-ամյակին ընդառաջ իրականացվել է նյութերի հավաքչական աշխատանքներ՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով:

Փոխվել են թանգարանում ցուցադրված համալսարանի ռեկտորներին, համալսարանի միջազգային բաժնի գործունեությանը և համալսարանի կառուցվածքին նվիրված ցուցապաստառները:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Գտնվում է համալսարանի ղեկավարության անմիջական ուշադրության ներքո,	1. Ոչ բավարար տարածք աշխատակազմի գործունեության համար,
2. Բուհում կա համապատասխան ամբիոն, որը մեթոդական աջակցություն է ցուցաբերում թանգարանի զարգացման գործին,	2. Դպրոցականներին թանգարան բերելու խնդիրներ,
3. Թանգարանի հավաքածուն ձևավորվել և շարունակում է աճել առավելապես նվիրատվությունների շնորհիվ,	
4. Շարունակաբար աճելու հնարավորություն ունեցող բավականին մեծ հավաքածուի առկայություն	
5.Աշխատակազմը բնագավառի մասնագետներ են, 6. Թանգարանը ունի Բարեկամների ակումբ, որը աջակցում է թանգարանին, 7.Բուհի ուսանողների օգնում են թանգարանին կամավորության սկզբունքով	

8. Թանգարանը համագործակցում է բուհի ֆակուլտետների, ուսանողական խորհրդի հետ:	
Հնարավորություններ	Վտանգներ
1.Բուհը ստեղծում է կրթական հնարավորություններ՝ ա. մասնագիտական կողմնորոշման կարիք ունեցող ավագ դպրոցականների համար բ. ուսանողների համար գ. աշխատողների համար դ. Հանրապետության այլ թանգարանների աշխատակիցների և ուսուցիչների համար վերապատրաստման միջոցով:	1.Ֆոնդերի պահպանության համապատասխան ռեժիմների բացակայություն,

Արխիվ

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
	1.Արխիվային ֆոնդի համալրումը համալսարանի ֆակուլտետներից,ամբիոններից և կառուցվածքային ստորաբաժանումներից,գործավարությամբ ավարտված երկարատև պահպանության ժամկետ ունեցող փաստաթղթերով: 2. Փաստաթղթերի անվտանգ և անկորուստ պահպանությունը: 3. Փաստաթղթերի օգտագործումը սոցիալ իրավական և այլ նպատակներով: 4. Պետական և հասարակական կազմակերպությունների,բուհի շրջանավարտների, քաղաքացիների դիմում հարցումների պատասխանելը սեղմ ժամկետներում: 5. Տեղեկանքների և դիպլոմների հավելվածների պատրաստում՝ արխիվում պահպանվող փաստաթղթերի հիման վրա:
	Խնդիրները. Արխիվ ընդունված փաստաթղթերի ցուցակագրում և արխիվացում: Մշտական պահպանության փաստաթղթերի նախապատրաստում և հանձնում ՀՀ Ազգային արխիվ: Արխիվային փաստաթղթերի անվտանգ և անկորուստ պահպանության ապահովում:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	Արխիվային ֆոնդի համալրում համալսարանի բոլոր ֆակուլտետներից և ստորաբաժանումներից:	Սեպտեմբեր - Դեկտեմբեր	Ընթացքի մեջ է
	Ընթացիկ տարում	Փաստաթղթերի առավել անվտանգ պահպանություն և ապահովում	Կատարված է

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	Սեպտեմբեր-դեկտեմբեր	1.Շրջանավարտների անձնական գործերի արխիվացում	1039 գործ (բակալավր) 520 գործ (մագիստրատուրա)
		2.Աշխատանքից ազատված աշխատակիցների անձնական գործերի արխիվացում	-----
		3. Ավարտած ասպիրանտների և հայցորդների անձնական գործերի արխիվացում.	-----

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոց

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
1	Արդյունավետ կրթական միջավայրի ձևավորում, սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման համար արդյունավետ պայմանների ստեղծում:
2	Սովորողակենտրոն մոտեցման և մասնակցային ուսուցման ամրապնդում:
3	Դպրոցում համագործակցային, գործընկերային մթնոլորտի ապահովում միտված սովորողների անձի ազատ և անկաշկանդ զարգացմանը:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

Ո Ծ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	Մշակել համակարգված միջոցներ և մեխանիզմներ՝ · Սովորողների որակյալ միջնակարգ կրթության և մասնագիտական կողմնորոշման համար Ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների մասնագիտական զարգացման ուղղությամբ	հունվար-դեկտեմբեր	· 2021-2022 ուսարում Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցի 8 ուսուցիչ մասնակցել է հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների համար իրականացվող վերապատրաստման դասընթացին (6 ուսուցիչ <<Տաթև>> գիտակրթական համալիրում, 2 ուսուցիչ՝ <<Հույս և ապագա>> ՀԿ-ում) և ստացել են վկայականներ: · 2 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, որից մեկը չի հաղթահարել անցողիկ շեմը, իսկ մյուսը հաղթահարել է՝ հավաքելով 70 միավոր:

			· 2 ուսուցիչ ստացել են 1-ին աստիճանի որակավորման տարակարգ: · 12 ուսուցիչ մասնակցել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող <<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> 52 ժամյա վերապատրաստման դասընթացին և ստացել են հավաստագրեր: · Վարչական աշխատողներից 4 հոգիտնօրեն, փոխտնօրեններ մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալների վերապատրաստման դասընթացին:
	Իրականացնել քայլեր մանկավարժական գիտության զարգացման, տեսական դրույթների, հայեցակարգերի և պրակտիկայի համադրման, այլընտրանքային առարկայական ծրագրերի և դասագրքերի ստեղծման ուղղությամբ: :		Դպրոցի ուսուցիչները իրականացնում են առանձին մեթոդական թեմաների ուսումնասիրություններ և պարբերաբար զեկուցումներով հանդես գալիս մեթոդմիավորման նիստերին և կազմակերպում վարպետաց դասեր: Դպրոցում պարբերաբար անցկացվում են առարկայական միամսյակներ:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	հունվար-դեկ	Հաշվետու ժամանակահատված ում դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են հաստատված տարեկան աշխատանքային պլանի, ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի հիման վրա:	Նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են:

	տեմբեր		

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
1. 2021-2022 ուստարում դպրոցն ունեցել է 44 շրջանավարտ: 2022-2023 ուստարում ունեցել ենք 70 առաջինդասարանցի: 2022թ. սեպտեմբերի դրությամբ ունեցել ենք 500 աշակերտ: 2. Դպրոց են ընդունվել 13 ուսուցիչ: 3. 2021-2022 ուստարում դպրոցում գործել է 3 երկարօրյա խումբ՝ 1-4-րդ դասարանցիների համար, 8 անվճար խմբակներ - անգլերեն, պար, երգ-երգչախումբ, թատերական, ասմունք, պատանի բնագետ, տրամաբանության զարգացում, թաեքվանդո: 2022թ. սեպտեմբերից (2022-2023 ուստարի) դպրոցում շարունակում է գործել երկարօրյա խումբը՝ 1-ից 4-րդ դասարանցիների համար, նաև գործում են հետևյալ խմբակները՝ պատանի բնագետ, երգող արևներ, հետաքրքրաշարժ անգլերեն, ռուսերեն, թաեքվանդո, թատերական, տրամաբանության զարգացում, որոնց ընդհանուր թվով մասնակցում է 110 աշակերտ: 4. 2021-2022 ուստարում դպրոցի աշակերտները մասնակցել են հետևյալ օլիմպիադաներին. <<Կենգուրու>> - 19 աշակերտ (2 լավագույն արդյունք, 1 հաղթող) << Մեղու>> - 30 մասննակից (3 լավագույն արդյունք) Դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին՝ · Մաթեմատիկա – 83 աշակերտ (1 աշակերտ շնորհակալագիր) · Կենսաբանություն – 3 աշակերտ · Ֆիզիկա – 1 աշակերտ · Աշխարհագրություն – 6 աշակերտ (1 աշակերտ արժանացել է 3-րդ կարգի դիպլոմի և ստացել կրթաթոշակ) Ընդամենը՝ 93 մասնակից: 5. Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցում իրենց պրակտիկան են անցկացրել ՀՊՄՀ-ի տարբեր ֆակուլտետների թվով մոտ 117 ուսանողներ:

Կատարման վերլուծություն
Հաշվետու ժամանակահատվածում դպրոցի առջև դրված խնդիրները հիմնականում կատարվել են, աշակերտների թիվը շարունակում է աճել, մեծ ուշադրություն է հատկացվել կրթության որակի և ուսման արդյունավետության բարձրացմանը: Ուսուցիչները և վարչական աշխատողները տարվա ընթացքում մասնակցել են տարբեր վերապատրաստումների <<Տաթև>> գիտակրթական համալիրում – 6 ուսուցիչ, <<Հույս և ապագա>> ՀԿ-ում – 2 ուսուցիչ, ԿՋՆԱԿ-ի կողմից կազմակերպված Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալների վերապատրաստման դասընթացին - 4 վարչական աշխատող, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող <<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> 52 ժամյա վերապատրաստման դասընթացին – 12 ուսուցիչ, կամավոր ատեստավորմանը – 2 ուսուցիչ:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բարձր մասնագիտական կարողություններով օժտված ուսուցչական թիմ:	Հիմնական դպրոցում բնագիտամաթեմատիկական առարկաների ինֆորմատիկա, քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա ուսպլանով նախատեսված ժամաքանակի խիստ սղության և դրանով պայմանավորված ցածր աշխատավարձի պատճառով լավագույ մասնագետները չեն ընտրում դպրոցը:
Դպրոցում համագործակցային մթնոլորտի առկայություն:	Դպրոցի մասնաշենքի ոչ լիակատար օգտագործել ու հնարավորություն:
Հնարավորություններ	Վտանգներ
Քանի որ դպրոցը գործում է ՀՊՄՀ-ի կազմում, համալսարաի ունեցած բոլոր հնարավորություններից լաբորատորիաներ, դահլիճներ օգտվում են նաև աշակերտները	Դպրոցի տարածքի ոչ միանձնյա օգտագործում:

Հենակետային վարժարան (ավագ դպրոց)

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
1.	Վարժարանի հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագրի պահանջների պարտադիր նվազագույնի յուրացման հիման վրա սովորողների անհատականության ձևավորումը, նրանց նախապատրաստումը ինքնուրույն կյանքի և աշխատանքի, հասարակական համակեցության, մասնագիտական կրթական ծրագրերի գիտակցական ընտրության և դրանց հետագա յուրացման հիմքերի ստեղծումը:
2.	Վարժարանում ուսուցումն ու դաստիարակությունը իրականացվում է ի շահ անհատի բազմակողմանի զարգացման, նրա առողջության պահպանման և ամրապնդման, կրթության, ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջների բավարարման:
3.	Վարժարանի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, համամարդկային և ազգային արժեքների զուգորդման, անհատի բազմակողմանի զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
4.	Վարժարանը պատասխանատու է միջնակարգ կրթության պետական չափորոշչի պահանջների կատարման, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին, ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանման ու ամրապնդման, գիտական պահանջներին համապատասխան կրթական մեթոդների և ձևերի կիրառման համար:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
Խնդիր 4.6.4.	Մշակել համակարգված միջոցներ և մեխանիզմներ՝ ➢ սովորողներին որակյալ միջնակարգ կրթության և մասնագիտական կողմնորոշման ապահովման համար	Հունվար-դեկտեմբեր	Սովորողներին որակյալ միջնակարգ կրթության և մասնագիտական կողմնորոշման ապահովման համար կատարվում է օժանդակություն նորարարական, այլընտրանքային, փորձարարական և միջազգային հանրակրթական ծրագրերի ներդրմանը և իրականացմանը, կրեդիտային համակարգի ներդրում՝ ավագ դպրոցում, աշակերտակենտրոն միջավայրի ստեղծում՝ ներդնելով ուսումնաօժանդակ

	➢ ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների մասնագիտական զարգացման ուղղությամբ		ծառայություններ, դպրոցի գործունեության արդյունավետ աշխատակարգ: Շարունակվում են աշխատանքները ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների մասնագիտական զարգացման ուղղությամբ: Մասնավորաբար՝ Սեփական նախաձեռնությամբ կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչներից Աննա Ռուբենյանը, Աննա Խատյանը, Լիլիթ Խլոյանը, Արփինե Հովսեփյանը, Աննա Ստեփանյանը, Անուշ Հայրապետյանը, Վանուհի Բաղրամյանը, Մարիամ Պետրոսյանը, Նարինե Գևորգյանը, Նաիրի Բալաբեկյանը, Ռուզաննա Փիլիպոսյանը և Մերի Վենգրժանովիչը հաջողությամբ հաղթահարել են ատեստավորումը և ստացել բարձր միավորներ, որոնց աշխատավարձերը էականորեն բարձրացվել են: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստմանը մասնակցել են վարժարանի ուսուցիչներ՝ Հասմիկ Մկրտչյանը, Անուշ Հայրապետյանը, Մարիամ Պետրոսյանը, Աստղիկ Բոյաջյանը, Գայանե Մարգարյանը, Արման Սմբատյանը, և Հրայր Օհանյանը և հաջողությամբ ավարտել այն: «Inernational Doctoral School MODEST» ծրագրի շրջանակներում վերապատրաստվել է ինֆորմատիկայի առարկայի ուսուցչուհի Գոհար Նահապետյանը: Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Վանուհի Բաղրամյանը որպես վերապատրաստող մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստմանը՝ «Հույս և ապագա» ՀԿ-ում: Ուսուցիչները ակտիվ մասնակցություն են ունեցել մեր համալսարանի և այլ կրթօջախների կողմից կազմակերպված գիտաժողովներին, հրատարակել և հրատարակման ներկայացրել շուրջ 20 գիտական աշխատանք:

Խնդիր 4.6.5.	Իրականացնել քայլեր մանկավարժական գիտության զարգացման, տեսական դրույթների, հայեցակարգերի և պրակտիկայի համադրման, այլընտրանքային առարկայական ծրագրերի և դասագրքերի ստեղծման ուղղությամբ:	Հունվար-դեկտեմբեր	Հաշվետու ժամանակաշրջանում վարժարանում իրենց մանկավարժական պրակտիկան են անցկացրել ՀՊՄՀ-ի տարբեր ֆակուլտետների ինչպես բակալավրիատում, մագիստրատուրայում սովորող ուսանողները, այնպես էլ «Մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող» /30 կրեդիտ/ մանկավարժի հավաստագրման ծրագրի դիմորդները: Ասպիրանտների և հայցորդների կողմից կատարվել են տարբեր մասնագիտությունների գծով ատենախոսությունների վերաբերյալ փորձարարական աշխատանքներ: Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով առարկայական մեթոդական միավորումները մշտապես համագործակցում են համալսարանի համապատասխան ամբիոնների հետ: Համալսարանի առաջավոր դասախոսների կողմից դասախոսությունների անցկացումը թե՛ սովորողների և թե՛ ուսուցիչների համար պարբերական բնույթ է կրում: Վարժարանի սովորողները ակտիվ մասնակցում են տարբեր առարկաներից կազմակեպվող օլիմպիադաներին: Հաջողություններ են ունենում մարզային և հանրապետական փուլերում: «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դպրոցականների հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլերում հաղթել և անվանական կրթաթոշակի են արժանացել 12-րդ դասարանի երեք աշակերտ՝ Սաթենիկ Խաչատրյանը, Մարինե Զոհրաբյանը, Սուսաննա Չարչյանը: Սաթենիկ Խաչատրյանը ԿԳՄՍ նախարարի կողմից ստացել է ոսկե մեդալ:

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին

1.	Հունվար- դեկտեմբեր	Հաշվետու ժամանակաշրջանում վարժարանում ուսումնադաստիարակչա կան աշխատանքները կազմակերպվել են հաստատված տարեկան աշխատանքայինի պլանի, ուսումնական պլանների, ծրագրերի և դասացուցակի հիման վրա:	Նախատեսված բոլոր աշխատանքները կատարված են՝ Կազմակերպվել են ուսումնական նախագծեր. 10, 11, 12-րդ դասարանցիները ուսումնական տարվա ընթացքում այցելել են մշակութային հաստատություններ, պատմամշակութային արգելոց. թանգարաններ, թատրոններ, համերգասրահներ: Կազմակերպվել են թեմատիկ կինոդիտումներ, մասնագիտական կողմնորոշման շաբաթներ՝ բնագիտություն, մաթեմատիկա, հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն, պատմություն առարկաներից: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ և բազմաբովանդակ միջոցառումներ, մասնավորաբար՝ գիտաժողով, ցուցահանդես, սեմինարներ, դասախոսություններ: Վարժարանի աշակերտական խորհուրդը՝ ակտիվ համագործակցելով բուհի ուսանողական խորհրդի հետ, մասնակցել է մի շարք միջոցառումների:

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Վարժարանն իր պաշտոնական կայքէջում (http://www.varjaran.am) պարբերաբար թարմացնում և ներկայացնում է ուսումնական հաստատության գործունեության հետ կապված բոլոր նորությունները: Վարժարանում հաշվետու տարում պատշաճ ձևով իրականացվել են սովորողների հավաքագրման աշխատանքները: Վարժարանը 2021-2022 ուսումնական տարում ունեցել է 137 շրջանավարտ, որոնցից գերակշիռ մասը այսօր արդեն մեր համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ են: 2022-2023թ. ուսումնական տարում մրցույթի արդյունքներով վարժարանի բնագիտամաթեմատիկական հոսքի /ֆիզմաթ ենթահոսքի/, հումանիտար հոսքի/անգլերեն հոգեբանություն,լրագրություն և պատմահասարակագիտական ենթահոսքերի/ և մշակութային հոսքի /կերպարվեստ-դիզայն և պար

/վճարովի լրացուցիչ կրթական ծառայություն/ ենթահոսքերի/ 10-րդ դասարաններ են ընդունվել 161 աշակերտ:

Վարժարանի սովորողները պարբերաբար մասնակցել են ինչպես վարժարանի, այնպես էլ համալսարանի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին և գրանցել լավագույն արդյունքներ:
Վարժարանի աշակերտները ընթացիկ տարում մասնակցել են ,,Այբ,, կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված մրցույթներին և վարժարանը արժանացել է շնորհակալագրերի՝ բոլոր մրցույթները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար: Կրթամշակութային առումով ևս շատ հագեցած տարի էր՝ բազմաթիվ այցելություններ թատրոններ, թանգարաններ, պատկերասրահներ, համերգասրահներ...

Վերլուծվել է վարժարանի ուսուցչական կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը կրթական ծրագրերի նպատակներին.

Վարժարանում աշխատող ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 44,

Նոր ընդունվածները՝ 3,

- Հայոց լեզու և հայ գրականություն-1,
- Ռուսաց լեզու- 1,
- Մաթեմատիկա – 1 ,

Տարակարգ ունեցող ուսուցիչներ՝ 9,

Գիտությունների թեկնածուներ՝ 8,

Գիտությունների դոկտոր՝ 2,

Դոցենտներ՝ 5, պրոֆեսոր՝ 2

Կամավոր ատեստավորումն հաղթահարած ուսուցիչներ՝ 14

ՏՀՏ վերապատրաստում անցած ուսուցիչներ՝ 4

2022 թվականի փետրվարի 9-ից մեկնարկվել և 2022 թվականի սեպտեմբերի 2-ին ավարտվել են վարժարանի (ավագ դպրոց) մարզադահլիճի վերանորոգման աշխատանքները: Շինարարական աշխատանքները իրականացվել են Ալպանո ՍՊԸ-ի կողմից: Ձեռք է բերվել մարզադահլիճի անհրաժեշտ մարզագույք: Բոլոր նպաստավոր պայմանները ստեղծված են բնականոն գործունեություն իրականացնելու համար: Դպրոցն ունի առարկայական լաբորատորիաներ, որոնք հագեցած են համապատասխան գույքով, անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով, ինչպես նաև համալրվել են նոր համակարգիչներով:

Կատարվել է ներքին գնահատում, որի հաշվետվությունը ներկայացվել է մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովվել է դրա հրապարակումը /այն ամբողջությամբ տեղադրված է վարժարանի պաշտոնական կայքում/:

Կատարման վերլուծություն

Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից և ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգի» հենակետային վարժարանում /ավագ դպրոցում/ կատարվել է ներքին գնահատում, այսինքն հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկում, որի նպատակն է՝ բարելավել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեության հետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով: Ըստ էության՝ ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության մանրամասն վերլուծությունն ու դիտարկումն է:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Ուսուցիչների մասնագիտական բարձր վարպետությունը, գիտելիքների ու հմտությունների գործածման կարողությունը և այլն:	Նկուղի ոչ բարվոք վիճակում գտնվելը՝ որպես ապաստարան ցծառայելը:
➢ տարբեր մասնագիտական ուղղվածություններով հոսքային ուսուցման փաստացի կայացած վիճակը	
➢ դպրոցի ներգրավվածությունը բարեփոխումների գործընթացներում և հաջողությունները նոր նախաձեռնություններում:	
➢ Հիմնանորոգված մասնաշենքում գտնվելը և հարուստ ուսումնանյութական բազայից օգտվելը (կաբինետներ, լաբորատորիաներ, համակարգչային լսարան, գրադարան –ընթերցասրահ, մարզադահլիճ):	
Հնարավորություններ	Վտանգներ
Ավագ դպրոցը հնարավորություն ունի՝ ➢ իր գործունեությունը շարունակելու գործող քաղաքաշինական նորմերին բավարարող առանձին շենքում:	Ցածր վարձատրության պատճառով մասնագիտական բարձր որակավորում և գիտելիքներ ունեցող ուսուցիչների (գիտ. թեկնածուներ, դոկտորներ) դպրոցից հեռանալը:

➢ ապահովված է ուսումնական նյութերով և սարքավորումներով հագեցած է համապատասխան կաբինետներով, լաբորատորիաներով և արհեստանոցներով, ունի համակարգչային լսարան և ինտերնետային կապ, հարուստ ուսումնական, ներառյալ էլեկտրոնային գրականություն, գրադարան, մարզադահլիճ:

Ուսանողական խորհուրդ

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	Նպատակները, խնդիրները
1	Նպատակներ՝ Ապահովում է ՀՊՄՀ-ում ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալումն ու զարգացումը, հետևում ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների իրավունքների ու շահերի պաշտպանությանը.
2	ՀՊՄՀ ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողության խնդիրները, բողոքներն ու առաջարկները
3	Նպաստում է ուսանողության ստեղծագործական, ինտելեկտուալ, մշակութային ու հոգևոր զարգացմանը, ուսանողության առօրյայի, հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը.
4	Հնարավորության դեպքում իրականացնում է սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր:
5	Խնդիրներ՝ Հետևողականորեն վեր հանել ուսանողներին հուզող հարցերը,խորամուղ լինել ուսանողների կարիքների մեջ,հետևել ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
1	Համագործակցություն 100 դպրոցների հետ	շարունակական	կատարված է
2	Համագործակցություն հայ-առաքելական եկեղեցու հետ	շարունակական	կատարված է
3	Եռօրյա արշավ դեպի գոշի լիճ	27.05-29.05	կատարված է

4	Լավագույն ուսանող 2022	24.12.2022	ընթացքի մեջ է
5	Student TV-ի 5 ամյակին նվիրված ֆիլմի պրեմիեռա	05.12.2022	կատարված է

բ/ տարեկան պլանի համաձայն

N	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
1	24.04.2022թ.	Այց Ծիծեռնակաբերդ	Կատարված է
2	30.04.2022թ	Շաբաթօրյակ ՀՊՄՀ-ի հարակից տարածքում	կատարված է
3	22.04.2022թ	Համագործակցություն ՀՊՄՀ հենակետային դպրոց վարժարանի հետ	Շարունակական
4	15.05.2022թ	Արշավ դեպի Լոռու մարզ	կատարված է
5	22.05.2022թ	Արշավ դեպի Գյումրի	կատարված է
6	27.05-29.05	Եռօրյա արշավ դեպի Գոշի լիճ	կատարված է
7	23.07-29.07	Ամառային դպրոց 2022 Երիտասարդական հավաք	կատարված է
88	01.09.2022թ	Առաջին կուրսեցիների դիմավորում	կատարված է
9	13.09-17.09	ուսանողը բանակի կողքին /կամավորություն «Art Lunch»կազմակերպությունում/	կատարված է
10	Երկուշաբթի, երեքշաբթի, ուրբաթ	Ժեստերի լեզվի դասընթաց	Շարունակական
11	05.10.2022թ	Առաջին կուրսեցիների երդման արարողություն	Կատարված է
12	15.11.2022թ	Համագործակցություն Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան Բժշկական քոլեջի հետ	Շարունակական
13	20.11.2022թ	«Բոլոր սրբերին նվիրված տոն» ՈՒՐՖԱ ազգագրական համույթ	կատարված է
14	25.11.2022թ	Նկարների ցուցահանդես- միջոցառում	կատարված է
15	01.06.2022թ 04.12.2022թ	«Ուսանողը քո կողքին» ուսանողական ծրագիր	Շարունակական
	24.12.2022թ	«Լավագույն ուսանող 2022» մրցանակաբաշխություն	ընթացքի մեջ է

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Ծիծեռնակաբերդ այցի կազմակերպում,որին մասնակցեցին մոտ 1000 ուսանող և դասախոսներ 100 դպրոցների հետ համագործակցության ընթացքում այցելեցինք դպրոցներ և իրականացրինք մասնագիտական կողմնորոշում Իրականացրինք արշավներ Գյումրի և Լոռու մարզ,որին մասնակցեցին մոտ 150 ուսանողներ: Իրականացրինք կամավորություն «Art Lunch» կազմակերպությունում,որրին մասնակցեցին մոտ 250 ուսանողներ Իրականացնում ենք Ժեստերի լեզվի դասընթաց բոլոր ֆակուլտետներում: Համագործակցում ենք Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան Բժշկական քոլեջի հետ,որի արդյունքում կազմակերպում ենք մի շարք հանդիպումներ և միջոցառումներ: Ստեղծվեց ՈՒՐՖԱ ազգակրական համույթը,որի շրջանակներում համագործակցում ենք Հայ-առաքելական եկեղեցու հետ:ՈՒՐՖԱ ազգագրական համույթը իրականացնում է մի շարք միջոցառումներ նվիրված եկեղեցական տոներին: «Ուսանողը քո կողքին» ուսանողական ծրագրի շրջանակներում այցելում ենք մարզեր և երեխաների համար կազմակերպում ենք ժամանցային ծրագրեր: Նկարահանեցինք Student TV-ի ստեղծման պատմությունը նվիրված ուսանողական ալիքի 5 ամյակին,որի պրեմիեռան եղավ դեկտեմբերի 5-ին: Իրականացրինք նկարների ցուցահանդես,որին մասնակցում էին Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողները և հենակետային վարժարանի աշակերտները իրենց հեղինակային նկարներներով:
Կատարման վերլուծություն
Հաշվետվու տարում Ուսանողական խորհուրդը՝ ըստ սահմանված պլանի նախատեսել էր իրականացնել մի շարք միջոցառումներ և ծրագրեր:Այս տարի իրականացրեցինք համագործակցություն 100 դպրոցների հետ:Կազմակերպեցինք արդեն ավանդույթ դարձած այց Ծիծեռնակաբերթ:Իրականացրինք արշավներ Գյումրի և Լոռու մարզ,որտեղ այցելեցինք մի շարք պատմամշակութային վայրեր,պարեցինք և իրականացրինք պարուսուցում Գյումրու հրապարակում և Սանահինի վանական համալիրում:2019թ. -ից առ այսօր շարունակվում է «Ժեստերի լեզու» դասընթացը, որի ընթացքում ուսանողները սովորում են ժեստերով հաղորդակցում, նկարահանում են հոլովակներ և սովորում են տարբեր երգեր ժեստերի լեզվով:Տարվա վերջում եղավ Լավագույն ուսանող 2022 ամենամյա մրցանակաբաշխությունը:
Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կայուն թիմ	Ժամանակի ոչ ճիշտ կառավարում
Նախաձեռնողականություն	
Աշխատասիրություն	
Հնարավորություններ	**Վտանգներ**
Ֆորս-մաժորային իրավիճակներում կողմնորոշում	Շեղում՝ սահմանված ժամանակացույցից
Նոր գաղափարների իրականացում	
Կազմակերպված ծրագրերի իրականացում	

Արհեստակցական կազմակերպություն

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու նպատակով համալսարանի աշխատողների համար շարունակել է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները: ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպությունը գործել է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ արհեստակցական կազմակերպությունների մասին օրենքի», «Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության» կանոնադրության և «ՀՊՄՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Արհեստակցական կազմակերպությունը ղեկավարվելով համերաշխության, ժողովրդավարության և օրինականության սկզբունքներով, իր գործունեությունը նպատակաուղղել է կազմակերպության անդամների աշխատանքային և դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական և սոցիալական շահերի ներկայացմանը և իրավունքների պաշտպանությանը:

2022թ. հուլիսի 6-ին կայացել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության համաժողով, որի որոշմամբ ձևավորվել է նոր Արհկոմիտե և ընտրվել նախագահ:
Արհեստակցական կազմակերպությունը անցկացրել է Արհկոմիտեի թվով 9 նիստեր, որտեղ քննարկվել են կազմակերպության կանոնադրային նպատակներին և խնդիրներին համապատասխան օրակարգեր՝ միջոցառումների կազմակերպմանը, նյութական օժանդակության տրամադրմանը, աշխատողների իրավունքներին և աշխատանքային կարգապահությանը վերաբերող բազմաբնույթ հարցեր:

2022թ. օգոստոսի 1-ից 12-ը համալսարանի հետ համատեղ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ արհեստակցական ազմակերպությունը կազմակերպել են աշխատակիցների ամառային հանգիստը Աղավնաձորի ուսումնական բազայում, որի ընթացքում կազմակերպության միջոցներից արհմիության անդամներին տրամադրվել են զեղչեր ուղեգրի ընդհանուր արժեքի 33% չափով::

2022թ. հոկտեմբերին Աղավնաձորի ուսումնական բազայում կազմակերպվել է երկօրյա սեմինար դասընթաց՝ կազմակերպության անդամների համար և արհկոմի արտագնա նիստ:

2022թ. դեկտեմբերի 9-ին կնքվել է կոլեկտիվ պայմանագիր:

2022թ. հաշվետու ժամանակահատվածում ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպությունը առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպությունն իր միջոցների հաշվին.

- Համալսարանի 54 աշխատակիցներին տրամադրվել է դրամական օգնություն:
- Իրականացվել է ֆակուլտետային և համահամալսարանական 12 միջոցառումներ նվիրված բուհի 100-ամյակին:
- Կազմակերպվել է ամառային հանգիստ 31 անձի համար, կազմակերպության անդամ աշխատակիցներին տրամադրվելով համապատասխան զեղչված ուղեգրեր:
- Վճարվել են 12 ամսվա աշխատավարձ և նախկին արհկոմի նախագահի աշխատանքից ազատվելու կապակցությամբ վերջնահաշվարկ:
- Փոխանցվել է 12 ամսվա անդամավճար բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությանը:
- Իրականացվել է Արհկոմին տրամադրված նոր աշխատասենյակի(ՀՊՄՀ թիվ 1 մասնաշենքի 111 սենյակ) վերանորոգում:
- Նշված ժամանակահատվածում ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է թատերական ներկայացման 242 տոմս:
- Արհեստակցական կազմակերպության միջոցներով կատարվել են նաև հետևյալ ծախսերը.

ա/ Գրենական պիտույքներ,

բ/ Բանկի միջնորդավճար և չեկային գրքույկ,

գ/ Քարթրիջի լիցքավորման համար,

դ/ Արխիվային ծառայության գումար,

ե/ ԷԿԵՆԳ սպասարկման վճար,

զ/ քարտի տարեկան սպասարկման վճար,

է/ աշխատասենյակների համար վարագույր,

ը/ պետական տուրք:

Հաշվետու տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության և Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի հետ:

2022թ. դեկտեմբերի 30-ից մինչև 2023թ. հունվարի 2-ը ներառյալ համալսարանի հետ համատեղ ՀՊՄՀ արհեստակցական ազմակերպությունը նախատեսում է կազմակերպել աշխատակիցների ձմեռային ամանորյա հանգիստը Աղավնաձորի ուսումնական բազայում, որի ընթացքում կազմակերպության միջոցներից արհմիության անդամներին տրամադրվելու են զեղչեր ուղեգրի ընդհանուր արժեքի 30% չափով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

N	նպատակները, խնդիրները
1	*Տնտեսական վարչության հիմնական խնդիրները ներառում են բոլոր մասնաշենքերում եղած գույքի խնայողաբար օգտագործումը և պահպանումը, ֆակուլտետների կողմից ծագող տարբեր բնույթի հարցերի օպերատիվ լուծումը, տրանսպորտային միջոցների նպատակային օգտագործումը, հակահրդեհային միջոցառումների իրականացումը, ընթացիք նորոգման աշխատանքների իրականացումը և այլն:*
2	*2022թ հաշվետու ժամանակահատվածում տնտեսական վարչության կողմից, բացի ամենօրյա ընթացիք աշխատանքներից իրականացվել են նաև կոսմետիկ վերանորոգման և էլ. մոնտաժային աշխատանքներ ընդհանուր թիվ 1, 6 մասնաշենքերում:*

2. Հաշվետու տարվա համար Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
	կաթսայատների և կոմունիկացիոն համակարգերի վերանորոգում	տարվա ընթացքում	բոլոր մասնաշենքերում

բ/ տարեկան պլանի համաձայն

	Ամիս	Գործողություն	Տեղեկություն կատարման մասին
	Մշտապես	վերելակների անվտանգ աշխատանքի հսկողություն	թիվ 1 մասնաշենքի 4 վերելակները
	Մայիս-հոկտեմբեր	կաթսայատների և ջեռուցման ներքին ցանցի ձմռան նախապատրաստական աշխատանքներ	թիվ 1-6 մասնաշենքերում դպրոցում և Աղավնաձորի ուս. բազայում
	Մշտապես	հակահրդեհային միջոցառումներ	1-6 մասնաշենքերում դպրոցում և Աղավնաձորի ուս. բազայում

	Մշտապես	ուսումնական տարվա ընթացքում տրանսպորտի բաժնի մեքենաների նպատակային շահագործում	պրակտիկայի վայր, հանրապետության պատմական վայրեր ուսանողներին տեղափոխելու

3. Հաշվետու տարում Վարչության/բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների ապտրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
2022 թվականին հունվարից մինչև 2022թ նոյեմբեր կատարվել են թվով 29 տարբեր բնույթի աշխատանքներ, որից 12-ը իրականացվել է վարչության ուժերով, իսկ 17-ը ծառայությունների մատուցման պայմանագրերի միջոցով: Բոլոր տեղեկությունները բացված վիճակով առկա են հաշվապահությունում:
Կատարման վերլուծություն
Պլանավորված միջոցառումների իրականացման աշխատանքները կատարվել են ժամանակին և որակով: Միաժամանակ իրականացվել են պլանով չնախատեսված տարբեր բնույթի աշխատանքներ:
Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)
Հաշվի առնելով վարչության կողմից իրականացված աշխատանքների ընդհանուր ծավալը կատարված աշխատանքները համարում եմ բավարար:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
եղած աշխատակիցների բարձր արհեստավարժություն	բանվորների և հավաքարարների անհրաժեշտ քանակի պակասություն
Հնարավորություններ	**Վտանգներ**
համալսարանի ընդհանուր հնարավորությունների սահմաններում	կաթսայատների և կոմունիկացիաների անմխիթար վիճակը